ՎԱՐԴԱՆ ՊԵՏՈՅԱՆ

ՍԱՍՈՒՆԻ ԱՋԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ





ՎԱՐԴԱՆ ՊԵՏՈՅԱՆ

9(47+925)
Պ-49



Գրքի հովանավոր՝ Վարդան Պետոյանի թոռ
Սևակ Պետրոսի Պետոյան
Բուժ.ծառայության փոխգնդապետ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՈՅԱՆ

ՍԱՍՈՒՆԻ ԱՋԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(վերահրատարակություն)

«Նվիրում եմ հայրենի Սասունի 1915թ. հերոսամարտի և
Եղեռնի զոհերի անմահ հիշատակին»:
Հեղինակ

50/15

Գիրքը վերահրատարակվում է Ցեղասպանության
100-ամյա տարելիցի կապակցությամբ

Երևան
«Լուսակն» հրատարակչություն
2014թ.

ՀՏԴ 391/395=919.81
ԳՄԴ 63.5(2Հ)
Պ 499

Պետոյան Վարդան
Պ 499 Սասունի ազգագրությունը /Վ. Պետոյան.- Եր.: Լուսակն, 2014.- 496 էջ:

ՀՏԴ 391/395=919.81
ԳՄԴ 63.5(2Հ)

Բնիկ սասունցի, երկարամյա վաստակավոր մանկավարժ, «Լեռնիկի», «Կարմիր դրոշի», «Պատվո նշան» շքանշանների ասպետ, ազգագրագետ, պատմաբան Վարդան Ավետիսի Պետոյանը ավելի քան 55 տարի հավաքել, ուսումնասիրել, գրի առել և տպագրության է պատրաստել Արևմտյան Հայաստանի դյուցազնական այնպիսի շրջանի պատմությունը, լեզուն, կենցաղը, հերոսական անցյալն ու ազատագրական պայքարը, որ հպարտորեն կրում է փառահունչ Սասուն անունը: Հիշյալ հայրենասեր անխոնջ մշակն ու անմնացորդ նվիրյալը ծնվել է 1892 թ. փետրվարի 7-ին Սասուն-Գելիեգուզանում, իր քաջությամբ ու հեքիմությամբ հայտնի իշխան Պետոյի նահապետական գերդաստանում, գերդաստան, որի մասին ժամանակին գրել է Սասունում իր գործունեությամբ հայտնի պատմաբան, ազգագրագետ, 19-րդ դարի վերջերին ճանաչված մտավորական Ախալքալաքցի Սեյլանը (Արշակ Մատոյան) իր «Սասուն» պատմաազգագրական ակնարկում, որը վեր է հանում Սասունի 13-19-րդ դարերի պատմության բազմաթիվ կարևոր դրվագներ: Ճանաչված մտավորական Սեյլանը Սասունում հյուրընկալվում է Գելիեգուզանում՝ իշխան Պետոյի նահապետական տանը, որտեղ նրան տանտերը ցույց է տալիս մի մաշված, բայց պահպանված հրովարտակ (Ավդալ բեկի 1013թ Հիսան 5 Շուղեքի բերդ, Սեյլան «Սասուն», էջ 48-49), որտեղ նշվում է այդ գերդաստանի հին իշխանազուն ծագման մասին՝ սկսած Հոլո, Գորգե իշխաններից...

Գելիեգուզանում ռես իշխան Պետոյի հյուրընկալ ընտանիքում էին իջևանում 19-րդ դարի վերջերին Արևմտյան Հայաստանում ծավալված ազատագրական շարժման հայտնի ղեկավարներ՝ զորավար Անդրանիկը, Տամատյանը, Մուրադը և այլոք: 1894 թ. Սասունի հերոսական մարտում իշխան Պետոյի զոհվելուց հետո գերդաստանի նահապետը և ռեսը լինում է նրա եղբորորդի Ավենը (Վ. Պետոյանի հայրը), որ հորեղբորից ընդօրինակել էր հայրենասիրություն, քաջություն և հեքիմություն: 1900-1904 թթ. Սասունում և Մուշի շրջանում ազատագրական շարժումներ կազմակերպելու մտահոգությամբ զորավար Անդրանիկը հաճախ է լինում արդեն հերոսամարտում զոհված իշխան Պետոյի ժառանգ Ավեի տանը, նկատում որդուն՝ փոքրիկ, ուշիմ Վարդանին և առաջարկում իրեն հանձնել: «Անդրանիկ, ղուրբան, ինչըղ չեմ տա, Վարդանը քեզ»: Անդրանիկը փոքրիկ Վարդանին տանում է Մշո սուրբ Կարապետ վանքի ժառանգավորաց գիշերօթիկ դպրոցում



սովորելու, որը ընթացավարտ է լինում 1907 թ. և Մշո Միացյալ ընկերության որոշմամբ նշանակվում Տալվորիկի Հարթք գյուղի տարրական դպրոցի վարիչ-ուսուցիչ մինչև 1911 թ.: Վ. Պետոյանը պատմում էր, որ Մշո սուրբ Կարապետ վանքի դպրոցը ավարտողը մի շարք առարկաների հետ միաժամանակ քննություն պետք է հանձներ գրաբարից և ֆրանսերենից՝ շարադրություն գրելով: Նա ձգտում է շարունակել ուսումը և 1911թ. հունիսին իր հորեղբոր քաջ որդու՝ Հայրոյի հետ ծիով մեկնում է Կ. Պոլիս: Ճանապարհին հանդիպում են երկու մեծ մտավորականների՝ վարպետ Ավ. Իսահակյանին և նշանավոր Ս. Զավարյանին, ծանոթանում, զրուցում և ստանում երկու հայ մեծերի օրհնանքը՝ հաջողությամբ ուսումը շարունակելու:

Կ. Պոլսում հաջողությամբ հանձնելով քննությունները, ընդունվում է «Հայոց ազգային Կեդրոնական վարժարան»:

1904 թ. սուլթանական Թուրքիայի դեմ Սասունի ժողովրդական ապստամբության ժամանակ զոհվում են Վ. Պետոյանի հայրը, հորեղբայրը: Ընտանիքի հոգսն ընկնում է մոր՝ Մագեի վրա, որը և ամուսնու փոխարեն մասնակցում է գյուղի մեծերի ժողովներին՝ իբրև իշխան Պետոյի նահապետական տան խելացի և մեծ հարս:

1915 թ. Թուրքիայի կողմից կազմակերպված հայերի կոտորածի ժամանակ սրի են քաշվում Գելիեգուզանից շատերը, որոնց մեջ և Վ. Պետոյանի եղբայրները, քույրերը, հարազատները: Մայրը՝ Մագեն, տեսնելով այդ, իր երկու փոքրիկ տղաների հետ՝ մեկը գրկին, մյուսի ձեռքը բռնած, նետվում է Արածանի (Մուրադ) գետը, որպեսզի չընկնի թուրք գազանների ձեռքը:

Մեծ ընտանիքից ազատվում է միայն Վարդան Պետոյանը, որ Կ. Պոլսում սովորում էր:

Կ. Պոլսի «Կեդրոնական վարժարանում» նրա դասախոսներն էին այն ժամանակվա հայ մտավորականների սերուցքը՝ Մեծն Կոմիտասը, Գ. Զոհրապը, Սևակը (Ռ. Չիլինգարյան), Ռ. Զարդարյանը, Գ. Խաժակը և նշանավոր մտավորականներ:

1915 թ. արհավիրքի ժամանակ հայ մտավորականների հետ Դեր-էլ-Զորի անապատները Կ. Պոլսից աքսորում են նաև ուսանողներին, որոնց մեջ և Վ. Պետոյանին, ընկերոջ՝ Գարեգին Երիցյանի հետ, որը հետագայում բժիշկ էր Հալեպում: Երկու ընկերներ կարողանում են փախչել, թաքնվել Կյուդնոս գետի ջրվեժի կամրջի տակ եղած մի թաքստոցում 2 - 3 ամիս: Սնունդ հայթայթելու նպատակով գիշերները գնում են մոտիկ մի հունական գյուղ և աշխատում մի հարուստ հույնի հողամասում, հաց ստանում և լույսը չբացված վերադառնում իրենց քարայր-թաքստոցը:



Մինչև 1918 թ. առաջին աշխարհամարտի ավարտը նա աշխատում է Տարսոն քաղաքում Շալվորջյանների ալյուրի գործարանում հաշվապահ, իսկ համեմատաբար խաղաղ շրջանում վերադառնում Կ. Պոլիս, շարունակում ուսումը և 1920 թ. բարձր առաջադիմությամբ ավարտում «Կեդրոնական վարժարանի» պատմագրական լսարանային բաժինը և ստանում դպրության պսակավորի ավարտական:

Վ. Պետոյանը 1920-1922 թթ. Կ. Պոլսի պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի մոտ աշխատում է քարտուղար և Կ. Պոլսի Գուգունջուկ թաղամասի «Հաուրդ Գարագյոզյան հոմ» դպրոց-որբանոցում որպես ուսուցիչ:

Վ. Պետոյանի առաջին ուսումնասիրությունը՝ «Սասունը և իր վերջին հերոսամարտը» լույս է տեսնում 1920 թ. մայիսին Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում (մայիս ամսի 5-10 համարներում՝ թերթոններով):

1922 թ. դեկտեմբերին Հայաստանի ժողկոմխորհ Ալ. Մյասնիկյանի կոչով, որը Հայաստան աշխատանքի էր հրավիրում մտավորականների, մասնագետների, Վ. Պետոյանը դիմում է խորհրդային իշխանության դեսպանին և առաջին քարավանով մեկնում Խորհրդային Հայաստան՝ մերժելով Սորբոնի համալսարան մեկնելու արտոնագիրը:

1923 թ. հունվարի սկզբին ներկայանում է Հայաստանի Լուսժողկոմ Ա. Մռավյանին և խնդրում իրեն ուղարկել Եղեռնից փրկված, Աշտարակի և Թալինի շրջաններում տեղավորված սասունցիների գյուղերը՝ անգրագիտությունը վերացնելու մտահոգությամբ: Այնինչ, նույն և հետագա մի քանի տարիներին նրան հրավիրում են նորաբաց համալսարանում դասախոսելու, քանի որ նա քաջահմուտ էր հայոց լեզվի և գրականության, գրաբարի, հայ ժողովրդի պատմության և աշխարհագրության, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, արաբերեն, քրդերեն լեզուների ասպարեզում: Սակայն գերադասում է մազապուրծ փրկված հայրենակիցներին կրթել ու դաստիարակել: Իր ցանկությամբ նշանակվում է Լեռնամասի դպրոց չեղած Մաղդա (Լեռնարոտ), Ագարակ և այլ գյուղերում իր նախաձեռնությամբ բացված դպրոցներում վարիչ-ուսուցիչ: 1925-28թթ. նշանակվում է Աշտարակի շրջանի Թաքիա գյուղի կոմունայի դպրոցի դիրեկտոր:

1928-30 թթ. Աշտարակի շրջկենտրոնի դպրոցի դիրեկտոր է նշանակվում: 1929 թ. ընտրվում է Խորհուրդների համագումարի պատգամավոր Աշտարակի շրջանից մանդատ նո. 187, վճռական ձայնի իրավունքով, որտեղ ելույթ է ունենում Վ. Պետոյան (տես «Խորհրդային Հայաստան», 10/4-1929 թ. նո 82 (2345): Նույն 1929 թ. 4/6 ընտրվում է էջմիածնի գավառի միջմիութենական 5-րդ կոնֆերանսի պատգամավոր վճռական ձայնի իրավունքով, մանդատ նո. 11:

1931 թ. Վ. Պետոյանին Ա. Խանջյանը հրավիրում է Երևան և նշանակում աշխարհում առաջին Անդրկովկասի Քրդական մանկավարժական տեխնիկումում նախ որպես ուսմասվար, ապա՝ տնօրեն: Տնօրինությանը զուգընթաց քրդերեն դասավանդում է ֆիզիկա, քիմիա, կազմում և թարգմանում ֆիզիկայի, քիմիայի դասագրքեր:

1. Ֆիզիկայի դասագիրք, քրդերեն, 5-րդ դ., 1932 թ.:
2. Ֆիզիկայի դասագիրք, քրդերեն, 6-րդ դ., 1935 թ.:
4. Քիմիայի դասագիրք, քրդերեն, 6-րդ դ., 1935 թ.:

4. Հայ-քրդերեն բառարան, 1933 թ.:
5. Տերմինաբանական բառարան, քրդերեն, 1936 թ.:

Հիշյալ ձեռնարկները 1933 թ. իր անմիջական ղեկավարությամբ (համահեղինակների հետ) տպագրվել են լատինատառ, աշխարհում առաջին անգամ քրդերեն և միաժամանակ ուղարկվում Միջագետք-Սիրիա՝ քուրդ երեխաների համար: Այդ թվերին գրում է բազմաթիվ մանկավարժական-մեթոդական հոդվածներ, որոնք տպագրվում են «Ռյա-Թազա» և «Խորհրդային դպրոց» թերթերում:

1931թ. նոյեմբերի 1-ին մանդատ նո. 11-ով Վ. Պետոյանը ուսուցիչների համագումարի պատգամավոր է ընտրվում Անդրկովկասի Քրդական մանկավարժական տեխնիկումի կոլեկտիվի կողմից: Նույն թվականի դեկտեմբերի 26-ին Երևանի Լուսաշխատողների կողմից ընտրվում է Լուսաշխի միության Համահայաստանյան Համագումարի պատգամավոր, մանդատ նո. 108:

1932 թ. Վ. Պետոյանն ընտրվում է Հարվածային լուսաշխատողների 2-րդ համագումարի պատգամավոր՝ հիմք ընդունելով օրինակելի հարվածային աշխատանքը լուսավորության ֆրոնտում, պարգևատրվում հանրապետության հարվածային մանկավարժ կոչումով և անունը գրվում կարմիր տախտակին:

1939-1941 ուս. տարիներին աշխատում է Երևանի Կիրովյան ժողկրթբաժնում և քաղաքային մեթոդ կաբինետում որպես քաղժողկրթբաժնի մեթոդիստ և դպրոցական տեսուչ:

1942-47թթ. գործուղվում է Աշտարակ որպես ժողկրթբաժվար: Այստեղ ևս աչքի է ընկնում իր նվիրված աշխատանքով և գնահատելով նրա բազմամյա մանկավարժական աշխատանքը 1945 թ. նոյեմբերի 5-ի Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի հրամանագրով արժանանում է Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցչի կոչման, իսկ 1949 թ. պարգևատրվում «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով: 1952 թ. պարգևատրվում է «Լենինի» շքանշանով:

1947-1951 թթ. աշխատում է Հայկական ՍՍՀ Ակադեմիայի պատմության բանգարանում որպես գիտաշխատող և հայ ժողովրդի պատմություն դասավանդում Մ. Գորկու անվան դպրոցում: Այդ տարիներին է վերջացնում իր «Սասունի ազգագրությունը», «Սասունն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները», «Սասունի բարբառը» աշխատությունները, «Սասուն-Տարոնի քարտեզը»:

1951-56 ուսումնական տարիներին աշխատում է խուլ-համրերի դպրոցում որպես ուսմասվար, որտեղ իր անմիջական նախաձեռնությամբ, Մոսկվայի օրինակով, Հայաստանում առաջին անգամ լույս է տեսնում խուլ-համր երեխաների համար I-IV դ.դ. մայրենի լեզվի դասագրքեր (III և IV դ.դ, հեղինակներից է Վ. Պետոյանը):

1954թ. լույս է տեսնում Վ. Պետոյանի «Սասունի բարբառը» աշխատությունը, որը բարձր գնահատականի է արժանանում լեզվաբաններ Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի, Ա. Ղարիբյանի կողմից: Նրանց կողմից նշվում է, որ՝

1. Այդ գրքում Վ. Պետոյանը առաջ է քաշել և հաստատել Սասունի բարբառի ինքնուրույն բարբառ լինելը (մինչ այդ համարվել է Մշո բարբառի ենթաբարբառ):

2. Հեղինակը տարիների ընթացքում հավաքել և այբբենական կարգով դասավորել է բարբառային 4000 բառ, որոնցից 500 բառ իրենց ուղղակի և անուղղակի իմաստներով բացակայում են հայոց լեզվի բառարաններից: Այդ բառերը, ինչպես նաև տեղանունները, հսկայական նյութ են մատուցում հայ ժողովրդի և նրա լեզվի պատմության զանազան հարցերը լուսաբանելու գործում:

1956 թ. լույս է տեսնում Վ. Պետոյանի «Սասունի Թոռնիկյան իշխանությունը» մենագրությունը (Ակադեմիայի հրատարակմամբ):

1956 թ. նա անցնում է թոշակի և ընդգրկվում Սփյուռքի հայկական դպրոցների համար մայրենի լեզվի և գրականության դասագրքեր կազմելու պատվավոր գործին և սփյուռքահայ դպրոցների 5-րդ դաս. «Հայ գրականություն» դասագիրքը Վ. Պետոյանի, Գ. Սևանի և Շ. Վարսյանի հեղինակությամբ լույս է տեսնում 1964 թ.:

1965 թ. լույս է տեսնում «Սասունի ազգագրությունը» գիրքը՝ գրված դեռևս պատմության թանգարանում աշխատած տարիներին, իսկ «Սասունն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները» ավարտուն և խմբագրված՝ ակադեմիկոսներ Ս. Երեմյանի, Մ. Հասրաթյանի (խմբագիր) դրական գրախոսականներով և երաշխավորված Հայկական ՍՍՀ գիտությունների Ակադեմիայի պատմության ինստիտուտի 1964 թ. դեկտեմբերի 8-ի h.14 արձանագրությամբ ու երաշխավորությամբ հանձնված «Հայաստան» հրատարակչության տպագրության: Վերջինիս տպագրությունն ամբողջացնում է Սասունի ողջ պատմությունը: 1964 թ. ի վեր այդ

ավարտուն աշխատությունը թե՛ Ակադեմիայի Պատմության ինստիտուտի տարբեր բաժիններում, թե՛ հրատարակչությունում անցավ ձեռքից-ձեռք:

1965 թ. հուլիսի 25-ին վախճանվեց Վ. Պետոյանը: Մեկ տարի անց «Սասունն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները» ետ են վերադարձնում դստերը՝ պատասխանելով. «Մենք հայ ժողովրդի ազատագրական շարժումների մասին առայժմ ոչինչ չենք կարող տպագրել»:



Վ. Պետոյանի մահը ցավակցեցին ոչ միայն Հայրենիքում, այլև Սփյուռքում: Ահա թե ինչ է գրում «Արարատ» օրաթերթը 1965 թ. օգոստոսի 27-ի 7141 համարում. «Ինչպես պաշտոնական աշխատանքներում, նույնպես ալ հասարակական-քաղաքական պարտականությունները կատարելու մեջ Վ. Պետոյանը դրսևորած է նվիրվածություն, պարտաճանաչություն և սկզբունքայնություն: Գրած է «Սասունի բարբառը», «Սասունի ազգագրությունը», «Թոռնիկյան իշխանությունը Սասունում», իսկ «Սասունն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները» աշխատությունը հանձնված է Գիտությունների Ակադեմիային: Կազմած և խմբագրած է դասագրքեր, աշխատակցած մանկավարժական մամուլին: Վ. Պետոյանի գործունեությունը գնահատված է Հայկական պետության կողմե...»՝ նշում են նրա կառավարական պարգևները:

Վ. Ա. Պետոյանի հեղինակած և հրատարակած գրքերի ցանկը:

1. «Սասունը և իր վերջին հերոսամարտը» անդրանիկ աշխատությունը, որ տպագրվել է 1920 թ. մայիսի 6-15 համարներում Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում՝ թերթոններով (1920 թ.):
2. «Սասունի բարբառը», 1954 թ.:
3. «Սասունի Թոռնիկյան իշխանությունը», 1959 թ.:

4. «Սասնա ազգագրությունը», 1965 թ.:
5. Խուլ-համրերի դպրոցի 3-4-րդ դասարանների դասագրքեր, 1955 թ.:
6. Սփյուռքահայ դպրոցի «Հայ գրականություն» դասագիրք 5-րդ դասարանի համար (Վ. Պետոյան, Գ. Սևան, Շ. Վարսյան) 1964 թ.:
7. Հիշողություններ իր ուսուցչի՝ Կոմիտասի մասին, որի մի մասը լույս է տեսել «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» գրքում:
8. «Սասունցի Դավիթ» էպոսի 2-րդ հատորում «Խանդութի» և «Մուշեղի» պատումները գրի առնված սասունցի Թամոյից, 1946 թ.:
9. Ֆիզիկայի դասագիրք, քրդական դպրոցի 5-րդ դ., 1932 թ.:
10. Ֆիզիկայի դասագիրք, քրդական դպրոցի 6-րդ դ., 1935 թ.:
11. Քիմիայի դասագիրք, քրդական դպրոցի 7-րդ դ., 1933 թ.:
12. Հայ-քրդերեն բառարան, 1933 թ.:
13. Տերմինաբանական բառարան քրդերեն, 1936 թ.:
14. Բազմաթիվ մեթոդական հոդվածներ ԼԺԿ-ի օրգան «Խորհրդային դպրոց», «Ռյա Թազա» քրդական թերթերում:
15. «Սասունն անցյալում և Սասունի ազատագրական շարժումները», 2005թ.:
16. «Սասունի և Տարոնի պատմաաշխարհագրական տեղագրությունը», 2005թ.: (Վերջին երկու աշխատությունները անտիպ էին: Հոր՝ Վ. Պետոյանի, մահից 48 տարի հետո տպագրության է հանձնել հեղինակի դուստրը):
Վ. Պետոյանը 1964 թ. ակադեմիկոս Ս. Երեմյանին է հանձնել անտիպ «Սասուն-Տարոնի քարտեզը» իր քարտեզագրության գրքում տեղավորելու:

«Սասունը և իր վերջին հերոսամարտը» 19 էջ (գրված և տպագրված 1920 թ. Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթում)՝ 6-15 համարներում պատմության ամբիոնի վարիչ Վ. Պարսամյանին իր «Հայ ժողովրդի պատմություն» գրքում պրակով տեղավորելու համար:

ՊԵՏՐՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՍՈՒՆԻ ՄԱՍԻՆ

Սասունը գտնվում է Արևելյան երկայնության 41-42 և Հյուսիսային լայնության 38-39 աստիճանների տարածությունում: Թուրքիայի այժմյան Բիթլիս վիլայեթի արևմտյան, Մուշ վիլայեթի հարավային և Սղերդ վիլայեթի հյուսիս-արևմտյան մասերը կազմում էին Սասուն գավառը, որ այժմ բաժանված է հիշյալ երեք վիլայեթների վրա:

ՑՈՒՑԱԿ
ՍԱՍՈՒՆԻ ՏԱՍԸ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԵՐԻ

Գյուղերի թիվը
Գյուղերի թիվը

1. Բուն Սասուն - (Բոզկան) -16
2. Շատախ - 7
3. Տալվորիկ -12
4. Խութ-Բռնաշեն - 42
5. Փսանք - 42
6. Հազզո (Խաբլջոզ) - 108
7. Մոտկան - 61
8. Խիանք - 56
9. Խուլբ - 67
10. Խարզան - 128

Ընդամենը՝ 539

1. <u>ԲՈՒՆ ՍԱՍՈՒՆ (ԲՈԶԿԱՆ)</u> - 16 ԳՅՈՒՂ: **Գելիեգուզան**. հայ 250 տուն, 3500 շունչ, Սասունի կենտրոնական գյուղը:

Թուխ Մանուկ կամարակապ եկեղեցի, կից հերոսների պանթեոն, ուր թաղված են իշխան Պետոն, Սերոբ փաշան, Հրայրը (Դժոխք) և ուրիշներ:

Շենըկ - հայ 73 տուն, շունչ 635: Սեմալ - հայ 70 տուն, շունչ 602: **Սիմա** կամ Սիմալ. պատմական Սիմ լեռան անունով կոչվել է այդ գյուղը: **Աղբիկ**. հայ 102 տուն, շունչ 835: **Հեթինք**. հայ 48 տուն, շունչ 456: Ըստ ոմանց «Ետինք» («Արաքս» 1895, էջ 81, Պետերբուրգ): **Քաղքիկ** (Բոզկան). հայ 2,

շունչ 12: Սասունցի Դավթի բերդն այս գյուղումն է: **Կապաս-գետ**: Ճախրկանք. հայ 7 տուն. Սասունցի Դավթի ջրաղացն, իր ձեռքով կառուցած, ըստ ավանդության այս գյուղումն է: **Խոծոծվանք**. հայ 6 տուն. ունի կամարաշեն վանք: **Հար-կուռք**. հայ 16 տուն, շունչ 120. Բշարե Խալիլի գյուղը (Սերո-բին սպանողի): **Արզիկ**. հայ 15 տուն, շունչ 80: **Սարեկան**. հայ 6 տուն. Քաղքիկին մոտիկ: **Գելառաշ**. հայ 11 տուն. Սև ձոր է նշանակում: **Խադան**. հայ 20 տուն. ըստ «Արաքսի» 100 տուն, («Արաքս», 1895, էջ 85, Ս. Պետերբուրգ): Թխիկ. հայ 4 տուն. **Անձղանք**: Աղձնանք - Աղձնիք անունը չէ՞ արդյոք:

Բուն Սասունում են գտնվում Անդոկ, Ծովասար, Կեպին լեռները և Սասուն (Պայթող աղբյուր) գետը:

2. ՇԱՏԱԽ - 7 գյուղ: **Շուշնամերկ**. հայ 30 տուն, շունչ 245: **Գեղաշեն**. հայ 31 տուն, շունչ 289. Անթանիա վանքից արևելք 2-3 կմ վրա: **Քոփ**. 27 տուն, շունչ 196, կոչվում է նաև Գերմավ, երկու բառերն էլ քրդերեն են և նշանակում են «տաք ջուր», «ջերմուկ»: **Զեյնըկ**. հայ 25 տուն, շունչ 210: Տափըք. հայ 25 տուն, շունչ 200, այս գյուղի կողքին է Ջուզա կամ Սուսանա բերդի ավերակը: Իրիցանք. հայ 13 տուն, շունչ 95. ունի մեծ ավերակ վանք:

Շատախի շրջանում են հռչակավոր Անթանիա և Թեոդորոս վանքերը, Սուսա բերդը և Սուսանա գետը:

Սասունի Շատախը բոլորովին կապ չունի Մոկաց Նահանգի Շատախի հետ: Սասունի Շատախի մասին Ջենոբ Գլակն իր «Տարոնոյ պատմութեան» մեջ գրում է՝

«Իշխանն Արջուց կողմանն, Գէորգ Շատախոս, որ կոչեվաց անուն գաւառին իւրոյ Շատախ, վասն աւելի անուանի իւրոյ»: Հնուց այդ գավառն ուրեմն «Արջուց» (արջերի երկիր) էին կոչում:

3. ՏԱԼՎՈՐԻԿ - 12 գյուղ: **Էգու տուն**. հայ 35 տուն. ուներ Սբ Սարգիս կամարակապ եկեղեցի և տարրական դպրոց: **Արտխոնք-Քորախու**. հայ 9 տուն. ուներ 7 եկեղեցի. Տ. Մարիամ, Սբ Սարգիս, Մարտիրոս, Խաղողլաև, Սբ Կիրակոս, Գրաշեն, Թազլուկ: Պատմական Կլիմիր քաղաքի տեղը: **Տվալինք**. հայ 15 տուն. գյուղն ուներ տարրական դպրոց և կամարակապ վանք Սբ Ստեփանոսի: Խլիովիտ. հայ 9 տուն. Սբ - Սարգիս, ավերակ: **Հագմանք**. հայ 15 տուն, Սբ Կարապետ, որ Կտանք թաղումն էր, շեն: **Հլողինք**. հայ 40 տուն. Ս. Սամաս

(Սմամաս) ուխտատեղի, ավերակ: **Մազրա**. հայ 20 տուն. **Հարթք**. հայ 20 տուն. Խաչո Գասպարի գյուղ: Դպրոց կար: **Հոսնուտ**. հայ 9 տուն. Կամեյի Համզեի (դարբինի) գյուղը: **Սպղանք**. հայ 25 տուն. վանք - շեն, կամար՝ Մարապա (Մարութա): Բշարի Խալիլի այրած գյուղը: **Եղգարդ** - հայ 15 տուն. Լուսատուն կույս Մարիամ:

Տալվորիկում է գտնվում Տալվորիկ գետը, Գոշիկ լեռը և Չվնգոլ, Արծվի բույն քարայրները:

4. ԽՈՒԹ - ԲՌՆԱՇԵՆ - 42 գյուղ. **Խութ - Թաղավանք**. հայ 162 տուն, շունչ 269. Ուներ կամարակապ եկեղեցի: **Շենիստ վարի** - հայ 30 տուն, շունչ 301. Կամար և շեն եկեղեցի: **Շենիստ վերի** - հայ 5 տուն, շունչ 24: **Շեն** - հայ 28 տուն, շունչ 280. չորս եկեղեցի՝ Սբ Հակոբ, Սբ. Մարծմետ, Սբ. Աստվածածին և Կուլառնա, Սբ. Ջիավոր, բոլորն էլ կամարակապ: **Աղբակ** - հայ 15 տուն, շունչ 168. Ագարակ էլ էր կոչվում: **Թաղվու**. հայ 25 տուն, Թողու էլ էր կոչվում: Գիլոնք. հայ 8 տուն, շունչ 68. **Թաղվընոր**. հայ 18 տուն. **Սալաբուզ**. քրդ. **Բաբընթաղ**. քրդ. **Գործըվար**. քրդ. **Փիրիվանք**. հայ 1 տուն, շունչ 8. Կոռ(ք). քրդ. Գոռտ, կամար եկեղեցի քանդված, Սյունյաց Գլածորի դպրոցի հիմնադիր Ներսես Մշեցու ծննդավայրը: **Տափ**. քրդ. **Փղոնք**. քրդ. Փջոնք և Փիջանք անունները, մեր կարծիքով՝ Փղոնքն է: **Ռաբաթ**. քրդ. կայմակամի նստած տեղը, եկեղեցի չկար: Սարենգոլե. հայ 17 տուն, շունչ 136: **Շահվերդի** - հայ 19 տուն, շունչ 192: **Ավարք** - հայ 6 տուն, շունչ 48: **Հնդոր** - հայ 3 տուն, շունչ 12: եկեղեցի կամարով, քանդված: **Յուշուտ** (Օշուտ), հայ 38 տուն, շունչ 211: եկեղեցի կամարակապ, շեն: **Զորովա**. հայ 30 տուն: **Բլրիկ**. հայ 10 տուն. Սբ Աղբերիկին մոտիկ էր, ուր և աղոթելու կգնային: Ուշթափ հայ 20 տուն. Հընդգնորի հարավ-արևմտյան կողմը:

ԲՌՆԱՇԵՆ. Օշակ. հայ 25 տուն. **Կծանք**. հայ 20 տուն, շունչ 101. Օշուտի մոտ: **Դաշտադեմ**. հայ 30 տուն, շունչ 137. **Բլրկան**. հայ 35 տուն, շունչ 178: **Եղիան** (Եղիանք). հայ 60 տուն: **Շամիան(ք)**. հայ 30 տուն. **Շիրոմգրա. Արենոք**. հայ 15 տուն: Կոստ. հայ 5 տուն, Կոստը 1897 թվականին ունեցել է յոթ եկեղեցի («Լումա» 1897, էջ 138-188): Կամար եկեղեցի, գյուղից քիչ հեռու և շեն: **Ընկուզեք**. հայ 25 տուն, շունչ 138: **Մահբուբան**. հայ 60 տուն, **Արունք**. հայ 6 տուն, շունչ 47. **Լորդնոր**. հայ 25 տուն. **Դաշտամիրան**. հայ 10 տուն: Նշա-

նակում է իշխանաց դաշտ: **Կնոտ** (Քնոտ) հայ 7 տուն. գյուղում հետո քրդերը բնակվեցին 1915 թ. առաջ: **Կրպնիկ - ԱՐԾՎԻԿ. ս. Աղբերիկ.** հռչակավոր վանք. ուխտատեղի հայ և քուրդ ժողովուրդների համար:

5. ՓՍԱՆՔ - 42 գյուղ. **Գոմք.** հայ 23 տուն, շունչ 160. ուներ Սբ Քառասուն Մանուկ եկեղեցի. **Թափունի.** հայ 7 տուն, շունչ 60: **Ջըրթնիկ,** հայ 20 տուն, շունչ 210: Վիշապասպան Սբ Գևորգ կամարով շեն եկեղեցի: **Պլոյենք.** տուն 6, շունչ 52: **Փշուտ.** հայ 10 տուն, շունչ 65: **Մրջգեղ.** տուն 40, շունչ 409: Եկեղեցին Սբ Գևորգ լուստուն, ուխտատեղի: Ուներ տարրական դպրոց: **Դալիոր.** հայ 32 տուն, շունչ 350: Սբ Տղամանուկ եկեղեցի: **Խնձորենք.** հայ 26 տուն, շունչ 242, Լուստունն էր Սբ Աստվածածին, Խնձորիկ էլ էր կոչվում: **Թաթուկ.** հայ 15 տուն, շունչ 145: **Թարուք - Փսանք.** հայ 10 տուն, շունչ 112: Հին քաղաքի ավերակներ, որի անունով շրջանն է կոչվում: **Կորընկես.** հայ 8 տուն, շունչ 35: **Քաջառինք.** հայ 12 տուն, շունչ 162. Շեն, կամարապատ եկեղեցի ուներ: **Մկթինք.** հայ 25 տուն, շունչ 277: Եկեղեցին Սբ Աստվածածին: **Հավկունք.** հայ 5 տուն, **Դաժբատրիկ.** հայ 7 տուն: **Ցնցնքար.** հայ 3 տուն: Գյուղի մոտ կար 50 մ. բարձր. 30 մ. լայն. և 20 մ. հաստ. ցից քար: **Մարսքա.** հայ 20 տուն. Եկեղեցի կար՝ Սբ Խաչ, ոչ կամարակապ: **Գոմոց վանք.** Սբ Պետրոսի վանք կամ Ճկուբ վանք: Վերջին վանահայրը Ստեփան վարդապետն էր, որ մասնակցել է 1915 թ. Սասունի ապստամբությանը: **Ջմալենք.** հայ 20 տուն. Ուխտատեղի: **Բվի.** հայ 10 տուն. Շեղգար անունով սրբավայր ուներ, ուխտատեղի և Մուրադատուր Սբ Սարգիս եկեղեցի: **Թաթանք.** հայ 8 տուն. կոչել են և Թաթունք: **Սարեկան.** հայ 6 տուն. **Քաղքիկ.** Սասնա բերդին կցված է: **Մտրպանք.** հայ 12 տուն. **Մաղենք.** հայ 5 տուն. Օսմկեի տուն էր կոչվում: **Ճախրկանք.** հայ 7 տուն. **Բրդանք.** հայ 5 տուն. **Կապասգետ. Խան.** հայ 11 տուն. Խութի սահմանին մոտիկ: **Քրդամանք.** հայ 9 տուն. քրդերի ամանները առանձին պահելու համար քրդաման է կոչվել գյուղը: **Հոսներ.** հայ 4 տուն. **Քիսքաղ.** հայ 8 տուն: Սբ Քրիստավոր եկեղեցի: **Դամլենք. Բոզկան.** հայ 2 տուն, շունչ 12. բուն Սասունը Բոզկան էլ է կոչվում: **Քաշքշենք.** հայ 11 տուն, շունչ 83: **Մշկատակ, Հռուտ,** բնակվում էին միայն հայեր: **Ծուեկանք.** բնակվում էին միայն հայեր, **Քարավանք.** հայ 3 տուն. **Մղրե և Կրեձոր.** հայ

12 տուն. **Նորգեղ.** բնակվում էին միայն հայեր: **Պելավ.** բնակվում էին միայն հայեր:

6. ՀԱԶԶՈ - ԽԱԲԼՋՈՁ - 108 գյուղ: **Հազգո.** հայ 350 տուն, 3000 շունչ: Սբ Աստվածածին և Քաջ Մուշեղ, շեն մեծ կամարակապ վանքերով: **Փիրշենք.** հայ 15, շունչ 155: **Նորշեն.** հայ 3 տուն, շունչ 15. **Ռաբաթ. Լըհնեք.** Լըփնեք էլ էր կոչվում ըստ տեղացիների: Սառսրտիկ սոսկալի դժվարանցանելի ճանապարհը Ռաբիի և Լըփնեքի մեջտեղն է. **Ընկուզեք.** Ասի կամ Ասսու. հայ 5 տուն, շունչ 24. ունի հին և մեծ բերդի ավերակ. **Նորք** (Հրորք). **Արտրեր.** հայ 6 տուն, շունչ 39: **Տոտնուկ. կոսատեր.** հայ 66 տուն, շունչ 610: **Մշկատար,** հայ 6 տուն, շունչ 65: **Հով.** հայ 8 տուն, շունչ 12. **Նոդոբան.** հայ 7 տուն, շունչ 70: **Հաղորթա: Կոդ.** հայ 32 տուն, շունչ 200: **Խարբախ: Շաթ: Այնարաս: Պալո: Խալիլան: Մազրե.** հայ 2 տուն, շունչ 12: **Այնմար: Դարակուզե: Մազրախալք: Ղըրնաղըր:** Ջըրնախեթ է ասվում նաև: **Մանկիկ: Հարգամո: Մշրիտա: Մաներա: Փափուր: Դամմոխ: Նորգեղ: Շեխան: Խաբլջոզ.** հայ 100 տուն, շունչ 364, որի անունով շրջանն է կոչվում: **Արծվիկ,** հայ 35 տուն, շունչ 325: Շնխեղդ: **Խասնփի.** հայ 7 տուն, շունչ 42: **Կոռթեր.** հայ 7 տուն, շունչ 45: **Վարդինոս.** հայ 5 տուն, շունչ 35: **Վարդնոց** (Արաքս, 1895, էջ 84, Ս. Պետերբուրգ): **Խոզարենք.** հայ 9 տուն, շունչ 54: **Խոջարենք** թերևս: **Ողշնիկ: Տնգետ.** հայ 16 տուն, շունչ 200: **Հրեկոնք.** հայ 5 տուն, շունչ 23: **Կոշակ.** հայ 5 տուն, շունչ 30: **Թզի: Իրիցանք,** հայ 3 տուն, շունչ 18: **Արեգդեմ,** հայ 4 տուն, շունչ 21: **Գոմլորեր.** հայ 3 տուն, շունչ 22: **Հրուտ.** հայ 10 տուն, շունչ 60: Մեծ վանք՝ ս. Աստվածածին: **Կորով.** հայ 5 տուն, շունչ 34: **Մանշկուտ: Առվրտոց. Գետկից: Խնձորտա: Տազաներ: Հարնի:** Հայ 10 տուն, շունչ 70: **Գետեր: Բաղըրմուտ.** հայ 12 տուն, շունչ 75: Պատրմուտ («Արաքս», 1895, էջ 86, Ս. Պետերբուրգ): **Ճակուտ: Ձորիկ:** Ձորք ըստ տեղացիների: **Էրուր,** հայ 4 տուն, շունչ 30: **Լապրշտուղ.** հայ 2 տուն, շունչ 15: **Քարկից,** հայ 4 տուն, շունչ 31: **Վիժնանք:** Կոչվում է նաև Վիժանք: **Ադո: Ձորաղբի.** հայ 1 տուն, շունչ 9: Ջրաղբին մեր կարծիքով նույն Ձորաղբին է: **Քանլմանք: Գոմեք.** հայ 5 տուն, շունչ 36: **Խարվեր.** հայ 7 տուն, շունչ 52: **Ջալալիք.** ըստ «Արաքս»-ի (1895, էջ 85) 25 տուն հայեր կային: **Հարնվանք. Հորանք.** հայ 5 տուն, շունչ 41: **Գելիե Սնդուս,** հայ 3 տուն, շունչ 22: **Ներքին Շաթ. Մոլլա Ջալլա: Ձողուտ.** հայ 2 տուն, շունչ 15: **Ղըլպի:** Կուս գետի աջ կողմը: **Կուսգետ.** հայ 50

տուն, գետի անունով էլ կոչվում էր գյուղը: **Դոդնուկ**. արաբախոս քրդեր, հայերեն էլ էին խոսում, չէին թլպատվում: **Շեփիր**. Կուսգետի աջ և ձախ ափերի վրա Մոտկանի և Կուսգետի միացման տեղում: Խարզանի սահմանի վրա: Ջոջ ջրի ձախ ափին: **Ցրտուտ**: **Ջման**. թերևս Ճաման: **Դալըրծոր**. հայ 7 տուն, շունչ 15: **Խասոբի**. հայ 20 տուն. այս և հաջորդ յոթ գյուղերը 1915 թ. արդեն չէին հիշվում երևի նախորդ կոտորածների և արտագաղթերի պատճառով անմարդաբնակ էին դարձել: **Ռըշնիկ**. հայ 15 տուն: **Դրուր**. հայ 10 տուն: **Շիկալինք**. հայ 15 տուն. **Ռըմխանք**. հայ 8 տուն: **Խոջարինք**. հայ 10 տուն: **Կորդեր**. հայ 15 տուն **Վարդնոց**. հայ 7 տուն:

Ջակուր. ըստ «Արաքս»-ի (1895թ.) 20 տուն հայեր կային: **Ջոբիկ** հայ: **Թըշը**: **Տնիևա**: **Ռաբի**. հինգ եկեղեցի ուներ: **Հրորք**. հայ 30 տուն, ավերակ, ունեցել է հինգ եկեղեցի: **Դոլանք**: **Զիլանք**: **Տմոխ**: **Սուսան**: **Մալաֆան**: **Շաուրանք**: **Արջոնք**: **Իրիցանք**. ուներ վանք (կամարակապ): **Ժռենց**. ուներ մեծ վանք (կամարակապ):

<u>7. ՄՈՏԿԱՆ</u> - 61 գյուղ. **Դատվան** հայ 60 տուն. կամարակապ, շեն եկեղեցի: **Կըխու**. հայ 100 տուն. երկու կամար, եկեղեցի՝ Տերնաղբեր և Սբ Հակոբշեն, հին բերդ, որ հիշվում է Տիգլատ Պալասարի արձանագր. մեջ: **Սղունտ**. Հ.ք. եկեղեցի կամարակապ, ս. Հակոբ Նամոնյան, շեն: **Տորխ** (Քորխ). գյուղի տերը Ռաշեե Ջնդու: **Արսան**: **Զրտո** (Զրտու) հայ 30 տուն, կամարակապ եկեղեցի՝ ավերակ: **Հրորք**. հայ 40 տուն. մի քանի տուն քրդեր էլ էին ապրում: **Նիչ**, հայ 40 տուն, շունչ 40. շեն և կամարակապ եկեղեցի: Գյուղի տերը Բափիր աղան: Եսայի Նչեցու ծննդավայրը: **Մարմանդ**: **Արփի**: Հայ 100 տուն. շեն, կամար. եկեղեցի: **Շեն**. հայ 60 տուն, շեն, կամար. եկեղեցի: **Տնկետ**. հայ 30 տուն. **Առվտոց**: **Քաշախ**. հայ 200 տուն, շեն, կամար. եկեղեցի. 366 աղբյուր: Հաշոյի տունը (հայ) 60 շունչ էր, 12 խաչերկաթ կդներ իր մի թոնրի վրա: **Բույնուտ**. հայ 30 տուն. Մշո առաջնորդարանի ցուցակում Բոկնոտ է գրված: **Հորմեց**: հայ 60 տուն. **Մարկոկ**. հայ 100 տուն. շեն, կամարակապ մեծ եկեղեցի ուներ: **Նիզեն** (Գզեխ). հայ 60 տուն. շեն կամար. եկեղեցի և պատմական Գզեխ քաղաքի տեղը: **Աղբժներ**. հայ 80 տուն, շեն, կամար. եկեղեցի: **Մցի** (Մցը). հայ 120. շեն կամար. եկեղեցի: **Քոյանս**: Ճաման. Շամդին աղայի գյուղը: Շամդինը պուդուկ էլ էր տանում խաֆիրության համար: **Մեյդան**. **Լանգագարան**: **Սպիտակ ջուր**: **Հաշկադարան**. հայ 5 տուն, շունչ 1: **Բնավոկ**: **Աշկրոտ**: **Կամուրջի գլուխ**: **Մեծ ձոր**: **Ռաման**: **Բրուտք**. հայ 25 տուն: **Դոլաք**: **Խուր** (այանք) 30 հայ տուն: **Ուրուս**. հայ 10 տուն: **Մրցանք**. հայ 25 տուն. Ընկույզի անտառների աշխարհը: **Խարտգող**. հայ 10 տուն. Տանձաստան, տանձաշխարհ: **Կորվու**. հայ 20 տուն: **Կարբք**. հայ 10 տուն: **Մզուք**. հայ 30 տուն: **Հուսենք**. հայ 8 տուն: **Միրի թաղ**. հայ 10 տուն. **Աբութաղ**. հայ 15 տուն: **Աղբներ**. հայ 100 տուն. **Կնծու** (գինձ) հայ 50 տուն: **Մրցանք**. հայ 10 տուն: **Արտրեր**, հայ 15 տուն. **Օրթենք** հայ 15 տուն: **Արծվիք**: «Մշո աշխարհ» («Լումայ», 1897, Ա, էջ 138-188): Էդգիկ. Նարմանտ: Կալիոք. մեծ բերդ ունի: **Զողուտ**: **Ասիբերդ** (Ասսու). նշանակում է ամուր բերդ 2150 մ. բ. լեռ ունի: **Սալնաձոր**: **Իշկ**: **Սիլեն**: Հերսան. բարկացողներ է նշանակում: **Ավսպի**. Սպիտակ ջուր է նշանակում: **Մերգան**. Մարգագետիններ է նշանակում: **Կուսգետ**:

Մոտկանի շրջանի լեռներն են.- Մարաթուկ, Կուզի, Հորմոր, Շնազ, Փորակ, Մազիքար, Խալըմս, Նխուն:

Գետեր - Մոտկանում Քեպերցու, Մցու, Բոկնոտու, Երախու վտակները միանալով Մեյտանա գետն են կազմում և Ջոխ գյուղաքաղաքի մոտ թափվում Տիգրիս գետը:

Բերդեր - Գրխու, Մազիքար, Ուրուսի, Տարլի, Կալիոկ, Բոկնոտ և Քերփու:

<u>8. ԽԻԱՆՔ</u> - 56 գյուղ: **Բացի**. հայ 30 տուն. ուներ կամարակապ եկեղեցի և հին բերդ: **Պերմ**. հայ 110 տուն, շունչ 798, մեծ կամարով վանքեր՝ Սբ Գևորգ և Սբ Աստվածածին, երկուսն էլ շեն, 1895 թ. 200 տուն հայ («Արաքս», էջ 85, 1895): **Դառաշ**: **Արխունտ**. հայ 50 տուն, շունչ 352: Կամար եկեղեցի քանդված: Աղվանք: **Հարիպ**: **Տանձ**. հայ 4 տուն. Տանձաստան: **Բահմտա**. հայ 28 տուն. 1895 թ. 100 տուն. («Արաքս», 1895, էջ 85, Ս. Պետերբուրգ): **Շեխահամզա**. **Փոսա**: **Բիրըպիա**: **Անդա**: **Արսըք**: **Փառկա**. հայ 100 տուն: Քոռ Սլոյի (Սլեման աղա) գյուղն ու պալատը. 1895, ունեցել է 400 տուն. դպրոց՝ 80 աշակերտով: («Արաքս», 1895թ. էջ 85, Ս. Պետերբուրգ): **Ֆարրըք**: **Արակոնք**. հայ 70 տուն: **Ընկուզնակ**. հայ 35 տուն: **Սևիթ**. հայ 11 տուն: **Ասպտուն**. հայ 43 տուն: **Հեղին**. հայ 70 տուն. Սբ Եղիա Մարգարեի վանքը՝ ծածկը կամարածև: **Իշխնձոր**. հայ 90 տուն: **Մամըրկան**: **Ինըկա**: **Մալա Մլքե**: **Կառքնի** (կտորնի):

Գիլանի (Գեզող): Սիմոս: Հեշտեր: Ֆախ Սլեման: Կամար եկեղեցի քանդված, որի հողերը Ջավիա դերե (վանքի հող) էին կոչվում: Գայսեր (Խայսեր): Մեհի Ամար ազայի գյուղը: Ճահաս. կամարածև, քանդված եկեղեցի: Ալոյե Խդեի կալվածքը: Հլիս. Քոռ Սլոյի նախկին գյուղը: Գյանջե Բամիա. հայ 1 տուն: Շեյխը կա(սք) Շեխհամզա (գավառակի կենտրոն): Շմանանք. հայ 4 տուն. Շմանանք. լուստուն ուներ: Միր Հաջի: Սաղտուն. հայ 50 տուն. 1895թ. 100 տուն, մի դպրոց. («Արաքս» 1895, էջ 85): Գրեխոխե. հայ 3 տուն: Քարըք. Մուստաֆայե Կըտեի (բըշտե ճիտ) գյուղը: Սլոխ (Սլոք). հայ 5 գյուղ: Արխունդ. հայ 50 տուն: Հըրդա. հայ 8 տուն: Մալաբադե. Բադեի տուն. Փրա Բաթմանի մոտ: Ֆայաթ աղայի գյուղը: Գառախիլ. Նահմոյե Ասի: Գողերի գյուղը: Կանիա Պամու. Բամբակի աղբյուր: Շեղկոնք. Կամար եկեղեցի, քանդված Դոդիկ: Ռգան: Ջախար: Նավոռ: Ճամ: Սաղտուն. հայ 15 տուն. կամար եկեղեցի քանդված: Գոման: Շուղեք. հայ 120 կամար եկեղեցի շեն՝ Սբ Մորթաքո անունով: Ներջըք. Թելի աղայի տղան Հասան աղան: Ըստ Ն. Ակինյանի, այստեղ է եղել Կլիմիր պատմական քաղաքը: Փասուր. հայ 200 տուն. կայմակամի նստած տեղը. կենտրոնը Խիանի: Ռաբաթ. հայ 5 տուն. ուներ հինգ եկեղեցի. «Թորոս Աղբար», Գ.Վ. Սրվանձտյանց, Կ.Պոլիս, 1884 թ.: Աստղյան բերդ. «Թորոն աղբար» 2-րդ հատոր, 1884, Կ.Պոլիս, էջ 374.

9. ԽՈՒԼԲ - 67 գյուղ: Խրոճ. հայ 4 տուն, շունչ 32, Թիախա. հայ 10 տուն, շունչ 77: Քևև. հայ 3 տուն: Կակուաս: Արխադին: Ընձքար. հայ 350 տուն, շունչ 1015: Սբ Գևորգ հռչակավոր վանքը, ուխտատեղի: Էհուբ. հայ 30, շունչ 204: Կամարաձև շեն եկեղեցի: Ըստ «Արաքսի» Ըհուպ (1895): Աիարոնք. հայ 80 տուն, շունչ 397. Յոթը մանուկ եկեղեցի: 1895 թ. 200 տուն. (տե՛ս «Արաքս» 1895, էջ 85, Ս. Պետերբուրգ): Գեղրվանք. հայ 54 տուն, շունչ 383. Եկեղեցի կամարակապ՝ Սբ Ստեփանոս շեն: Գաղթել են Պիրմեց (Լճա): 1895 թ. 100 տուն, («Արաքս» 1895, էջ 85, Ս. Պետերբուրգ): Թախանաուալ: Դրմըլկեր: Կրման: Ճմար: Մազալե: Պապեջանիս: Սագըկան: Տատերվան: Ըժըվքան: Խարամ: Խռշըկան: Բոզրկան: Կընտիք: Պերոկ: Նադարան: Գելիե Միճար: Դելեք: Մոսըտո: Հարբաք: Գասգե. հայ 50 տուն, շունչ 476: Այս գյուղից հետո եկած գյուղերը մինչև Ճո. 40 Հաջանա գյուղը՝ Հավետեկի վրա էին հաշվում: Հավրըք (Հավրըկ), հայ 15

տուն, շունչ 138: Մաշտակ. հայ 8 տուն, շունչ 72: Խոխան: Մատիկ: Գառըկան: Շեյնե Բոբան: Պինին: Հըլըի: Ջըսըկ: Թըլըթը. 10 հայ տուն,շունչ 94: Հաջանա: Գրեմորե. հայ 8 տուն, շունչ 43: Ըստ «Արաքս»-ի (1895թ., էջ 85) 30 տուն է եղել: Կարանդան: Արտուշեն. հայ 150 տուն: Կամար փոքր վանք: Թուրքերը միայն դպրոց ունեին: Շեն: Սբ Հակոբ, հանգած: Քրդերինն է այժմ գյուղն էլ, վանքն էլ: Հովիտ: Գելիծ մսուր. հայ 40 տուն. երկու եկեղեցի Սբ Անթանիա և Սբ Կիրակոս: Հազնախի գ.: Դալավա կաժե. հայ 7 տուն: Գելիեգանմամ. հայ 10 տուն: Դուդերիկ. Բաբրջան. Խուշ. Կապըրնին. հայ 3 տուն. Կապրնին նշանակում է տաղավարներ, հյուղակներ: Թլմին. մնացել են գյուղի ավերակները: Դալավա կաժե: Հավետեկ (Խուլբից արևմուտք): Մելիքան. Մուդուրլուխ ենթաշրջանի կենտրոն: Սեդախ: Խամըկան: Դայրկան: Շամշան. 350. երկու հայկական գյուղեր Սասունի Առաքելոց վանքի մոտիկն էին: Հարբախն. հայ 50 տուն: Կանի սպի. քրդական գյուղ, որից այն կողմը Սլիվանի դաշտ: Անթախ: Մամրկան: Լաջրկան: Հովիտ: Մսրըձոր:

Լճայի կայմակամության Անթախ քրդական 80 տնանոց գյուղի մոտիկ անթախի սարի վրա, մի քարափում շինված է բարձրադիր ս. Առաքելոց վանքը, որը Հայնիի շրջանի ամենահայտնի վանքն է:

Առաքելոց վանքը, մեծ վանք, զանգակատնով, 1915թ. վանահայրն է եղել Սասունի Հեղին գյուղացի Վահան վարդապետը: Այդ վանքը ուներ իր դպրոցը՝ 60-70 աշակերտներով: Ուներ իր խոշոր տնտեսությունը:

10. ԽԱՐՋԱՆ ԿԱՄ ԽԱԼՏԱՆ – 128 գյուղ: Զոխ (կայմակամլուխ) հայ 200 տուն: Բզեզիկ (Բեխիկ). հայ 60 տուն. Ղըրբա. հայ 40 տուն. Բեյբու (հայ-քուրդ-ասորի): Հասհաս, (հայ և ասորի), Կամար և շեն եկեղեցի: Մարմարոնո (հայ և ասորի): Փալոնի (հայ և ասորի), պատմական Արզն քաղաքի տեղը (խրաբ բաժառ): Ունի հին վանք, ավերակ և բերդ: Հոպե (Յոպե). հայ 50 տուն (հայ և ասորի), Հերոդոտի հիշատակած գյուղը՝ Սղունդ գետի բերանը, ձախ ափին: Զուգուր: Շեյխհոնես. Կստաշեն էլ է կոչվում: Թալիբա (Թալու). հին գյուղ. ավերակ. Կանի Բարազա. Վարազաի աղբյուր: Քրդական գյուղ: Ջաֆան: Ջամխատին: Շկավտա. քարայրների գյուղ: Բատրան. 1896թ. կոտորեցին եզիդիներին, մնացողը մուսուլման դարձավ: Գոլա մասիա. Ձկների լիճ: Հին քաղաքի տեղ է, քա-


րե կամար, կամուրջներով: Բարձր բլրի վրա կռատուն կա: **Բախըրդա**: **Գրե Քալո**: **Ռաշե դարա** (Ռաշիկ). Սև ծառեր: **Նոր գեղ**. հայ 3 տուն: **Մրլաֆան**. հայ 400 տուն. առատ աղահանք հեղուկ վիճակում: Ունի մեծ, հին վանք, կամար, ավերակ: **Սևկան**. Թզաստան, բազ բաղչայի տեղ: **Հարբալուզ**: **Նարե** (Նաուլա). Թզաստան: **Դեշվան**: **Ներքին Բարզան**. հայ 15 տուն: **Վերին Բարզան**. հայ 40 տուն. կամարակապ եկեղեցի, ավերակ: **Թոժկան**. **Սրջան**. Թաթխե Խարզան (Խարզանի գահ) էր կոչվում: **Քուրեր**: **Մրզե**: **Քոխ** (վերին-ներքին): **Ջիարեթ**. ուներ մզկիթ, հայերն էլ իրենց ուխտատեղին էին համարում: **Բլուանս** հայտնի է այդ գյուղի սոխը: **Հողյար**. հայ մեծ եկեղեցի ուներ կամար, քանդված: **Սյանըս**: **Զազնե**. հայ 100 տուն. մեծ վանք ուներ, վերածված էր մզկիթի: Աղահանք: **Մամլայե**. **Սղունդ**. հայ 200 տուն. երկու եկեղեցի Ս. Շամանիկ և ս. Հակոբ, դպրոց կար: **Հաշկադարան**. հայ 7 տուն: Ջառ – - Մեծ տարածությամբ աղահորեր ուներ: **Զրման**: **Քուզալան**. հայ 20 տուն. հին հայկական գյուղ էր. քրդերի ձեռքն էր 1915թ. առաջ: **Շերկան**. հայ-քուրդ խառն: **Գոլայե**: **Ընգարըս**. **Հրորք**. հայ 60 տուն. վանք ուներ կամարակապ, քանդված: **Զըման**, **Ջըման**: Սարտուտ (Ծըռտուտ): **Տերճոճ**. ունի հին հայկական վանք: **Շարաֆտուն**. Ալիե Ունըսեի: **Մերկան**. 4 գյուղերը: Մերկան: **Նաուալա**: **Տրոպ**: **Զոմանե**. վանք է ունեցել, կամար այժմ քանդված է: **Բեուազ**: **Բըրահ**. վանքը կամար, քանդված: **Զուուայց**: **Զոխայտ**. հայ-քուրդ խառն: **Դիմսարք**. հայ: **Հաքամի** (ներքին), հայ: **Հաքամի** (վերին). հայ. **Քոխա**. հայ և ասորի խառտն: **Այնխասր**. հայ-քուրդ խառն: **Մտրիք**. հայ-քուրդ խառն: **Սահարտա**: **Կալամարան**. Օձ բերդ, Օձաբերդ: **Դադմա**: **Գյոզալդարա**. հայ 40 տուն. Գեղաձոր: **Բայսատուն**. հայ 30 տուն: **Մելհա**. հայ: **Բաստոխա**. անմարդաբնակ: **Մազհհան**, Անմարդաբնակ: **Զհուրկ**. շեյխ Խասըմի գյուղը: **Խընասք**. բնակիչներին 1896 թ. կոտորել են, մնացել է ամայի: **Քուշան**. **Դուսատակ**. կամարակապ շեն վանք ուներ: **Գրե Չալո**. Չալոյի բլուր: **Ռդվան**. հայ 400 տուն. Խալդին դաղի ստորոտում: Կայմակամի տեղը: Եկեղեցին է Մար Գորգիս (ասորերեն) շեն և կամարակապ հայկ. եկեղեցի. ներսը և դուրսը խորան: **Դուշա** (Դյուս): **Սիլախար**. Սղունդա ջրի աջակողմը, Բշերիկի դաշտում: **Խուրին**. հայ. վանքը ավերակ է, նոր եկեղեցին փայտաշեն է: **Հաջըր**. **Ավիսկ**: **Խորըխ**:

Բիմեր. հայ 50 տուն: **Կանի խուլլ**. հայ. ունի երկու վանք, կամարածև, քանդված է մի մասը: **Գրե Հասան**. անմարդաբնակ: **Նազդար**. **Բիրըկ**. վաչկատուն են, մշտական բնակավայր չունեն: **Կանի Սիմո**. (Կանի Սուրիկ). հայ. Սիմոյի աղբյուր է **գյուղի անունը**: Սըբհի: **Բառընջ** (վերին), հայ 650 տուն. **Բաջաֆթ**. հայ 60 տուն: **Նարֆաս**. հայ 60 տուն. այժմ միայն քրդերն են ապրում, ռաշքոթանցի են: **Իլուխ**: **Զալդակա**. հայ: **Խալըկ**. հայ: **Դալա**. հայ: **Լիճըկ**. հայ: **Ռաշըկ**. **Մերկե ռաջալ**. հայ: **Դաբաբի**: **Խիլկա**: **Մեբհնա**. հայ: **Տրբեսա**. հայ: **Հադհադգք**. հայ: **Տախու**. հայ. ունի մեծ ճամփա, որ տանում է Բշերիեի դաշտը: **Հըզնամիր**. հայ 60. Իշխանի գանձ է նշանակում: **Թազարի**. հայ: Խառն հայ-եզիդ: **Կալհոկ**. հայ: **Բոլընդ**: **Զըվընկ**. Բշարե Զոլո եզիդ աղայի գյուղը: **Սինան**: **Իրմի**: **Բիլեյտեր**: **Չինիրի**: **Բազիվան**: **Քիրիվան**: **Շեդրիկ**: **Մուզզելյան**: **Շիմիզ**: **Իշկ**: **Խուսեյն**: **Այն Ռումի**: **Խեզյաք**: **Բառընջ** (ներքին):

1. **Դավթի բերդը** - Սասունի նվիրական բերդը Սասուն կոչվող Դավթի բերդն է, որ գտնվում է Ծովասարի հարավային ստորոտում, գագաթից 4-5 ժամ հեռավորության վրա, Կապասգետ և Կուսգետերի (Բոզկանի գետերի) միացման կետում մի ժայռոտ և բարձր բլուրի վրա, պատմական Քաղքիկն է, որի ավերակները և սալահատակված ճամփաների մնացորդները կան մինչև այսօր:



Դավթի բերդի Կուս գետի կողմը պտղատու ծառերի հսկա մի անտառ է, որի մեջ, բացի արմավենուց, լիմոնից և նարնջից ամեն տեսակ պտղատու ծառեր կան: Կան խաղողի վազեր, որոնց ողկույզները 1-1.5 կիլոգրամի են հասնում: Խաղողի տեսակներ են՝ Սնջարի, Չռնուտ, Մեծ պտուղ, Սև բախլթի, Քոխար, Էծու պտուկ, Եզան աչք, Աշնուկ (ուշ հասնող և կախանի խաղող) և այլ տեսակներ: Բերդի հյուսիսային մասը, դեպի Ծովասար և դեպի Կապասգետ անտառազուրկ է:



Թաթար Թոզոյան



Հակոբ Գուլոյան




Գենջո Գրիգորյան



Արե Խաչատրյան

Դավթի բերդի ականատես պատմողներ

Բերդը եռանկյունու ձև ունի, որի սուր կողմը հասնում է Կուս և Կապաս գետերի միացման կետին, իսկ խարիսխը վերջանում է բերդի հյուսիսային պարսպին զուգահեռ և անցնող ճանապարհների եզերքին: Բերդի արևմտյան կողմից, քերելով նրա ժայռոտ կողերը, անցնում է արագահոս Կապաս գետը, իսկ արևելյան կողմից նույն մոտիկությամբ՝ Կուս կամ Բոզրկան գետը: Բերդի Կապաս գետի կողմը անտառ կամ պարտեզներ չկան, իսկ Կուս գետի կողմը պտղատու բազմաթիվ ծառերի մի անտառ է: Բերդը կառուցված է մի բարձրացող բլուրի շուրջ, որի գագաթը մնում է բերդից բարձր, իսկ բերդը գոտու պես փաթաթված է նրան՝ պահելով եռանկյունի ձևը:



Սասունի Տալվորիկի Արտխունք գյուղացի Հակոբ Մովսիսյանը Դավթի և Քլիմիր կամ Շլիմիր պատմական քաղաքի մասին պատմողը

Բերդի երկարությունը հյուսիսից հարավ 300 քայլ է մոտավորապես, իսկ լայնությունը հս. մասում անցնող ճամփու կողմը 100 քայլ, որի պարիսպը դեպի երկու գետերի միացման կետը, հետզհետե նեղանալով՝ կազմում է մի սուր անկյան գագաթ, ուղղված հարավ, գետերի միացման կետին: Բերդի պատերի բարձրությունը հասնում է 50 քայլի: Բերդը կառուցված է կարմիր և այլ գույնի քարերից, որոնք ունեն 1-3 մետր երկարություն և մեկ մետր լայնություն: Հիմքը, ամբողջ երկարությամբ, միակտուր ժայռ է, կառուցվածքը՝ քար ու կիր, կամարներով ծածկված, որից միայն մի քանի տեղեր են մնացել կանգուն: Դռան երկարությունը մոտ երկու մետր է, լայնքից սայլ ներս մտնելու չափ: Բերդի ներսում կա խոր քարանձավ, որի մուտքի մեջ՝ երկրորդ մուտք, որ ախոռի

տեղ է ծառայել և որի քարե մսուրները միացած են երկաթե սեպերով ամրացված:

Բերդի ներսում երկու խողովակներով ջուր է եկել. ոմանք գտնում են, որ ջուրը Բվի գյուղի մոտիկ սարից է բերված և ստորերկրյա ճանապարհն անցնելով բերդի արևմտյան կողքից հոսող Կապաս գետի տակով, բարձրացվել է բերդի մեջ, իսկ ոմանք գտնում են, թե Ծովասարի ստորոտից է բերված: Բերդի մեջ քարե սյուն չկա, բայց պատերի մեջ, արտաքին երեսում, սյունաձև քարեր կան որոշ հեռավորության վրա, որոնք ոչ թե հենվում են տակի քարին, այլ մտնում են նրա մեջ, պահելով պատի շարքերի հավասար մակերեսը: Բերդի մասին պատմող Ախո Տոնոյանը ըստ ավանդության, ասում էր ոչ թե սյուն սյունի վրա դրվելուց է բերդը Սասուն կոչվել, այլ կառուցման ժամանակ, երբ ծանրությունից քարաշեն կտուրը կքել է, Դավիթն ինքն է սյուն դարձել, որ չքանդվի: Բերդից 300 քայլ հեռավորության վրա դեպի հարավ-արևելք, ջրաղացներ կան: Դուրոյի Ավետիսի ջրաղացի տակի քարը, ըստ էպոսի ասացող Թամոյի՝ «Դավթի ձեռքով է գրված, անմաշ է, միայն վրայի քարն է շուտ-շուտ փոխվում, որովհետև չի դիմանում տակի քարի ամրությանը»: Դա Ճախրկանքի հայտնի պատմական ջրաղացն է:

Բերդի մի այլ ականատես՝ Սասունի Սպղանք գյուղացի Մելքոն Մկրտչյանը (Աշտարակի շրջան Մազդա (Լեռնարոտ) գյուղի) պատմում է, թե այն ժայռաբլուրը, որի վրա կառուցված է բերդը, ունի մեծ երկարությամբ ժայռեր Կապասգետ և Կուս գետերի եզերքներով և հյուսիսային կողմից անցնող ճանապարհի վրա մոտ 500 մ. երկարություն: Ճանապարհի եզերքից - բերդի հյուսիսային եզերքին կա մեծ քարերով կառուցված քառասուն ոտք սանդուղք, որի ամեն մի քարը 2-3 մետր երկար, 1, 5 մետր լայն և կես մետր հաստություն ունեն: Քարե սանդուղքը արտաքին ճակատով բարձրանում է մինչև պարսպի այն մասը, որից սկսում է բարձունքը դեպի բլուր: Մի աստիճանից մյուսը սովորական քայլով հնարավոր չէ բարձրանալ, այլ լայն բացված քայլերով: Բերդի միջից դուրս ցցվող բլուրի վրա ծառեր չկան, տեղ-տեղ կանաչություններ են և տեղ-տեղ ավազահողով ծածկված: Բերդի լայն պարսպի վրա քար ու կրից շինված խցիկներ են եղել, իրարից որոշ հեռավորությամբ, որոնք այժմ քանդված են և միայն հետքերն

են երևում: Բացի հիմնական դռնից, դռներ կան և քարասանդուղքի վերջամասում և պարսպի վերնամասում: Պարսպի վրա կառուցված են 30 սենյակ ապաստարաններ՝ կռիվների ժամանակ պաշտպանական նպատակով:

Բերդի ներսի սենյակների թիվը հայտնի չէ՝ քանդված լինելու պատճառով: Ներս մտնողները ճանապարհ գտնելու, խորանալու և վերադառնալու համար իրենց հետ մոմ են վերցնում, երբեմն նաև երկար թելեր՝ թելի ծայրն ամրացնում դռանը, բռնած գնում, երբեմն հարդ փռում, նրա հետքով վերադառնալու համար:

Սենյակների դռները քարից են, որոնք հեշտությամբ բացվում ու գոցվում են, իրենց քարե հենակետերի (բոջրակների) վրա: Քարե դռների հաստությունը 20-30 սանտիմետր կլինի: Ներսի քարե դռների բարձրությունը մարդու հասակի չափ է, դռների շրջանակները՝ մեկական քարից: Բերդի ներսում եկեղեցու տեղ չկա, հետագայում խաչեր կան նկարված դռների վրա: Բերդի արտաքին պատերի քարերի գույները տարբեր-տարբեր են. կարմիր, սև, գորշ և այլն:

Գենջո Գրիգորյանը Սասունի բերդի «Հիշատակարան»-ի մասին պատմում է հետևյալը. Դավթի բերդի «Հիշատակարանը», մեր պապերից սկսած՝ պահվում էր մեր տանը: Նա մի թիզ լայնությամբ և 10-12 մետր երկարությամբ մի թուղթ էր (հավանաբար մագաղաթ), որը մոմած շորի մեջ էր փաթաթված, դրված մի փոքր սնդուկի մեջ, որը նորից մոմած, շամատանած էր ու դարձյալ դրված մի ուրիշ, ավելի մեծ սնդուկի մեջ: Գենջոն և իր եղբայրը՝ Հակոբը, միասին այդ «Հիշատակարանը» 1915 թ. կոտորածի սկզբին պահել են Կապաս գետի ափին, մի բարձր ժայռի մեջ շինված գաղտնի սենյակում, որի դուռը բացվում էր Կապասգետի ջրի հատակում, կլոր, մի նեղ դուռ, շրջանակածև կափարիչով՝ որտեղից մտել է Գենջոն, հիշատակարանը դրել այդ գաղտնի սենյակում և դուրս գալով՝ քարե շրջանակածև դուռը ծածկել է: Այդ դուռը բաց անելիս ջուրը թափվում է ներս և հատուկ անցքով, մի քանի մետր ցած, էլի նույն գետի եզերքում թափվում գետի մեջ, իսկ դեպի ժայռը բարձրացող անցքը այդ նույն թունելածև տեղից է բացվում և որովհետև գաղտնարանը բարձր տեղումն է, ջուր կամ խոնավություն այնտեղ չեն հասնում: Այդ գաղտնարանի տեղը թեև Գենջոն չէր ուզում ասել, բայց, նկատի ունենալով այն, որ կա-

րող է իր մահով այդ տեղն էլ անհայտ մնալ, նա առայժմ ասաց հետևյալը, որ այդ քարը Կապաս գետի եզերքին «Մուրադի քար» կոչված ժայռի մեջն է, ձորի եզերքին: Հիշատակարանը, պապից-պապ եկել հասել է այդ երկու եղբայրներին՝ Գենջոյին և Հակոբին, որոնք իբրև միակ վստահելի վայր հանձնել են բերդին մոտիկ Սարեկան գյուղի «Մուրադի քարին»:

- Դավթի բերդից դեպի հյուսիս,- ասում է պատմող Թաթոյի Մկրոն,- անցնող ճամփու վերևը Ծովասարի կողմը տեսել է Դավթի բերդի բնակիչների գերեզմանաքարերը և բացված գերեզմանները: Միակտուր քարից շինված դագաղներ կային մի քանի հատ, որոնց կափարիչները կիպ ծածկում էին դագաղները: Դագաղների երկարությունը 2.5-3 մետր կար: Կափարիչները սեղմ էին ու փակված՝ սեղմված դագաղներին: Մեկ-երկու քարե դագաղներ բաց էին, բայց մեջը, հողից բացի, ոչինչ չկար: Այդ քարե գերեզմաններն ու դագաղները հեղեղն էր բաց արել:[1]

2. **Դավթի Հալեպի բերդը** - Դավթի մյուս բերդը, ըստ ավանդության, Հալեպի Ուրբաթ Բազարի կենտրոնումն է, դուրան մի տեղ, կառուցված բլուրի վրա, չորս կողմը փոս՝ 25-30 մ. խորությամբ, որի մեջ, վտանգի դեպքում ջուր են լցրել, ջրի արհեստական օղակ ստեղծելով բերդի շուրջը: Այդ ավազանի միայն մի կողմի վրա կամուրջն է կապած:[2]

Դավթի կյանքի և շինարարության մասին հետաքրքիր դեպքեր են պատմում սասունցի ծերունիները: Ըստ նրանց՝ Դավիթն իր բերդից Օրանց կգնար Հալեպ բերդ կկառուցեր և երեկոյան կդառնար, կգար յուր բերդում կքներ: Սասունի բերդից մինչև Հալեպ քսան օրվա ճամփա է: Դավիթ արշալույսին կհեծներ Քուռկիկ Ջալալին, մի ակնթարթում կհասներ Ուրֆա (Եդեսիա): «Ես,-պատմում է սասունցի մի ծերուկ[3],- գնացել եմ Ուրֆա ու Հալեպ, տեսել եմ Դավթի շինած բերդը

[1] Սասունցի Թաթոյի Մկրոն, որպես ականատես, պատմում է բերդի և նրա գերեզմանաքարերի մասին: Մկրոն 80 տարեկան էր 1948թ., ապրում էր Թալինի շրջանի Դիան գյուղում:

[2] Դավթի Հալեպի բերդի մասին պատմողն է Սասունի Հոսնիք գյուղացի Արե Խաչատրյանը, ծնված 1880թ. ապրում էր Թալինի շրջանի Նրեքին Սասնաշեն գյուղում:

[3] Թաթար Թուղոյանը մի ծերունի էր, 90 տարեկան, որ 1949թ. ապրում էր Թալինի շրջանի Շղարշիկ գյուղում:

Հալեպ քաղաքի մեջ և Քուռկիկ Ջալալու մսուրը՝ Ուրֆա քաղաքից երեք ժամ դեպի Հալեպ: Դավթի ձիու մսուրը իմ բոյից բարձր էր, ձեռքս բարձրացնելով՝ հազիվ կհասնեի ձիու մսրի շրթունքին: Մսուրի քարը մի ծակ ուներ՝ շղթան անցկացնելու համար: Ձին կերակրվելիս և վիզը մսրի քարին քսվելիս քարը մաշվել և փայլում էր: Քուռկիկ Ջալալու կերը քապքապ էր (երկաթի կտորներ): Երբ ձին կշտանում էր, Դավիթը թռչում էր ձիու մեջքին և մի ակնթարթում հասնում Հալեպ, բերդը շինում և երեկոյան վերադառնում Սասուն: Դավթի շինած Հալեպի բերդը մի բլուրի վրա է կառուցված, շուրջբոլորը ջուր է, որ թշնամին բլրին չբարձրանա: Բերդին նայելիս՝ մարդու գդակ (գլխարկը) կընկներ: Բերդի բարձրության կեսից կախված է Դավթի գուրզը, որի պոչը մի մետրի չափ երկար է և վառարանի խողովակի չափ հաստ, իսկ գուրզի գլուխը կլոր մեծ գնդակի չափ: Գուրզը գութանի շղթայով է կախված:

3. **Մահբբանքի բերդը** – Մահբբանք բերդը, որ կոչվում է նաև Ամիրի բերդ, գտնվում է Մահբբանք գյուղում՝ Ծովասարի արևելյան փեշին: Ամիրի բերդի տերը Խութ և Բռնաշենի տերն է եղել, անունը Բռնիկ, որից և այդ երկիրը կոչվել է Բռնաշեն:

Այդ բերդի կառուցման մասին ավանդությունն ասում է, որ Թադեոս առաքյալը գալիս է Խութ-Բռնաշեն՝ քրիստոնեություն քարոզելու, Մահբբանք գյուղում կանգ է առնում իր ընկերների հետ միասին ճաշելու համար: Գյուղից դուրս գալով դեպի Սև սար, ճանապարհին ծարավում են: Թադեոս առաքյալը գավազանը զարկում է գետնին և մի աղբյուր է բխում, որի հորդառատ ջուրը խմելիս, սև գույնի ոչխարները սպիտակ գույն են ստանում, նույնիսկ հովվի սև շունը, լակելով այդ ջրից, իբր սպիտակել է: Եվ այն հովիվները այդ հրաշքի մասին պատմում են Բռնիկ իշխանին, որ ձիով գնում է այն վայրը, ուր աղբյուրի վրա իր ընկերներով հանգստանում էր առաքյալը: Վերջինս Բռնիկին հայտնում է, որ տեղ են փնտրում վանք շինելու համար: Իշխանը թույլատրում է միայն մի պայմանով, եթե բժշկեն իր միակ որդուն: Առաքյալն այդ ջրով լողացնում, բուժում է տղային: Իշխանը համաձայնվում է, որ վանքի ծախսերն ինքը հոգա, պատերը ոսկուց և արծաթից, բայց առաքյալը չի համաձայնվում, ասելով, թե ոսկին և արծաթը հափշտակվում են, որով և վանքը կքանդեն: Վանքը կառուցում են այդ աղբյուրի վրա, որի համար էլ կոչվում է Սուրբ Աղբյուրիկ կամ Սուրբ Աղ-

բերիկ, իսկ իշխանը այդ ոսկին և արծաթը ծախսում է Մահբբանքի վանքից 2-3 կմ հեռու բերդի շինարարության վրա, որ և կոչվում է Մահբբանքի կամ Ամիրի բերդ:

4. **Ռաբաթի բերդը** - Ռաբաթի բերդը գտնվում է Խութի Ռաբաթ գյուղի արևմտյան մասում, մի բլրի վրա: Բերդի շուրջն անտառապատ է: Ըստ ականատես պատմող Խութեցի Օհանի՝ քարերը սրբատաշ են, մեծ և սեղանի մեծությամբ: Պատերի մի մասն էլ դեռ կանգուն է: Ռաբաթի բերդը Ծովասարի արևելյան կողմումն է, 4-5 ժամվա ճամփա նրանից հեռու:

5. **Բլրկա Բերդգոռ և Ընկուզկա Բերդը** - Բլրկա Բերդգոռ և Ընկուզկա Բերդը գտնվում են Բլրիկ և Ընկուզիկ գյուղերի միջև: Երկու բերդերն էլ բլուրների վրա են կառուցված, որոնց միջից անցնում է բարակ ջուր, որ կոչվում է **Դեղկանց ջուր**: Ձորը, որից ջուրն է անցնում, ծաղկավետ է: Այդ ծաղիկներից հեքիմները դեղ են շինում, որի համար և կոչվում է Դեղկանց Ձոր: Ըստ ավանդության, թե՛ Բլրակի և թե՛ Ընկուզկա բերդերը շինել է Բռնիկ թագավորը (իշխանը): Երկու բերդերի չորս կողմերն անառիկ ժայռեր են և անտառներ, միայն մի ճամփա Ընկուզիկ գյուղից գնում է դեպի այդ բերդերը: Բերդերի միայն ավերակ պատերն են մնացել:

Կա նաև Դաշտա Միրանի բերդ, որ նշանակում է Դաշտա-Միրան (իշխանաց դաշտի) բերդ:

Այդ բերդի մասին տեղեկություններ չկան:

6. **Էդինակի բերդը** - Էդինակի բերդը (Կալա Էդինակ). Սասունի Խուլբի շրջանի գյուղից դեպի Փասուր գնացող ճամփու վրա է գտնվում: Էդինակի բերդը շինված է բլրի գագաթին: Բերդի մոտից են անցնում Շենիկից, Թարխուշից և Խոզմո սարից հոսող ջրերը, որոնք Խուլբա ճամ են կոչվում: Բերդը գետի աջ ափին է: Մուշից դեպի Փասուր գնացող ճանապարհը Էդինակի բերդի կողքով է անցնում: Բերդը մոտիկ է Գոլա Ների (վայրիների այծ) կոչված նեղ կիրճին, որի վրայից որսորդներից փախչելիս թռչում է վայրի այծը: Բերդի տիրոջ անունը Էկին է եղել, ունեցել է երկու եղբայր՝ Ֆիկին՝ Կանդալա Հեշինի տերը, Կիկին՝ մեծ եղբայրը, որին պատկանել է Ռախման Սարի բերդը: Այսպիսով Էկին, Ֆիկին և Կիկին են եղել Սասունի Խուլբ և Խիանի տերերը:

Էդինակի բերդի պատերը քար ու կիր են, կլոր - բրգաձև ոչ անկյունավոր: Կանգուն մնացած պատերը հասնում են երկու


մետր բարձրության: Բերդի վրա, ասում են, ոչ ոք բարձրանալ չի կարող. նրա ճամփան գետի կողմից է, իսկ գետը դարերի ընթացքում խորանալով՝ բերդի մուտքը մնացել է բարձր ժայռածորի կողերի մեջ: Բերդի չորս կողմը խորխորատը փակել է ամեն ճամփա, այն դարձնելով անմատչելի մի գագաթ: Բերդի պատերը սպիտակ են երևում, «Կաթ ու կիր» են,- ասում է պատմող սասունցի Հակոբ Եղիազարյանը:

7. **Կանդալա Հեշին բերդը** - Կանդալա Հեշինը՝ Ֆիկին եղբոր բերդը, գտնվում է Սասունի Խիանի շրջանի Աիրոնք գյուղի մոտ, էդինակի բերդից դեպի Փասուր Խուլբա ճամ գետի աջ ափին: Հյուսիս - արևմուտքից գետն է հոսում, արևելյան կողմը՝ դուրան, հարավայինը՝ լեռ ու ժայռոտ: Բերդի ետևի կողմով անցնում է Փասուր-Շեն-Մուշ գնացող ճանապարհը: Կանդալա Հեշին բերդը սև քարից է կառուցված: Գետի կողմը նայող պատերը 2.5-3 մետր բարձր են, իսկ ճամփի կողմը պատերը քանդվել են և գետնին հավասարվել: Բերդի շուրջը ցանցառ ծառեր են:

8. **Ռախմանա սարի բերդը** - Ռախմանա սարի բերդը պատկանել է մեծ եղբորը՝ Կիկիին: Բերդը գտնվում է Ռախման սարի գագաթին: Սարի ստորոտին մոտիկ, գագաթից 7 կմ ցածր, անծայր մի քարայր է, ուր ժամերով գնում, բայց վերջը չես գտնում: Եղել է, որ մարդիկ անդարձ կորել են քարայրում: Բերդը կրաքարից է շինված, սպիտակագույն է: Բերդի շուրջը անտառուտ է: Փասուրից Ֆարխին (Տիգրանակերտ) գնացող ճանապարհից 5 կմ հեռու, բերդի ստորոտից է անցնում Խուլբա ճամի ջուրը:

Տավրոս լեռներից մինչև Խալդին-դաղ լեռները և Ազնվաց Ձորից մինչև Աշմուշատ (Արշամաշատ), Սասունի բերդերը, որպես քարե լեզուներ, մեզ պատմում են լեռնային Արմենիայի մասին, որն իր արտահայտությունն է գտել նաև մեր էպոսի մեջ, լուռ վկաներ, որոնք անխորտակելի պատվար են հանդիսացել Ասորեստանի, մեդացիների, աքեմենների, պարսիկ, արաբ, մոնղոլ և թուրք զավթիչների դեմ:

9. **Սատանի կամուրջը** - Սատանի կամուրջը գտնվում է Փուրխ և Խլիովիտ գյուղերի միջից անցնող Տալվորիկ գետի վրա, ջրի մակերեսից 40-50 մետր բարձր կանգնած երկու կամարաձև ժայռերին, որոնք նրա միակ հենակներն են և բնական կառուցմամբ իրար միացված ամուր կամարակապով:



Խութեցի Խոդեդան
Մեջտեղում՝ Սասունի Գեղաշեն գյուղի դպրոցի աշակերտները՝ ծնողների հետ (1910թ.): Ներքևում՝ Մուշ քաղաքը և Սասունի ձյունապատ Կուրտկ լեռը:




Այդ կամուրջը Սասունի 1894թ. ապստամբության ժամանակ տալվորիկցիները, ինքնապաշտպանության նպատակով, քանդել էին, հետո Փուրխ գյուղի հայտնի ուստա Գասպարն է վերակառուցել՝ տալվորիկցիների միասնական ջանքերով: Ուստա Գասպարը Սասունի թեև անգրագետ, բայց հմուտ ճարտարապետն էր, դպրոցական շենքերի և գեղեցիկ տների «տեխնիկը»: Կամուրջի վերակառուցման երկրորդ վարպետը Խլիովիտ գյուղացի Հազոյի Դավոն է: Այդ կամուրջը Սատանի կամուրջ է կոչված նրա համար, որ իր տեսքով ու բարձրությամբ և իր կառուցվածքով սոսկում է պատճառել անցնող-դարձողներին: Կամրջի վրայի գրությունը ոչ ոք դեռ չի կարդացել:

10. **Ֆռֆըռ քարը** - Ֆռֆըռ քարը Փուրխ գյուղից դեպի հյուսիս գտնվող և Հոսնուտ գյուղի մոտերքումն է, Տալվորիկի գետի աջ ափով ընթացող ժայռուտ, անանցանելի ճանապարհի վրա: Փուրխ-Հոսնուտ գյուղամիջի ժայռերից դուրս ցցված 8-10 մետր բարձր միակտուր մի քար, որի տակից մարդ սոսկումով է անցնում: Մշտապես փչող քամին այդ ժայռին հանդիպելիս «ֆռֆըռ» ձայն է հանում, որի համար քարն էլ կոչվում է Ֆռֆըռ քար, որ իր անառիկ դիրքով պաշտպանության վայր է հանդիսանում Սատանի կամրջին: Ֆռֆըռ քարից դեպի ձորը, դեպի Տալվորիկ տանող ճանապարհը անտառուտ է:

11. **Փրա Գերթո** - Փրա Գերթոյի կամուրջը խազալիկ գյուղի ջրի վրա կառուցված մի քարաշեն, կամարակապ կամուրջ է: Կամուրջը կառուցող վարպետ Գերթոյի անունով է կոչվում, որի վրա կա և նրա հիշատակարանը: Փրա Գերթոյի քարերը կարմիր գույնի են:

12. **Փրա Բաթման** - Փրա Բաթմանի կամուրջը կառուցված է, ըստ ավանդության, Բաթման անունով վարպետի ձեռքով, որի անունով էլ կոչվել է: Կամուրջն ունի 50-60 մ երկարություն և լայն է այնքան, որ երկու մեծ ավտոմեքենա միաժամանակ ազատ անց ու դարձ կարող են անել: Գետի մակերեսից կամուրջը 4-5 մետր բարձր է. երկարության տակ հինգ դուդեր (սյուներ) կան: Կամրջի երկու ծայրերին երկու կամարակապ խցիկներ կան, որոնց մեջ երկու զինված պահակներ են մնում, մեկը դեպի հարավ, մյուսը դեպի հյուսիս նայող լուսամուտով հսկելու համար:

Բաթմանի կամրջի հիմնադրման մասին պատմվում է հետևյալ ավանդությունը. Բաթմանն իր կամրջի հիմքը գցելիս, երբ հաջորդ օրը գալիս է, տեսնում է, որ հիմքը չկա, ջուրը տարել է: Այս բանը մի քանի անգամ կրկնվում է, մի օր էլ երազում տեսնում է մի ծերունու, որ ասում է. «Հիմքում մի կենդանու կամ մի մարդու պիտի դնել և պատը նրա վրա կանգնեցնել, այն էլ առավոտյան առաջին հանդիպող մար-



դուն կամ կենդանուն»: Բաթմանն առավոտյան աշխատանքն սկսելիս նկատում է, որ իր սիրած կինն ու որսի բարակը գալիս են. հուզվում է, բայց որ բարակն է առաջ գալիս՝ ուրախանում է: Սակայն հաց բերող կնոջ ոտքը քարի է դիպչում, ձեռքից կերակրի ամանն ընկնում, կերակուրը թափվում է. շունը զբաղվելով թափված կերակրով՝ ուշանում է, իսկ կինը հասնում է ամուսնու մոտ: Բաթմանը տխրում է, կինը հարցնում է տխրության պատճառը. մարդն ասում է կնոջը տեսած երազի մասին: Կինն ասում է. «Մահը մահ է, շինիր կամուրջդ»:

Բաթմանը կնոջը ողջ-ողջ դնում է կամրջի հիմքում ու սկսում հաջող կառուցել, որի պատերի բարձրացման հետ իր աչքի առաջ բարձրանում է կնոջ չքնաղ արձանը՝ կամրջի հարավային ճակատի մեջ, ծծերից հոսող կաթնաղբյուրներով, որից ճամփորդներն իրենց ծարավն են հագեցնում:

Փրա Բաթման կամուրջը նախաքրիստոնեական ավանդության մեջ էլ է հիշվում: Երբ Գրիգոր Լուսավորիչը Տարոնում, Սբ Կարապետ վանքի տեղում հեթանոսական կենտրոնը քանդում է, քրմերին կոտորում, Դիմիտր և Գիսանե պետերին սպանում և այրելով նրանց մարմինները, մոխիրն ուղարկում է Փրա Բաթմանի մոտ՝ ջուրը թափել տալիս, մի կաղ Դև գալիս խնդրում է, որ իրեն չսպանեն: Այս ավանդությունը գրի է առել Գ.Վ. Սրվանձտյանը:

«Լուսավորիչ ժողվեց դիւան լցեց զնդան,
Կազն դևն եկաւ ասաց, յաման,
Ձիս մի դներ մութ զընդան,
Կեղնիմ ես վանքին փոշեհան,
Տանեմ թափեմ Փրե Բաթման,
Մինչ որ Քրիստոս գա դատաստան»:

Փրա Բաթմանի մասին Սասունի ժողովուրդը շատ այլ ավանդություններ էլ էր պատմում:

13. **Արծվի բույնը** - Գտնվում է Սասուն գետի աջ ափին, Հարթք գյուղի մոտ: Հետապնդվող սասունցիները երկար և ամուր պարաններ իրար կապելով և կախ տալով Արծվի բույնի վերև գտնվող ծառերից, մեկ-մեկ կախվում էին Արծվի բույնին հասնող պարանից և իջնում այնտեղ, դուրս ցցված մի ժայռի վրայով մտնում Արծվի Բույնը:

Թաքնվողները մեկը մյուսի ետևից նույն ձևով իջնում էին Արծվի բույն ու վերջում գյուղացիները քանդում էին պարանը ծառից ու տանում իրենց հետ, մեկ էլ նույն ձևով հաց, ջուր և այլ անհրաժեշտ բաներ իջեցնում աշխարհից կտրված Արծվի բույնի բնակիչներին, կամ երբ վտանգն անցնում էր, նույն ազատարար պարանը ծառերին կապում, թողնում էին Արծվի բնի առաջ նրա մի ծայրը, որից բռնելով բարձրանում էին Սասունի «արծիվները»: 1894թ. օգոստոսին այդ Արծվի բնում պաշտպանված 8-10 սասունցի ղեկավարների տեղն իմանալով, թուրքական կառավարությունը նույն միջոցներով՝ պարանով, իջեցնում է Հարթ գյուղացիներ, բանակցում Մուրադի (Համբարձում Բոյաջյան), Խաչոյի Գասպարի և այլ իշխանների հետ, որ հանձնվեն, իսկ երբ նրանք չեն հանձնվում, թուրքերը թողնում, գնում են, սակայն մի քանի օր հետո Խաբլջոզի և Փսանքի կողմից լեռնային թնդանոթներով զինված, գալիս են Տալվորիկի ջրի ձախ ափի վրա, Արծվի Բույնի ուղիղ դիմացը և սկսում թնդանոթներով ռմբակոծել Արծվի բույնը՝ նրա բնակիչներին այդ քարանձավի մեջ ոչնչացնելու նպատակով: Սակայն Արծվի բույնը խոր և զիգզագ քարանձավ է լինում և թնդանոթի գնդակները միայն ժեռ քարերից կտորներ էին պոկում, անվնաս մնում էին ապաստանածները: Գետի ձախ ափից քրդերեն և հայերեն լեզուներով բարձրաձայն կանչում էին նրանց հանձնվելու: Ստիպված այդ իշխանները հանձնվում են, որովհետև և՛ ցերեկ, և՛ գիշեր հսկում էին դիմացի ձախ ափից, որ հաց, ջուր և զենք չիջեցնեն Արծվի բույնի բնակիչներին: Չորրորդ զորաբանակի հրամանատար Մյուշիր Զեքի փաշան 1894թ. օգոստոսին Արծվի բնում ապաստանածներին ձերբակալում և ուղարկում է Բիթլիս քաղաք, իսկ ինքը Սուլթան Համիդից կայսերական նվեր ստանում դրա համար:

14. **Չկնգոլ** - Եթե Արծվի բույնը «արծիվներին» էր ընդունում միայն, ապա նրանից քիչ դեպի հյուսիս, Տալվորիկի ջրի աջ ափին, գետի հոսանքից մի քիչ բարձր գտնվող Չկնգոլը նրանց «ծագերին» էր ընդունում՝ սասունցի, հատկապես տալվորիկցի ծեր կին և երեխաներին, որոնք Հարթք գյուղից դեպի ներքին Հարթք կոչված թաղն էին իջնում և մատչելի ճանապարհով գնում հազարներով ապաստանում այդ քարանձավի մեջ, որի դուռը բնական մի անցք է և բացվում է գետի աջ ափի վրա:

Չկնգոլ է կոչվել նրա համար, որ այդ քարանձավի դռնից մինչև գետը եղած տարածության վրա մի աղբյուր է հոսում քարանձավից և թափվում գետը: Այդ աղբյուրի ջրի հետ. քարանձավում եղած մի լճից ձկներ են դուրս գալիս և գնում աղբյուրի ջրի հետ թափվում գետը, և գետից գալիս այդ նույն ջրային ճանապարհով մտնում քարանձավի լճի մեջ:

Չկնգոլի քարանձավը նախ սկսում է մի դռնով, որից ներս 10-15 մ խորության վրա բացվում են նոր, բնական, անձև երկու դռներ աջ և ձախ ուղղությամբ, որոնցից մտնում են երկու քարանձավներ, որոնք խորն են ու մութ, մերթ լայն, մերթ նեղ և որոնց վերջավորությանը ոչ ոք չի հասել: Դրանց մեջ հազարավոր մարդիկ կարող են տեղավորվել և միշտ տեղավորվել են 1894, 1904 և 1915 թթ. կոտորածներին՝ նախապես այդտեղ փոխադրելով սննդամթերք և այլ անհրաժեշտ իրեր: Չկնգոլի քարանձավի խորքում վառվող կրակի ծուխն էլ դուրս չի գալիս և նշմարվում, որը նույնպես օգնում է պաշտպանության գործին: Այժմ Աշտարակի և Թալինի շրջանում գտնվող տալվորիկցիների մեծ մասը Չկնգոլի քարայրումն են պաշտպանվել, որտեղ ոչ մի թշնամի չէր համարձակվում ներս մտնել: 1916թ. ապաստանողները ազատվել, շնորհիվ ռուսական բանակի, Մուշ են եկել և փրկվել են ու անցել Կովկաս: Արծվի Բույնն ու Չկնգոլը, զարհուրելի ոճիրների ժամանակ, ժողովրդի ամուր ապաստարաններն են եղել, «գերեզմաններ»՝ ուր թաղվողները կենդանի մնացին ու ազատվեցին:

15. **Սուրբ Աղբյուրիկ վանքը** - Սուրբ Աղբյուրիկ վանքը գտնվում է Սև Սարի հարավային փեշին. մի դուրան տեղում, որը, ըստ ավանդության, Թադեոս առաքյալն է կառուցել:

Հ.Ն. Սարգսյանն այս վանքի մասին գրում է. «Թադեի առաքելոյ քարոզությամբ եկեալ ի կողմանս յայսոսիկ, և հրաշիւք բժշկեալ զորդ Բռնիկ իշխանին, գավառապետի երկրին, որ նստեր ի բերդի շինելոյ ի գագաթն միոյ ի լերանց, ուր և երևի ցարդ աւերակ նորա...: Եւ Բռնիկ կատարեաց ըստ խրատու առաքելոյն: Յետ ժամանակաց շինեցավ այլ եկեղեցի գմբեթաշեն որմնակից եկեղեցւոյն Թադեի»: է ի մենաստանիս և սուրբ նշան մականուանեալ գործել յարոյց. իբր զի ի Մանազկերտ որդի գաւառապետի մանուկ մատաղ յանգգուշութենէ ընտանեաց անկեալ ի թոնիր բորբոքեալ և այրեալ՝

լինի գործելի, այն է ածուխ...»:[1] Բուժվում է Բռնիկ իշխանի որդին և Մանազկերտի ծուխը տրվում է Ս.Աղբյուրիկին:


Սուրբ Աղբյուրիկի մասին Մելիքսեթ գրիչը նշում է, որ Խութի մեջ 1426 թ. եղել է Քեռգու գյուղաքաղաքը, ուր գտնվում էր Վանդիր անունով, Մեծն Թադեոսի վանքը: Գրիչի այդ հիշատակարանում կա նույն վանքի կնիքով կնքված ավետարան, գրքի վերջումն է կնիքը:[2]

Սուրբ Աղբյուրիկը պատմական Վանդիր վանքն է: Աղձնիքի եպիսկոպոսանիստ վանքը, ուր իր կյանքի վերջին տարիներին ապրել է Գրիգոր Մագիստրոսը (10-րդ դար), որպես վանահայր և գրել է իր հռչակավոր թղթերը Սասունի Թոռնիկյան իշխանության Թոռնիկ Մամիկոնյանի մասին: Վանդիր վանքը Ժ-ԺԳ դարերում եղել է Սասունի իշխանների պանթեոնը և ուխտատեղին թե՛ հայերի և թե՛ քրդերի համար: Վանքի առաջին վանահայրն է եղել Աբդիշո ասորին, որ Մովսես կաթողիկոսից ձեռնադրվել էր եպիսկոպոս 508 թ-ին: Վանքի երկաթե դուռը նայում է դեպի արևելք՝ Բիթլիս, ուր 50 քայլի վրա կա մի մեծ աղբյուր, որի անունով վանքն էլ կոչվում է Սուրբ Աղբյուրիկ: Վանքն ունի երկու գմբեթ, մեկը վեղարածև, մեծ և կարմիր քարերով կառուցված, իսկ մյուսը՝ զանգակատուն՝ կապույտ քարերով շինված: Վանքը ամուր պարսպապատ է և ծառայել է միաժամանակ որպես բերդ՝ հարձակումներից պաշտպանվելու համար: Վանքի մյուս դուռը նայում է դեպի արևմուտք, դեպի Մուշ: Վանքի շենքը, պարսպի ներսում, շրջապատված է երկաթե ճաղերով, եկեղեցու ներսի դուռը սաղաֆով է ծածկված և ունի երկու փեղկ, իսկ դրսի դուռը՝ ամուր երկաթից: Սյուները քառակուսի են, որը ցույց է տալիս այդ 5-6-րդ դարերի շինության բազիլիկ ճարտարապետությունը:

Ս. Աղբյուրիկ վանքն ուներ երկու վարդապետ և մի դպրոց, ուր ընդունվում էին հատկապես որբ երեխաներ, որպես գիշերօթիկ: Վանքի ներքևում ջերմուկ կոչվող մի աղբյուր կա, ուր գնում էին հիվանդները, լողանում՝ բուժվելու համար:

Վանքն ուներ իր կալվածքները երեք վայրերում, որոնք գտնվում էին վանքի շուրջը: Անասնապահության համար հատկացված երեք վայրերից մեկում պահվում էին ոչխարները, մյուսում՝ այծերը, երրորդում՝ խոշոր եղջերավոր անասունները: Վանքի ենկամուտը բավարարում էր և՛ վանքին, և՛ հյուրերին: Ծերունի Խոդեդանն ասում էր. «Լաո, Ս. Աղբերկու վանքի (հավատամ խոստովանըմ զինքը, ասելով խաչակնքում է) թոնդիր տարին տասներկու ամիս կվառեր, ուխտ և ըխտավոր կուտեր»:[1]

16. **Գոմոց վանք** - Գոմոց վանք կամ Սուրբ Պետրոս Առաքյալի ճկույթ վանքը, Սասունի Փսանաց գավառի մեծ ուխտա-



տեղին է և միաժամանակ շրջակա գյուղերի ազգաբնակչության ապաստանավայրը:

Գոմոց վանքի մասին պատմում են հետևյալ ավանդությունը[2]. Գոմոց վանքի վանահորը Գոմք գյուղի ռեսն ստիպում է, որ գնա Քաղքիկի անտառից չոր փայտ բերի: Վանահայրը գնում և մեծ տանջանքով փայտը բերում է ռեսի տուն և անիծում, որ նրա տանը ոչ մի էգ, մարդ թե անասուն, չծնի, ինքն էլ փախչում է օտար աշխարհ: Ռեսի կինն ու անասունները հղի մնում են և չեն ծնում: Ցանված արտերը չեն ծլում: Ռեսը զղջում է իր բռնության համար և գնում է փնտրելու վանահորը, հասնում է Երուսաղեմ և իմանում, որ վանահայրն այդտեղ մահացել է: Ռեսին խորհուրդ են տալիս գնալ Հռոմ՝ Պետրոս առաքյալից թո-

[1] Հ. Ն. Սարգսյան, «Տարեգրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս», Վենետիկ, 1864թ., էջ 238-239:
[2] Մատենադարան, ձեռագիր 3456-ի հիշատակարանից:

[1] Խոդեդանը Խութի Դաշտադեմ գյուղացի է, 91 տարեկան և 1947թ. ապրել է Թալինի շրջանի Իրինդ գյուղում: Նա պատմեց Ս. Աղբերիկ վանքի մասին:
[2] Մ. Մուրադյան, «Բազմավեպ», հոդվածը՝ «Սասունի ուխտավայրերը», Վենետիկ, 1934, էջ 65:

ղություն խնդրելու: Հռոմում նրան վանքի լուսարար են նշանակում, խաղողի չորացած մի տունկ տալիս նրան և ասում, եթե սա կանաչի՝ քեզ կներվի: Անցնում է երկար ժամանակ, ռեսը երազ է տեսնում, ըստ որի՝ Պետրոս առաքյալն իր ճկույթը տալիս է նրան, որ ատամներով կտրի և վերցնի: Լուսարարն այդպես էլ անում է, կծում, կտրում է ճկույթը: Ապա Պետրոս առաքյալին հայտնում է. «Երբ հասնիս Գոմք, այնտեղ, որտեղ ջորին երրորդ անգամ ծունկը գետին տա, մի վանք կշինես - ճկույթ վանք անունով և մեղքերդ կներվեն, էգերը կծնեն, արտերը կկանաչեն և յոթը ջորի փող ու ապրանք են տալիս՝ ուղարկում իր երկիրը, որտեղ ջորու ծնկաչոքման վայրում կառուցում է Գոմքի Ճկույթ վանքը:

Հ.Ղ. Ալիշանը Գոմոց կամ Մատիհ Առաքելոց մասին գրում է. «Առաջնորդ Հայոց կողմանցս նստի ի Մատիհ Առաքելոյ (Պետրոսի) վանս մերձ ի Մարութ լյառն (Մարութա սարը - Վ.Պ.), ուր պահի մատն առաքելապետին բերեալ յառաջ քան զժ դար ի Հայս՝ յառնէ միոջէ, որ գնաց ի Հռովմ արծակել ի Բանադրանաց քահանայր գեղջ իւրոյ, որպես պատմի ի Յայսմաւուրս և ի հին Տոնականս, և գիւղն այն կոչի Գոմ Բերայրի, և վիճակն Կոգովիտ և Ասպագունիք»:[1]

Մանուկ Մնջոյանի պատմածը Գոմոց վանքի և նրա վանահայր տերտերի բանադրանքի մասին է- Գոմի գյուղի ռեսի (գյուղապետ) - և Ալիշանի գրածը «յառնէ միոջէ», որ գնաց ի Հռովմ արծակել ի բանադրանաց քահանայի գեղջ յիւրոյ...«ցույց են տալիս նույն վանքի հիմնադրման պատմությունը, որ թե՛ ժողովրդի ավանդությամբ, և թե՛ գիտնական Ալիշանի միջոցով եկել, հասել են մեր ժամանակին:

17. **Հազզոյի Կոնոնոսի վանքը**[2] - Այս վանքը հիշատակվում է Մատենադարանի Հայսմավուրքի մեջ: Կոնոնոս վանքի դռան առաջ, հարավային պատի մոտ Շեխ Ամարի գերեզմանն է, որ վանքը ամիրաների հարձակումներից պաշտպանելու համար, ի հարգանս նրա՝ թաղել են այդտեղ: Գերեզմանաքարն ու հիշատակարանը մնում են:


18. **Քամատուն վանքը** - Նորշենի արևմտյան կողմում, Մարջու և Ասու գետերի միացման կետում կա մի ավերակ վանք, սրբատաշ քարերով, որ կոչվում է Քամատուն, ըստ ավանդության՝ Ատոմ Գնունու և Մանաճիհր Ռշտունու սպանության վայրն է:

Կուսգետի ակունքում կա Վանդիր կոչված մի աղբյուր, որ 5 մասի բաժանվելով, կարող է 5 ջրաղաց պտտեցնել: Ըստ ավանդության, այդ աղբյուրը գալիս է Սբ Աստվածածին վանքի առաջից, ունեցել է մեծ վանք Վանդիր անունը, որից կոչվել է աղբյուրը, որ «կայծակի հարվածից է բխել» այդ վայրում. մեծ ուխտատեղի էր:

Հետաքրքրական է, որ այս վանքը՝ Վանդիրը, կրում է Սբ Աղբյուրիկ կամ Վանդիր վանքի անունը, որոնք իրար մոտիկ են, թերևս հիմա էլ:

19. **Ժրենց վանքը** - Ժրենց վանքը խարզան գավառումն է. այժմ ավերակ: Այդ վանքը Թալիշի վանքի (Աշտարակ) մեծության չափ է, կամարակապ և սյունազարդ:

20. **Մարութա վանքը** - Մարութա կամ Սուրբ Աստվածածին վանքը նույնպես մեծ է, այժմ ավերակ վանք է համանուն լեռան ստորոտին, Հաութ, Ասի և Սղնուտ գյուղերին մոտիկ: Ըստ ավանդության՝ վանքից մինչև Փսանաց գավառի Գոմոց վանքը անց է կացված եղել մի բարակ շղթա, երբ Գոմոց վանքի զանգակը հնչեցնում էին, հնչվում էր Մարութա վանքի զանգակը և հակառակը: Վանքից մինչև Սասունի բերդի ջուրը - Կապասգետ և Կուսգետ, անց է կացված եղել թունել՝ վտանգի և պաշարման ժամանակ գետից ջուր ստանալու համար, իսկ խաղաղ ժամանակ Մարաթուկի սարից՝ աղբյու-



[1] Հ.Ղ.Ալիշան, «Տեղեկագիր Մեծաց Հայոց», Վենետիկ, 1855թ., էջ 44:

[2] Հազզոյի մասին Հ.Ղ.Ալիշանը գրում է. «Խզու կամ Հազու վիճակ, որ է Խարզան, այն է Արզն Աղձնյաց, զոր հիշեն գիրք մեր...», (Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855թ., էջ 44):

րից խողովակով ջուր է բերված եղել: Ասում են, երբ Զոխի Փրա բեկը հարձակվել է Սասունի վրա, վանքը թալանել և երկու վարդապետներին ու մի քանի քահանաներ գերեվարել է, ուղարկել Սղերդ, այն ժամանակվանից Մարութա վանքն այլևս վանահայր չի ունեցել:

Մարութա վանքի գագաթից երևում են Սիփանը և Մասիսը, ինչպես և Դիարբեքիրի Խարաժտախի սարը, որ հինգ օրվա ճանապարհ հեռու է: Մարաթուկի վանքը ամեն տարի Վարդավառին ուխտի էին գնում Խարզանի, Խաբլջոզի (Հազզոյի), Մոտկանի, Փսանքի և այլ շրջանների սասունցիները և 3-4 օր մնում: Առաջին օրը մեծ Մարաթուկի վրա, երրորդ և չորրորդ օրերը՝ պարի, նշանառության, փահլևանների խաղի օրերն էին: Մեծ հռչակ էր վայելում այն մարդը, որ Մարութա զորությամբ նշանառության առաջնությունն էր խլում: Մեծ Մարաթուկի գագաթից քիչ ցածր՝ Շարանքարեր կոչված տեղում հովիվն է իր ոչխարների հետ քարացած: Ըստ ավանդության՝ հովիվը Մարաթուկի լանջին, ամառվա շոգ ժամանակ, իր ոչխարներն արածացնելիս խմելու ջուր չի գտնում և ծարավ ոչխարներն սկսում են աղիողորմ հովվին նայել: Հովիվը տանջվում է, սիրտը կսկծում է ոչխարների մղկտալուց, վերցնում է իր սրինգը և բարձր մի ժայռի վրա նստում ու սկսում է նվագել, խնդրելով «բարձրիկ սուրբ Մարաթուկին», որ իր ոչխարներին մի պաղ աղբյուր տա, խոստանալով մատաղ անել: Այդ ժայռի ստորոտից, որի գագաթին հովիվը նստած սրինգ ածելիս է եղել, բխել, աղբյուր է գոյացել, ոչխարները խմել են սառնորակ ջուրը, բայց հովիվն իր խոսքը դրժել է և հոտի հետ քարացել՝ կազմելով Շարան քարերը:

21. **Անթանիու վանքը** - Անթանիու վանքը գտնվում էր Սասնո Շատախի շրջանի արևմտյան ծայրին՝ Գեղաշենի և Սեմալ գյուղերի միջև, անտառապատ մի վայրում, ուր Համբարձման տոնի օրը թե՛ Սասունի, և թե՛ Տարոնի-Մուշի հայ ազգաբնակչությունը ուխտի էր գնում: Այդ վանքն ուներ մի լուսաղբյուր, որի ջրով ուխտավորները լողանում էին բուժվելու համար: Այդ լուսաղբյուրը կոչվում էր նաև Օձաղբյուր: Ըստ ավանդության ծերացած և հիվանդ օձերը գալիս են գիշեր ժամանակ մտնում այդ ջրի մեջ, բուժվում և երիտասարդանում:

Թալինի և Աշտարակի սասունցիաբնակ 19 գյուղերի բնակչությունը Սասունից Կովկաս է տեղափոխվել 1915թ. վերջին գոյամարտից հետո, 1916-1917թթ. ընթացքում, երբ Տարոնն ու Սասունը գրավված էին ռուսական բանակի կողմից:

Ստորև համառոտակի շարադրում ենք Սասունի գոյամարտի վերջին մեկ օրվա դրվագը՝ 1915թ. հուլիսի 20-21-ի (նոր տոմարով օգոստոսի 1-2) հերոսամարտը, ռուսական բանակի մուտքը Տարոն և Սասուն, սասունցիների ազատագրումն ու Կովկաս փոխադրվելը, Թալինի և Աշտարակի շրջաններում բնակություն հաստատելը:

1915 թվականի հուլիսի 20-21-ին (ն.տ. օգոստոսի 1-2) 30-40 հազարի հասնող թուրքական զորքը և քուրդ աշիրաթների բաշիբոզուկները օղակել էին Սասունի կենտրոնական մասը՝ Գելիեգուզան, Շենիկ, Սեմալ, Տալվորիկ և Աղբիկ գյուղերը՝ Անդոկի լեռնաշղթան՝ Անդոկ, Ծովասար, Կեպին և Մարութա սարի գագաթները:

Տարոնի դաշտի 109 գյուղերի բնակչությանն իրենց գյուղերի սեփական տների մեջ 1915 թվականի Վարդավառի օրերին այրել էին, իսկ Մուշ քաղաքի հայությանը, եռօրյա հերոսական դիմադրությունից հետո, հունիսի 28-ից մինչև հուլիսի մեկը կոտորել:

Սասունն էլ իր յոթամսյա (փետրվար-օգոստոս) հերոսական դիմադրությունից հետո, 35.000 բնակչով, որոնց մեջ էին նաև Տարոնից Սասուն ապաստանածները՝ Գողգոթա էին բարձրանում: Այդ օրը՝ հուլիսի 21-ին (օգոստոսի 2-ին), Անդոկի արյունաներկ լանջերում և Կեպինում վիրավորների հառաչը, երեխաների լացը, որդեկորույս մայրերի ճիչը և թնդանոթների որոտը դղրդացնում էին ամբողջ Սասունը: Սասունցիների հրացանները լռում են: Վերջին գնդակները խնայվում էին՝ իրենց ոչնչացնելու համար: Մարդիկ հուսահատված, 1915 թվականի հուլիսի 21-ին, կեսօրից մինչև մութն ընկնելը, Անդոկի գագաթից և կողերից ամեն ուղղությամբ ապառաժներ էին գլորում լեռան փեշերից դեպի գագաթը բարձրացող կառավարական զորքերի և աշիրաթական բաշիբոզուկների վրա: Տեղացող այդ քարերից թշնամին նահանջում էր, ապա շարունակում իր հարձակումը: Հուլիսի 21-ին շարունակվեց

այդ հուսահատ գոյամարտը. թշնամին գիշերեց Անդոկի ստորոտում: Գիշերվա խավարը ծածկում է Անդոկի գագաթը, ուր վերջին անգամ մարդիկ իրար հրահրում են այդ գիշեր թողնել Անդոկը, որտեղ մնալն այլևս անհնար է: Ստեղծվում է մի սրտաճմլիկ տեսարան, խավարի մեջ, անանցանելի ճանապարհներով ծերունիներն ու կանայք, մայրերն ու զավակները, սիրելիներն ու հարազատները իրար կորցնում են: Լացը, վիրավորների տնքոցը, ժայռերից գլորվողների լեղապատառ ճիչը, գորովագութ մայրերի, որդեկորույս ծնողների հեկեկանքներն ու դրանց արձագանքները, երեխաների սրտամորմոք կանչը, Անդոկի և Կեփինի կողերում արձագանք են տալիս: Այդ գիշեր 35.000 մարդ Անդոկի գագաթում և լանջերում շրջապատվեց թուրք և քուրդ զորքերի կողմից:

Ի՞նչ կատարվեց այդ գիշեր, ոչ ոք չտեսավ:

Այդ գիշեր 10-12 հազար մարդ ստորերկրյա քարայրներում և անտառներում թաքնվեց, իսկ մնացած 25.000-ը հաջորդ առավոտ կոտորվեց հարձակվող զորքերի և քուրդ աշիրաթների կողմից: Այս սարսափելի ոճիրից Անդոկը՝ կարմրած մարդկային արյունից, դարձավ մի հուշարձան, իսկ ամբողջ Սասունի գյուղերն այրվեցին: Այս սարսափելի ոճիրների մասին Լորտ Պրայսը իր «Հայկական ջարդերու փաստաթղթերը» գրքում գրում է.

«Մինչ ճեվտեթ բեյի մսագործ վաշտերը և Քյազիմ բեյի կանոնավոր զինվորները Բիթլիսի և Մուշի մեջ զբաղված էին, հուլիսի սկիզբները թուրք հեծելազորքեր ղրկվեցան Սասուն, քաջալերելու համար քյուրդերը, որոնք հունիսի մեջ հայոց կողմեն չարաչար պարտության ենթարկված էին: Թուրք հեծելազորքն արշավեց Սասունի ստորին հովիտը և բուռն կռիվեմը վերջ՝ բռնագրավեց քանի մը հայ գյուղեր: Հուլիսին, վերջին երկու շաբաթներու ընթացքին, շարունակաբար կռիվներ մղվեցան, երբեմն նույնիսկ գիշերները: Ընդհանրապես, հայերը հաջողությամբ ետ կմղեին թուրքական զորքերու և քյուրդերու հարձակումները:

Քյազիմ բեյը Մուշը և անոր գյուղերը նվաճելե ու ջարդելե վերջ՝ խոյացավ այս լեռնականներուն վրա: Կռիվը վերսկսավ Սասունի բոլոր սահմաններուն վրա: Մեծ թնդանոթները հսկա նախճիրներ գործեցին հայոց վրա: Կորյուն, Տիգրան և 20 ուրիշ լավագույն մարտիկներ պայթած թուրք միակ ռումբով մը

սպանվեցան: Թնդանոթներու ներկայութենեն քաջալերված՝ հեծելազորն ու քյուրդերը մեծ կորովով առաջ նետվեցան: Հայերը պարտավորված էին իրենց պաշտպանության արտաքին գծերը լքել և օրեօր ետ քաշվիլ դեպի Անդոկի 19.000 ոտք բարձրություն ունեցող կենտրոնական կատարը... 3000 - անոց ուժը կոտորակվելով՝ իջած էր մինչև 1500-ի... :

Հայերեն շատեր իրենց վերջին փամփուշտները սպառելով ապառաժներու վրա, ջախջախեցին իրենց հրացանները և փարեցան իրենց ատրճանակներուն ու դաշույններուն: Թուրք զինվորներն ու քյուրդերը, որոնք 30.000-ի կբաղկանային, աստիճանաբար կմոտենային հայոց դիրքերուն: Ասկե վերջ էր, որ տեղի ունեցավ այն հուսահատական և հերոսական պայքարներեն մին, որ միշտ լեռնականներու հպարտությունը կազմած է: Մարդիկ, կանայք և մանուկներ կռվեցան դանակներով, գերանդիներով, քարերով և ամեն բանով, որ կրնային ձեռք անցնել: Անոնք լեռան զառիթափերեն վար կգլդրեին ապառաժի խոշոր կտորներ՝ սպանելով թշնամիներեն շատերը: Կուրծք կուրծքի ահավոր կռվի մը մեջ կիներ գտնվեցան, որոնք իրենց դաշույնները բազմաթիվ թուրքերու կոկորդը մխրճեցին: Օգոստոսի 2-ին՝ կռվի վերջին օրը, արյունով ներկված Անդոկի ապառաժները ինկան թուրքերուն ձեռքը:

Սասունի հայ մարտիկները, բացի անոնցմե, որոնք թուրքերու ետևն անցեր էին՝ զարնելու համար անոնց կողերը, ինկան ճակատամարտի մեջ: Երիտասարդ կիներեն շատեր, թուրքերուն ձեռքը չիյնալու համար՝ ապառաժներեն վար գահավիժեցան, ոմանք իրենց սիրասուն մանուկները իրենց կուրծքին սեղմած»:[1]

Թուրքական զորքերն ու քրդական աշիրաթը դրանով գործը վերջացած չհամարեցին. սկսեցին խուզարկել լեռներն ու ձորերը, անտառներն ու քարայրները՝ երկրին ծանոթ քրդերի միջոցով և սպանել իրենց ձեռքն անցածներին: Այս խուզարկությունները տևեցին մի քանի շաբաթ, որից հետո թուրքերն ու քրդերը մեկնեցին իրենց տեղերը: Թուրքական բանակները վերադարձան Մուշ և Ֆարխին (Տիգրանակերտ):

[1] Լորա Պրայս, Հայկական ջարդերու փաստաթուղթերը, Կ. Պոլիս, Ա. մաս, 1920, էջ 133-135:

Սասունի շրջակա քրդերը, երբեմն - երբեմն խմբերով գալիս էին Սասուն՝ մարդկային որս փնտրելու ու վերադառնում էին իրենց գյուղերը:

1915 թվականի աշնանը և ձմռանը բնության արհավիրքն սկսվեց. ձյունը ծածկեց Սասունի լեռներն ու ձորերը, ծածկելով նաև քարայրներում և անտառներում թաքնվածներին:

Փակվեցին ճանապարհները հետախուզություն կատարող թուրքական զորքերի և քրդերի առաջ, որոնք այլևս չէին երևում Սասունի այդ կենտրոնական գյուղերում: Քարայրներում և խիտ անտառներում թաքնված սասունցիներն իրենց ազատ զգալով, դուրս եկան, իրենց հայրենի գյուղերում տնակներ շինեցին կամ քարայրները հարմարեցրին բնակության: Տղամարդիկ, որ իրենց զենքերն ու վերջին փամփուշտները պահել էին, սկսեցին փոքրիկ խմբերով շրջել և այս կամ այն տեղ թաղած հացահատիկները հանել, երկանաքարերով աղալ, հաց թխել, ուտել, վայրի և վայրենացած ընտանի անասուններ որսալ և ուտել: Կարիքն ստիպում էր նույնիսկ փոքրիկ զինված խմբերով գնալ մոտակա քրդական գյուղերը, գիշեր ժամանակ, նրանց գոմերից անասուններ և հացահատիկ գրավել ու բերել իրենց նոր տները: Երբեմն և հայտնի կերպով, զինված գնում էին քրդերից իրենց անասունները խլում և բերում ու պահում ողջ մնացածներին, որոնց թիվը հետզհետե ավելանում էր քրդերի կողմից գերի տարված ստրկացրածներով, որոնք լսելով, որ իրենց գյուղերում մարդիկ կան, փախչում էին՝ բերելով զենք ու փամփուշտ: Գերությունից և թաքստոցներից հավաքվողների և ազատվածների թիվը արդեն հասնում էր 10-12 հազարի, որոնք մեծ մասամբ բնակվում էին Գելիեգուզան, Սեմալ, Շենիկ, Տալվորիկ, Խութ, Աղբի և Հեթինք, ուր արդեն ոչ թուրք էր մնում և ոչ էլ քուրդ:

Սասունից մնացել էր 10-12 հազար հոգի. նրանք գաղտնի կյանք էին վարում ու սպասում նոր արհավիրքների, կամ նոր կյանքի ու ազատության: Եթե ռուսական բանակը դեպի Մուշ առաջանար, Սասունի դաժան ձմեռն իր արհավիրքներով, ձյան հուսիններով և՛ փրկում էր ազատվածներին արտաքին վտանգից, և՛ թուրքերի ու քրդերի Սասուն մտնելուց, և իր սառնամանիքներով հնձում անօթևան մնացածներին: Սովն այն աստիճանի էր հասել, որ ձյան տակից հանում էին սատկած անասունների դիակների մնացորդները և ուտում, նույնիսկ անասելի դեպքեր տեղի ունեցան. նոր մեռնող մարդկանց դիակ-

ներն ուտում էին: Ողջ մնացածներից ոմանք կոտորածից և անտանելի սովից գազանացել էին: Արջեր էին որսում զենքով, կամ անզեն մենամարտելով նրանց հետ մի քանի հոգով, բերում, ուտում էին:

Այսպիսի պայմաններում էին ապրում և սակայն հույս ունեին, թե ռուսները Մուշը կգրավեն, և իրենք էլ կազատվեն այս անտանելի դրությունից: Հեթինքի, Աղբիկի և Տալվորիկի ազատվածները փորձում էին գնալ իրենց ծանոթ քրդերի մոտ և իմանալ իրադրությունը: Նույնիսկ երբեմն քրդերից, վստահելի մարդկանցից իմանում էին պատերազմի ընթացքի մասին: Վերջապես 1916 թվականի հունվար - փետրվար ամիսներին ազատված սասունցիների մեջ տարածվել էր մի լուր, թե ռուսները նորից հասել են Մանազկերտ և Բիթլիս: Դա մի նոր հույս, մի նոր կյանք էր ներշնչել ազատվածներին: Գելիեգուզանի մի քանի անվախ երիտասարդներ որոշել էին զինված գնալ և գիշերով մտնել Մուշի արվարձանները, ծանոթ տներին մոտենալ և հետախուզել, թե ինչ կա Մուշում, թուրքե՞րն են, թե՞ ռուսները: Այդ փոքրիկ խումբը երբեմն Մուշից քիչ հեռու ջրաղացներն էր գնում և ջրաղացատերերից գրավում ալյուրը, բերում Սասուն և երեխաներին ու կանանց սովից փրկում: Քուրդ լրաբերներ էին ճարել, որոնք Մուշից կամ քրդական գյուղերից լուրեր էին բերում սասունցիներին:

Վերջապես զինված սասունցի հետախույզներն իմացել էին, որ Մուշից թուրք աղաներ, բեկեր փոխադրվում են դեպի Գենջ և Դիարբեքիր: Այս արդեն բացահայտ ապացույց էր, որ ռուսական բանակը Մուշին է մոտենում, դրա համար հաճախ խուզարկուները գնում էին Մուշ՝ այդ բանը հաստատ իմանալու համար: Մշտական հետախուզող կետեր էին հաստատում Ծիմ (Կուռտըկ) լեռան վրա. բարձրանում էին Կուռտըկ սարի գլուխը և դիտում Մուշն ու Մշո դաշտը, ունկնդրում թնդանոթների ձայներին, որոնք շատ հեռվից լսվում էին: Այդ լուրը կայծակի արագությամբ հասցնում էին Գելիեգուզան և Տալվորիկ՝ բոլոր ազատվածներին: Քրդերից ոմանք նույնիսկ իրենց տարած հարսներին, կանանց ու տղամարդկանց ազատ էին արձակել, որ գնան Սասուն՝ իրենց հարազատների մոտ:

Սասունցիները հետազոտող մի խմբակ դարձյալ ուղարկել էին Մուշ՝ իմանալու, թե իրո՞ք ռուսները մտել էին Մշո դաշտ կամ Մուշ քաղաք: Վեց հոգիանոց զինված այդ խումբը

իջել էր Մուշ և ի՞նչ, տեսել է փափախավոր զորքերի, «ռուս, ռուս», ասելով իրար, ցույց տալով ազատարար ռուս զինվորներին, մտնում են Մուշ, ուր հարցաքննության ենթարկվելուց հետո, հետախուզողները ասում են «Արմյանին, արմյանին» և խաչակնքում, թե իրենք քրիստոնյա հայեր են, քրդեր չեն: Այս լուրը իսկույն տարածվում է Մուշ ժամանած ռուսական զորքի մեջ: Վեց երիտասարդներին զինաթափ արած տանում են բանակի շտաբ, ուր լինում են և հայ զինվորներ: Կերակրում, հագցնում են այդ վեց հետախույզներին, որոնք խնդրում են թույլ տալ իրենց վերադառնալու Սասուն և հայտնելու ազատարար բանակի կողմից Մուշը գրավելը: Վեց երիտասարդներից երեքին պահում են իրենց մոտ և երեքին լավ հագցրած, առատ սննդով և ռազմամթերքով թողնում են, որ վերադառնան Սասուն և հայտնեն ռուսների գալը:

Գելիեգուզանում անհամբեր սպասում էին Մուշ ուղարկված հետախուզող խմբակի վերադարձին, սակայն նրանք ուշանում էին: Եվս մի նոր խումբ ուղարկում են տեսնելու, թե ինչ եղան նրանք. թերևս Կուռտըկում խեղդվել են (Կուռտըկ լեռան վրա ձմեռվա փոթորիկին Մուշ գնացող կամ վերադարձող մարդկանց խեղդվելը սովորական բան էր):

1916 թ. փետրվար ամսի վերջին օրերն էին, Սասունի սարերում դեռ տիրում էին սառնամանիքն ու հուժկու քամիները:

Սեմալ հասած հետախուզման գնացող նոր խումբը տեսնում է, որ երեք հոգի Մուշից Կուռտըկի գագաթով իջնում են նույն Սեմալ գյուղը: Երբ իրար են մոտենում, սկսում են «Շայլըխի» (ուրախության հրացանաձգություն) կատարել: Ուրախության աղաղակներով մյուսներն էլ պատասխանում են այդ ռազմական բարևին:

Սասնա ծռերի մեջ շատ հին դարերից ի վեր թե՛ ուխտագնացության, և թե՛ նշանահարության մրցումների ժամանակ կատարվում էր «Շայլըխին»: Սասունի Շենիկ, Սեմալ, Գելիեգուզան և Աղբիկ գյուղերում թաքնված սասունցիները քարայրներից ու գետնափոր տնակներից մեկը մյուսի ետևից դուրս են գալիս և ուրախալի լուրը իրար հայտնում:

Ռուսական զորքը Մուշ մտնելու մասին «Հորիզոն» թերթում գրում են. «Գեր. հրամանատարի շտաբի, 6 փետրվարի.

Մեր զորքերը կռվով վերցրին Մուշը և Ախլաթը: Թշնամին փախչում է դեպի հարավ»:[1]

Մուշից եկող սասունցի հետախույզները իրենց ընկերներին պատմում էին փափախավոր ղազախների՝ ռուսական զինվորների մասին: Ուրախալի լուրը հաղորդվում էր բոլոր գյուղերում ու քարայրներում թաքնվածներին: Մի քանի օր հետո հարյուրավոր և հազարավոր սասունցիներ, տղամարդ, կին և քիչ թվով երեխաներ Սասունից Սեմալի վրայով շարժվում են դեպի Մուշ: Շրջակա դրացի քրդերն իմանալով այդ, իրենց մոտ գտնվող բոլոր հայերին բերում-հասցնում են ազատության արշալույսի ճամփան բռնող սասունցիներին ու վերադառնում իրենց տեղերը:

1915 թվականին Անդոկն իր արյունով ներկող սասունցի ժողովրդի մնացորդները նույն թվականի օգոստոսից մինչև 1916թ. մարտ ամիսը գերեզմանային կյանք ապրեցին և հարություն առնելու, օր ու արև տեսնելու համար մի հույս ունեին միայն, մի ազատարար ձեռքի էին սպասում: Այդ ազատարար ձեռքը ռուս մեծ ժողովուրդն էր, որի զավակները հաղթական մոտենում էին իրենց: Նրանք՝ սասունցիները, հիշում էին անմահ Խ. Աբովյանի խոսքերը այդ ազատության ճամփու վրա.

«Էն ի՞նչ ձեռք կըլի, որ մեր աշխարքին
էլ ետ սիրտ տա. ու կանգնացնի կրկին,
Ա՜խ, ես էն ձեռին կյանքս ղուրբան կանեմ,
Էն կոխած հողին երեսս կքսեմ,
Ապրեմ՝ իմ արինս նրան մատաղ կանեմ,
Մեռնեմ, հողիցն էլ միշտ նրան կօրհնեմ»:[2]

Այդ ձեռքը ռուս մեծ ժողովրդի ձեռքն էր, որ 1916-ի փետրվար-մարտ ամիսներին հասնում էր Տարոն, գրավում Մուշը և նրա զենքի որոտը դղրդացնում էր Սասունի լեռները, հոգի և շունչ տալիս սասունցիներին, տարոնցիներին, որոնք հարություն առած դուրս էին գալիս հայրենի երկրի թաքստոցներից, ոմանք զինված, ոմանք պատանքված ցնցոտիներով և Մարութա, Անդոկի ու Ծովասարի ձյունապատ գագաթներից Մուշ էին իջնում. իրենց սիրած քաղաքը:

Մուշ, Մուշ, Մուշն անուշ

[1] «Հորիզոն», 9 փետրվարի, 1916թ.:
[2] Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1939թ., էջ 199:

Ինքը մշուշ, հողն անուշ:

Բացականչում էին Սասունից Մուշ հասնող մարդիկ, որոնց չորացած մարմիններում սրտերն սկսում էին ուժեղ բաբախել՝ տեսնելով փափախ ու շինելավոր ռուսական զորքերին՝ իրենց փրկիչներին, որոնց հետ «սրտի լեզվով» ողջագուրվում էին, խոսում, որովհետև լեզուն անզոր էր սրտին փոխարինելու:

Կանայք, երիտասարդներ և անչափահաս երեխաներ գրկախառնվում էին ռուս զինվորներին և իրենց երեսները քսում նրանց «կոխած հողին»: Այսպես կատարվեց «Վերքի» անմահ հեղինակի իղձը սասունցիների նկատմամբ էլ, որոնք ռուս մեծ ժողովրդի ձեռքով ու զենքով՝ մոտ տասը հազար հոգի, ազատվում և կենտրոնանում էին Մուշում՝ ռուսների հովանավորության և խնամքի տակ ու «օրհնում» ազատարար ռուս մեծ ժողովրդի զավակներին:

* * *

Սասունի 1915թ. հերոսամարտին ժողովրդի պաշտպանության գործում անձնազոհության սխրանքներ գործեցին հետևյալ անձինք.

Սասունցիներ Մանուկը, Մուշեղը, Կիրակոսը, Կարապետը, Խաչոն, Հակոբը, Չոլոն, Միսակը, ուսուցիչներ Դավիթ և Կիրակոս Շրեցյանները, Միսակ Մովսիսյանը, Ներսես Առքոյանը, Քաթիբ Կիրակոսն ու Քաթիբ Մանուկը, տալվորիկցիներ Համզեն, Թաթարը, Ֆարեն և Ոզկոն, փսանցիներ, Գոմաց վանքի վանահայր Ստեփան վարդապետը և իշխան Շառոն, Գրգեի Վարդանը, Օհանի Ղազարը, Սիմոյի Թորոն և շատ ուրիշներ:

Մուշ քաղաքից Մկրտիչ Պոլեյանը, պզտիկ Արամը, Եղիշեն, Արշակն ու Պողոսը:

Մշո դաշտեցիներ Ավրանցի Արամը, Մանոն, Տիգրանը, Գոմսի Իսոն և շատ ուրիշներ, որոնց մեծ մասը հերոսի մահով ընկավ Սասունում՝ Անդոկի գագաթին մղվող վերջին մարտերում:

Փա՜ռք հայրենիքի և ազատության համար զոհվածներին:

1916թ. գարնանը ռուսական զորքի մի ճակատն ուղղվում է դեպի Սասունի Խութ և Բռնաշեն, ուր գերության մեջ էին բազմաթիվ հայեր և ազատագրելով այդ հայերին, անտառներից և ձորերից ապահով անցկացնում, բերում էին Տարոնի Խաս գյուղը և անցկացնում Մուշ քաղաքը, կազմակերպելով նրանց սննդի և հագուստի բավարարման գործը: Դեպի Կուռտիկ, Անդոկ և Շեն շարժվող մի ուրիշ ռուսական բանակ ազատագրում է այդ շրջաններում գերության մեջ և քարայրներում գտնված հայերին և դարձյալ բերում Մուշ ու խնամում: 1916թ. գարնանը ռուսական բանակի շնորհիվ ազատված բազմահազար հայերը, Մուշում կենտրոնացվելուց, խնամվելուց հետո, տրանսպորտ և հարմարություններ են ստանում և ուղարկվում Կովկաս, պատերազմական գոտուց հեռու՝ թիկունք:

Այսպես, հետզհետե «հարություն առնող» սասունցիների թիվը շատանում էր, որոնց մեծ խնամքով և հոգատարությամբ հասցնում էին դեպի Կովկաս ուղարկվող ազատագրված մյուս գաղթող հայ քարավաններին:

Սասունից, Մուշից դեպի Կովկաս ճանապարհին, ռուս մեծ ժողովուրդը և Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից պատերազմից վնասվածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեն բացել էին որբանոցներ և սննդատու կայաններ, որոնք առաջին «շտապ օգնությունն» էին հասցնում կոտորածներից ազատված մերկ և սովալլուկ գաղթականներին: Մշո դաշտի Ցրոնք գյուղում հիվանդանոց էր բացված, Աբոսում (Խնուս), Մանազկերտում և Դուտախում՝ սննդատու կայաններ, ուր որոշ ժամանակ խնամք վայելելուց հետո սասունցի և այլ շրջաններից եկած հայ գաղթականները դեպի Կովկաս էին շարժվում: Երբ ռուսական բանակի նահանջի լուրեր էին լսում, մնում էին տեղում, երբ նահանջի կասկած չէր լինում, այդուհանդերձ, նոր բնակավայր ընտրելու և բնակվելու միտք չունեին՝ պատերազմն այդ չէր թույլատրում:

Մուշի 1916թ. հուլիսի նահանջը ստիպեց հազարավոր սասունցիների և տարոնցիների թողնել իրենց հայրենիքը: Մուշի այդ ժամանակվա որբանոցներից և սննդատու կայաններից որբեր, հիվանդներ և հյուծվածներ, նույնպես բռնեցին Կովկասի ճամփան: Շարժական որբանոցներն ու սննդատու կայանները շարժվում էին Մուշից Խնուս, ապա Սարիղամիշ և Կաղզվան՝ իրենց հետ տանելով որբերի և գաղթականների հոծ բազմություն:

Միայն «Խնուսի սննդատու կայանից անցավ 5731 փախստական: Արմուտլիի կետից անցել են 11657, Կաղզվանի սննդատու կայանից՝ 9370, Ալաշկերտի կայանից՝ 3841 փախստական...» և այլն:[1] Կաղզվանում «որբ և մոլորված ե-

[1] Տեղեկագիր հայ բարեգործական ընկերության, Թիֆլիս, 1917թ., էջ 37:

րեխաների համար, որոնց թիվը 240 էր, բացված էր կայան: Դրանց մեծ մասը սասունցի - տարոնցի որբերն էին»:[1]

Դեպի Կովկաս գաղթող արևմտահայությունը, ռուսական զորքի պաշտպանության ներքո, կայան առ կայան անցնելով, հասնում է Արարատյան դաշտ:

Կարսի, Կողբի, Կաղզվանի և Իգդիրի վրայով անցնող արևմտահայ գաղթականությունը կարծում էր, որ Արարատյան դաշտը՝ իր «Ավետյաց երկիրը» հասնելով, վերջ կունենա իր տառապանքը և երկնքի տակ մի անկյուն կգտնի նոր օջախ շինելու, տուն ունենալու, նոր կյանք սկսելու համար:

Ի՞նչ էր ներկայացնում այդ «Ավետյաց երկիրը»՝ Արարատյան դաշտը 1917 թվականի աշնանը: Ի՞նչ հույսեր կային, որ անտուն, անտեր թափառող ժողովուրդը տուն-տեղ լիներ, թափառականությունից ազատվեր: Դժբախտաբար, Ավետյաց երկիրը դառնում էր թափառական կյանքի ու տառապանքի երկիր:

Նոր Սասունի որոնումը: Երբ կոտորածներից մազապուրծ եղած սասունցիները շունչ քաշեցին Արաքսի ափերին, և երբ արևն անսովոր այրեց լեռնցիներին, տարակուսանքը պատեց. մի՞թե հնարավոր է ապրել Արարատյան արևախաշ հարթություններում: Շատ որ տվին-առան, վերջը մեկն առաջարկեց՝ թողնել դաշտը և հեռանալ լեռները: Բայց ո՞ւր գնալ, որ Սասնա սարերի նման երկինքն ի վեր խոյանային այստեղի սարերը, որ արոտ ու անտառներ լինեին, որ էս սարի գլխից ձեն տալիս էն բոլոր սարերն արձագանք տային, որ արձագանքը պտույտ տար՝ յոթը սարի ետևում ծվարած գյուղը հասներ: Այս մտորումներով հինգ հոգուց բաղկացած տղամարդկանց խումբը ճամփա ընկավ դեպի հայոց լեռները:

Ելան Նորք, գնացին Գառնու սարերին դեմ առան. մեկը կանգնեց մի գագաթին, մյուսը՝ մյուս գագաթին, երրորդը՝ երրորդ գագաթին, մյուսները մտան ձորերն ու իրար ձեն տվին.- Հե, հե՛յ: Ձեն տվին, ձեն առան, բայց Սասնա արձագանքը չգտան: Ելան Գութանասար, էլի տարածվեցին. ձեն տվին, ձեն առան, արձագանք չգտան: Ելան Գեղամա լեռները, էլի ցրվեցին, արձագանք չգտան ու հուսահատ շարժվեցին դեպի Ապարանի լեռները, Արայի սարը, իջան Արագածի փեշերը,

[1] Տեղեկագիր հայ բարեգործական ընկերության, Թիֆլիս, 1917թ., էջ 38:

կրկնեցին իրենց փորձերը, կրկնեցին, կրկնեցին ու երբ հասան Աշտարակի և Թալինի բարձր լանջերը, այստեղ նրանց հոգին հանգստացավ, որովհետև Սասնա արձագանքի նման մի արձագանք լսեցին: Լսեցին և չհեռացան: Նրանք գտել էին նոր Սասունը. մարդ ուղարկեցին ու կանչեցին բնավեր սասնեցիներին: Եկան, եկան ու հաստատվեցին:

Ասում են, թե երբ սասունցիներն իրենց երկրի կարոտն առնել են ուզում, բարձրանում են լեռնագագաթները և էլի ձեն են տալիս.

- Հե-հե՛յ...:



Սասունի Գելիեգուզանի գեղջկուհիները (ձախից՝ կին է, աջից՝ աղջիկ), 1916թ.

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԹԱԼԻՆՈՒՄ ԵՎ ԱՇՏԱՐԱԿՈՒՄ

Այս մասում անհրաժեշտ ենք համարում թռուցիկ նշել, թե Աշտարակի և Թալինի սասունաբնակ գյուղերի բնակիչները Սասունի ո՞ր գյուղերից են եկել, տեղաբաշխվել այդ շրջաններում և տնտեսական ու մշակութային ի՞նչ վիճակում են գտնվում:

1. Ավանը գտնվում է Արագածի սարալանջի մի փոքրիկ հարթության վրա, Աշտարակից 28 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Կոշից 4 կմ հյուսիս: Անցյալում՝ Արշակունյաց իշխանության ժամանակ, Ավանը Կոշին միացված կոչվում էր Կվաշավան: Գյուղն ունի 3-4 սառնաղբյուրներ: Ավանի բնակիչները 1916 թվին եկել են մեծ մասամբ Սասունի Խիանի շրջանի Իշխանձոր, Արտկունք, Փառկա, Արսըկ, Մազղուն, Տալվորիկի շրջանի Հլոզինք, Մըզրա և Խութի շրջանի զանազան գյուղերից:
   Այդ գյուղում 1922-1923 ուս. տարվանից բացվել է տարրական դպրոց, որն այժմ վերածվել է լրիվ միջնակարգ դպրոցի: Այդ գյուղում գործում են ակումբը, բուժկայանը, կոոպերատիվ խանութը, փոստն ու հեռախոսը:
2. Արագածոտն գյուղը գտնվում է Աշտարակի շրջկենտրոնից 33 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք, Ավանից 5 կմ դեպի հյուսիս: Սա Աշտարակի շրջանի ամենաբարձր գյուղն է Արագածի հարավային լանջի վրա՝ պատմական Համբերդին մոտիկ: Նրա բնակիչները մեծ մասամբ խնուսցի-կոպեցիներ են: Արագածոտն անունը տրվել է ՀՍՍՀ Գերագույն սովետի 1946թ. ապրիլի 4-ի հրամանագրով: Գյուղն ունի յոթնամյա դպրոցական ակումբ և կոոպերատիվ խանութ:
3. Սասունիկը գտնվում է Աշտարակի շրջկենտրոնից 26 կմ - հեռավորության վրա, դեպի հյուսիս-արևմուտք: Սասունիկի բնակիչները եկել են Սասունի Գելիեգուզան, Ալիանք և Տալվորիկի էգու տուն, Հարթք, Արախոնք, Քորախու, Հոսնուտ գյուղերից: Սասունիկում տարրական դպրոց է բացվել 1924-1925 ուս. տարվանից և այժմ վերածվել է յոթնամյա դպրոցի: Ունի ակումբ, մանկապարտեզ, կոոպերատիվ խանութ, հեռախոս, բուժկայան, անասնաբույժ:

4. Լեռնարոտ- Գյուղը գտնվում է Աշտարակի շրջկենտրոնից 31 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք և Աշտարակի ամենաարևմտյան կողմի գյուղն է, Թալինին սահմանակից: Բնակիչները եկել են Սասունի Գելիեգուզան, Թեթինք, Էզգարդ, Սպղանք, Խոծոծվանք և այլ գյուղերից:
   1922-1923 ուս. տարվանից ունեցել է տարրական դպրոց, որն այժմ վերածվել է յոթնամյա դպրոցի: Ունի ակումբ, կոոպերատիվ խանութ, հեռախոս, անասնաբույժ:
5. Ուջան (պատմական անունը՝ Վժան) գյուղը գտնվում է Աշտարակի շրջկենտրոնից 14 կմ հեռավորության վրա՝ դեպի արևմուտք: Ուջանը Արագածի հարավային ստորոտի և Ուջանի դաշտի միացման կետումն է գտնվում, նախալեռնային գյուղ է և ունի խաղողի այգիներ: Գյուղն ապահովված է Կապույտ Աղբյուրի մաքուր, սառնորակ ջրով, որ գալիս է 4-5 կմ հեռու՝ Ավան գյուղի մոտերքից: Ուջանի բնակիչները եկել են Սասունի Հազզոյի, Խարզանի, Մոտկանի շրջանների զանազան գյուղերից: Այդ գյուղում տարրական դպրոց է բացվել 1923-1924 ուս. տարվանից: Այժմ արդեն լրիվ միջնակարգ դպրոց է:
   Ուջանի կոլտնտեսությունն զբաղվում է սերմնաբուծությամբ:
   Ուջանը հիշվում է Բագրատունյաց իշխանության՝ Սմբատ Ա Բագրատունի թագավորի ժամանակվանից, Աֆշենի դեմ մղված Դողսի հայտնի պատերազմի ժամանակ, երբ Սմբատ քաջ սուսերակիրներն ու աղեղնավորները գալիս էին Վժանից (Ուջանից):[1]
   Աշտարակի շրջանի այս վերոհիշյալ գյուղերի և ընդհանրապես, շրջանի ազգաբնակչության խտությունը կազմում է մեկ քառ. կմ-ին 38.5 անձ:
   Թալինի շրջանի 48 բնակավայրերից 16 գյուղերում բնակվում են նախկին սասունցիներ:
   ՀՍՍՀ Կենտգործկոմի 3.01.1935թ. հրամանագրով նախկին Սխաչին կոչվեց Շղարշիկ, Ղուլղարվրեշը՝ Ոսկեթաս, Մաղարջուխը՝ Շենիկ, իսկ 12.11.1946թ. հրամանագրով՝ Վերին Ղարաղոյմազը կոչվեց Վերին Սասունաշեն, Ներքին Ղարաղոյ-

[1] Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 146:

մազը՝ Ներքին Սասունաշեն, Վերին Աղջաղալան՝ Վերին Բազմաբերդ, Ներքին Աղջաղալան՝ Ներքին Բազմաբերդ, Եշիլը՝ Կաքավածոր:

1. **Ահագչի** (Ջովասար) գյուղը Թալինի շրջանի ամենաբարձր գյուղն է, փռված Արագածի արևմտյան լանջի մի սարահարթի վրա, Բուղութլու կոչվող գագաթի հյուսիսային ստորոտում: Նա Թալինի շրջկենտրոնից 16 կմ հեռավորության վրա է՝ դեպի հյուսիս-արևմուտք: Սրա բնակիչները մեծ մասամբ Սասունի Գելիեգուզան, Շենիկ, Ահրոնք, Ընձքար, Հեղին, Արտկունք, Գելիեգանման, Կապըրնի, Գեղրվանք, Գեղաշեն և Շուշանամերկ (Շուշնամերկ) գյուղերից են եկել: Ահագչին ունի յոթնամյա դպրոց, նորակառույց ակումբի շենք, հեռախոս, բուժկայան, գյուղատնտես, կոոպերատիվ խանութ:
2. **Աշնակ** գյուղը Վ. Թալինից հեռու է 9 կմ դեպի հարավարևելք, Ղարաբուրուն կայարանից հյուսիս-արևելք: Աշնակ գյուղը Թալինի շրջանի ամենախոշոր գյուղերից է՝ այգիներով և պարտեզներով շրջապատված: Բնակիչները եկել են Սասունի Փսանք, Խութ-Բռնաշեն, Տալվորիկ, Խարզան շրջանների զանազան գյուղերից: Ունի միջնակարգ դպրոց՝ մոտ 300 աշակերտներով և 20 ուսուցիչներով, նորակառույց մեծ ակումբ, ծխախոտի չորանոց, բուժկայան, կոոպերատիվ խանութ, դարբնոց և այլ հասարակական շենքեր: Աշնակ գյուղը հիշատակվում է որպես Արշակունյաց թագավորների ձմեռանոց, ինչպես նշում է Հ. Ղ. Ալիշանը. «Աշնակ, որ և ձմերոց էր թագավորաց մերոց Արշակունեաց»:[1]
3. **Դավիթաշենը** գտնվում է Թալինի շրջկենտրոնից 11 կմ հեռու, դեպի արևելք՝ Երևան-Լենինական ասֆալտապատ ճամփի վրա, համանուն ձորի ձախ ափին, մի հարթավայրում: Դավթաշենի բնակիչները եկել են Սասունի Փսանք, Տալվորիկ և Խիանի շրջանների զանազան գյուղերից: Ունի յոթնամյա դպրոց, ակումբ, կոոպերատիվ խանութ, բուժկայան:
4. **Ագարակ** գյուղը գտնվում է Թալինի շրջկենտրոնից 22 կմ - հեռու, դեպի արևելք՝ Աշտարակի շրջանին սահմանակից:

[1] Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», 1890, էջ 142, 164:

Ագարակի բնակիչները եկել են Սասունի Սեմալ, Դափըկ, Քոփ, Գերմավ, Խութ-Բռնաշեն, Պերմ և Բացի գյուղերից ու շրջաններից: Մի քանի տունն էլ Մշու դաշտի գյուղերից: Ագարակում տարրական դպրոց է բացվել 1923-1924 ուս. տարում: Այժմ ունի յոթնամյա դպրոց, բուժկայան, անասնաբույժ, կոոպերատիվ խանութ:

5. **Դիանը** գտնվում է Թալինի շրջկենտրոնից 24 կմ դեպի արևմուտք՝ Թալինի և Աշտարակի սահմանի վրա, համանուն խոր ձորի ձախ ափին, մի փոքրիկ հարթավայրում: Դիանի բնակիչները եկել են՝ հայերը Սասունի Շատախի, Քոփ, Գերմավ, Դափըկ և Տալվորիկ էգու տուն, Խզան, Աղբիկ և այլ գյուղերից, իսկ քրդերը՝ 1918թ. Կարսի շրջանից: Գյուղն ունի յոթնամյա դպրոց և ակումբ:
6. **Իրինդը** գտնվում է Թալինի շրջկենտրոնից 11 կմ հեռավորության վրա, դեպի հյուսիս-արևելք, Արտին (Բողութլու) լեռան ստորոտում, կանաչ մի սարահարթում: Բնակիչները եկել են Սասունի Սեմալ, Շենիկ, Էղգարդ և Մշո դաշտի Հավատվորիկ և այլ գյուղերից: Ունի յոթնամյա դպրոց, ակումբ, կոոպերատիվ խանութ, բուժկայան և հասարակական բազմաթիվ շենքեր:
7. **Կաքավածորը** գտնվում է համանուն ձորի աջ ափին, շրջկենտրոնից հեռու է 22 կմ դեպի հյուսիս-արևելք: Բնակիչները եկել են Սասունի Աղբիկ, Քոփ, Գերմավ և Խութի գյուղերից: Այն տարրական դպրոց է ունեցել 1922-1923 ուս. տարվանից, այժմ յոթնամյա դպրոցի է վերածվել: Ունի գեղեցիկ նորակառույց ակումբ, կոոպերատիվ խանութ, բուժկայան, դեղատուն:
8. **Կաքնաղբյուրը** գտնվում է Թալինի շրջկենտրոնից 7 կմ դեպի արևելք, Երևան-Լենինական ճամփի վրա:


Բնակիչները եկել են Սասունի և Տարոնի զանազան գյուղերից: Ունի յոթնամյա դպրոց, ակումբի շենք, կոոպերատիվ խանութ և այլ հասարակական շենքեր:

9. **Ներքին Բազմաբերդը** Թալինի շրջկենտրոնից հեռու է 17 կմ, գտնվում է նրա արևելյան մասում, Երևան-Լենինական ճանապարհի վրա: Բնակիչները եկել են Սասունի Խութ-Բռնաշենի և Գերմավ, Քոփ, Իրիցանք, Գեղաշեն, Շուշանամերկ գյուղերից: Ունի յոթնամյա դպրոց:



Մանիկ Պետոյան

(Սասունիկի մանկապարտեզի վարիչ)



Սասունիկ գյուղի մանկապարտեզը երեխաները



Դանո Մկրտչյանի (կենտրոնում) բազմանդամ ընտանիքը Լեռնարոտում:

10 երեխայի մայր (ձախում)՝ Շողիկ Մկրտչյանը

10. **Ներքին Սասունաշենը** գտնվում է Թալինի շրջկենտրոնից 13 կմ հեռավորության վրա, դեպի հյուսիս-արևելք: Բնակիչները եկել են Սասունի Փսանք գավառի զանազան գյուղերից: Ունի միջնակարգ դպրոցի երկհարկանի շենք, համապատասխան լաբորատորիաներով և ակումբի նորակառույց շենք:
11. **Շղարշիկը** Թալինի շրջկենտրոնց դեպի հյուսիս-արևելք 10 կմ հեռավորության վրա է գտնվում. ծովի մակերեսից 2015մ բարձր մի բլուրի ստորոտում: Գյուղամիջում կա հորդառատ մի սառնաղբյուր, որի ջուրը բավարարում է նույնիսկ գյուղամիջի բանջարանոցներին: Բնակիչները եկել են Սասունի, Տալվորիկի, Էգու, Տուն, Հեթինք, Փուրխ և Մոտկանի շրջանի գյուղերից: Ունի յոթնամյա դպրոց, ակումբ և հասարակական այլ բազմաթիվ շենքեր:
12. **Շենիկ** գյուղը Թալինի շրջկենտրոնից 14 կմ հեռու է դեպի հյուսիս-արևմուտք: Շենիկի վայրը մի փոքրիկ սարահարթ է, արոտներով շրջապատված: Բնակիչները բնիկներն են, միայն մի մասը եկել է Սասունի Շենիկ գյուղից, որից անցել է անունը: Այդ շենիկցիները հետագայում բարձրացել են Ոսկեթաս և Ահագչի գյուղեր:
13. **Ոսկեթասն** այդպես է անվանվել իր բարեբեր և թասածև փոքրիկ դաշտի նմանության համար: Թալինի շրջկենտրոնից հեռու է 11 կմ-ով: Բնակիչները եկել են Սասունի Շենիկ, Գելիեգանման, Գելիեմսուր, Հեղին, Ահրոնք և Մշո դաշտի մի քանի այլ գյուղերից:

Ոսկեթասի բնակիչների տները և կոլտնտեսային հասարակական շենքերը կառուցվել են սեփական քարհանքի սպիտակավուն տուֆով: Ոսկեթասն ունի դպրոց, ակումբ, կոոպերատիվ խանութ, առատ սառնաղբյուր և դեպի Կարմրաշեն ու Ահագչի փռվող լայն ճանապարհ:

14. **Պարտիզակը** Կաքավածորի ձախ ափի վրա է գտնվում և բազմաթիվ պտղատու ծառեր ունենալու համար հնուց ի վեր Պարտիզակ (Բաղչաջուկ) է կոչվել: Գտնվում է Թալինի շրջկենտրոնից 22 կմ հեռավորության վրա՝ Արագակի և Կաքավածորի միջև: Բնակիչները եկել են Սասունի Գեղաշեն, Շուշնամերկ (Շուշանամերկ), Քոփ, Գերմավ և այլ

գյուղերից: Ունի դպրոց, ակումբ, կոոպերատիվ խանութ և այլ հասարակական շենքեր:

15. **Վերին Բազմաբերդը** Թալինի շրջկենտրոնից 21 կմ հեռավորության վրա է գտնվում, ծովի մակերեսից 1900 մ բարձր է, տեղավորված է սարահարթի վրա, մի բլուրի հյուսիսային ստորոտում: Բնակիչները եկել են Սասունի Աղբիկ, Հեթինք և Տարոնի մի քանի գյուղերից: Ունի յոթնամյա դպրոց, օդերևութաբանական փոքրիկ կայան, կոոպերատիվ խանութ և հասարակական բազմաթիվ շենքեր, որոնք գյուղամիջում գտնվող կարմրավուն տուֆ քարից են կառուցված:
16. **Վերին Սասունաշեն** գյուղը գտնվում է Թալինի շրջկենտրոնից 15 կմ հեռավորության վրա, դեպի հյուսիս-արևելք: Բնակիչները եկել են Սասունի և Տարոնի զանազան գյուղերից: Ունի բազալտից կառուցված ակումբի հոյակապ շենք, դպրոց, դարբնոց և հասարակական այլ շենքեր:

Սասունցիները, խութեցիները և մշեցիները, բնակություն հաստատելով Թալինի և Աշտարակի շրջանների լեռնամասերում, սկսեցին երկրագործության իրենց աշխատանքները: Նրանք այդ լեռնամասերում նախ սկսեցին օգտագործել նախկին բնակիչներին ծանոթ գործիքները: Այն է՝ արորը, որ բավական նման էր Սասունական արորին և գութանը, որ Սասունին անծանոթ է եղել: Վերջինս հնարավոր էր օգտագործել ցածրադիր շրջաններում, Թալինի շրջկենտրոնում և Ուջանի դաշտավայրում: Արորի և գութանի մասերն էլ քիչ տարբերությամբ նման էին Սասունի և Մշո դաշտի արորի և գութանի մասերին:

Հերկից և ցանելուց հետո նորեկները տեղական տափանը չհավանեցին. վերանականգնեցին սասունական ցաքանը, որը պատրաստեցին ու գործադրության դրին, իսկ ցաքլիցի համար չճարելով հոշկի և հացի ծառաճյուղեր, օգտագործեցին ուռենու և բարդու ծառաճյուղերը, որոնք թեև շատ չէին դիմանում, բայց ձեռք բերելը հեշտ էր: Այնուամենայնիվ տափանը գործածության մեջ մնաց տափարակ և ընդարձակ արտերում, ուր գործն ավելի շուտ էր կատարվում տափանով, քան ցաքով, իսկ ցաքը ձեռնտու էր թեք մակերեսով արտերում: Ցաքը որպես թեթև և հեշտ շրջդարձիկ տափան, մնաց գործածության մեջ մինչև գյուղի մեքենայացումը: Որոշ վայրերում դրանք վերացան:

Արորն ու գութանը, ցաքն ու տափանը գյուղի մեքենայացումից հետո իրենց գոյությունը պահպանեցին Թալինի և Աշտարակի այն լեռնամասային գյուղերում, որոնք բարձր լեռնալանջերումն էին գտնվում, ուր տրակտորն ու այլ գործիքները չէին կարող մուտք գործել իրենց համար հարմար ճանապարհներ և տափարակ հարթ վարելատեղեր չունենալու պատճառով:

Թալինի շրջանի Շղարշիկ, Իրինդ և Ահագչի, իսկ Աշտարակի շրջանի Լեռնարոտ, Սասունիկ և Ավան գյուղերում սասունական արորն ու ցաքը պահպանում էին իրենց գոյությունը մինչև 1963 թվականը, երբ հետզհետե այդ գյուղերի կոլտնտեսությունները վերածվեցին խորհտնտեսությունների: Դաշտամշակությամբ զբաղվում էին տղամարդիկ:

Հնձի սասունական ամենահին գործիքն էր մանգաղը, իսկ Խութի, Հազզոյի և Մշո դաշտավայրերում՝ մանգաղն ու գերանդին: Մանգաղի և մանգղոնի հնձածը հնձվորի բռի մեջ էր հավաքվում, ապա որանի վրա դրվում: Այդ երկու գործիքներով հնձելու ժամանակ հինգ մատանի և շարժական կեռ ու կարծր թաթոց էին հագնում բուռը բռնող ձեռքում: Դրանով ավելի շատ, քան սովորական անգեն ձեռքով՝ ցորենն առնում էին բռի մեջ, նոր դնում անկապ խրձի վրա և հետո կապում: Գերանդին ընդարձակ տարածություն է վերցնում, ուստի այն առավելապես օգտագործվում էր հարթ տեղերում:

Մանգաղի և մանգղոնի հնձածը, երբ մի խուրձ կազմելու չափ էր լինում, կմեիկով (ցորենի թարմ ճյուղերով հյուսված կապ), կամ ուռենու թարմ ճյուղերով կապում էին: Գերանդիով հնձածը փոցխով էին հավաքում, որ Սասունին ծանոթ չէր, ապա կեմիկով կապում, խուրձ էին դարձնում: Խրձկապի սասունական ձևը պահպանվեց նոր Սասունում՝ Թալինի և Աշտարակի սասունցիների մոտ, մինչև վերջին տարիները՝ գյուղի մեքենայացումը, իսկ նշված լեռնալանջային գյուղերում մինչև այժմ էլ: Հնձի գործիքները գործածում էին տղամարդիկ և կանայք, իսկ գերանդին՝ միայն տղամարդիկ:

Սասունի հարավային մասերում շատ հնուց հայտնի է եղել խաղողի մշակությունը, իսկ պտղատու այգիներ կային թե՛ հարավային և թե՛ հյուսիսային մասերում: Նույն ձևով Թալինի և Աշտարակի շրջանների՝ Արագածի հարավային փեշերում խաղողի այգիներ հնուց գոյություն են ունեցել, իսկ պտղա-

տու այգիներ բոլոր գյուղերում: Այգեգործական գործիքներն էին՝ **էտոցը** և **բահը** թե՛ Սասունում և թե՛ Թալինի ու Աշտարակի շրջաններում: Այդ գործիքներով աշխատում էին միայն տղամարդիկ: Հատկանշական է այն, որ Սասունում խաղողի այգիները չէին թաղում, հակառակ որ 3-4 ամիս ձմեռ և սաստիկ ցուրտ ու սառնամանիք էր լինում, բայց ոչ մի խաղողի այգի չէր ցրտահարվում, իսկ Թալինի և Աշտարակի շրջանների խաղողի այգիները ցրտադիմացկուն չեն, որի համար էլ սասունցիները տեղական սովորությամբ թաղում են:

Սասունում հնուց ի վեր ծխախոտագործությունը գլխավորապես անձնական կարիքներին էր ծառայում: Բայց կային հայտնի ծխախոտագործներ Շենիկում և Սեմալում, որոնք ծխախոտ էին մշակում ոչ միայն իրենց սպառման համար, այլև Սասունում և Մուշի գյուղերում վաճառելու համար:

Թալինի և Աշտարակի շրջաններում լայն ծավալ է ստանում ծխախոտագործությունը հատկապես Սասնաշենի, Աշնակի, Իրինդի, Դավթաշենի (Թալինի շրջան) և Ուջանի կոլտնտեսություններում (Աշտարակ): Ծխախոտի մշակությամբ զբաղվում են թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք:

Ծխախոտի չորացումը Սասունում կատարվում էր տների գավիթներում (չարդախ): Իսկ Արագածի լանջերում ստեղծված են ընդարձակ չորանոցներ, որ ընդհանուր են ամբողջ Հայաստանում:

Սասունում սարերն ու ձորերը բնական բանջարանոցներ էին՝ բազմաթիվ բանջարեղեններով: Մշակովի բանջարանոցներում աճեցնում էին միայն շաղգամ, կաղամբ, սոխ և կարտոլ (կարտոֆիլ), իսկ տաքդեղը, լոլիկը և սմբուկը մշակում էին միայն Մուշի և նրա մոտակա գյուղերում: Թալինի և Աշտարակի շրջաններում, հատկապես Արագածի ստորոտի գյուղերում՝ Աշնակում, Դավիթաշենում, Բազմաղբյուրում (Թալին) և Ուջանում (Աշտարակ) բանջարանաբուծությունը մեծ ծավալ է ստացել: Նշված գյուղերի կոլտնտեսությունները մշակում են լոլիկ (պոմիդոր), սմբուկ (բադրիջան), կարտոֆիլ, կաղամբ, սոխ և այլն, որ ոչ միայն իրենց սպառմանն է բավարարում, այլև վաճառքի է հանվում մոտակա վայրերում: Բանջարաբուծությամբ զբաղվում են թե՛ կանայք և թե՛ տղամարդիկ:

ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԹԱԼԻՆՈՒՄ ԵՎ ԱՇՏԱՐԱԿՈՒՄ
Կուլտուրայի և լուսավորության բնագավառում

1. Կուլտուրայի և լուսավորության բնագավառում Սասունում, բացի մի քանի աչքի ընկնող գյուղերից, մինչև 1908 թվականի թուրքական սահմանադրությունը, դպրոցներ գրեթե գոյություն չունեին: Հասկանալի է, որ բնակչության ավելի քան 95 տոկոսը անգրագետ էր: Երիտասարդ թուրքերի տիրապետության շրջանում (1909-1914) հետզհետե սկսեցին հատուկենտ դպրոցներ բացվել գյուղերում, մինչև 1915 թվականը, երբ սարսափելի ոճիրը գործվեց և ամեն բան մոխիրի վերածվեց:

Տալվորիկի շրջանի կուլտուր-լուսավորության վիճակը հետևյալն էր. 1908-1911թթ. ուսումնական տարիներում այստեղ տասներկու գյուղերից միայն Հարթք, Փուրխ և Հլոզինք գյուղերն ունեին տարրական դպրոց՝ մեկական դասարանով, ամեն մեկում 12-20 աշակերտ և մի դասատու: Հարթքը, ուր ես դասատու էի, 27 տուն (300 անձ) ունեցող միացյալ գյուղ էր (Հարթք և Հոսնուտ), որում միայն երեք գրագետ մարդ կար:

1910 թվականին Սասունից մի սրտացավ թղթակից, «Ազատամարտ» թերթին ուղղած նամակի մեջ, սրտաճմլիկ տեսարան է ներկայացրել: Մենք այն նույնությամբ զետեղում ենք այստեղ, սպառիչ կերպով պատասխանելու այն հարցին, թե ինչպիսին էր ուսումնակրթական գործի դրվածքը ողջ Սասունում:

«Կրթական նախաքայլերը նոր են սկսեր Սասունի մեջ, սակայն խիստ թույլ ու դանդաղ: Նախակրթարաններ բացված են ազգային ընկերություններու կողմե, բայց դեռ գոհացուցիչ և պետքին համապատասխան դիրքի մը մեջ չեն դրված անոնք. դասատուներու մեծ մասը տիրացուներ են. ոչ դպրոցե կիասկնան, ոչ դպրոցավարություն,, ոչ մեթոդ և ոչ մանկավարժություն, գիտեն միայն խորունկ փոս փորել և նոր սերունդը մեջը գլորել: 30-35 տղաքներ հեռավոր թաղերե եկած, հավաքված են, հագածնին մեկ շապիկ է, որ մինչև ծնկոսկրնին կիջնե, ոտքերնին բաց, կը դողան ամբողջ մարմնով, որովհետև դպրոցը քիչ տարբերություն ունի դուրսի խստաշունչ օդեն: Տղոց ակռաները ցուրտեն կը կափկափեն և չեն կրնար իրենց դասերը հեգել ու արտասանել, մատներնին գրիչ չբռներ, որ գրավարժություն ընեն: Նույնիսկ Կելիեկուզանի նախակրթարանէն Մի-

քայել Հակոբյան և Խաչատուր Մարտիրոսյան անուն տղաքը դպրոցեն տուն երթալու ատեննին սարսափելի փոթորիկե մը բռնվելով՝ խեղդամահ եղան բոլորովին մերկ ըլլալնուն պատճառով: Տեղացիք բնավ կարող չեն հոգալ իրենց զավակներուն կրթական պահանջները, ան, որ կարող չէ կորեկե սև հաց մը անգամ կերցնել իր տղուն, ինչպե՞ս պիտի հագվեցնե, ծախս վճարե և կանոնավոր հիմամ մը վրա դնե իր կրթական հաստատությունները»:[1]

1918-1920 թվականներին՝ դաշնակցական տիրապետության տարիներին, սասունցի աշխատավորությունը դեռևս - զուրկ էր դպրոցից:

Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելուց հետո, հատկապես 1922-1923 ուսումնական տարվանից, երբ Արագածի լանջերին բնակություն հաստատած այդ բազմաչարչար աշխատասեր և ազատասեր ժողովուրդն սկսեց իր տնտեսական կյանքը, դրվեց նաև նրա կուլտուրական-լուսավորական կյանքի սկիզբը:

Սովետական Հայաստանի կառավարությունը, հանձին Լուսավորության ժողովրդական կոմիսար Ասքանազ Մռավյանի, հատուկ հոգատարությամբ Կովկաս ապաստանած և բնակություն հաստատած արևմտահայության բնակած գյուղերում դպրոցներ և Լիկկայաններ էր բաց անում:

1922-1923 ուս. տարվա սկզբին, երբ ես, որպես նոր հայրենադարձ ուսուցիչ ներկայանում էի Ա. Մռավյանին՝ ուսուցչական աշխատանքի անցնելու համար, նա ինձ սիրով ընդունեց և նկատի ունենալով, որ Ալ. Մյասնիկյանի կողմից Կ. Պոլսից հրավիրված և Սովետական Հայաստան եկած ուսուցիչներից եմ, առաջարկեց ծանոթանալ Երևանի դպրոցների հետ և ըստ իմ ցանկության այդ դպրոցներից մեկում աշխատել: Մռավյանը կարծում էր, որ արտասահմանից նորեկ ուսուցիչը ավելի շատ կցանկանար մայրաքաղաքի դպրոցներում աշխատել և չէր համաձայնվի հեռավոր շրջաններ գնել: Սակայն, երբ ես հարցրի, թե արդյոք Թուրքիայից Հայաստան ներգաղթած արևմտահայերի և սասունցիաբնակ գյուղերում

[1] Մ. Մովսիսյան, Նամակ Սասունեն՝ կրթական վիճակ, «Ազատամարտ», 1910թ., 3/ 21/ ապրիլի:

ուսուցչի պահանջ չկա՞, նա լարված ուշադրությամբ, ուրախ ժպիտով ու գոհունակությամբ նայեց ինձ և փոխանակ պատասխանելու, ինքը հարցրեց.

-Որտեղացի՞ ես:

-Սասունցի, Գելիեգուզան գյուղից:

-Սասունցի և Կ. Պոլսում ուսուցի՞չ,- ասաց նա մի բան փնտրող և գտնողի ուրախությամբ:

-Այո,- պատասխանեցի ես:

-Բայց Երևանում դուք ավելի հանգիստ կլինեք, քան շրջաններում, ուր դեռ նոր ենք սկսել դպրոցներ բանալ,- ասաց Մռավյանը,- իսկ դուք որոշ դժվարություններից կարող եք նեղվել:

Նրա քննող հայացքը իմ դեմքին էր հառած և պատասխանի էր սպասում:

-Հայրենիքիս «նեղությունները» նախընտրում եմ պոլսական «հանգստություններից»:

Իմ պատասխանը նրան գոհունակություն պատճառեց, և, որպես գործունյա մարդ, ասաց.

- Մենք էջմիածնի գավառի լեռնամասի սասունաբնակ գյուղերում ուզում ենք դպրոցներ և լիկկայաններ բանալ, որի համար մեզ կադր է պետք: Ցանկանո՞ւմ եք մեզ օգնել՝ գնալ տեղում, գյուղերում շրջել, դպրոցներ, լիկկայաններ բանալ:

- Այո,- պատասխանեցի ես: Նա ուրախացավ և գրեց մի կարգադրություն էջմիածնի գավլուսբաժնի վարիչ Գր. Վարդանյանին ինձ նշանակելու Մաղդա (այժմ՝ Լեռնարոտ) գյուղում տարրական դպրոցի և լիկկայանի վարիչ, միաժամանակ ինձ վրա պարտականություն դնելով հավաքագրելու դասատուներ, տարրական դպրոցներ և լիկկայաններ բաց անելու Աշտարակի և Թալինի գյուղերում:

Էջմիածնի գավլուսբաժնի վարիչին այսպիսով հնարավորություն տրվեց կատարելու Մռավյանի առաջադրանքը՝ այլ գյուղերի թվում սասունաբնակ գյուղերում էլ դպրոցներ և լիկկայաններ բանալ:

Իմ տրամադրության տակ դրվեց մի քանի հարյուր օրինակ «Դեպի լույս» գրքից, որ ծառայում էր թե որպես լիկկայանի առաջին դասագիրք, և թե՛ որպես տարրական դպրոցի առաջին դասարանի ընթերցարան: Բացի գրքերից, 4-500 տետր, որ շռայլություն էր 1922 թ. սկզբին դպրոցներին

տրվող նորմերի համեմատությամբ: 5-6 գրատախտակ, բազմաթիվ գրիչ, մատիտ և այլն, որոնց գումարը վճարել էր գավլուսբաժինը: Իսկ մենք ծրի տալիս էինք և՛ դպրոցի աշակերտներին, և՛ լիկկայան հաճախողներին:


Մաղդայում (այժմ՝ Լեռնարոտ), Ղարաջալարում (այժմ՝ Սասունիկ), Ավանում, Ուջանում ապրող սասունցիների համար, ուր ես գնում էի, մեծ խանդավառություն առաջացրեց դպրոցների բացումը և ուսուցիչներ ճարելը, գիրք և տետր, գրիչ և մատիտ բաշխելը բոլոր նրանց, որոնք վաղուց անցել էին դպրոցական հասակը և մեծ մասամբ 18-40 տարեկան էին:

Այդ ուսումնական տարում վերոհիշյալ չորս գյուղերում սկսեցին գործել չորս տարրական դպրոցներ ու նույնքան լիկկայաններ, որոնց լուստեսուչը ինքս էի: Այդ գործում ինձ օգնում էին Թալինի և Աշտարակի հեղկոմները:

1922-1923 ուս. տարում տարրական դպրոցների և լիկկայանների բացումներ էին տեղի ունենում Թալինի շրջանի Աշնակ, Ահագչի, Միհրիբան (Կաթնաղբյուր), Իրինդ և այլ գյուղերում:

Այդ նորաբաց տարրական դպրոցների առաջին դասարանների աշակերտները 1915թ. առաջ ծնված և մի կերպ ծնողի կամ բարեկամի միջոցով ազատված երեխաներն էին: Մաղդա գյուղում, 1922-1923 ուս. տարում տարրական դպրոցն ուներ մի խարխուլ սենյակ և մի առաջին դասարան, ութ աշակերտ-աշակերտուհիներով, որոնք 10-18 տարեկաններ էին, իսկ լիկկայան հաճախում էին 25 տղամարդ, որոնք 18-40 տարեկան էին: Այդ նույն Լեռնարոտ գյուղը, ուր ես եղա 1943 թ-ին, ուներ յոթնամյա դպրոցի նոր շենք, յոթ լրիվ դասարաններով, ուր սովորում էին 7-15 տարեկան հասակի երեխաներ: 25 տարի էր անցել և ութ աշակերտից բաղկացած ու մի ուսուցիչ ունեցող դպրոցն այդ տարի ուներ յոթ ուսուցիչ՝ 130 աշակերտով:

1918-1920 թթ., դաշնակցական տիրապետության ժամանակ, Աշտարակի և Թալինի շրջանների սասունաբնակ 19 գյուղերում դպրոց կամ լիկկայան գյուղ չի ունեցել: Բացի մի քանի փոքր և ուշ բնակություն հաստատած գյուղերից (Շղարշիկ, Ոսկեթաս, Վ. Սասնաշեն, Դիան և Պարտիզակ), որտեղ 1923-1924 և հետագա ուս. տարիներում էին բացվել դպրոցներ, մյուս բոլոր գյուղերում բացվել էին 1922-1923 ուս. տարվանից: Միայն Աշնակ գյուղը 1956-1957 ուս. տարում ուներ 22 դասատու, 347 աշակերտ:




Թալինի եվ ազգաբնակ շրջաններու մասնավորապես գյուղերու, վերջերս նոր շրջանների յուկրթական հաստատութիւններուն[1]

Աշակերտի և Թ-	1918-20	1922-23	1948-49	ծանոթություն
գյուղերի անունները	դպրոցների թիվը	դպրոցների թիվը	դպրոցների թիվը	
Թալինի շրջան				
Ներք.Սասնաշեն	–	1	1-20	18 13/257 մի/նախարգ
Աշնակ	–	2	2-50	13 20/300 »
Վ.Բազմաբերդ	–	1	1-16	6 6/124 յոթնամյա
Ն.Բազմաբերդ	–	1	1-26	8 9/183 »
Կաթնաղբյուր /Միհրիբան/	–	1	1-23	19 11/228 »
Ագարակ	–	1	1-18	5 5/112 »
Դավիթաշեն /Այնալու/	–	1	1-18	6 5/121 »
Իրինդ	–	1	1-17	9 9/181 »
Ահագչի	–	1	1-28	8 9/171 »
Մաղաղիս	–	–	– –	7 7/108 »
Ուջանլար	–	1	1-27	8 8/160 »
Գազավան	–	–	– –	7 7/167 »
Վ.Սասնաշեն	–	–	– –	4 4/213 տարրական
Դիան	–	–	– –	4 4/64 »
Պարտիզակ	–	–	– –	2 2/34 »
Աշտարակի շրջան				
Լեռնարոտ /Մաղդա/	–	1	1-8	7 8/131 յոթնամյա
Սասունիկ	–	–	– –	5 7/97 »

1. 1918-20 և 1922-23 ուսումնական տարիների տվյալները վերցված են նշված գյուղերից:

հաշվետվությունից[1]

[1] 1918-20 և 1922-23 ուս.տարիների տվյալները վերցված են նշված գյուղերից:



Ալավ	–	–	2	2–38	11	14/210	միջնակարգ	
Ուշան	–	–	2	2–45	14	13/303	»	

1957–58 ուսումնական տարի			1958–59 ուս. տարի		1959–60 ուսումնական տարի		Դպրոցի տիպը
Գյուղերի անունները	Դասարանների թիվը	Աշակերտների թիվը	Դասարանների թիվը	Աշակերտների թիվը	Դասարանների թիվը	Աշակերտների թիվը	
Թալինի շրջան							
Նոր Արտամետ	13	22/254	12	23/246	12	21/221	միջնակարգ
Աշնակ	10	18/172	10	18/163	8	16/165	»
Ս. Բագրատաբերդ	7	10/101	7	9/108	7	10/80	տարրական
Ն. Բագրատաբերդ	7	10/80	7	14/108	7	10/120	յոթնամյա
Համբնատաբյուր	7	14/137	7	14/139	8	15/160	»
Ագարակ	6	7/71	7	7/71	7	8/70	ութամյա
Դավիթաշեն	5	7/80	6	7/72	7	8/90	յոթնամյա
Իրինդ	7	12/100	7	13/96	8	15/110	»
Ակագլի	7	8/90	7	10/100	8	12/121	»
Շուրջլին	7	9/84	7	11/73	7	9/69	ութամյա
Ոսկեվան	5	7/76	6	8/83	7	9/87	յոթնամյա
Խաչավանք	10	18/177	10	16/156	9	15/143	»
Ս. Սահակաշեն	4	5/36	3	3/32	4	4/45	միջնակարգ
Դիան	5	9/59	5	9/61	5	8/62	տարրական
Պարտիզակ	1	2/19	–	–	–	–	
Աշտարակի շրջան							
Նռնաձոր /Մազրա/	7	10/89	7	9/93	7	9/87	յոթնամյա

1. Տվյալները վերցված են ՀԱՍՌ Նուսավորության մինիստրության տեղեկատվական նյութերից:

Սասունիկ	6	8/60	5	6/47	5	6/60	յոթնամյա
Ավան	10	14/161	10	14/173	10	14/139	միջնակարգ
Ուջան	12	25/271	13	26/280	13	26/294	
Արագածոտն	6	8/72	6	8/71	6	7/69	յոթնամյա

Այս թվերի մեջ չեն մտնում սասունցիների այն երեխաները, որոնք տվյալ թվականներին սովորում էին քաղաքներում կամ շրջանների այլ դպրոցներում: Թալինի շրջանի միայն Աշնակ գյուղից Երևանի և Լենինականի բարձրագույն ուսումնական հիմնարկներում 1949թ. սովորում էր 27 հոգի: Չբավարարվելով յոթնամյա և միջնակարգ կրթությամբ, երկսեռ երիտասարդությունը բոլոր գյուղերից մեծ թվով բարձրագույն կրթության են գնում Երևան և Լենինական:

Աշտարակի շրջանի Ավան գյուղում ժողովրդական լուսավորության գործը հետևյալ պատկերն է ունեցել 1923-ից 1950 թվականների ընթացքում:

1923-ին Ավան գյուղի բնակչության 7.5 տոկոսը եղել է գրագետ, իսկ 92.5 տոկոսը անգրագետ: 1950 թ. Ավան գյուղի բնակչության 87.5 տոկոսը տարրական յոթնամյա և բարձրագույն կրթություն ուներ, միայն 12.5 տոկոսն էր անգրագետ, որոնք հասակավորներ էին և Հայաստանում Սովետական կարգերի հաստատումից առաջ ծնվածներ. ըստ որում, 1920 թ. հետո ծնվածները 100 տոկոսով գրագետ չէին:

Ավանի բնակչությունից՝ 1950 թվականին միջնակարգ կրթություն ուներ 57 հոգի, որոնցից 10-ը ուսուցիչներ էին, թերի բարձրագույն՝ մեկ հոգի, բարձրագույն վեց հոգի, որոնցից երեքը Հայրենական պատերազմում զոհված, իսկ երեքը ողջ են և աշխատում են որպես ինժեներ և ուսուցիչ: Ավանն ունի միջնակարգ դպրոց իր լրիվ դասարաններով և մանկավարժական կազմով:


Կուլտուր-լուսավորության դրությունը նախասովետական շրջանում անմխիթար էր, շրջաններում և գյուղերում ակումբ, գրադարան, կինո գոյություն չուներին:

Սասունաբնակ այդ բոլոր գյուղերում այժմ գործում են ակումբներ և գրադարաններ, կինո և ռադիո՝ ապահովված պետական բյուջեներով՝ ակումբի և գրադարանի վարիչներով, կինո և ռադիո մեխանիկներով:

Ուշադրության արժանի է Արագածի այդ լանջերում կառուցված և կառուցվելու պրոցեսի մեջ գտնվող ազգային ո-

ճով ակումբների շենքերը: Այսպես օրինակ՝ Աշնակի ակումբի հսկա շենքը, որ հիմնադրվել է 1940թ. և ավարտվել Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Այդ ակումբը նախատեսված է 500 հանդիսատեսի համար: Ակումբի շենքն ունի իր խոշոր բեմը և ստացիոնար կինոյի բոլոր հարմարությունները: Ակումբի շենքում են տեղավորված գրադարանը, գյուղսովետի և կոլտնտեսության հարմարավետ գրասենյակները, գործում է հեռախոսը:

Իրենց կառուցվածքով Աշնակի ակումբի շենքից և հարմարություններից ետ չեն մնում Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Իրինդի և Վերին Սասնաշենի ակումբները, որոնք նախատեսված են 300 մարդու համար. դրանք բոլորն էլ Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում են շինվել:



Սասունցի Դավթի հուշարձանի պատվանդանին՝ Վարդան Պետոյան

Առողջապահության բնագավառում

Ինչպես Սասունում, այնպես էլ Թալինում, մինչև 1920-ական թթ. սկիզբը գյուղական վայրերում բժիշկներ չկային, կամ, բացառիկ դեպքերում էր բժիշկ հանդիպում: Ինքնըստինքյան հասկանալի է, որ հեքիմությունն էր իշխում առողջապահության գործի վրա, որի համար մարդկային շատ կյանքեր վաղաժամ նահատակվում էին:

Սոցիալիստական կարգերի օրոք լավ հիմքերի վրա դրվեց նաև առողջապահության գործը:

Բացի Թալինի և Աշտարակի շրջկենտրոնների բժշկական հիմնարկներից, հիվանդանոցներից, ծննդատներից, պոլիկլինիկաներից և այլն, որոնք զինված են բժշկական գիտության վերջին տեխնիկայով և սպասարկում են այդ երկու շրջանների բնակչությանը: Դավթաշեն, Սասնաշեն, Սասունիկ և այլ գյուղերում բացվել են հիվանդանոցներ, կոլտնտեսային ծննդատներ, դեղատներ, մանկաբարձական, առողջապահական կետեր:

Կոշ-Ավանի հիվանդանոցն ունի 25 մահճակալ, ծննդատուն, նորոգման տրակտորային կայանի առողջապահական կետ, դեղատուն: Հիվանդանոցում աշխատում են երկու բժիշկ, մեկ ատամնաբույժ, տասը միջին բժշկական անձնակազմ և վեց տեխնիկական աշխատող: Այդ նույնն ունի նաև ներքին Բազմաբերդը: Բժշկա-մանկաբարձական կետեր ունեն Թալինի շրջանի Ներքին Սասնաշենը, Աշնակը, Կաթնաղբյուրը, Ահագչին, Ագարակը, Կաքավաձորը, Աշտարակի շրջանի Ուջանը, Ավանը, Լեռնարոտը: Այդ կետերում աշխատում են մեկական բուժակներ, մեկական մանկաբարձուհի և տեխնիկական աշխատողներ:

Առողջապահական կայաններ կան Դավթաշենում, Իրինդ և այլ գյուղերում:

Աշտարակի և Թալինի շրջաններում, ուր և ստեղծվում են Սասնաշեններ, Սասունիկ ավաններ, շնորհիվ այն օգնության, որ վարկի, սերմի, քաշող ուժի ձևով Սովետական Հայաստանը տրամադրում էր նրանց:

Նոր Սասունում, նոր կյանքն էր սկսում եռալ նոր պահանջներով:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, 1921 թվի հունվարի 14-ին, սասունցի գաղթականների ներկայացուցիչները Հայաստանի հեղկոմին ուղղված դիմումի մեջ գրում են.

«Ալագյազում հայկական և քրդական գյուղերում վերաբնակված մշեցի և սասունցիներս ներկա խնդրագրով դիմում ենք Ձեզ հայտնելով, որ մենք ենք իսկական բանվոր-ռըննճպար ժողովուրդը, մեր սրտին շատ մոտ է Խորհրդային իշխանությունը, որը միակ պաշտպանն է բանվոր-հողագործ ժողովրդի: Սակայն չգիտենք ինչ պատճառով, որ նախկին դաշնակների կառավարությունը տապալելե հետո երկար ատեն է, որ կտիրե այդ մեր սրտի մոտիկ խորհրդային իշխանությունը և մեզի բոլորովին աչքաթող է արել, մեր մեջ չի ղրկում կանոնավոր պրոպագանդիստներ, մեր մեջ չի կազմակերպում Հեղկոմի կոմիսարներ, մեր մեջ չի ղրկվում լրագիր, մենք բոլորովին զրկված ենք աշխարհային հաղորդակցությունից»:[1]

Սասունցի աշխատավորությունը, «բանվոր-ռըննճպար» ժողովուրդն անհամբեր սպասում էր Սովետական իշխանության ստեղծման և նրա բարիքներին՝ խաղաղ շինարար աշխատանքներին:

Հողի մասնավոր սեփականության սովոր, նրա առուծախի պայմաններում՝ Թուրքիայում ապրած, իսկ այժմ, Սովետական Հայաստանում, հողի պետականացման (համաժողովրդական սեփականության) անսովոր և նրա առուծախի արգելման պայմաններում ապրող սասունցի աշխատավորության առաջ հին և նոր կենցաղի մի պայքար է սկսվում, որն իր արտահայտությունը գտնում է տնտեսական կյանքի ամեն մի ոլորտում՝ տանը, աշխատավայրում, դաշտում, սեզոնային աշխատանքների ժամանակ, վարձու աշխատանք կատարելու ընթացքում: Տնտեսության մեջ վարձու աշխատող վերցնելն ու օգտագործելը սկսում էր գիտակցվել որպես աշխատանքի շահագործում: Մշակ, հովիվ և նախրորդ վարձելու ժամանակ բատրակկոմին հաշվի առնելու, վարձվողի սոցապահովության մասին

[1] Ա. Հակոբյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ-ին, էջ 53, Երևան, 1948: ՀՍՍՌ Պետական կենտր. արխիվ, ֆ. ցո. 3-116, գ. ցո. 2 թերթ 79 (բնագրի ոճը պահպանված է, Ա. Հ.):

մտածելու, պայմանագիր կնքելու առաջարկներն ու պահանջները աշխատավորության իրավունքները պաշտպանելու և շահագործում թույլ չտալու ուժեղ միջոցառումները սանձահարում էին նախկին համփայական տրամադրություն ունեցող և կուլակության ձգտումներին, իսկ աշխատավոր և դեռ որոշ չափով շահագործվող գյուղացիություն՝ բատրակներ, հանձին պրոֆմիությունների և սովետական օրենքների, գտնում և ճանաչում էին իրենց պաշտպաններին և հետզհետե դասակարգային գիտակցության հանգում, հին կյանքի և կենցաղի դեմ պայքարում, նոր կյանքի ուղին բռնում:

Շնորհիվ հողի՝ ըստ շնչերի բաժանման օրենքի, այն էլ մի քանի տարին մի անգամ, զարգանում և աճում էին ոչ միայն տնտեսությունները, որի աճմանն արգելակող պայմանները վերացել էին, այլև ազգաբնակչությունը, որի ամեն մի շնչի համար հող էր հատկացվում:

Տղամարդու և կնոջ իրավունքների հավասարեցումը, բոլոր քաղաքացիների օրենքի առաջ իրավահավասար լինելը, սասունցիների միջից հետզհետե դուրս է վանում այն սովորութային օրենքները, որոնք տրադիցիոն կերպով գործում էին նրանց մեջ: Հողի մասնավոր սեփականության վերացման, նրա պետականացման համաժողովրդական սեփականության բազայի վրա բախվում և փշրվում են տոհմային, ցեղային և բուրժուական իրավունքները, սովորութային մնացուկները: Պապենական ժառանգություն եղող «մուլքը» (հողը), որի համար այնքան արյուն և արցունք էր թափվում, իգական սեռի, նույնիսկ իր ծնողների մոտ, ժառանգական իրավունքից զուրկ լինելը, եղբայրներից ստորադաս և դրսի ապրանք համարվելը, մի խոսքով, ուժեղ հայրիշխանության բռնակալ տիրապետության սովորութային օրենքներն իրենց բոլոր հետևանքներով միասին բախվում և ոչնչանում էին սովետական իշխանության օրոք, դասակարգային նոր՝ սովետական հարաբերությունների պայմաններում, թողնելով միայն իրենց աննշան մնացուկները, որոնք, նոր սոցիալ-տնտեսական պայմանների և կենցաղի ընթացքում, հետզհետե անհետանում էին:


Վիճակագրական տվյալներից պարզվում է, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատման շնորհիվ գյուղացիության օգտագործմանն անցավ ընդամենը 1.494.000 հեկտար հող, այն դեպքում, երբ ցարական իշխանության օրոք և

դաշնակների կառավարման ժամանակ Հայաստանի մեկ գյուղացիական տնտեսությանը, միջին հաշվով, հասնում էր 1-1.5 հեկտար անորակ հող, այսօր կոլխոզի մեջ ընդգրկված մեկ ընտանիքին, միջին հաշվով, հասնում է 8.63 հեկտար հողամաս:

Տասը տարին մեկ անգամ՝ 1894, 1904, 1914-15թթ. թուրքական սուլթանների և քրդական բեկերի սրերով ու գնդակներով կոտորված Սասունի աշխատավորության մնացորդը Կովկաս գալով, մոտ չորս տասնյակ տարի է նոր կարգերում-սոցիալիստական իրավակարգում-կուլտուր-կենցաղային նոր կյանքով է ապրում, հին, հետամնաց, խավարամիտ կյանքի փոխարեն նոր, առաջադեմ, լուսավոր ու երջանիկ կյանք ստեղծելով իր համար, իր ազատարար ռուս մեծ ժողովրդի, բոլշևիկյան պարտայի, Սովետական իշխանության շնորհիվ:



Վարդան Պետոյանը (նստած)՝ 1922-1930թթ. Աշտարակի շրջանի լիկկայանի կազմակերպիչն ու դպրոցական հրահանգիչն էր: Առաքել Միքայելյանը, որպես Թալինի շրջանի առողջապահության բաժնի վարիչ և մանկապարտեզների կազմակերպիչ



Թալինի հիվանդանոցը, մեջտեղում՝ բժիշկների այցը հիվանդներին, ներքևում՝ ակումբի շենք Վ. Սասնաշենում

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ա Զ Գ Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն

Սասունի ազգաբնակչությունն ընդհանրապես ունի միջին հասակ, լայն կուրծք և թիկունք, ցորնագույն թուխ մաշկ, խիտ և կոշտ մազերով ծածկված կուրծք ու բազուկ: Միջին մեծության գլուխը կլոր է, խիտ ու կոշտ մազերով ծածկված: Դեմքերը սովորաբար կլորավուն են՝ խիստ արտահայտությամբ: Գլխի ու դեմքի մազերի գույնը մեծ մասամբ սև և խիտ է: Հոնքերը շատ թավ ու կախ են, աչքերի գույնը՝ սև, խաժ աչքերը հազվադեպ են. քիթը արծվառունգ և սովորականից քիչ մեծ է, շրթունքները միջին հաստության և պիրկ են, այտոսկրը ոչ շատ ցցուն է և ծակատը՝ լայն: Մարմնով դիմացկուն են. այդ զգացվում է հատկապես լեռնաբնակների մոտ:

Մարմնի անդամների անհամաչափության դեպքերը հազվադեպ են: Այլածևությունները (деформации) պատահական են: Ականջի բլթակները ծակելու երևույթը իգական սեռի համար սովորական երևույթ է. քթի պնչերը ծակելու սովորությունը XX դարի սկզբին հետզհետե անհետանում է: Մալարիան և այլ հիվանդությունները բուժելու նպատակով փուշիով (աբեթ) ձեռքը 1 սմ չափով այրում էին, շիկացած ակիշով դաղում էին մաշկի այն մասերը, որոնց տակ ցավեր էին զգացվում: Այս չափով էլ առաջանում էին մասնակի այլաձևություններ:

Սասունցիների կյանքն ու աշխատանքը շատ մեծ չարքաշություն էր պահանջում և՛ երկրագործական աշխատանքի ժամանակ, և, ընդհանրապես, լեռնաշխարհում ապրելու համար: Աշխատանքի լեռնային բնույթը սասունցուն թույլ չէր տալիս գիրությամբ գերազանցել միջին չափերը և մարմնապես այլակերպվել: Ակնհայտ նիհարները հազվադեպ էին:

Բնակչությունն աչքի էր ընկնում ֆիզիկական ուժով, որ ծանր ու հարատև աշխատանքի հետևանքն էր կիրճերում: Սասունում, ինչպես կտեսնենք, հող կրելով արհեստական արտերի նախապատրաստումը մի ծանր աշխատանք էր, որ բնակչությունը հարկադրված էր կատարել: Այսպիսի աշխատանքները զարգացնում էին մարդկանց բազուկների, ոտքերի, մեջքի մկանները: Մարդկանց օրգանիզմի զարգացմանը

մեծ չափով նպաստում էր բերքահավաքը, որ մեծ մասամբ շալակով էր կատարվում:

Սասունցիների նախասիրած գույներն էին կարմիրն ու կանաչը՝ միասին վերցրած: Նորածին երեխայի վզից կախ տրվող ճարոտը, հարս ու փեսայի վզկապը կամ շղարշները նույնպես կարմիր-ծիրանի գույնից ու կանաչ գույնից էին պատրաստում: Բնակչությանը ծանոթ և հաճելի էին նաև կապույտը, դեղինը և սևը:

Սասունցիների ձայնը խրոխտ է, խոսելաձևը՝ բարձր և դանդաղ: Նրանց ձայնի բարձրությունը երևում է գործադրած կանչով:

Սովորական բան էր 2-3 կիլոմետր հեռու մի վայրից մյուսը, ձորի մի կողմից մյուս կողմը, մի բլրից մյուսը եղած բնակիչներին կանչել գոռալով, կամ խոսել նրանց հետ ու պատասխան ստանալ: Թեև այդպիսի «հեռախոսություն», իհարկե, ամեն մարդու չէր հաջողվում: Լեռնա-կիրճային պայմաններում նրանց քայլվածքը դանդաղ, բայց հաստատուն և ամուր էր: Լեռնաշխարհի ճանապարհները լայն ուղի և հեշտ անցանելի չէին, որով և պահանջվում էր դանդաղ և զգույշ քայլել: Համեմատաբար արագ և մեծ զգուշություն չպահանջող քայլվածք ունեն Շատախի, Խութի, դաշտային շրջանների բնակիչները:

Նստելաձևն ընդհանրապես ծալապատիկ կամ ցածրադիր է: Ամենագործածական աթոռի բարձրությունը քառորդ մետր է, թամբաձև, որ տեղում գրեթե ամեն տուն պատրաստում էր:

Այս երևույթների զգալի մասը փոփոխության է ենթարկվել Արագածի լանջերում վերաբնակվելու, աշխարհագրական միջավայրի և կենցաղի փոփոխության հետևանքով:

ԴԱՇՏԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Սասունում դաշտամշակությունը պրիմիտիվ վիճակում էր գտնվում: Գյուղատնտեսական գործիքները, փայտեղեն թե երկաթեղեն, տեղում էին պատրաստվում: Փայտը անտառներից և երկաթը սեփական երկաթահանքերից էին ստանում, որոնք գտնվում էին մեծ մասամբ Տալվորիկ, Հլողինք, Վերի գեղ և Հարթք-Հոսնուտ գյուղերում: Այդ երկաթահանքերից հանում էին երկաթաքարը, հատուկ տեղ պատրաստում հալեցնելու համար: Անտառափայտն ու երկաթաքարը շերտ-շերտ իրար վրա դարսում, վառում բացօթյա «հնոցը» և հողի վրա, հնոցի առաջ, լոմի կաղապարներ շինում, որոնց մեջ հոսում էր պողպատի հատկություն ունեցող երկաթը: Այդ աշխատանքը կատարում էր երկու-երեք հոգուց բաղկացած դարբինների խումբը: Վերջիններս երկաթն ստանում և նրանից գործիքներ էին պատրաստում իրենց և շրջակա գյուղացիների համար: Սասունի ոչ մի երկաթահանք թուրքական պետության ձեռքին չէր գտնվում. այն շահագործվում էր տեղացի դարբինների կողմից:

Գյուղատնտեսական գործիքն էր **հարօրը**, որի մածն ու ռադամը մի փայտից էր լինում: Այն իր կորացած աղեղնաձև միակտուր մասերով միասին շինականները գտնում էին անտառներում: Դա կոչվում էր **պոչիկ հարօր**: Այդպիսի **ռադամը** (արորը) ամուր էր լինում և քարքարոտ, թեք սարալանջերը վարելիս չէր կոտրվում: Հարօրը կազմված էր հետևյալ մասերից. 1. **Ռադամ** (հողում գործող մասը), 2. **Շուրիկ** (թուր), որ ռադամն ու ծողն իրար միացնում, ամրացնում էր: 3. **Ծուղը** (ծող) արորի ռադամից մինչև եզների լուծը երկարող փայտը: 4. **Փռչիմ** (սեպ), փայտի փոքր մի կտոր էր, որ շուրկից անցկացնում էին ծողն ու ռադամն իրար հետ ամրացնելու համար: 5. **Մած**, մածկալի բռնած փայտիկը, որ ամրացվում էր (երբեմն ինքնաբուս) – ռադամի վերին ծայրին: 6. **Գործվորիկ**, ծողի ծայրը լծի մեջտեղում (կանդրիֆ) ամրացնող փայտիկ՝ 2-3 դեցիմետր երկար և բավական ամուր փայտ էր: 7. **Գանտրիֆը** երկու սմ տրամագիծ ունեցող փայտյա կլոր-շրջանակաձև շինված մի փայտե օղակ էր, որ գործվորիկի հետ միա-

սին արորի ծողը լծին էր միացնում փոկերով: 9. **Պիտ**, որ խուփն ու ռադամն իրար էր ամրացնում: 10. **Խուփ** (խոփ):

Լուծը փայտե հաստ, տաշված, հարմարեցված մի ծող էր (նրա մասերն էին՝ փայտե կամ երկաթե **սամիները** և **սամաթիլերը** (սամաթել), որ պատրաստվում էին մազից, բրդից կամ սրեմից: **Խայիշը** (փոկ) մշակված (տպղված) կաշուց էր շինվում: **Մասը** մի ձեռնափայտ էր, որի ծայրին մի սուր մեխ էր ամրացվում եզները քշելու, իսկ մյուս ծայրին ակիշ՝ ցեխը արորից քերելու համար: Հերկած, ցանված արտերը տափանելու համար գործածվում էր **ցաքը**, որ բաղկացած էր հետևյալ մասերից.

1. **Ցաքփետ** (ցաքի փետ) 1,5-2 մետր երկարությամբ, իրարից մոտ երկու դմ հեռու, իրար զուգահեռ երկու փայտյա տափակ ձողեր էին, մի կողմով իրար անբաժան (երբեմն բնական ձևով), միացած, որոնց վրա ամրացվում էին 1-1.5 մ երկարությամբ բարակ ճյուղեր, կողք-կողքի, որով ստացվում էր տափան: 2. **Ցաքի_բերնփակ**, փայտյա մի ձող, որով ցաքփետը ճյուղերով լցնելուց - գործելուց հետո ամրացվում էր ցաքփետի բաց մնացած ծայրին, որպեսզի ճյուղերն ամրանային և ցաքփետից դուրս չգային: 3. **Ցաքլից**, ծառի այն ճյուղերը, որով ցաքը լցնում էին ցաքփետի ամբողջ երկարությամբ: Այդ ցաքլից ճյուղերը հացի կամ լողփի կոճված ծառերի ճյուղերից էին կտրում, որպեսզի դիմացկուն լինեին: 4. **Ցաքզնջիլ** (շղթա), որ ցաքն ամրացնում էր լուծի հետ: Այդ շղթան վերջանում էր մի չանգալով (կարթ), որով շղթան միանում էր լծի հետ: Երբ չանգալն ամուր փայտից էր շինած, կոչվում էր ցաքգանգիչ, այսինքն՝ ցաքը կանգնեցնող, ամրացնող:

Գյուղատնտեսական գործիքներից էր նաև **ջրտունը**, որ 1,5-2 մետր երկար պոչով փայտյա թաթով մի բահ էր: Այն ծառայում էր արտերը ջրելու համար: Պոչի երկարությունը նրա համար էր, որ առանց արտը տրորելու ջրի ճամփա բացվեր չթրջված տեղերը ջրելու համար: Որքան արտի թեքությունը շատ լիներ, այնքան երկար պոչով ջրտուն պետք կլիներ, որովհետև ջրող մարդը, եթե թեք արտի մեջ մտներ, հողը կսահեր ցած և ցանքսը կփչանար:

Սասունում վարելահողն այնքան քիչ էր ազգաբնակչության համեմատությամբ, որ ամեն մի ձորի եզերքում, ժայռի վզին կամ անտառի բացատում գտնված հողը մշակում և այս

կամ այն կուլտուրան էին ցանում: Հողի սակավությունն ստիպում էր արհեստական, դարավանդային արտեր կառուցել, ուր հնարավոր էր ոռոգող ջուր հասցնել: Ժայռեր ու մանր քարեր իրար մոտ շարելով պարիսպ էին շինում, ետևը շալակով կրած հող լցնում: Հողը կրում էին այն տեղերից, ուր ոռոգող ջուր չկար:

Հողը հանգիստ չուներ այդ ժողովրդի ձեռքից, նույնիսկ տարին երկու անգամ նրանից բերք էին ստանում, գարին հնձելուց հետո կորեկ ցանում, կամ ցորենը հնձելուց հետո շաղգամ ցանում:

Սասունում մեծ մասամբ ցանում էին այնպիսի կուլտուրաներ, որոնք ամենաբերքատուն էին: Դրանք գըլգիլն ու կորեկն էին: Գըլգըլ կամ գըլգիլը ոսպի մեծ հատիկների ձև և սպիտակ գույնի հատիկներ ունի: Ցողունը 1,5-2 մետր բարձրանում է, ծայրից դուրս է գալիս հասկը, որ մեծանալով և ծանրանալով, ծռվում է աղեղնաձև, կախվում այդ բարձրության վրա: Գըլգիլի հասած գնդաձև հասկը մեծությամբ հավասար է մի մեծ նռան, սպիտակ գույնի, իրար վրա կիտված սպիտակ հատիկներով, որոնց թիվը, միջին մեծության մի հասկում հասնում է 500-600 հատիկի:

Գըլգիլի ցողունը եղեգի նման օգտագործվում էր տների ծածկի համար՝ լավ չորացնելուց հետո: Այդ ցողունը, որպես անասնակեր էլ էր օգտագործվում: Այդ դեպքում գըլգիլը «կթելուց» (հասկերը քաղելուց) հետո, ցողունը խուրձ-խուրձ կապում, դիզում էին իրար վրա, որ թարմ մնային: Ձմեռ ժամանակ մանր բրդում էին և տալիս անասուններին: Գըլգիլի հասկերը կտրում էին ցողունի ծայրից և կալսում: Ինչպես խաղողի, այնպես և գըլգիլի բերքի հավաքմանը «կթել» էին ասում: Գըլգիլի եղեգը թարմ վիճակում, երբ հասկը դեռ նոր է սկսում հասնել, շաքարեղեգի պես քաղցրահամ է, որի համար երեխաները կտրում էին և դանակով պատառ-պատառ անում, բերաններն առնում, շաքարանյութը ծծում և **փուքը** (մնացուկը) նետում: **Փուք** է կոչվում ամբողջ ցողունը: Գըլգիլը աղում էին և հաց թխում, սպաս եփում և սոնելով պատվավոր հյուրերի համար «գրըկ» կերակուր պատրաստում: «Գրըկը» նման է հալվայի, որի մեջ գերակշռում է յուղը և ոչ քաղցրությունը: Գըլգիլին սիրահար են ճնճղուկները, որոնք նրա հատիկի հասունացման օրերին բազմաթիվ երամներով

հարձակվում էին արտերի վրա, իսկ այդ հարձակումներից գըլգիլն ազատելու համար կին, երեխա, թե տղամարդ «բարշթով» (պարսատիկ) մանր ավազ էին շաղ տալիս գըլգիլի արտերի վրա, վանում այդ անկոչ հյուրերին: Այդ «պայքարը» գըլգիլի համար տևում էր վաղ առավոտից մինչև ուշ երեկո, մինչև ճնճղուկների «արշավանքների» դադարումը:

Գըլգիլին սիրահար են և արջերը, որոնք նույն գըլգիլի հասունության ժամանակ գիշերով սկսում էին իրենց արշավը: Դրանց դեմ պայքարի երեք տեսակ միջոցներ կային: Առաջին միջոցը գըլգիլի արտի շուրջը գիշեր ժամանակ կրակ վառելն էր:

Երկրորդ միջոցը որսորդությունն էր, թեև արջերը որսորդների գնդակն արհամարհում էին: Երրորդ միջոցը «արջթոփ» (արջի թոփ) կոչված գործիքն էր: **Արջթոփը** կամ **ջրթոփը** փայտյա ավտոմատ շերեփ էր, որի թաթի և պոչի միջին երկարությունը ամրացված էր մի անշարժ ցցի՝ սունի վրա, աղբյուրի կամ առվակի եզերքին այնպես, որ շերեփի մեջ ջուր լցվեր: Իսկ պոչի կողմի ծայրից կախ էր տրված մի ծակ քար: Ստացվում էր մի լծակ: Դրա քարի տակին դրվում էր թիթեղի կամ տախտակի կտոր (խուտի) հորիզոնական մակերեսով: «Թոփն» արդեն պատրաստ էր լինում գիշեր ժամանակ արջերին խրտնեցնելու համար: Երեկոյան ուշ պահերին, արջերի գալու ժամանակ, արտատերը թոփի թաթն ուղղում էր վազող բարակ ջրի տակ (ցուլանի), որով պոչի քարն ուղիղ կանգնում էր թիթեղի կամ տախտակի վրա: Երբ թոփի շերեփը ջրով լիքը լցվում էր, լծակի այդ կողմը ծանրանում, կախվում էր ցած, որով ջուրը թափվում, իսկ պոչի կողմը, քարը բարձրանում և ամբողջ ծանրությամբ խփվում էր թիթեղին և ուժեղ թնդյուն առաջացնում: Թոփից սարսափած արջը փախչում էր կամ արտին չէր մոտենում:

Սասունում, բացի այս երկու հիմնական հացահատիկային կուլտուրաներից, մշակում էին նաև ցորեն, գարի, սիսեռ, կավարս, մուրթիկ, գուրջ գըլգիլ՝ եգիպտացորեն, կանեփետ (կանեփի հատիկ), կարտոլ (կարտոֆիլ), քալամ (կաղամբ), բազուկ, խըլդ գըլգիլ (սև հատիկավոր), շոլ (սիսեռի մի տեսակը), ոսպ, կտավատ (կտավհատ), դախտիղ (տաքդեղ), շաղգամ և այլն: Ցորենի տեսակները կոչվում էին մարմուս: Մար-

մուսը ցանվում էր թե՛ գարնանը, և թե՛ աշնանը (աշնանացանը շլել էր կոչվում):

Ցանովի խոտաբույսերից միայն կատ (առվույտ) էր մշակվում: Կորեկի տեսակներն էին՝ կավարսը, վազանան, մուրթիկը, խաշիկը:

Սասունում հողի սակավության պատճառով, ցանքաշրջանառություն գոյություն չուներ: Միայն երբեմն գարու ցանքի հաջորդը կորեկն էր լինում, իսկ ցորենից հետո շաղգամ և բանջարեղեն էին ցանում: Բոլոր տեսակի սերմերը ցանելիս մի անգամ էին ցաքում, իսկ կորեկի և գըլգիլի ցանքը՝ 3-4 անգամ:

Կորեկի մշակությունը բացառիկ ձևով էր կատարվում: Արտը, որտեղ պիտի կորեկ ցանվեր, չոր-չոր «շրջում» էին (ցել էին անում), ապա մեկ երկու անգամ «էղում»՝ ցել արածը մեկ կամ երկու օր հետո վարում, ցաքանում էին, հողը մանրացնում, խողմում (ջրում), կորոտում (նեղ-նեղ մարկոսում): Երբ ռաուա կամ հարվոնքի (քեշի) էր գալիս, կորեկը ցանում և 2-3 անգամ ցաքում էին: Մի քանի անգամ ցաքելու իմաստը կորեկը շուտ բուսեցնելն էր: Կորիները (մարկոսները) ուրդ ու կորի էին անում: «Ուրդ ու կորի անելը»-ը կատարվում էր հետևյալ ձևով: Մարկոսների մեջ ջուր էին թողնում, ջրտունքվորը (ջուր անողը) ոտաբոբիկ մտնում էր մարկոսի մեջ, ոտքով ջուրը շաղ տալիս մարկոսածի (կորիի) վրա, հողը ցեխ դարձնում ոտքով և ամեն մի քայլի վրա մի «ուրդ», այսինքն՝ ջրի բարակ անցք բաց անում, որտեղից ջուրը հոսում էր, արտը ջրում: Ոտքով «ուրդ ու կորի» բաց անելու այս եղանակն է, որ IX - X դդ. հայ նշանավոր պատմիչ Թ. Արծրունին գրել է. «...և ոտամբ վարէին զարտս» (արտերը ոտքով էին վարում): Պարզվում է, որ IX դարում էլ Սասունում կորեկի մշակությունը նույն ձևով է կատարվել, ինչպես մինչև 1915թ. կատարվում էր: Կորեկի աճման ժամանակաշրջանը, ցանված օրից սկսած, տևում էր շուրջ 40 օր:

Սասունում գարնանային աշխատանքներն սկսվում էին մարտ (ադար) ամսից և վերջանում «խաչի պասին» (սեպտեմբերին), որի համար էլ ասում էին՝ «էդիվ խաչին ջրդոր քըզը» (խաչից հետո ջրի հերթը քեզ լինի), որովհետև ջրելու բան չէր մնա:

Սասունում հողի պարարտացման միջոցը «ուժելու» կամ «գարնհոգ» անելու ձևերն էին: Աշնանը և գարնանը խոշոր և

մանր եղջերավոր անասունները 10-20 գիշերը պահում էին արտերում «ուժելու» կամ «գարնհոգ»-ելու համար: Իսկ ձմեռ ժամանակ նրանցից ստացած գոմաղբն ու աթարն ամբողջությամբ կիտում, հասունացնում էին գոմերին մոտիկ մի տեղում և գարնանը շալակով կրում արտերը՝ «ուժելու» համար: Ձմեռ ժամանակ «դահուկով» կողովներով լի աղբը փոխադրում էին արտերը:


Վարելահողը խոտաբուծության չէին հատկացնում: Մասնակի մշակվող «կատ»-ը (առվույտ) հատկապես գործածում էին էմակդար (քաշող) եզների և նոր ծնած անասունների համար: Բայց խոտն առատությամբ ստանում էին մարգագետիններից ու սարերից: Ուժեղ անասնակեր էին կավլովկը, արծվեթը, զվրըկը, նիսանը, սավառոկը, կամբրուկը, ցորենխուտը, բարձմանուկը, կանջուխը, խաջնխուտը, չայրը խուտը, կազը (գազ փուշ), որոնք կես մետրից մինչև մի մետր երկար, փարթամ, թփառատ, փշոտ բույսեր են: Դրանք ամառը հնձվում, խուրձ կապվում և թողնվում էին հարմար տեղերում, որ հուսիսը՝ մեծ ծավալով սարալանջից դեպի ձորը թափվող ձյունը, չտաներ և իրենց քաշանով իջեցնեին դեպի գոմերն ու տները:

Այս անասնակերներից ամենաուժեղը «կազն» է: Դա մի բույս է, որի ցողունը մինչև կես մետր երկարություն և մարդու դաստակի հաստություն ունի: Ցողունի վերին մասում բազմաթիվ ճյուղեր են բացվում և ստացվում է հովանոցի ձևի մի մակերես, խիտ փշատերևներով, երբեմն 50-100 սմ տրամագծով: Սարալանջերում բազմաթիվ քանակությամբ կազ կար: Մի կազը երբեմն այնպիսի մեծության էր հասնում, որ մի մարդաբեռ կամ մի շալակ էր կազմում:

Ընդհանրապես, մանր կազի 7-10 հատը մի շալակ է լինում: Կազը մոխրագույն է, բայց ծաղկման շրջանում կարծես հսկա մի մանիշակ լինի, որովհետև նրա ծաղիկները մանիշակագույն են: Վերջիններս ոչխարների համար համեղ կեր են: Կազը հանում էին ոչ թե քշուշներով, որով տերև էին կտրում, այլ սուր փետատներով (բրիչ), որոնք երկու ծայր ունեն, մեկը փորելու, արմատի շուրջը բաց անելու, իսկ մյուսը՝ կտրելու համար: Կտրված կազերը դիզում էին հարմար վայրերի վրա, ձմեռը քաշանով իջեցնում սարալանջերից, դահուկներով քաշում, տանում տուն կամ գոմ: Կազերի փշերը կրակի վրա այրելուց հետո, 1-4 սմ երկարության վրա քշուշով (լոզ) ման-

րում էին և ցողունի հաստ մասերը տալիս եզներին, իսկ ավելի բարակները՝ մանր անասուններին: Խեժոտ-յուղոտ այդ բույսը անասուններին գիրացնում էր և ամրապնդում, ուժեղացնում: Կազով կթան կովերին ու ոչխարներին կերակրելիս կաթը դառնություն էր ստանում: Ուստի դրանց կազ էին տալիս միայն ծնից առաջ: Շատ կազ ուտող անասունի միսն էլ էր դառնանում: Այդ պատճառով կազը մեծ մասամբ տալիս էին քաշող ուժերին:

Կազից ստացվում էր «կազխիժ» (կազի խեժ): Մեծ քանակությամբ կազխեժ հավաքում էին և տանում քաղաքները, հատկապես Մուշ, վաճառում նուկին (գրվանքա) 1-1/2 դուրուշով: Կազխեժն օգտագործվում էր կազմատներում, կոշկակարանոցներում, որովհետև թուղթն ու կաշին իրար միացնելու հատկություն ուներ: Կազն աշնանն էին կտրում, ձյուն գալուց առաջ, որպեսզի նրա սերմերը թափվեին հողի մեջ և բուսնեին: Արմատից կազը քիչ է ճյուղ տալիս և ուշ մեծանում, իսկ սերմերից շուտ է աճում: Հողաչափությունը Սասունում կատարվում էր սերմաչափով:



Իբրև սերմի չափ ծառայում էր կոտը կամ ալբը, որով ասվում էր. արտը երկու կոտ կամ հինգ կոտ կտանի, ցույց տալու համար այդ արտի մեծությունը: Ութ կոտը մի քիլա էր: Կոտը կշռում էր մոտ քսան կիլոգրամ: Բերքն էլ հաշվվում էր կոտով ու քիլայով: Դաշտամշակության ժամանակ քաշող ուժի պակասության դեպքում եզները «բադել» էին անում, այսինքն՝ մի-մի եզ ունեցող երկու տնտեսություն միացնելով իրենց քաշող ուժերը, կազմում էին մի լուծ, որով վար ու ցանք էին անում: Սերմազուրկ գյուղացին ստիպված էր լինում բերքի վրա տոկոսով սերմ վերցնել համեմատաբար ավելի ունևորներից: Դա վաշխառության մի ձև

էր: Եթե մի վաշխառու մի սերմին կալի վրա երկու սերմ էր վերցնում, նա կոչվում էր ռբախուար (մի քառորդ ավելի վերցնող, տոկոսակեր): Այդ բառը - ռբախուար - բառացի նշանակում է ռուբ -քառորդ և խուար - ուտող, թեև այդ «կերածը» ոչ թե քառորդ (25 տոկոս), այլ մեկին երկու (200 տոկոս) էր լինում: Հողազուրկ գյուղացին կոչվում էր ջաուելակ (ճորտ), ջաուելակն ստանալով հող, սերմ, եզ և գործիքներ հողատիրոջից, վարում, ցանում, մշակում էր, բերքը հավաքում և կիսում: Հարդը նույնպես կիսվում էր:

Միրիբա կոչվում էր այն գյուղացին, որի հողն իր կարիքներին չէր բավարարում, ստիպված էր ուրիշ հողատերից հող վերցնել և իր լծկաններով մշակել, այդ դեպքում սերմը տալիս էր հողատերը, իսկ ամբողջ աշխատանքը կատարում էր միրիբան և բերքը կիսվում էր: Հողատերը հանդիսանում էր ազան և ազա էր կոչվում, եթե քուրդ էր, իսկ եթե հայ էր՝ համփա, կիսահամփա:



Սասունում, բացի եզրային դաշտավայրերից, սայլ չէր աշխատում և քուլաշը մարդիկ շալակով և եզների վրա բարձած կրում էին, որը շատ դժվար էր մանավանդ դժվարանցանելի ճամփաների պատճառով: Դրա համար էլ կալ էին անում՝ ծղուտը անասուններին տրորել տալով: Դա կատարվում էր







Գերանդիավոր Մանո Գասպարյան


հետևյալ կերպ: Ութ-տասը եզ վիզ-վզի հաստ պարանով և կողք-կողքի կապում էին, որ կոչվում էր «գուռի»: Կենտրոնում անշարժ կամ տեղում պտտվող եզը կոչվում էր «բընդոր»: Բընդորից մինչև ծայրամասի եզը, որն ամենից արագ է պտտվում, շարժվում էին համահավասար ուղղությամբ. յուրաքանչյուր կես ժամը մեկ անգամ եզների տեղերը փոխում էին, բընդորն անցկացնում «գուռի» ծայրին, իսկ ծայրինը դարձնում բընդոր: Բոլոր անասունների բերանը բառգադա (բերանկապ) էին անցկացնում, որպեսզի օրանը չուտեին: Այդ բառգադաները կանտրիֆի ճևով, իրար անհավասար մեծությամբ օղակներ էին, որ ըստ աչքաչափի - մեծ կամ փոքր - անցկացնում էին եզների դնչերին և սամաթելով ամրացնում նրանց եղջյուրներին: «Գուռի» եզները կերակրվում էին օրվա կալից առաջ և հետո:



Օրան կրելը սայլով Աշտարակի Ավան գյուղում (1949թ.)

«Գուռը» (եզների շարանը) քշող կալվորն իր ձեռքին ուներ շերեփի նման մի փայտյա աման, որ կոչվում էր թրքալ (թըրքկալ). երբ մի եզը թրքում էր, կալվորը թրքալի մեջ բռնում էր թրիքը և կալից դուրս թափում, քուլաշը և հացահատիկը մաքուր մնան:


Բերքահավաքի հիմնական գործիքներն էին կերընդին (գերանդի), որ հարթավայրերի բերքի հնձման ժամանակ էին գործածում: Գերանդին սրում էին շեղբի սուր կողմը փոքր զնդանի վրա դնելով և մուրճով ծեծելով: Գերանդին ծեծելուց հետո խարտոցով սրում էին: Կային գերանդիով օրական մեկ հեկտար հնձողներ: Մանգաղը հնձի համար ամենաշատ գործածվող գործիքն էր: Մագնուցը (մատնոցը) մի հարմարություն է, որով հնձողի մատները «երկարում են» ավելի մեծ բուռ հավաքելու համար: Մատնոցը, որ ձախ ձեռքի հինգ մատներին էր հագցվում, ձախ ձեռքով հնձողները աջ ձեռքին էին հագնում:



Կալսելու ընթացքը կամերով Աշտարակի Ավան գյուղում (1949թ.)

Քշուշը (էտոց) մի գործիք է, որով տերևախիտ անտառի ծառերի փոքր ճյուղերն էին կտրում և որպես անասնակեր պահում ձմռան համար:


Կալսման հիմնական գործիքը կամն էր, որին լծում էին երկու եզ: Կամի վրա կանգնում կամ նստում էր կամվորը և քշում: Հոռսալին (հեծանոց) փայտից էին շինում: Դրանք երբեմն հինգմատնանի կամ երկումատնանի էին լինում:



Կալը Աշտարակի Ավան գյուղում. խրձերի դեզերը, կալսման ընթացքը կամերով շիղջելը և ցորենի լցումը պարկերը

Ծեծված օրանը Սասունում էրան (քամուն) տալով՝ մաքրում էին: XX դարի սկզբին քամիար մեքենաներով սկսեցին կալի քուլաշի ցորենը հարդից ջոկել:


Սասունում բերքն ամբարում էին պահեստարանի մեջ մերթ հորերում, որի շուրջն ու վրան դարմանով էին ծածկում, որ հողից խոնավություն չստանար ու չփչանար և միշտ էլ՝ ամբարներում ու պլոլներում: Ամբարները 2-3 մետր երկարության, 1-2 մ լայնության և 1-2 մ բարձրության էին: Տեղավորում էին տների մեջ, ետևի մասում: Պլոլները գլանածև էին՝ 0,5-1 մետր տրամագծով և 1-2 մ բարձրությամբ: Ամբարները շինում էին տախտակից կամ կավից, իսկ պլոլները՝ ճյուղերի գործվածքից (գլանածև, կողովի նման), որոնք ծեփվում էին կավով կամ կավախառն աղբով: Ամբարներն ու պլոլներն ընդհանուր անունով **փեթակ** էին կոչվում: Պլոլ կամ փեթակ էին կոչվում նաև մեղուների համար պատրաստված գլանածև տնակները, որ ճյուղերից էին գործվում և սվաղվում (ծեփվում):







Արորներ. ա/ Բոչիգ հարօր, 1. Ռադամ, 2 Մաջ, 3. Ծուղ, 4. Թուր /թրիկ/, 5. Կորձվորիգ, 6. Խուփ, 7. Պիտ


բ/ Ռադամ հարօր, 1. Ռադամ, 2. Ծուղ, 3. Թուր /թրիկ/, 4. Մաջ, 5. Կորձվորիկ, 6. Պիտ









Ա/ Ուրդ ու գործ / ջրատար ակոսներ/, բ/ Մսաս, 1. Թաթ, 2. Բուչ, փ. Բիբիռ, գ/ Արչքոփ /ճրքոփ/ 1. Սուն, 2. Լուծ, 3. Քար, 4. Խուտի /արկղ/, 5. Յուլան:




ա




բ



գ




դ



գ

Ա/ էրգումատ, բ. հոռսալի, գ/ գամ, դ/ բառգագա / կալսող եզների բերանակապ



Ա/ Դինգ, ձավար ծեծելու, քարը պտտելու համար լծում էին եզ կամ գոմեշ, բ/ էրգանք, գ/ ճաղցը գացին, այն երկաթե մասը, որ թաղվում է ջրաղացի քարի մեջ և պտույտ է հաղորդում, դ/ լուղքար, որով տների հողե կտուրները ամրացնում են , չկաթելու համար:

Ամբարների ու պլոլների դռնակները նրանց հատակի մոտ էին բացվում: Դրանք անշարժ դարաներ էին: Շարժական դարաներն էին՝ մանդիքը (մեծ, երկկողմ մազից գործած պարկ), փալասը (միաչքանի մեծ պարկ), թեռը (փոքր մանդիք), պարկը (այծի ամբողջ մաշկը՝ տիկ հանած): Մանդիքի, փալասի, թեռի և պարկի մեջ լցնում էին բերքի այն մասը, որ աղունելու համար էր նախատեսված և առաջին հերթին պետք է սպառվեր: Հարդը մեղարներով և սակառներով (մեծ կողով) կրում, լցնում էին մարագները:


Ցորենի և կորեկի աղունը ջրաղաց էին տանում, իսկ գըլգիլը էրկանքով (երկանաքար) էին աղում: Էրկանքով աղալը բացատրվում է նրանով, որ նախ՝ գըլգիլի հատիկները փխրուն լինելով, ջրաղացի մեծ քարի տակ չէին դիմանում, և երկրորդ, որ ավելի լավ ապուր (սպաս) էր լինում, քան հաց:

Անասնակեր կազը, խոտը և դիվը կամ դերիվը (տերև՝ ծառի ճյուղքով հանդերձ), երբ տներից հեռու սարալանջերի վրա և անտառներում էին հնձում (խոտը) կամ կտրում (տերևը ճյուղքով կտրելը), դիզում էին սարերի և անտառների հարմար վայրերում: Երբ ձյունը գալիս էր, քաշան անում (սահեցնում) սարալանջերից իջեցնում էին տանը մոտիկ ձորերում: Քաշան անելը կատարվում էր հետևյալ կերպ: Տերևը, կազը և խոտը 15-20-ական խուրձ ձյան վրա դիզում, պարանով ամուր կապում և քաշողն էլ այդ դեզ-շալակի առաջն անցնում, նախ դանդաղորեն ձյան վրայից քաշում, ապա, երբ քաշը քափ էր ստանում, ինքն էլ նստում էր դեզի, կամ առաջամասում հարմարեցրած մի խրձի վրա ու սուրում վար՝ մինչև տանը մոտիկ ձորը: Դեզի վրա նստելով սահելը, սուղալով իջնելը վտանգավոր էր, որովհետև ձյան երեսի վրա սահող դեզը խորդուբորդությունների հանդիպելով ցնցվում էր և վրան նստող քաշանվորն ընկնելով անդունդը, թև ու ոտը, իսկ երբեմն էլ ամբողջ մարմինը ջարդուփշուր էր լինում: Դեզի առաջակողմը նստելը համեմատաբար քիչ վտանգավոր էր, որովհետև քաշի վրա արագ և վտանգավոր տեղերից սուրալիս, քաշանվորը ճարպիկ կերպով իրեն ճամփի կողքին էր գցում՝ իրեն ազատում, իսկ խոտի, կազի, տերևի դեզը շարունակում էր իր ընթացքն առանց ուղեկցի: Եվ եթե լավ, ամուր էր կապված, մի ակնթարթում հասնում էր կայանը, իսկ

եթե լավ չէր կապված, խուրձերն արձակվում էին և այս ու այն կողմ շպրտվելով՝ կորչում:

Սարի ստորոտում իջեցված անասնակերը բարձում էին դահուկների վրա և փոխադրում գոմերը: Մի դահուկի վրա մի քաշան կարելի էր բարձել՝ 10-15 խուրձ և քաշելով տանել: Իհարկե, քաշող ուժն այստեղ միայն մարդն էր:

Դահուկը Սասունի միակ տրանսպորտն էր, եթե չհաշվենք բարձկան (բեռնակիր) անասունը, և այն էլ պիտանի միայն ձմեռը: Դա մի մեծ սահնակ էր, մոտ 2-2,5 մետր երկարությամբ, 1-1,5 մետր լայնությամբ և 0,5-0,75 սմ բարձրությամբ:



Ա/ Տահուգ, բ/ Քաշան, գ/ Մանգաղ, դ/ Քշուշ, լոգ, ե/ Օձնուց - եղջյուրե յուղամաճ՝ գործիքներ յուղելու և սրելու համար:

Դահուկի երկու իրար զուգահեռ ձողերը, որ հղկվում էին, մոտ 1,5 մ երկարությամբ հենվում էին ձյան վրա և առաջամասում կամարածև դեպի վեր թեքվում, բարականում և ձեռքով բռնելու հարմար բարձրության հասնող երկու կլորաձև «կոտոշներ» էին (բռնակներ) դառնում: Դրանցից բռնում էր քաշողը՝ մեջքը դահուկին տված և դեմքը ճամփու ընթացքի ուղղության, քաշում, տանում էր նախապես պատրաստած ձնաճամփով: Երբ նոր ձյուն էր գալիս, ճանապարհը փչանում էր, հարկ էր լինում մաքրել կամ նորը պատրաստել: Զուգահեռ երկու ձողերից բացի դահուկն ուրիշ հենակետ չուներ: Իսկ այդ ձողերի վրա դահուկի «թամբն» էր շինված, ամուր և թեթև ձողից ու տախտակներից, որ դահուկը ծանր չլիներ:

Դահուկն օգտագործվում էր միայն հարթ և քիչ թեքություն ունեցող ճամփի վրա: Եթե տունը կամ գոմն ավելի բարձր տեղում էին, քան դահուկի ճամփան, քաշանավորն ստիպված էր անասնակերը դահուկից դատարկել և շալակով փոխադրել գոմը: Իսկ անասնակերի փոխադրումը վերջացնելուց հետո, դահուկն էլ ստիպված էին քաշել սարնիվեր՝ դեպի տուն: Դահուկի համար ձնճամփան շինելուց հետո, դահուկվորները պարտավոր էին աշխատել թեկուզ ձյուն տեղար կամ փոթորիկ լիներ, որպեսզի այդ տաժանելի ճանապարհաշինությունը չկրկնեին: Երբ ձյունը շատ էր տեղում և փակում դահուկի ճանապարհը, դահուկավորներն ստիպված էին լինում լական հագնել, որպեսզի ձյան վրա աշխատելիս չխրվեին: Այդպիսի բնության պարտադիր աշխատանքի պայմաններում, ձմեռ ժամանակ կարելի էր տեսնել քաշանավոր դահուկվոր աշխատողներին, որոնց արտաշնչած գոլորշին և տեղացող մորազը՝ սառցածողեր էին կազմում և բեղերից կախվում:

Բնության դաժանություններին համառ աշխատանքով էին դիմավորում ապրելու և հաց ու թան վաստակելու համար: Դաշտային, տնտեսական ու անասնապահական աշխատանքները շատ ծանր էին այդ լեռնաշխարհում, որովհետև բնակավայրերն այնպիսի տեղերում էին կառուցում, որ շատ էլ մատչելի չլինեին, որպեսզի պաշտպանվեին և՛ անասուն, և՛ «ասուն» գազաններից: Դրա համար էլ չէին թողնում այդ երկիրը «լեն ու բոլ» աշխարհ գնալու համար, այլ այդ ժայռերին կպած, համառ աշխատանքով ապրում էին:

Նոր բերքից ստացած ցորենը ջրաղացում աղում և առանց թթխմորի մեծ քանակությամբ հաց թխում ու բաժանում էին դրացիներին: Նավասարդին այդ հացը **աշկավա** անունն էր կրում: Ամեն ոք այդ աշկավայից մի մաս առնում և ուտում էր՝ ինչպես բարձրարեկ (եկեղեցու հաց) կամ նշխարք, այն տարբերությամբ, որ աշկավայի վրա օրհնություն կամ աղոթք չէր կատարվում: Աշկավան ստացող-ուտողն ասում էր «Աստված խաբուլ (ընդունելի) անէ»:

Աշկավայի հետ երբեմն մատաղ էլ էին անում: Մատաղը հայր Աբրահամի անունով էին անում, իսկ աշկավան՝ Աստծու անունով:

Արտերը կարկտից ապահով պահելու համար «ճրագլուս» էին անում «յուղ կամ ձեթ վառում ճրագով», իսկ չար աչքի դեմ «շան խոխը» (շան գանգը) ամրացնելով մի ցցի վրա, կանգնեցնում արտում: Այդ գանգը կարող էր այլ կենդանու էլ լինել:

Դաշտավարության ժամանակ, կիրակի և չորեքշաբթի օրերին սերմը հողին չէին հանձնում: Երեքշաբթի և հինգշաբթի օրերին ցանված սերմը բարի էին համարում: Սերմը եթե **լուսվանթիկ** (լուսաբացին շուտ) էր ցանվում, սպասվում էր, թե բերքատու էր լինելու, իսկ եթե **իրիկվա թիկ** (երեկո ժամանակ) էր ցանվում, գոր (մրուկ) էր սպասվում և բերքը՝ սակավ: Ցանքսի աշխատանքը մեծ ջերմեռանդությամբ էին կատարում և սուրբ գործ համարում: Սերմնացանը գտնելով, որ սերմը մրիկ կտա, սերմելուն նախորդող գիշերն իր կնոջ մոտ չէր քնում: Երբ սերմնացանն իր եզների հետ միասին արտի եզերքին էր հասնում, աղոթում, խաչակնքում էր և նոր լծում եզներն ու աշխատանքն սկսում: Նախքան աշխատանքն սկսելը դաշտամշակության համար մեծ նշանակություն ուներ եղանակը գուշակելը: Դրա համար զանազան երևույթների մեկնաբանությամբ՝ լավ կամ վատ եղանակն այսպես էին գուշակում:

Ամբիղ կոչված արևելքից փչող քամին անձրևաբեր էին համարում: **Պարզկին** կոչված արևմուտքից փչող քամին թերևս բուքի ժամանակ փչեր, պարզ օրվա նշան էր համարվում: Ջմեռվա պարզ, արև օրում, եթե քամին արևելքից փչեր, նշան էր, որ շուտով սաստիկ ձյուն է գալու, իսկ ամառը՝ անձրև: Երեկոյան, մայրամուտի ժամանակ, եթե թռչունները, հատկապես անծեղները, տների մոտից և գյուղից դեպի անտառն էին թռչում, նշանակում էր, թե ձյուն կամ անձրև չի տե-

ղալու, «անուշ» է լինելու, իսկ եթե ընդհակառակն, անտառներից դեպի գյուղն ու տները թռչեին կամ անտառ չգնալով՝ տների դռներին և չարդախներին էին մոտենում, նշանակում էր, թե ձյուն կամ անձրև է տեղալու: Թռչունների քանակը, տվյալ ճամփորդության ժամանակ, նշան էր ուժեղ կամ թույլ անձրև և ձյուն տեղալուն: Եթե թռչունները պատսպարվելու համար փորձում էին գոմերն ու տները մտնել, **դժար** (փոթորիկ) էր լինելու: Եթե եզները **փնչկտային** (փռըշտալ)՝ ուժեղ քամու նշան էր, եթե մսուրները լիզեին՝ կլիներ դժար (փոթորիկ): Ոչխարներն ու այծերը, եթե իրենց ականջները ռապացներին (գլուխը շարժելով ականջներն իրար և երեսին զարնել), փոթորիկ էր լինելու: Ճնճղուկները երամ-երամ հավաքվելիս և իրար սեղմվելիս երբ **խժխժում** էին (ծվծվում), նույնպես փոթորիկի նշան էր համարվում:

Սասունցիները երաշտի ժամանակ անձրև բերելու միջոցներ էլ ունեին: Այսպես օրինակ՝ հավատում էին, թե խաչքար լվալը լեմըշտ (վարար) անձրև կառաջացներ, որի համար բարոշով (պղնձե դույլ) ջուր էին բերում և խաչքարը լվանում: Հավատում էին, թե սատանաները կամ չարքերը գալիս և նորածին երեխային փոխում էին իրենց երեխայի հետ, որովհետև մայրը երեխային մոտը երկար չէր պահել: Այսպիսի պարագայում եթե այդ երեխային տանեին սպանված մարդու գերեզմանի վրա լողացնեին՝ վարար անձրև կտեղար: Այդպես՝ նաև կոխ եղած երեխային:

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆՁԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այգեգործությունն ու պտղաբուծությունը Սասնա Խիանի, Խուլբի, Խարզանի, Տալվորիկի և Փսանքի շրջանների տնտեսության մեջ զգալի տեղ էին բռնում: Իսկ Շատախի, Խութ-Բռնաշենի, Շենիկ, Սեմալ, Գելիեգուզան և այլ վայրերում այգեգործություն գրեթե չկար, թեև այդ վայրերում էլ պտղաբուծություն գոյություն ուներ: Խաղողի ամենալավ տեսակներն աճում էին Տալվորիկում և Խիանում, որոնք **փոխար, ոչխարի պտուկ** կամ **սուլուլ խաղող, աշխար, դումշկի, բոլոր պտուղ, նուսաբ, իզնուրդ, պահրիկ, էզանաչ, կարմիր, մոխար, սոլոլ, բաթման, բորկը, բախարի, իզմիր** էին կոչվում: Գինեգործությունն իր նախնական ձևերով կատարվում էր նշված այգեգործական շրջաններում: Պատրաստվում էր լավ գինի ինչպես տան պահանջների, այնպես էլ վաճառքի համար:

Գինի պատրաստելու համար հասունացած խաղողը քաղում էին, փռում հատուկ մաքրած տեղում, մի շաբաթ կամ մի քանի օր թողնում, որ թառամեր: Խաղողի այդ շերտի հաստությունը մի թզաչափ էին անում: Խաղողի ողկույզների թառամումը նշանակում էր ջրային որոշ մասի շոգիացումը, որով գինին ուժեղ կլիներ: Թառամած խաղողը լցնում էին փայտե մեծ տաշտի մեջ դրած տոպրակների մեջ, որոնք մաքուր կտավից էին, ապա խաղողով լիքը պարկը մաքուր ոտքերով տրորում էին: Քաղցուն (շիրա) մաքուր վիճակում, քամված, լցվում էր փայտե տաշտը, որից հատուկ խողովակով հոսում էր մի մեծ կաթսայի մեջ: Կաթսայից շիրան փոխադրում էին կուլիներում (մառան) անշարժ դրված գինու կարասների մեջ: Քաղցուն 8-10 օր «եփվում» էր, իսկ երբ «եփվելը» կանգ էր առնում, կարասի բերանը ծեփում էին կավով կամ խմորով և երկար ժամանակ պահում մինչև գործածելը: Գինին որքան երկար էր մնում, այնքան «հասունանում» էր, քաղցրանում ու թնդանում: Երբ կարասի բերանը բաց էին անում, գինու երեսի վրա մի սմ հաստությամբ փառ ու փրփուր էր լինում, որը խնամքով հավաքում էին և «հասած» գինին խմում, գործածում կամ ավելորդը վաճառում:

Խաղողը ճմռելուց և քաղցուն քամելուց հետո տոպրակների մեջ մնացած չիմը (չանչը) լցնում էին կարասները:

Խաղողի չանչը 10-11 օր մնալուց հետո եփվում, հասունանում և կանգ էր առնում: Չանչը լցնում էին մեծ և կլայեկած մաքուր պղնձե կաթսայի մեջ և այդ կաթսան դնում օջախի վրա ու բարակ կրակ վառում տակը (ուժեղ կրակը օղին փչացնում է): Կաթսայի մեջ, չանչի վրա, դնում էին մի մաքուր **դասկարա** (եռոտանի), որի վրա էլ հրակայուն, լայնաբերան մի աման, որ հողից էր պատրաստվում (ամանը մետաղյա չպիտի լիներ): Արաղ քաշելու այդ պղնձե կաթսայի բերանին դնում էին հատակը կորնթարթ մի տաշտ, որը, կափարիչի դեր կատարելուց բացի, 1-2 դույլ ջուր էր տանում: Կափարիչ-տաշտը կաթսայի բերանի մոտերքում խմորով ծեփում էին, որ օղու գոլորշին դուրս չգար: Օղու գոլորշին բարձրանալով կպչում էր կափարիչ-տաշտին, որի միջի սառը ջրի պատճառով հեղուկ էր դառնում և կաթում դասկարայի վրա դրված հողե ամանի մեջ: Երբ կափարիչ-տաշտի միջի ջուրը տաքանում էր այն աստիճանի, որ մարդու մատը չէր դիմանում նրա մեջ, այդ տաքացած ջուրը շերեփով քաշում էին և փոխարենը սառը ջուր լցնում:

Երկու անգամ ջուրը փոխելուց հետո բաց էին անում կափարիչը, հանում հավաքված օղին, չանչը կաթսայից դուրս թափում, նոր չանչ լցնում ու նկարագրված գործողությունը կրկնում: Եթե միայն մի անգամ ջուրը փոխեին և օղին հանեին, վերջինս սարթ (թունդ) սպիրտի նման կլիներ: Երկրորդ ջուրը փոխելիս օղին նորմալ էր լինում: Եթե երրորդ ջուրն էլ փոխեին, օղին շատ թույլ կլիներ: Այդպիսով, տաշտի ջուրը փոփոխելուց էր կախված օղու թնդության աստիճանը:

Պտղաբերության մեջ ակնառու տեղ էին բռնում տանձը, որի առատության պատճառով Տանձուտ անունով գյուղեր կան Խիանում ու Խարզանում, ընկույզը, որից շատ գյուղերի անունները՝ Ընկուզնակ, Ընկուզածոր կամ Գելիեգուզան են կոչվում, խնձորը, սալորը, շգլուրը (սալորի մի տեսակը) դառիճճը (թթու խնձոր), թութը, թուզը (հարավային մասերում), նուռը, սերկևիլը, փշատը, «խուխը» (դեղձը), ունաբը, նուշը, տամոնը (մեծ և սև սալոր):

Վայրի պտուղներից էին շախոխը (տանձ), ալուջը, մկնալուջը, խնկանալուջը, թթու ալուջը, մասուրը, աղվիթը, սպիոկը (վաղահաս աղվիթ), մկնաղվիթը, թոխումբը, բլուրը, որ կաղնի, հոշգի, մարծթի ծառերի վրա է լինում, մրգիթը (որից ձեթ են հանում), բռինչը, հավկուտը (կարմիր հատիկներով):

Այգեգործությունը մեծ խնամք չէր պահանջում: Այգեգործը մարտ ամսի վերջերին, երբ ձյունը հալվում էր և որթատունկը բացվում, էտում էր և մի քանի օր հետո լավ փորում: Եթե վեգետացիոն շրջանում մոլախոտեր երևային, մեկուսացնում էր և ուրիշ ոչինչ: Խաղողի որթը չէին թաղում և հակառակ սառնամանիքներին ու շատ առատ ձյանը, որով ծածկվում էր որթատունկը՝ չէր մրսում: Ամառվա տաք եղանակին որթատունկը չէին ջրում և դա բոլորովին էլ բացասաբար չէր անդրադառնում, եթե այգին լավ էր փորվում: Խաղողի որթը մեծ մասամբ հողի թմբերի վրա փռված ճևով էր աճեցվում, սակայն շատ հաճախ և ծառերի կամ խեչիների (նեցուկներ) վրա բարձրացնելով: Որթատունկները շարքերի չէին վերածվում, այլ խառը դասավորվում էին այգու տարածության վրա:

Այգեգործության անհրաժեշտ գործիքներն էին՝ քլունգը կամ փետատը՝ քարերից այգին մաքրելու, սուր դանակը՝ էտը կատարելու համար: Այգեկութի ժամանակ ողկույզները հավաքելուն էին ծառայում կողովները: Այգեգործության և պտղաբուծության աշխատանքներն ընդհանրապես տղամարդիկ էին կատարում, իսկ բերքահավաքը՝ բոլորը միասին:

Հիշատակության արժանի է, որ խաղողի պտուղը դիմացկուն լինելով, հասունացած խաղողն անգամ կողովների մեջ լցրած 2-3 օրվա ճանապարհ կտրելով հասցնում էին Մուշ, Նփրկերտ (Տիգրանակերտ) և հեռավոր գյուղեր՝ ուր խաղող չէր մշակվում:

Գինու քաղցրությունն ու սպիրտային տոկոսը բարձր էր լինում: Այդ տեսակետից նշանավոր էին Տալվորիկի և Խիանի գինիները: Այստեղի գինիները վաճառվում էին շրջակա գյուղերում, թեև շուկա հանվողը սակավ քանակ էր կազմում:

Բացի գինուց, խաղողից պատրաստում էին ռուբ, ըրուբ կամ դըմս (ղոշաբ), մշլուր (սուճուխ), բասդիղ (բարակ, լավաշի պես բացված չոր ուտելիք) և այլ անուշեղեններ:

Ոչ պտղատու ծառերից էին **գենչենին** (որի կեղևը մոմի պես վառվում է), **բոծախին** (որի կեղևից կարմիր ներկ էին պատրաստում և մածունը հարելու տիկ-խնոցիները ներկում), **կապուկը** (որի կեղևից նույնպես կարմիր ներկ էին պատրաստում), **լուսան տերվանին**՝ լայնեզր տերևներով նորգենին (որի կեղևը նույնպես մոմի նման վառվում է), **շմշաքը** (որի ընտիր փայտից սրինգ էին շինում), **գելվըժենին** (որից իբր թե գայլերը թունավորվում էին), **կաղմխին** (կաղամախի), **մոշին** (որ մոշ պտուղն է տալիս), **հացին, նորաշենին, դլբին, լողփին** և այլն:

Հողի սակավության պատճառով Սասունում բանջարաբուծությամբ քիչ էին զբաղվում: Այնուամենայնիվ, գրեթե ամեն տուն **բանջար** (շաղգամ) էր ցանում: Բանջարանոցը սովորաբար տան առաջին էր լինում, որպեսզի պաշտպանվեր: Բանջարը (շաղգամը) շատ քաղցր էր լինում: Դրա փոքրերը **բլոջ** էին կոչվում: Շաղգամը սասունցիների առավել սիրած բանջարեղենն էր: Այն ուտում էին հում վիճակում, նաև թթու դնում, ջուրն առատ անում, և այդ կարմրավուն հեղուկը, որին «թթվը ջուր» էին ասում, խմում էին իբրև զովացուցիչ խմիչք: Գույնը կարմրավուն էր լինում, որովհետև ինքը՝ բանջարը կես-կարմիր և կես-սպիտակ էր:

Ժողովուրդը իրար երբեմն «բլոջկեր» կամ «շաղգամակեր» էր անվանում: Անշուշտ, այստեղից էր, որ Սասունցի Դավթին «շաղգամակեր», «բլոջկեր» էին անվանում: Շաղգամի լայնեզր թփերն էլ չորացնում և ձմեռ ժամանակ որպես բանջարեղեն եփում, ուտում էին:

Սոխը, որ սասունցիների համար հաճելի բանջարեղեն էր, նույնպես լավ էր աճում: Առածի կարգ անցած ասվում էր. «Շաքար չէ, սուխ լե էղնը չըմ ուդը» (շաքար չէ, սոխ էլ լինի չեմ ուտի):

Սակավ քանակությամբ, միայն տան սպառման համար ցանում էին **կարտոլ** (կարտոֆիլ), **քալամ** (կաղամբ), **բազուկ**, որ շատ մեծ և քաղցր էր լինում: Բազուկի (տակի) մեծությունը հնարավորություն չէր տալիս ամբողջական եփել, ուստի և մանրում էին: Բազուկն իր քաղցրության պատճառով շաղգամի պես հում-հում էլ էին ուտում:

Սասունի կուլտուրական բույսերի պակասը լրացնում էին վայրի բանջարների բազմաթիվ տեսակները: Սրանք ոչ միայն տան կարիքներին էին ծառայում, այլև շուկա էին հանվում:

Խավրծիլը վայրի բանջարների արքան էր: Դա մի բույս է, որ գիշերն էլ աճում է, որի համար թերևս խավարածիլ կամ խավրծիլ է կոչվել: Այն վաղանցուկ կյանք ունի, շուտ է «մահանում» (փայտանում): Խավրծիլը բուսնում է բարձր սարալանջերում: Նորածիլ խավրծիլի շուրջը 2-3 **կապեր** (լայն թուփ) միաժամանակ բռնում և արագ աճում են. վեգետացիոն շրջանը հազիվ 25-30 օր է տևում: Թփերը 50-75 սմ տրամագիծ ունեցող բոլորաձև տերևներ են դառնում. յուրաքանչյուրը մի հովանոցի չափ

է, սարի հովիվները արևից և անձրևից պատսպարվում էին դրանց տակ: Խավրծիլի ցողունը, որ ուտում էին, ուղղածիգ բարձրացող մի որձա է, 50-100 սմ երկարությամբ, ուղղածիգ բարձրացած. սրա գագաթի վրա վերջավորությունները ծռապաձև դասավորվում են, որոնց մեջ ոսպաձև, տափակ սերմերն են գտնվում: Որձան ունի 4-5 սմ լայնություն և 1-3 սմ հաստություն՝ վերից վար ծածկված ցցուն, թեփոտ մի մաշկով, որը հեշտությամբ զոլաձև կեղևվում է: Կեղևվածը կանաչավուն է՝ թթվաշ համով, որ ուտում են ինչպես մարխոշ խնձորը: Խավրծիլը թարմ-թարմ է ուտվում. այն 2-3 օրից ավելի չի մնում: Դրա համար հետզհետե հավաքում էին և ուտում: Խավրծիլի հասածը հավաքում էին, խուրձ կապում և տանում Մուշ-Նփրկերտ՝ վաճառելու: Մուշի խանութներում, մայիս-հունիս ամիսներին խուրձ-խուրձ դարսված խավրծիլներն իսկույն սպառվում էին գնողների կողմից:

Սունկը, որի ուտելի մասը 20-30 սմ տրամագիծ ունեցող սկավառակ է, եփում, ուտում էին մեծ քանակությամբ:

Կռզիկը մի արմատապտուղ է, փոքր բողկի մեծությամբ, կանաչ, երկարավուն տերևներով, որոնք երբ կտրվում են, կաթնանման մի հյութ է հոսում: Կռզիկը հաստ մաշկով է ծածկված: Այն հանում էին, մաշկում և մնացած սպիտակ կլոր զանգվածն ուտում: Դա քաղցր համ ունի: Երբեմն այդ միջուկը կոշտացած և ոչ պիտանի է լինում ուտելու համար: Այդպիսիներին կատու անունն էին տալիս և չէին ուտում:

Խաներ կամ կանկար բույսը գարնանային սնունդ էր:

40-60 սմ բարձրության ծառանման ճյուղեր ունի, որ կեղևում էին և ուտում: Ուտելի ճյուղերը կտրելիս կաթ է հոսում, որից ծամոն էին շինում: Կանկարի արմատն էլ մատաղ ժամանակ ստեպղինի (գազար) պես քաղցր և ուտելի է. երբ շատ է մեծանում, փայտանում է և չի ուտվում:

Նվիկը ժայռերի և մացառների մեջ է աճում, շաղգամի թփերի պես տերևներ ունի, որոնք 10-15 սմ երկարություն ունեն: Նվիկը թարմ վիճակում եփում, ուտում էին և հյուսքեր անում, չորացնում՝ ձմռանն ուտելու համար: Այն խիստ կծու համ ունի:

Օղինը նոր բուսնելիս բուլուկ (փնջիկ) է լինում. բացվում է 8-12 սմ երկարությամբ և 3-4 սմ լայնությամբ, որ 10-15 տերև են կազմում: Դրանք իրար միացած են իրենց կոթերի մասով: Օղինը թարմ վիճակում եփում, ուտում էին և հյուսում բազմաթիվ

հյուսեր, չորացնում, պահում ձմռան համար: Ճաշի մեջ էլ էին գցում, երբ սռնուցքով (ցորենի ձավար) էին ճաշ եփում: Օղինն առատ բանջարեղեն է և նրա արմատները **շրեզ** (շրեշ) էին կոչվում: Տեղացիները մեծ քանակությամբ հավաքում, չորացնում էին և Մուշ, Նփրկերտ տանում, վաճառում: Շրեզը կազմարարների և կոշկակարների կողմից փնտրվում էր. նրանով թղթեր և կաշվի կտորներ էին միացնում: Շրեզը օգտագործվում էր տեղական և քաղաքների ջուլհակների կողմից. բամբակի մանածները գործելուց առաջ ջրած էին անում՝ շրեզի ջրով մանածը թրջում էին, որից թելը չէր կտրվում:

Սարսուխը (սարի սոխ), իսկական սոխ է վայրի վիճակում, այն տարբերությամբ, որ սարսուխի տերևներն ավելի բարակ և ամուր են, իսկ համը և գործածության ձևը նույնն է:

Գուրջմաթը (սինձ) կաթոտ և համեղ է: Այն ուտում էին հում վիճակում:

Նիսանը աղվեսի ագիի պես փարթամ մի բույս է՝ 12-15 սմ երկարությամբ, մանր, փշատերև թփերով: Եփում էին, քամում և ձվով ու թանհատով (շոռ) տապակում, ուտում:

Արծվեթը ավելխոտի պես մի բույս է՝ 20-25 սմ երկարությամբ և բազմաթիվ ճյուղերով: Այն թարմ վիճակում քաղում, եփում, ուտում էին, իսկ լավ հասունանալիս քաղում, անասնակեր էին անում:

Ժախը նիսանի նման է, բայց ոչ փարթամ, նրա տերևները, կոթերը հավաքում էին, թթու դնում, իսկ ամբողջությունը՝ տերև և կոթ միասին, թարմ ժամանակ եփում, ուտում:

Սպիտակիկը (սիբեխ) ժախի պես օգտագործում էին թարմ ժամանակ և թթու դնում:

Դավրը լեզու (տավարի լեզու) բույսը թարմ վիճակում գործածում էին եփելուց հետո: **Փարփար** (դանդուռ) բանջարն ուտում էին թարմ վիճակում և թթու դնելով: Փարփարը մանրում, մածունի հետ խառնելով պահում էին հողե կրուրների (կճուճ) մեջ և ձմեռն էլ գործածում: Դա կոչվում էր փարփրթան և շատ սիրված կերակուր էր: **Թթվալաշը** շատ թթու համ ունեցող մի բույս է, որ թարմ վիճակում ուտում էին որպես սեղանի բանջարեղեն, թեև երբեմն էլ եփում էին, ապա ուտում:

Սանդիշը սարսուխի և սոխի պես մի բույս է և նույն ձևով էլ օգտագործվում էր:

Քիղը (քեղը) 50-75 և ավելի սմ երկարությամբ, լայն թփերով, մատի չափ հաստ և կանաչավուն կոթով համեղ բույս է, որի կոթը կեղևում և ուտում էին: Դա խավրծիլի համ ունի: Երբեմն տերևները կոթի հետ միասին եփում, ուտում էին:

Դիժոկը քեղի նման մի բույս է, վերջինիցս քիչ փոքր. օգտագործվում էր նույն ձևով, երբեմն էլ սպասի մեջ գցելով, որ թթվաշ, հաճելի համ էր տալիս կերակրին, ինչպես քացախը:

Փընգա բանջարը թարմ և չորացրած վիճակում գործածում էին:

Զզու կամ զզվի խուտ բանջարը սարսուխի նման, ավելի փոքր բույս է, որ հավաքում, չորացնում, աղում էին և որպես պղպեղ գործածում: Շատ անգամ այդ աղացված զզուի փոշու մեջ հացը մի փոքր թաթախում և ուտում էին: Ունի հաճելի կծվություն:

Գանջուխը քեղի նման մի բույս է, ավելի երկար և փարթամ, որի ցողունը կեղևազերծ անելուց հետո, մսային մասն ուտում էին: Այն ունի շաքարեղեգի համ: Գանջուխի ցողունը խողովակաձև է. երեխաները նրանից **ֆիշտոխ**, ջրի մղիչ էին շինում և իրար վրա ջուր արձակում:

Սխտորը կուլտուրական սխտորի նման տակով ու վրայով բույս է: Բանջարավորները ահագին քանակությամբ հավաքում, բերում էին: Կան սար ու լանջեր, որ մեծ քանակությամբ սխտոր ունեն: Տալվորիկի և Գելիեգուգանի սահմանը կազմող սարը այդ պատճառով Սխտորքար էր կոչվում:

Փափոշիկը գետնի վրա տարածված, թփերը հողին կպած վիճակով մի բույս է, որ կարծես միայն տերևներից է բաղկացած: Ցողունը փոքր և աննշան է: Սա հավաքում էին, մաքրում հողից և հում-հում ուտում: Համեղ աղցան էր լինում: Վերջապես կային **ժուռ, մորիկ, դդմաճ, զամբուր, սուս** (արմատն ուտելի), **խախաջոկ** (արմատն ուտելի), **սխտորուկ, խանզեզ, սիրըմ** (համեմ), որ գործածում էին քյուֆթայի մեջ և **ծեթրին**: Վերջին երկուսը սպասի (քանապուրի) անբաժան համեմունքներն էին կազմում և առանձին էլ գործածվում էին:

Սասունի վայրի, բայց հարուստ և այս բերքառատ «բանջարանոցներում» բուրում են հետևյալ հոտավետ բույսերը, որոնք հովիվների և բանջարավորների գլխի զարդն էին կազմում:

Գինարբը հոտավետ բույսերի թագուհին է, որի բուրմունքը հարյուրավոր մետր հեռավորության վրա զգացվում է: Սա մի

մետրից ավելի երկար ցողուն ունի, բարակ եղեգի նման, որի ծայրին, թզից ավելի երկարություն ունեցող ծաղկյա ծոպերն են փռվում և շրջապատը բուրմունքով լցնում: Գինարբն աճում է աղբյուրների և առուների շուրջը, լեռնալանջերի **շալվիղներում**, խոնավ և մացառուտ վայրերում: **Գուլն** ու **սոսընը** իրենց բուրավետությամբ չեն զիջում գինարբին և հիշատակվում են սիրային երգ ու տաղերի մեջ: **Անթառամ** ծաղիկը, որ երբեք իր բույրն ու գույնը չի կորցնում, ամեն տուն, տարվա բոլոր եղանակներին, զանազան ձևերով գործված, պահում էին տներում՝ լուսամուտներից, ճրագդիրների սյուներից և առաստաղի գերաններից կախ տալով: **Մանուշակը - հալբախուտը** գինարբիի նման է ու նրա բուրմունքն ունի: **Ճնճղկու սաբուն** (ճնճղուկի սապոն) փափոշիկի նման բույս է. երեխաները և դաշտ ու հանդերում աշխատող մարդիկ այդ կանաչով լվացվում էին որպես պատրաստի օճառով և մաքրում իրենց ձեռքերը: Սակայն ճնճղկու օճառը ամեն տեղ չէր բուսնում:

Հաքիմխիժը կաթնագույն մի հեղուկ արտադրող բույս է: Դրա ցողունը կտրում էին և խեժը վերքերի համար գործածում: Հաքիմխիժի պես, որպես դեղ և գույն տվող բույսեր են լվխուտը (լվասպան խոտ) 10-15 սմ երկարությամբ, սպիտակ ծաղկաթերթիկների պսակով դեղին գույնի մի ծաղիկ է: Ինչպես թարմ հնձված, այնպես էլ չորացրած, ալյուրի նման աղացած վիճակում, երբ մի թարմ ճյուղ կամ մի քիչ փոշի անկողնի կամ շորերի մեջ էր դրվում, լվերն սպանվում էին: Լվխոտը մեծ քանակությամբ հավաքում, թարմ կամ չորացած վաճառում էին մոտակա քաղաքներում:

Տորոնը մի բույս է, որի արմատներն ու ցողունը հիանալի կարմիր գույն են տալիս: Թուրքը (եզան լեզու) լեզվաձև տերևներ ունի. օձ կերած կրիաները թունավորվելիս թուրքն ուտում և բուժվում են: Թուրքն օգտագործվում էր վերքեր բուժելու համար:

Սասունի բուսական հարստության մեջ ամենազարմանալին և հետաքրքիրը **Կազբան** է: Կազբայի առատության համար է, որ Սասունը մանանայի երկիր է համարվել: Կազբա-մանանան երկու տեսակ է լինում. մեկը մոխրագույն է՝ եղյամի նման, որի հատիկը կամ ծողիկը 0,50-1,50 մմ երկարության և 1 մմ տրամագծով մեծություն ունի: Այն եղյամի պես նստում է կազ կոչված բույսերի և նրա շրջակայքի վրա: Իսկ մյուսը մեղրա-

գույն, մածուցիկ, թանձր հեղուկի պես նստում է լողփի և այլ ծառերի տերևների վրա ինչպես ցողի կաթիլները և փռվում տերևների վերին մակերեսի վրա: Կազբան իջնում է ամառ ժամանակ, ամենատաք օրերին: Դրա իջած օրերին եղանակը որքան էլ պարզ և անամպ լինի, արևոտ օրը թեթևակի մշուշապատվում է, օդը բարակ մառախուղով լցվում: Կազի թփերի վրա իջած կազբան կարծր է և հեշտությամբ հավաքվում է: Այն հավաքելու համար նախ մեծ սավաններ էին փռում կազերի մոտի բաց տարածությունների վրա, ապա թեփսին (մեծ, փայտյա ափսե) կամ դաֆը (մաղ՝ առանց անցքերի) զգուշությամբ սահեցնում էին կազի լայն փռված ու գետնից բարձր ճյուղ ու թփերի տակ և երկծայր կամ եռածայր փոքր մի գավազանիկով կազը կամաց թափահարում, որով կազբայի հատիկ-ձողիկները սահում, ավազի պես թափվում էին թեփսիի վրա կամ մաղի մեջ: Կամաց թափահարելու նպատակն այն էր, որ կազի փշերը կամ թփերը չթափվեին կազբայի հետ: Թեփսին կամ դաֆը մեկ-երկու կազի տակ մտցնելով և կազը թափահարելով 300-400 և ավելի գրամ շաքարավազի նման կազբան հավաքում և դատարկում էին փռված սավանների վրա: Այդ սավանների վրա 6-7 կգ կազբա հավաքելով, դրա հատիկներն սկսում էին իրար միանալ և մի զանգված կազմել: Այդ միջոցին սավանի եզերքներն իրար վրա հավաքում, սավանի վրայից ձեռքով տրորում էին, կազբային երկնաքարի կամ գնդի ձև տալիս, որպեսզի տեղափոխելն ավելի հարմար լինի: Ապա շարունակում էին նորից հավաքել նշված ձևով, նոր գունդ կամ զանգված կազմելով: Կազբայի հավաքումը երբեմն մի քանի օր էր տևում, երբեմն նույնիսկ մի շաբաթ և ավելի: Նայած, թե այդ տարին «կազբայի տարի՞ էր, թե՞ ոչ»:

Հատկանշական է, որ այդ օրերին ահագին քանակությամբ փոքրիկ մոծակների մեծության թռչող միջատներ, որոնք մարդկանցից խուսափում էին, հավաքվում էին կազբան ուտելու:

Կազբայի մյուս տեսակը, որ լողփի ծառերի լայն տերևների վրա էր նստում, հավաքում էին այդ տերևները և ջրով լի ամանների մեջ թափահարելով կազբան լուծում էին ջրի մեջ: Ապա ջուրը տաքացնում էին, գոլորշիացնում և թանձր կազբա ստանում:

«Կազբայի տարիներին» կազբան այնքան առատ էր լինում, որ բնակչության կարիքներից բացի, վաճառվում էր մոտակա քաղաքներում, հատկապես Մուշում: Վաճառքի էր հանվում մանավանդ շաքարավազի ձևով եղած կազբան, որ գունդ-գունդ կամ երկանաքարերի ձևով, շալակով կամ գրաստներով տանում էին Մուշ: «Կազբայի տարիներին» հետաքրքիր տեսարան էր ընդունում Մուշի շուկան. սրա խանութները լցվում էին կազբայի գնդերով (օխան, որ 1200 գրամ է, վաճառվում էր 8-10 ղուրուշով): Այն հասնում էր մինչև Էրզրում և այլ վայրեր:

Շաքարավազի, ավելի ճիշտը՝ շաքարաթել կազբայի գունդը երբ սառչում էր, գլուխ շաքարի պես, մանրում էին մուրճով կամ փոքրիկ կացնով, իսկ երբ տաքանում էր՝ թանձր խմորի պես էր դառնում: Այդ կազբան մեղրից և շաքարից էլ քաղցր էր, որից մի մարդ 100-200 գրամ հազիվ էր կարողանում ուտել: Կազբան պինդ վիճակում պահելը նպատակահարմար չէր. տաքից հալչում էր, դրա համար մանրում լցնում էին ամանների մեջ և եռացնում, եփում, որից օդի ջերմության տատանումներին քիչ էր ենթարկվում: Այն թանձր մեղրի պես թուխ գույն էր ստանում և պահվում կճուճների մեջ: Հեղուկ կազբան նույնպես եփում էին, ջրային մասերը գոլորշիացնում, մնացած մասը հողե ամաններում պահում: Մուշի Ս. Կարապետ, Ս. Հովհաննու և Առաքելոց վանքերում ուխտի եկող մարդիկ, նույնիսկ Կովկասից եկողները, մեծ հետաքրքրությամբ կազբա էին փնտրում: Մուշի առևտրականներն այդ օրերն օգտագործում էին և կազբա վաճառում՝ «Սասունի մանանա» անվան տակ:

Կազբայի կամ «Սասունի մանանայի» առաջացման պատճառները դժվար է լիովին բացատրել: Կա մի կարծիք, ըստ որի կազբան նույն այդ կազի արտադրությունն է, որի վրա նա եղյամի ձևով կամ իբրև շաքարավազ, նստում է: Սակայն այդ կարծիքը ժխտվում է, որովհետև նա՝ կազբան, կազերի բացատներում, ժեռ քարերի վրա էլ աշնան եղյամի պես նստում է:

Անբաժան բազմաթիվ միջատները ենթադրել են տալիս, թե կազբան նրանց (միջատների) պատրաստածն է: Սակայն դա նույնպես հավանական չէ, որովհետև այդ միջատները ոչ թե կազբա պատրաստողներ են, այլ սպառողներ: Մանավանդ որ, իրենք աշխատանք չեն կատարում, բջիջ կամ բույն չեն շինում, ձագ չեն հանում, «հաց» (մեղրահաց) չեն պատրաստում:

Ամենից հավանականը «կազբայի իջնելն է», որից նա ստացել է մանանա հատուկ անունը: Նրա «իջնելն» ապացուցվում է նրանով, որ ամառվա տաք օրերին, երբ պարզ երկինքը թեթև մառախուղով է լցվում և «կազբան իջնում» է, այդ ժամանակ «կազբայի իջած» վայրում, լեռան բաց լանջերի և ժայռերի վրա էլ, ուր այդ կազ կոչված բույսը չկա:

Ամենահավանական կարծիքն այն է, որ Սասունի հարավային մասից՝ Միջագետքից, արևադարձային և շաքարով հարուստ բուսականության մեջ ամառ ժամանակ գոլորշիացում կատարվելիս ավելորդ շաքարահյութը հեռանում է և մասնիկների ձևով, գոլորշիների հետ բարձրանում, քշվում դեպի Միջագետքից հյուսիս, Տավրոսյան լեռնապարիսպները, հասնում Անդոկ, Կեփին, Ծովասար և Մարաթուկ:

Այդ կարծիքին համամիտ էր Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, լուսաբան, հանգուցյալ Բեդելյանը:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անասնապահությունը Սասնա տեղական տնտեսության մեջ երկրորդ տեղն էր գրավում: Ինչպես դաշտամշակությունը, այնպես էլ անասնապահությունը, ծանր աշխատանք էր պահանջում: Ձմեռային արոտներ չկային: Այդպիսիք գտնվում էին Սասունի հարավային մասում՝ Սլիվանի ու Բշերիկի դաշտերի սահմաններում, որոնք շատ հեռու լինելու պատճառով տնտեսական տեսակետից ձեռնտու չէին համարվում:

Անասնապահությամբ ավելի շատ զբաղվում էին Անդոկի, Ծովասարի, Կեփինի և Սև Սարի լանջերում ապրողները, շնորհիվ ալպյան արոտավայրերի և անտառների: Անտառների տերևների հասունության ժամանակ, նախքան տերևաթափը, ժողովուրդը կտրում էր թարմ տերևները և կուտակում որպես անասնակեր:

Այդպիսի տեղերում տնտեսություններ կային, որոնք 500-1000 ոչխար էին պահում: Խոշոր եղջերավոր անասուններ համեմատաբար ավելի քիչ էին պահում: Գոմշեղեն Սասունում չէին պահում, որովհետև վերջիններս լեռնային վայրերում նպաստավոր պայմաններ չունեին: Գոմեշը մասամբ բուծվում էր Խութի, Խարզանի և Խաբլջոզի կողմերում, ուր համեմատաբար հարթ վայրեր կային: Ձի քիչ էին պահում: Ջորին, որ լեռնային երկրի ամենանպատակահարմար փոխադրական ուժն էր, պահվում էր մեծ քանակությամբ:

Ազնվացեղ անասունները նույնպես չէին կարող հարմարվել, ուստի մանր և խոշոր անասունները տեղական ցեղերին էին պատկանում: Արոտավայրերը գյուղերից դուրս էին, որովհետև գյուղի շրջակա ամենափոքրիկ հողակտորն էլ՝ մշակվում էր: Դրա համար, երբ գուլան (մայիս) ամիսն էր գալիս և եռուն ցանքսի շրջանն սկսվում, ընտանիքի մի մասը, որ անասնապահությամբ էր զբաղվում, թողնում էր գյուղը և սար բարձրանում, դա կոչվում էր «զոզան գնալ»: Զոզան գնում էր տնից մի կին, որ կոչվում էր խղպան (խուղ - հյուղակը պահող), իր ամուսինը, որ հովիվն էր, երեխաները, որոնք ուլարած - գառնարած կամ հորթարած էին դառնում: Դաշտավարությամբ զբաղվող ընտանիքի մյուս մասը, լծու եզների հետ, մնում էր գյուղում՝ երկրագործական աշխատանքները կատարելու համար: Երբ ցանքսը վերջանում էր, ցելի աշխատանք չկար, քա-


շող ուժն էլ ուղարկում էին զոգան, մինչև հունձն ու կալը սկսում էին: Քաշող ուժերը՝ եզները, մշտապես սարն էին մնում, երեկոները տուն կամ խուղ չէին գալիս, գիշերներն էլ առանց հոտաղի արածում, շաբաթական մի անգամ խուղ գալիս, աղ լիզում: Երբեմն էլ աղը տանում էին սար՝ եզների արոտավայրերը: Հունիս-հուլիս ամիսներին լծկանները սարերում հանգստանում, գիրանում էին: Զոգանում մանր եղջերավոր կթու անասուններին ճաշին և երեկոյան բերի (կթելու) էին բերում: Երեկոյան կթից հետո, շավի (գիշերն արածելու) էին հանում և ուշ գիշերը միայն գոռոի (փարախ) բերում:

Գյուղից զոգան գնալը (սար բարձրանալը) բոլոր գյուղացիների կողմից գրեթե միաժամանակ էր լինում: Հովիվներն ու նախորդները անասունները քշում էին դեպի այն սարալանջերը, որ զոգանի արոտավայրերն էին (առւար), իսկ տղամարդիկ վաղ առավոտից գնում էին այդ «առւար»-ներում խուղեր շինելու, մինչև խղպանների գալը: Խուղը շինում էին ծառերի մեծ ճյուղերից, որոնց բնի կողմը կես մետրի չափ խրում էին հողի մեջ: Ապա խուղի կողքերն ու վրան ծածկում էին ավելի մանր և տերևախիտ ճյուղերով: Առջևում ձևավորում էին խուղի դուռը: Այս գմբեթածև ունենում էր 2-3 մետր տրամագծով շրջանաձև հատակ: Ըստ տնտեսության, խուղը լինում էր մեծ կամ փոքր: Տերևախիտ ճյուղերով ծածկված կտուրն այնպես էին սարքում, որ անձրևները հոսեին դեպի խուղի եզրային կողմերը: Բայց դա լիովին չէր պաշտպանում, այնտեղ անձրևաջուրը թափանցում էր և ներսը խոնավացնում: Խուղի ներսում, հատակի շուրջ բոլորը շարում էին **մակրդմանները** (կաթ եռացնելու լայնաբերան հողե ամաններ), **կճուճները**, **էղտանները** (յուղի աման) և **պուտուկները**: Այդ ամանեղենների փոխադրումը, շարելը և օգտագործելը կանացի աշխատանք էր համարվում, որ բացառաբար խղպաններն էին կատարում: Այդ կանայք հողե մակրդմանները զույգ-զույգ իրար վրա դնելով, մեզարով (բարակ փալաս, ջեջիմ) կապում էին և շալակով փոխադրում զոգանը: Չքավորներն ու միջակ տնտեսությունները պղնձյա ամաններով կաթ չէին եռացնում: Այն օգտագործում էին միայն հարուստ տնտեսությունները, թեև զուգահեռ գործածում էին նաև կավե ամանները: Ամբողջ Սասունում սովորություն կար զոգան գնալիս անասնապահների համար նոր խուղ շինելիս, **ջաջառուն** (յուղով և ալյուրով եփված հալվա) եփել: Զոգանի խուղերի դռնից 4-5 մետր հեռու պատրաստում էին օջախ, որ բաղկացած էր երեք հարմար քարերից: Հովիվները ոչխարն ու տավարը բերում էին **բերի**: Բերը կատարվում էր խղդռանը, որ սովորաբար մի արտ էր լինում և **ուժվում** (պարարտացվում) էր անասնաղբով: Այդ բերը կթելու տեղն էր և միաժամանակ անասունների գիշերային **մախալը** (փարախ): Մինչև զոգան հասնելը, նախ գյուղին մոտիկ արտերի վրա էին «դնում» (մի քանի օր հաստատվում անասունների հետ միասին), խուղ շինում, արտն **ուժում**, ապա հաջորդաբար բարձրանում ավելի հեռու: Վերջին զոգանավայրերն այլևս արտերի վրա չէին, այլ ամենաբարձր սարալանջերում: Զոգանից սկսում էին հետզհետե իջնել: Իջնելիս նախ **սաթառի** մոտ էին «դնում» մնում: Սաթառն այն անտառն էր, որի ճյուղերը տիվը (տերևը), որպես անասնակեր կտրում, խուրձ կապում, դիզում էին: Սաթառի մոտ խուղ շինելն ու մի քանի օր մնալը նրա համար էր, որ տերև կտրող աշխատավորությունը, **զբարայի** եկողներին առատ սնունդ մատակարարեր: Զոգանից իջնելը հաջորդաբար էր կատարվում, հետզհետե տանը մոտենալով և երբ կալերը վերջանում էին, բերքը հավաքվում և ցրտերն սկսում, անասնապահությամբ զբաղվողներն իրենց բոլոր ձմռան պաշարով տուն էին վերադառնում: Ամեն անգամ զոգանի տեղը փոխելիս ձմռան համար հավաքած **թացանը** (յուղ, թանհատ, չորթան և այլն) տուն էին ուղարկում և համապատասխան տեղերում հողի տակ պահում:

Ոչխարները տարին երկու անգամ **հեբրինկով** խուզում էին: Միայն ծծերի քովերը թողնում էին, որ չար աչքը դրանց չգտներ:


Հեբրինկը մի մեծ մկրատ էր, որի շեղբերը մոտ 35 սմ երկարություն ունեին: Ստացված բուրդն ու մազը չէր վաճառվում, այլ տեղական միջոցներով մշակվում և օգտագործվում էր: Բրդից շալվար, գուլպա և կառըկ (կարճ վերարկու) էին պատրաստում, իսկ մազից՝ **մանդիկ**, **թեռ**, **փալաս**, **մեզար** և **պարաններ**:


Ինչպես զոգանի առաջին օրը ջաջառուն էին եփում անասնապահությամբ զբաղվողների համար, այնպես էլ աշնան նախրաթողին հարիսա էին եփում: Դա հովվի ու նախրորդի «մանցեք բարին» (մնացեք բարով) էր:





Վերևում՝ բեր, կիթ, Աշտարակի Լեռնարոտ գյուղում
Ներքևում՝ Աշտարակի Սասունիկ գյուղի, բնիկ սասունցի
կանայք լսում են փողփուչ Մկրոյի հովվական նվագը (1949թ.):
Մկրոն մանկությունից Սասունի Գելիեգուզան գյուղում, ինչպես և
Սասունիկում անվանի հովիվ էր. նա նվագով ոչխարի հոտը
կանչում էր բերի և ջրի





Խութի Դաշտադեմ և Թալինի Իրինդ գյուղերի անվանի հովիվ
Ստեփանը, աջում՝ Սասունի Իշխանաձոր և Աշտարակի Ավան
գյուղերի հայտնի հովիվ Վարդան Թորոսյանը, ներքևում՝ եզ
պայտելը Աշտարակի Սասունիկ գյուղում (պայտառ՝ Ռ. Մանուկյան)
(1949թ.)

Սասունում աչքի ընկնող հովիվներ կային՝ Վարդանն ու Ստեփանը, որոնք հմուտ մասնագետներ էին դարձել: Դրանցից էին Գալոյի Պետրոսը, որի հերը զրույցի առարկա էր դարձել: **Հերը** (ոչխարին կանչելը) նա կատարում էր սրնգով: Երբ ոչխարի հոտը ցրվում էր սարալանջերի վրա և հեռանում, Պետրոսը հերն էր փչում. սրնգի ձայնին ոչխարը հավաքվում էր բերի-կիթի. ժայռերին սիրահար այծերն անգամ մոտենում, սրինգ էին լսում: Հայտնի փող փչող էմշոյի Մկրոն «ոչխարն էր վըր ջրին տանում» (սրինգը փչելով ոչխարներին աղբյուրի վրա բերում, ջրում): Նրանք երկուսն էլ **շավի տարած** (գիշերային արածացում) ոչխարներին ուշ գիշերին սրինգ ածելով անտառներից ու սարալանջերից հավաքում, փարախն էին բերում: Երբ Մկրոյին հարցնում էին հերի և «զոչխարը վըր ջրին» տանելու նվագի գաղտնիքը, նա ասում էր. «Լաո, ինչ գաղտնիք, զըմ ծեռվնին թացըցըլըմ, աղ քսը վրեն, հարմեկ ոչխըրը լիզցըցը, սովրիլըն գիկան» (տղաս, ինչ գաղտնիք, իմ ձեռքերս թրջել եմ, աղ քսել վրաները, ամեն մի ոչխարին լիզել եմ տվել, սովորել են, կգան): Մկրոյի պահած ոչխարներն, ուրեմն, սովորել էին նվագի ձայնը լսելիս աղ լիզել, ուստի և սրնգաձայնը դարձել էր ձեռքբերովի բնազդ:

Հովիվները եթե վարձովի էին, իբրև սեզոնի աշխատավարձ ստանում էին 150-200 դուրուշ դրամ, երեք **փառու** (շալվար, շապիկ, կառըկ, աբա), **խարուկ** (կանեփի և մազի թելից հյուսած ոտնամաճ), չարուխ՝ որքան որ մաշեին, և սնունդ՝ օրական երեք անգամ: Հովիվն ու նախորդը, տնեցի թե վարձկան, համարվում էին **դառւլաք** (հարստություն) պահող: Հովվությունը 15-16 տարեկանից ցածր երեխաներին չէին վստահում, այլ ավելի մեծ և համարձակ մարդկանց:

Բացի լեռնային ալպյան արոտավայրերից, մյուս խոտհարքներն ու սաթառները մասնավոր սեփականություն էին համարվում և բաժանվում գյուղական տնտեսությունների: Ընտանիքներն իրարից բաժանվելիս և նոր ծուխ կազմելիս բաժանում էին նաև այդ սեփականությունները, ինչպես վարելահողերը: Բաժինը տրվում էր իբրև «աղբոր բաժին»: Ամուրի եղբայրն ստանում էր իր ամուսնացած և բազմանդամ ընտանիք ունեցող եղբորը հավասար: Հողերի, խոտհարքների և սաթառների սահմանները **թխում** էին կոչվում, որոնք արտահայտվում էին զանազան նշաններով: Այդպիսի բաժանման էր ենթարկվում անշարժ գույքը (մյուլքը), իսկ անասունները և մյուս շարժական գույքն ու ստացվածքը բաժանվում էր ըստ շնչերի:

Ձմեռնամուտին կամ գարնանային նոր սկսվող արածի ժամանակ, թույլ անասուններին **էվալկիր** (լրացուցիչ կեր) էին տալիս առանձին տեղում: Գարնանը, երբ անասնակերը վերջանում էր և անասուններն արոտ չէին կարող գնալ ձյան պատճառով, **գունդ** (բարդի ծառերի բարակ ճյուղեր) էին կտրում մեծ քանակությամբ և տալիս անասուններին: Ձմեռ ժամանակ մանր եղջերավոր անասուններին տերև էին տալիս: Երբ ծառի այդ ճյուղերի տերևներն ուտում էին և ցախն էր մնում, նոր դարման, կավարսի ու կորեկի փուք (եղնոտ) էին տալիս: Մանր եղջերավոր անասուններին թեկուզ փոքորիկ լիներ կամ ձյուն տեղար, կերակրում էին **կալտուններում** (կալտունը չարդախի էր նման): Բացօթյա կերակրված ոչխարներին օրը կամ նույնիսկ երկու օրը մի անգամ էին ջրում, որովհետև ձյուն էին ուտում:

Ծնի շրջանում ծնած ոչխարներին միայն մի օր ներսն էին կերակրում: Նորածին գառներին և ուլերին հատկացված բաժանմունքը **քոզ** էր կոչվում: Երբ ուլ ու գառները 6-7 օրական էին դառնում, բացի կաթից, նրանց տերև և խոտ էին տալիս: Տերևի ճյուղի ծայրը սրում էին և քոզի հատակին խրում. քոզի ներսում ստացվում էր մի փոքրիկ «անտառ», որի «ծառերի» շուրջը պտտվում էին ուլերն ու գառները և տերևներն ուտում: Երբ գառներն ու ուլերը մեծանում էին, նրանց համար խոտկապով խոտ և տերև էին կախում: Խոտկապը փայտյա մի սարվածք էր՝ երկու իրար վրա ծալվող և բազմաթիվ անցքեր ունեցող քանոնների ձևով: Դրանց մեջ դնում էին խոտը կամ նույնիսկ տերևը և մի այլ շեղբաձև փայտիկով ամրացնում, որ խոտն ու տերևը չթափվեին: Շեղբիկի շարժականության շնորհիվ շատ կամ քիչ քանակությամբ խոտ ու տերև վերցնելու - կապելու հնարավորություն էր տրվում, որից հետո խոտկապն իր մեջ ընդգրկված խոտ կամ տերևով կախում էին քոզի առաստաղից մինչև գառ-ուլերի դնչին հասանելի բարձրության վրա: Գառ-ուլերը «կֆըրտըն հինկ ու կուտըն» (գառներն ու ուլերը վրա են հասնում, ուտում):

Անասուններին չարքից պահելու համար գիպ էին բռնում (պահում): **Ձիպ պահել** նշանակում էր փետրվարի վերջին երեք օրում և մարտ ամսի առաջին չորս օրում տնից ոչ մի բան դուրս չհանել՝ ուրիշին չտալ: Եթե այդ յոթն օրում մագ, բուրդ, կամ որևէ գործիք ուրիշին տրվեր կամ դուրս հանվեր, կարծում էին, թե անասունները ամառը կորդնոտեին («մալը կորդնը»):

Անասունները գողերից և գազաններից պահելու համար գելխիդղ շներ (գայլ խեղդող) էին պահում: Կային այնպիսի շներ, որոնք թշնամու ձեռքից թուրս էին խլում և շատ թանկ արժեին: Այդպիսի շները ամբողջ գիշերները ոչխարի հոտի չորս բոլորն էին մանգալիս և մարդ կամ գազան թույլ չէին տալիս մոտենալ, բացի **աղամամերկ** (մերկացած) մարդկանցից, որոնք վրա շունը չի հարձակվում, չի հաչում:

Անասունների պաշտպանության միջոց էր **գելկապը**: Դա մի աղոթք էր, որ գայլի՝ հոտին մոտեցած ժամանակ, եթե հովիվն արտասաներ, իբրև թե գայլի բերանը կկապվեր: Հավատում էին, թե գելկապի աղոթքը գիտեցող տղամարդը, եթե սովորեցներ մի կնոջ, երկուսն էլ գելկապող կդառնային, իսկ եթե տղամարդը՝ տղամարդուն կամ կինը կնոջն ասեր, ապա երկուսն էլ այլևս չէին կարող գելկապություն անել:

Անասունների զանազան հիվանդությունների դեմ կախարդական բուժման միջոցներ էին կիրառում: Նկատված հիվանդություններն էին՝ **ժան, խըժխըժկ, տաբակ, բալա, դեղվուկ, հաբ, քուս** և այլն:

Ժանը «բուժվում էր» «հաբի թաս» կոչված կախարդական թասի մեջ ջուր լցնելով և շաղ տալով հիվանդ ոչխարների վրա: Նույն միջոցին էին դիմում հաբ հիվանդության դեպքում, որի անունով էլ այդ թասն էր կոչվում: Բալա կոչված հիվանդությունը բուժում էին շիկացած երկաթաշշերով, դրա բռնած ամբողջ տարածությունն այրելով ու մարմինը փակելով, որ «ցավը դուրս գար»: Դեղվուկ հիվանդությունը «բուժում էին» դեղթափով: Դեղթափը գնդաձև «երկնային» քար էր, որի վրա զանազան գույնի գծեր կային: Դեղթափն ինքն էլ զանազան գույներ ուներ: Այն դնում էին ջրով լի մի ամանի մեջ, մի քիչ լվանում և այդ ջուրը խմեցնում դեղվուկ (թունավորված) հիվանդություն ունեցող կենդանուն: Այդ ջուրը կոչվում էր **դեղթփջուր** (դեղթափի ջուր): Քոս հիվանդությունը բուժելու համար յուղն ու վառոդը իրար էին խառնում և քսում կենդանուն:

Անասունների բուժման միջոց էին ընդունում և «բողկի խաչը», որ միայն Ս. Աղբերիկի սեփականությունն էր: Պատմում են, թե հայերն այդ վանքի խաչը լվանում էին ջրի մեջ և այդ ջուրն անասուններին խմեցնելով կամ նրանց վրա թափելով բուժում էին: Ըստ ավանդության, քոչվոր քրդերի անասունների մեջ երբ մի անգամ հիվանդություն է ընկնում և կոտորում անասուններին, մի քուրդ գնում է Ս. Աղբերիկ և վանահորը խնդրում, որ խաչը տա, տանի իրենց անասուններին էլ փրկի: Վանահայրը չի վստահում և մերժում է, բայց քուրդը վստահություն է ներշնչում և գումար տալիս, ստանում խաչը: Վանահայրը խաչը գաղտնի հանում է շղարշից, նրա փոխարեն բողկի ճյուղերով խաչ շինում, շղարշում, լավ փաթաթում և տալիս քրդին, ասելով. «Շղարշը չբանաս, աշխարանցում կեղնի, շղարշով միասին խաչը դիր ջրի մեջ և այդ ջուրը տուր անասուններին»: Քուրդն այդպես էլ անում է, անասուններին «բուժում» և գոհունակությամբ գալիս է Ս. Աղբերիկ՝ խաչը վանահորը հանձնելու համար: Երբ քուրդը գնում է, վանահայրը բաց է անում շղարշը և տեսնում, որ բողկի ճյուղերը դարձել են մի հրաշագործ խաչ: Այդ օրվանից հրաշագործ խաչը կոչվում է **բողկի խաչ**:

Անասուններին «բուժում» էին և հմայիլով՝ եռանկյունի ծալված մի աղոթաթղթով, փաթաթած մոմլաթի մեջ և կախում էին անասունների, հատկապես եզների վզից: **Բասըմբուլը** (կարմիր-կանաչ գույնի նարոտ) ծաղկազարդին, չլուսացած, ոլորված կարմիր-կանաչ գույնի թել էր, նույն օրվա մոմի մի կտորով ամրացված կապում էին լծքաշ եզների կամ կթու կովերի եղջյուրներից և այլևս չարքերը, հիվանդությունները, չար աչքը նրանց չէին կպչի: Նույն նպատակով գործածում էին դաղդաղան՝ եռանկյունի ձևով շինված օրհնված տախտակի մի կտոր, որ կախում էին եզների վզից կամ եղջյուրներից, որ կանգներ ճակատին:

Անասուններին հիվանդություններից և չար աչքից ազատող սրբեր և սարեր էլ կային: Անասուններին առողջություն հայցելու համար դիմում էին սրբերին (ժամ, լուստուն): Կիրակմուտին ձեթ կամ յուղ էին տանում լուստան սրբի ճրագի մեջ լցնում և վառում, սովորական էր նաև մոմի օգտագործումը:

Հիվանդ անասունների բուժման լեռներն իրենց վրա ունեին լուստուններ, ուր նույնպես ամեն կիրակմուտի խղպան-

ները (կաթը մշակող կանայք) լույսի բաժին ձեթ և յուղ էին տանում: Այդպիսի լեռներ էին Կեպինը և Մեծ Գըրը (Մեծ գագաթ): Դրանք գտնվում էին Տալվորիկից Գելիեգուզան ձգվող մեծ ճանապարհի՝ Դըրբի վրա: Գելիե-Սան (Շների ձոր) հովտի աջ կողմը Կեփինն է, իսկ ձախ ափին՝ Մեծ Գըրը, ըստ որի Կեփինն ընկնում է արևմտյան կողմը, իսկ Մեծ Գըրը՝ արևելյան: Երկու սրբասարերն իրար **համբար** (դեմ դիմաց) են: Գարնանային եղանակին **աղեղնուկի** (ծիածան) ձևով կամար կապած մի ծուխ Կեփինի գագաթից, որ ավելի բարձր է, իջնում էր Մեծ Գըրի գագաթին և միացնում իրար: Հովիվներն այն տեսնելուն պես իրենց բոլոր անասուններին, տավար թե ոչխար, տանում և անցկացնում էին այդ ծխի աղեղնուկի տակից, որով հավատում էին, թե չար աչքը կամ հիվանդությունը նրանց այլևս չէր մոտենա:

Ամբողջ Սասունի ազգաբնակչությունն ամեն տարի հուլիսի 3-ին, արշալույսից առաջ, լուս-մութին, իրենց անասուններ-ի փարախի շուրջը, կամ որտեղ որ այդ րոպեին գտնվում էին անասունները, կրակ են վառում շրջանաձև, որ իր օղակման մեջ է առնում անասուններին: Անասուններն այդ ժամանակ տեղերում կանգնած էին մնում, մինչև կրակը հանգչեր և ծուխն անհետանար: Եթե քամի լիներ այդ րոպեին, անասուններին քամու հոսանքի ուղղության վրա էին կանգնեցնում այնպես, որ մուխն անպայման կպչեր նրանց, որը և «բուժում էր»: Ծխելու միջոցով կատարվող այս բուժմանը ենթարկվում էին ամեն տեսակ հիվանդ և առողջ անասուններ:

Հուլիսի 1-3-ը զոզանում շինված խուղերի մեջ, տկերի (ձծում) տակ կազ էին վառում, որի կրակով խարում էին յուղի և թացանի ամանները և այդ կրակից լցնում ամանների մեջ՝ ցնցում, որ ամեն կողմ կպչի, ապա փոշին թափում էին: Ամանները պահում էին վառվող կազի ծխի վրա: Հավատում էին, թե ուր որ մտնում է հուլիսի 1-3-ի կրակի լուսն ու մուխը, այնտեղ չար աչք և հիվանդություն չի լինի, այլ միայն հացի ու թացանի (կաթ, յուղ, սեր, մածուն) առատություն: Անասունների շուրջը կրակ վառողը միաժամանակ ասում էր «Օչխարն ու դավարը կաթով էղնըն, կաթը էղով էղնը, էզընին ժիր էղնըն»:

Մարդիկ մերկանում էին և իրենց խարում (այրում) այդ օրերի կրակով:

Այդ բոլորը պահպանվում էին իբրև կրակապաշտության մնացուկներ, գուցե նաև անասուններին ողջակիզելու երբեմնի արարողություններ:

Կրակի այս պաշտամունքը Կովկաս եկած սասունցիների մեջ մինչև այժմ էլ ունի իր մնացուկը, որի արտահայտություններից են՝ ինչպես անասուններին ծուխ տալը, այնպես էլ մարդկանց խարվդիլը: Խարվդիլը՝ մերկ իրանը կրակի բոցին այրվելու աստիճան մոտեցնելով տաքացնելն է, որ կատարվում է ինչպես ձմեռվա սառնամանիքի, այնպես և ամառվա շոգերի ժամանակ: Խարվդիլը կատարվում է օջախի բարկ կրակի առաջ կամ բացօթյա խարույկին մերկ մարմինը դեմ տալով:

Անասունների բուժման մի միջոց էլ համարում էին ավագ հինգշաբթի օրը օրհնված աղը: Սա տալիս էին բոլոր անասուններին, նույն աղը այդ օրը խառնում էին խմորին և հաց թխում:

Ավագ հինգշաբթին գրում էին և **շմադնում** (մոմլաթի մեջ փաթաթում) գելկապ հմայիլը և կախում անասունների, մասնավորապես էմագդար (վաստակավոր) եզան և նոխազի վզից: Սովորություն կար նաև, որ ավագ չորեքշաբթի օրը խղպանները դարբիններին երկաթե բարակ ձողեր տային՝ դրանց չարգոշա (քառակուսի) ձև տալու: Իսկ ավագ հինգշաբթի առավոտյան, արևը չծագած, այդ ձողից փոքրիկ օղեր, գրչածայրի մեծությամբ խոփեր, կոթը ծակ բահիկներ, մուրճ, սանր, մատանի և այլ զանազան գործիքների նմուշներ էին շինել տալիս և կախում ձծում տկերի **լոլափների** (բռնակ) կապերից: Դրանք վանում էին չար աչքը և առատացնում կաթնամթերքը: Տիկը շարժելիս այդ երկաթյա փոքրիկ գործիքները զնգզնգում էին, որով «չարը փախչում էր»: Այդ նույն երկաթից խղպանները օձագլուխ ապարանջաններ և մատանիներ էին շինել տալիս, իրենց ու տանտիկինների բազուկներին և մատներին անցկացնում:

Վաճառած անասունի մազից կամ բրդից մի փունջ կտրում էին և գցում գոմի կամ փարախի հատակին, որպեսզի նրանց հետ բարաքեն (աճը, բարիքը) չգնար: Նոր գնած եզը տուն բերելիս, ախոռ մտցնելուց առաջ ճակատին մի ձու էին ջարդում, նոր ներս տանում, որպեսզի չարը նրա հետ գոմ չմտներ, եզն էլ **էմագդար** դառնար: Ձի ծախելիս սանձը պահում էին, որպեսզի նա տնից անպակաս լիներ:

Լեռնային գյուղերում անասունները պայտելու սովորություն չկար: Բայց դաշտային վայրերում, ինչպես նաև նոր բնակավայրերում, երբ որևէ տնտեսության անասունների թիվը քիչ էր, **դաղմելու** (այրելով նշան թողնելը) կարիք չէր զգացվում: Սակայն շատ անասուն ունեցողները դաղմում էին, որպեսզի չկորչեին: Դաղման (դաջը) խփում էին ականջների կամ երեսի վրա: Դաղման ոմանց մոտ պատրաստում էին կլոր կնիքի ձևով, կիսաշրջանաձև և խաչաձև (նշանն ականջին խփելիս տակին մի տախտակ կամ սալքար էին բռնում, ականջը նրա վրա փռում, ապա դաղմում):

Որձ կենդանիների ամորձատումը կատարվում էր հետևյալ կերպ: Եթե մանր եղջերավոր անասուն էր, կանգնեցրած վիճակումն էլ, ետևի երկու ոտքերի ազդրերին մոտեցնում էին բահի կամ կացնի կլոր կոթ կամ ձող: Սրա մի ծայրը հենվում էր գետնի մի փոսիկին, իսկ մյուս ծայրից բռնում էր մի մարդ: Կռտողը անասունի ամորձիգները (բլոր) անցկացնում էր ձողի վրայից, արմատները ձողի վրա սղմում և կանդրիֆով թեթև հարվածում մինչև ամորձիգների ջղերը տափականում էին: Այդպիսի 30-40 հարվածից հետո, կենդանու ամորձիգներն իրենց ծածկող մաշկից վեր էին հրում և ապա թելով պինդ կապում, որ ցած չիջնեն: Մի երկու-երեք օր հետո, թելերն արձակում էին և անասունն արդեն կռտված էր: Եթե կռտվողը խոշոր եղջերավոր անասուն էր, նրա ոտքերը կապում էին, գցում գետին ու նույն ձևով կռտում: Լծացու անասուններին երկու տարեկան հասակումն էին կռտում, որ ուժասպառ չլինեին:

Անասունները մորթելու երկու ձև կար, մեկը կոչվում էր **հայազին** (հայկական ձևով մորթել), մյուսը՝ **քրդազին** (քրդական ձևով մորթել):

Հայազին էր կոչվում, երբ դանակն անցնում էր վզի վերջին ողնի և գլխոսկրի միջով, իսկ քրդազին՝ երբ վզի 1-2 ողները թողնում էին գլխի հետ: Հայազինը կոչվում էր նաև **հայանակ**, իսկ քրդազինը՝ **քրդանակ**:

Կանայք՝ անասուն, նույնիսկ հավ չէին մորթում, թեկուզ նրանք «մուրդըրեն» (սատկեն): Կնոջ մորթած անասունի միսը շատ վայրերում չէին ուտում: Որպեսզի կենդանին չսատկեր և միսը չփչանար, կանայք դանակը տալիս էին մի տղայի ձեռքը և իրենք էլ այդ ձեռքն ու դանակը բռնած մորթում էին

կենդանուն: Մորթելիս տվյալ դեպքում դեր խաղացողը կնոջ ուժն էր: Տղայի ձեռքը լոկ ձևականություն էր:

Անասունը մորթելուց հետո այն զանազան մասերի էին բաժանում, որոնք ունեին տարբեր անուններ: Այսպես օրինակ՝ գլուխ, շլինք (վիզ), կոթ (դոշ), խոռըկ (գավակը՝ պոչի հետ միասին), ջուռ (ազդր), կուրծք (վզի և դոշի միջամաս) փեջ կամ պիլ (առջևի վերջավորություն), փարսու (կողերի վանդակը), բատամ (որովայնի մաշկ), զոխմա կոչվում էր ամեն մի մեծ կտոր միսը: Ներքին օրգաններն անվանում էին քալաջիկ (երիկամունք), սրտիկ (սիրտ), ֆատըկ (փայծաղ), հովք (բարակ աղիք), սրջուղ (հաստ աղիք), հազար-թերթիկ, սիվ փըշ (լյարդ), սպիտակ փըշ (թոքեր):

Տնային կենդանիների՝ եզան, ձիու, կովի և վայրի քուվու (այծ) եղջյուրներն ու գանգերը որպես պահապաններ կախվում էին տների ճակատին, դռան վերևը, կամ բարձր ցցերի վրա հագցնելով՝ տնկում արտերի գլուխներին: Դրանց վերագրում էին չարխափանի դեր:

Էմագդարը եզը տահանելիս (պառավել) չէին մորթում, այլ վաճառում էին, որպեսզի մորթվելը չտեսնեն:

Տոնակատարությունների ժամանակ պահպանված էր խաղի ձևով ներկայացնել ուղտի շարժումները, թեև Սասունն ուղտ չուներ:[1]

Խոշոր և մանր եղջերավոր կենդանիներին հատուկ անուններ էին տալիս և կանչում. դրանք իրենց անունները գիտեին և կանչվելիս գալիս էին կանչողի մոտ:

Լծկան եզների անուններն էին՝ Վարդո, Թուխո, Սևո, Լահդո, Ջարո, Խնձորո, Բաշո (ճակատն սպիտակ նշանով), Ջավռաշ (սևաչյա), Ջիվո, Ջիպո, Կաժո (շեկ), Բորո (թուխ), Շամո, Ռնդո և այլն: Կովերի հատուկ անուններից էին՝ Նիսե, Թամե, Ջարե, Բորե, Կաժե, Բաշի, Ջավռաշե, Ադրե, Քանե, Սաբե, Գուլե, Գուլանե[1] և այլն:

Մեկ տարեկան եղած խոշոր եղջերավոր անասունները հորթ էին կոչվում, երկու տարեկանները՝ մոզի, երեք տարեկանների որձը՝ կալիկ, էգը՝ էրինջ, չորս տարեկան որձը՝

[1] Նկարագրությունը տես «Խաղեր» բաժնի «Յարալի Շամո»:

[1] Անասունների անունները (օ-ո) վերջավորությամբ արական են, իսկ «է» վերջավորությամբ՝ իգական:

ծռհուղ (ակոսը ծուռ տանող անփորձ եզ), էգը՝ **քավեջ**, հինգ տարեկան որձը՝ **հալալհուղ** (ակոսն ուղիղ տանող, փորձված եզ), իսկ էգը՝ **կով**: Երեք տարեկան էգը կոչվում էր **էգընկալ** (եզ ցուլ ընդունող, բեղմնավորվող):

Մանր եղջերավոր էգ այծերի անուններն էին **Նշանե, Քուվե, Խալաթե, Վլվլե, Վթե, Սիխե, Համըսե, Քռուզե** (սուր ականջավոր), **Թանգզե** (ականջը սև սպիտակ գույնի), **Քամբարե** (սև-սպիտակ գույնի), **Խբորե, Ուորշախե, Քռե** (ականջ), **Քռուզ, Քոլե** (անկոտոշ), **Սարգուլե** (կարմիր վարդ), **Քսքե** (երկարամազ), **Շաբախե, Թամուզե** (հուլիսի ծնունդ), **Խբորե, Գուլանե** (մայիսի ծնունդ), **Մաղձե, Հասպե, Ճինճղե** (ճնճղուկ), **Զալանգե, Գուհարե, Գուլբաշե** (ճակտին վարդ), **Զըկուրե, Հեշինե** (գորշ) և այլն:

Որձ այծեղենը վաճառվում էր, բացի բեղմնավորման համար պահած մի քանիսից, որոնք առաջին տարին **կիսք** էին կոչվում, երկու տարեկանը՝ **դուբրի**, երեք տարեկանը՝ **սեբրի**, չորս տարեկանը՝ **չաբրի** կամ **չարբրի** (քրդերեն՝ ղու, սե, չար՝ երկու, երեք, չորս): Չաբրիից (չորս տարեկան) բարձրը բեղմնավորման համար չէին թողնում, որպեսզի ծերացած լինելով ուլերի սերունդը չփչացնեին: Էգ այծեղենը 1-2 տարեկան հասակում **ալուչ** էր կոչվում, երկրորդ ծնին՝ **բժաշտրը**, երկուսից ավելի ծնին՝ **էծ** (այծ): Այծերին կանչում էին հե, հե, հեհե, ասելով, իսկ քշելը՝ ցըցը, ցըցը, ցըցը, ուլերին կանչելը՝ հեյը, հեյը, հեյը, քշելը՝ կտը, կտը, կտը:

Մաքիների հատուկ անուններն էին՝ **Նարե, Սորե, Գարդանե, Գուլե, Խամարե, Լայլե, Ռաունե** և այլն:

Ոչխարին կանչում էին՝ հըռը, հըռը, հըռը ասելով, քշում էին՝ թըբռ, թըբռ, թըբռ ասելով (շրթունքների թրթռուն շարժումով): Գառներին կանչում էին հըռռ, հըռռ, հըռռ ասելով, քշում էին հըռռ, հըռռ, հըռռ ասելով:

Ընտանի կենդանիներից բացի, Սասունի անտառապատ և ալպյան լեռներում բազմաթիվ վայրի կենդանիներ կային, որոնք որսվում էին: Ամենատարածվածը քուվին (վայրի այծ) էր, որն ուներ ավելի մեծ մարմին, քան սովորական ընտանի այծն ունի: Մազը կարճ է և մոխրագույն՝ սևին տվող զոլերով, ինչպես վագրի մորթին է: Քուվիներն իրենց ձագուկներով ապրում և շրջում էին հոտերով: Ամառներն անցկացնում էին Սասունի լեռների ամենաբարձր լեռնագագաթներում և խիտ անտառնե-

րում, իսկ ձմեռները՝ խոր քարայրներում: Անդոկ-Ծովասարն ու Կեփին-Մարաթուկը քուվիների փարախներ են համարվում հայկական և քրդական ֆոլկլորի մեջ. «Անդոկ միրե ճիա, Կեփին Մախալե պազքուվիա» (Անդոկը սարերի արքան, Կեփինը քուվիների փարախ): Քուվիներն արագավազ են: Որսորդները հրացաններից կրակած գնդակներով, իսկ անցյալում՝ նետերով խոցելով էին որսում: Հանդուգն որսորդները ձմռանը մտնում էին քարայրները և դանակահար անում քուվիներին: Դրա համար նախապես փակում էին քարայրի դուռը: Հետաքրքիր տեսարան էր ստեղծվում, երբ քուվիները քարայրից դուրս էին պրծնում: Որսորդները, լական հագած, փափուկ ձյան վրայով, քայլում էին ինչպես սովորական գետնի վրա և ողջ-ողջ բռնում փախչող ու ձյան մեջ խրվող քուվիներին և երբեմն ողջ-ողջ բերում տուն: Քուվիի միսը ողջ Սասունում հայտնի էր իր համեղության համար: Որևէ համեղ կերակուր գովելու համար ասում էին «Քուվումիս է»:

Քանիցս հիշատակել ենք, որ այծերի աշնանամերձ շրջանի բեղմնավորման ժամանակ որձ քուվիները շատ հաճախ մտնում էին ընտանի այծերի հոտերի մեջ և բեղմնավորում նրանց: Այդպիսի բեղմնավորումից գարնան ծնի ժամանակ եղած ուլերը փախչում էին հայրերի սարերը և, մինչև լրիվ ընտանի դառնալը, մեծ դժվարություններ էին պատճառում ուլարածին ու հովվին:

Վայրի կենդանիներից կան վիթ (Ծովասարում), գայլ, արջ, աղվես, կուզ, ձմուկ, ժուժիկ (ոզնի), վերի (վայրի) ոչխար-ջեյրան, կուռաբաշկ, շեր (վագրազգի), պլընկ (վագրազգի), առնկի (սկյուռ), ձունձնիկ (սպիտակամորթ առնետ): Վնասատուներն էին՝ ջոդոզը, խլուրդը և խոտընկը: Վայրի կենդանիներից որսում էին նաև վիթ, գայլ, արջ, աղվես, վերի ոչխար, ջեյրան, կուռաբաշկ (որ համեղ միս ունի):


Անասունների կերը օրական երկու անգամ էր կատարվում՝ կեսօրին և երեկոյան, երբ **գիոռ** (բացօթյա) էին բերում: Բերվորները (կթող կանայք) կիթը կատարում էին **բարոշի, ալբի, գադոշի** և **խըլլիի** մեջ: Այդ ամաններն ընդհանրապես փայտից էին պատրաստում, որպեսզի կոտրվելու վտանգը քիչ լիներ, թեև հողե գադոշներ էլ գործածում էին: Ավելի ունևոր մարդիկ բարոշներն ու գադոշները **սըֆրից** (պղինձ) էին շինել տալիս, ալբն ու խըլլը՝ անպայման փայտից: Այդ ամանների տարողությունը 10-12 լիտր էր լինում, որ մոտ մի դույլի չափ էր:

Բերվորը կամ խղպանը նստում էր, բարոշը կամ գադոշն առնում իր ծնկների մեջ, որպեսզի **ծուռ** էծերն ու խրտնող մաքիները շուռ չտային կաթի ամանները, և կթում՝ իրենց գլուխը դրած չար անասունի կոնքի վրա: Այդ դիրքով անասունները բերից չէին փախչում: Կային այնպիսի այծեր, որոնց շատ դժվար էր բռնել և բերի բերել, որի հետևանքով և երբեմն մնում էին առանց կթվելու: Ինչպես ասել ենք, դա բացատրվում էր նրանով, որ **քուվու ջընս** (վայրի այծի ցեղ) էին: Սասունի սարերում և անտառներում վայրի այծերը երամներով էին ման գալիս և ականատեսները պատմում էին, թե «**Քուվիները քաղի** ժամանակ գխառնվեն հադ օչխարին» (վայրի այծերը, բեղմնավորման ժամանակ խառնվում էին ոչխարին):

Այդպիսի փախչող այծերին բռնելու մի միջոց գտել էին հովիվները: Դա այն էր, որ մի այլ խելոք այծի բռնում էին և գնում դեպի փախչող այծը, այդ ժամանակ նա թեև խրտնում էր, բայց չէր փախչում: Դա կոչվում էր **խափ տալ** (խաբել), որովհետև փախչողը կարծում էր, թե հովիվն իրեն համար չէր գնում, այլ բռնածին էր տանում:


Սակավ կաթնատվությունը Սասունում բացատրում էին «Խոտըկ»-ով: Խոտըկն ստորերկրյա մի ֆանտաստիկ կենդանի էին համարում, որ իբրև միայն գիշեր ժամանակ մտնում էր կաթնատու կենդանիների փարախը, միզում իր պոչին և պոչը թափ տալով, մեզը ցրում անասունների վրա: Որ կենդանու վրա որ այդ մեզից մի կաթիլ ընկներ, նա կզրկվեր կաթնատվությունից:

Խոտըկի դեմ պայքարելու միակ միջոցը խուղն այդ վայրից ուրիշ տեղ տեղափոխելն էր:




Ա/ Խոդգաբ / խոտկապ, որով խոտը կապում և կախում էին գառնոցում: Խոդգաբն ուներ խոտը սեղմելու անցք - հարմարանքներ, բ/ Կաթի ցախ, որով մածնացու կաթը եռացնելուց հետո խառնում, փրփրացնում էին, այժմ էլ փրփրացնում են՝ կաթի սերը զատելու, երեսը հանելու նպատակով, գ/ մածնկուլ կամ գովըկ /ձագար/, դ/ Քամչիգ, է/ Լֆիգ /քամոց/, զ/ Դամզա /դաղմա/ սեփականության նշանների նմուշներ, պատրաստված երկաթից:





Խնոցի /Թալինի շրջանի Աշնակ գյուղ. հարողները սասունցիներ են: Այս խնոցին հատուկ էր Սասունի դաշտային շրջաններին՝ Հազզոյին, Խութին, Խարզանին, Մոտկանին և Խիանին:



Տիկը իր կառուցվածքով, 1. Տիկը, 2. Տկի արթերը լոլափներին կապված, 3. տկբերան, 4. լոլափները, 5. տկփետը, 6. խեչիրը, 7. Չվան, որից կախվում է տիկը, 8. Տկթիլ, որով կապուն են տկի բերանը, 9.. բախուրծ - երկու զուգահեռ ամուր թելեր, րից կախում են երկաթյա փոքրիկ իրեր՝ խոփ, բահ, կացին, մուրճ, րծ, գորտ և այլն, տիկը չարքերից ազատ պահելու համար, յուղն ու բանը շատ լինելու համար: 10. գաք՝ բարակ տախտակյա փոքր շրջանակ, եզերքները փոս՝ տկի մաշված, ծակված տեղերը ներսից փակելու, դրսից կապելով:

Կաթը կթելուց հետո լֆիկով քամում էին: Լֆիկը բրդից էին գործում: Կար նաև մետաղից քամչիկ:

Կաթը գաղտնի չէին կթում, սակայն ամեն մի բերվոր (կթող կին) բարոշով, ալբով, գադոշով և խըլլով կաթը բերի տեղից խուղ տանելիս, չար աչքից պահելու համար, ամանի վրա շոր էր գցում: Կթած կաթը մածնկուլով (ձագար) և «կաթի քըռչով» քամում էին մակրդմանի մեջ, ապա մակրդմանը դնում թվեքի (օջախ) վրա ու եռացնում: Կաթի քըռչը թաթնոցի նման էր, բրդից գործած, անցկացնում էին մածնկուլի նեղ, խողովակաձև մասին, ամրացնում կամ բռնում, որպեսզի կաթը քամելիս չընկներ: Եռացած կաթի մակրդմանը խուղի հատուկ մի

անկյունում, բարձմանուկից կամ այլ ծաղիկներից շինված բարձիկի վրա էին դնում, կաթի ցախով պտուտածև խառնում եռացած կաթը, որ լավ փրփուր կապեր, սեր բռներ: Կաթի ցախը 50-60 սմ երկարությամբ և մատի հաստությամբ մի ձող էր, նորգենի կոչված հոտավետ ծառի մի ճյուղ, որի մեծ ծայրը, մի բաժանման կետից, 7-8 ճյուղիկներ ունի: Դրանք ուռուցիկ կիսաշրջանածև դարձնելով մի կետում իրար միացնում էին, կազմելով ձվածև մի վանդակ, որի ճյուղիկների միջից անցնում էր մակրդմանի մեջ եղած և կաթի ցախով խառնվող կաթը և փրփրում՝ հաստ սեր տալու համար:

Առաջին կաթը խլնդոր (խեճ, դալ) էր կոչվում և պատկանում էր անասնապահին, որն անասունների ծնին էր հսկում: Եթե պաս օրեր էին (Մեծ պասին) այդ խլնդորն էլ պատրաստվող մածունի հետ միասին պահվում էր մինչև Զատիկը: Առաջին մածնից ստացվող յուղն էլ ճրագլուս էին անում, այսինքն, սարերի սրբերին՝ Անդոկին, Կեփինին, Ծովասարին և Մեծ Գրին էին նվիրում՝ վառում սրբերի ճրագի մեջ: Սրբի ճրագը լայն բերանով կտուցավոր կամ քթավոր մի բաժակ էր, որի մեջ դնում էին առաջին յուղը, և մի պատրույգ, որի ծայրից բոց տալու ժամանակ հիշում էին այն սրբի անունը, որի համար «ճրագ են դնում» (վառում, զոհում):

Ամբողջ Սասունում կաթից պանիր չէին պատրաստում, այլ միայն **գվա** էին շինում: Գվան պատրաստում էին կիսաեփ, ոչ շատ տաքացած կաթի մեջ մածունի հարվածք լցնելով: Դրանով կաթը կտրվում էր և թանձրույքը տոպրակների մեջ լցնելով քամում էին ծանր քարեր դնելով տոպրակի վրա: Այդ կտրվածքը մի քանի ժամ քամվելուց հետո հանում էին, ստացվում էր գվա, որն աղ չէր ընդունում: Մի քանի օրից ավելի չէր դիմանում, կանաչում, փչանում էր: Դրա համար գվան թարմ-թարմ էին ուտում: Գվա պատրաստում էին բացառիկ դեպքերում, ճամփա գնալիս կամ նվեր տանելիս:

Կաթնամշակության միակ ձևը կաթը եփել, մածուն մերել և մածունը հարելով յուղ-կարագ հանելն էր: Մածունը մերում էին մակրդմանի մեջ եռացրած, ապա **հովկուլ** (կաթի գաղջ կիսաեռ վիճակով) դարձած կաթի մեջ թանով նոսրացրած կես բաժակի չափ մածուն լցնելով և ծածկելով մակրդմանի բերանը: Մի քանի ժամ մնալուց հետո ստացվում էր պինդ մածուն, որի սերը 2-3 մմ հաստություն էր ունենում: Մածունը **հարնելուց** (հարել) առաջ, սերի թուփը ծածկոցը զգուշությամբ վերցնում էին **թաբախկիկների** (լայնեզր ափսե) վրա, փռված վիճակում պահում, որ սերը **չորանար** (ջրային մասը գնար): Սերը թարմ-թարմ էլ ուտում էին և գիտեին պահել ձմռան համար, առանց իր թարմությունը կորցնել տալու: Կային խղպաններ, որ ձմեռ ժամանակները սերը շատ թարմ էին պահում: Թվում էր, թե վերջինիս **աչքերը** (պղպջակները) երևում էին: Սերը թարմ պահելու համար մածնից մաքրում էին, թերթ-թերթ շարում **կրուրների** (հողե ամանների) մեջ, յուրաքանչյուր թերթի վրա, բարակ ու մաքուր աղ շաղ տալիս, կրուրի բերանը լավ փակում և գլխի վրա թաղում խոնավ և խոր հողի մեջ ու ծածկում 30-50 սմ հողի շերտով: Սերի կրուրները մեծ մասամբ բացօթյա տեղերում էին պահում: Դրա տեղն իմանում էին խղպանը և թաղող տղամարդը: Տներում կամ գոմերում թաղված սերը կորցնում էր իր բնական թարմությունը: Սերից զատված մածունը լցնում էին տկի մեջ, հարում և որոշ քանակությամբ ջուր էին ավելացնում: Հարելը տևում էր 1-2 ժամ, նայած մածունի քանակին, և երբ «թանը հասնում» էր, այսինքն՝ յուղն ու թանը լիովին իրարից բաժանվում էին, հարելը վերջանում էր: Ապա տկի միջի կարագն ու թանը միասին դատարկվում էին մեծ մակրդմանների կամ պղինձների մեջ և կարագը թանից հանում, լցնում զուլալ ջրի մեջ, թանը նրա միջից հեռացնում և կարագը տեղավորում առանձին ամանների մեջ: Թանի հասած լինելը լավ մասնագիտացած և դրա համար **խղպան** կոչված կանայք էին իմանում: Թանի հասնելն իմացվում էր երբեմն տկի կապած բերանը բաց անելով և ցածրացնելով այնքան, որ թանը և կարագի մասնիկները տկի բերանի մեջ երևային: Եթե դրանք դեռ չէին զտված, իրար չէին միացած, նշանակում է «թանը հասած» չէր, պետք էր հարել: Թանի շատ ուշ հասնելու դեպքում, տկի տակ, բարձմանուկի և այլ խոտերի խոիվներ (չոր մասեր) էին վառում, որի բոցի վրա հարում (շարժում) էին տիկը, որ տաքանում էր բոցին քսվելուց և թանը **հասնում էր**: Թանի հասունության նշան էր նաև նրա մեջ կտրվածք - նստվածք չլինելը:

Կարագի և թանի մի մասն առօրյա կարիքների համար գործածում էին, իսկ մյուսը պահում ձմռան համար: Թանը եփում էին և ջրային մասը հեռացնում, որով անվանվում էր էփասթան: Այն հողե ամաններում պահում և ձմեռ ժամանակ գործածում էին:

Սասունի կաթնամշակության հիմնական միջոցը տիկն էր իր պարագաներով և **խեչիրը** (եռոտանին), որից կախում էին տիկը: Տիկը սև և էգ այծի մորթուց էին պատրաստում: **Տիկ հանելը** կատարվում է հետևյալ կերպ. այծը մորթում են, վզի բոլոր ողնոսկրները թողնելով մարմնի հետ, որ տկի բերանը երկար լինի: Այծի հետույքի անցքից դեպի ջուռը (ազդրը) մորթին մի թզաչափ ճեղքում են, մորթու տակից ձեռքը մտցնում, միսն ու մորթին ձեռքով իրարից զատում:

Մորթազերծումը կատարվում է այնպես, որ ոչ մի փոքր անցք մորթու վրա չբացվի: Մի ազդրը մորթազերծ անելուց հետո, հրում են մորթի մեջ և մյուս ազդրը սկսում մորթազերծ անել ձեռքով, հատկապես բութ մատով և թաթով, նույնպես հրում մորթու մեջ: Ապա ձեռքը մտցնելով այդ թզաչափ ճեղքեց ներս, կենդանու մարմնի բոլոր մասերում, մորթու տակից և մարմնի վրայից, մորթազերծում են ներսից մինչև առաջի ջռները (ազդրերը) և վիզը: Դրանից հետո քերթողը ձեռքը դուրս է հանում մորթու տակից և, նախ, ետևի մի ազդրը, ապա մյուսը այդ թզաչափ ճեղքից դուրս է հանում, որից հետո երկու ձեռքով սեղմելով մորթված կենդանու փորի վրա, հետզհետե զգուշությամբ փորն էլ այդ ճեղքվածքից դուրս է հանում ու մորթված կենդանին իր ետևի ազդրերից կախ տալով, մորթին նրա մարմնի վրայից քաշում է զգուշությամբ մինչև առաջին վերջավորությունները: Ապա նախ մի ոտքը, հետո մյուսը, մորթազերծում, այդ ճեղքից դուրս է քաշում և ամենավերջին անգամ վիզն է մորթազերծում, որով տիկ հանելու գործողությունը վերջանում է:

Այդուհետև սկսվում է տիկը մազազերծ անելը: Դրա համար մորթու մազոտ երեսը դուրս տալով, տկի մեջ լցնում են հոշկի փայտի փոշուց (մոխրից) և ջրի խառնուրդից ստացված թանձր խյուսը այնպես, որ մորթու ամեն մի մասնիկ խյուսով ծածկվի: Երեք-չորս օր այդ վիճակում մնալով մորթու վրայի մազն սկսում է թափվել: Այդ ժամանակ մորթու մազերն ամբողջությամբ քաշում են և տիկը մազերից մաքրում ու դնում հագեցած աղաջրի մեջ: Մորթին երկու օր աղաջրում մնալուց հետո հանում են, ետևի ազդրի վրա բացված թզաչափ ճեղքը **սիխով** (փայտե մախաթ) 5-6 ծակեր բաց անում, սիխը նրանց միջով անցկացնում, կանեփե թելով այնպես պինդ կապում, որ տիկը փչելով ուռեցնելիս շունչ դուրս չգա: Մորթու երեք **արթերը**

(սրունքների ծայրը), վիզը և պտուկների անցքերը նույնպես ամուր կապում են: Մնում է մի արթը, որից ծուքով (կանեփի ցողուն) կամ մի եղեգով սկսում են փչել տկի մեջ և ուռեցնել: Եթե անցքերից օդ է դուրս գալիս, նորից լավ կապում, փակում են անցքերը և էլի փչում, որ էլ փուքս (փչոց, շունչ) ներս չմտնի ու իսկույն այն արթը, որից փչում էին, ամուր կապելով փակում են և կախում չարդախի տակ: Տիկն ամենաուռած դիրքով չորանում էր և այդ դիրքն էլ պահում, երբ կապերը քանդում էին: Երեք-չորս օր ուռած մնալուց հետո քանդում էին կապերը և տիկը գցում մի ռոտի (փայտե ծող) վրա, կախում: Այս ձևով պատրաստում էին բոլոր տկերն ու տկճորները (փոքր տիկ), առաջինները մածունը հարելու, իսկ մյուսները աշխատողներին աշխատանքի վայրում քան ու մածուն տանելու համար: Տկերն ու տկճորները պիտանի էին դառնում «կարմրացնելուց» հետո. տիկ «կարմրցնել»-ը կատարվում էր այսպես. նախ մեծ քանակությամբ **պոծեխի** (ծառ է) կեղև էին հավաքում ճյուղերի վրայից և կապուգ (մակաբույծ մի բույս), որ աճում է հոշկի և լողփի ծառերի վրա: Կապուգը նույնպես ճյուղեր ունի՝ մանր տերևներով և մանր հատիկներով, որոնք սիսեռի մեծությամբ են և կարմիր գույնի: Կապուգի հատիկները բռնելիս ճխլվում են: Պոծեխի կեղևները և կապուգի ճյուղերն ու պտուղները միասին լցնում էին մի ամանի մեջ (պղինձ կամ պուտուկ), վրան ջուր լցնում և եփում այնքան ժամանակ, մինչև որ ջրի գույնը կասկարմիր դառնար: Ապա վերցնում էին կրակի վրայից, մի քիչ թողնում, որ գոլանա, որից հետո տկերն ու տկճորները դնում էին այդ կարմիր ջրի մեջ ու շրջած և առանջ շրջելու, որպեսզի մորթու և՛ ներսի, և՛ դրսի մասը այդ կարմիր ջրով դաբաղվեր: Տկերն ու տկճորները մի օր մնում էին այդ խաղախորդի մեջ, նայած թե պոծեխի և կապուգի այդ խառնուրդը որքան թունդ էր: Տիկ և տկճորների տպղված լինելը հասկացվում էր նրանց պնդացած լինելով և ճմռելիս ճռճռացող ձայն հանելով: Եթե մորթիները դեռ այդ դրության չէին հասել, թողնում էին նույն լուծույթի մեջ միառժամանակ ևս: Եթե տիկ ու տկճորները ցանկացած կարմիր գույնն ստացել էին, բայց դեռ չէին տպղվել, լրացուցիչ կերպով լողփի և հոշկի ծառերի կեղևներ էին բերում, սանդում ծեծում, մանրացնում, ջրով եփում կարագի հետ միասին և մորթերը լցնում այդ նոր լուծույթի մեջ ու տպղում: Երբ տիկ կարմրացնելու և տպղելու այս գործը վերջանում էր, բոլոր

տիկ ու տկճորները հանում էին այդ լուծույթից, մի քիչ չորացնում և սկսում էին կարել թզաչափ բացված ճեղքերը, արթերի ծայրերը կութուռ կոչված կարով՝ մորթու եզերածայրերը դեպի դուրս թողնելով, որպեսզի տկի ներսում, կարված մասերում կոկ լիներ, թանի, յուղի մասնիկները չմտնեին կարերի արանքները և տիկը չհոտեցնեին: Կարմրեցրած տկճորներով սարից տուն և տնից աշխատանքի վայրը թացան (կաթնեղեն) էին տանում: Տկերի արթերը չէին կարում, որպեսզի կարերն իբրև օդանցք չծառայեին, այլ ամուր կապում էին տկփետերին: Ձծումի տեղ ծառայող տկի կառուցվածքը.

1. **Տիկը**, որ մեծ և էգ այծի մորթուց է և ունի 5-6 դույլ ջրի տարողություն:

2. **Տկի արթերը**, չորս հատ, չորս սրունքների մորթերը...

3. **Տկբերան**, տկի վզակողմի ծայրը, որ բերանն է կազմում, որից հարելու մածունն ու ջուրն են լցնում տկի մեջ:

4. **Լոլափներ**, կլոր և հղկված երկու փայտեր, որոնց երկարությունը հավասար է տկի արթերի լայն բացվածքին՝ 60-70 սմ և ափը լցնող հաստությամբ՝ 3-4 սմ տրամագծով: Լոլափների երկու վերջավորությունների մասում, շրջանաձև փոսիկների մեջ, իր լայնությամբ մտնում են արթերը և ամուր կապվում, իսկ ճիշտ երկարության մեջտեղում, ամեն մի լոլափի վրա կա զուգահեռաձև մի անցք, որի մեջ մտցնում են տկփետի երկու ծայրերը՝ լցված տիկը հորիզոնական դիրքով պահելու, չքողնելու, որ կախ ընկնի և չհարվի:

5. **Տկփետը**, տկի երկարությանը հավասար, 1-1,25 մ երկար 4-5 սմ լայն և 1-2 սմ հաստ մի հղկված տախտակ է, որի ծայրերը մտնում են լոլափների միջնակետերի անցքերում, մի-երկու սմ դուրս ելնում, հրում լոլափները, որ չծալվեն տկի վրա:

6. **Խեչիրը**, երեք կլոր փայտեր են, որոնք ունեն 2-2,5 մ երկարություն, ծայրերն իրար կապված կազմում են մի եռոտանի, որից պարանով կախ են տալիս մածնով լի տիկը՝ «հարնելու» (հարելու) համար: Եթե զոզանում խուղի առաջ ծառ կա, նրա մի հարմար ճյուղից էլ են տիկը կախ տալիս և խեչիրի կարիք չի զգացվում:

7. **Ձվանը** (պարան) երկու տակ են անում, խեչիրի վերևի մասում կապում, օղակաձև ծայրերը կախ տալիս խեչիրից, իջեցնում այնքան, որ թան հարող կնոջը հարմար բարձրության վրա կանգնի - գոտկատեղի բարձրության - պարանի եր-

կու ծայրին օղակներն անցկացնում են տկփետի երկու ծայրերից, որոնք լոլափների միջանցքից դուրս են ընկած, որով տիկը պահում են պատշաճ բարձրության վրա:

8. **Տկթիլ**՝ մագից կամ բրդից պատրաստված մի հաստ թել է, որով կապում են տկբերանը, որպեսզի մածունն ու թանը չթափվեն տկից:

9. **Բախուրձ**՝ երկու զուգահեռ թելեր տկբերանի կողմի լոլափի երկարության մի ծայրից մյուսը հասնող, որից կախում են բազմաթիվ գործիքների երկաթե փոքրիկ նմուշներ՝ խոփ, բահ, կացին, մուրճ, օղ, սանր և այլն, որոնք Ավագ Հինգշաբթի, անարև են պատրաստված, ինչպես նաև կրիայի «փեջթաթիկ» (թիոսկր) քոռ խլուրդի փանջը (թաթը) և ոզնու մորթին: Երկաթյա գործիքները հարելիս զրնգում են և հաճելի ձայն են տարածում՝ «փախցնելով չարքերին» տկի բերանից ներս չմտնելու համար, իսկ «փեջթաթիկը», խլուրդի փանջը և «ժուժիկի» (ոզնու) մորթին տկի միջի յուղն են «բարաքա» (առատ) դարձնում:

10. **«Գաք»-եր** (տախտակյա փոքր շրջանակ) 3-5 սմ տրամագիծ ունեցող տախտակյա շրջանակներ են, նախապես պատրաստված, որոնց շրջագծային մասում փոսածև է: Երբ տկի վրա ծակեր են բացվում, այդ «գաք»-երը տկբերանից մտցնելով, հասցնում են բացվող անցքի մոտ, նրանով փակում տկծակը և կանեփի բարակ թելով տկծակի եզրային մորթն առնում գաքի շրջագծային փորվածքի մեջ:

Տիկն իր սար ու սարվազով (սարքով) պատրաստ լինելուց հետո, կախում էին խեչիրից և «սուտ» թան հարում, այսինքն միայն ջուր լցնում տկի մեջ և հարում, ապա տկբերանը բացում և կարմրագույն ջուրը թափում, էլի ջուր լցնում, էլի հարում և թափում, մինչև որ ջուրը զուլալ մնար: Դրանով տիկը պատրաստ էր լինում:

«Թան հարնողները» սովորաբար երկու հոգի էին լինում, որոնք երկու լոլափներից բռնած հրում ու քաշում էին, մածունը մղելով տկի մի ծայրից մյուսը, թանը հասցնում, յուղն ու թանն իրարից բաժանում:

Կաթնատնտեսությամբ զբաղվում էր յուրաքանչյուր տուն: Նայած անասունների քանակին, գարնանը 3-15-20 տիկ և տկճորներ էին կարմրցնում, որպեսզի պահեստի տկեր ունենային:

Թալինում և Աշտարակում տկի տեսակներն իրենց գոյությունը պահպանեցին մինչև 1930-ական թվականները: Դրանց փոխարինեց նախ արարատյան կավե խնոցին, ապա՝ նաև սերզատը:

Տիկ պատրաստելու դժվարին աշխատանքից խղպանն ազատվեց:

Ինչպես նկարագրից պարզ երևաց, Սասունում կաթնատնտեսությամբ բացառապես զբաղվում էին կանայք:

ԹՌՉՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սասունում տնային միակ թռչունը հավն էր, այն էլ սովորական ցեղը: Հավերին հատկացված տեղը կոչվում էր **դամալ** (հավանոց): Հավերին կերակրում էին **հավկուտով**, որն ստացվում էր **գալատակ**-ից, այսինքն՝ ցորենը, որ խաշում էին, գըլգիլը, որ ապուրի պուտուկից հանում և տաք-տաք լցնում էին **բարմալի** (տան հատակի) վրա: Գըլգիլ - կուտը պուտուկից վերցնում էին **չոգիգով** (շերեփ), ջուրը քամում նույն պուտուկի մեջ: Տաք հատիկներով կերակրում էին, որպեսզի շուտ ածել սկսեին կամ եթե ածում էին՝ ածելուց չկտրվեին: Հավերին տանտիկինն էր կերակրում և ձվերն էլ ինքն էր վերցնում, միշտ **բունկալը** թողնելով բնում: Երբ բնկալ չէին թողնում, հավերն իրենց ածելու տեղը փոխում էին: Հավերը թառում էին դամալի առաստաղից քիչ ցածր, հատակից բարձր, հորիզոնական դիրքով պատրաստված **հավթառի** վրա: Հավթառ չեղած դեպքում **աղատի** (ճյուղերից գործած միջնորմ) վրա էին թառում: Հավի բույնը լինում էր կամ **շպաք**-ը (պատի մեջ փորվածք) կամ պատից կախ տրված փոքրիկ կողովը: **Խապա** (թուխս) դնելու ժամանակ տանտիկինը, եթե ուզում էր վառյակներ շատ և աքլորներ քիչ ունենալ, արևի շողքի տակ նայում էր թխսի տակ դնելիք ձվերը. եթե ներսի փոքրիկ դատարկությունը ձվի գագաթի կողմումն էր երևում, **ջիդ** (աքլոր) էր, եթե կողքին՝ **վառիկ**: Այդ ստուգումից հետո ցանկացած թվով ջիդ ու վառիկի հավկիթ էր դնում խապու տակ: Երբ մի տան հավերի մեջ աքլոր չէր լինում, այդ հավերի հավկիթները թխսի տակ չէին դնում. այն փոխում էին մի ուրիշի տան՝ աքլոր ունեցող հավերի հավկիթների հետ, նոր դնում թխսի տակ: Տանտիկինը թուխս դնելու համար վերցնում

էր մի ծակ կամ անպետք պուտուկ, մեջը դարման լցնում, 20-25 ձու շարում այդ դարմանի վրա, թուխսը դնում ձվերի վրա, պուտուկի բերանը 1-2 օր ծածկում մաղով, որ «խապեն չփախնը» և շնչահեղձ չլինի: Երկու օր հետո մաղը վերցնում էր: Երեք շաբաթ հետո, երբ հավճագերը դուրս էին գալիս, տանտիկինը մի կացին էր վերցնում, կոթը հանում և հավճագերին մեկիկ-մեկիկ կացնի ծակից անցկացնում, որպեսզի երկաթի միջից անցնելով՝ ճագերն ազատ լինեին չար աչքից: Սև հավերը հարգի էին համարվում: Դրանց արյունը «բուժում էր» հիվանդությունները, երբ հիվանդին խմեցնեին, կամ եթե հավի փորը պատռելով հիվանդի գլխու, դեմքի վրա առաջացած ուռուցքին դնեին:

Հավերի **հակլոսնակ** (աքլորի պես) կանչելը մեծ դժբախտության նախանշան էր համարվում և գալիք այդ դժբախտությունից ազատվելու միակ միջոցը դրա վիզը դռան շեմի վրա դնելն ու կացնի հարվածով կտրելն էր: Տանտիկինները, որոնք թուխս էին դնում, վառյակ ունենալու մի այլ միջոցի էին դիմում: Թխսի տակ դնելիք հավկիթները նախապես լցնում էին աղջկա գլխարկի մեջ, հետո դնում, իսկ երբ ցանկանում էին, որ հավերը պուպուշիկ-քոլոսիկ ունենային, կանայք թուխս դնելիս իրենց գլխաշորի շղարշի ծայրերը հավաքելով գլխի վրա, այդպիսի պուպուշիկ-քոլոսիկի ձև էին տալիս:

Հավերն էլ ունեին իրենց հատուկ անունները, որոնցով կանչում էին նրանց: Այսպես օրինակ՝ **Բրդե** (պուտպտան), **Պուպուշե** (քոլոսիկ ունեցող), **Ջարէ**, **Նարէ**, **Նուրէ** և այլն:

Հավերին կանչում էին՝ «դու-դու-դու, ջու-ջու-ջու» ասելով, իսկ «քշու-քշու-քշու» ասելով՝ քշում:

Որքան տնային թռչնաբուծությունն էր աղքատիկ, այնքան բազմաթիվ էին վայրի թռչունները: Դրանցից ամենաշատը կաքավներն էին, **որոնց խախաբալը** (երգը) սար ու ձորերն էր լցնում: Հովիվները մայիս-հունիս ամիսներին տուն վերադառնալիս **դաստմալով** (թաշկինակ) կաքավի ձու էին բերում, կաքավի մեծ ձագեր էին բռնում և ուրախություն պատճառում երեխաներին, որոնք խնամքով **կադեցնում** (ընտելացնում) էին նրանց: Կաքավին նվիրված երգերից մեկն ասում էր.

Կացը վըր Հալբա սարուն,
Կաքավ նստեր վըր քարուն,
Գիլեր զաշուն ու զգարուն:

Կաքավից հետո սասունցիների ամենասիրելի թռչունը արծիվն էր, որ իր բույնը շինում էր անմատչելի ժայռերի և սարերի գլխին: Բնիկներն իրենց ապաստանած շատ ժայռերին և քարայրներին նույնպես «Արծվի բույն» կամ «Արծվի քար» էին ասում: Վայրի թռչուններից էին հոսնկուլը, ցուլուլը, բաշոկը (օդում կանգնող, սպասող), էղվնիկը (աղավնի), տատրակը, քոռ բուն (բու), սարիկը (սարյակ), ծիծեռնակը, հոպոպ-պապունկը, հնդկահավը, ջիռ կաքավը, զրզուրը (կիտուռները և մորեխները կոտորող), ճնճղուկը, ջրճնճղուկը, վլվլիկը (որ սիրում էր կանեփ ուտել), փոփոշը, դեղձնիկը, կռունկը, ագռավը, անձեղը, գեշխուրը (մսակեր), լորը:

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Շերամապահությամբ զբաղվում էին Խիանի, Խուլբի, Խաբլջոզի և Խարզանի շրջանները, որտեղ լավ էր աճում թթենին: Սակայն դա նշված շրջանների տնտեսության համար էլ վճռական նշանակություն չուներ: Շերամապահությունն այդ շրջաններում մուտք էր գործել Տիգրանակերտից և Դիարբեքիրից՝ մետաքսի վաճառականների (խոզայի թուջարներ) միջոցով, որոնք նախապես պայմանավորվում էին շերամի մշակությամբ զբաղվողների հետ, փող տալիս, վարկավորում նրանց: Մշակողներն էլ պարտավոր էին իրենց բոժոժը (խոզան) ձեռնտու գնով վաճառել միայն այդ վաճառականներին: Վարկատու գնողները բոժոժը տանում էին Տիգրանակերտ ու Դիարբեքիր, մշակում և թանկ գներով վաճառում արհեստավորներին:

Խոզայի վաճառականները, իբրև «ոսկու տերեր», իրենց կամքը թելադրում էին այդ շրջաններում:

Խոզայի այդպիսի վաճառականներ էին Սասունի Ահրոնք գյուղացի Չարչի Ղազարը և Հեղին գյուղացի Մխոյի Վարդանը: Դրանք ոչ միայն շերամապահության, այլև անասնավաճառության գծով էլ Խուլբի և Խիանի ազգաբնակչությանը կեղեքում էին: Այդ թեջիր-չարչիները ինչպես բոժոժի, այնպես էլ որձ անասունների գծով նախնական գնում էին կատարում: Դեռ չծնված ուլերը վարկով էժան գնում, ամառները պահում, չաղացնում, իսկ աշնանը հոտերով քշում էին Տիգրանակերտ (Ֆարխին, Նփրկերտ), Դիարբեքիր ու Հալեպ և թանկ գներով վաճառում:

Նշված շրջաններում շերամապահությամբ զբաղվում էին կանայք և տղամարդիկ: Խնամողներն ընդհանրապես կանայք էին, իսկ տերև կտրելը, փոխադրելը և այլն՝ տղամարդու գործ էր համարվում:

Բոժոժի հավաքման ժամանակ վարկատուները ներկայանում էին, որպեսզի ուրիշին չվաճառվեր:

Սասունում հնդահանությամբ չէին զբաղվում: Հունդն էլ նույն խոզայի վաճառականներն էին վաղ գարնանը բերում և շերամապահությամբ զբաղվողներին տալիս: Թե՛ դրսից եկած, թե՛ երկրի ներսում եղած վաճառականները մետաքսի հումքը ջորու քարավաններով էին տեղափոխում:

Դաշտամշակությունից և անասնապահությունից հետո, և որպես վերջինիս մի ճյուղը, շատ էր տարածված մեղվապահությունը: Ազգաբնակչության մեծամասնությունը 4-200 փեթակ ուներ: Փարթամ բուսականությունը և կլիմայական հարմար պայմանները նպաստում էին մեղվապահությանը: Երբեմն ծագ տվող մեղուն փախչում և ընտանիքով բույն էր դնում ժայռերի և անտառների մեջ: Այդտեղից էլ՝ «Մեղվի քար», «Մեղվի բուն» անունները: Տեղացիներից շատերը հենց այդ տեղերի պարս տված մեղուներին բռնում և պահում էին: Այդպիսի ծագում ունեցող մեղուները «Աստվածատուր» մեղու էին կոչվում:

Ծառի ճյուղի վրա գտնված պարսը, ճյուղով հանդերձ, տուն էին տանում: Մեղուն չցրելու համար պարսը փաթաթում էին շորի մեջ: Առաջին գտնողը, երբ անմիջապես չէ կարող տանել, որևէ նշան էր դնում ծառի տակ կամ ժայռին: Ուրիշներն այն հափշտակելու իրավունք չունեին, հավատալով, որ պարսը առաջին գտնողի **խըսմաթն** (բախտ) էր:

Մինչև 1900-ական թվականները մեղվաբուծության մեջ գործածված փեթակները **պլոլներ** էին կոչվում: Պլոլները շինում էին մի մետր երկարությամբ և 40-50 սմ գլանաձև կողովներից, որոնց և՛ ներսից, և՛ դրսից ծեփում էին գոմաղբով: Գլանի երկու բերանները ծածկում էին նույնպես ճյուղերով գործած շրջանակաձև կափարիչներով: Դրանցից մեկի վրա մեղուների շարժման համար դռնակ էին թողնում: Պլոլներ էին շինում նաև ծառերի գլանաձև բներից, ներսը մաքրելով և պլոլ դարձնելով: Այդ պլոլները մեղվանոցում շարում էին կողք-կողքի և իրար վրա, մինչև 1-2 մ բարձրության հասցնելով: Դրանով 4-5 պլոլ իրար վրա էր ընկնում:

Մեղվաբուծությամբ զբաղվողները մինչ 1900-ական թվականները պարսը (ծագը) բռնում և պատրաստի դատարկում էին պլոլի մեջ: Դրանից հետո մեղուներն իրենք բջիջները պատրաստում և մեղրով լցնում էին, տարին երկու անգամ բերք էին տալիս: 1900-ական թվականներից հետո պլոլները վերածվեցին «սնտուկ»-ների (արկղ): Այդ փոփոխությունները կատարվում էին Մուշի մեղվաբույծների ազդեցությամբ: Փեթակները մեղվանոց էին հանում վաղ գարնանից մինչև ուշ աշուն: Աշնանը փոխադրում էին տան չարտախը կամ մարագը՝ ձմեռելու համար:

Պլոլներով մեղվաբուծության դեպքում մեղրի բերքը կտրում էին նախ ծուխ տալով, որ ճանճերը դուրս գային: Ապա լիքը և կլոր մեղրահացերը պլոլի և՛ առաջամասից, և՛ ետնամասից երկար շեղբ ունեցող դանակով կտրում էին, որոշ հացեր թողնում պլոլի մեջ, որպես մեղուների բաժին:

Մեղվաբուծության մեջ գործածվող գործիքներն էին՝ սուր և երկարաշեղբ դանակը, ծխամանը, որ հարմարեցրած էր ծուխը փեթակի մեջ մղելուն և դիմակը՝ ճանճերի խայթոցից պաշտպանվելու համար:

Մեղրն ու մեղրամոմը սրբազան նյութեր էին համարվում: Մեղրին վերագրվում էր ամենաբուժիչ հատկություն, որի համար էլ հիվանդներին տանելիք հիմնական նվերն էր համարվում: Իսկ մոմը **լուսի բաժին** (զոհ) էր, որի մի մասը նվիրում էին **լուստանը**, կամ եկեղեցիներին՝ մեռնողների հոգին լուսավորելու համար: Մոմից ֆընդ (կծիկ) էին շինում և որպես պատրաստի լուսատու միջոց՝ հետները տանում գոմերը, փարախները կամ խոր քարայրները՝ որսի համար մտնելիս:

Անմահական էր համարվում այն մեղրը, որը, ըստ ավանդության, ստացվում էր վիշապների մարմնից մեղվի միջոցով: Այդ ավանդությունն ասում է, որ Գելիեգուզան և Էղգարդ գյուղերի ճամփին, Գելիեսանի աջ ափից, անցնում է մի վիշապ՝ սարի լանջին քսվելով. ժայռերը փշրվում են և ձյան պես սպիտակ քարերից մի ճամփա է բացվում, որ մինչև 1915թ. **Հուշփի ճամփա** էր կոչվում: **Հուշափն** անցնելով այդ սարից, իջնում է մի ձոր, որ կոչվում է **Գելիե Հընգըֆ** (Մեղրաձոր) և այնտեղ մեռնում:

Մոտիկ Էղգարդ գյուղից բոլոր մեղուները դուրս են գալիս փեթակներից և գնում թափվում վիշապի հսկա դիակի վրա: Գյուղի բնակչությունը հետևում է և Մեղրաձորում հանդիպում վիշապի դիակին, որ ծածկված է լինում մեղուների ամպով: Հնար չգտնելով մեղուներին տուն վերադարձնել, գյուղացիները երեկոյան գնում են գյուղ: Մի քանի օր անց բոլոր մեղուները վերադառնում են և այդուհետև միշտ թռչում են դեպի վիշապի դիակը, մինչև որ վերջինս սպառվում է: Այստեղից էլ ձորը Գելիե Հընգըֆ (Մեղրաձոր) է կոչվում: Այդ տարի Էղգարդի մեղվի փեթակները խիստ առատորեն լցվում են մեղրաբերքով: Էղգարդցիներն այդ մեղրը վիշապի թույն կարծելով՝ վախենում են ուտել: Այն տանում են Հալեպ՝ հեռու աշխարհ, վաճառում և շտապ վերադառնում են Սասուն, որ հանցանքը թաքցնեն: Հակառակ դրան, Սասունի

մեղր գնող հալեպցիներից ով ուտում է այդ մեղրը, անմահանում է, հիվանդները բուժվում են, կույրերն աչքի լույս ստանում: Երբ սպառվում է, մեղրն իր բուժիչ լինելու համար փնտրվում է: Սկսում են ծախողներին փնտրել, չեն գտնում և հարց ու փորձով հասնում են էղգարդ գյուղը, խնդրում, որ Հալեպում ծախած մեղրից նորից վաճառեն իրենց: Էղգարդցիները նախ սարսափում են, թե դրանք դիտմամբ են մեղրը գովում, որ ծախողներին գտնեն և բռնեն, իսկ երբ հավատում են նրանց անկեղծությանը, ցավում են, որ վիշապի մեղրը իրենք չեն կերել: Այդ ժամանակվանից **մեղրը տիղ է** (մեղրը դեղ-դարման է) համարվել:

Սասունցիներն իրենց սիրած մեղվաբուծությամբ զբաղվում են նաև Արագածի լանջերին: Կոլտնտեսություններում մեղվաընտանիքները հարյուրներով են հաշվվում: Այստեղ ևս ընտիր մեղր ստանալու համար կան բնական հիանալի պայմաններ:



Վերևից՝ Աշտարակի Սասունիկ գյուղի մեղվանոցում, ներքևում՝ Թալինի Ահագչի գյուղի բնակիչ Մարեի Մանուկը, որ հայտնի մեղվաբույծ էր դեռևս Սասունի Գելիեգուզան գյուղում

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ


Որսորդությունն ու ձկնորսությունը Սասունի տեղական տնտեսության մեջ մեծ տեղ չէին գրավում: Որսորդությունը համարվում էր քաջության և փառքի գործ, և մեծ գովեստով էին խոսում որսորդների մասին: Հեքիաթների կարգին էին դասում այն հանդուգն որսորդներին, որոնք քաջություն էին ունենում գազանների հետ ճակատամարտել: Այդպիսիները երգերի մեջ հիշատակվում էին իբրև արջ սպանողներ, գել սպանողներ և այլն:


Հատուկ որսորդությամբ զբաղվող մարդիկ կոչվում էին **նեջիրվան** (որսորդ), իսկ որսը՝ **նեջիր**: Նեջրվանները որսում էին քուվի, վիթ, ջեյրան, արջ, գայլ և աղվես, իսկ թռչուններից՝ կաքավ, տատրակ, լոր և էդվընիկ (վայրի):

Որսորդությունն ընդունված էր կատարել վաղ գարնանը, ուշ աշնանը և ձմռանը: Այդ կենդանիների ծնի շրջանից (գարուն) մինչև ձագերի մեծացնելը (աշուն), որսորդությունն անելը մեղք էին համարում:

Որսորդության համար գործածվող զենքերն ու իրերն էին՝ հրացանը,՝ սկզբնական շրջանում **չախմախլին**, որն առանց փամփուշտի էր: Վառոդը լցնում էին հրացանի փողի բերանից, ապա նույն տեղից մտցնում գնդակը, որ իջնում, կիպ նստում էր վառոդի վրա, հետո **սըխան** (քուրջի կտոր) գնդաձև կոլոլում և հրացանի շշով հրում, սեղմ կերպով հասցնում էին գնդակի վրա, որ փողի մեջ չշարժվեր: Հրացանի փողի այն մասից, ուր վառոդն էր լցվում, մի փոքրիկ անցք կար, որ վերջանում էր կայծքարի տակին:

Թեզըկը վառոդի փոքրիկ աման էր՝ զսպանակավոր կափարիչով: Որսորդը դրա բերանից մի քիչ չոր և մանր վառոդ էր լցնում կայծքարի տակի փոքրիկ տափարակ մի մասի վրա, ուր բացված էր հրացանի փողի անցքը: Չախմախլին կրակելու համար որսորդը լարում էր կայծքարը, քաշում հրացանի **ոտքը** (բռնակը)՝ նշան առնելու պահին: Կայծքարի պողպատե շերտը խփվում էր կայծքարին, կայծեր էր առաջանում, որոնցից բռնկվում էր, կայծերը ծակից մտնում էին փողի մեջ. բռնկվում էր վառոդը և գնդակն արձակում թիրախին: Կրակելու պահին, եթե մի փոքր քամի կամ անձրևի մի կաթիլ կպչեր **թեզին**, վառոդը կթափվեր կամ կթրջվեր և չախմախից ելած կայծերն անզոր կլինեին վառոդը բռնկեցնելու:







Սասունին հատուկ կայծքարային հրացան, ներքևում՝ Թեղըգվառոդաման, որը հատուկ էր նաև Սասունին, Տարոնին և այլն, ներքևը՝ աջից Սասունի Գելիեգուզան գյուղացի, հայտնի որսորդ հայրս՝ Պետոյանը: Այդ զբաղմունքը նա պահպանեց նաև Աշտարակի Լեռնարոտ գյուղում:

1900-ական թվականներից հետո որսորդները ձեռք էին բերում փամփուշտավոր հրացաններ և քիչ էին դիմում կամակոր չախմախլիներին:

Որսորդները, պետք եղած դեպքում օգտագործելու համար, բացի հրացաններից, ունեին նաև սառը զենքեր: Այդպիսիք

էին՝ նաջախը (սակրը), որ լրիվ մանգաղաձև բերան և կես մետր երկարության կոթ ունեցող մի գործիք էր: Որսորդը դրա կոթը միշտ խրում էր ետևից գոտու մեջ՝ բերանը գոտիկից դուրս ցցված: **Նաջախն** անհրաժեշտ էր գազանի հետ կռվելու և պաշտպանվելու համար: Խանջարը (դաշույն) նույնպես գազանների դեմ կռվելու համար, **կեռը**, որ բրիչաձև - կտուցանման գործիք էր, գավազանի վրա էր հագցվում: Լանջերին մագլցելիս և սառույցը հաղթահարելիս դա միշտ օգտագործվում էր: Որսի և պատահարների ժամանակ դա ծառայում էր իբրև սառը զենք՝ հարվածելու համար: **Չանկը** (երկաթյա թակարդ) աղվեսներ, նույնիսկ գայլ և արջ բռնելու համար էր:

Որսի գնում էին ընդհանրապես մենակ, որպեսզի խոսակցություն, փսփսուք չլիներ և որսերը չխրտնեին, չփախչեին: Ընկերով և խմբով որսի էին գնում այն ժամանակ, երբ քուվիների քարայր-գոմերը կամ **արջպահ** (արջի քարայր) էին մտնում, ուր խմբովին ապրում էին քուվիները, կամ արջերի ընտանիքը: Իսկ դրանք հարձակվում էին քարայրներ մտնողների վրա: Քուվիների կոտոշների հարվածը և արջի **գուլաշը** (մենամարտը) շատ վտանգավոր էին և առանց օգնող ընկերների դժվար էր նման որսի գնալը: Այդ խմբական որսերը տեղի էին ունենում ձմեռ ժամանակ, երբ ցրտերի պատճառով կենդանիները քաշվում էին քարայրները, իջնում խոր ձորերն ու ցածրադիր անտառները, ուր ավելի տաք էր և կեր գտնելը՝ հնարավոր: Ընկերով որսորդության ժամանակ, ով սպաներ որսը, մորթին նրան էր պատկանում, իսկ միսը հավասար բաժանվում էր: Որսորդներն այդ մսից անպայման բաժին էին հանում ճամփին իրենց հանդիպած մարդկանց և դրացիներին ու մոտիկ ծանոթներին:

Հավատում էին, թե վայրի կենդանիներին հովանավորում էին որոշ սրբեր՝ «սարեր-սրբեր»: Այդպիսի սուրբ էր Կեփինը, որի բարձրության կեսից սկսած դեպի գագաթը ոչ մի որսորդ իրավունք չուներ հրացանով բարձրանալ. «թվընկը կխժեր» (հրացանը ճչում էր), ինքն իրեն ձայն էր հանում: Եթե թափու եղած վայրից դեպի վեր որսորդը հրացան կրակեր, ապա գնդակը փոխանակ որսին, իրեն՝ որսորդին կկպչեր («գլուլլեն նեջրվորին կկպներ»):

Կենդանիների պաշտպան Կեփին լեռը, նրա վրա գտնվող «Կարմիր ճակատ սուրբ Հակոբը» և լուստունը գտնվում էին Ա-

դոկ սարից դեպի հարավ ընկնող Իշխանձորի ճամփի վրա, որն անցնում էր Գելիե-Սանից (Շների ձորից): Այստեղից անցնում էր Մուշ-Տիգրանակերտ տանող այն մեծ ճամփան, որ դըրբ (լայն ճամփա) էր կոչվում և հենց դըրբն էլ Կեփին սարի բարձրության կեսի լանջից անցնող և թափուի եզերագիծ սահմանն էր հանդիսանում: Կեփին լեռը որսի կենդանիների համար հարգվում էր բոլոր որսորդների կողմից, որի համար այդ սարալանջերում ազատ ու հպարտ շրջում էին քուվիները, իսկ երգերում երգվում էր՝ սովորական և տարածված երգը՝ «Անդոկ միրե ճիա, Կեպին մախալե պազքուվիա» (Անդոկը լեռների արքան է, իսկ Կեփինը քուվիների փարախը): Կեփինի վրայի «Կարմիր ճակատ սուրբ Հակոբի» լուստունն ամեն շաբաթ իրիկուն, կիրակմուտին, գնում, լուսում էին նրա լանջերի վրա զոզանի բարձրացած տեղացիները: Հատկապես ձմեռ ժամանակ որսում էին աղվեսներ՝ իրենց թանկագին մորթու համար: Սև աղվեսների և կզաքիսի որսը երկու տեսակ էր լինում. մեկը տահմըկ դնելով, իսկ մյուսը՝ «ռեչլըցնելով»: «Տահմըկը» (համեղ պատառ) աղվեսին և կզաքիսին սիրելի, հոտած - կանաչած թանհատը (շոռ) կամ պանիրն էր, որ որսորդները գիշեր ժամանակ գյուղից կամ տնից դուրս մի տեղ դնում էին, ձյունով ծածկում, որ աղվեսը և կզաքիսը գային ուտեին, իսկ որսորդն իրեն համար մի խուղ կամ հոլիկ էր շինում, նույնպես ձյունով ծածկում, մտնում ներս, մի փոքրիկ անցք բացում դեպի տահմըկը և ամբողջ գիշեր սպասում, մինչև մի աղվես կամ կուզ սպաներ: Շատ հաճախ այդ նրան հաջողվում էր, որովհետև աղվես ու կզաքիս շատ կային: «Ռեչ լցնելը» (ռեչին հետևել) լինում էր այն, երբ թարմ ձյուն էր եկել, ապա դաղարել, որից հետո սոված աղվես-կզաքիսները մի բան թռցնելու և ուտելու համար գյուղ կամ տներն էին մտնում և չլուսացած փախչում, անհետանում: Սակայն նրանց ռեչը (ոտքի հետքը) ցույց էր տալիս, թե ինչ ուղղությամբ են գնացել: Այդ ժամանակ որսորդները զինվում, լական էին հագնում, որ չխրվեն ձյան մեջ և սկսում էին «Ռեչ օլրցնել»: Խորամանկ աղվես-կզաքիսները ծուռ ու մուռ, սար ու ձոր պտտվում էին, նոր գնում իրենց բները, որ հետքերը կորցնեին: Փորձված որսորդները ռեչ օլրցնելը հասցնում էին մինչև նրանց բները, որոնք եթե մեծ էին, որսորդները մտնում էին ներս և խփում: Բները փոքր լինելու դեպքում որսորդ շների միջոցով քարայրում բռնում կամ փախցնում էին դուրս ու խփում: Եթե շունն էլ չէր

կարող մտնել, այդ դեպքում քարայրի մեջ խոտ կամ փայտ էին վառում, ծխախեղդ աստիճանի հասած աղվեսը դուրս էր նետվում, որսորդն էլ շան միջոցով նրան բռնում կամ հրացանով սպանում էր: Իսկ եթե դրանով էլ դուրս չգար, սկսում էին թաքստոցը փորել, մոտենալ և գտնել:

Աղվեսի, կզաքիսի, գայլի և արջի մորթիները վաճառում էին հատուկ առևտրականների, որ ձմեռ ժամանակ շրջում էին և հավաքում: Դրանք մորթու թուջարներ էին: Երբ դրանք չէին գալիս, որսորդները մորթիները տանում էին Մուշ և Տիգրանակերտ վաճառելու: Աղվեսի մորթին վաճառվում էր 10-15 և երբեմն մինչև 20 ղուրուշ (108 ղուրուշը թուրքական մի ոսկու է հավասար):

Ձկնորսությունը հազվադեպ էր, որովհետև գահավեժ հոսող ջրերում ձուկ որսալը շատ դժվար էր: Այնուամենայնիվ ձուկ որսալու հետաքրքիր մի ձև գործածվում էր: Աշակերտական թանաքամանի ձևով հյուսված մեծ կողովներ էին գործում և տանում ջրթափ, բարձրությունների կողքին, ջրվեժին մոտիկ, նրա բարձրության կեսի վրա, կախում ջրի կողքին: Այդ ջրվեժից իրեն նետող ձուկը մինչև ջրվեժի տակը չէր նետում, կես բարձրության վրա, կողովի մեջ էր նետվում և նրա բերանից դուրս գալ չէր կարող, ինչպես թանաքը՝ թանաքամանի բերանից: Կամ փոքր ջրվեժն ի վեր նետվող ձուկը, մինչև ջրվեժի վերի կետը չէր կարող ցատկել, նա ընկնում էր կողովի մեջ: Այսօրինակ կողովով ձուկ որսալը լինում էր ձկների՝ դեպի գետակունք կամ գետաբերան գաղթի ժամանակ, որ ձկնորսները գիտեին: Պատահում էր, որ գիշերը կամ ցերեկը կախված կողովը կիսով չափ կամ լրիվ լցվում էր ձկներով:

Բնատուր տնտեսությունը գերակշռում էր մանավանդ կենտրոնական Սասունում, ուր հաղորդակցությունը խիստ անբավարար էր: Իսկ Մուշն ու Տիգրանակերտն էլ բավական հեռու էին: Հողագործությունից ստացված բերքը սեփական սպառմանը հազիվ էր բավարարում: Անասնապահությունից ստացված բուրդը, մազը, կաշին ու մորթին նույնպես վաճառքի չէին հանվում. դրանք տեղական մշակման էին ենթարկվում և տնայնագործ արհեստավորների միջոցով հագուստ-կապուստ դառնում: Սակավահողությունը և անասնապահությունից ստացած հումքի արտահանման դժվարությունները ստիպում էին մնալ տնայնագործական արտադրության աստիճանին: Տեղում տարածված էին հետևյալ տնայնագործական արհեստները:

Բրդի վերամշակումը - Բուրդը լվանում, մաքրում էին, ապա փռում, չորացնում, սանտերքով գզում: Սանտերքը կես մետր երկարությամբ, 15-20 սմ լայնությամբ և 2-3 սմ հաստությամբ տախտակի կտոր էր, որի մի ծայրին, կամ երկարության մեջտեղում՝ լայնքի վրա, երկու զուգահեռ շարքով շարվում էին ատամները: 10-15 սմ երկարության, 2-3 մմ տրամագիծ ունեցող կլոր, սրածայր երկաթյա ձողեր էին դրանք, որոնց երկու շարքերի արանքը 3-4 սմ էր լինում և ծայրերն էլ իրար հավասար բարձրության վրա կանգնած: Սանտերկող կամ գզող կինը բրդի քուլան աջ և ձախ ձեռքերի մեջ բռնած մոտեցնում էր ձողերի սուր ծայրերին և իջեցնում ձեռքերը մինչև սանտերքի տախտակը, որով երկաթե ձողերը մտնում էին բրդի քուլայի մեջ, ծակծկում - գզում: Բուրդ գզող կինը ձեռքերը դեպի աջ ու ձախ քաշում էր. բրդի քուլան կիսվում, մնում էր նրա ձեռքերում: Դա բերում էր դարձյալ սանտերքի բերանը, ձողերի ծայրերի վրա դնում, նորից իջեցնում: Ամեն մի այդպիսի շարժում կոչվում էր **կիզ** (գիզ, գզել): Գիզը ութ-տասը անգամ կրկնելով, բուրդը գզվում էր: Բրդի ավելորդ մասերը, փոշին, շյուղը և այլն, թափվում էին քուլաներով, ապա **գազվանով** (ոլորող փայտե գործիք) թույլ կերպով ոլորում էին հաստ պարանի չափով և ստացված «պարանն» իրար վրա կծկում՝ գլոք (կապոց) անում, մի կողմ

դնում, հետագայում մանելու համար: Նույնպես գզում էին մազը, որ քիչ աշխատանք էր պահանջում:

Մանելը կատարվում էր **քարմանով** (իլիկ), որը փայտից շինված գլուխ ուներ. քարմանի պոչը փայտե կլոր ձող էր՝ 15-20 սմ երկարությամբ:

Պոչի մի ծայրը քարմանի գլխիկի անցքը մտցնելով՝ ամրացնում էին: Գնդի կողմը երկաթե փոքրիկ կեռ էին ամրացնում. դրանից փաթաթվելով անցնում էր մանվող թելիկը: Պոչի մյուս ծայրից բռնելով, մանող կինն իր մատներով արագ պտտեցնում էր իլիկը, որով քարմանը բազմաթիվ անգամ պտույտ էր գործում: Մանողի ձեռքի բուրդը մատների վարպետությամբ և միատեսակ հաստությամբ ոլորվում, թել էր դառնում: Երբ մանվող թելի երկարությունը մանող կնոջ հասակին (բոյին) էր հասնում, մանողն այդ թելը փաթաթում էր քարմանի գլխիկի տակի մասում, մինչև քարմանը լցվում էր, որից հետո կծիկ (գլոք) էր շինում: Այսպիսով բուրդն ու մազը թել ու կծիկ էին դառնում, պահանջված հաստությամբ ու բարակությամբ, երկու կամ երեք տակ արած, նայած թե ինչ էին գործելու: Քարմանը պտտեցնելու մի ուրիշ ձև էլ կար՝ **բարթաշիով** մանել: Բարթաշին մորթուց պատրաստված մի փոքրիկ գոգնոց էր, որ մանող կինը կախ էր տալիս իր աջ ազդրի վրա, քարմանի պոչը նրա վրա դնում և ցած կամ վեր շփելով, պտտեցնում և թողնում էր: Այդ շփումը թափ էր տալիս իլիկին, որը շփման ուժին համեմատ պտտվում էր: Բարթաշին ավելի ուժեղ թափ էր տալիս, քան լոկ մատներով տված թափը:

Բուրդը մանում էին նաև ճախարակով:

Պատրաստի, մանված բրդե թելերը գործագործին կամ փալասագործին տալուց առաջ, ըստ ցանկացած գույների ներկում էին: Ներկերը նույնպես տեղական բույսերի կեղևից կամ արմատներից էին պատրաստում, նախօրոք ներկում: Գործագործը կամ փալասագործը պատրաստի մանածն ստանալուց հետո հենք ու լենքը (երկայնություն և լայնությունը) չափում, ձևում և ապա անցնում էր գործելուն:

Թավն-ը (հենք-լենքը միասին) կոչվում էր թելերից չափ ու ձևը տրված, բայց դեռ չգործածված գործը կամ փալասը:

Քարքիք կոչվում է սանրաձև երկաթյա կացնի նման գործիքը, որի մի բերանը սանր է: Դրա կոթից փալասագործը բռնում է և երբ թավնի հենքն է անում, մի թել լայնքի մի կող-

մից մյուսն անցկացնում քարքիթի սանրաձև բերանով թավնին խփում և թելն իր տեղը նստեցնում, ապա թավնի թելերը միասնաբար շարժում, գետնի կողմի թելերը վեր բարձրացնում, իսկ վերինները գետնի կողմ և գցում երկրորդ թելը: Այսպես հաջորդաբար շարունակում գործել գետնի մակերեսին հորիզոնական գցված թավնը, որի վրա նստում է գործողը և քարքիթի ամեն մի շարժումին ինքն էլ թավնի հետ շարժվում ու ցնցվում է: Փալասագործ կինը նստում է՝ դեմքը դեպի չգործված մասը, իր ետևը թողնելով գործված մասը: Փալաս գործելու համար գործածված մասրան մի բարակ փայտի ծողիկ է, որի վրա փաթաթված է լենքի գցվող թելը, որ գործողն աջ ձեռքով, թավնի թելերի զուգահեռ շերտից դեպի ձախ կողմն է անցկացնում և ձախից էլ նույն ձևով դեպի աջ կողմը՝ ամեն անգամ անցկացնելիս քարքիթով ծեծում թելը, նստեցնում իր տեղը: Երբ քարքիթով լենքի թելը շատ ծեծվի, գործվող փալասը շատ պինդ կլինի, իսկ եթե քիչ ծեծվի՝ փափուկ:

Փալասները գործելուց հետո իբրև ներքնակ և իբրև թեռ ու մանտիք (բարդան ու պարկ) էին օգտագործում: Բրդե կամ մազե մեզարներն էլ նույն ձևով էին գործում: Ապա կտրատում էին, հարմար չափի բերում:

Գորգագործությունն այնքան տարածված չէր, որքան փալասագործությունը: Գորգն ավելի շուտ զարդի և հարստության համար էր, իսկ փալասը ներքնակ կամ վերմակ էր չքավոր տնտեսություններում, և դարա էր բերքահավաքի համար: Այն հեշտ էր գործվում և մեծ ծախսեր չէր պահանջում:

Թաղիքագործությունը թաղիք, քոլոս, կուլավ (յափնջի) գործելու արհեստն էր: Թաղիք, կուլավ և քոլոս գցելու համար, ըստ յուրաքանչյուրի մեծության և ծանրության պահանջի, **լպուտների** միջոցով բուրդը գզում էին, պատրաստում, ապա մի տափարակ վայրում փռում մեծ փալաս, որի վրա հավասար թանձրությամբ փռում էին բուրդը, եզրային նախշերը, տիրոջ անունը, թաղիք գցելու տարեթիվը և ամսաթիվը, որ գրել էին տալիս տարբեր գույնի բրդով: Այդ բոլորի փռվածքը ջրցնում էին, որ գզված բուրդն իրար բռներ, և գցված թաղիքի լայնքից քիչ ավելի երկար ու կլոր մի փայտյա ծող դնում լայնքի մի եզերքին, բուրդն ու փալասը ծողի վրա փաթաթում, այնպես, որ ծողի մի պտույտի վրա մի շերտ բուրդ և մի շերտ փալաս էր գոյանում: Ծողը և նրա վրա փաթաթվող

բուրդն ու փալասը, հետզհետե հաստանալով, մինչև փաթաթելը վերջանար, դառնում էր մի գլանաձև մարմին, որի երկու ծայրերից 15-20 սմ երկարությամբ միջի ծողի ծայրերն էին երևում: Փաթաթը կապում էին մի ծայրից մյուսը հասնող պարանի պտույտներով, որոնք սեղմում էին փալասն ու բուրդը, ներսից՝ ծողի մակերեսին, իսկ դրսից ամրացվում, որ փաթաթը չքանդվեր: Ապա թաղիքագործները, որ **լպուտ** (լմող, ճմռող) էին կոչվում, սկսում էին **լմելու** (տրորել, ճմռել) աշխատանքը: Այդ աշխատանքը կատարում էին 6-8 մարդ միասին աշխատելով: 3-4 հոգի յուրաքանչյուր կողմը կանգնելով, ոտքով համաչափ խփում էին փաթաթին, որը՝ գլորվում էր հարթ - հորիզոնական մի մակերեսի վրա և հետևում նրան, էլի խփում, որ չկանգնի, գլորվի ու լմվի: Մյուս կողմի 3-4 հոգին նույն բանը կրկնում էին փաթաթը ետ-ետ տալով և հրելով - տրորելով: Այսպես փոխնիփոխ տրորում, հրում, լմում էին, մի քանի ժամ հետո փաթեթը բաց անում, ստուգում լմվածության աստիճանը և հաջողությունը: Եթե զարդերը կամ գրերը ծուռ-մուռ էին ընկել, ուղղում էին, նորից փաթաթում, ջրցնում, նորից կապում լմում, մինչև որ թաղիքը հասունանում էր: 6-8 աշխատողներից մեկը արհեստավոր լպուտն էր, որ ղեկավարում էր գործը:

Կուլավի պատրաստելն էլ նույնն էր, որովհետև դա թաղիքից էին շինում (յափունջան առանց մազի): Քոլոսի լմելն այլ ձևով էր, եթե դա միակտոր էր (կարը կողքից չէր): Քոլոս լմելու համար վերցվում էր կոնաձև մի կաղապար, որի խարսխի մակերեսի շրջագիծը մոտավորապես քոլոսատիրոջ գլխի շրջագծի չափով էին վերցնում, որովհետև նա հեշտ էր լայնանում կամ փոքրանում լմելիս - և նրա վրա փաթաթում պահանջված քանակի և գույնի գզած բուրդ: Ապա փաթաթում էին փալասով, թրջում և լմում, թողնում որոշ ժամանակ, ստուգում հաջողությունը, էլի էին լմում, մինչև քոլոսի լրիվ պատրաստ լինելը:

Քոլոս գործածում էին խութեցիները, փսանցիները, խարզանցիներն ու խիանցիները: Կենտրոնական մյուս շրջաններում գդակ էին դնում:

Ջուլհակությունը (ոստայնագործություն) ամենատարածված արհեստն էր Սասունում: Տնտեսությունների մեծ մասում ջուլհակներ կային: Ջուլհակները բրդից գործում էին շալի

տեսակներ, որոնցից պատրաստում էին շալվար, աբա, կառըկ (կարճ վերարկու), չուխա և այլն: Շալվարի (շլվար) շալը երկու տեսակի էր՝ **հասարակ** և **դուգուր** (երկտակ գործվածք): Այս տարբեր հագուստների համար մանողները (կանայք) տարբեր հաստությամբ և տարբեր չափի ոլորուն թելեր էին մանում: Ջուլհակներն ստանալով ըստ չափի մանված թելեր, սկսում էին իրենց «շլվար գործելու» աշխատանքը: Շատ անգամ նրանց **հուրը** (ջուլհակի հոր) տան օջախի մի անկյունում էր պատրաստված լինում, բացառիկ դեպքերում էլ՝ առանձին տեղ, սաքուի գլխին և այլն:

Ջուլհակները, բացի բրդեղեն գործվածքից, գործում էին մետաքսի կտորեղեն էլ՝ **խազ, խազըրկի, խուտնի** (գոտի, շալ գլխի և այլ կտորեղեն): Ամենից շատ գործում էին բամբակյա կտորեղեն:

Սասունում ոչ մի կնգուղ բամբակ չէր մշակվում: Ազգաբնակչության բամբակեղենի պահանջը բավարարվում էր բամբակի հումքը բերելով Տիգրանակերտին սահմանակից Բշերիկի և Սլիվանի դաշտերից: Յուրաքանչյուր աշնան, կալ ու կուտից հետո, ամեն մի տնտեսությունից մեկ-երկու հոգի գնում էին այդ դաշտերը և բամբակը, կորիզահան անել տալուց հետո, բարձկաններով և շալակով փոխադրում իրենց տները, լպուտների միջոցով գզել տալիս: Բամբակը ջըրջռով կորիզահանում էին:

Լպուտության մասին Բաղեշի նահանգի Բարուար շրջանի Ոզմ գյուղացի Պետրոս Սոսոյի Կանտալյանը պատմում էր.

- Մեր պապեր մեզ ասեր են, որ անեղը ստեղծել է հայր Աբրահամը, եբոր գնում ա սար, որպես իր տղան Իսահակը մատղի, էնտեղ աստվածություն կոչ (խոյ) է ուղարկում հրեշտակի հետ, որ Աբրահամին ասում է. «Աբրահամ, ի՞նչ ես անում, այս է քո մատաղը» և կոչը տալիս է նրան: Աբրահամը կոչին մորթում ա: Բայց նրա գուզանը (բուրդը) գզելու համար գործիք չի ունենում, վերցնում է էդ ոչխարի ոտքը որպես անեղան բազուկ, թևը անում ա անեղան տափ, թևի մի կողմ անում է անեղան գորտ, տափն ու բազուկն իրար ամրացնում, անեղան ծամ բազկի երկու ծայրերից անցնող լարը ամրացնում է տափանի տակի մասին, լղամը, ծամը և լարը շինում է աղիքից, լղամի փետը՝ մի կլոր տափակ կոճից, անեղան փանգը՝ ոչխարի բրդից, պորտն ու տափը՝ ոսկորից, չաքը՝ ո-

լոգից (ծնկան խնձորից): Հայր Աբրահամը կոչի բուրդը այդ կազմած գործիքով սկսում է գզել և ինչ-որ անում է, բուրդն իրար չի բռնում, որ չափանակ (թաղիք) լինի: Հուզված լաց է լինում, արցունքը թափվում է բրդի վրա և բուրդն սկսում է բռնել իրար և չափանակ դառնալ, որով սկսում է ջուր շաղ տալ բրդի վրա և չափանակը պատրաստում տրորելով: Այդպես, ուրեմն գզրարությունը հայր Աբրահամի մատաղ արած խոյի ոսկորներից ու մարմնից է գոյացել, որով սկսվել են անեղն ու չաքը:[1]

Պատրաստի անեղն ու չաքը, սակայն, չեն գործում, և հայր Աբրահամը հուսահատ սպասում է: Հանկարծ իր քովն է կանգնում չարը, որն ասում է. «Ի՞նչ կտաս ինձ, որ անեղն ու չաքը գործի գցեմ»: «Ինչ որ ուզես,- ասում է հայր Աբրահամը»: Չարը պատասխանում է. «Քո աշխատանքից և աղոթքից հետո ունեցած ժամանակդ ինձ տրամադրես»: Աբրահամը դրան համաձայնվում է: Չարը խոյի ճանը առնում է և դնում լարի և տափի միացման կետում, որով լարը թրթռալու և գզելու հատկություն է ստանում: Գզված բամբակը պատրույգ են շինում, 15-20 հատից մի փունջ կապում, դարսում իրար վրա՝ ճախարակով մանելու համար:

Յուրաքանչյուր տուն իր 1-3 հատ ճախարակն ուներ և երբ **բամբակ գզելը** վերջանում էր, ճախարակով բամբակի պատրույգները մանում, թել էին դարձնում, կծիկ առ կծիկ շարում: Հետո բամբակի թելի կծիկները, **մղլուպի** և **նազուգի** միջոցով **կաճի** (ղենչակ) վերածում, որովհետև ջուլհակը կաճած, մանած թելով է իր աշխատանքն սկսում: Մղլուպը թելի կծիկը կաճի վերածող գործիք է, իսկ նազուգը՝ մասրայի, նազուգն ունի կոճղաձև մի պատվանդան, որի մեջտեղում ամրացված և ուղղաձիգ վեր բարձրացող երկաթե կամ ամուր փայտյա մի ձող է տնկված, որի վրա իջեցվում է չորս շարժական թևեր ունեցող մի վանդակ՝ վարի մասում ավելի լայն , իսկ վերևում նրանից մի քիչ նեղ, որ կաժը (թելը) ցած չընկնի: Շրեզի ջրով թրջված կաճը

[1] Ոզմեցիների Կանտալյան տոհմը եկել է Չգիր ու Բոհտանից: Փրա Բեթսեեան, Աշա Ռնտվանե, Չիթ մաջիրե, Ոստանե խրաբ նաբի հատա էխր զամանե (Բաթմանի կամուրջը, Ռնտվանի ջրաղացը, չիր մեջիտը և Ոստանը մինչև աշխարհի վերջը չեն քանդվի): Փրա Բաթմանի կառուցողը մեկ ձեռքով է եղել, նա Շատի կամուրջն է կառուցել, բայց Բոհտանի բեկը կտրել է նրա ձեռքը, որ նման կամուրջ այլևս չշինի աշխարհում:

նազուգի վրա անցկացնելով և թելի ծայրը մի մասրայինՙ կապելով, մասրան ամրացնում էին ճախարակի արագ պտտվող շշի վրա և ճախարակը պտտեցնելով, կածի թելը արագ փաթաթվում էր, մասրաները լցվում և ջուլհակի ջրածի համար (լենք ու հենք գցելու) պատրաստ լինում: Մղլուպը փայտե երկու կիսաշրջանակներից և մի ձողից բաղկացած գործիք է, որով թելի կծիկները կածի են վերածվում: Կիսաշրջանակները 2-3 սմ լայնության, 1 սմ հաստության փոքրիկ տախտակներ են, որոնք իրենց տակի համաչափ անցքերով մտնում են ձողիկի ծայրը և իջնում մինչև նրա հենման կետի մոտ: Նրանց վերևի երկուական ծայրերը խաչաձև իրար միացած և նույնպիսի անցքերով ամրացված են ձողի վերևի մասում: **Մղլպողը** (մղլուպը պտտեցնողը) ձողի վերևի սուր ծայրը իր բութ, ցուցամատ և միջնամատով պտտեցնելովՙ մղլուպը պտտվում է և կծիկից կածերը կազմվում են նրա կիսաշրջանակաձև չորս կողերի վրա: Այսպիսով, ուրեմն, գզված բամբակը պատրույգի վերածելով, պատրույգները ճախարակով մանվում, թել են դարձվում, թելը կծիկի վերածում, կծիկները մղլուպի միջոցովՙ կածի, իսկ կածն էլ նազուգի միջոցովՙ մասրայի: Կած վիճակում ամբողջովին թրջում են շրեզի (օղինի արմատների) ջրով, որը լցված է լինում մի տաշտի մեջ, ուր լցնում են բոլոր կածերը, նոր ամեն մի կած անցկացնում նազուգի վրա, որից դարձյալ ճախարակով մասրայի վերածում: Ջուլհակը պատրաստի մասրաները (եղեգ, որի վրա թել է փաթաթված) շարում է ճաղի վրա ամրացված և ուղղածիգ կանգնած շշերին, որոնց շուրջը հեշտությամբ պտտվում է: Ջաղը կամ դաստաջաղը մի գործիք է, որով թելերը մասրաներից քակվելովՙ հենք են դառնում: Ջաղը 1,25-1,5 մետր երկարության, 20-25 սմ լայնության և 2-3 սմ հաստության տախտակ է, որի երկարության երկու կողմերում 6-12-ական երկաթե ձողիկներ են ուղղածիգ ամրացված, իսկ լայնության մեջտեղից երկու հենակների վրա ամրացած բռնակ կա, որից ջուլհակը բռնելով, երբ քայլում է, ջաղի վրայի բոլոր մասրաները դատարկվում են հետզհետե պտտվելուց, կազմելով **ճրաժի** հենքը: Երբ ամեն բան պատրաստ էր, ջուլհակը հաշվում էր, թե, ասենք հիսուն մետր բամբակյա կտավ գործելու համար որքան մասրա էր պետք: Պահանջված քանակի մասրան վերցնելովՙ անցնում էր աշխատանքի: Վարպետը տան բակում գտնվող արտի մեջ, իրարից որոշ հեռավորության վրա, 1-1,5 երկարությամբ ձողեր

էր խրում մի ուղիղ գծի վրա, 50 մ երկարությամբ, իրարից 2-3 մ հեռու: Ջուլհակը ջաղի շշերի վրա շարելով լիքը մասրաները, յուրաքանչյուր մասրայի թելի ծայրերը կապում էր ուղիղ գծի վրա շարված ստեղծներից (ձող, որի վրայից թելն է անցնում) առաջին ստեղծին և շարժվում նույն ստեղծների գծի ուղղությամբ: Մասրաները բոլորն էլ ջուլհակի քայլելուց և թելի ձգվելուց պտտվում էին ջաղի երկաթե ձողիկների շուրջՙ հենվածի մասրայի մի գլխիկի վրա: Հասնելով երկրորդ ստեղծին 6-12 զույգ մասրաների թելերի կեսը ստեղծի մի կողմի և մյուս կեսը մյուս կողմի վրա անցկացնելով, ջուլհակը շարունակում էր առաջ գնալ նույն ուղղությամբ, երկրորդից երրորդ և չորրորդ ստեղծները և այսպեսՙ մինչև վերջին 50-րդ մետրի ծայրին հասնելը: Մասրաների թելերն իրար զուգահեռ, ստեղծից - ստեղծ էին երկարում: Երբ մասրայի վրայի թելերն սպառվում էին, ջուլհակը նոր մասրա էր վերցնում, նախորդ մասրայի թելի ծայրին կապում նոր մասրայի թելի ծայրը և սպառվածՙ անթել մնացած դատարկ մասրան ջաղի շշի վրայից վերցնում մի կողմ էր դնում, իսկ լիքը մասրան նրա շշին անցկացնում և շարունակում էր քայլել ու հենել (հենք կատարել): Ջուլհակն առաջին ստեղծից մինչև վերջին ստեղծը հասնելիս (այսինքն հիսուն մետր անցնելիս) վերադառնում էր դեպի առաջին ստեղծը, մասրաներով ծանրաբեռնված ջաղը իր ձեռքին, դատարկված մասրաները փոխարինելով լիքը մասրաներով, մինչև առաջին ստեղծին հասնելը: Ջուլհակն այսպես գնալ-գալով, հաշվովհենում էրՙ դատարկելով մասրաները: Երբ հենքի թելերի թիվը հասնում էր պահանջված քանակին, այսինքնՙ հիսուն մետր երկարության, իր չափին համապատասխան լենք (կտավի լայնք) էր ստանում, հինելու աշխատանքը վերջանում էր: Ջուլհակը առաջին ստեղծի վրայից սկսելով իր հենքը և վերջացնելով այն, թողնում էր, որ արտի մեջ, ստեղծների վրա փռված **ճրաժը** (թելերի ամբողջությունը, որ պետք էր հենքի և լենքի համար) մի քիչ չորանար և շնորհիվ շրեզիՙ պնդանար: Մի քանի ժամ հետո ջուլհակը հավաքում էր ճրաժն այնպես կանոնավոր կծկելով, որ ստեղծների յուրաքանչյուր կողմի թելերն իրենց կողմերում և շարքերում մնային, թելը-թելին ոչ միայն չխառնվեր, այլև, ինչպես հավաքվում էր մեջ-մեջի հուսկվում, ճիշտ այնպես էլ հետզհետե ճկկահորի մեջ, գործելու ժամանակ քանդվեր և գործվեր: Ջուլհակը ճրաժը հավաքելուց հետո բերում էր տուն, կախում

հորի վրա, առաստաղին մոտ և ճրաթի ծայրը իջեցնելով հորի սար ու սարվազի համապատասխան տեղերից անցկացնելով հասցնում էր այնտեղ, ուր ինքը նստած պիտի գործեր: Ճրաթի լենքին համապատասխան երկու սանրերի յուրաքանչյուր ատամից ջուլհակը ճրաթի մեկ կողմի թելերն էր անցկացնում, իսկ մյուս սանրի յուրաքանչյուր ատամից ճրաթի մյուս կողմի թելերը: Սանրերի ատամներն այնքան էին, որքան ճրաթի լենքի թելերի թիվն էր: Լենքը, ըստ ցանկության վերցնելիս, այսինքն՝ նեղ լինելիս, սանրի ատամների նույնքան մասն քիչ զբաղեցվում գործելու համար: Երկու սանրերից անցնող ճրաթի երկու երեսի վերին և ներքին թելերն արդեն ճիշտ դասավորվելուց հետո, նրանց ծայրերն իրար կապելով՝ 6-8-10 թելից մի հանգույց, ջուլհակը փակում էր ճրաթը, քաշում հորի վրա, սկսում էր գործել: Սանրերի վեր ու վար իջնելով, ճրաթի երկու երեսի թելերի տեղերն էին վեր-վար լինում փոխնիփոխ, և այդ թելերի ընդլայնական ուղղությամբ ջուլհակը հրելով աջ ու ձախ էր քշում մաքոքը (մքուք), որի մեջ դրված էր լենքի վրա շարժվող և ամեն մի հարվածին մի տակ (խաթ) թել թողնող մաքոքը: Ջուլհակին սասունցիները **գործվոր** էլ էին ասում:

Գործվորները կամ ջուլհակներն աշխատում էին բրդյա, բամբակյա և մետաքսյա կտորներ գործելով և՛ իրենց տան կարիքների համար, և՛ ուրիշների բերած մանածները, որի համար, նայած կտորին, մթերքով կամ փողով վարձ էին ստանում, մետրին 1-5 դուրուշ, նայած թե ինչ կտոր էր: Թանկ էին գործում մետաքսյա կտորեղենները, որոնք նրբություն էին պահանջում:

Պարանագործություն - Պարանի համար առավելապես գործածվում էր մազը, որ պիտանի չէր հագուստեղենին, կանեփը և բացառիկ դեպքում՝ բուրդը: Մազը գզում էին, քարմանով հաստհաստ մանում և գագվանով կծիկ անում ու ոլորում երկու երեք տակ, ապա ծամեր հյուսելու ձևով գործում պահանջված երկարության և հաստության պարաններ: Նույն ձևով էլ բուրդը մանում և վերածում էին թելի ու պարանի: Կանեփից պարան շինելու համար կանեփի բույսի ցողունները խուրձ-խուրձ կապելով «օփ»-ի (լճացած ջրի) մեջ էին դնում, որպեսզի կեղևի թելային մասը կակղի և ցողունից պոկվի: Կանեփի ցողուններից թելերը կեղևելով - հանելով նրանց միջի ծղոտներն էլ անջատելուց հետո, գագվանով մանում - ոլորում էին, հաստ թելեր շինում, ապա

գործում պարան, եզ ու կովերի համար կապ, ինչպեսև այլ բարակ թելեր՝ տրեխ կարելու համար և այլն:


Փոխադրամիջոցների, խրձկապերի, շալակի և այլ գծով գործածվող պարանները հաճախ մի ծայրին **գանգիջ** էին ունենում, որ պատրաստում էին ծառի ճյուղից:

Կաշեգործություն - Կաշին ընդհանրապես առանց մշակման, զոլերի բաժանում և տրեխ էին պատրաստում: Հատուկ կաշեգործությամբ զբաղվողներ չկային, սակայն ավելի կուլտուրական տրեխներ ունենալու համար տպղում էին, գամար դնում: Գամար դնելը կատարվում էր հոշկի կամ լողփի փայտը վառելով. ստացված փոշուց ցեխ էին շինում և նրա մեջ դնելով կաշին, մազերը թափվում էին ու փափկում: Ապա կաշին դնում էին քանի մեջ 1-2 օր, ավելի փափկացնում, հետո ձեռքով տրորում, որով և՛ փափկում, և՛ սպիտակում էր: Այդպիսի կաշվից տպղուկ չարուխ էին շինում՝ տոն օրերին, ուխտագնացության ժամանակ հագնելու համար: Մանր եղջերավոր անասունների մորթուց, ինչպես մենք տեսանք կաթնամշակման մասին գրելիս, պարկեր էին պատրաստում՝ ցորեն, գընգիլ և այլն լցնելու համար: Գոգնոց էին շինում, որ տղամարդիկ կապում էին խոտ հնձելիս, կամ տերև կտրելիս: Այդպիսի մորթիներից մի քանի տակ իրար վրա դնելով, տրեխ էին կարում: Սրեմ (մորթուց շինած թել) էին քաշում զանազան կարիքների համար օգտագործելու: Փափուկ և բարակ մորթուց շինում էին կայծքարի չախմխքարի քիսըկ (քսակ):

Մորթին որոշ շրջաններում՝ Շատախ, Խութ, Խուլբ, օգտագործում էին որպես ձմեռային վերարկու, որը ծածկում էր մարդկանց թիկունքը և կապերով ամրացվում գոտկատեղում:

Ոսկորի և եղջյուրի վերամշակման գործով զբաղվում էին դարբիններն ու զինագործները: Նրանք ոսկորից դաշույնի կոթ, բռնակ էին շինում, իսկ եղջյուրից՝ դանակների կոթեր, օծամաններ (օծ-յուղ դնելու աման):


Կավագործությամբ զբաղվում էին միայն այն գյուղերում, ուր լավ կավահող կար: Այդպիսիներից էին՝ Սաղտունը Սասունում և Քարծորը Տարոնում: Այստեղ մեծ քանակությամբ պատրաստում էին կարաս, կուժ, փարճ (սափոր), կուլա, պուտուկ, քասա, տաշտ, լուլա (խողովակ) և այլ մանր-մունր կավե ամաններ՝ սաֆիկ, սաֆա (բաժակ), ճրագներ:




Քարման մանող կին,
ա) Քարման, բ) Սանդիրք, գ) Չըրջըռ (բամբակի կորիզահան գործիք, որ Սասունն ստանում էր Տիգրանակերտից):




Լպուտ-գզրարը բամբակ գզելիս




Ա) Ձախրագ, բ)Թփլգիգ (ճախարակի իլիկն իր կաշվե անջատիչներով, գ) Նազուգ, որով թելը կաժի է վերածում, դ) Մղլուբ, որի վրայից կաժը իլիկով գերցնում, զետեղում են դաստաջաղի վրա:




Հուր, ջուլհակի դազգահ




Դաստաջաղ, ջուլհակի հինելու գործիք, բ) ճրած՝ հենքը պատրաստի վիճակում, գ) Մքուք




Ա) Չվան, բ) գանգիջ՝ չվանի ծայրին միացնելու համար




Տնային իրեր. ա) Կդալնուց, բ) պլոլ, կավածեփ կողով, արմտիք պահելու համար, գ) Չրակ, ջրակտիրի վրա, դ) փայտե թագ, լվացք թակելու համար, ե) Աքուռք, զ) փայթե թագ լվացք թակելու համար, է) քեփսի, ցորեն և ձավար մաքրելու համար, բ) կավե ջրակ (ձեթի և ճարպի)




Ա) Թեփսի փայտից, որի մեջ քարը ցորենից ու ձավարից
զատում էին ձեռքով, այն ծառայում էր նաև իբրև սեղան, բ) կաղըկ,
բայտե բաժակ, գ) Քասա- փայտե կերակրաման, դ) Չոգիգ- շերեփ,
ե) Քասա՝ կավից, զ) Ալբ, փայտե դույլ, կաթնաման, է) Չոկլիգ, փոքր
շերեփ, ը) Ալբ, կոտ, հատիկակչափ, թ) Գադոշ, կովկիթ կավից,
ժ) Բուդուկ, կերակուր եփելու աման իր խուփով,
ի) փուչուկ յուղի և մածնի:



Սասունի Հոսնուտ գյուղի դարբին Համզեի Պչուգն իր որդու հետ
Աշնակի դարբնոցում



Ա/ Ագիշ, թոնրից կամ օջախից հաց հանելու, բ/ ագիշ,
կերակրի ամանների տակը /մեջը/ մաքրելու, գ/ Քարքիթ,
գարպիդ /կարպետ/ գործելու, դ/ Գուռ, օջախից և թոնրից
հացը և կերակրաման բարձրացնելու, ե/ Խաչերկաթ, օջախի,
զ/ Խաչերկաթ թոնրի:



ա) Փեդադ,
բ) Գիռ-կեռ, մագլցելու գործիք,
գ) Քախնիչ,
դ) Նաջախ, ե) Գառքար,
զ) Տրի (դրի) տեսակներ,
է) Չախու-չախուլ,
ը) Խանջար:

Ընտիր մակրդմանները, որով կաթն էին եռացնում, ստացվում էին մեծ մասամբ այդ գյուղերից: Կավե հասարակ ամաններ ուրիշ գյուղերում էլ էին պատրաստում:

Փայտամշակություն - Սասունի տեղական փայտը բավարարում էր շինարարության և գործիքներ ու փայտյա ամաններ պատրաստելու պահանջին: Բոլոր գյուղերում դուռ ու լուսամուտ, արոր, լուծ, ցաք ու տափան, չօգիգ (շերեփ), գդալ, թի ու թիակ, ջառաֆա (մեծ թի), ջրտուն (երկարպոչ թի՝ արտերը ջրելու համար) պատրաստող վարպետներ բոլոր գյուղերում տեղացիներ էին:

Անտառամերձ գյուղերում փայտյա ամանեղեններ պատրաստող վարպետները բավական նուրբ շերեփներ, գդալներ, փայտյա տաշտեր, պնակներ, թեփսիներ, քարմանի պոչ ու գլուխներ էին շինում և Մուշում վաճառում:

Կադըկ (փայտե բաժակ) շինողները երբեմն այնքան նուրբ էին շինում, որ շատ հարգի էին և ծանոթներն իրար նվիրում էին: Կադըկով թան և ջուր էին խմում: Այս փայտյա ամանները պատրաստելու համար գործածում էին ուրագ, սղոց և այլ գործիքներ, իսկ **խարփուղ** կոչվում էր կիսաշրջանակի ձևով սուր բերան ունեցող գործիքը, որով փորում էին ներսի մասը, շերեփի, **կադըկ-ի** և գդալի փոսերը:

Դարբնությունը Սասունում տարածված արհեստներից մեկն էր: Երկաթահանքի և անտառների առկայությունը, ինչպես նաև առօրյա երկաթեղեն գործիքների ու զենքի մեծ պահանջը դարբնության զարգացման պայմաններն էին: Տալվորիկի Հլողինք, էգու տուն և Հոսնուտ գյուղերում երկաթահանքեր, նաև դարբիններ կային: Նրանք երկաթահանքը հանում, անտառավայրերում հնոցներ էին սարքում: Հաստ և դիմացկուն հոշկի և լողփի մեծ ծառերը կտրում էին, փայտն ու երկաթաքարը շերտ առ շերտ իրար վրա շարում և վառում հսկա խարույկներով, հնոցներում հեղուկ երկաթ ստանում և հողում փորած կաղապարներով հոսող երկաթին ցանկացած ձողի կամ լիստի ձև տալիս, հետո մշակում: Շինում էին բազմաթիվ գործիքներ ու պարագաներ:

Սասունի քուրդ ազգաբնակչության երկրագործությամբ զբաղվողները երկաթեղեն իրեր՝ խոփ, խաչերկաթ, ակիշ, սամի և այլն, հայ դարբիններից էին ստանում, որովհետև իրենք դարբիններ չունեին: Խաֆիր քուրդերին դարբինները, որպես

խաֆիրություն, նույնպիսի իրեր էին տալիս: Սասունի դարբնությունը ներքին պահանջը բավարարել չէր կարող: Այդ պահանջները բավարարվում էին Մուշի, Տիգրանակերտի, Սղերտի երկաթագործների միջոցով: Այդ վայրերից դեպի Սասնա դարբնազուրկ շրջաններն էին փոխադրում պատրաստի գործիքներ ու պարագաներ և կամ այդ շրջանների ռանջբարները գնալով վերոհիշյալ վայրերը, գնում էին իրենց անհրաժեշտ երկաթեղենը:

Զինագործները միայն սառը զենքեր էին պատրաստում: Գլխավորապես զինագործները ապրում էին Հազզո քաղաքում, Խաբլջոզում, Տալվորիկում և Փասորում: Նրանք պատրաստում էին դաշույն, թուր, վահան, որոնք իրենց որակով չէին զիջում Տիգրանակերտի, Դիարբեքիրի, Մերդինի և Հալեպի զինագործների պատրաստած նույնատիպ սառը զենքերին: Պատրաստում էին նաջախ կամ բալթա, թեզըկ (վառոդի փոքր աման), լոզ կամ քշուշ, գիռ (կեռ) և այլն: Լայն տարածում ուներ դանակագործությունը: Փաստորեն, ամեն մի դարբին միաժամանակ դանակագործ էր և զինագործ (սառը զենքի վարպետ): Դանակները շատ մեծ և շատ փոքր չափերի էին լինում, մեկ կամ մի քանի վերանով, որոնք նույնպես տարբեր մեծություն ունեին: Մեծ դանակները կոչվում էին չախու կամ չախուլ, որոնք կիսաշեղ մասնակի կորության և մինչև 10-15 սմ երկարության լաստ (շեղբ) ունեին, և 3-4 սմ - լայնության բերան: Փոքր դանակները նշտրակ էին կոչվում: Դանակների ձևով, բայց առանց կորության, լավագույն ածելիներ էին պատրաստում, որ ընդհանրապես ներմուծվում էին Մուշից, Ֆարխինից, Դիարբեքիրից և Հալեպից: Բոլոր տեսակի դանակների կոթերը պատրաստում էին մանր ու խոշոր եղջերավոր անասունների ոսկորներից, եղջյուրներից:

Պղնձագործությունը կամ տեղական բարբառով՝ սաֆարչությունը ավելի քիչ էր տարածված և այն էլ քաղաքներում կամ քաղաքատիպ վայրերում: Այդպիսի վայրեր էին Հազզոն, Փասուրը, Խաբլջոզը, Արտաշենը երկրի ներսում, իսկ դրսում՝ Մուշը, Նփրկերտը, Սղերտը, ուրկից գալիս էին շրջիկ սաֆարջիներ՝ կլայեկելու պղնձեղեն ամանները: Երբեմն նրանք տեղական նյութերով տեղերում պատրաստում էին զանազան չափի պղնձե ամաններ: Պղնձագործները գյուղերում լավ էին վաստակում, որովհետև մրցորդներ չունեին:

Ոսկերչությունը Սասունում հազվագյուտ էր: Հայ ոսկերիչներ կային Հազզո, Փասուր և Խաբլջող քաղաքատիպ վայրերում: Նրանք իրենց արհեստն օգտագործում էին և՛ տվյալ վայրերում, և՛ շրջում էին Սասունի հայ ու քուրդ ազգաբնակչության բնակավայրերը: Սակայն նրանք արդ ու զարդի պահանջը բավարարել չէին կարող: Այդ պահանջը լրացվում էր մոտիկ ու հեռու քաղաքներից՝ Մուշից, Ֆարխինից, Մերդինից, Դիարբեքիրից, Հալեպից ու Այնթապից: Ոսկերչության հայտնի կենտրոնը Տիգրանակերտ քաղաքն էր, ուր, ըստ տվյալների, 120-ից ավելի ոսկերիչների խանութներ կային մի առանձին փողոցում և երկու շարքերի վրա: Արծաթի հումքը, որ Տիգրանակերտից սասունցի ոսկերիչները բերում էին զարդեղեն պատրաստելու, մսխալին 100 փարա կամ երկուևկես ղուրուշ էին պահանջում: Հազզոյի ոսկերիչ վարպետ Գևորգ Մանուկյանի տվյալներով, իրենց քաղաքում երեք ոսկերչական խանութ էր գործում մինչև 1915 թվականը:

Սասունցի ոսկերիչները շինում էին վզնոց (գյարդալըխ), էրասնուց (ճակատի զարդ), ականջի օղեր, աբրջան (ապարանջան), դաշույնի խավդ (բռնակ), կալան (սրի, դաշույնի պատյան), գլխի թասակներ, սրածև կոճակներ, գլխակապ և այլ բազմաթիվ զարդեր: Ըստ նույն ոսկերիչ Գևորգ Մանուկյանի պատմածի և իր իսկ կատարածի, ոսկերչություն - արծաթագործությունն ուներ հետևյալ աշխատանքները.

Արծաթի զտելը կատարվում էր փայտի փոշու (մոխրի) և ոսկրի այրվածքի խառնուրդի միջոցով, նայած արծաթի տեսակին և քանակին, խառնում էին նաև արճիճ (կապար):

Արծաթ ջրելը (արծաթազօծելը) կատարվում էր արծաթը ճենապակե ամանի մեջ, ուր մանրելով այրում, լցնում էին այլ համապատասխան ամանի մեջ, ջուր ավելացնում վրան, որոշ հարաբերությամբ աղ խառնում, ապա ջուրը թափում, մնում էր խմորանման արծաթը: Այդ արծաթին 1.35 մսխալ հարաբերությամբ խառնում էին զանազան քիմիական նյութեր, ապա արծաթազօծելիք իրը, մի կողմից մետաղյա թելի, մյուս կողմից փայլեցրած ցինկի հետ գցում էին արծաթաջրի լուծույթի մեջ առանց տաքացման: Հինգ րոպեի ընթացքում իրն արծաթազօծվում էր, որից հետո մաքրում էին (ֆառշել) և իրը պատրաստ էր լինում:

Ամենաընտիր ոսկին զնդանի վրա մուրճով տափակացնում, մկրատով կտրատում, մանրացնում, պահանջված ձևի կաղապարներ էին պատրաստում ցեխից և մի ամանի մեջ, ուր ոսկու մանրուքը էր լցված, 1:4 հարաբերությամբ սնդիկ (ջվա) լցնում և վառվող ածուխով խառնում էին այդ խառնուրդը: Ապա գոյացած ջուրը առանձնացնում, քամում, և երկաթե մուլաֆայով (վրձին) շփում իրը, որ պիտի ոսկեջրվի, նրա վրա փոքրիկ ակոսիկներ առաջացնում և բամբակով ոսկեջուրը քսում իրի վրա, որն ստանում էր սպիտակ գույն: Ապա սպիտակած իրը թեժ կրակի վրա տաքացնում, սնդիկը ճանճի պես բզզալով «մեռնում» էր, որից հետո իրը դնում էին սառը ջրի մեջ և ֆառշում (մաքրում): Երբ իրն սկսում էր պայծառանալ, դնում էին կրակի վրա և իրը արդեն ոսկեզօծվում էր (ջվայալդուզի): Հազզոն Սասունի արհեստավորական կենտրոնն էր: Այնտեղ կային բրուտներ, աբա (կարճ մազոտ վերարկու) գործողներ, կտավագործներ, ոսկերիչներ, թիթեղագործներ, զինագործներ, կոշկակարներ, սոլկարներ, ջզմա կարողներ: Գ. Մանուկյանի տվյալներով, արհեստավորների քանակն ըստ արհեստների հետևյալն էին. երկու խանութ, աբա գործելու հարյուր դազգահ և կտավագործներ, որոնք մանածն ստանում էին պատվիրատուներից (կշեռքով ստանում և գործվածքն էլ կշեռքով հանձնում նրանց. օխան արժեր հինգ ղուրուշ). բազմաթիվ խանութներից 7-ը զինագործների արհեստանոցներ էին, որտեղ հրացաններ և ատրճանակներ էին վերանորոգում և սառը զենքեր շինում, ղլայեկչիներ՝ 7 խանութները միաժամանակ շրջիկ բաժիններ ունեին:

Հազզոյի ազգաբնակչության 350 տունը հայեր էին, 300 տունը քրդեր: Վերջիններից ոչ մի արհեստավոր չկար: Արհեստավորներն անհրաժեշտ նյութն ստանում էին գլխավորապես Տիգրանակերտից:

Սասունի արհեստագործության պահանջը բնիկ արհեստավորներով չէր բավարարվում, ուստի մուտք էին գործում դրսից, մեծ մասամբ Սղերտի արհեստավորներ: Սղերտը արհեստավորական և առևտրական լայն կապեր ուներ հատկապես հարավային Սասունի՝ Մոտկանի, Խարզանի և Խաբլջոզի հետ: Սղերտում միայն ոսկերիչների խանութների թիվը հասնում էր 70-ի: Ոսկերչության շրջաններում մեծ չափով սպառվում էր բաֆոնը՝ նիկելը: Սղերտում և մասամբ Հազզոյում գոյություն ունեին էս-

նաֆական կազմակերպություններ՝ համքարություններ: Վերջիններս, միավորելով արհեստավորներին, տնտեսական սերտ հարաբերություններ էին դրսևորում:

Կաշեգործության հիմնական կենտրոնը, նույնպես, նախ Մուշն ու Սղերտն էին, ապա Հազզոն, ուր կարվում և վաճառվում էին նուրբ կոշիկներ, կոնդորաներ, ջիզմաներ, (ճտքավոր կոշիկ), սոլեր, եմանիներ և այլն: Կաշին այդ վայրերում մշակում էին դաբաղխանաներում: Մշակման նյութը գխտորն էր (բլիլիկ), որ լողփի ծառերի տերևների վրա է գոյանում և շատ առատ է Սասունում: Այն մեծ քանակությամբ արտահանվում էր դեպի Մուշ, Կարին, Սղերտ ու Ֆարխին, նույնիսկ Դիարբեքիր:

Սասունում կաշին մշակելով պատրաստում էին **դբղուկ չարուխ** (դաբաղած տրեխ), **շըմըկ, սոլ, խոնդըռա** (կոշիկ), **ջզմա** (ջիզմե, ճտքավոր կոշիկ) և խարուկ:

Չարուխը եզան և կովի կաշվից զոլած, կտրած, անմշակ և մազն էլ վրան մնացած կաշի է, ոտքի չափին կտրված, կաշվի եզրային բոլոր կողմերից 2-3 սմ մակերեսից մազն ածիլած: Այդ անմազ տեղերն իրարից 0,5-1 սմ կամ քիչ ավելի լայն տեղերում կոպտելով (գծածև ծակելով), «կոպիտ»-ներից ամուր և քիչ հաստ թել անցկացնելով կութուռի կարի ձևով և քիթն էլ սրեմով գործելով, ստանում են տրեխ-ոտնամանը: Սա հագնում են ամեն եղանակի, հատկապես ձմռան օրերին և անձրև ժամանակ: **Դպղուկ չարուխի** մշակումը կատարվում էր այսպես: Վերցնում էին **սաղրին** (կաշու ազդրերի մասը, որ ամենադիմացկունն է), ոտքի չափին կտրում, թթված թանի կամ մոխրաջրի (խյուսի) մեջ պահում, մի քանի օր հետո մազերից մաքրում կաշին, նորից դնում դաբաղի մեջ և ապա հանում, ձեռքերով փայտի վրա ամուր քսելով կակղացնում, սպիտակեցնում, ապա կարում ու հագնում: Դպղուկ չարուխը խոնավությունից չի վախենում, բացվում, ոչ էլ չորությունից չորանում կծկվում, այլ պահում է իր դաբաղից ստացած չափն ու մեծությունը: **Շմըկը** (չուստ) նույնպես մշակված կաշուց էր պատրաստվում **շըմըկկար** (շըմըկ կարող) վարպետների կողմից: Այս վարպետները ապրում էին քաղաքատիպ վայրերում և քաղաքներում:

Սոլը չստի նման մի ոտնաման էր, բայց խոր երեսով, սուր և դեպի վեր կեռ քթով, ամուր կաշվով պատրաստված: **Խոնդռեն** (կոշիկը) սովորական, կուլտուրական կոշիկ էր, որ միայն քաղաքներից էր գնվում: **Զըզմեն** ճտքավոր կոշիկն էր, որ

գործածության մեջ հազվագյուտ էր և աղաներն ու բեկերն էին հագնում:

Այս բոլոր տեսակի տրեխներն ու այլ ոտնամանները Սասունի ժայռոտ քարոտ ճամփաներին քիչ էին դիմանում, իսկույն կտրտվում էին մի քանի օրում՝ սուր-սուր քարերին և սատանի լեսաններին քսվելով: Դարեր շարունակ, մինչև 1915 թվականը գոյություն է ունեցել, մինչև 1915 թիվը շարունակվել և այժմ էլ Թալինի շրջանի Կաքավաբերդ և Ներքին Բազմաբերդ գյուղի սասունցիների մոտ գործածության մեջ է գտնվում **խարուկ** կոչվող ոտնամանը: Սրա գործող վարպետների վերջին սերունդն արդեն անհետանում է, հազիվ մի քանի ծերեր կան, որ գիտեն «խարուկ քռել» (խարուկ շինել, գործել): Խարուկ քռող վարպետ Մարտոն (Սասունի Հեթինք գյուղացի) պատմեց, թե խարուկ քռելու համար պետք է մի նուգի (200 կամ 620 գրամ) կանեփի թել, մի քիչ ավելի կամ պակաս, նայած ոտքի չափին, քառորդ նուգի արիջ (չոլորված կանեփի թել), քառորդ նուգի կանեփի ոլորած թել, մազից ռշիկ (խարուկի երեսի գործվածքը), և մազ՝ (չոլորած) խարուկի պատի համար, որ վերցվում է «խարուկ քռել» տվողի աջ լափով (բուռ) աջ ոտքի ֆարի (թայ) համար և նույնքան էլ ձախ ֆարի համար: Այդ մազը մանր (կարճ) պետք է լինի, որ «լըմվի» (թաղիքանա): Ամեն մի մարդու ոտքի չափին իր լափի չափ մազն է որպես չափ վերցվում: Այդ մազը դնում են մի տաշտի մեջ, վրան քիչ-քիչ տաք ջուր ածում և լմում են: Ամեն մի ֆարի լըմելը տևում է կես ժամ: Լըմած և թաղիքացած մազը քաշում, երկարացնում են կամ լմում, կարճացնում ըստ պատվեր տվողի աջ և ձախ ոտքի երկարության ու լայնության: Լմած պորտը տաշտից հանում և մի-մի թել կապելով ամեն մի ֆարի ծայրին, թելերն իրար կապում և մի զույգ խարուկի պորտը կախում էին, որ մի քիչ չորանար և թաղիքդառնար: Կես կամ մի ժամ հետո չորացած չափերը վերցնում էին և սկսում արճել՝ **արիճով** (չոլորված կանեփի թել-կեղևով) կարել մեծ-մեծ կարերով, սկսելով եզերքներից և վերջացնելով **ֆարի** (թայ) կենտրոնով, այնպես որ մազե այդ թայը թաղիքի ամբողջ մակերեսը, վերի և վարի երեսով, արիճով ծածկվում էր: Արիճով ծածկված թայը սկսում էին քռել (կարել, մի տեսակ գործել) հաստ, ոլորված և ամուր կանեփի թելով, մինչև որ արիճածածկ խարուկի ամբողջ մակերեսը ծածկվեր կանեփի ոլորուն, հաստ և ամուր թելերով՝ իր վարի ու վերի ամբողջ մակերեսում: Ապա խարուկի թայը (ֆարը) թրջում էին ջրով, տփում (ծեծում) և աջ ու ձախ ոտքերին համապատասխան ձև տալիս: Երբ վերջնական ձևն ստանում էր, կաղապարվում էր: Սկսում էին **քարբտել** (եզրային ցցուն կարել), նախ վրայի եզերքներից, այնպես որ ամեն մի քարբատ (կար) անցներ մի քռածի և տակի արիճի վրայով, և եզերքների լայնության մակերեսում քարբատ անելով, խարուկի վերի եզրային գիծը մի քիչ ավելի բարձր էր կանգնում, քան խարուկի մակերեսը: Ստացվում էր մոտ մեկ սմ բարձրություն ամբողջ վերևի եզրային շրջագծում, որից կարվում և ամրացնում էին հետագայում ռշիկը՝ խարուկի երեսի մաղե թելից գործվածք, որի և խարուկի երեսի մեջ մտցնում էին ոտքը: Ռշիկը քարբատի հետ կտրվում էր խարուկի ներսի մասից, և այնպես էր թվում, թե ռշիկից է առաջացել, կարերը չեն երևում: Ռշիկը (խարուկի երեսը) ձեռքի մի թաթի չափ, խարուկի քթի կողմը գործելուց հետո, կողքի եզերքներում 2-3 մատի հաստության չափ գործելով գալիս էին դեպի կրունկը, ռշիկի կրունկի մասն էլ գործում վերջացնում էին: Դրանից հետո կարում էին խարուկի քարբատների հետ: Խարուկի քռելու համար գործածվող կանեփի ոլորուն թելը բարակ մատիտի հաստություն էր ունենում, իսկ արիճը՝ մոտ մեկ սանտիմետր լայնություն: Մեծ մարդու համար **քռած խարուկն** արժեր քսան ղուրուշ կամ մեկ մեջիդիե, իսկ փոքրերը՝ 10-15 ղուրուշ:

Խարուկը դիմանում էր 2-3 տարի, եթե խոնավության քիչ ենթարկվեր և ձմեռը չգործածվեր:

Ամուր կարված խարուկում ոչ թուր կամ խանջար էր մտնում, ոչ էլ չախմախելու հրացանի գնդակը: Տղամարդկանց ագանելիք էր նաև **թաթպանը** կամ **թաթմանը** (ձեռնոցը), որ ընդհանրապես տըֆտիկից (այծի աղվամազ) էր գործվում և շատ տաք էր պահում ձեռքը ձմեռ ժամանակ, հատկապես՝ դահուկի քաշանի գնացող դահուկավորներն էին հագնում:


Հյուսնություն.- Սասունի ամեն մի գյուղում բազմաթիվ հյուսներ կային և այժմ էլ նրանք բազմաթիվ են Թալինի և Աշտարակի սասունաբնակ գյուղերում: Տեղական բառով նրանք դյուրգար են կոչվում, իսկ արհեստը՝ դյուրգարություն: Նրանք ձեռքի բազմաթիվ գործիքներ էին պատրաստում և ունեին գառքար կամ պտուտաքար, թագ (թակ), պոչավոր թակ, ուրագ, ոռնուրագ, բոլուր-կտուր (բարակ շեղբող խզար) և այլ գործիքներ:

Սասունում հայտնի հյուսն էր Գրիգոր Մարգարյանը, որը այժմ էլ Ահագչի գյուղի կոլտնտեսության հյուսնն է իր որդու հետ:

Դերձակությունը որպես արհեստ գոյություն ուներ Հազզոյում, Փասուրում, Խաբլջոզում, այն էլ սահմանափակ արհեստավորների թվով: Այդ տեղերը և այլ մեծ գյուղերում կարի մեքենան մուտք էր գործել, սակայն մասսայական տարածված չէր: Ամեն տանտիկին իր տան դերձակն էր՝ առանց կարի մեքենայի, ինչպես ամեն տան մեջ գրեթե կար մի ջուլհակ կամ ամեն մի գյուղում մի քանի ջուլհակներ: Ուրեմն, ինչպես գործելը, այնպես և կարելը փակ տնտեսության ներսում էր կատարվում:

Սափրիչությունը, որպես արհեստ, առանձին վարպետների փեշակ չէր կազմում: Շատ ընտանիքներում ածիլում էր տղամարդկանցից մեկը, որի մոտ սափրվում էին տվյալ տան և հարևան տղամարդիկ: Միայն ավաններում և քաղաքատիպ վայրերում արհեստով սափրիչներ կային:

Տնային սափրիչները տեղական և ներմուծվող ածելիներ ունեին: Տեղական երկաթից պատրաստվող ածելիները պողպատյա ածելիներից ետ չէին մնում:



ա) ճոճո կամ ֆռիգ,
բ) Չախրգիգ,
գ) Խոնդուռա,
դ) Օրաջիգ,
ե) խարուկ,
զ) նխշուն պուջ:

ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐ

Սասունում փոխանակությունը և առևտուրը, բացի քաղաքատիպ վայրերից, որոնք նշել ենք մյուս բնագավառների մասին խոսելիս, գտնվում էին փակ տնտեսության պայմաններում: Երկրագործների, անասնապահների և արհեստավորների միջև փոխանակությունն ու առևտուրը, ըստ նրանց տնտեսական կարիքների, թե՛ հեռու, թե՛ մոտակա վայրերում էր կատարվում, բնամթերքով և փողով: Այնուամենայնիվ, փողով կատարվող առևտուրը, լայն իմաստով, գոյություն չուներ: Փոխանակության և առևտրի միավորն անվանապես փողն էր, բայց, փաստորեն, հանդիսանում էր անասունը: Տիրապետում էր անասունների առևտուրը, որ մեծ մասամբ կատարվում էր թեջիրների (անասնավաճառների) միջոցով, որոնք, այդ դեպքում, մեծ մասամբ քրդեր էին:

Թեջիրները ջալաբ (որձ այծ - ոչխարների հոտ) էին հավաքում, գնում և նախագնում: Հավաքում էին նախօրոք, մի տարի առաջ, վճարելով 15-20 ղուրուշ, մի տարեկան որձ այծի կամ ոչխարի համար, և երբ տարին լրանում էր, գալիս հավաքում էին գարնան արոտը բացվելուց հետո, և կազմելով մի քանի հազար գլուխ փոքր եղջերավոր անասունների ջալաբ, արածացնում էին Սասունի արոտավայրերում, Անդոկ, Ծովասար, Կեփին, Մարաթուկի լանջերում, գիրացնում և աշնանը քշում Տիգրանակերտի, Դիարբեքիրի և Հալեպ քաղաքի շուկաները և քսան ղուրուշով գնածը 70-100 ղուրուշով վաճառում: Ստացած փողը նորից դնում էին ջալաբ դնելու շահավետ գործում: Այս վերջինը կատարվում էր աշնանը, երբ պետության հարկահավաքներն էին մտնում գյուղերը, այնտեղ էին հավաքվում և թեջիրները՝ փողազուրկ գյուղացիներին «փող հասցնելու»:

Գյուղատնտեսական գործիքների և անասնապահության համար անհրաժեշտ պարագաների, արդյունաբերական ապրանքների, զենք ու զարդի առևտրականները հայեր էին: Առևտրին ոչ մի տեղ կանայք չէին մասնակցում: Վարկատվության ձևը, փաստորեն, վաշխառությունն էր: Վաշխառուներ կային և՛ քրդերի, և՛ հայերի մեջ, որոնք փող էին տալիս գյուղացիներին կեղեքիչ պայմաններով, տանելով նրա ունեցած բերքը, անասունը, խոզան (մետաքս): Այսպես կոչված այդ կցված գյուղացիները, բացի իրենց վաշխառուից, ուրիշին իրավունք

չուներին ծախելու իրենց ունեցածը, որով ստիպված էին կես գնով կամ ավելի էժան գներով տալ վաշխառուին:

Հարկերի և կարիքի ստիպմամբ աշխատավոր գյուղացին կեղեքվում էր:

Բացի անասուններից և բերքից, «վարկը» վաշխառությունը տարածվում էր նաև անշարժ գույքի՝ արտի, տան, գոմի և այլնի վրա: Վաշխառուն տարեկան բերքի զգալի մասը վերցնում էր իրեն ըստ պայմանի և գումարը մնում էր տոկոսով փող առնողի վրա:

Տարիներ անցնելուց հետո, երբ տոկոսով (ֆայիզ) փող վերցնող գյուղացին չէր կարող վերադարձնել ստացած գումարը, «վարկատու» - վաշխառուն գրավում էր տվյալ գյուղացու արտը, տունը կամ գոմը, որով գյուղացին սեփականազրկվում էր և հաճախ գաղթում:

Սասունում ներքին շուկաներ կային միայն քաղաքատիպ վայրերում: Հիմնականում արտաքին շուկան էր, որից օգտվում էր Սասունի ազգաբնակչությունը: Դրանք Մուշն ու Տիգրանակերտն էին: Շուկա գոյանում էր նաև մեծ ուխտատեղիներում, երբ բազմաթիվ մարդիկ ուխտի էին գնում: Այդ վայրերից էին Մուշի Ս. Կարապետ, Առաքելոց վանքը և Ս. Հովհաննեսն ու Ս. Աղբերիկը, ուր շտապում էին մշեցի, հազոցի և այլ տեղերի բնակիչներ: Առևտուր կատարվում էր Տիգրանակերտի մոտիկ Բշերիկի և Սլիվանի դաշտերում, հայ գյուղացիների հետ, բերում էին չմշակված բամբակ: Այն մշակում, գործում և հոգում էին իրենց հագուստեղենի կարիքը: Մոտակա շուկաներում՝ Մուշում, Աղերտում, Ֆարխինում տանում և վաճառում էին կազբա և գխտոր (կաշի տպելու համար), խոզա (բոժոժ) և այլ արտահանվող մթերքներ ու անասուններ:

Հաղորդակցությունը գյուղից գյուղ, շրջանից շրջան կամ Սասունից դուրս, դեպի Մուշ՝ Բաղեշ, Ճապաղջուր և Տիգրանակերտ շատ դժվար էր նույնիսկ ամառ ժամանակ, լեռնաշխարհի բնական կտրտվածության, ճամփաների բացակայության պատճառով: Իսկ ձմեռ ժամանակ հաղորդակցությունը դադարում էր: Եղած կածաններն ու շավիղները կամ ղըրբերը (մեծ ճամփա) բուք ու բորանից, առատ տեղացող ձյունից փակվում էին 4-5 ամիս:

Սակայն սասունցիներն իրենց լականներով ազատ շրջում էին ամեն ուղղությամբ՝ ձյան վրայով քայլելով ինչպես գետնի

վրայով: Գարնանից մինչև վաղ աշուն բանուկ էին միայն քարավանային երեք ճամփաներ: Բայց այդ ճանապարհներից ոչ մի այլ մարդ չէր կարող անցնել: Այդ երեք ճանապարհները հին էին: Քարավանային գլխավոր ճանապարհն էին Տիգրանակերտ-Տալվորիկ-Գելիեգուզան-Սեմալ-Մուշ, երկրորդը՝ Տիգրանակերտ-Խիան-Խուլբ-Շեն-Մերգեմոզան-Մուշ և երրորդը՝ Տիգրանակերտ-Հազզո-Խութ-Բռնաշեն-Մուշ գիծը: Այս երեք քարավանային ճամփաներն էլ սկսվում են Տիգրանակերտից, վերջանում Մուշով կամ հակառակը: Գլխավորը մեծ ճամփան է, որ անցնում է բուն Սասունից և Տալվորիկից: Հարավի մուտքը Սատանայի կամրջից է անցնում, որը վտանգի ժամանակ անառիկ և անանցանելի է դարձնում: Հյուսիսից՝ Մերգեմոզան (Շենիկի մոտ) կամ Սեմալի գծից, որը նույնպես բնական ամրություն է: Սասունում նոր ճանապարհ, նոր խճուղի գոյություն չուներ:

Տիգրիսի վերին ակունքները կազմում են Սասունի գետային սիստեմը: Գետերը կատաղությամբ հոսում են Տավրոս լեռներից դեպի հարավ՝ քանդելով և իրենց հետ տանելով քար ու ավազ կամուրջներ, դադարեցնում ամեն տեսակ երթևեկություն: Ամեն մի հեղեղումից հետո փայտե նոր կամուրջներ էին շինում: Տիգրիսի հյուսիսային ակունքների հեղեղումներին դարեր շարունակ դիմադրել և հաղթական կանգուն են մնացել Սատանի կամուրջը, Փրա Բաթմանը, Փրա Գերթոն, և մի քանի այլ ամրաշեն-կրաշեն-քարկամար կամուրջներ:

Սասունում քարավանային ճամփաները միշտ հեռու են գետահովիտներից, անցնում են բարձր սարերի լանջերով, նույնիսկ երբեմն գագաթներով (Ավխուարըկ, Սիմ կամ Կուրտըկ, Ծիրնկատար):


Մուշից Տիգրանակերտ քարավանային ճամփաների շինարարությամբ զբաղվում էին ըստ սահմանների: Երբ քարավանային ճամփան անցնում էր գյուղամիջով, այդ մասը տվյալ գյուղի բնակիչներն էին պատրաստում: Ամբողջ Սասունում, բացի որոշ հարթավայրերից, սայլ չի օգտագործվել և անհնար էր օգտագործել: Մոտիկ թե հեռու արտերից, արոտատեղերից և անտառներից բերքը, անասնակերը, փայտը գյուղ էր փոխադրվում շալակով կամ բարձկան եզների միջոցով, իսկ ձմեռ ժամանակ քաշանով կամ դահուկով սարերից սահեցնելով էին իջեցնում: Դահուկը քաշելիս սահում է ձյան և սառույցի վրայից մարդու ուժով, որով կրում են ընդհանրա-

պես անասնակերը: Դահուկ քաշողը **դահուկվոր** էր կոչվում, վայելելով ընտանիքի անդամների մեծ հարգանքը, և լավագույն ճաշը, որ հատկապես եփում էին դահուկավորի համար: Դա քաջալաշն է (տես կերակուրի և խմիչքի մասում):

Որպես գրաստ օգտագործվում էին բարձկան եզը, էշը, ջորին և սակավ դեպքերում՝ ձին: Ձին ընդհանրապես օգտագործվում էր հեծնելու համար:


Ոչ հղի կանայք տղամարդկանց հետ միասին ծանր աշխատանք էին կատարում: Նրանք նույնիսկ բեռ էին շալակում: Բայց դահուկի վարելը, արորով վար անելը և այլն, կանանց չէր թույլատրվում:

Ձմեռ ժամանակ անհետ կորած ճամփաների իզը (հետքը, տեղը) կամ բնակավայրերը բուք ու բորանի ժամանակ գտնելու համար աչքի ընկնող տեղերում «դեղվան»-ներն էին կանգնեցնում: Այդ դեղվանները հանդիսանում էին ուղեցույցներ կորած-մոլորված մարդկանց համար: Դեղվանները 1-2 մետր տրամագիծ ունեցող մի բազայի վրա քարերից շարված կոնաձև քարակույտեր էին, որոնք ունեին 2-3 մետր բարձրություն: Դրանք շինվում էին աչքի ընկնող բարձր տեղերում, որպեսզի ձյունը չծածկեր: Ընդհանրապես բուքն ու բորանը լիզում են բարձր տեղի դեղվանի շրջապատի ձյունը, որով նա միշտ բաց է մնում: Հաղորդակցությունները ձմեռ ժամանակ դառնում են վտանգավոր՝ մեծ թեքություն ունեցող լեռնալանջերից հանկարծակի սահող և դեպի ձորերն ու անդունդները իջնող ձյան հսկայական շերտերի հետևանքով: Սրանք տեղական բարբառով հուսիհ (ձյանսահանք) են կոչվում: Հուսիհը լեռների բարձունքներից սահելով, անցնում է երբեմն 5-6 կմ - ճամփա և քշում տանում ոչ միայն ձյունը, այլ երբեմն քերթում է լեռան կողերի հողերն ու քարերը: Հուսիհի թափից ճամփու վրա հանդիպած տները հատակից քշվում, տարվում էին: Հուսիհի ձյունը լցվելով ու դիզվելով ձորերում, երբեմն ճնփակ ձորեր էին կազմում: Դրանց առաստաղի տակից հոսում էին ջրերը: Տեղ-տեղ այդպիսիք 1-2 կմ երկարություն էին ունենում: Այդպիսի տեղերը կոչվում էին **ծիր** կամ **ձյունծիր** (կամար կամ ճնկամար), որոնք երբեմն մինչև հուլիս-օգոստոս ամիսները չէին հալչում: Մարդիկ գնում, ձյունը բերում էին տներում օգտագործելու՝ քանի կամ ջրի մեջ գցելով խմելու համար:



ա/ Դուլապով տախտակ պատրաստելը,
բ/ Խիզար, փոքր սրոց,
գ/ Ուղնուբաց
դ/ Ուրած /ուրաց/







Գրիգոր Հովսեփյանն /Մարգարյան/ Ահագչի գյուղում, մեջտեղում Գոմաշինարարությունը Սասունիկում, ներքևից Խոտի դեզերը Սասունիկում

Սասունցիները, լավ ծանոթ լինելով իրենց կլիմայական պայմաններին և ձմեռային արհավիրքներին, տնատեղ կամ գյուղի տեղ ընտրում էին այնպիսի վայրեր, որոնք հուսիկի ենթակա չէին: Ջրաղացները, որ ստիպված ձորում, ջրին մոտիկ վայրերում պետք էր շինել, ընտրում էին այնպիսի վայր, որ հուսիկի հավանական գալուց զերծ լինեին:


Լական.- Ասացինք, որ Սասունի լեռնաշխարհում 4-5 ամիս տևող ձմեռն ու ձյունը փակում են հաղորդակցության բոլոր ճանապարհները:


Հորդելը (մաքրել, թափել) ճամփա բանալու համար անհնար է, որովհետև 1-2 մ և նույնիսկ, որոշ տարիներում ավելի շատ խորությամբ ձյուն է գալիս: Մարդիկ կտրվում էին աշխարհից և իրարից ու մնում բանտային դրության մեջ, օրերով և շաբաթներով, իրենց դրացի և գյուղացիների հետ շփվելուց զրկվում, իսկ մոտիկ ու հեռու բնակավայրերից էլ՝ ամիսներով: Բայց բնության արհավիրքների դեմ պայքարող և ժայռերից սեփական աշխատանքով հաց վաստակող տոկուն և խիզախ բնակիչները դուրս էին գալիս այդ ճանապարհազուրկ դրությունից և ամեն ուղղությամբ շարժվում առանց ճանապարհի կարիք զգալու, որովհետև ձյունն իր ամբողջ մակերեսով, շնորհիվ լականի, ամեն ուղղությամբ դառնում էր հարթ ճանապարհ:

Հազար հարյուր տարի առաջ (851թ.) Թովմա Արծրունին նկարագրում է դեռ այն ժամանակ սասունցիների գործածած լականը, որ **փայտս** է անվանում. «Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն, որ այն ինչ յամպոցն ի վայր զեղծալ լինի հնարավորեալ իւրեանց փայտս, իբրև զանուրս չվանօք պարունակեալ շուրջ զոտամբք, դիւրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր»:[1]

Հավանաբար, IX դարից, Թ. Արծրունու դիտածից էլ շատ առաջ գործածվել է այդ փայտը և մինչև 1915 թ. էլ սասունցիները գործածում էին՝ **լական** կոչելով: Սասունի Գելիեգուզանի գյուղացի Հայրապետ Պետոյանը, որ շինել է մի զույգ լական և նվիրել Պետ. Պատմության թանգարանին (գույքամատյան № 3882), մեր խնդրանքով պատմեց լական շինելու ձևը:

[1] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 203-204:





Ա/ Լական, բ/ Աչկունք, ձմեռից աչքը պաշտպանելու համար:

Լականը շինում էին կարմիր ուռենու և դընդկի կոչվող 2-3 տարեկան ծառերի բներից, որոնց փայտը ճկուն էր, չէր կոտրվում և, ամրությունից բացի, թեթև էր: Փայտի երկարությունը 100-120 սմ է լինում, 4-6 սմ տրամագծով և կլոր, որ տաշելով վերածում էին մի տախտակի՝ 1 սմ հաստությամբ: Ստացվում էր մի քանոն, որը եռացող ջրում կակղացնում էին: Ապա գետնի վրա ցցեր էին խրում աջ ու ձախ ոտքերի հարմարեցումով, այնուհետև լականի տախտակը ցցերի դրսի և ներսի մասերում անցկացնելով՝ տախտակի հաստ երեսն ուղղում էին դեպի հատակը, լայն երեսը՝ դեպի ցցերի ներքին և արտաքին կողմերը: Լականի տախտակի

երկու ծայրերը բերում էին, իրար հասցնում և ծայրերն իրար միացնում: Աջ ոտքի լականի ծայրերն իրար վրա դրվող մասով աջ կողմն էին ընկնում, իսկ ձախ կողմինը՝ ձախ, որպեսզի ներսի մասում, ոտների արանքում չընկնեին, իրար չքսվեին և քայլքին չխանգարեին: Ցից-կաղապարների մեջ լականի տախտակներն ստացվում էին ութածև մի շրջագիծ, որի մատների և կրունկի կողմերի ամենալայն մասը կունենար 16-18 սմ երկարություն, ընդհանուր երկարությունը՝ 30-35 սմ և ներբանի միջնամասը՝ 12-13 սմ: Մի քանի օր լականի փայտը մնում էր կաղապարի մեջ, որից հետո հանում էին և սկսում շրջագծի վրա ավելացնել կապիչները: Այսինքն՝ կաղապարվածի քթամասում, կրնկամասում և ներբանի միջամասում, իրար դիմաց, սիմետրիկ ձևով, իրարից 3-4 սմ հեռու, վեց զույգ անցքեր էին ծակում շիկացած և բարակ շղով: Այդ 12 անցքերից անց էին կացնում վեց կանթ: Կանթերը շինվում էին կանեփի ամուր թելից: Մի զույգ անցքին ամրացնում էին մի կանթ, որ ուներ՝ 2-3 սմ երկարություն դեպի շրջանակի ներսի կողմը և մի օղակ էր հանդիսանում: Դրանով երկու կանթ առաջամասում, երկու կանթ կրնկամասում և երկու կանթ էլ ներբանի միջամասում:

Լականի շրջագծի ներսի ցանցը կազմող երեք ամուր փոկերը լիր էին կոչվում, որոնք պատրաստվում էին արջառների և եզների լիրերից (առնանդամներից): Երեք լիրերից մեկը ամրացվում էր ձախ լականի քթամասի ձախ կողմի և կրնկամասի աջ կողմի կանթերից: Մյուս լիրը՝ քթամասի աջ և կրնկամասի ձախ կանթերից, երրորդ լիրը ներբանի միջնամասի դեմ-դիմաց գտնվող աջ և ձախ կանթերից: Այսպիսով, երեք լիրերը ներբանի միջամասի լիրի միջնակետում իրար հատում են և այդ կետը հանդիսանում է միաժամանակ երեք լիրերից յուրաքանչյուրի համար միջնակետ: Լիրերի պատրաստման այս ճշտությունը հավասարաբաշխում էր լականի վրա ընկած ճնշումը, որով լականավորը չէր խրվում:

Լականն ուներ քթակապ կամ կամրջակ՝ կանեփի հաստ և ամուր թելից, որի մեջ լականը հագնողը մտցնում էր իր տրեխի, սոլի կամ կոշիկի քիթը, որն ամուր գրկվում էր քթակապի և լականի թելի պրկումով: Կրկնակապը կամ կրունկի կամուրջը նույնպես կանեփից շինած ամուր և հաստ թել էր, որ գրկում էր կրունկը և նրան ամուր կապում քթակապին և ապա՝ սրունքին:

Լիրերի միջհատման կետի վրա եղած անցքերը աչք էին կոչվում: Սրանցից անցնում էին լականավորի սրունքին ամրացվող լականի թելերը:

Քթակապ և կրնկակապ թելերը (կամրջակները) շարժական էին, ոչ մի բանի հետ չէին կարվում, միայն կապվում էին լականի թելի հետ և ընդունակ էին պրկվելու և թուլանալու, որով և հարմարվում էին մեծ կամ փոքր ոտքը պինդ բռնելու համար:

Ձմեռ ժամանակ, երբ ճամփաները փակվում էին, լականավորներն սկսում էին ճամփա բաց անել: Մառախուղի ժամանակ լականով ճամփա բացողները ձայն էին տալիս, գոռում, որպեսզի մոտիկ և հեռու տեղերից ձայն տան պատասխանելով՝ լականավորները ուղղեին իրենց դիրքը:

Լականավորները երբ վերադառնում էին տուն, լականները խնամքով մաքրում էին և կախում բուխարիկի մոտ, չորացնում: Լավ խնամքի շնորհիվ մի զույգ լականը մի քանի տարի գործածում էին:

Լական շինելն ամեն մարդու գործ չէր: Դրա համար հատուկ վարպետներ կային, որոնցից մի քանիսն այժմ ապրում են Թալինում և Աշտարակում:

Լականավոր որսորդները վայրի այծերին իրենց քարայրներից դուրս հանելով, ձմեռ ժամանակ հետապնդում և բռնում էին շնորհիվ լականների, իսկ վայրի այծերը խրվում էին ձյան մեջ և սարսափած նայվածքով ողջ-ողջ ընկնում որսորդների ձեռքը:

Աչքունքը հասարակ ակնոց էր ձյան փայլից և ձմեռթից ձմեռ ժամանակ աչքը պահպանելու համար: Աչքունքի ապակյա մասին փոխարինում էր սև թելերից հյուսված մի ցանց, որ բեկելով ձյան վրայից աչքին զարնող արևի ճառագայթները, աչքն ազատում էր ձմեռթից և նայվածքը չէր խանգարվում: Աչքունքի շրջանակները փայտից շինված օղակներ էին, որոնց վրա պինդ փաթաթում էին բրդե թելերը և ամրացնում: Ակնոցների զույգ թելերը ականջի վրայով անցկացնելով՝ իրար էին կապում գլխի ետևի մասում:

ՀԱՇԻՎ ԵՎ ՉԱՓԵՐ

Սասունցիները հաշվում են հետևյալ կերպ. մեգ, էրգուք, իրիք, չուրս, հինգ, վից, յոթ (Տալվորիկում՝ օր, ութ, ին, դաս, դասնումեգ, դասվերգու, դասվիրիք, դասնուչուրս, դասնուհինգ, դասնուվից, դասնույոթ, դասնուութ, դասնուին, քսան, էռսուն, քառսուն, հիթսուն, վաթսուն, եթմիշ, սաքսան, դողսան, հարիր):[1]

Հաշվումներում քսանորդական սիստեմը զգացվում է ոչ թե հաջորդաբար համրելու ընթացքում, այլ որոշ թվերի կրկնակներն առանձին վերցնելիս, հաշվելիս: Քառասունին, այդպիսի դեպքում, էրկու քսան են ասում, վաթսունին՝ իրիք քսան, ութսունին՝ չուրս քսան:

Իրեղենով հաշվելը կատարելու համար օգտագործվում էր թըզբին՝ համրիչը: Հովիվն իր հաշիվը պահում էր ընխր անելով (գիծ քաշել) իր մահակի վրա: Հաշվում էին մեկերով և ճուխտակով (զույգերով): Մեկերով՝ ընդհանրապես և վերացական հաշվումների ժամանակ, իսկ ճուխտակներով՝ կոնկրետ իրեր և անասուններ հաշվելիս: Հաշվումները երբ զավակների մաքսիմում թվին էր պատկանում, կոչում էին մարտապարտ (մարդաբարդ), այսինքն՝ տասներկու զավակ: Այսպես օրինակ, երբ ասում էին «մարտապարտը խաղավ», նշանակում էր, թե զավակների թիվը հասավ տասներկուսին: Սասունցիների մեջ «մարտապարտի» գերակատարումը սովորական էր:

Խոտի և տերևի (անասնակեր) հաշվումը լինում էր բարդերով (բարդ կոչվում էր երեսուն խուրձը): Անտառների և մարգագետինների մակերեսը բարդերով էր հաշվվում, այսինքն՝ քանի արդ խոտ կամ տերև էր ստացվում տվյալ տարածություններից: Սասունցի ոչ գրագետ բնակիչների կողմից հաշվումների բարձր աստիճանը հազարի սահմանն էր: Հազարի հասնող և ավելի բարձր հաշվումները ուսյալ մարդկանց գործն էր և նրանք էին կատարում:

---

[1] Քսանից հետո երեսուն և այլնի վրա 1-9 միավորներն ավելացնում էին, այսպես. քսանմեգ, քսանէրգու, քսանիրիք, քսանչուրս, քսանհինգ, քսանվից, քսանյոթ, քսանութ, քսանին, էռսուն, էռսունմեգ, էռսունէրգու, էռսունիրիք, էռսունչուրս, էռսունհինգ, էռսունվից, էռսունյոթ, էռսունութ, էռսունինը, քառսուն, քառսունմեգ...., հիթսուն, հիթսունմեգ..., վաթսուն, վաթսունմեգ..., եթմիշ, եթմիշմեգ..., սաքսան, սաքսանմեգ..., դողսան, դողսանմեգ..., հարիր, հազար և այլն:

Արժեքը որոշելու գործածական և տարածված միավորը անասունն էր հնում՝ մինչև 1900-ական թվականները: Փողի մուտքը և աշխույժ շրջանառությունը արժեքի միավոր դարձրեց ղուրուշը՝ քառասուն փարան և մեջիդիեն՝ քսան ղուրուշը, իսկ ավելի մեծ միավոր՝ թուրքական ոսկին, որ արժեր հինգ մեջիդիե և ութ ղուրուշ կամ 108 ղուրուշ:

Տոկոսով գործարքը հաշվում էին 1/4, 1/2-ով, այսինքն՝ մեկ մեջիդիեն մեկ տարի հետո 1/4 մեջիդիե՝ 5 ղուրուշ տոկոս, իսկ 1/2 տոկոսի դեպքում 10 ղուրուշ տոկոսով միասին վերադարձնել: Երբ մի տարի անցնում էր և տոկոսով փող ստացողը չէր կարող վճարել, տոկոսի տոկոս նույն չափերով հաշվում և գանձում էին: Սա վաշխառության բարձր տեսակն էր, որով աշխատավոր գյուղացին իր անասունն ու հողը ծախելով և պարտքը վճարելով սեփականազրկվում էր: Ռուբխուր (քառորդ ուտող) էին կոչվում այդ վաշխառուները կերած 1/4 (25 տոկոսի) համար:

Սասունում գործածվող ծանրության չափերն էին հոխան (օխա, օկկա), իր փոքր և մեծ ստորաբաժանումներով:

1. Մսխալը 1/3 տրամ է, կամ 0,83 գրամ:
2. Տրամը 1/400 հոխա (օկկա) է, կամ 3,1 գրամ:
3. Թուղթը 100 տրամ է կամ 310 գրամ:
4. Նուգին 200 տրամ է կամ 620 գրամ:
5. Հոխան (օխան) 400 տրամ է կամ 1240 գրամ:
6. Խիտրը (բաթման) 6 հոխա է կամ 7440 գրամ:
7. Խանքարը 40 հոխա է, կամ 49 կգ 600 գրամ:

Խանքարի փոխարեն, որպես կշռի մեծ միավոր, միշտ խիտր կամ բաթմանն էր օգտագործվում:

Հացահատիկը ընդհանրապես չէր կշռվում. երբ մեծաքանակ էր՝ խիտր, կամ բաթմանից բարձրը չափվում էր գոդ (կոտ), կես կոտ, չարիկ (չարեկ, մեկ քառորդ) և այլ հատիկաչափերով, որոնք շինված էին միակտոր փայտից: Կոտը երկու փթից կամ 32 կիլոգրամից մի քիչ պակաս է (մոտ 1,9 փութ է):

Քիլե (8 կոտ) և **շնիկ** չափերը Սասունում քիչ էին գործածվում: Բեռը որպես չափ եզների տանելու կարողությունն էր արտահայտում, նույնպես բեռ էր կոչվում որևէ գրաստի բարձելու չափը (ցորենի կամ այլ հացահատիկի), իսկ շալակը՝ մարդու կարողության համար եղած հացահատիկի չափն էր:

Ծանրությունների չափման համար գործածված կշեռքը կոչվում էր շահինկ, որը տեղական կշեռք էր նախնական ձևով շինված: Այն ուներ երկու թաթ, որոնք երեքական թելերով կախվում էին լծից: Շահինկը հայտնի էր նաև կիշեռք անունով:

Սասունում գործածվող երկարության չափերն ունեին նախնական ձևեր, միավորներ և անուններ:

1. Մատ՝ ցուցամատի երկարությունը մինչև 3-րդ հոդը (կոճակը):
2. Չորս մատ՝ իրար միացված չորս մատներից կազմված լայնքը:
3. Քիլ՝ բութի և ցուցամատի հնարավոր ամենամեծ բացվածքը, թզից պակաս երկարություն չափելու համար:
4. Թիզ՝ բութի և ճկույթի հնարավոր ամենամեծ բացվածքը՝ մինչև մեկ գազ եղած երկարությունը չափելու համար:
5. Գազ (կազ) 68-70 սմ երկարություն ունեցող, որը երկարության հիմնական միավորն էր կազմում:
6. Ուտք (ոտք)՝ ներբանի երկարությունը, կրնկից մինչև ոտքի մատների ծայրը: Այս չափը գործածվում էր երկարության թռիչքախաղեր խաղալու ժամանակ:
7. Շիք (քայլ)՝ սովորական քայլի բացվածքը, որ նույնպես խաղերի ժամանակ էր գործածվում որպես ոտքի ավելի մեծ չափ: Երեք ոտքը մի շիք էր:
8. Օրվա ճամփա՝ մի օրում մի մարդու քայլվածքով անցած ճանապարհը: Կա և կես օրվա ճամփա խոսքի գործածությունը: Ժամացույցի գործածության դեպքում՝ ժամճանապարհ:
9. Աչքադիս՝ (աչքատես) այն հեռավորությունն է, որի վրա աչքով կարելի է մարդը և անասունն իրարից ջոկել՝ տեսնել: Սարերը և հեռավոր վայրերը չափվում են աչքադիսով («մեգ աչքադիս, էրգու աչքադիս, իրիք աչքադիս»):
10. Թվընգը, գլուլը մըզիլ, այն հեռավորությունն է, ուր չախմալի հրացանի գնդակը կարող է հասնել: Հետագայում Մոսին և այլ հրացաններ մուտք գործելուց հետո մուսեռնու մըզիլ, չափլու մզիլ, թօփը մըզիլ և այլ չափեր էլ գործածվեցին:
11. Քարը մըզիլ, բարըշթու (պարսատիկ) մըզիլ կոչվում էր այն հեռավորությունը, որ ձեռքով կամ պարսատիկով նետվող քարը կարող էր հասնել:
12. Բարդի (ծառ), բաժ (մարդու հասակ) նույնպես որպես երկարություն, տվյալ դեպքում բարձրության միավոր էին գործածում: «Մեգ բաժ ծուն էգավ, էրգու բաժ էր հուսընի (ձյան սահանքի) հաստութիւնը»:

Մակերեսի չափի միավոր ընդունում և գործածում էին.

1. Կոտը՝ արմտիքի կշռման միավորից անցած: Արտի մեծությունը չափելիս ասում էին «Գես գողը գիխ է» (կես կոտ սերմացուի տեղ է), և այդպես մեկ կոտի, հինգ կոտի տեղ կամ կոտատեղ և այլն: «Գոդ և գես գորեգի դիխ է» (կոտ և կես կորեկի սերմ տանող հողամաս է):

2. Գալադիխ (կալատեղ) արտերի մակերեսի չափի համար էր գործածվում («Մեգ էրգու կալատեղ հող ունեմ»):

3. Բարդը (30 խուրձը) գործածվում է որպես խոտհնոցի (արոտավայրի) և սաթառի (անտառ) խոտն ու տերևը հաշվելու միավոր: («Մեգ էրգու բարդը դիխ խոտհնուց, իրիք-չուրս բարդը դիխ սաթառ» և այլն):


Ծավալի չափեր, փաստորեն, գոյություն չունեին, նրանց փոխարինում էին ծանրության չափերը: Հեղուկներ չափելիս կշռում և ասում էին. «Մեգ հոխա, մեգ բաթման գինի կամ ռաղը» (մեկ օկկա, մեկ բաթման գինի կամ օղի): Ձուրը, կաթը և այլ հեղուկ մարմինները ունեցած անոթներով՝ գադոշով (փայտե դույլ), ալբով (փայտե կամ հողե դույլ), նխրիկով (միջին մեծության պղինձ) էին չափում («էրգու գադոշ թան, մեգ ալբ մածուն, էրգու նխրիկ ճուր») և այլն: Երկրաչափական ձևերի գիտատեխնիկական չափումներ չգիտեին, բայց գործածում էին գոշա (անկյուն), իրիքգոշա (եռանկյուն), չուրս գոշա (քառանկյուն), շատգոշա (բազմանկյուն) և գլովառ (գունդ) անունները:

Գաճ (ղենչակ) գործածվում էր մանվածքեղենը չափելու համար, բայց միաժամանակ կշռվում էր, երբ նա չոր վիճակում էր և գործելու պիտի հատկացվեր: Փայտը, երբ վառելու համար էր գործածվում, չափվում էր շալակով, իսկ երբ շինարարության համար էր՝ քաշանով: Առվի ջուրը **ուրտ** ու **գորիով** էր չափվում: Ուրտը մի մատի հաստությամբ հոսող ջուրն էր, իսկ գորին՝ մոտ մի բահաբերան ջուրը: Արտերն ու խոտհարքները չափում էին չվանով (պարան): Արհեստավորների և տնայնագործների մոտ գազը, որին և հալաբի էին ասում, գործածության մեջ էր որևէ բան չափելու համար: Կշռաքարերի (օխա, նուգի, թուղթ) համար հաճախ գործածվում էր խանջարը (խանչալը), որ որոշ անփոփոխ կշիռ ուներ և ուշ էր մաշվում: Պետական պաշտոնական կշռաքարեր գրեթե գոյություն չունեին, այլ օխա կամ այլ կշռաքար՝ նուգի, թուղթ և այլն:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ՇԵՆՔԵՐ

Սասունում այրերը որպես տուն օգտագործելու երևույթ՝ գոյություն չուներ: Սակայն անասուններին, ըստ սովորության, երբեմն գարնան և աշնան ժամանակ արոտավայրերին մոտիկ այրերի մեջ էին պահում, և հովիվներն էլ այնտեղ էին մնում: Գետնափոր տներ էլ գրեթե գոյություն չունեին, իսկ կիսագետնափոր տներ կային. տան ետևի մասը փորվում էր, որովհետև տեղանքը լանջային էր, իսկ երկու կողքերի և ճակատի պատերը գետնի երեսի վրա էին կառուցվում: Հիմնականում տները գետնի երեսի վրա էին շինում: Տները քարաշեն էին, ոչ մի փայտաշեն տուն չկար, թեև փայտը, շնորհիվ անտառների, առատ էր: Չկային նաև աղյուսաշեն տներ:



Տներն ընդհանրապես մի հարկանի էին, սակայն 1900-ական թվականներից շատ տեղերում բազմաթիվ երկհարկանի քարաշեն տներ էին կառուցում, որոնք մի քանի բաժանմունքներ ունեին: Տան ընդհանուր մուտքից՝ դռնից մտնելիս փողանն է սկսվում. դա միջանցք է՝ մոտ 3 կամ 4 մ մակերեսով, որի ձախ կամ աջ կողմի պատի երկարության կեսից բացվում էր մի դուռ, որից մտնում էին բուն տունը: Սասունում ընդհանրապես թոնրատուն չկար, թոնրին փոխարինում էր օջախը, որին **թվեք** էին ասում: Սա գտնվում էր տան հարավային պատի երկարության միջին կետում, ուր պատը 50-58 սմ լայնությամբ մինչև **էրտածակն** (բուխերին) էր բարձրանում: Հիմնականում շենքերն ունեին **տուն, կուլին** և **փեթակներ** կոչված երեք բաժանմունք: Տների ճակատը՝ **բարը**, ընկնում էր հարավ և ապահովվում լույսով ու ջերմությամբ:

Տներն ընդհանրապես կառուցվում էին քառանկյունի, ճակատի մասը ավելի նեղ, քան կողքերինը: Տան ճակատի կողմի

բաժինը տունն էր: Միջինը փեթակների մասը և ետևինը՝ կուլինը: Ութը մետր ճակատի դեպքում տունը տասներկու մետր երկարություն էր ունենում: Տները բացառապես քարաշեն էին, հասարակ ցեխով շաղախված: Քարաշեն հաստ պատերն ունեին մոտ մեկ մետր լայնություն՝ առանց պատերի միջամասում բաց տարածություն թողնելու կամ հողով լցնելու: Այդպիսի հաստ և ամուր պատեր էին շինում նախ՝ սաստիկ ձմեռների ցրտից պաշտպանվելու և երկրորդ՝ ծածկի հաստ գերանների և հողի ծանրությանը դիմանալու համար: Երեքից-չորս մետր բարձրության պատերի վրա 7-8-10 մետր երկար և 60-80 սմ տրամագիծ ունեցող գերանների ծանրությանը դիմանալու համար պատերին մոտիկ, գերանների տակին հաստ և ամուր սյուներ էին կանգնեցնում: Գերանների վրա գցում էին նրանց ուղղահայաց 2-3 մ երկարությամբ կցակներ (փոքր գերան) մի գերանից մյուս գերանը հասնող: Կցակները իրարից որոշ հեռավորության վրա շարվում էին մարդակները, որոնց երկարությունը 80-100 սմ էր լինում: Մարդակները շարվում էին իրարից 5-8 սմ հեռավորության վրա: Մարդակների վրա աժախ կամ աճառ էին լցնում: Աժախը կամ աճառը անասնակեր տերևի ցախերն էին կամ հատկապես այդ նպատակի համար կտրված լողփի, կաղնու կամ ուռենու ճյուղերը, որոնցով մարդակները լրիվ ծածկվում էին: Դրա վրա հող էին «մանում»: «Հող մանելը» կատարվում էր այսպես. ծածկված կտուրի վրա, դեռ հող չլցրած, 8-10 տեղերում մոտ մեկական քառակուսի մետր բացվածքներ էին թողնում նորակառույց տան ներսում, հատակում կիտված և կտուրի համար պատրաստված հողը զբարայի եկող դրացիներն ու բարեկամները բահերով, տան հատակից 3-4 մետր բարձր կտուրի վրա էին գցում այնպես, որ տվյալ անցքերից անցներին դեպի կտուրը և թեքվեին, ընկներին կտուրի աճառի վրա: Մի քանի մարդիկ կտուրի վրա նետված հողը հարդարում էին ամբողջ կտուրի մակերեսում: Երբ հող մանելը (հող նետելը) վերջանում էր, 8-10 հողանցքերն էլ ծածկում էին մարդակ-աճառներով և հողով, որով ծածկվում էր կտուրը:

Այսպիսի ամուր ձևով կառուցում էին տների կտուրները, որոնք հարթ էին լինում, որոնց վրա շատ անգամ կալ էին անում: Նման ամուր տներ կառուցող վարպետներ կային ամեն գյուղում, իսկ հսկա գերաններն էլ անտառից քաշանով և մարդկանց ուժերով բերում բարձրացնում էին այդ լայնանիստ պա-

տերի վրա: Այդ աշխատանքը սոսկում էր ազդում՝ գերանների ծանրության և դժվարաշարժության պատճառով: Այդ աշխատանքը («գերան բերել» կամ «գերան վերցնել») էր կոչվում, որ միայն քաջ մարդիկ կարող էին կատարել: Մեծ հետաքրքրություն էր առաջացնում սարերի թեք կողերով, ձեղ ու ծուռ ճամփաներով այդ գերանները 50-60 հոգուց բաղկացած մարդկանցով ուսերով տեղ հասցնելը կամ լծկանով քաշելը:

Սասունի տները պատից բացված լուսամուտներ չունեին: Լուսամուտներ հանդիսանում էին էրտածակը (երդիկը), որ բուխերիկի վրա, կտուրի կամ ճակատի պատի միջին մասում էր բացվում: Էրտածակը կտուրի և պատի միացման կետում չորս քարով էր շինված, որոնցից երեքը կազմում էին էրտածակի երկու կողերն ու ետևի, դեպի կտուրի հողը: Իսկ չորրորդ սալաքարը, որ չափն էր հանդիսանում այդ էրտածակի, պառկեցվում էր մյուս երեք քարերի վրա և բարձր մնում պատից, որից բարձրանում էր բուխերիկի ծուխը: Այսպիսով կազմվում էր քարե քառակուսի բերան, որ միշտ բաց էր մնում: Ստացված այդ քառակուսի բերանի յուրաքանչյուր կողմը հասնում էր 50-80 սմ: Որպես լուսամուտ միայն հարավային կամ արևելյան պատերի վրա թողնում էին 2-3 շքաք (փոքր լուսամուտ), որոնք ձմեռ ժամանակ ծածկում էին ձիթած թղթով, կամ հազվագյուտ՝ ապակիով, որպեսզի լույսը թափանցեր:

Սասունում երկթեք կամ գմբեթավոր կտուրով տուն չէին շինում: Երկթեքն անհարմար էր «էրտիք հորդելու» (կտուրի ձյունը թափելու) տեսակետից: Իսկ գմբեթավոր տունը Սասունին հատուկ չէր, որովհետև թոնիր, թոնրատուն չունեին: Բացառություն էին կազմում Բռնաշենը և Հազզոն, որտեղ երբեմն լավաշ էին թխում: Այս տեղերում կտուրները գմբեթավոր էին:

Տների կտուրների որոշ մասերում, որտեղից ջուրը պիտի թափվեր՝ կուռան (ջրթափ) էին դնում, իսկ կտուրը տրորելու համար, որպեսզի անձրևից չկաթեր, լուղ կամ լողքար էին գործածում:

Օջախը, որի մեջ թխում էին հացը, իսկ վրան եփում բոլոր տեսակի կերակուրները, գտնվում էր տան հարավային պատի միջին մասում, պատի մեջ շինված, որտեղից բուխերիկն էր շարունակվում և ուղղաձիգ դեպի վեր՝ էրտածակի բերանով վերջանում: Օջախը շինվում էր կավից, որի երկարությունը կազմում էր մի կիսաաղեղ՝ բերանն ուղղված դեպի տան

հատակը, իսկ աղեղի գոգավորությունը բուխարիկի մեջ էր մտնում, տան հատակից 5-20 սմ բարձրության վրա: Օջախի ուղղաձիգ կանգնած լայնությունը 25-50 սմ էր, հաստությունը՝ 4-5 սմ: Օջախը նման էր մի քառորդ թոնրի, որ նախ իր երկարության վրա և տրամագծից վերից վար հավասար է կիսված, ապա իր հաստությունից՝ բարձրության կեսից է հատված: Այդպիսի բաժանումով մի թոնրից ստացվում է ուղիղ չորս իրար հավասար օջախ: Օջախներն էլ կավից էին շինում, թրծում և նոր դնում տեղը: Օջախի վրա դնում էին խաչերկաթ, կերակուր եփելու ամանը՝ պուտուկը, պղինձը, ծափկիկը: Օջախի հատակը թրծված էր կավից և կամ սալից (քար, որի վրա հաց էին թխում): Կրակը վառելով եփվում էր կերակուրը, տաքանում էին նաև թոնրի, օջախի աղեղնաձև լայն կողերը և հարթ հատակը: Հաց թխող կինը, թխելու պատրաստ խմորը գնդում էր և թևլաթով սրբելով օջախի տաքացած կողերը, բաց էր անում գնդած խմորը շրջանակածև մատնաքաշի ծավալով և փակցնում օջախի մի կողմից մինչև մյուս կողմը, կողերին, ուր թխվում էին հացերը, կարմրում ու հանվում: Գաթան ևս այդպես էին թխում: Իսկ այն գաթան, որ հավքուսի (ծալքավոր) էր կոչվում, թխում էին թոնրի հատակին՝ մակերեսի վրա փռելով բացված խմորը և ծածկելով մաղ-մաղ (մանր) կրակով: Որպեսզի հավքուսին կամ որևէ տեսակի հաց օջախի հատակում մաղմաղ կրակի մեջ չփոշոտվեր, ընկուզենու լայն և կանաչ թարմ տերևով ծածկում էին կրակի մեջ եփվող հացի երեսն ու տակը: Այդ տերևները, բացի հացը փոշուց ազատ պահելուց, գոլորշիները մեջն էին պահում, որով ևս թխվում և համեղանում էր հացը:

Օջախում հաց թխելիս թեժ կրակն ակիշով մի կողմի վրա էին տալիս, որ թխողի ձեռքը չայրվեր, իսկ երբ բարկ կրակը թուլանում էր և որևէ հաց լավ չէր թխվում, կրակն ակիշով նրա տակն էին տալիս և մյուսների հետ հավասար թխում:

Կորեկ հացը նույնպես օջախում էր թխվում, բայց միայն բոքկոնի ձևով: Սակայն կորեկի հացը տողով (բարակ բոկոն) թխելիս ավելի համեղ էր լինում: Դրա համար էլ կորեկի ալյուրը խմորպուտկի (խմորի պուտուկ) մեջ ոչ թե շաղում էին, այլ թանձր խյուս էին շինում, ապա շորով ծածկում և թողնում, որ խմորը թթվի: Երբ թթվում էր, օջախի կամ չորս հենակների՝ կուճըկի (քար) վրա դնում էին սալը, որ ուներ մոտ 40-60 քսմ -

կամ ավելի մեծ կամ փոքր մակերես: Սալը փխրուն մարմարից էր, հրակայուն, որի տակ կրակը վառում էին, տաքացնում: Վարպետ հացթուխը կորեկի ալյուրից մի պտղունց նետում էր սալի վրա և դրա կարմրելով ու կամաց այրվելով որոշում տաքացածության աստիճանը: Ապա խմորպուտուկը մոտեցնում էր սալին, քիչ փոշի լցնում սալի վրա, ավելով մաքրում սալի երեսը, ապա խմոր թաթիկով (փոքր, երկարապոչ շերեփ) կիսահեղուկ խմորը լցնում սալի վրա, խմորթաթիկի ուռուցիկ կողմով սալի վրա բացում, ցրում, ապա նրա կողքին երկրորդը, երրորդը, չորրորդը լցնում, ըստ սալի մեծության և թխում: Կորեկե այդ խմորի թխվելը երևում էր հացի մակերեսի վրա գոյացող պղպջակներից: Հացթուխը, հատուկ սալի ակիշով, կորեկի տողերը (հացեր) շուռ էր տալիս՝ ակիշի սուր բերանը մտցնելով տողի տակ, տողն առնում ակիշի վրա, շտապ և ճկուն շուռ էր տալիս սալի վրա, որով և մյուս կողմն էր սկսում եփել: Այսպես նայում և շուռ էր տալիս բոլոր տողերը և եփածներին ակիշով վերցնում ու ափսեի կամ հացի համար հատուկ գործած եղեգնյա խսիրի վրա գցում: Վերցված-թխված տողի տեղը խմորթաթիկով մի ուրիշ տողը դրվում էր թխելու համար և այսպես՝ մինչև որ խմորպուտուկի խմորը վերջանար և մնար միայն մի թաթիկ (փոքր շերեփ) թթխմորի համար:

Տան օջախի հակադիր պատի աջ կողմի անկյան հատակի վրա լողանալու տեղն է լինում՝ «բաղնիսը», որտեղից ջուրը պատի մեջ եղած անցքից դուրս է հոսում: Երբ այդպիսի տեղ չէին շինում, գոմում էին լողանում:

Տանը սաքու շինելու սովորություն չկար: Սաքուն շինում էին գոմի մի պատի երկարությամբ, ուր ապրում էր անասուններին խնամողն իր կին-երեխաներով: Այդ սաքուն կառուցվում էր նաև իբրև օդա, ուր հավաքվում էին ժամանցի:

Տան առաջ, պատշգամբի փոխարեն, շինում էին կալատուն, որի կտուրի բարձրությունը հավասարվում էր տան հատակի մակերեսին: Կալտունը երկարում էր տան ճակատի պատի ամբողջ երկարությամբ, որը մի չարդախ էր, ետևի և երկու կողքի պատերով, իսկ ճակատի մասն առանց պատի, սյուների մի շարով: Կալտունը ծառայում էր ձմեռ ժամանակ որպես անասունները կերակրելու տեղ, իսկ կտուրը՝ ընդարձակ բակ:

Տան դուռը միշտ ճակատի պատումն էր բացվում: Դուռը միշտ մի փեղկանի էր, երկու-երեք կամ ավելի հաստ տախտակ-

ներով շինված: Դռան բարձրության կեսից անցնում էր գոտին: Դուռը ծածկելիս գոտին կիպ կպչում էր դռան կողքերի շրջանակին (չարչիֆային): Գոտու հաստությունը 4-5 սմ էր, լայնությունը՝ 5-7 սմ: Գոտին դռանը մեխվում էր 12-15 սմ երկարությամբ և շրջանակածև ուռուցիկ գլուխ ունեցող մեխերով, որոնց գլուխները դռան արտաքին մասում էին ընկնում, իսկ ծայրերը դռան ներսի մասում և ծալված ու ծայրով դռան մեջ մխված: Դուռը բացվում էր դեպի տան փողանը: Նրա շրջանակի վարի մասը կոչվում էր **շեմը**կ, իսկ շեմընկի երկու ծայրերից ուղղածիգ բարձրացող մասերը, որ դռան աջ և ձախ կողմում պատի մեջ ամրացվում էին, կոչվում էին **շեմկալ** (շեմը բռնող): Շեմընկի և նրա հակադիր շրջանակի երկու գլուխներում, պատերին կպած մասերում, քևի հաստությամբ կլոր և 5-6 սմ խոր փոսեր էին, որ կոչվում էին ջխան (ծխնի): Ջխանների մեջ մտնում էին դռան երկու **բոջրակները**: Ջխանները հանդիսանում էին հենման կետերը, որոնց վրա հենվելով և նրանց անցքերում մտած բոջրակները, դռան պտույտն իր առանցքի շուրջ ապահովում և ամրացնում էին: Դրանք իսկ և իսկ նման են այն քարե դռներին, որոնք իրենց ծխնիի շուրջը պտտվելով՝ բացվելիս և գոցվելիս են եղել: Հետագայում, երբ երկաթյա ծխնին մուտք գործեց Սասունում, հետզհետե ջխանն ու բոջրակը պակասեցին, բայց երբեք չանհետացան մինչև 1915 թվը:

Դռան փակը երկու տեսակ էր. մեկը **սողնակ** էր կոչվում, մյուսը **գրիրա** (հավանաբար կրիա բառից, որովհետև սասունցիները կրիային գրիրա էին ասում, իսկ այդ փակն իր կառուցվածքով նման է կրիային): Սողնակը գլանաձև մի փայտ է՝ 10-12 սմ տրամագծով և դռան լայնքից մեկ և կես անգամ երկար: Սողնակը դռան բարձրության կեսի վրա, պատի աջ և ձախ կողմում, հատուկ իրեն համար շինված անցքում ազատ շարժվում և ծառայում էր դուռը փակելուն: Երբ դուռը ծածկելուց հետո սողնակի մի գլուխը պատի աջ և մյուս գլուխը պատի ձախ անցքում էր մտցվում, արդեն փակվում էր:


Գրիրեն կրիայի պատյանի մեծությամբ և նրա ուռուցիկ ձևով մի փայտ էր, որի, դեպի դուռն ամրացվող երեսը հարթ էր և չորս անկյուններին մոտիկ չորս անցքեր ուներ: Սրանցով մեխվում էր դռանը: Այդ հարթ երեսի միջին մասում, հորիզոնական ուղղությամբ 3-4 սմ կամ ավելի լայն և նույնքան խոր փոս էր փորվում գրիրայի ամբողջ երկարությամբ: Դրա միջից

սահելով աջ ու ձախ շարժվում էր ատամնաձև մի փակ, որին շարժելու համար դռան ներսի կողմից մի փայտիկ էր ամրացված. դա հորիզոնական շարժումով փակում կամ բաց էր անում կրիային, իսկ դռան դրսի կողմից կրիայի ատամնաձև փակի դիմաց բացվող անցքով և ատամների համապատասխան ձևով շինված փայտյա մի **պալիքով** (բանալի) դուռը բացում և գոցում էին: Գրիրայի ատամնաձև փակը դեպի աջ շարժելով փակում, դեպի ձախ՝ բացում էր փակ դուռը:


Կանանց, ամուսնացած տղաների և հյուրերի համար առանձին տեղեր գոյություն չունեին: Բայց կուլհին կոչվող բաժնում միայն նորապսակների համար տեղ էին սարքում, ուր նրանք գիշերում էին: Եթե նորապսակներ չկային, կուլհնում գիշերում էին ամենաուշ ամուսնացողները: Օջախը գտնվող տեղում, օջախի աջ և ձախ կողմերում, դրա դիմացի փեթակների առաջ, հատակի և առզելների (թախտի) վրա ամուսիններն իրենց երեխաներով քնում էին: Ընտանիքի անդամներն ունեին իրենց հատկացված տեղերը, որ միշտ անփոփոխ էր մնում: Երբ պատվավոր հյուր էր գալիս, նրան օջախին մոտիկ տեղում էին քնեցնում:

Մառան - կուլհինը տան ետևի մասն էր կազմում: Այնտեղ պահում էին բոլոր տեսակի մթերքները՝ յուղը, թանհատը (շոռ, ժաժիկ), թթուն, մրգեղենը, ղավուրման և բոլոր սննդամթերքները: Կուլհինը կազմվում էր տան ետևի պատից, փեթակներից և տան երկու կողմերի պատերից, որոնցից մեկը և փեթակի միջի բացվածքը՝ հատակից առաստաղ, առանց հատուկ դուռ ունենալու: Կուլհինն, ուրեմն փակի տակ չէր, բայց այնտեղ մտնելու և մթերք բերելու պարտականությունը կատարում էր տանտիկինը:

Գոմը տանից որոշ հեռավորության վրա էր գտնվում և առանձին՝ երբ ոչխարները շատ լինեին, իսկ քիչ լինելու դեպքում տան կից էին լինում և՛ գոմը, և՛ ախոռը: Գոմն ու ախոռը, ըստ կառուցվածքի, ձևի, նույնն էին, ինչ որ տունը առանց կուլհնի և փեթակների բաժնի: Գոմի օջախն էլ կրակ վառելու համար նույնն էր, բայց ոչ հաց թխելու համար: Գոմն առանձին շինելիս մոտիկ էին անում այն սաթառին կամ անտառին, որից անասնակեր տերև էին կտրում, գազ հանում և խոտ քաղում: Ախուռը (ախոռը) գրեթե միշտ տանը կից էր լինում, ուր պահվում էին էմակտար (վաստակավոր) եզները և կովերը: Նույնիսկ մոզիներին երբեմն գոմերում էին պահում եզներին և կովերին չխանգարելու համար:




ա




բ

Ա/ Նորաշեն տան արտաքին տեսքը, նածկի հևքը։ բ/ Տան պլանը՝ 1. տունը, ուր գտնվում է թվենքը կամ օջախը. 2.փեթակը /ամբարը/ տարնի և ալ,ուրի, 3.կուլինը, ուր պահվում են բոլոր տեսակի մթերքները, 4.Լվացքի և լողանալու տեղը, 5.կերտաշրի ելքի տեղը, 6.կժտունը, ուր խմելու ջրի կուժն է դրվում, 7.Տան դուռը՝ մուտքը, 8. թվենքը կամ օջախը, ուր հացն են թխում՝ կողերին և կերակուրը՝ օջախի վրա, 9.էրտածակ /բուխերի/, 10. սյուները։




ա

Տան մուտքի դուռն իր գրիրա /կրիա/ կոչված փականքով:



ա



բ

Ա/ Գրիրան իր մասերով. 1. գրիրա, 2. սողնակ, 3. պալլի /բանալի/, Բ, Աղադ, ցանկապատ տանը և գոմերում միջնորմ ստեղծելու համար:

Քիչ ոչխարեղեն ունեցողներն էլ իրենց գոմերը տանը կից էին անում, բայց ախոռից կամ եզ ու կովերի գոմից առանձին. այդ դեպքում մոզիները եզների և կովերի քով էին պահում՝ ոչխարներին չնեղելու համար: Նորածին ուլ և գառների համար աղադով առանձին մի անկյուն էին կտրում, առանձին պահում:

1900-ական թվականներից սկսած սասունցիներն սկսում էին երկհարկանի քարաշեն տներ կառուցել, երբեմն սրբատաշ քարերով: Այդպիսի տների գրեթե ամեն գյուղում կարելի էր հանդիպել: Տների շքաքները (փոքր լուսամուտները) իսկական լուսամուտների էին վերածվում, կուլտուրական տեսք ստանում մանավանդ 1908-1914 թվականներին:

Մինչև 1900թ.թ.-ը տան լուսավորության համար, կտուցավոր հողե ճրագներում յուղ կամ ձեթ էին լցնում, որում լողում էր պատրույգը, այրվում, լույս տալիս: Յուղի ճրագին հաջորդեց նավթի ճրագն առանց ապակու և վերջապես լամպն ապակիով: Յուղի, նավթի ճրագները և նավթի լամպերը տան ճակատի կողմի պատին (ներսի մասում) էին դրվում, ճրագդիրում, որ շինված էր և պատից կախ տրված, որով ամբողջ տունն էին լուսավորում:

Մարագը կառուցվում էր կալին մոտիկ: Երբ կալը տան կամ գոմի կտուրն էր, մարագը տան կամ գոմին էր կից, իսկ երբ կալը տնից քիչ հեռու էր լինում, մարագն էլ այնտեղ էր կառուցվում՝ հարդը և այլ անասնակերերը տեղում պահելու համար: Մարագի կառուցվածքը, թեև հասարակ և անշուք, բայց տան ձևի էր, այն տարբերությամբ, որ մարագը գետնափոր մաս ուներ, խորունկ էր, որպեսզի շատ անասնակեր տաներ, որովհետև խոտն էլ մարագում էին տեղավորում, դեզերը ձմռան սաստիկ քամիներից, գողությունից ազատ պահելու համար: Շատ խոտ ունեցողները դիզում էին դրսում:

Բակերը բաց էին լինում: Հազվագյուտ էր փակ բակ ունենալը, այդ դեպքում նրա ցանկապատը քարե պատից էր լինում, որի մի մասից դռան տեղ էր թողնվում և մի աղատ կամ ծպիղով փակվում: Ծպիղը ուռի կամ այլ ճյուղերով գործած դուռ էր, որ դնում էին այդ բացվածքի վրա և փայտյա մի երկար ձողով կամ քարով ամրացնում: Այդպիսի բակերում աշնանը և գարնանը, գիշեր ժամանակ պահում էին անասուններին:

Կալին կից կար նույնպես կալտուն: Եթե տան առաջի կալտունը ծառայում էր որպես անասուններին ձմեռ ժամանակ կերակրելու տեղ, ապա կալի քով սարքված կալտունը ծառայում էր կալը, նրա ծեծված կամ չծեծված քուլաշը անձրևներից պաշտպանելու համար: Այն ծառայում էր նաև կալվորներին իբրև հովասուն հանգստատեղ:

Աթարանոց գոյություն չուներ, որովհետև անասունների աղբը աթարի վերածելու սովորություն չկար՝ շնորհիվ վառելափայտի առատության: Աղբը իբրև պարարտանյութ էին օգտագործում:

Տները զուգարաններ չունեին: Գյուղացիք իրենց բնական պետքերը հոգում էին բացօթյա տարածությունում, տներից հեռու բնության մեջ:

Չքավոր, միջակ և հարուստ տնտեսությունների բնակարանների և տնտեսական շենքերի ձևի ու կառուցվածքի մեջ տարբերությունն այն էր, որ մեկը քիչ թե շատ բարետես և մեծ էր, իսկ մյուսը՝ փոքր ու աղքատիկ:

Շինության համար «բախտավոր» և «անբախտ» տեղերի հավատալիք կար: Երբ մի տեղ փոքր երեխաները կամ անասունները չէին ապրում, տան աճը պակասում էր կամ չէր ավելանում, այդպիսի տեղերից դուրս էին գալիս, տեղափոխվում այլ տեղ և նոր տուն կառուցում: Ընդհակառակը, երբ մարդկանց և անասունների աճը լավ էր լինում, հիվանդություններն ու վնասները քիչ, այդպիսի տեղերը «բախտավոր» էին համարվում: Այդ սովորությունը սասունցիները պահպանում էին նոր գաղթավայրում: Աշտարակի շրջանի Սասունիկի գյուղացի Համբարձում Մանուկյանն իր տնատեղը փոխեց, նոր տեղ ընտրեց, տուն շինեց, որովհետև իր զավակներից երկուսը մահացան փոքր հասակում, իսկ ինքն էլ երազում տեսել էր, թե իբր մի «սուրբ» պահանջում էր դուրս գալ այդ տերիտորիայից:

Հասարակական մեծ շինությունների և քարակամար կամուրջների հիմքում կենդանի մարդ դնելու և պատի հետ շարելու մասին ավանդություններ կային:

Տան **բարաքաթը** պահողը, հավատալիքների համաձայն, հանդիսանում էր այն մարդը կամ կենդանին, որին ընկել էր Նոր **տարու դաուլաթի** նշանը (Նոր տարվա **դըմուզը** - խոշոր երկաթաքարի մեծության հացը բաժանելիս): Այդ նշանը լինում էր մի մատանի, մի կոճակ կամ նարդու զառի չափ մի փայտիկ:

Այդ բարաքաթը լինում էր նաև տան օձի մեջ, որը բնակվում և մաև էր գալիս այդ տանը՝ առաստաղում, դիտում բնակիչներին, երբեմն էլ իջնում հատակին մաև գալիս: Այդպիսի

տան օձերին ոչ-ոք չէր խփում, չէր սպանում (տե՛ս ավանդությունների բաժինը՝ օձերի մասին), ընդհակառակն՝ հոգ էին տանում, որ տնից դուրս չգար:

Օջախի կրակը սրբություն էր համարվում: Երդվում էին «Քու տան օջախի կրակը վկա», «Կրակը խեր ու բարաքեն»: Կրակն անշեջ էին պահում: Գիշեր ժամանակ **անթխոց, անթխակալ** էին դնում օջախի կրակի մեջ, ծածկում կրակով, որով մինչև առավոտ անթխոցը (փայտի կոճղը) դանդաղ այրվելով պահում էր կրակը մինչև հաջորդ օրը՝ դրանով օջախը վառելու: Կրակի այդ պաշտամունքն արտահայտվում էր նոր տուն շինելիս, ուր հին օջախից՝ **ասլ օջախից** (իսկական օջախից) կրակ էին վերցնում, նոր օջախը նրանով առաջին անգամ վառելու համար: Օջախը սուրբ էր համարվում և օջախով երդումը ամենամեծ երդումն էր:

Շենքերից էր և ջրաղացը, որն իր կառուցվածքով հարթ կտուրով, քառակուսի մի շենք էր: Դրա ճակատի պատի տակից դուրս էր գալիս ջուրը, իսկ ետևի պատի տակից ջուրը **նավտանից** ուժեղ խփում էր ջրաղացի **փառի** (անիվի) թաթերին, որոնք արագ թափով պտտվելով՝ պտտեցնում էին ջրաղացաքարի ուղղաձիգ կանգնած սռնին: Սրա մի ծայրը ջրաղացի վերին քարի կացնին էր ամրացվում, իսկ մյուսը ծայրը՝ փառ թոփի մեջ: Ջրաղացի երկու քարերից վերինը «վերի քար», իսկ տակինը՝ «ներքը քար» էին կոչվում: **Դաուլ** էր կոչվում այն ամբարը, որի մեջ լցվում էր աղացվելիք ցորենը: **Էշ և իշավոր** կոչվում էին այն հենակները, որոնցով վերի քարն էր բարձրացնում դրելու (դրով կռանելու) համար: Չախչախիկ էին կոչվում 3-4 տախտակները, որոնք թաթի մեծությամբ իրար վրա էին դարսում, տակի փայտիկը պտտվող ջրաղացքարին կպչելով՝ չախչախ ձայն էին հանում, որով կանոնավորվում էր ցորենի հոսքը դաուլից ջրաղացի քարի ծակի մեջ: Թաթ կոչվում էր այն թաթաձև փայտը, որի մեջ ամբարից ցորենն էր լցվում, հետզհետե թափվում քարի ծակից և աղացվում: Ջրաղացի տակի քարի շուրջը հավաքված ալյուրը կոչվում էր զամպ կամ պատալուր (կողքի, պատի ալյուր):

Ջրաղացներում, ըստ ավանդության, ապրում էին չար և բարի ոգիները: Երգանքը փոքր աղաց էր տան մեջ: Դինգը, որ մի եզով էր պտտեցվում, շինվում էր ջրաղացի մոտ:

Նոր տուն կամ խուղ (հյուղակ) տեղափոխվելիս նոր ճաշ էին եփում ջաջառուն և նրանից բոլորն էլ ուտում էին (տե՛ս -

կերակուր և խմիչք բաժինը): Այդ ջաջառունից հրամցնում էին նաև հարևաններին և բարեկամներին:

Տունը չար աչքից պահելու միջոցառումներ էին՝ «Վերի այծի», «էմակդար եզան» գանկերը կախելը տան դռան կամ գլխավոր ճակատի պատից, պայտի կտոր մեխելը շեմքկից կամ շեմկալից (դռան չարչիֆայի վերին մասից), կարմիր ներկած ճվի կեղևները ծեփի կամ թրիքի վրա ամրացնելով՝ դռան վերևի ճակատին կպցնելը և այլն: Նոր տուն փոխադրվելիս կամ ամառները զոզան (սար, ամառանոց) բարձրանալիս մատաղ էին տանում և բաժանում, որ նոր օջախը բարի և բարաքաթն անպակաս լիներ:

Շենքերի ձևերի և կառուցման եղանակների մեջ փոփոխություններ մտել են շնորհիվ այն շփման, որ տեղացիներն ունեցել են Մշո, Տիգրանակերտի, Դիարբեքիրի և Հալեպի հետ:

Ազգաբնակչությունն իր զգեստներն ու այլ իրերը պահելու համար գործածում էր սնտուկ և խուտիկ կոչված արկղները: Սրանք շինվում էին փայտից և զարդարվում էին: Այդ սնտուկ և խուտիկները տեղական վարպետների ձեռքերով էին պատրաստվում:

Նստելու համար պատրաստվում էին աթոռներ, որոնց բարձրությունը 25-40 սմ էր լինում: Աթոռն ուներ թամբի, ավելի ճիշտ՝ գրակալի ձև, որի թևերն անշարժ էին: Այդպիսի քուրսիները, որոնց ամենաբարձր մասը մարդու ոտքից ցածր էր, հարմար և հանգիստ նստելածև էին տալիս: Ճաշի սեղանը, սինին կամ թեփսին աթոռների բարձրությունն ունեին. ընդհանրապես կլոր, երբեմն քառակող, որի վրայից տան հատակին նստողն էլ հանգիստ կարող էր ճաշել առանց ծգվելու: Քնելու համար, որպես մահճակալ ունեին առզել (թախտ), որի բացակայության դեպքում գետնի վրա խոտ կամ գլգլի եղեգից գործված խսիրի վրա փռում էին թաղիքը կամ անկողինը և քնում: Այդ կահույքը շինում էին գրեթե ամեն մի տան մեջ գտնվող վարպետները: Տնային ամանեղենները շարում էին ռաֆերի (տախտակե դարակներ) վրա, իսկ գդալները փոքրիկ կողովի կամ գդալանոցի մեջ, որ կախվում էր կուլիճի պատից: Իսկ մեծ պղնձե և հողե ամանները դնում էին գիմերի (խոտից հյուսվածք) վրա, որոնք շինվում էին ըստ ամանի մեծության և դրվում էին կուլիճի հատակին, պատի եզերքին կողք-կողքի շարելով: Անկողինն ու վերմակները օջախի աջ կամ ձախ կողմի տան անկյունում շինված

առզելի վրա էին դարսում: Այդ առզելները երբեմն կապում էին սյունից-սյուն և անշարժ դրությամբ:

Տան ջեռուցումը կատարվում էր օջախով. մեծ-մեծ փայտի կոճղեր դնում էին օջախի մեջ և վառում, թեև ջերմության մեծագույն մասն էրտածակից դուրս էր գնում: Օջախի բոցն ու կրակը ոչ միայն տաքացնում, այլև լուսավորում էին: Օջախում վառվող փայտերից ստացված թեժ կրակն առաջ էին քաշում քիչ դեպի տան հատակը, որ օջախի բերանն էր, որով տունն ավելի լավ էր տաքանում: Մարդիկ կիսաշրջանաձև նստոտում էին օջախի շուրջը և տաքանում: Օջախի հնագույն գոյության շրջանից մինչև 1900-ական թվականներն էլ ընդհանրապես տունն այդպես էին տաքացնում:

Փայտը առանց կոտորելու պահում էին տան փողանում և առանց կոտորելու դնում օջախի մեջ, որից երկար և հաստ փայտերը ձգվում էին օջախի առաջ, տան հատակի վրա, իսկ հետզհետև վառվելով՝ մնացածը հրում էին դեպի օջախը, վառում մինչև վերջին ծայրը: Օջախը վառ պահելու պարտականությունը տանտիկնոջ վրա էր ընկնում, որին օգնում և փայտ էր բերում նոր հարսը, իսկ մեծ փայտերը բերում էին տղամարդիկ: Միայն 1900-ական թվականներից հետո, Սոբան (թիթեղյա վառարան) մուտք է գործում Սասունում, որում միայն և միայն փայտ էին վառում:

Փուշին ընկուզենի ծառերի բների վրա աճող մի մակաբույծ սունկ է, մեծ ու փոքր տեսակներով: Այդ սունկը, որ հասնում էր, քաղում էին, փոշեջրի մեջ եփում և ապա չորացնում, ստացվում էր պատրույգանման շուտ բռնկվող մի նյութ: Այդ նյութից մի փոքրիկ մասնիկ պոկում էին և չախմախի քարի վրա դնում: Չախմախի կայծերից փուշին բռնկվում էր և փչելիս բորբոքվում, որով և մի շորի կամ չոր խոտի մեջ դնելով վառում, կրակ էին ստանում: Լուցկու գործածության հետ միասին չախմախն ու փուշին նույնպես գործածության մեջ էին մնում:

Մեղրամոմից շինված մոմը, որ Ֆընդ (կծիկ, գործվածք) էր կոչվում, մարագը, կուլինը, գոմն ու ախոռը լուսավորելիս էին գործածում: Ֆընդը միայն մեղրամոմից էր շինվում: Դա մի բարակ և 4-5 մետր երկար պատրույգ էր, մոմապատելուց հետո հատուկ ձևով գրպանի համար գործված և ուզած ժամին, հատկապես քարայրներ մտնելիս, վառում ու լուսավորում էին: Երագներով և լամպերով լուսավորում էին բուն տունը մինչև

փեթակի բաժանմունքի ճակատը: Երագդիրը ճրագի տեղն էր: Փեթակի ետևի մասը և կուլինը խավարի մեջ էին մնում. կարիք եղած դեպքում այնտեղ մոմ կամ ճրագ էին պահում:

Տան փեթակներ բաժանմունքը, փաստորեն, ոչ թե բնակարանային առանձին բաժանմունք էր, այլ ամբարների շարքը: Փեթակը շինվում էր կամ սոսկ կավից, կամ ճյուղերի գործվածքից՝ կավով կամ գոմաղբով ծեփելով: Փեթակները լինում էին խորանարդաձև, 10-12 խմ ծավալով, որոնց մեջ պահվում էին տարեկան աղունը (ալյուրի պաշարը), հացահատիկը և սերմացուն: Փեթակների կլոր և ճյուղերով շինվածը պլոլ էր կոչվում: Առաստաղին մոտեցող դրանց բերաններից լցնում էին ալյուրը, հատեղենը և փալասով կամ «Ծպիղներով» (ճյուղերով գործվածք) ծածկում, իսկ հատակից 20-30 սմ բարձրության վրա փեթակի կամ պլոլի դուռն էր, որ փակվում էր փոքրիկ դռնակներով և բացվում ու փակվում վեր-վար շարժելով:

Տան կաթսաներն էին՝ պղինձը, նխրիկը (փոքր պղինձ), էղտանը (յուղ հալեցնելու պղնձե աման), թասը (ջուր խմելու պղնձե աման): Դրանք ներմուծվում էին մոտակա քաղաքներից՝ Մուշից, Տիգրանակերտից, Հազզոյից և Փասուրից: Կավամաններն էին՝ պուտուկը (հողե մեծ աման կերակուր եփելու համար), ծապկիկը, պուտուկից քիչ փոքր, մակրդմանը՝ ոչ խոր պուտուկ հատկապես կաթը եռացնելու համար, փուչուկը (հողե կճուճ), թաբախիկը (հողե ծանծաղ պնակ), քասան (հողե խոր պնակ), խլուջիկը, որ փոքր փուչուկ էր մածուն լցնելու և աշխատանքի վայրը ուղարկելու համար: Խուփը ընդհանրապես հողե կափարիչն էր, կուժը, բըղբըղկը (կուլա, սափոր), չոկլիկը: Հող-կավյա այս ամանները տեղում թեև պատրաստում էին, սակայն ընտիր տեսակները բերում էին Մշո դաշտի Գոմեր, Քարծոր, Խզլաղաջ գյուղերից:

Փայտյա ամաններն էին հողե գադոշը՝ կաթ կթելու համար, կուշը (գուշ), խըլը (փոքր գուշ կամ տաշտ), ալբը (փայտյա դույլ՝ մեջը կաթ կթելու համար), չոգիգը (շերեփ), թաթիկը երկար պոչով շերեփը, գդալը, պուտիկը (բութիկ) փոքր գդալ, կաղըկը փայտյա բաժակ՝ շերեփաձև թաթով և կանթով թեփսիին (մեծ շրջանաձև ափսե), ալբ (կոտ, հատիկաչափ):

Երկաթե պարագաներն էին՝ խաչերկաթը, ակիշը, գասկարան, ակշթաթը, թաթիկը, շիշը, որոնք ծանրությունը պահելու, աման քերելու և այլ նպատակների համար էին շինվում:

Եղջյուրից շինվում էր օձնուց, որի մեջ յուղ էին պահում գործիքներ սրող հեսանին քսելու համար: Այս բոլոր տնային իրերն ու ամանները, բացի պղնձեղենից, տեղական վարպետներն էին պատրաստում: Ամանները պղծված էին համարում, երբ շունն էր «լըկում» (լիզում): Այդպիսի ամանները մաքրվում էին՝ մեջը կրակ լցնելով կամ մեռոնջրով ողողելով:

2. ՁԳԵՍՏ ԵՎ ՁԱՐԴ

Տղամարդիկ և կանայք նախքան ամուսնությունը և ամուսնությունից հետո տարբեր ձևի զգեստներ էին հագնում: Հասակավորների, ծերունիների և պառավների հագուստներն էլ որոշ փոփոխության էին ենթարկվում: Ընդհանրապես վերցրած, Սասունի ազգաբնակչության տարազը տարբեր էր նույնիսկ մյուս նահանգների տարազներից. միայն որոշ նմանություն ուներ Մոկսի և Շատախի տարազին: Վերջիններս հավանաբար Սասունից են գաղթել: Այդ են վկայում մանավանդ «Սասունցի Դավիթ» էպոսի տարբերակների նմանություններն ու բարբառները:

Չքավորի ու հարուստի առօրյա և տոնական զգեստի մեջ տարբերությունը ոչ թե նրանց ձևի, այլ էժանագին կամ թանկագին լինելու մեջ էր:

Տղամարդկանց հագուստների անուններն են՝ շապիկ և թումպան (վարտիք): Շապիկն իր թևերի վերջավորության վարի երկու մասերում ուներ **բոչալա** (թեզանիք)՝ 40-50 սմ երկարությամբ, արմատում 5-10 սմ լայնությամբ, սրածայր վերջավորությամբ: Աշխատանքի ժամանակ բոչալաների ծայրերն իրար էին կապում և գցում ծոծրակի վրա, որով շապիկի թևերը մինչև արմունկները քշտվում էին: Դրանով թևաբաց աշխատանքը հեշտ էր լինում: Աշխատանքից հետո, մանավանդ եկեղեցի գնալիս բոչալաները փաթաթում էին թևերին, մինչև դաստակները ծածկում: Շապկի կոճակներն օղփակների մեջ մտցնելով կոճկում էին: Օղփակները թելից էին շինում: Դրանք սովորաբար փողպատի ձախ եզերքների վրա էին լինում: Շապկի վրայից հագնում էին իճլիկ, բամբակից գործված անթև հագուստ: Այն կարում էին հաստ կտորից: Թուսիագոտին գունավոր բրդե և մետաքսե թելերով էր գործվում, որ 3-4 անգամ փաթաթում էին գոտկատեղին: Մետաքսե գոտին կոչվում էր խազ, խազըկի: Թուսիագոտու վրայից կապում էին կեռ դաշույն, որն ընկնում էր աջ կողքին: Դաշույններից հարգի էր սպիտակ բռնակով խանջարը: Սրա խավդը (բռնակը) փղոսկրից էր լինում: Էլագի (բաճկոն) վրայից հագնում էին աբայի: Սա լինում էր թևով, կիսաթև և անթև, բրդից էր և մազից. ներսում անմազ էր, դրսում 5-10 սմ երկար մազերով ծածկված, մազերը մշակված էին, սև գույնի և փայլող:

Ներսից և դրսից անմազ աբայիները կոչվում էին չուխա կամ կառըկ, որը հատուկ էր չքավոր տղամարդկանց՝ իրենց էժանության և համեստության համար: Ընտիր աբաների առջևի եզրային մասերում՝ փողպատներում, վերից-վար ոսկեգույն և արծաթագույն սրմաներով գործված զարդեր էին կարում:

Աբային կարճ էր լինում և հասնում գոտկատեղին, ծածկում գոտին, բացի առաջի մասից: Չուխան եթե հաշվի չառնենք, աբայիները երկու տեսակ էին: Առաջինը՝ Կունդոկի, Կունդո ձևի իշխանական աբա էր, որի թևերը մինչև արմունկներն էին հասնում. փողպատների սրմայագործ զարդարված մասը 6-8 սմ տեղ էր գրավում, իսկ ամբողջ աբայի մակերեսը ծածկվում էր սև-խոպոպածև մազերով՝ փայլուն սևությամբ: Երկրորդ ձևի աբային կոչվում էր Ռաշոկի աբայ, որը նման էր կունդոկի աբային, բայց այն տարբերությամբ, որ ռաշոկիի աբայի թևերը երկար էին և ծածկում էին մինչև դաստակները. փողպատի սրմազարդ մասը նեղ էր, հազիվ 4-5 սմ լայնությամբ, որով և քիչ զարդարուն: Աբայի և չուխա գնելու հնարավորություն չունեցողները հասարակ աբայի և այծի մորթին առանց մազազերծ անելու, հագնում էին, որը ծածկում էր թիկունքը: Թուսիա գոտին կապում, կունդոկի և ռաշոկի աբային հագնում և կեռ դաշույնը կապում էին խոռոտերը՝ 20 տարեկան երիտասարդները: Սրանք և աղջիկները խազ կամ խազըկի գոտին կապում էին նշանվելուց կամ ամուսնանալուց հետո: Շըլվարը (շալվար) պատրաստում էին տեղացիները՝ բրդից, որը ներկում էին տեղական սև ներկով: Շըլվարները երկու տեսակ էին՝ լըմուկ շըլվար և անլըմիլ շըլվար: Լըմուկ կոչվում էր այն շալվարը, որ գործելուց հետո լըմում էին: Լըմելը կատարվում էր այսպես. շալվարի կտորը, դեռ չկարված, դնում էին 2-3 մետր երկարության գուռանի (տաշտի) մեջ, տաք ջրով լավ թրջում, ապա երկու ուժեղ տղամարդ հակոտնյա դիրքով պառկում էին, իրաններով հենվում բարձր, իսկ բարձերին բոբիկ ոտքերի ներբանները դեմ առ դեմ արած, աջ ու ձախ հարվածելով՝ տրորում էին: Լմվելն ավարտվում էր, երբ շալը բրդոտվում, գործվածքն անհետանում, որով ասվիանում էր: Լմելը ժամեր էր տևում և երիտասարդները փոխնիփոխ կամ ընդմիջումներով լըմում էին, լմվածը չորացնում, ապա վարպետի ձեռքով ձևվում-կարվում էր:



Սասունի կիսահամփա



Սասունի իշխանական տարազ

Կա նաև մատանի շըլվար, որը ներմուծվում էր, իբրև ընտիր ապրանք: Սրա կողքերը և փաչի բերանները նախշում, ասեղնագործում էին: Մատանի շըլվարը պատրաստում էին Հազզոյում, Սղերդում և այլ քաղաքներում:

Շալվարն ու թումպանը մեջքին խունջանով էր կապվում, ամրացվում: Խունջանը շալվարի վերևի մասում եղած ծալքի միջով անցնում էր մի կողմից մյուսը և առջևի մասում կապվում ու մտցվում ներս: Շամաթ շապիկը նուրբ գործված սպիտակ գույնի կտորից էր, վրայից էին հագնում: Սա վարտիքի մեջ չէին մտցնում, այլ դուրս էին թողնում: Աջ և ձախ կողմերն ավելի երկար էին և կողքերից կախ: Շամաթ շապիկն ամռանն էին հագնում՝ Սասունի հարավային մասում, ավելի զով մնալու համար:

Ասեղնագործությունը հիմնականում կատարվում էր հագուստի և գդակի վրա: Գդակն ամբողջությամբ ասեղնագործվում էր շատ բարդ ձևով և գույնզգույն ներկված թելերով:

Տղամարդու գլխարկը կոչվում էր գդակ: Սա ըստ գլխի չափի, 40-52 սմ շրջագծով և 10-15 սմ բարձրությամբ գլանաձև գլխարկ էր, որի վերևի մասը՝ թափըկը հարթ, հորիզոնական կտրվածքի շրջագծով էր վերջանում: Գդակի պորտը (շրջակայքի և թափըկի կտորը) կրկնակ ամերիկան կոչված կտորից էր, իրար կարված: Գդակի ամբողջ արտաքին մակերեսը, թե՛ կողքերը, թե՛ գագաթը, բրդե և մետաքսե բազմերանգ գույնի թելերով էին ասեղնագործում: Գույներից գերակշռում էին կարմիրը, կանաչը, ապա դեղինն ու սևը: Գդակի այդ զարդերը, որ ճառագայթվում էին դեպի եզրերը, կոչվում էին **կեռներ**: Դրանք 8 հատ էին: Գդակի գագաթի մակերեսի վրա հավասար երկարությամբ և հաստությամբ դեղին գույնի քարգահներ (գծազարդ) կային, որոնք թափըկի ուղիղ կենտրոնի կետում իրար հատում էին, կազմելով ութ անկյուններ: Դրանք կոչվում էին **պըճըկ** և սև թելով ասեղնագործվում էին: Գդակի գագաթի ամբողջ մակերեսն ասեղնագործվում էր կեռերով և քարգահներով: Գդակի կողքն էլ ասեղնագործում էին **քարգահ**, **օղազիկ**, **ակառիկ** և **փուկ** կոչվող գծազարդ նկարազարդերով: Երբ թափըկն ու կողքը գործվում-ասեղնագործվում էին, դրա եզրային մասերը կարվում էին կողքի, վերի եզրային մասի հետ և այդ կարվածքի վրայից **գելանիկ** կոչվող գույնզգույն ռոմբաձև զարդերով ասեղնագործվում, գելանիկներով էին ծածկվում: Դրանով գդակի կարելն ա-

վարտվում էր: Գելանիկից դեպի կողքերը հաջորդաբար գալիս էին քարգահներ, շրջված «ա»-ի նման: Տղաների գդակների ամբողջ կողքերը գելանիկից մինչև **փուկ** լրիվ գործվում, փակվում էին, որովհետև փուշի չէին կապում: Ամուսնացող տղամարդու գդակի կողքերի փուկից մինչև **ակառիկը** չէին ասեղնագործում, որովհետև այդ մասում փուշին էր փաթաթվում: **Փուշին** սև գույնի նուրբ կտոր էր, գործված մետաքսից, ծոպավոր էր, մոտ մեկ մետր երկարությամբ և նույնքան լայնությամբ: Ամբողջ եզերքներից կախվում էին մետաքսի սև բուխերը (ծոպեր), որոնք փուշին գդակի շուրջը փաթաթելուց հետո, կախ էին ընկնում տղամարդու ճակատի և այտերի վրա, նրան գրավիչ տեսք տալով:

Գլխարկի մի ուրիշ ձևը, որ գործածում էին Խութ-Բռնաշենում, Մոտկանում ու Խարզանում, կոչվում էր **քոլոս** (քոլոզ), որն ուներ 15-20 սմ բարձրություն և ըստ գլխի չափի՝ շրջագիծ: Քոլոսը շինվում էր սև կամ սպիտակ գույնի բրդից, որ համապատասխան կաղապարի շուրջը փաթաթելով և գոլ ջրով թրջելով ու լըմնելով, թաղքանում էր ու մի քանի օր մնալով կաղապարի վրա, չորանում և քոլոս դառնում: Ինչպես գդակի, քոլոսի շուրջն էլ փուշի էին կապում: Բուն Սասունում, Տալվորիկում, Շատախում, Խիանում, Փսանքում հայերը քոլոս չէին գործածում, այլ միայն գդակ:

Ի դեպ, պետք է ասել, որ 1134-ին Մուշի Սբ Առաքելոց վանքի համար շինված թանկարժեք փայտե դռան վրա փորագրված ձիավոր թե հետիոտն մարդկանց գլխարկները Սասունի գդակներ են, իսկ դուռը շինվել է տրվել Սասունի Թոռնիկյան իշխանության հիմնադիր, Թոռնիկի թոռ Վիգենի, Սասնո այդ իշխանի ձեռքով:

Գդակի շուրջը, փուշիի տեղ, **ագալ** (կայուն, միշտ ոլորված փուշի կամ «յամզա») էին գործածում Խարզանի և Մոտկանի հայերը, հայախոս արաբներն ու ասորիները: Քոլոսն ընդհանրապես ընդունված էր նաև Սասունում բնակվող քրդերի կողմից:

Տղամարդու հագուստի անբաժան մասն էր կազմում **քիսըկը**, որ գույնզգույն գեղեցիկ կտորից շինված մի տոպրակ էր 15-25 սմ երկարությամբ և 10-15 սմ լայնքով: Սրա մեջ լցնում էին ծխախոտը (թութունը) և կախում գոտուց: Քիսըկի վերևի բերանում կտորի եզերքները հավաքելով ու կարելով ձվի չափի մի գունդ էր ստացվում, որ խրում էին գոտու մեջ՝ չընկնելու համար, իսկ այդ գնդից մինչև քիսըկի երկարության կեսը ճեղք թողնում, որից ծխախոտ էին վերցնում խալունը լցնելու կամ ջղարեն (սիգարեթը) շինելու համար: **Խալուն** կոչվում էր հողից (կավից) կամ փայտից շինված փոքրիկ երկանցքանի այն ամանիկը, որի լայն բերանից ծխախոտն էին լցնում կամ նրա այրվածքը դուրս թափում, իսկ նեղ անցքում մտնում էր **տիրըկը**: Տիրըկը հավկտեճի կամ ընկուզենի մի ձող էր, մատի հաստությամբ, սնամեջ և 50-100 սմ երկարություն էր ունենում: Սրա մի ծայրն ամրացվում էր խալունին, իսկ մյուսը՝ խալունքեշն (խալուն քաշողը, ծխողը) առնում էր իր բերանն ու խալուն քաշում (ծխում): Տիրըկը եթե խալունից առանձին էր գործածվում, մի ծայրին մտցնում էին պապիրոսը, մյուս ծայրից ծխում էին: Այդ դեպքում տիրըկը կարճ էին շինում և կոչում էին ջղարը ցախ (ծխամորճ), որը ծխելուց հետո խրում էին գոտիկում, խազըկում, կամ գդակի և փուշիի արանքը, որ ցցվում էր գդակի գագաթից վերև: Խաուդանը (կաշե փոքր պայուսակ) նույնպես գոտու վրա էին ամրացնում, իսկ նշարակ, հուջամ, աքցան և այլն (ատամաքաշ) պահում էին հաքիմները (բժիշկները):


Պուճը (գուլպա) գործում էին բավական հաստ բրդյա թելերից: Երբ գույնզգույն ներկած թելերից էին գործում, կոչվում էր նախշուն պուճ: Պուճի փողը հասնում էր մինչև ծնկոսկրը, իրենից դուրս եկող երկար մի թելով կապվում սրունքին, մի քանի անգամ փաթաթվելով գուլպայի վրա, իսկ պճթելի (պուճի թելի) ծայրը, որ բուխ (ծոպ) էր, մտցնում էին գուլպայի և նրա վրա փաթաթվող թելի արանքը: Բուխը թույլ չէր տա, որ թելն արձակվեր և գուլպան ցած իջներ: Կուրբա (սախ, սախկ) կոչվում էր առանց թաթի այն գուլպան, որ հագնում էին պուճի և շալվարի վրա, մինչև ծունկը: Կուրբան ձմեռ ժամանակ էին հագնում, որպեսզի խոնավությունը տրեխի մեջ չանցներ և շալվարի փողը չթրջվեր: Կուրբայի վերին մասում կար կուրբը քիլը, որով կուրբան ծնկոսկրից վերևի մասում կապվում էր և չէր սահում դեպի ցած:

Կանանց զգեստներն էին շապիկը, որ քիչ էր տարբերվում տղամարդու շապկից իր բարակ, նուրբ գործվածքով. օտացը (վարտիքը), որ հասնում էր մինչև ոտքի թաթը. **թախինը** կամ **խբուրը**, որ վրայի շքազգեստ էր և պատրաստվում էր մետաքսից, գույնզգույն թելերով գործված, ասեղնագործված:

Այն երկարում էր մինչև սրունքները. գոտկատեղից ճեղքված էր մինչև փեշը:


Ճամփորդելիս թախիճի վարի փեշերը հավաքում էին դեպի գոտկատեղը, տանում և կոնքի վրա ամրացնում, որպեսզի քայլելուն չխանգարեր: Խուտնին՝ մետաքսյա թանկագին հագուստ էր, տարբեր գույներով ու զարդով: Մոմուկ շապիկը հասարակ բամբակե կտորից շինված արտաքին շապիկ էր, որ մինչև սրունքներն էր երկարում, գույնզգույն նախշում, ներկում էին: Նախշերը կատարում էին դաջելով: Սանրածև կամ այլ ձևերով դաջն իր սուր կամ զարդանկար կողմով թաթախում էին հալած մոմի մեջ և շարքով մոմ կաթեցնում շապկի այն բոլոր մասերի վրա, որոնք չպետք է ներկվեին. դրանք էին՝ թևերը, փեշերը և այլն: Երբ մոմում վերջացնում էին, կարած շապիկը ուղարկում էին ներկարարին: Ներկարարը ներկում էր տիրոջ ցանկացած գույնով: Մոմուկ շապկի տերն այն եռացրած ջրի մեջ եփում էր և վրայից մոմի կետերն ու զարդերը հալվելով և թափվելով տաք ջրի մեջ, նրանց տեղերը սպիտակ մնում էին և այդ սպիտակ պտերն ու զարդերը կազմում էին նախշեր, իսկ ներկված մասերն էլ իրենց հերթին զարդեր էին դառնում:

Սրտանոցը մի զարդ-հագուստ էր, որ գրկում էր կանանց վիզն ու կուրծքը. մի կապով ծոծրակի մոտ էր կապվում (սրտանոց), մյուսով գրկում էր մեջքը և երևում էր վզատակից մինչև գոտկատեղը, աջ անութից մինչև ձախը: Սրտանոցի վրա արվում էին թանկարժեք զարդեր, գույնզգույն մետաքսյա ծաղկանկար՝ ասեղնագործված ծաղիկ ու նախշեր: Սրտանոցի վրա էր կարվում և հմայիլը, որպեսզի նորահարսը կամ կինը չարքից ազատ լիներ: Սրտանոց գործածում էին նաև այն աղջիկները, որոնց կրծքերն սկսել էին փարթամանալ, սրտանոցը քողարկում էր այն: **Խազ** կամ **խազըկ** կոչվում էր մետաքսյա գույնզգույն թելերից գործված գոտին, որ կապում էին հասուցացած աղջիկներն ու կանայք: Կանանց **խազըկներն** ավելի բարակ ու նուրբ էին, քան տղամարդկանցը: **Քոֆի** կոչվում էր կանացի գլխարկը, որ բաղկացած էր մի **ֆասից** կամ թափըկից, որ կազմում էր քոֆիի ներսի մասը, իսկ **մոմին** և **փուշին** մետաքսե այն **յազմաներն** էին, որ փաթաթում էին քոֆիի շուրջը: Բանդըկն այն երիզաձև կապն էր, որ քոֆիի աջ և ձախ կողմից, ճակատի եզերքներից իջնում էր ականջի և այտի միջնամասից (աջ և ձախ կողմերից) և վերջանում վզի տակը:



Սասունի կտագ. վերևից Կտագի թափըգ /գագաթ/,
ներքևից Կտագի գուղ /կողերը/






Վերևում ձախից՝ Սասունի Գերմավ գյուղի գեղջկուհի Բլբուլ Սահակյանը Լեռնարոտ գյուղում /1949թ./, Վերևում աջից՝ Սասունցի ունևոր ընտանիքի նորատի կին, ներքևում ձախից՝ Սասունի Խիանի Հեղինի գեղջկուհի Հեղինե Մանուկյանը Լեռնարոտում /1949թ./, ներքևը աջից՝ Սասունի Խուլբի Ահրոնքի գեղջկուհի Մարիամ Մկրտչյանը Լեռնարոտում /1949թ./

Բանդըկի վերին մասից մինչև այտերի վերջամասը կարվում էին դրամներ և արծաթե ու ոսկե այլ զարդեր: **Խիչըկ խայթան** էին ասում քոֆիի առաջի մասի, կնոջ ճակատի վերի եզերքին շարված եռանկյունի փոքր զարդերը, թելից գործված և հագիվ ատամի մեծությամբ: **Շուր** կոչվում էր կանանց գլխին գցված շղարշը, առանց երեսը ծածկելու, որ երկարելով հասնում էր սրունքների մոտ, իսկ ճամփա գնալիս շուրի ծայրերը հավաքում և խրում էին գոտու մեջ, որպեսզի քամիներից ծածանվելով և մացառներին կպչելով չխանգարեր կանանց ճամփորդելուն: **Չադրիկը** գոգնոցն էր, որ հասնում էր մինչև սրունքները, իսկ լայնքում ընդգրկում ազդրերը: Չադրիկը նույնպես մոմում էին, որով կոչվում էր **մոմուկ չադրիկ**: **Չադրիկի թիլ** կոչվում էր այն ժապավենը, որ բրդե թելից էր գործվում և չադրիկի վերևի եզերքներին կարված լինելով, գոտու վրայից անցնում, փաթաթվում էր կնոջ մեջքին և ետևի կողմում, ծամերի տակը կամ կողքերին կապվում: **Քըմե ռախստին** քոֆի էր, առանց փաթաթանի ու կարմիր ֆասի. հաստությունը 0,5 սմ չափ էր, գագաթը մի թափըկ էր. սրա և՛ գագաթին և՛ կողքերին շարվում էին արծաթե, երբեմն ոսկե և պղնձե զռնիխ (չժանգոտվող) դրամներ: Ճակատին մոտիկ, աջ և ձախ **գուլակների** (ականջի մոտի մազեր) քովից կախվում էին արծաթե շղթաներ, և նրանցից կախված զարդեր: Գագաթից կախ էր ընկնում մետաքսե թելերից կազմված բուխը (ծոպ), որ ետևի կողմից իջնում էր ծամերի վրա: Քըմե ռախստին գործածել սկսում էին նշանվելու հասած կամ նշանված աղջիկները: Ծամթելը այն ծոպավոր թելերն էին, որ առանձին-առանձին հյուսված մազերի հետ իջնում էին թիկունքից ցած: Երբեմն «քառսուն ծամթել» էր լինում՝ երբ **քառսուն ծամ** էր թողնում ազատ վարսեր ունեցող աղջիկը: **Սալթա** կոչվում էր մետաքսե այն հագուստը, որ վրայից էր հագնվում. ասեղնագործվում էր. այն երկարում էր պարանոցից մինչև գոտկատեղը և ընդհանրապես հարսնության և փեսայության ժամանակ էին հագնում թե՛ հարսը և թե՛ փեսան: Խունջանը օտացն (վարտիք) ամուր պահող թել էր: **Ուսլաթը** այն շորն էր, որ ջուր բերելիս կանայք գցում էին իրենց ուսի վրա, որպեսզի կժի ջրից իրենց շորերը չթրջվեին: **Գարդանըղխ** մանյակին էին ասում, որ հաս, նորահարս և երիտասարդ կանայք էին գործածում: **Աբըռջանը** թևի, բազկի զարդն էր՝ ապարանջանը: **Ակնջօղը** հնում գործածվում

էր խըզմա, որ քթի օղ էր, բայց 1890-ական թվականներից սասունցի հայ կանայք չէին գործածում: Դա գործածում էին քրդուհիները: **Օրաջիկը** սրտանոցի վրա կարելիք զարդ էր:

Երեխաներինը հատուկ հագուստներն ու իրերն էին. **կռոջը**՝ փոքր երեխաներին օրորոցում փաթաթելու շորերը, **թևլաքը**՝ երեխայի թևերը կապկպելու շորերը, երբ դեռ օրորոցումն էր, **օրացկապը**՝ օրորոցը վերևի ծողին կապող, ամրացնող ժապավեն էր, լուլաև՝ խողովակածև փայտը, որ դնում էին տղաների օրորոցում, նրանց մեզը օրորոցից դուրս թափելու համար: **Օրացբինդ** կոչվում էին անձեռոցիկի ձևի երկու լայնեզր կտորները, որ ամուր բռնում, փաթաթում էին խանճարուրը: **Կրծլիկը** շոր էր, որ երեխայի կրծքին էին կապում, որ կերակուրը կերցնելիս նրա շորերի վրա չթափվեր: **Փոբոլ** կոչվում էր երեխայի՝ շորից կարած փոքրիկ ոտնամանը:

Կանանց տարազային զարդ են հանդիսանում գլխարկի առաջամասում, ճակատի ամբողջ վերեզրում, քոֆիի եզերքներին կարված արծաթ և ոսկի դրամները: Հարուստ կանանց ճակատի զարդը ոսկե դրամներից էր լինում, մեջտեղը **բեշիբիրլիքով** (հնգանոց ոսկի): Բեշիբիրլիքի տակից ճակատի կեսին ճակտահատ կար, որը չար աչքի դեմ էր: Բանդրկի վրա, գուլակների և բըսկերի (մազ, զարդեր, խոպոպ) վրայից կախում էին զարդեր, կարմիր և կապույտ ակներով, արծաթե դրամներով: Բանդրկի վրայի զարդերն ընդհանրապես կոչվում էին **ջենկնի** (զարդեր) կամ **խըշր**: Բանդրկի վրայից արծաթե նուրբ շղթաներ էին կախվում մինչև կզակը, սրանց ծայրերից ևս զանազան ոսկի-արծաթ զարդեր էին կախում:

Քոֆին իր զարդերի հետ միասին կշռում էր 1-2 կգ: Հարուստ կանայք ականջներից ոսկե և արծաթե գինդեր էին կախում: Կանայք իրենց մատներին կրում էին ոսկե, արծաթե, պղնձե մատանիներ, որոնցից ոսկե մատանին նշանդրեքի ժամանակ էին ստանում, որով և հայտնի էր դառնում նրա նշան դրված լինելը: Կանայք և տղամարդիկ իրենց մարմինը նախշելու, դաջելու սովորություն չունեին: Հազվագյուտ պատահում էր, որ կանայք իրենց աչքերը կըլ (սյուրմա, դեղ) էին դնում: Կանայք իրենց բազուկներին **աբըռջան** (ապարանջան) էին դնում, որը լինում էր արծաթից: Դրա երկու ծայրերից նույն նյութերից օղեր էին անցկացվում, որոնք թևերի շարժման ժամանակ թեթև զրնգում էին: Շատ անգամ ապա-

րանջանի երկու ծայրերը վերջանում էին օձի գլուխներով: Խաչը որպես զարդ օգտագործում էին վզներից կախ տալով կամ սրտանոցի վրա կարելով:

Տղամարդիկ և կանայք, ամառ թե ձմեռ գրեթե միևնույն հագուստն էին հագնում: Այս երևույթը զարմանալի կերպով հիշեցնում է դարի պատմիչ Թ. Արծրունու դիտողությունը:

Բացի մի քանի քաղաքատիպ վայրերից, ուրիշ ոչ մի գյուղում բաղնիք չկար, լողանում էին տանը (գոմում): Լվացքը սովորաբար կատարում էին տներից հեռու գտնվող աղբյուրների մոտ կամ ձորերի եզերքին, ջուր կրելու դժվարությունը նկատի ունենալով: Իսկ ձմեռ ժամանակ տներում էին լվանում: Հագուստի փոփոխությունն առավելապես նկատվում էր պանդուխտների մոտ, որ քաղաքների հետ ունեցած շփման հետևանք էր:

Հագուստները կարելու համար կարի մի քանի ձևեր էին կիրառում: **Շուլալը** հասարակ կար էր. ասեղը 4-5 անգամ կտորի մեջ, հավասար և լայն հեռավորությունների վրա խրելով էին կարում: **Գութուռ** կոչվում էր կարի այն ձևը, որ ամեն մի կարի համար ասեղը մի անգամ խրում էին կտորի մեջ և քաշում թելն ու կարում:

Օղփակ կոչվում էր այն կարը, որ ասեղը մի անգամ խրում էին կտորի մեջ, ապա չքաշած թելը օղաձև անցկացնում ասեղի ծայրի կողմը և օղաձև թելի միջից քաշում ասեղը: Այս օղփակ ձևով կարում էին հագուստների եզրային մասերը, և երբեմն էլ՝ օղփակի վրա, որով ստեղծվում էր մի տեսակ ասեղնագործ զարդանկար:



Սասունի Աղբիկ գյուղացիներն աշխատավորական տարազով / 1916թ.

3. ԿԵՐԱԿՈՒՐ ԵՎ ԽՄԻՉՔ

Սասունցիների կերակուրները բացառապես բուսեղեն, կաթնեղեն և մսեղեն էին, իսկ ձկնեղենը բացառիկ էր: Դա բացատրվում էր նրանով, որ նախ՝ Սասունի անմշակ սարալանջերն իրենցից ներկայացնում էին վայրի բանջարանոցներ և ունեին առատ ու բազմապիսի բուսականություն:

Երկրորդ, այդ սարալանջերը, միաժամանակ ալպյան արոտավայրեր լինելով, ունեին անասնապահության բոլոր հնարավորությունները, որով կաթնեղենը սննդի մեջ գերակշռող տեղ էր բռնում: Մսեղենն ապահովվում էր ոչ միայն ընտանի անասուններից, այլև որսված բազմաթիվ վայրի կենդանիներից:

Բանջարեղենը ոչ միայն ամառ ժամանակն էին առատորեն գործածում, այլև ձմռանը, սպառման պահանջի չափով քաղում, կանաչ-կանաչ հյուսում, չորացնում և գործածում էին առանձին կամ մի այլ մթերքի հետ եփելով: Կաթնեղենն առատ գործածում էին, յուղով ծածկելով կերակուրը:

Ցորենը և ալյուրը պահում էին փեթակներում: Ցորենը և կորեկը երբեմն հորերի մեջ էին պահում և գարնանը հանում գործածում: Գըլգիլը չէին հորում, որովհետև հողի տակ շուտ էր փչանում: Հացը թթխմորով էին անում, թխում, իսկ առանց թթխմորի հացը, որ բաղարջ էր կոչվում, քիչ էին գործածում: Թթխմորը սումախից էին ստանում: Սումախը մի բույս է՝ 50-100 սմ երկարությամբ և ավելուկի խոտի պես: Սրա սերմերը խմորի և թե որոշ կերակուրների մեջ գործածում էին թթու համ տալու համար: Հացը թխում էին ցորենի, կորեկի, գըլգիլի և գարու ալյուրից՝ օջախում, ինչպես ասել ենք վերևում:

Ամեն օր հաց էին թխում: Դա բացատրվում էր նրանով, որ կորեկից ու գըլգիլից պատրաստված հացը հաջորդ օր կորցնում էր համը, կոշտանում և լավ չէր ուտվում: **Տարու դրմուզ** հացը, տարվա մեջ մի անգամ էր թխվում, ամեն տարվա դեկտեմբեր ամսի 31-ի գիշերը և նույն գիշերը ժամը 12-ին՝ Նոր տարուն սկսում էին բաժանել: Դա տոնական, Նոր տարվա հաց էր:

Աշկավան կամ **շկավան** այն հացն էր, որ առաջի կալի բերքից վերցրած ցորենից էին աղում, թխում և որպես մատաղ՝ բաժանում դուռ ու դրկիցներին:

Գաթաները զանազան տեսակի էին լինում: Երբ գաթայի ներսում խորիսը (յուղալի մասը) շերտ-շերտ էր լինում, հավ-

թուսի էր կոչվում: Երբեմն ոչխարի **ջրակուն** (ճարպը) մանրմանր բրդում էին եռացած ջրի մեջ և ջրով ու ճարպով միասին կորեկի ալյուրը շաղվում, հաց էին թխում, որ շատ համեղ հաց էր լինում: Գաթաների, հատկապես հավթուսի տեսակի մեջ խորիսի հետ երբեմն մեղր կամ **ըրուբ** (ռուփ, ղոշաբ) էին խառնում, իսկ գաթաների վրա զանազան նախշեր էին անում գդալի եզերքներով, որ կիսալուսնաձև հետքեր էր թողնում:

Ավըկի կոչվում էր այն հացը կամ խմորեղենը, որը պատրաստվում էր ցորենի ալյուրը ձվի սպիտակուց-դեղնուցով շաղվելով, առանց թթվեցնելու, և նոսր խմորի ձևով, որ թաթիկով (փոքր շերեփով) լցնում էին սալի վրա և թխում նախ մի կողմը, ապա մյուս կողմը և ափսեների մեջ այդ կլոր, բարակ, փոքրիկ հացիկները դնելով մեղր կամ դոշաբախառն յուղ էին լցնում վրան և ուտում: **Ջաջառունը** ցորենի, երբեմն էլ կորեկի ալյուրից շինված մի տեսակ հալվա էր, առանց քաղցր խառնելու և ջրի փոխարեն յուղով եփած համեղ խմորեղեն, որ տաք-տաք վիճակում էին ուտում:

Ադառունը միայն կորեկի ալյուրից էին շինում, այդ ալյուրը յուղի մեջ խարկելով (բովելով), որով ստացվում էր յուղախառն ալյուր, որ իբրև ճամփու պաշար (զվադա) վերցնում էին իրենց հետ երկար ճանապարհորդության ժամանակ: Ձմուռ (ճմուռ) կոչվում էր այն հացի բրդվածքը, որ ճմռում էին յուղի հետ, յուղով հագեցնում ցորենի և կորեկի տաք հացը և տաք-տաք ուտում:

Քալաջաշ (քալաջոշ) կոչվում էր հացի բրդվածքը, որի վրա լցնում էին յուղ և թանահատ, կամ եփած թան և ապա եռացրած ջուրն ածում այդ խառնուրդի վրա ու գդալով ուտում: Քալաջաշի մեջ երբեմն ծեծած սխտոր էին խառնում:

Գըրըկ կոչվում էր այն կերակուրը, որ բացառաբար սպիտակ գըլգիլի սռնուցքից էին պատրաստում. դա քյուֆթա էր, գցում էին թան չխառնած ապուրի մեջ, եփում, ապա քյուֆթան հանում, ճմռում, հագեցնում հալած յուղով, ուտում:

Խուգլան կորեկի ալյուրից պատրաստվող մի խյուս էր, որի մեջ կորեկալյուրը հագեցնում էին յուղով և գդալով ուտում: Հեշտ պատրաստվող և շտապ եփվող կերակուր էր:

Կորեկի մի տեսակի՝ վաղանայի հունդը մեծ քանակությամբ ծեծում էին, քեփը դինգով հանում, ապա **սամիր** եփում ինչպես թանձր պնդացած սուպ կամ **շորբա** և առատ յուղ գցում մեջն ու ուտում: **Զխուրը** ցորենի սռնուցքով և թանով

միասին եփված մի ճաշ էր, հարիսայի տեսքով, բայց առանց մսի, թթվաշ համով:

Չորքնով ճաշը մի հարիսա էր, առանց մսի, որի եփվել - պատրաստվելուց հետո, երբ լցնում էին քասաների մեջ, չորթանի թան էին ածում վրան՝ փոսացրած կենտրոնական մի մասում և հալած յուղը լցնում չորթանի վրա, ապա ճաշի լիքը գդալը թաթախում յուղի և թանի խառնուրդի մեջ և ուտում: Չորթանը, որ ամառ ժամանակ չորացնում էին, ճաշ եփած օրը փշրում էին, կտոր-կտոր անում, լցնում տաք ջրով լցված ամանի մեջ և մի փայտով խառնում մինչև չորթանի լուծվելը: Ստացվում էր թան, որ լցնում էին չորթանով ճաշի վրա: Չորթանի լուծվելուց հետո մնում էին **հրվունքներ** (չորթանի շատ փոքր կտորներ), որ տալիս էին երեխաներին:

Վայրի բանջարեղեններից պատրաստված կերակուրները կոչվում էին նույն եփվող բույսի անունով: Այդպիսի կերակուրներ էին՝ **նվիկը, օղինը, սունկը, մեներիշը, փըղկան, քիղը, պիժոկը, դաղձով ճաշը, կանկրով ապուրը, իշկապը, խնջլոզը, սպիտկուկը, ժախը, նիսանը** և այլն: Այդ բուսեղենները նաև սոխրածում, ուտում էին:

Ալրաճաշերի տեսակներն էին՝ **ալրխուսը, ճանճիկը, փոխինդը, ածիկը, տոշիկը, ջլբուրը, խավիծը, բռինչով ճաշը** և այլն:

Ինչպես պարտեզներում, այնպես էլ անտառներում մեծ քանակությամբ սննդանյութեր կային՝ դառինջ (մարխոշ խնձոր), քարճին (վայրի համեղ տանձ), աղվիթ, թոխումբ, մրկիթ (որի պտուղից յուղ էին հանում և օճառ եփում), ալուճ, մկնալուճ, խնկանալուճ, բլուր (խոզկաղին) և այլն: Այս բոլոր վայրի պտուղները հավաքում էին և՛ սպառման, և՛ փոխանակման կամ վաճառքի համար: Այդ բերքը հավաքում էին և՛ տղամարդիկ, և՛ կանայք: Այդ բոլոր վայրի պտուղները հում էին գործածում, իսկ խոզակաղինը խորովում էին, որը կարտոֆիլի համ ուներ:

Գինին և օղին կազմում էին սասունցիների խմիչքները, այն էլ տոների, հարսանիքների և հյուրերի առիթով: Գինին ու օղին շատ թունդ էին, անարատ: Նրանց սպիրտային մասը շատ էր, որովհետև այգիներն անջրդի էին՝ միայն փորվում և էտվում էին, չէին ջրվում: Գինին պահում էին կարասում: Խմելիս գործածում էին կթխան ու բասը: Խմելուց առաջ **կենդանուքին** էին ասում և «կենդանի մնաս» պատասխան ստանում: Ճառեր և մաղթանքներ չէին ասում: Գինու խոսքը կարճ և կտրուկ էր:

Մսով ճաշ կոչվում էին ընդհանրապես այն բոլոր տեսակի ճաշերը, որ մսով էին եփում: Օրինակ՝ **մսով փլավ, մսով շուրբա, մսով հարիսա, մսով կարտոլ** և այլն:

Էխնիկ կոչվում էր այն կերակուրը, որ միայն մսով էին եփում և մեջն այլ բանջարեղեն կամ մթերք չէին խառնվում:

Կլուլիկ կոչվում էր այն կերակուրը, որ միսը ծեծելուց հետո, բրնձի կամ սռնուցկի հետ շաղախում էին, գնդիկների վերածում, ալրոտում այդ գնդիկները և գցում եռացրած ջրով լի պուտուկի մեջ, եփում:

Հարիսան եփում էին ընդհանրապես աքլորի մսով, որը հալչում, թել-թել էր դառնում, իսկ մերկացած ոսկորները հանում էին հարիսայի միջից: Ապա ուտելիս հարիսայով լի քասայի միջին մասում փոս անելով՝ հալած յուղ դնում և ուտում էին: Հարիսան եփում էին նաև մսով: Այն գիշերն էին եփում և առավոտ, նախաճաշի տեղ ուտում:

Քյուֆթան սովորական ձևով էին պատրաստում:

Խայլա ասում էին ղավուրմային, որը պատրաստելուց հետո պահում էին հողի տակ, ինչպես յուղն ու թանհատը (ժաժիկ-շոռ) և ձմեռ ժամանակ հանում, այդպես չոր-չոր, առանց եփելու ուտում:

Մսի չիրը պատրաստում էին մսից հետևյալ ձևով: Նոր մորթված միսը վերցնում էին, ոսկրահան անում: Լոկ միսը մատի հաստությամբ երկար-երկար թողնելով (մանրելով) բարակ ապուխտի ձևով պատրաստում և արևի առաջ, պարանների վրա կախում էին, երեկոները հավաքում, հաջորդ օրը նորից կախում արևի առաջ և այսպես 4-5 օր: Ապա հավաքում և պահում էին, հարկ եղած ժամանակ, ամառ թե ձմեռ եփում, ուտում: Չիր պատրաստում էին այն ժամանակ, երբ անասունների անկում էր լինում, միսը չէր սպառվում, կամ փոխանակվում: Մսի չիրը ապուխտի մի ձևն է, բայց առանց համեմունքի, տարրական ձևով: Այն մսի հատկությունը և համը պահում էր:

Տան բոլոր տեսակի կերակուրները եփում էին կանայք: Ուխտավայրերում զոհած կենդանիները, հարսանեկան մեծ ճաշերը, հարկերը (հոգեճաշ) և զբարաների ճաշերը տղամարդիկ էին պատրաստում: Տղամարդիկ և կանայք առանձին-առանձին էին ճաշում, տղաներն ու աղջիկներն էլ առանձին՝ քանի փոքր էին, իսկ երբ մեծանում էին, տղաները՝ տղամարդկանց, աղջիկները՝ կանանց հետ էին ճաշում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սասունի բոլոր շրջաններում ընդհանրապես որդիների բաժանումը ծնողներից շատ ուշ էր լինում, սովորաբար իրենց հոր մահվանից հետո, որպեսզի տան մեծը, **մալխոն**, իր կենդանության ժամանակ որդիների բաժանման կսկիծը չտեսներ: Տնտեսության արտադրական միջոցների պրիմիտիվ լինելը և աշխատող ձեռքերի անհրաժեշտությունը նույն տնտեսության մեջ պատճառ էին դառնում ուշ բաժանման համար: Այդ պատճառով մինչև 1900-ական թվականները ընտանիքների անդամների թիվը հասնում էր մինչև 60-70 հոգու: Այդ գերդաստանները բաղկացած էին **ջոբոյից** (պապ), **ջոջոյից** (տատ), նրանց որդիներից, թոռնիկներից և ծոռնիկներից: Մայրիկները դայո (դայե) էին կոչվում: Նրանք երկար տարիներ ապրում էին միասին: 1890-ական թվականներին Գելիեգուզանի Պետոյի տան, Մանոյի տան, Առքոյի տան, Շենիկ գյուղի Մոսեի, Զորոյի տներում, Տալվորիկի Հարթք գյուղի Խաչոյի Գասպարի տան, Ճուռոյի Պետրոսի տան, Շլիմիր (կլիմիր) կամ Արտխոնքի Սլոյի տան, Փսանքի շրջանի Մրգյուղ գյուղի Շառոյի տան, Ահրոնք գյուղացի Արթենի տան, Հեղին գյուղացի Վարդանի և Իշխանաձոր գյուղացի Արթենի և այլ շատ տների շնչերի թիվը 50-70-ից պակաս չէին: Այդ յուրաքանչյուր տան մեջ 7-12 օրորոց էր օրորվում: Ջոբոների հետ ապրում էին բոլոր որդիները, անդրանիկ զավակից մինչև կրտսերը, իրենց կանանց, որդիների և թոռների հետ: Այդպիսի գերդաստանները հազարավոր գլուխ մանր և խոշոր եղջերավոր անասուններով իրենցից ներկայացնում էին մի-մի համայնք, որի գլուխ կանգնած էր **մալխոն** (տանտերը) կամ **ջոբոն**, որը մինչև խոր ծերության հասնելը ղեկավարում էր գերդաստանի և՛ տնտեսական, և՛ փոխադարձ հարաբերությունները: Տան տիրոջ կարգադրությունները բոլորի, մեծի թե փոքրի համար օրենք էին և ջերմեռանդությամբ կատարվում էին: Մինչև պապից ծոռները հասնող գերդաստանում, երբ ջոբոն ծերանում էր և չէր կարող այլևս - ղեկավարել տնտեսությունը, մալխոն դառնում էր արական սեռի ամենահասակավոր մարդը, ջոբոյի եղբայրը, եթե կար, իսկ եթե եղբայր չուներ՝ անդրանիկ որդին և մահից հետո դառնում

էր մալխոն: Եվ այդպես շարունակվում էր հոր գործը: Գերդաստանից բաժանվելու ցանկություն ունեցող եղբայրներն ընդհանրապես իրենց հոր կամ ջոբոյի հարկը (հոգեհաց) միասին տալուց հետո բաժանվում էին:

Գերդաստանում և ընդհանրապես ընտանիքներում արյունակցության և խնամիության աստիճանները՝ պորտերը հաշվվում էին, մինչև 1900-ական թվականները, տասներկու ծյուղ, այսինքն՝ 6-րդ սերունդը: Խնամիության 12 աստիճանը թեև ընդհանրապես թույլատրվում էր ամուսնության համար:

Արենակցության կամ խնամիության աստիճանները հետևյալներն էին՝ ըստ սասունցիների տերմինների.

ա) Հայրական գծով՝ ջոբո (պապ), բաբ (հայր), որ պապ բառից է, տղա կամ օրդի (որդի), թուռ (թոռ), թոռան տղա (թոռնորդի), թոռան թուռ (ծոռ):

բ) Մայրական գծով՝ խալման (տատ), մամ (մայր) կամ դայո (դայե), աղջիկ, թուռ (թոռ), թոռան աղջիկ (թոռնաղջիկ), թոռան թուռ:

1907-1908 թվականներից հետո, թեև որոշ քաղաքատիպ վայրերում արենակցության և խնամիության այս աստիճանը խախտվում և թույլատրվում էր 4-5-րդ արյունակից սերնդին ամուսնանալ, սակայն միշտ խուսափում էին մոտիկ ազգականների՝ 8-10 ծյուղի հետ ամուսնանալ, մեղք համարելով այդ և միշտ ձգտելով հեռու ազգականից կամ ոչ ազգակցից հարս բերել:

Որդեգրություն կատարել կամ հոգեզավակ, հոգեորդի վերցնել մի որբի կամ անտեր մնացած երեխայի, թույլատրվում էր, եթե նա արյունակիցներ չուներ, հակառակ պարագային արյունակիցը չէր թողնում, որ իր ազգի որդին մի ուրիշ, ոչ արյունակից մարդ որդեգրեր: Եթե որդեգրվողն աղջիկ էր, արյունակից կողմը քիչ էր դժգոհում, համաձայնվում էր ընդհանրապես, որովհետև աղջիկ զավակը հոր ժառանգությունից բաժին չուներ, ինչպես ունեին արու զավակները, որով հոգեզավակ վերցնողն այդ որբ աղջկա հայրական ժառանգությունից որևէ բան ստանալ չէր կարող: Դրա համար որբի ազգականներն իրենք էին որդեգրում և նրա թե՛ շարժական, թե՛ անշարժ գույքին ու հողին տեր դառնում, մինչև որդեգրվողի մեծանալը և ինքնուրույն տնտեսություն ստեղծելը, ամուսնանալ ու տուն-տեղ լինելը:

Հոգեզավակ վերցրած աղջկան, ընդհանրապես պահում, մեծացնում էին և երբեմն իրենց տնտեսության անդամ մի տղայի հետ ամուսնացնում: Իսկ եթե տնտեսության տղան նրա հետ ամուսնանալ չուզեր, մի ուրիշի հետ կամուսնացնեին: Հոգեզավակին հագցնում, կերակրում էին ինչպես իսկական զավակին: Երբ մի ընտանիք արու զավակ չէր ունենում, արյունակից, ազգակից մի ընտանիքից փոքր հասակից հոգեզավակ էին վերցնում՝ սերունդը, այդ օջախը չհանգչելու, անժառանգ չթողնելու համար:

Որդեգրության համար ոչ մի պայմանագրություն չէր լինում որևէ մեկի հետ, որդեգրությունը օրինական էր համարվում որդեգրվողին իր տուն տանելով և բանավոր հայտնելով համագյուղացիներին:

Որդեգրված աղջկան պահել-մեծացնել և նրա հետ ամուսնանալը մահացու մեղք էին համարում:

Տնփեսությունը սասունցիների համար անպատվաբեր մի երևույթ էր համարվում, սակայն օջախի պահպանման և սերնդի շարունակման համար այն հարկադրված էին ընդունել: Տնփեսան արդեն դառնում էր ժառանգորդ, ինչպես որդին: Տնփեսայության դեպքերը հազվագյուտ էին: Սերնդի բազմացման դեմ ոչ մի արհեստական արգելք չէին ընդունում և մեծ հարգանքի ու պատվի էին արժանանում այն ծնողները, որոնք մարդաբարդը կատարել էին, այսինքն՝ տասներկու զավակ էին ունեցել:

Տնփեսան և որդեգիրը փոքր հասակից (12-15տ.) էին վերցնում և դրանք բշկուրիի (տան փոքրահասակ) աշխատանք էին կատարում մինչև մեծանալը: Բշկուրի ասում էին նաև այն հարսնացուին, որ փոքր հասակից էին բերում, փաստորեն դեռ նույնպես փոքրահասակ փեսայի հետ առագաստ չէին մտնում: Բշկուրիությունը և բշկուրի կոչումը վերացվում էր, երբ նրանք մեծանում էին: «Բշկուրի չունեմ» խոսքը նշանակում էր տունը մանր աշխատանքներ տանող փոքրահասակ մարդ չուներ:

Տնփեսայությունը, իրավունքի տեսակետից, հավասար էր որդեգրության, երկուսն էլ ժառանգություն ստանալու իրավունք էին ունենում:

Մալխոյությունը երբեմն տրվում էր ամենափոքր եղբորը, եթե նա ավելի լավ ղեկավարելու ձիրք ուներ: Նա տանն էր

մնում աշխատանքների ժամանակ, հյուր էր ընդունում, դրացի, համագյուղացի կամ շրջակա գյուղացիների այս կամ այն գործի փոխադարձ հարաբերությունները վարելու համար: Չէր բացառված, որ երբեմն մեծ հեղինակություն վայելող կինն էր ղեկավար լինում կամ խորհրդատու, որին նույնպիսի մեծ հարգանքով լսում ու ենթարկվում էին տնեցիները և գյուղացի կամ շրջակայքի ազգաբնակչությունը:

Աշխատանքի բաժանումը աշխատող ձեռքերն էին կատարում: Բացառիկ դեպքերում էր, որ տանտիրոջը նեղություն տային աշխատանքի բաժանման համար:

Ամուսինները, լիներ տղամարդը թե կինը, իրար երբեք անուններով չէին կանչում, այլ խոսքն ուղղում էին նրան և ասում՝ ինչ որ պիտի ասեին, թեկուզ իրարից որոշ տարածությամբ հեռու լինեին: Նորահարսները մի քանի երեխայի մայր դառնալուց հետո իսկ, իրենց սկեսրոջ կամ տագրոջ մասին ուրիշի հետ խոսելիս, նրա ամենափոքր որդու անունը հիշելով, ասում էին՝ «Այսինչի կամ այնինչի մամը» (մայրը) կամ բաբը (հայրը), առանց նրանց անունները տալու: Զավակները՝ տղա թե աղջիկ, իրենց ծնողների հետ խոսելիս, անկախ իրենց տարիքից, մեծ թե փոքր, անունները տալով էին խոսում, իսկ պապիկին՝ հոր կողմից, **ջոբո**, մոր կողմից՝ **խալբաբ** էին ասում, հոր կողմից՝ տատիկին - **ջոջո**, մոր կողմինին՝ **խալմամ** էին ասում, հորեղբորը՝ **աբո**, մորեղբորը՝ **խալո**, հորեղբոր կնոջը՝ **հարսիկ**, մորեղբոր կնոջը՝ **խալոկնիկ** կամ **քեռակին**, եղբոր կնոջը՝ **հարս**, կնոջ եղբորը՝ **աներձագ**, իսկ կնոջ քրոջը՝ **բալթուզ** (քենի), երկու եղբայրների կանանց՝ **դեքարկին** (տագոր կին):

Ծերունիները, տանուտեր թե այլք, մեծ հարգանքի էին արժանանում: Տանը նա միշտ նստում էր օջախի (թվեք) ձախ կողմը, կերակրի ժամանակ սեղանի գլուխը, որևէ բան բաժանելիս կամ մատուցելիս, նախ նրան էին տալիս, որից հետո մյուսներին: Օջախի ձախ կողմում նրա առզելն էր դրվում:

Տան համար որևէ բան գնելիս նրա համաձայնությունն էին հարցնում, մի խոսքով, առանց նրա կամքի որևէ կարևոր գործ չէր կատարվում: Բացի տանուտերից և ծերունիներից, նաև հարգալից, սրտաբաց և անկեղծ վերաբերմունք ունեին սասունցիներն իրենց դրացիների, ծանոթի և անծանոթի հետ: Լեռնցու լայն կրծքի մեջ բաբախում էր մի քնքուշ սիրտ այն-

քան ժամանակ, երբ տնտեսական կամ կենցաղային մի խնդիր չէր հուզել նրան, չէր խռովվել նրա սիրտը: Երբ խախտվում էր նրա հոգեկան հանգիստը կամ վիրավորվում ինքնասիրությունը, երբ որևէ բան սպառնում էր նրա կյանքին, աշխատանքի արդյունքին և ընտանեկան պատվին, նա կդառնար այնքան դաժան, որ հանգիստ խղճով կսպաներ սպառնացող թե՛ թշնամուն, թե՛ բարեկամին:

Կինը ժառանգական իրավունքից զուրկ էր, շարժական և անշարժ գույքից բաժին ստանալու իրավունք չուներ, նա տեր էր միայն իր հագուստին և զարդեղենին: Նրա իրավունքները չէին տարածվում և իր զավակների վրա, երբ ամուսինը մահանում էր և ինքն ամուսնանալու համար հեռանում էր նախկին ամուսնու տնից: Նրա զավակները մնում էին առաջին ամուսնու տանը, իսկ մեռնող ամուսնու անշարժ և շարժական գույքը պատկանում էր ամուսնու եղբորը, հորը, որոնք այդ տան տերն էին հանդիսանում: Եթե մեռնող ամուսինն իր հորից և եղբայրներից բաժանվել էր կենդանության ժամանակ, նրա մեռնելու օրվանից կինն իրավունք ուներ իր ամուսնու տան վրա, լրիվ իրավունքներով անշարժ և շարժական գույքի տեր հանդիսանալով: Ամուսնանալիս, եթե միայն աղջիկ զավակ ուներ, կարող էր իր աղջկան և անձնական գույքը՝ հագուստ, զարդեղեն, տանել իր հետ նոր ամուսնու տուն, իսկ արու զավակը մնում էր հոր տանը, տեր դառնալով այդ ծխի անշարժ և շարժական գույքին: Եթե այդ արու զավակը շատ փոքր էր, պապի կամ հորեղբոր տանն էր մնում մինչև չափահաս դառնալը և իր «տուն-տեղի» վրա գնալը, ծուխ կազմելը: Ընդհանրապես կինն էլ, տան աղջիկն էլ, հարսնացուն էլ, նորահարսն էլ, «տան դրսի պատ» էին համարվում, այսինքն՝ այդ տնից մեկնող կամ մեկնելու թեկնածու: Կնոջ վերոհիշյալ իրավունքներն ուներին տան բոլոր աղջիկները. հարսներն ու հարսնացուները, որոնք հյուրեր էին համարվում այդ տանը, միայն ջոջոն էր օգտվում լրիվ իրավունքով: Նա կարող էր եղբոր բաժին ստանալ:

Բազմակնություն Սասունում գոյություն չուներ: Սասունի տասը շրջաններում բնակվող հայերի մեջ, վերջին տարիների մի հիսնամյակում, միայն մի բազմակնության դեպք է կատարվել Խիանի շրջանի Սաղտուն գյուղում: Մարգո (Մարգար) անունով մի մարդ երկու կին է առնում, օջախն առանց արու ժառանգի չթողնելու համար:

Հասարակությունը բազմակնությունը համարում էր «օրենքից-կրոնքից» դուրս և ատելությամբ էր վերաբերվում այդ օրենքը խախտողին:

Բազմակնությունից ծնված երեխաները և՛ հոր և՛, այնուամենայնիվ, հասարակության կողմից վայելում էին ընդունված իրավունքները:

Խորթ զավակ համարվում էին միայն տարբեր մորից ծնվածները, որոնք ամուսնացող մոր հետ էին գալիս և կոչվում էին հալըկ կամ մոզի, իսկ երկրորդ և առանց զավակի եկող և ամուսնացող կնոջից ծնվածները հարազատ զավակ էին համարվում և օգտվում նույն իրավունքներից, ինչից որ օգտվում էին առաջին և մահացած կնոջից ծնված երեխաները:

Ամուսնացող կինը երբ այրիանում էր և չէր ամուսնանում, մնում էր մեռնող ամուսնու տանը, վայելում էր ամուսնու բոլոր իրավունքները, իսկ եթե ցանկանում էր ամուսնանալ, հայտնում էր նախ իր մորը, եթե նա ողջ էր, ապա իր քույրերին կամ եղբայրներին, կամ վերջապես, իր հորը, որոնք մի երրորդ մարդու միջոցով իրենց աղջկա այդ ցանկությունը հայտնում էին նրա սկեսրոջը կամ սկեսրայրին և խնդրում նրանց համաձայնությունը: Այդ դեպքում այրիացած կնոջը «դարձի» էին տանում հոր տուն, ինչպես հարսներին դարձի տանելը: Այդ կնոջ «սկեսուր-սկեսրայրը» կամ տագրերը նրա արու և աղջիկ զավակներին չէին տալիս նրան և պահում էին իրենց տանը: Եթե հոր տուն գնացող կինը պահանջեր իր զավակներին, միայն աղջիկ զավակներին էին տալիս նրան:

Այրիացած կինը, վերադառնալով հոր տուն, ամուսնանում էր և նրա ամուսնական ծախսերը, որը, ըստ սովորության, շատ քիչ էր և հարսանիքն էլ անշուք, կատարում էին նրա նոր ամուսնու հայրն ու եղբայրները: Եթե այրիացած կինը շատ համեստ ու սիրելի էր եղել մեռնող ամուսնուն և սկեսրայր-սկեսրոջը, այդպիսի դեպքերում վերջիններս կամ տագրերը մասնակցում էին իրենց որդու կամ եղբոր այրիացած կնոջ ամուսնական ծախսերին:

Մեռնողի եղբայրը, կամ նույն ընտանիքի մի ուրիշ տղամարդ չէր ամուսնանում նույն տանը հարս եղած և այրիացած կնոջ հետ, թեկուզ 7-10 պորտ հեռու լինեին իրարից: Բայց եթե այդ հարսնացուին միայն նշան էին դրել և դեռ հարս չէր եղել ու նշանած տղան մեռել էր, եղբոր սրբազան պարտքն էր

առնել իր եղբոր նշանածին: Հաշվի էր առնվում, թե արդյոք տղայի և աղջկա ծնողները ցանկանո՞ւմ էին մարդությունը (խնամիությունը) շարունակել և ամուսնացնել եղբորը եղբոր նշանածի հետ: Բայց ոչ մի տղամարդ կտակ չի արել կամ ցանկություն հայտնել, որ իր կինն այսինչ մարդու հետ ամուսնանա: Սակայն, երբ մեռնողն արու զավակ կամ զավակներ էր ունենում, պատահում էր, որ կտակեր կնոջն ընդմիշտ այրի մնալ և իր «օջախը չմարել»: Կնոջ կամ ամուսնու՝ ուրիշի հետ կենակցելու հանցագործությունը նրանց եղբայրների կամ հայրերի կողմից սպանությամբ էր վերջանում: Ընդհանրապես ոչ մի քրեական կամ քաղաքական հանցագործ թուրքական պետությանը չէր հանձնվում, հանցագործին պետության ձեռք չէին տալիս, դատը կատարում էին ռեսն ու երեցփոխանները, բարոյական-կենցաղային հարցերը վճռում էին նրանք, որոշման կատարումը հանձնելով մերձավորագույն տղամարդուն՝ հորը, եղբորը, հորեղբորը, որդուն և այլն:

Ամուսինների բաժանման դեպքերը հազվագյուտ էին, կարելի է ասել, որ երբեք տեղի չէին ունենում: Եթե մի մարդ իր կնոջ հետ ապրել չուզեր, կամ ընդհակառակն, մի կին իր մարդու հետ՝ այդ դեպքում նրանք իրենց նոր ընտրյալի հետ մի գիշեր անհետանում էին հայրենի գյուղից, գնում Սասունից դուրս՝ Մուշ, Սլիվան, Բաղեշ կամ Էրզրում, այլևս երբեք չվերադառնալու և սպանման չենթարկվելու համար: Նրանք իրենց հետ չէին վերցնում ոչ մի երեխա, ոչ կնոջ, ոչ էլ տղամարդու կողմից: Երեխաները, տղա թե աղջիկ, մնում էին ծնված տանը և չափահաս դառնալով, յուրաքանչյուրը վայելում էր իր սեռին համապատասխան իրավունքները: Տղան տիրում էր շարժական և անշարժ գույքի իր ժառանգական բաժնին, որ կոչվում էր «աղբոր բաժին», իսկ աղջիկն իր զարդ ու հագուստեղենին:

Սասունում մանուկների դաստիարակության գործը թողնված էր նահապետական ընտանիքի վրա, որի մեջ դեր ուներ նաև համայնքը: Բնակչության վերաբերմունքը տղաների և աղջիկների հանդեպ տարբեր էր: Օջախը **կանաչացնողը** (անմար պահող) տղան էր համարվում, որի համար միայն աղջիկ զավակ ունեցողները ամեն սրբի ու գրբացի դուռ էին ծեծում, որ «Աստված մի ուրծ (ործ) ժառանգ տա»: Այդպիսի խնդրան-

քից հետո ծնված զավակների գլխի մազերը չէին խուզում մինչև 7-8 տարեկան լինելը, որից հետո տանում էին նույն սրբի դուռը, որ «մուրազատուր» էր եղել, նոր խուզում վարսերը: Մայրը այդ մազերը բերում պահում էր իր սնդուկի մեջ:

Իրար հալ-բեֆ հարցնելիս, արու զավակ չունեցողին պատասխանելիս ասում էին. «Աստված չաղգըցու զքու բադան» (Աստված քեզ արու զավակ տա՝ ծաղկեցնի քո մարմինը):

Արու զավակներից անդրանիկին, մինչև 1900-ական թվականները, իրավունքների որոշ առավելություն էր տրվում, երբ եղբայրներն իրարից բաժանվում էին: Անդրանիկության այդ իրավունքը վերացվել է 1900-ական թվականներից: Այդ առավելություն տալն արտահայտվում էր մի արտ, մի եզ կամ մի քանի գլուխ փոքր եղջերավոր անասուն ավելի տալով իր «աղբոր բաժնից»: «Աղբոր բաժին» նշանակում էր «հալալ-հավասար» չափով, անշարժ և շարժական գույքը բաժանել եղբայրների թվի վրա:

Երեխաներին փոքր հասակից՝ 4-6 տարեկանից, վարժեցնում էին. տղաներին՝ դրսի, իսկ աղջիկներին ներսի՝ տնային աշխատանքների: Այդպես՝ ջուր բերել, գետին (տան հողե հատակը) մաքրել, մորն օգնել հաց թխելիս, ամանեղեն լվանալիս և այլն: Տղաները ուլարած, գառնարած, հորթարած էին դառնում, դաշտային աշխատողներին կերակուր տանում:

Անչափահաս և որբ մնացած տղային կամ աղջկան վերցնում էին հորեղբոր կամ այլ մոտիկ ազգականի մոտ և պահում մինչև չափահաս դառնալը: Եթե այդ որբը տղա էր, մինչև ամուսնանալը և երբեմն էլ ամուսնանալուց հետո, մնում էր իր խնամակալի մոտ, առանց պայմանադրության, իսկ եթե բաժանվել ցանկանար նրանցից, ստանում էր լրիվ իր «աղբոր բաժինը», եթե եղբոր տղա էր: Իսկ աղջկան խնամելով մինչև հարս դառնալը, հարսի իրավունքներով էին բաժանում իր խնամակալից. նրան տալով միայն ջրհեզ, բայց ոչ «աղբոր բաժին»: Եթե որբը կամ անչափահասը միևուճար աղջիկ էր, կամ աղջիկները եղբայր չունեին, ամուսնանալուց հետո այդ աղջիկների հայրական ժառանգությունն ամբողջովին. շարժական թե անշարժ գույքով, պատկանում էին խնամող եղբորը, պապին, մի խոսքով՝ նրանց արու զավակին:

Խնամակալության ոչ գրավոր, ոչ բանավոր ձևակերպում չէր լինում: Գոյություն ունեցող ավանդական սովորության համաձայն, խնամակալի կողմից խախտման դեպքում գյուղի «մեծերը»՝ ռեսն ու երեցփոխանները, կիրառում էին բաժանքն ըստ այդ ավանդական սովորության:

Խնամակալն իր կատարած խնամքի և ծախսերի համար իրավունք ուներ և օգտագործում էր որբի կամ խնամվողի շարժական և անշարժ գույքը, մինչև նրանց չափահասությունը և ամուսնության կամ բաժանքի կատարումը:

Դրացիության հարաբերությունները Սասունում գրեթե նահապետական էին: Այստեղի գյուղական թաղերում բնակվում էին ազգակցական-արենակցական սերտ կապերով իրար հետ կապված ընտանիքները, որպեսզի տնտեսական և պաշտպանական գործերում իրար օգնեին: Այս երևույթը հայրիշխանական հարաբերության մնացուկ էր, որ առաջ էր եկել հնագույն տոհմերի քայքայումից հետո և շարունակվում էր գոյություն ունենալ մինչև 1914-1915 թվականները:

Հայրիշխանության հատկանիշներն էին՝ ընդհանուր արոտավայրեր ունենալը, կոլեկտիվ ձևով աշխատանք կատարելը՝ պահանջի դեպքում, թշնամու հանդեպ վրիժառու լինելը և ընդհանուր ընտանիքի համար համայնական գերեզմանատուն ունենալը և այլն:

Հարևան ընտանիքներն ընդհանրապես արյունակիցներ էին, որովհետև գյուղերի և հողերի իրարից ցրված լինելու համար ամեն մի գյուղի կամ թաղի և հողամասի վրա տեղավորված էին գերդաստաններից գոյացած հարևաններ: Այնուամենայնիվ, այդ հարևանների մեջ երբեմն այս կամ այն պատճառով կային և ոչ արյունակից դրացիներ էլ:

Ընդհանրապես հարևանությունը շատ մտերմական էր և մեկը մյուսի տնից օգտագործման համար մի գործիք կամ մի իր ու նյութ վերցնում և գործածում էր առանց հարևանին ասելու: Դա սովորական բան էր. կարծես թե գործիքը, իրը կամ նյութն ընդհանուրի սեփականությունը լիներ: Հարևանները իրարու ընտանեկան առօրյա գործերում էլ էին խառնվում, ուխտագնացություններին միասին էին գնում: Այնուամենայնիվ, հակառակ պատկերն էլ կար և երբեմն նույնիսկ արյունակից հարևաններն էլ իրար հետ գժտվում էին, վեճ ու կռիվներ ունենում:

Իրար հասակակից և իրավահավասար մարդկանց մեջ, տղամարդ թե կին, բարևելու միակ ձևը բառային էր («բարև», «Աստծու բարին»), ձեռք բռնելով բարևելու կամ գլխարկ հանելու սովորություն գոյություն չուներ: Տարբեր հասակի և իրավունքի տեր մարդկանց մեջ բարևելու ձևը՝ աջ ձեռքը կրծքին դրած, գլխի թեթևակի խոնարհեցումով էր լինում: Այդպես էին բարևում որդիներն ու թոռները հայր-պապիկներին, հարսները՝ սկեսուրին, տագրը՝ եղբոր կանանց: Աղաներին և բեկերին բարևելու ձևը տարբերվում էր գլխի ավելի շատ խոնարհեցումով և ձեռքն ավելի շատ կրծքին պահելով: Երբեմն ստորադրյալը բարևելու այս դիրքում մնում էր, մինչև որ աղան կամ բեկն ասեր՝ «նստիր» և բարևողը ետ-ետ քաշվելով, առանց կռնակը «մեծերին» ցույց տալու՝ իրեն ցույց տրված տեղն էր նստում:

Դրացիների մեջ երբեմն պատահած ընդհարումներն ու վիրավորանքները բռնկման բարձր աստիճանի էին հասնում, բարձրաձայն խոսելու մի ճակատամարտի, դաժանության հասնելու աստիճանի, իսկ երբ անցնում էր ընդհարման առիթը, խաղաղվում էին և խռովությունը վերացնում, վերականգնվում էին հին հարաբերությունները: Արտերին կամ խոտերի դեզերին անասունների կողմից հասցված վնասի ժամանակ երբեմն վնաս հասցնող անասունի պոչն էին կտրում, եթե հովիվը կամ հոտաղը ձեռքերը չընկներ: Նման բոլոր կոնֆլիկտները, եթե ներտնային էին լինում, «մալխոն» հաշտեցնում էր կամ «դատը տեսնում», եթե դրացիների մեջ էր լինում, «դատը տեսնում էր» գեղի ռեսը (գյուղապետը): Իսկ եթե հնարավոր չէր լինում և խռով էին մնում, հաշտեցումը լինում էր մեծ տոներին, հաղորդվելուց առաջ, որովհետև հավատում էին, թե խռոված մարմնում հաղորդը «չէր մտնում»:

Հյուրասիրությունը նահապետական էր: Ընդհանուր սովորություն էր ասել «խոնախն Աստծուն է» (հյուրը Աստծու ուղարկածն է): Ծանոթ թե անծանոթ հյուրը ընդունվում էր մեծ հարգանքով, վայելում տան անդամի իրավունքը և ճամփու դնելիս մինչև տան անկյունը տնատերը նրան ճամփու էր գցում:

Հյուրի հոգատարությանն էր արժանանում և մուրացիկը: Աղքատ ընտանիքը, վստահ հյուրասիրության սովորություններին, գնում այս ու այն տնից օգնություն էր ստանում:

2. ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԻՔ

Սասունում, տղաներն ու աղջիկները իրենց մանկության և պատանեկության շրջանները, խաղն ու աշխատանքները միասին էին անցկացնում: Սովորական և բնական երևույթ էր տեսնել տղաներին ու աղջիկներին ուլերի, գառների և հորթերի հետ սարալանջերում նրանց արածացնելիս, կոզիկ ու կանկար հանելիս, խաներն ու խավրծիլ քաղելիս կամ տանը թաթիկ-լաթիկ, մամա-լուսիկ և Յարալի Շամո խաղալիս: Ավելի մեծ համախմբումների ու շփումների առիթ էին հանդիսանում փոշտ փոշտի (Կաղանդ) Բարեկենդանի, կնունք ու հարսանիքների, գովք կամ զոզան միասին գնալու, ուխտագնացության ուրախ օրերի տոնախմբությունները, ուր տղա և աղջիկ, մանուկ և ծեր, տոնական հագուստներ ու զարդեր հագած-կապած գնում էին Ծովասարի Ս. Աստվածածին, Անթանիա և Անդոկի Ս. Հակոբ, Կեփին ու Մարութա վանք-ուխտավայրերը և 2-3 օր քեֆ-ուրախություն անում, փողի և սրնգի քաղցրահնչուն եղանակներ լսում, փահլևան-լարախաղացների խաղերը դիտում, ծաղիկներ հավաքում և իրենց մանկական աշխարհը հարստացնում, զվարճանում անմեղ ու գողտրիկ զրույցներով, «ծռում» իրար՝ սիրով կապվում իրար հետ կամ իրար հավանում, բախտավոր դառնալու ճամփան բռնում:

Ուխտագնացությունների ժամանակ աղջիկներն իրենց վարսերը քառասուն ծամ էին հյուսում և ծամթելերով՝ բուխերով զարդարում: Սարերի անթառամ ծաղիկներով նրանք պսակ-վարսակալներ էին հյուսում, դնում գլուխներին, ծաղկազարդում վարսերը գուլ ու բեյբունով, գինարբով, որն իր անուշահոտության համար արբեցնող (գինարբ) էր կոչվում: Այսպես զուգվում էին աղջիկները և «ծռեցնում» (խելագար դարձնում) իրենց տեսնող տղաներին: Աղջիկների կողմից ցուցաբերվող ամոթխածությունն ու համեստությունը, զարդ ու պճնանքից ավելի էին կապում իրենց այն տղաներին, որոնք նշանած էին փնտրում, որոնք իրենց «դուր էին գալիս», «իրենց խինդն ու արցունքը խլում»: «Խպնող (ամոթից կարմրող) աղջիկը նամուսով է»,- ասում էին տղաները:

Երբ աղջիկները 18-20 տարեկան հասակում դեռ չէին ամուսնանում, պառաված էին համարվում: Քսանից բարձր

տարիք ունեցող աղջիկներին շատ անգամ վիճակվում էր ամուսնանալ միայն այրի մարդու հետ:

Տղաները, աղջիկների «խելքն առնելու» համար, աշխատում էին իրենց ուժն ու քաջությունը ցույց տալ գուլաշի (մենամարտ), ուժ և ճարպկություն պահանջող խաղերի, անվրեպ նշանաձգության միջոցով: Հատկանշական է, որ «սասունցի տղաները մանկական հասակից անխտիր նետաղեղ» (տիր-կավան) էին շինում և նրանով ճնճղուկ ու անծեղ սպանում, բարշքով (պարսատիկ) հեռու տեղ նշան խփում, իսկ 14-15 տարեկանից անգուսպ ցանկություն էին ցուցաբերում հոր կամ որևէ մեկի հրացանով նշան խփելու «իրավունք» ստանալ կամ նրանց հետո որսի գնալ, տեսնել, թե ինչպես է որսվում քարայծը (քուվի) և սեպ ժայռերից գլորվում: Այդպիսի երիտասարդները, «ծուռ լաջերը», նշանդար (ուղիղ խփող) կոչումն էին ստանում և սիրվում էին թե՛ որսորդներից, և թե՛ ժողովրդից:

Աղջկա և տղայի սրտերը եթե իրար «կպնում» էին, իրար «ծռում էին» (սիրահարվում): Այդ դեպքում թե՛ աղջիկը և թե՛ տղան ամոթխածորեն իրենց մայրերին էին հայտնում իրենց սրտերի գաղտնիքները: Մինչև մայրերն ու հայրերն իրենց կամքը և համաձայնությունը չհայտնեին, ամուսնություն չէր կարող լինել:

Մինչև 1900-ական թվականները ամուսնությունը կատարվում էր միայն տղայի և աղջկա ծնողների ցանկությամբ և կամքով: Շատ անգամ տղա ու աղջիկ մանկությունից մինչև ամուսնությունը և առագաստի գիշերը իրար տեսած չէին լինում: Ծնողների կամքը օրենք էր զավակների ամուսնության գործում: Այնուամենայնիվ, եթե տղայի և աղջկա գաղտնի փոխհարաբերությունը կար, ծնողները նկատի կունենային այդ, եթե գտնում էին նպատակահարմար: Իսկ եթե ծնողները համաձայն չէին, աշխատում էին համոզել իրենց զավակին, որը գրեթե միշտ ենթարկվում էր ծնողի կամքին «քար դնելով» իր սիրո վրա և կատարելով ծնողների ցանկությունը:

Թեև ընդունված էր, որ տղայի ծնողներն էին աղջիկ ուզում, բայց Սասունում քիչ չէր այն երևույթը, երբ աղջկա ծնողներն էին նախապես խոսք բաց անում իրենց աղջիկը տալու այսինչի տղային և խոսում տղայի ծնողների հետ այդ մասին: Սասունի էղգարդ գյուղացի մի կին՝ Ռնդո անունով, գալիս է Գելիեգուզան գյուղի Հարմոյի գոմ կոչված թաղի սարերում բանջար հավաքե-


լու, մի քանի օր մնում Գորգենի տանը և հավաքած բանջարը հյուսում, չորացնում: Տեսնում է Գորգեի որդի Հայրոյին, բարձրահասակ, անվրեպ խփող որսորդին, և նրա մորը Եղսոյին առաջարկում, որ իր աղջիկ Գյուլիզարին ուզեն Հայրոյին կնության. «էգո, զըմ աղջիկ գիդամ քու դղա Հայրոյ»: Եղսոն Ռնդոյի հետ միասին գնում է. տեսնում էղգարդի աղջկան, բարձրահասակ և գեղեցիկ Գյուլիզարին և հարս-բերի պատրաստություն տեսնում: Որսորդ Հայրոն նախ հրաժարվում է, գյուղից փախչում: Եվ որովհետև ծնողների կամքը օրենքի ուժ ուներ, Հայրոն իր գլուխը խոնարհում է:

Եթե տղան սիրում էր աղջկան, սակայն տան գլուխը (մեծը)՝ հայրը, կամ հորեղբայրը համաձայն չէր, իսկ նա չէր կարող իր «սիրտը կտրել» սիրած աղջկանից, փախցնում էր աղջկան և ուրիշ գյուղ տանում, պսակվում նրա հետ, որից հետո բանակցություն էր սկսվում երկուստեք ծնողների միջև և հարցն ըստ ընդունված սովորությունների լուծվում էր:

Սասունում հարս ընտրելիս առավելությունը տալիս էին «ասլու ջընսին»՝ ազգակցական ամուսնությանը (էնդոգամիա), սակայն սովորական էր համարվում նաև ոչ ազգակցական ամուսնությունը (էքսոդամիա):

Ինչպես ասում է Ֆ.Էնգելսը, խալանը կամ գլխագինն առաջացել էր նրանից, որ կանայք, որպես աշխատուժ, թվով, աճով ավելի քիչ էին, քան տղամարդիկ և «նրանց հարկավոր էր փնտրել»:

Աղջիկ առևանգելու դեպքերը երբեմն ողբերգությամբ էին վերջանում: Սպանում էին նաև սեփական աղջկան, որն իր նամուսը ոտքի տակ էր առել: Եղել են դեպքեր, որ առևանգվող աղջկա հայրը օրեր և շաբաթներ շարունակ զենքը ձեռքին շրջել է, գտնելու զույգ սիրահարին՝ սպանելու մտադրությամբ: Մի հարսանեկան հանդեսի ժամանակ Գելիեգուզանի դարբին Համզեի գեղեցկուհի աղջկան՝ Աննիկին, փախցնում է նրա սիրահար Ազատի Խաչոն: Աննիկի հայր Համզեն վերցնում է իր չախմախլին և հետապնդում Խաչոյին ու Աննիկին: Երկար փնտրելու հետո, անտառի մի անկյունում նրանց նկատում է և հրացանն ուղղում, որ փամփուշտ դնի և խփի «անզգամ Աննիկին»: Ծերունի Համզեն նկատում է, որ փամփշտակալը թարս է գցել ուսին և արագ վազելիս բոլոր փամփուշտները դատարկվել են: Զայրացած ծերուկը, նրանց չտեսնելու համար,



Հարսն ու փեսան

Աստծու կամքը համարելով այդ, կնճռոտած դեմքը դարձնում է և զայրույթից դողդողալով տուն վերադառնում: Աննիկն ու Խաչոն ազատվում են Համզեի «հերսից»:

Տալվորիկի Արտխու գյուղի Սլոյի աղջիկ Նուրեն սիրելիս է լինում Մզրա գյուղի Սելիմի տղա քուրդ Ավդուլային և փախչում, նրա հետ ամուսնանում է: Նուրեի ծնողներն ակամայից հաշտվում են այդ մտքի հետ: Սասունցիներն այսպիսի ամուսնությունը համարում էին կորուկ-մոլորուկ, ուստի և իսպառ կապ չէին ստեղծում: (Նուրեի տղաները 1915թ. կոտորածից ազատում են Սլոյի տունը և նրա ազգականներին):

Առևանգնման այս երևույթները հիշեցնում են հայ ժողովրդի հեթանոսական շրջանը, ինչպես Արտաշեսի ձեռքով Ալանաց օրիորդ Սաթենիկի առևանգումն էր:

Առևանգումների հիմնական պատճառը հանդիսանում էին՝ խալաև վճարելու տնտեսական դժվարությունը, ծնողների անհամաձայնությունը և բացառիկ դեպքում՝ սիրված աղջկա մերժումը: Վերջին ձևով կատարված բռնի ամուսնությունը աղջկա համար ողբալի հետևանքներ էր ունենում:

Գլխագին վերցնելը փեսայի ծնողներից ընդհանուր, ավանդական սովորություն էր, որը շարունակվում էր ամենավաղ ժամանակներից մինչև XIX դարի վերջը:

Բացի Խութից և Մոտկանի շրջաններից, որոնք ավելի ավանդապահ էին, մյուս վայրերում XX դարի սկզբին գլխագնի սովորությունը տեղի էր տվել: Բայց դրա մնացուկը, այսինքն՝ հարսին և նրա ազգականներին առատ նվերներ տալու ձևերը շարունակվում էին և այժմ էլ կան: Այդ նվերը **կթխա** է կոչվում:[1]

Գլխագնի չափը կամ գումարը սկզբնական շրջանում 11-20 օսմանյան ոսկու էր հասնում, թեև պետք է նշել, որ հարսի հետ դրված օժիտը երբեմն գերազանցում էր խալաևի գումարը: Գելիեգուզանցի Սիմոյի էկոբի ամուսնության ժամանակ, հարսի՝ Շուշեի խալաևը 20 ոսկի է եղել: Հարսանիքից հետո,

[1] Պետք է ասել, սակայն, որ գլխագնի այդպիսի հանկարծական անկումը ոչ թե բնական ընթացքով կատարվեց, այլ ժողովուրդի նյութական ծանր վիճակի հետևանքով: Առանձին նշանակություն ունեցավ Սասունի 1904թ. ապստամբությունն ու կոտորածը, որին հետևեց բնակչության գրեթե համատարած ընչազրկությունը: Այդ պատճառով, նույնիսկ կթխան էլ մի տեսակ կեղծ ձև էր ընդունել: Պատմում են, թե 1904-1905թթ. մի ոսկին մի քանի կթխայի էր ծառայում՝ մեկը մյուսին փոխ տալով այդ ոսկով յոթ հարսանիք են արել:

երբ հարսի բերած օժիտն են հաշվում, 20 ոսկուց ավելի է բռնում (չհաշված քավորի համար բերած նվերը):

Մանկահասակ երեխաներին օրորոցում, նույնիսկ դեռ չծնվածներին, նշանելու դեպքեր, խոսքկապներ էին լինում: Օրորոցի աղջկան նշանելը կոչվում էր **օրուց խազիլ** (օրորոցի վրա խազ քաշել) կամ **օրուց նշնել**: Դա կատարվում էր, երբ տղայի ծնողները ցանկանում էին օրորոցում եղած աղջկա ծնողների հետ **մարդութին** (խնամիություն) անել: Դրա համար տղայի մայրը կամ հայրը, տվյալ աղջկա ծնողների համաձայնությամբ, օրորոցի վրա խազ էին քաշում: Դա կատարվում էր նախ այն պատճառով, որ Սասունում իգական սեռի ածը համեմատած արական սեռի հետ՝ պակաս էր և ապա տղայի ծնողները ցանկանում էին անպայման ծանոթ տան աղջիկ ուզել: Երրորդ՝ նկատի ունեին ազգատոհմը՝ **ասլն ու ջինսը**:

«Օրուց խազիլ» կամ «օրուց նշնիլ»-ը հավասարազոր էր դառնում ապագայում: Այն ի սկզբանե հայտարարվում էր ի լուր ամբողջ գյուղացիների: Մանկահասակների ծնողներն այդ օրվանից խնամիներ էին դառնում և կատարում փոխադարձ խնամիական պարտականություններ:

Դեռ չծնված երեխաների **նշանդրեքը** լինում էր երկու կողմի ծնողների միջև կատարված նախնական զրույցի և պայմանավորվածության հետևանքով: Այդ զրույցը անպայման իրականություն կդառնար, եթե ունենային տարբեր սեռի զավակներ:

Հարսանեկան ծեսերն ունեին մի քանի գլխավոր աստիճաններ: Դրանք էին՝ **խոսքկապը, նշանդրեքը, խալանկտուրը** կամ հետագայում **կթխան խլդաթը** (հարս տեսնելը), **հարսնածը, պսակը և առագաստը**:

Խոսքկապ կոչվում էր այն զրույցը, որ տեղի էր ունենում իրար հետ խնամի դառնալու ցանկություն ունեցողների կամ նրանց կողմից ուղարկված միջնորդների միջև: Այդ ժամանակ տղայի ծնողը կամ նրա ներկայացուցիչը աղջկա ծնողի հետ «խոսքկապն» ամրացնում էր մի փոքրիկ դրամական նվերով՝ մեկ չարիկ (5 ղուրուշ) կամ մեկ մեջիդիե (20 ղուրուշ) կամ մեկ ոսկի դնելով այն սեղանի վրա, որի շուրջը զրուցում և մի թեթև ճաշում էին: Այդ դրամական նվերն ինքն էլ կոչվում էր «խոսքկապ»: Խոսքկապի գնալը շատ գաղտնի էր լինում, առանց նույնիսկ մոտիկ ազգականներին հայտնելու: Այդ զգուշությունը կատարվում էր նրա համար, որ գործն անհա-

ջող լինելու դեպքում երկու կողմերի արժանապատվությունը (արզը) չկոտրվեր: Այսպիսի դեպքում թե՛ տղայի և թե՛ աղջկա հայրը կամ նրանց ներկայացուցիչները իրարից բաժանվելիս փոխադարձաբար իրար խնդրում էին՝ «Քարըմ դրեք վըր խոսքկապին», այսինքն՝ խոսքկապը գաղտնի պահեցեք:

Խոսքկապի հաջողության օրվանից, տղա թե աղջիկ, այլևս ազատ չէին զգում իրենց մանկական խաղերին մասնակցելու, ուլ ու գառների հետ սարերի լանջերում լինելու: Մանավանդ աղջիկը, այլևս խաղ ու դաղից հեռու, տան ներքին աշխատանքներով էր զբաղվում, քիչ աչքի երևալու համար: Դրանով նա իր օժիտի պատրաստման աշխատանքով զբաղվելու ժամանակ էր ունենում: Խոսքկապի ենթակա տղան ու աղջիկը այդուհետև բավարարվում էին միայն ամաչկոտ նայվածքներ ու ժպիտ փոխանակելով՝ առանց իրար հետ խոսելու:

Նշանդրեքը ամենահիմնական, վճռական բաժինն էր կազմում ամուսնական-հարսանեկան ծեսերում: Այն կատարվում էր հատուկ նախապատրաստությամբ և շքեղությամբ, որին, բացի տղայի և աղջկա ծնողներից, մասնակից էին դարձվում գյուղի ռեսը, քահանան և սակավ թվով շատ մոտիկ բարեկամներ: Նրանք տղայի տնից որպես «նշանվորներ» (նշան դնողներ), իրենց հետ վերցնում էին մի ոչխար, մոտ մի խիդր յուղ (4-5 կգ), մեկ երկու կոտ բլղուր, և այլ մթերքներ, գնում էին աղջկա հոր տուն գիշեր ժամանակ:

Ոչխարը կամ արջառը և մթերքները «նշանավորներից» առաջ տանում էր մի մարդ, որը շատ խորամանկ և ճարպիկ պիտի լիներ, որ մինչև աղջկա հոր տուն մտնելը իրեն մարդ չտեսներ, կամ չկռահեր, թե դա «աղվեսն» է: Այսինքն՝ նա նշանդրեքի եկողների գալուստը հայտնողն էր, որպեսզի խնամին նրանց դիմավորելիս անպատրաստ չգտնվեր:

Եթե «աղվեսը» խորամանկությամբ խաբս չտար և աղջկա գյուղի կամ թաղի ճժերն ու ծռերն իմանային, էլ ինչ օյին ասես՝ նրա գլխին չէին խաղա: Էլ գդակ թռցնել, ոչխարը խլել, փոշեջրով (մոխրաջրով) նրա վրան գլուխը ծածկել, ծեծել, «հոգին հանել» մինչև խնամիներից մեկն օգնության հասներ նրան և «գերությունից» փրկեր: Իսկ ճարպիկ «աղվեսը», եթե չէր նկատվել և խնամու տունն էր մտել, «հաղթել էր ճժերին ու ծռերին»՝ գեղի խորտերին:

Ապա գալիս էին նշան դնողները, որոնք տոնական շորեր հագած, գդակ դրած, փուշի կապած, կունտոկի աբայի հագած, իսկ կանայք խուտնի ղումաշի հագուստների մեջ կորած, մոտենում էին աղջկա հոր տանը: Աղջկա ծնողները, նրա ընտանիքի անդամները, բոլորն էլ ոտքի կանգնած դիմավորում էին ծնողներին, նրանց ձեռքի պրերը (գավազան) և զենքերն առնում, համապատասխան տեղեր տեղավորում. ապա քուրսի, աթոռ դնում, բրդուն (փսիաթ), թաղիք փռում տան օջախի աջ և ձախ կողմերը, որոնց վրա, օջախի քունջից սկսած, նստում էին ըստ աստիճանի՝ նախ քահանան, ապա գյուղի մեծերից եկողները, իսկ կանայք առանձին էին նստում, իրար հալ ու քեֆ հարցնում, հանգստանում: Աղջկա կողմից նույնպես քիչ թվով մտերիմներ ու ազգականներ, տվյալ գյուղի կամ թաղի մեծեր, հրավիրվում և ըստ պաշտոնի դասավորվում էին օջախի աջ ու ձախ կողմերում: Տղայի կողմից եկող հասակավոր մարդկանցից մեկը զրույց բաց անելով խոսքն ուղղում էր աղջկա հորը և ասում, որ իրենք եկել են մի լաչակ[1] խնդրելու և սպասում նրա պատասխանին:

Աղջկա հայրն այդ ժամանակ նայում էր իր կնոջը և ասում. «Գնիգ, դու ես կաք տվել մեր աղջկան, ի՞նչ է քու միտք»: Աղջկա մայրը հուզված պատասխանում էր. «Մարդ, քու և եկող հարգելիների կամքը թող լինի»: Հանդիսականները խոր լռությամբ լսում էին աղջկա ծնողների լակոնիկ խոսքերը և սպասում պատասխանի: Աղջկա հայրը դառնալով իր խոսակցին՝ տղայի կողմին «լաչակի» խնդրողին պատասխանում էր՝ «Բարով հազար բարի եք եկել, Աստված թող մեզ չամանչացնի, թող լինի»: Այդ խոսքերից հետո հարսնացուի համար բերած նվերները մի սեղանի վրա դրած բերում էին: Այդ նվերներին էին՝ ոսկե գինդ, մատանի և մանյակ կամ դրանցից մեկն ու մեկը, նայած բերողի կարողությանը: Քահանան նվերներն օրհնում էր և շնորհավորում նշանդրեքը: Հանդիսականները միաբերան կոչում էին՝ «Աստված շնորհավոր անի»: Ապա տղայի կողմից եկող մի կնոջ ձեռքով հարսնացուի օղերը կախում էին ականջներից, վզնոցը՝ վզից և մատանին անցկացնում ձախ ձեռքի մատնեմատին:

[1] Լաչակը կանացի գլխի վարսակապն էր, որի անունով, խորհրդանիշի ձևով ակնարկվում էին նաև աղջիկները:

Այնուհետև սկսվում էր նշանդրեքի հանդեսը: Աղվեսի բերած ոչխարը մորթում, մի մասն շտապ խորոված էին անում, ուտում, շնորհավորական թասերով գինի խմում, մինչև կերակուրները պատրաստվում էին: Նշանդրեքը տևում էր մինչև առավոտ:

Խալանկտուրը կամ **կթխան** կատարվում էր այդ նույն օրը: Երբ դեռ խալան (աղջկա գին) կար, տրվում էր 1-10-20 ոսկի, ըստ տղայի հոր կարողության և երկուստեք համաձայնության: Դա երբեմն երկար բանակցությունից հետո էր գլուխ գալիս, մերթ դժգոհություն էր առաջանում, բայց միշտ լուծման հասնում: Իսկ երբ խալանի փոխարեն կթխան էր մնացել, տրվում էր 1-2 ոսկի աղջկա հորը, որպես նվեր: Ըստ ժողովրդի գնահատականի՝ նշանդրեքն ու կթխան հարսանիքի կեսն էր համարվում:


Խլղաթ - Նշանդրեքից մինչև հարսանիքը որոշված մի օր հարսնացուի հարսանեկան հագուստը տանելու և աղջկա տանը պատրաստելու աշխատանք էր կատարվում: Այդ հագուստների ամբողջությունը խլղաթ էր կոչվում: Հարսնացուի հագուստը թանկարժեք կտորից էր լինում, մետաքս ու խուտնի, նայած տանողի՝ տղայի հոր կարողության և երկուստեք ընդունված համաձայնության: Դրանք չկարված կտորեղեններ էին, որոնք պետք է հարսնացուի տանը ձևեին: Ամեն անգամ կտորը ձևելիս ասում էին՝ «Աստված շնորհավոր անե»: Բացի կտորեղենից, տղայի կողմից էին տարվում նաև հարսի քողը, կարմիր սոլերը կամ կոշիկները և այլն: Խլղաթի մասն էին կազմում նաև այն նվերները, որ տալիս էին տղայի կամ աղջկա կողմի մոտիկ ազգական բարեկամները հարսնացուին տեսնել գնալու ժամանակ:

Աղջկա և տղայի ընտանիքների միջև, հատկապես կանանց միջոցով, կապ էր ստեղծվում՝ հագուստները կարելու, այդ առթիվ անհրաժեշտ աշխատանքներ կատարելու, խորհուրդներ տալու, մի խոսքով, հարսանիքի պատրաստություններ տեսնելու և քերի բան չթողնելու համար:

Ոչ մի պայմանով, նույնիսկ աղջկա տանը պատահող մեծ ուրախության կամ դժբախտության դեպքում, տղան աղջկա տուն գնալու, նրան տեսնելու իրավունք չուներ:

Հարսնած - Հարսանիքները Սասունում լինում էին դաշտային աշխատանքներն ու ձմռան նախապատրաստությունը ավարտվելուց հետո, ընդհանրապես աշնան ամիսներին, և ավարտվում Բարեկենդանի վերջին: Մեծ պասից մինչև հա-

ջորդ աշունը հարսանիք չէր լինում, չհաշված բացառիկ դեպքերն ու առևանգումները, որոնք հարսանեկան լրիվ ծիսակատարությամբ չէին կատարվում:



Ուռք /կենաց ծառ/

Հարսնածը շաբաթվա ամեն մի օր կարող էր նշանակվել, բացի չորեքշաբթիից: Այդ օրը ոչ հարսնած էր գնում, ոչ պսակ էր լինում, որովհետև չար օր էր համարվում: Հարսնածի գնալու օրվանից մի քանի օր առաջ տեղյակ է պահվում աղջկա հորը և օրվա մասին համաձայնություն վերցվում նրանից: Որոշված օրվանից մի օր առաջ, ինչպես նշանդրեքի ժամանակ, գնում էր «աղվեսը» և հաստատապես հայտնում, որ նշված օրը գալիս է հարսնածը: «Աղվեսի» գլխին ինչ օյին որ բերում էին նշանդրեքի

նախօրեին գյուղի «ճժերն ու ծռերը», ավելին էին կատարում: Նա այս անգամ էլ պետք է ծպտված հասներ աղջկա տունը:

«Աղվեսի»՝ դեպի խնամու տունը մեկնելուց հետո տղայի ծնողներն սկսում էին հարսնածի գնացողների թեկնածուներ ընտրելու մասին խորհրդակցել: Այդ ընտրվողները կոչվում էին խոնդի: Խոնդի էին ընտրվում գյուղի մեծամեծներից մի քանի հոգի, որպես պաշտոնական անձնավորություններ, հանդիսավոր խնջույքին մասնակցելու համար: Հրավիրվում էին հայտնի փողփուչ (սրինգ ածող) և խաղզեռներ (երգիչ)՝ պարերի ժամանակ փող փչելու և երգելու համար: Հրավիրվում էին լավ ըմբիշներ, «կռիվ» անողներ, լավ վազողներ, ձի նստողներ՝ հարսին բերելու ժամանակ փեսայի վրա հարձակվելու, ըմբշամարտելու, «կռվելու», վազելու, ձիով արշավելու և փեսային «գերի» դարձնելու, այսինքն՝ «ուռքն» ու պսակը խլելու համար, որով հարսն էր հաղթանակ տանելու և իրեն ենթարկելու փեսային, որին փաշա՝ թագավոր էին կոչում: Հրավիրում էին նաև հարսի շորերի վրա երգող-լացողներ: Այս բոլոր խոնդիների թիվը հասնում էր 40-50 հոգու, նայած հարսանիքի մեծության ու թագավորի կամ փաշու (փեսայի) հոր տնտեսական կարողությանը: Խոնդիներին հրավիրում էին նախապես թխած պատրաստած ծաղերով (կարկանդակ) և մի բաժակ օղի կամ գինի հրամցնելով, որի համար հատուկ մարդիկ գնում էին հրավիրվող խոնդիի մոտ: Խոնդիներին մատուցվող խոնչաները բաղկացած էին լինում նաև խորոված ոչխարի կամ հավի մսից, որ ծաղի հետ միասին հրամցվում էին խոնդիներին:

Խոնդիները որոշված ժամին, որ ընդհանրապես լինում էր երեկոյան, արևի մայրամուտի ժամանակ, թագավորի տանը ճաշած և պատրաստ էին լինում և մեկնում խմբովին, իրենց հետ տանելով մեկ-երկու ոչխար, մի քանի խիդր (4-5 կգ) յուղ, բլղուր և այլ մթերքներ: Հարսանիքի խոնդիների թվում լինում էին մի քանի կին, որոնցից մեկը հարսնքուր էր կոչվում, մյուսները՝ բարբուդիկ, որոնք մինչև առագաստի գիշերը մշտապես հարսից անբաժան էին մնում:

Հարսնածը ճամփա էր ընկնում և գնում հարսի տուն: Գնալիս խաղեր, երգեր, պարեր չէին լինում, այլ զգույշ և լուրջ զրույցներ, մինչև հարսի տուն հասնելը: Հարսնածը օջախ կոչվող լայն տան մեջ, ըստ ընդունված սովորության և հաջորդականության, օջախի աջ և ձախ կողմերում դրված քուրսիների, աթոռների, բրդուների և թաղիքների վրա նստում էին, փոխա-

դարձաբար բարի գալուստ մաղթում, մի քիչ հանգստանում, մինչև որ հարսնածի կողմից բերված և հարսի ծնողների կողմից էլ տրամադրված ոչխարները մորթում, **ջարգաբազ** և խորոված անում, թեթևակի ճաշում, խմում կենացներ մինչև հետզհետե եփվող ճաշերը, գինիներն ու օղին հասնում էին: Հարսի ծնողների կողմից հրավիրվածների և հարսնած եկողների ճաշկերույթի առաջին մասը լրանալուց հետո սկսում էին պարերն ու խաղերը, փողփուչը և խաղզեռը մինչև «բարի լույսը բացվեր» նվագում, երգում և ուրախացնում էին հանդիսականներին: Լուսաբացին սկսվում էր հարսի շորերը հագցնելու և յուրաքանչյուր շորի վրա առանձին-առանձին երգելու ծիսակատարությունը, որը ժպիտ և արցունք էր խլում բոլոր ներկաներից՝ հարսի շորերը հագցնող և դիտողներից:

Հարսնածը թագավորի տնից դեպի հարսի տուն մեկնելուց հետո, տղայի ծնողները հատուկ մարդկանց միջոցով հրավիրում էին գյուղի մնացած մեծամեծներին, որոնք հարսնածի չէին գնացել: Իսկ ամբողջ գյուղացիներն առանց հատուկ հրավերի գալիս էին հարսանիքի տուն: Ամեն մարդ, մեծ թե փոքր, ծանոթ, թե անծանոթ, հրավիրված կամ չհրավիրված, նույն չափ իրավունք ունեին մասնակցելու հարսանիքին, որ կատարվում էր թագավորի տանը, մասնակցելու կերուխումին, խաղուպարին: Պատահական ամեն անցորդ իրավունք ուներ և պարտավոր էր մտնել և հարսանեկան հանդեսին մասնակցել: Երբ հարսանքավորները հավաքվել, մի փոքր հանգստացել ու ճաշել էին, սկսվում էր թագավորին լողացնելու, ածիլելու և «թագավորի շորեր հագցնելու» արարողությունը: Փեսայի տանը «թագավորին շորեր» հագցնելն ու ազաբչարի թիկնապահներով շրջապատվելը լինում էր վաղ երեկոյան և խնջույքից, կովնդ ու պարերգերից առաջ, որոնց զգեստավորված մասնակցում էր «թագավորը»: Աղջկա տանը հարսի շորերը հագցնելն ու շարշուրելը (քող գցել) լինում էր խնջույքից հետո, առավոտյան, երբ հարսն իր ծնողների տնից պիտի բաժանվեր: Այստեղ կներկայացնենք **փեսային և հարսին հագցնելու** արարողությունը:

Հարսնածի դեպի աղջկա տուն մեկնումից հետո, երբ գյուղացիները հավաքվում էին փեսայի տանը, մի խումբ երիտասարդներ, թվով 5-7 հոգի, թագավորի մտերիմ ընկերները, այդ իրիկվանից մինչև առագաստի գիշերը մշտապես մնում էին նրա մոտ՝ որպես թիկնապահներ, վտանգից պաշտպանողներ: Դրանք կոչ-

վում էին **ազաբչարիներ**: Թագավորին այդ ազաբչարիներն էին լողացնում: Ազաբչարիները իրենք էին տաք և սառը ջուր բերում, պատրաստում, հանում նրա սովորական շորերը: Մերկացած թագավորը նստում էր քուրսու վրա. ազաբչարիներից մեկն էլ մերկանում էր և նստում թագավորի բարձր քուրսուն մոտիկ դրած ցածր քուրսու վրա. մյուս ազաբչարիներից մեկը պատրաստ կանգնած, օճառը ձեռքին սկսում էր լողացնել թագավորին, մի ուրիշ ազաբչարի նույն բանը կրկնում էր թագավորի հետ միասին լողացող ազաբչարու վրա: Ազաբչարիներից մի ուրիշը հսկում էր, որ թագավորի ջուրը հովգուլ (բարեխառն) լիներ, մի այլ ազաբչարի հսկում էր, որ լողացող ազաբչարու ջուրը այրելու չափ տաք լիներ կամ սառեցնելու չափ պաղ: Լողացող խեղճ ազաբչարին մերթ տաք ջրից այրվելուց էր գոռում, մերթ սառը ջրի սարսուռից, որով բոլորի ուշադրությունը բևեռվում էր նրա վրա: Եթե ձմեռ ժամանակ էր, այդ լողացող ազաբչարու վրա ձյուն և սառույց էլ էին թափում «սոսրաթ անում» (չարչարում), որպեսզի չարքը ազաբչարու վիճակով զբաղվեր և թագավորին չկպչեր: Թագավորը չարիքից ազատ կմնար: Թագավորի և ազաբչարու ճերմակեղենը հագցնելուց հետո միայն բերում էին օջախտան մեծ սենյակում, ամբողջ հանդիսականների մեջտեղում պատրաստված քուրսու վրա նստեցնում, ազաբչարիներով շրջապատում և սկսում հագցնել: Ազաբչարիներից մեկը թագավորի փեսայական շորերը մի լայն ափսեի վրա դրած սպասում էր նրա կողքին: Փեսային հագցնող ազաբչարին յուրաքանչյուր հագուստ ափսեի վրայից առանձին-առանձին վերցնում էր և ազաբչարիներ հետ, այդ հագուստին հատուկ երգը երգելով, հագցնում էր փեսային. ամեն մի երգից և հագուստը հագցնելուց հետո «Աստված շնորհավոր անե» էին ասում: Որպես պատասխան, ազաբչարիների միասին կրկնում էին՝ «Աստված շնորհավոր անե»: Դրանից հետո բոլոր հանդիսականները կրկնում էին՝ «Աստված շնորհավոր անե»:

Հարսին հագցնելը նույնպես լինում էր «գլուխ լվալով»: Դա նշանակում էր հարսին լողացնել, որը կատարվում էր հարսի մոր հրավերով, ամենամոտիկ ազգականներից մեկի տանը, որը դրա համար մեծ նվեր էր տալիս հարսին՝ թանկագին հագուստ, զարդ, երբեմն էլ մի ոչխար կամ մի կով, որը հետագայում տրվում էր հարսին և դառնում նրա անձնական սեփականությունը: Հարսին լողացնում էին հարսնածի գալու

օրը, երբ «աղվեսի» գալը հաստատում էր հարսնածի գալուստը: Սակայն նրա հարսանեկան նոր շորերը լողանալուց անմիջապես հետո չէին հագցնում, այլ հարսնածի գալուց և այդ գիշերվա խնջույքից հետո, հաջորդ օրվա լուսաբացին:

Հարսի շորերը հագցնելիս դարձյալ երգում էին հայերեն երգեր, որոնցից բերում ենք մի քանի նմուշներ:

ՋՀԵՐԻԿ ԽԱՓԵՑԻՆ

Ջհերիկ խափեցին գուռե մի գինով,
Ջմերիկ խափեցին թոփիկ մի շիլով,
Ջաղբեր խափեցին ջուղտակ մե ջզմով,
Ջքուրիկ խափեցին մատկ մի հինով:
Ջփարու հանգուց արձակեցին
Ջաղջիկ մամուց ջոկեցին (կրկներգ)
Մերիկ մի ավլեր զտախտիկ,
Որ չավրի քու աղջկա հետիկ,
Թող մնա քեզ նմուշիկ,
Որ հանես զքո սրտի հասրաթիկ (կարոտ):
Ջամիչ մաղով մաղեցին,
Աղջկա ջեբեր լցեցին
Ջխարիբ ճամփու դրեցին:

ՀԱՐՍ ՈՒ ՓԵՍԱՅԻ ԳՈՎՔԸ

Օրհնե Աստված, օրհնե Քրիստոս
Օրհնե զքագվորն ու զքագուհին:
Ցորեն ցանեն, ելեր է բուս,
Էջմիածին իջեր է լուս,
Օրհնե զքագվորն ու զքագուհին:
Հռիփսիմեն իր քառսունկույս,
Օրհնե զքագվորն ու զքագուհին:
Նոյ նահապետ նստավ գյամին (նավ)
Իր ձեռքն առավ հաց ու գինին,
Օրհնե զքագվորն ու զքագուհին:
Հացն ու գինին տեր կենդանին:
Հիսուսն իջավ Հորդանան գետ,
Յոթն անվան տեր սուրբ Կարապետ,

Օրհնե զթագվորն ու զթագուհին:
Պետրոս, Պողոս՝ Ֆռնգստան,
Հիսուս ծնավ Արաբստան:
Օրհնե զթագվորն ու զթագուհին:
Մեր թագվորներ եկան սարեն,
Ձեր թագվորներ եկան սարեն,
Քառսուն աղբյուր բխեց քարեն,
Օրհնե զթագվորն ու զթագուհին
Սուրբ առաքյալ և մարգարեն,
Օրհնեն զթագվոր և զթագուհին:
Գարուն եկավ, գարուն եկավ,
Գոգն ու ծոցը ծաղիկներով,
Որտեղ նայեց, ձեռքը դրեց,
Լցվեց անուշ, քնքուշ հոտով:
Որտեղ գնաց գորգեր փռեց,
Հյուսված հազար վառ գույներով:
Կաքավ երգեց անցավ սարեն,
Աղբյուր բխեց նստած քարեն,
Օրհնեն զթագվոր և զթագուհին:

ԾԱՌ ԽՆԿԵՆԻՆ

Ծառ խնկենին որ ծաղկեցավ,
Թուփն ու տերև բոլորեցավ,
Սուրբ խաչ վրեն որ բազմեցավ,
Թագվոր, աթոռք, ուրախացավ:
Ծառ խնձորենին որ ծաղկեցավ,
Թուփն ու տերև բոլորեցավ,
Սուրբ խաչ վրեն որ բազմեցավ,
Թագվոր, աթոռք, ուրախացավ:
Գացեք, բերեք զկաքավ քարեն,
Թող գա մտնի դարբազխանեն,
Սնդրիկ զարկին սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագվորին:
Գացեք, բերեք զկռունկ չոլեն,
Թող գա մտնի դարբազխանեն,
Սնդրիկ զարգին սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագվորին:

Գացեք, բերեք, զբարան (խոզ) ջղեն (հոտից),
Թող գա մտնի դարբազխանեն,
Սնդրիկ զարգին սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագվորին:
(ծափ տալով երգում են վերջին երկու տունը)
էդ ինչ ու ինչ, էդ ինչ ու ինչ,
Ծաղիկ բերինք ծաղկանաց,
էնպես բերինք, էնպես բերինք,
Ջտակն ու տերև հետ իրրաց:
էդ ինչ բերինք, էդ ինչ բերինք,
Ծաղիկ բերինք ծաղկանաց,
էնպես թփռեն, էնպես թփռեն,
Հարս ու փեսեն հետ իրրաց:[1]

Փեսային հագցնելիս երգվող այս երգերը ազաբչարիների մի մասը երգում էր, մյուս մասը՝ «դարձնում» (կրկնում, պատասխանում էր):

Փեսային հագցնելը վերջանում էր թագն ու պսակը դնելով: Թագը գդակ էր և նրա շուրջը փուշի փաթաթված (մետաքսի սև յազման), իսկ պսակը մի խաչ էր, փայտից շինված (երկու տախտակներ՝ 10-15 սմ երկարությամբ, 1-2 սմ լայնությամբ և 0,5-1 սմ հաստությամբ): Այդ «խաչն ու պսակի» վերին և աջ ու ձախ թևերի վրա, որոնք ունեին 5-8 սմ երկարություն, ծածկվում էր կարմիր, կանաչ, սպիտակ գույներով ներկված գույնզգույն փետուրներով, մետաքսե նույն գույնի թելերով փաթաթված: Իսկ «Խաչն ու պսակի» ներքևի թևը, որ փետրածածկ չէր, խրվում էր թագի (գդակի) ճակատի մասում՝ փուշիի և գդակի միջև, որով պսակը եռաթև էր երևում: Սրա ոչ մի մասում փայտը չէր երևում: Երբ թագն ու պսակը փեսայի գլխի վրա էին դնում, մի ազաբչարի վերցնում էր փեսայի գլխից, բռնում իր բարձրացրած ձեռքին, մի ուրիշ ազաբչարի երես ածիլելու սարքը պատրաստ մոտենում էր փեսային սափրելու համար:

Փեսային ածիլելու ժամանակ երգում էին՝

էրթանք չոլը զարգենք կաքավ.
Բերենք դնենք սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագվորին:
Երթանք չոլը զարգենք տատրակ,

[1] «Հարս ու փեսի գովքը» և «Ծառ խնկենին ասել է գալ»:

Բերենք դընենք սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագվորին:
Երթանք չոլը զարգենք կռունկ,
Բերենք դնենք սուրբ սեղանին
Խերն ու բարին մեր թագվորին:

Այսպես թվում էին որսացվող թռչունների և վայրի կենդանիների բոլոր ծանոթ անունները, մինչև ածիլման ուրախ հանդեսը վերջանում էր:

Փեսային **ածիլելու գործողությունը** մի կատարյալ տեսարան էր, որի դերակատարը սրամիտ և ծաղրածու սափրիչն էր: Սափրող ազաբչարին, ածելին իր շեղբից հանելու, սրելու, փեսայի երեսն ածիլելու գործը կապում էր սրամիտ կերպով հորինած արգելքների հետ: Այդ դժվարությունները վերանում էին հանդիսականներից ստացվող նվերներով, որոնք հավաքվում, ստացվում էին նվիրողներից ազաբչարիների միջոցով: Սրանք շրջում էին հանդիսականների մեջ և ստանում նվերները: Այդ նվերները լինում էին փողով, ծաղով (գաթա), մրգերով և այլն: Այդ բոլոր նվերները պատկանում էին թագավորին և իր շքախմբին՝ ազաբչարիներին, որոնք հետո բաշխում էին իրենց մեջ, առյուծի բաժինը տալով փեսային:

Փեսայի ածիլման վերջին և դժվարին արգելքը վերացվում էր թագավորի մոր կողմից տրված նվերով: Այդ բոլոր նվերներն ստանալիս ազաբչարիները տրված նվերի քանակը չափազանցրած թվերով էին ասում և սրամիտ ձևերով ու ծիծաղեցնում հանդիսականներին:

Փեսային ածիլելու արարողությունը լրանալուց հետո, այն ազաբչարին, որի ձեռքին էր բռնած թագն ու պսակը, հանդիսանում էր «թագադրողը», բերում էր թագն ու պսակը, հարմար ձևով դնում փեսայի գլխին և բարձր ձայնով երեք անգամ ասում. «Աստված շնորհավոր անե»: Ապա երկրորդ անգամ էլ կրկնում ու վերցնում էր և երրորդ անգամին թողնում թագավորի գլխին: Հանդիսականները նույնպես երեք անգամ միասին ասում էին. «Աստված շնորհավոր անե», որով փեսային հագցնելը վերջանում էր:

Փեսան մնում էր իր գահի վրա բազմած և որևէ առիթով հարսանքատան ներսում կամ դրսում շարժվելիս, բոլոր ազաբչարիները հետևում էին նրա ամեն մի քայլափոխին և նրան մենակ չէին թողնում: Թագավորն իր ազաբչարիներով

ամբողջ գիշերը հարսանքավորների հետ միասին մասնակցում էր հարսանեկան խնջույքին մինչև հարսնածի գալը և հարսի ու փեսայի բանակների «պատերազմը» ուռք ու պսակ գրավելը, որը լինում էր ընդհանրապես առավոտյան:

«Ուռքը խմլելու» (պսակածառը զարդարելու) եղանակն այսպես էր: Վերցնում էին գավազանի հաստությամբ և մոտ երկու մետր երկարությամբ կլորակ ձող և դրա վերևի ծայրից սկսած, իրարից 25-30 սմ հեռավորության վրա, երեք տեղով ձողիկներ էին ամրացնում և նրա հետ ուղղանկյուն կազմում: Ստացվում էր ուռքի կմախքը՝ մի կենտրոնական ձողից և երեք կողերի տասներկու թևիկներից բաղկացած: Դրանց հորիզոնական և ուղղաձիգ ծայրերն իրար միանում էին կապող և բարակ փայտե ձողիկներով: Այսպիսով, վերևի 50-70 սմ-ի վրա, վերոհիշյալ ձողիկներից կազմված մի գլան էր ստացվում: Այդ ամբողջի մակերեսի վրա կախում էին թելերի վրա շարված ամեն տեսակ և թարմ ու չորացրած պտուղներ՝ չամիչ, չիր, փշատ, բուր (ընկույզի միջուկ), ընկույզ, նուռ, նուշ և այլն: Երեք տեղերի խաչաձև ձողերի տասներկու ծայրերին կարմիր խնձոր, կարմիր և կանաչ ներկած ձու էին ամրացնում: Ուռքի վերևի մասում, հարթ մակարդակի վրա կապում, ամրացնում էին նախշուն և փոքրիկ գաթաներ: Ստացվում էր մի «կենաց ծառ», որը ծանրաբեռնված էր ամեն տեսակ բերք-բարիքներով, պտղաբերությամբ: Ուռքի հետ կապված ծիսակատարությունը ծառի պաշտամունքի նշան էր: Մինչև 1915թ. Սասունում որոշ ծառեր սուրբ էին համարվում:

Ուռքի ձողերն ու փայտյա ամբողջ մասը ուռք շինող վարպետներն էին պատրաստում, պտուղների շարանները՝ աղջիկներն ու կանայք, իսկ շարանները ուռքի վրա դասավորողներն էլ ազաբչարիներն ու ուռքի վարպետներն էին:

Ուռքը խմլելու (զարդարելու) ժամանակ երգում էին զանազան երգեր՝ ինչպես հարսի կամ փեսայի շորեր հագցնելիս:

Երբ փեսային հագցնում վերջացնում էին և նա նստում էր իր քուրսու (գահ) վրա, ազգական և բարեկամ կանայք նախապես պատրաստի ափսեներով, որոնց վրա դիզված էր լինում ծաղեր, գաթաներ, խորոված հավեր և պտուղներ, գալիս էին թագավորի գահի առաջ, լիքը ափսեն հանձնում ազաբչարիներին: Վերջիններս ստանալով այն, ի լուր հանդիսականների գովում էին բերածը, նրա բերք ու բարիքը, իսկ սե-

ղան բերող կինը երկու ձեռքերով գրկում էր թագավորի գլուխը մեկ աջ, մեկ ձախ թշերը և ճակատը համբուրում ու անցնում կանանց հատկացված բաժանմունքը: Բերածները բաժանում էին հանդիսականներին, երբ նրանք ճաշում էին: Կանանց շարան-շարան սեղանները բերելը և երես պաչելը, զուգորդվում էր հարսանեկան այդ գիշերվա մեծ խնջույքին և կոչվում էր «ուռքի խմլել»: Երգի ամեն մի տուն գովեստ էր հանդիսանում նախ ուռքի ծողիկների կառուցվածքին, ապա ամեն մի պտղի տեսակի նկարագրմանն ու գովքին: Այդ երգը երգվում էր ուռքը զարդարել սկսելուց մինչև ավարտումը, որը կատարվում էր քողով ուռքի պտղաձածկ մասը ծածկելով և պատրաստ վիճակում մի ազաբչարու հանձնելով:

Այդ ազաբչարին ուռքը պահպանում էր մինչև առավոտ, երբ հարսնածն էր գալու: Սկսվում էր հարս ու փեսայի զորքերի «ճակատամարտը», որի ընթացքում ուռքի պաշտպան ազաբչարին, ուռքը պինդ բռնած, թագվորի և քավորի հետ «բերդ» էր բարձրանում մի կտուրի վրա, որպես ապահով տեղ՝ հարսի «զորքերից» պաշտպանվելու համար: Ուռքի փայտիկների ծանրությունը հազիվ 1-2 կիլոգրամ լիներ, իսկ նրա վրայի բերքը՝ 15-20 կիլոգրամ:

Ուռքը կամ կենաց ծառը պտղաբերության սիմվոլն էր հանդիսանում ամուսնացող հարսի և փեսայի համար: Համառ կերպով ճակատում էին «ճակատամարտող» երկու կողմերից, հարսի կողմնակիցները ուռքին տիրելու, իսկ թագվորինը՝ պահպանելու համար:

Հարսի հագցնելու երգի հայերեն թարգմանությունը.

1. Վայ ինձ, ընկերներ,
   Եկան օտար ժողովուրդները (մարդիկ)
   Սպասեցին ազաները
   Դեղին ոսկով՝ կին տարան:
2. Վայ ինձ, ընկերներ,
   Հորդ տունը վանք է,
   Այսօր էլ կուշտ քնիր,
   Առավոտյան բարի ճամփա:
3. Վայ ինձ, ընկերներ,

   Քո մայրիկդ հացթուխ է,
   Սաջի վրա հաց է նետում,
   Մանր, մանր արցունք թափում:
4. Վայ ինձ, ընկերներ,
   Կանչեցեք ծերուկ հորեղբորը
   Աղ ու հացը հալալ անի,
   Հարսին էլ փեսին վայելցնի:
5. Վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ,
   Վայ ինձ, ընկերներ,
   Հարսին հյուր տարան:
6. Վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ,
   Վայ ինձ, ընկերներ.
   Կամրջի կողմից եկան
   Անեղբոր՝ հարսին տարան:
7. Վայ ինձ, ընկերներ,
   Բանոկից եկան,
   Տատրակ-հարսին տարան
   Բոլորն էլ քաջ հեծյալներ (էին):
8. Վայ ինձ, ընկերներ (կրկնել)
   Մի լար տարվա հարս,
   Ղարիբ, սրտաբեկ (հարս):

«Թագավորի երես գալը» - Փեսայի տանը, ընդարձակ օջախում, տեղավորում էին մեծամեծներից մինչև գզիրն ու օտարականը, իսկ մեջտեղում, բոլորի կողմից տեսանելի մի բաժնում, բարձր գահի վրա նստում էր փեսան՝ խաչն ու պսակը գլխին: Նրա աջ կողմում նստում էր քավորը, իսկ ձախ կողմում և շուրջը կանգնում էին ազաբչարիները: Տունը լուսավորվում էր պատերի և սյուների վրա ամրացված ճրագներով, որոնց մեջ յուղ կամ ձեթ էին լցնում: Լուսավորության մի մասն էլ, ձմեռ ժամանակ, ստացվում էր օջախում վառվող կրակից: Ազաբչարիներից մեկը տան դռնից մինչև թագավորի գահն ու օջախը լայն ճամփա էր բաց անում, մի այլ ազաբչարի հայտարարում էր՝ «Թագավորի երես գալու» ծեսն սկսելը: Դադարում էր երգն ու պարը, խոսք ու զրույցը և ամբողջ հասարակությունը, մեծից մինչև փոքրը, խորին լռությամբ և հետաքրքրությամբ լսում էր ազաբչարու հայտարարությունը: Քիչ անց սկսում էին ներս մտնել շարան-շարան մի շարքի վրա, իրար ետևից եկող կանայք, որոնց յուրաքանչյուր գլխի վրա, երկու ձեռ-

քերով ամուր պահված, մի-մի մեծ ափսե կար, դրա շուրջ բոլորը մոմերով լուսավորվում էր, իսկ ափսեն ծաղրաբեռնված էր նվերներով, խորվուկով (ոչխարի ամբողջ մարմինը խորոված), գաթաներով, մեկական պնակ սեր ու կարագով, բռնած կամ թարմ մածունով, թարմ, շարած կամ չորացրած պտուղներով: «Թագավորի երես եկող» ամեն մի կին, որոնցից առաջինը քավորի նվերն ու սեղանն էր բերում, հասնելով թագավորի մոտ, գլխի վրայից իջեցնում էր լիքը ափսեն, հանձնում ստացող ազաբչարիին, համբուրում թագավորի ճակատն ու թշերը, ապա համբուրում էր քավորի ձեռքը և լսում ազաբչարու ուրախ ու բարձրաձայն հայտարարությունը: Սա հանդիսականներին հայտարարում էր «թագավորի երես եկող» կնոջ անուն - ազգանունը և թվում այն բերքն ու բարիքները, որ նա բերել էր թագավորին ու հանդիսականներին: Ապա ազաբչարին, թագավորի կողմից շնորհակալություն հայտնելիս, հանդիսականներն էլ «Շեն մնա, շեն» գոչում էին միաձայն և ուրախությունը լցնում էր տունը: «Թագավորի երես եկող» առաջին կինը անցնում էր դեպի կուլին, ուր կանայք էին հավաքվում, իսկ սեղան ընդունող ազաբչարին ստացած բարիքները բաշխում էր հանդիսականներին, սկսելով մեծամեծներից մինչև հասարակ մարդիկ: Գալիս էին երկրորդ, երրորդ և հաջորդ «թագավորի երես եկողները» և մինչև վերջինը, իրենց լիքը և մոմերով լուսավորված ափսեները (սեղանները) ազաբչարիներին հանձնելով՝ համբուրում էին թագավորի ճակատն ու թշերը, քավորի աջ ձեռքը և ազաբչարիից հայտարարության գովեստներն ստանալուց հետո անցնում դեպի կուլին: Այս արարողությունը տևում էր մի քանի ժամ: «Թագավորի երես եկողների» թիվը, նայած հարսանիքի մեծությանը և բարեկամների թվին, հասնում էր 50-60 և ավելի հոգու:

«Թագավորի երես գալուց» մինչև այդ արարողության վերջը ճաշկերույթ էր լինում: Ճաշկերույթի ժամանակ կանայք կուլինումն էին հյուրասիրվում, տղամարդկանցից առանձին և ազաբչարիները ստացված սեղաններից բաժին էին հանում նրանց և իրենց՝ ազաբչարիների համար: Այդ նույն ժամանակ փեսայի տանից պատրաստված զանազան տեսակի ճաշերն էլ էին մատուցվում կարմիր գինիների հետ միասին: Այդ գիշերը մինչև առավոտ ամբողջ հանդիսականները չէին քնում, երգում, պարում և զվարճանում էին, պատրաստվելով հարսնածի հետ սկսվելիք «մարտերին», որը տե-

ղի էր ունենում հարսը բերելու և փեսայի տանը մոտենալու ժամանակ, նախքան հարսին ներս ընդունելը:

Նման հարսանեկան խնջույք այդ գիշերը տեղի էր ունենում հարսի տանը, ուր փեսայի տնից գնացողները և հարսի հոր կողմից հրավիրվածները նույնպես, ուտում, խմում, երգում և պարում էին մինչև առավոտ, երբ սկսվում էր «հարսին հագցնելը» և ճանապարհ ընկնելը: Փեսայի և հարսի ծնողներն այդ գիշեր, հարսանեկան խնջույքին աշխատում էին մեկը մյուսից ավելի լավ քեֆ սարքել հասարակության համար:

Հարսի տանը, երբ «հարսը հագցնելու» արարողությունը վերջանում էր, լուսաբացին նորից ճաշասեղանը բաց էին անում և ճաշելուց հետո պատրաստվում ճանապարհ ընկնելու դեպի փեսայի տունը: Այդ ժամանակ հարսնածի եկողներից ավագը՝ փեսայի հոր ներկայացուցիչը, երբեմն էլ հենց ինքը՝ հայրը, ոտքի էր կանգնում և թույլտվություն խնդրում հարսի ծնողներից մեկնելու համար: Նա շնորհակալություն էր հայտնում հարսի ծնողներին և մեկնում դեպի կուլին, ուր հարսը հագնված, պատրաստ գտնվում էր իր հարսնքուրերի և ընկերների մեջտեղը, որի քով կանգնած էր հարսի մայրը:

Հարսնածի ներկայացուցիչը՝ փեսայի հայրը, խոսքն ուղղելով հարսի մորը, ասում էր. «Խնամի, աղջկանդ ծծած կաթը հալըլե»: Հարսի մայրը պատասխանում էր ուրախության և հուզմունքի արցունքն աչքերին. «Հալալ էղնը, խնամի, հալալ էղնը»:

Այդ ժամանակ փեսայի հայրը կամ նրա ներկայացուցիչը մի նվեր էր տալիս հարսի մորը: Այդ նվերը մեկ կամ մի քանի ոսկի էր լինում, որ դրվում էր աննշմարելի կերպով մոր ափի մեջ «մնաք բարով» ասելիս: Մայրն իր աղջկանն ուղեկցում էր մինչև իր տան դուռը և հարսնածին բարի ճանապարհ մաղթում: Հարսնածը մեկնում էր:

Հարսը տանողները սովորաբար ունենում էին 30-40 տղամարդ, որոնք առաջինն էին շարժվում, ոմանք ձիավորներ էին, մեծ մասըոտավորներ, իսկ հարսը հատուկ զարդարված մի ձիու վրա նստած, քողը երեսին, հարսնաքուրերի (մեկը փեսայի կողմից, մյուսը՝ հարսի) և հարսնեղբոր ուղեկցությամբ գնում էր հարսնածի ետևից: Հարսնած ձիավորները հարսի ծնողների տան առաջ ջրինդ (ձիարշավ) էին կատարում և դիտողներին ուրախացնում, ապա շարունակում ճամփան հարսնածի հետ միասին, առանց առաջ անցնելու: Մի

ձիավոր, հարսնածի պատգամավորը, գնդակի պես սլանում էր դեպի «թագավորի» տունը՝ հայտնելու հարսնածի գալուստը: Սկսվում էր մարտն ընդունելու պատրաստությունը:

Փեսայի ազաբչարիներն ու մյուսները արդեն լուսաբացից իրենց ուժերի դասավորումը կատարած մարտի էին սպասում:

Թագավորի «բանակի» դասավորումը կատարվում էր ազաբչարիների ղեկավարի կողմից, ըստ որի «բերդում» (կտուրի վրա) մնում էին պսակավոր թագավորը, քավորը և ուռքակիր ազաբչարին, որոնք մարտի մեջ չէին մտնում. պահակները կտուր բարձրանալու ճանապարհները փակում էին: Թագավորի տան «բերդի» չորս անկյուններում նույնպես պահակներ էին կանգնում՝ թույլ չտալու հարսնածի մարտիկներին մոտենալու, մինչև «մարտի» վերջանալը: Թագավորի «զորքը» բաժանվում էր խմբերի և պահպանում այդ բոլոր ճամփաները, որոնք դեպի թագավորի տունն էին տանում, իսկ մեծ մասը կտրում էր այն ճամփան, որով հարսնածն ու հարսն էին գալիս: Այսպես էին բաշխում ազաբչարիներն իրենց «բանակը»՝ «մարտն» ընդունելու համար:

Հարսին բերող հարսնածը ղեկավարում էր թագավորի ծնողների ներկայացուցիչը, որ հարսնած գնացած էր լինում: Նա իր մարտիկներին բաժանում էր մանր խմբերի և նույնիսկ առանձին հետազոտող մարտիկների և ուղարկում հայտնի ու անհայտ, գաղտնի ճամփաներով, հրամայում հաղթահարել բոլոր արգելքները, «խփել» առանց վիրավորելու կամ վնասելու դիմադրողներին, թագավորի զորքերին, գոտեմարտել, մենամարտել նրանց հետ և հասնել բերդի գագաթին, «գերել թագավորին» և ուռքը: Հարսնածի ղեկավարը զորքի մի մասին էլ հրամայում էր հարձակվել փեսայի տան վրա, ճամփա բանալ և հարսին առաջնորդել փեսայի տունը՝ հաղթանակն ապահովելու՝ թագավորին և ուռքը գերելու համար: Հարսնած «բանակի» ղեկավարը՝ թագավորի ծնողների ներկայացուցիչը, ինչպես տեսանք, կարող էր լինել և փեսայի հայրը, որն իր ուժերը նշված ձևով դասավորելուց հետո, ընդհանուր հարձակման հրամանն էր տալիս: Ինչպես փեսան, քավորը և ուռք բռնող ազաբչարին չեն մասնակցում «մարտերին» այնպես էլ հարսը, հարսնեղբայրն ու հարսնաքույրը չեն մասնակցում մարտերին: Հարսի խումբն անձեռնմխելի է: Թագավորի մարտիկներից ոչ ոք իրավունք չուներ նրանց վրա արշավելու, նրանց մոտենալու, կամ նրանց խանգարելու հաղթար-

շավով դեպի փեսայի տուն գնալուն: Նույնիսկ հարսի ճամփու վրա կռվող ախոյանները պարտավոր էին ազատել ճամփան՝ հարգանքով մի կողմ քաշվել, որ հարսն իր խմբով անցներ, դեպի «կեսրանց» տուն գնար:

Հարսնած բանակի ղեկավարի հրամանի վրա, այդ բանակը գոռում-գոչյունով և՛ թագավորին, և՛ ուռքը իրենց հանձնելու, գերի տալու պահանջով սկսում էին հարձակումը՝ գինված թուր ու մառտալով, բիր ու ջոգնով (ծայրը կեռ գավազան). սկսվում էին բռնցքամարտը, գոտեմարտը, գլխամարտը, որոնք կատարյալ մի ռազմաբեմ էին ներկայացնում այն շրջապատը, որում գտնվում էր փեսայի տունը:

Փեսայի բնակարանի մարտիկները թրին ու մառտալին՝ (սուր ու վահան) թրով-մառտալով, բիր ու ջոգնին՝ բրով-ջոգնով, բռնցքին բռունցքով, գուլաշին՝ գուլաշով էին պատասխանում և կռիվը տաքանում էր. հարսնածի կողմի առանձին մարտիկներին հաջողվում էր գաղտագողի հասնել բերդին, մագլցել մինչև կտուրը, ուր թագավորն ու ուռքն էին գտնվում, սակայն զգոն ազաբչարիները բռնում էին «թշնամուն» կամ «սպասում» (բռունցքով ծեծում) և գլորում կտուրից ցած: Երբեմն հարձակման պահին հարսի մարտիկներից մեկն ու մեկին հաջողվում էր ծպտված ներս մտնել փեսայի տունը և բուխարիկից սողալով բարձրանալ կտուրը, գերել թագավորին և ուռքը, կամ ազաբչարիների կողմից նկատվելիս նույն բուխարիկից դեպի տան հատակն էր գցվում, որ 3-4 մետր բարձրություն էր ունենում: Եղել է դեպք, երբ պայքարն այնպիսի կատաղության է հասել, որ հարսի կողմի ձիավոր մարտիկներից մեկն իր նժույգն **ուռեցնում** է (հեռվից քշում, տաքացնում) և թռչում կտուրը, գերի վերցնում թագավորին և ուռքը (եթե այդ կտուրը շատ բարձր չէր լինում):

Հարս ու փեսայի բանակների այս «կռիվը» երբեմն 1-2 ժամ էր տևում, մինչև որ մի կողմը լարված ուժերով հաղթում էր մյուսին կամ հաղթվում:

Թագավորի կողմնակիցները պարտված էին համարում իրենց, երբ հարսի կողմի մարտիկները հաղթեին ազաբչարիներին, ճամփա բաց անեին դեպի «բերդը» (տան կտուրը) և հասնեին, ձեռք տային թագավորի հագուստին կամ ուռքին: Հարսի կողմնակիցներն այդ դեպքում հաղթանակած էին լինում և փառքն ու պտղաբերությունը, ուռքը, հարսին էր պատ-

կանում: Եթե հարսի կողմնակիցները՝ հարսնածը չկարողացար մինչև բերդի կտուրը հասնել, տիրել թագավորին և ուռքը 1-2 ժամ կռվի ընթացքում միայն «ծեծ ուտեր» և ենթարկվեր, անձնատուր էր պատկանում: Այդպիսի պարագաներում «ճակատամարտը» ավարտված էր համարվում հարսի կամ փեսայի հաղթական մուտքով՝ փեսայի տանը:

Հարս ու փեսայի կողմերի միջև ուռքի համար մղվող այս կատաղի պայքարում, գոտեմարտում գլուխներ էին կոտրվում, դեմք ու ձեռք արյունլվա դառնում, մարտիկներից ոմանք խեղվածքներ էին ստանում, սակայն այդ դժբախտությունները երբեք վրիժառության և ատելության չէին հանգում:

Կռվող կողմերը պահպանում էին փոխադարձ հարգանք և տուժող կողմը վայելում էր իր «թշնամու» կատարյալ հոգատարությունն ու խնամքը, եթե հարկ լիներ:

Ուռքի բերքի և պտղաբերության համար մղվող այդ պայքարը, անշուշտ, հիշեցնում էր տոհմատիրական համայնքի ժամանակաշրջանում մայրիշխանության և հայրիշխանության դարավոր պայքարը, որի վերապրուկն ու մնացորդն է հարս ու փեսայի միջև, ուռքի համար:

Ուռքի համար մղվող մարտը վերջանալիս հարսնածը, ինչպես նաև թագավորի զորքն ու ազաբչարիները, երգով ու պարով փեսայի տան դռան առաջ դիմավորում էին հարսին ու նրա խմբին՝ հարսնքուր-հարսնեղբոր և առաջնորդում դեպի տան դուռը: Այդ միջոցին հարսի գլխին աննկատ ձևով տեղում էին արծաթյա և պղնձյա դրամներ, չիր ու չամիչ, նուշ ու բուր (ընկույզի միջուկ):

Դրամ ու պտուղ էին շաղ տալիս հարսի գլխին և՛ փեսայի, և՛ հարսի բարեկամները, ինչպես նաև հարսանիքին մասնակցող մյուս մարդիկ ու շնորհավորում հարսի գալուստը: Նախաքրիստոնեական, Արտաշեսյան դինաստիայի, հեթանոս հայերի կենցաղի սովորությունները՝ «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշեսի, Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենկայ» դարեր շարունակ ապրել և հասել են մինչև մեր օրերը:

Նախքան հարսի՝ փեսայի տուն մտնելը, սկսեսուրը կամ ավագագույն մի կին դիմավորում էր հարսին և նրան տալիս մի նուռ, որպեսզի հարսը խփեր դռան ճակատին և փշրեր այն՝ «չարը խափանելու» համար: Երբեմն մի հողե աման էին տալիս ձեռքին նույն նպատակով և հարսն ուժգին խփում էր

այդ նուռը կամ ամանը և փշուր-փշուր անում ու դռնից ներս մտնում: Մեծ տխրություն կառաջանար, եթե պատահեր, որ նուռը կամ ամանը չփշրվեր հարսի հարվածից:

Հարսը փեսայի դռնից մտնելով, գնում էր տան կուլիսը՝ իրեն հատկացված տեղը և իր մտերիմների հետ (հարսնքուր, հարսնաղբեր և մտերիմներ) նստում և հանգստանում: Այդ տան և դրացի կանայք հաջորդաբար այցելում և ծանոթանում էին նորահարսի հետ:

Հաշտված երկու «թշնամի» բանակները՝ հարսնածը և փեսայի կողմիններն ու ազաբչարիները, երգով, պարով մտնում էին միասին մտերմացած ու բարեկամացած և տեղավորվում հարսանեկան տան մեծ օջախի շուրջը՝ պատշաճ և նշված հաջորդականությամբ. մեծերը օջախի կիպ քովը և հասարակ մարդիկ շարվում էին նրանցից հետո մինչև փողոցը (նախասրահը):

Ընդունված սովորության համաձայն, աչքի ընկնող տեղում թագավորի, քավորի և ազաբչարիների համար պատրաստված վայրը ազատ էր մնում: Երբ բոլորն էլ տեղավորվում էին, ներս էր մտնում թագավորը քավորի և ազաբչարիների շքախմբի հետ ու գրավում իրենց հատկացված տեղերը:

Թագավորի մուտքի րոպեին հատուկ երգիչներ առաջնորդելով նրան, հատուկ երգեր էին երգում:Այդ երգերում թվում էին այն բոլոր նվերները, որ թագավորը պատրաստել էր հարսը բերող հարսնքուրերի, հարսնաղբերների և խնամիների համար:

Երբ թագավորն իր շքախմբով նստում էր, երգը դադարում էր: Սկսվում էր կեր ու խումը: Կրկնվում էր «թագավորի երես գալու» սովորությունը՝ հարսի կողմի ազգականների ու բարեկամների մասնակցությամբ:

«Թագավորի երես գալու» կանանց շարանն սկսվում էր: Առաջինը մտնում էին հարսի ամենամոտիկը՝ քավորի կինը և եղբոր կինը, մեծ քույրը, երբեմն նույնիսկ մայրը, գլխին դրած մեծ ափսեն, որի մեջ նվերներ էին դրված՝ խորոված ոչխար, կամ գառ ու հավ, սեր ու մածուն, մրգեր, գաթա և այլն: Ափսեների շուրջ բոլորը մոմեր էին վառվում, ինչպես նախորդ օրը: Ազաբչարիներն անցնում էին իրենց գործին՝ ընդունել ափսեները, գովել բերած բերքն ու բարիքը, բերողին և վայելողներին: Երես եկող կանանց կողմից կրկնվում էին համբուրման և մյուս ծեսերը:

«Թագավորի երես եկող» կանանց թիվն այդ օրն ավելի շատ էր լինում, որովհետև հարսի և փեսայի ազգական - բարեկամներն էին ավելանում:

Հարսանիքն ըստ հարս ու փեսայի ծնողների կարողության տևում էր 3-7 օր: Վերջին օրը կատարվում էր պսակի արարողությունը: Պսակը կատարվում էր եկեղեցում, իսկ եթե եկեղեցի չկար, կամ շատ հեռու էր, այդ արարողությունը կատարվում էր փեսայի տանը, այնտեղ, ուր հարսանեկան խնջույքի ժամանակ փեսան էր նստում:

Պսակի արարողությունը եկեղեցում կատարվելու դեպքում փեսայի տնից բոլոր հանդիսականները մեկնում էին դեպի եկեղեցի: Ազաբչարիները բազմության առաջից երգելով-պարելով էին գնում՝ իրենցից մի քանիսին թողնելով թագավորի մոտ, որի կողքին էին կանգնած լինում նաև հարսն ու քավորը, հարսնաքուրն ու հարսնեղբայրը: Հարսնաքուրը հարսի երկար քողն ու ծամերն էր բռնում «որ չթափեն ծամերը»: Քավորը մերկացրած սուրն էր բռնում թագավորի կողքին կանգնած, իսկ մի ազաբչարի էլ՝ ուռքը:

Հանդիսականները հետևում էին հարս ու փեսայի այդ շքախմբին մինչև եկեղեցու դուռը, որտեղ քահանան և տիրացուն տոնական հագուստով դիմավորում էին զույգին:

Քավորն իջեցնում էր մերկացրած թուրը և փեսայի հետ, առանց ազաբչարիների, մտնում եկեղեցին: Այստեղ քահանան խոստովանեցնում էր քավորին, ապա փեսային, որից հետո և հարսին, որը նույնպես եկեղեցի էր մտնում խոստովանանքի համար՝ առանց հարսնաքուրի: Հարս ու փեսայի քավորի խոստովանությունը կատարվում էր եկեղեցու մի բակում կառուցված մատուռում, իսկ հանդիսականները գլխաբաց և խաչակնքելով մտնում էին եկեղեցի, նրա դուռը կամ պատի խաչքարը համբուրելուց և երեք անգամ խաչակնքելուց հետո: Եթե եկեղեցին մատուռ չուներ, խոստովանությունը լինում էր մի աչքանի (մի սենյակից բաղկացած) եկեղեցում, որից հետո հասարակությունը մտնում էր եկեղեցի: Առաջինը՝ հարս ու փեսայից և քավորից հետո մտնում էր ուռքակիր ազաբչարին: Ուռքի մուտքին էին հետևում հանդիսականները, երբ խոստովանությունը վերջացած էր լինում: Եկեղեցում և՛ քահանան, և՛ քավորն ու հանդիսականները գլխաբաց էին

կանգնում, բացի թագավորից, որ միշտ պսակն ուներ իր գլխին և հարսի, որ նուրբ քողով ծածկվում էր:

Հարս ու փեսայի խոստովանությունից հետո, քահանան նրանց կողք-կողքի, գլուխ-գլխի հպած կանգնեցնում էր: Եթե հարսը կամ փեսան հասակով (բոյով) իրար հավասար չէին, կարճի ոտքերի տակ, բարձ կամ մինդար դնելով, հասակները հավասարեցնում էին՝ գլխի գագաթները նույն բարձրության բերելով: Ապա քավորը քահանայից ստացած խաչը դնում էր հարս ու փեսայի գլխին այնպես, որ խաչի աջ թևը նստում էր թագավորի գլխին, ձախ թևը՝ հարսի գլխին, վերի թևը ուղղված դեպի բեմ և վարի թևը քավորի ձախ ձեռքին, իսկ մերկացրած թուրը աջ ձեռքին: Քահանան հանդիսականների ներկայությամբ թագավորի աջ և հարսի ձախ ձեռքերը բռնում, իրար էր միացնում, «խաչում» և այդ ժամանակ երգում՝ «Առծալ զձեռն Եվայի և տունալ և ձեռն նղամայ»...սկսում պսակի արարողությունը:

Արարողության ընթացքում քահանան վերցնում էր մետաքսի կարմիր և սպիտակ գույնի երկու բարակ թելեր, որոնց ծայրերը բռնում էին քավորն ու տերտերը, ոլորում իրար հետ, միացնում, կազմում «նարոտ»: Այդ ժամանակ քահանայի աղոթքով արած հրամանով սարկավագը քավորից ստանում էր մերկացրած սուրը և բռնում հարս ու փեսայի գլխավերևում: Քավորը խաչը վերցնում էր նրանց գլխի վրայից: Քահանան հարս ու փեսայի գլուխներն իրարից անջատում էր: Սարկավագը կամ տիրացուն նրանց գլուխների արանքից իջեցնում էին թուրը և դանդաղ շարժում մինչև նրանց ոտքերի մոտ. թրով բաժանում էին իրարից հարս ու փեսայի միացված ձեռքերը և թուրը մտցնում պատյանը, հանձնում ուռքը բռնող ազաբչարիի մոտ կանգնած մի այլ ազաբչարիի: Այդ ժամանակ քահանան, քավորի հետ միասին պատրաստած նարոտի ծայրերն իրար միացնելով՝ առանց հանգույց անելու (որ փեսան չկապվեր) կազմում էր նարոտօղակը և նարոտի-օղակի մեջ առնում, երգելով՝ «Ջոր Աստված զուգեաց, մարդ մի մեկնեսցէ»-ն (այն, որ Աստված միացրեց, մարդ չի կարող բաժանել):

Նարոտի կարմիր գույնը առնականության սիմվոլն էր, որն ուներ թագավորը, իսկ սպիտակ գույնը՝ կուսության, որն ուներ հարսը: Նարոտն ինքը հանդիսանում էր հարս ու փեսայի միացումը, մի նոր ընտանիքի կազմումը, իսկ ուռքը՝ կենաց ծառն էր:

Նարոտի ծիսակատարության ժամանակ քահանան, ի լուր ամբողջ հասարակության, հարցնում էր փեսային. «Որդիս, մինչև քո կյանքի վերջը տե՞ր ես հարսին»: Փեսան լսելի ձայնով պատասխանում էր. «Այո»: Ապա նա հարսին էր հարցնում. «Դուստր իմ, մինչև քո կյանքի վերջը հնազա՞նդ ես քո ամուսնուն»: Հարսը, չխոսկան լինելով, համեստորեն գլուխն էր խոնարհում, որպես հնազանդության նշան:

Հարս ու փեսայի հրապարակային այս խոստումից հետո քահանան խոսքն ուղղելով հարսին և փեսային, ասում էր. «Այս եկեղեցին և հասարակությունը թող վկա լինեն Ձեր խոստմանը, համաձա՞յն եք»: Փեսան և հարսը դրական պատասխան էին տալիս, առաջինը դարձյալ «Այո» ասելով և երկրորդը իր գլուխը խոնարհելով:

Այս պատասխաններից հետո քահանան վերցնում էր մի բաժակ գինի, օրհնում և տալիս նախ փեսային, ապա հարսին՝ խմելու: Նրանք խմում էին «կենաց գինին»:

Հարս ու փեսայի պսակադրության ծիսակատարությունը վերջանում էր «ուռքը կոտրելով»: Ազաբչարիները ուռքը քահանային էին ներկայացնում: Քահանան վերցնելով ուռքի գագաթին խրված կարմիր ձուն, դնում էր սեղանի վրա, ասելով՝ «Կատարեաց զօրենս» (օրենքը կատարվեց): Ապա ուռքը բաժանվում էր չորս մասի. առաջինը՝ եկեղեցուն, երկրորդը՝ սպիտակ մուրըքնուն (ավագներին), երրորդը՝ ազաբչարիներին և չորրորդը՝ աղջիկներին, մի-մի մասնիկ էլ ներկաներին:

Ուռքը կոտրելուց հետո քահանան հարս ու փեսային «Մեկ բարձի ծերանաք» էր ասում, նրանց ծնողներին «աչքի լույս» մաղթում և պսակի ծիսակատարությունը եկեղեցում վերջացնում ու հանդիսականների հետ միասին փեսատուն մեկնում:

Եթե պսակը գյուղում եկեղեցի չլինելու պատճառով փեսայի տանն էր լինում, պսակի ծիսակատարությունը նույն ձևով էր կատարվում:

Սասունի Գելիեգուզան գյուղացի Ազոյի տան Ադամը պատմում է, թե նույն գյուղացի Ակոբ Պողոսյանի և Խաթե Տեր-Քաջյանի հարս ու փեսայության և պսակի եկեղեցում ծիսակատարության ժամանակ, այն պահին, որ հարս ու փեսայի արանքից մերկացրած թուրն էին անցկացնում, Ակոբի և Խաթեի «խաչված» ձեռքերն իրարից չեն բաժանվում և թուրը նրանց ձեռքերի վրա կանգնեցվում է:

Երբ քահանան փեսային՝ Ակոբին հարցնում է, թե ձեռքդ ինչո՞ւ հարսի ձեռքից՝ «խաչումից» չի ազատվում, նա պատասխանում է. «Չեռվնիս շողցյա գբը իրուր» (մեր ձեռքերը եռացել, իրար են միացել): Քահանայի «օրհնյալ է սուր, որով լինի արդարություն» խոսքի վրա «եռացող», իրար միացող ձեռքերն իրարից բաժանվում են, սուրն անցնում ու նարոտը կապվում, պսակի արարողությունը կատարվում է:

Պսակի կատարումը ոչ թե միայն մի զույգով էր լինում, այլ, շատ անգամ գյուղում միաժամանակ մի քանի հարսանիք լինելիս, հարս ու փեսաներին, թվով 3-7 զույգ միասին տանում էին եկեղեցի ու միաժամանակ պսակում:

Խմբական պսակը կատարվում էր միայն նոր հարս, նոր փեսա եղող զույգերի համար: Եթե միասին պսակի եկող զույգերից մի զույգի հարսն այրի լիներ կամ փեսայի երկրորդ պսակը, այդպիսի զույգերին թույլ չէր տրվում խմբական պսակին մասնակցել: Նրանք պետք է սպասեին նորապսակ զույգերի պսակվելուց հետո ներկայանալ և պսակվել:

Գելիեգուզան գյուղում մի անգամ, պսակի ներկայանում են յոթը զույգ, որոնցից վեցը նորապսակներ, իսկ յոթերորդը՝ նույն գյուղացի Սահակ Պողոսյանի հարսնացուն, այրի, բայց գեղեցիկ մի կին: Գյուղի քահանան չի ընդունում Սահակին և հարս Խոլեին և պատվիրում սպասել: Այն ժամանակ փեսա Սահակը, բազմության ներկայությամբ իր գլխին ամրացված խաչ-պսակը հանում է, գցում գետին, տրորում և հարսի ձեռքը բռնած վերադառնում տուն: Բայց եկեղեցին նրանց բանադրելու և հասարակության կողմից էլ հասցվող վիրավորանքների հետևանքով Սահակն ու Խոլե գեղեցկուհին դժբախտության են հանգում:

Պսակի արարողությունը վերջանալուց հետո ամբողջ հասարակությունը եկեղեցուց փեսայի տուն գնալով երգ ու պարով, փող փչելով, խաղ ասելով, զվարճանում էին: Հարսն իր շքախմբի հետ փեսայի տան դուռը հասնելիս սկեսուրը դիմավորում էր, հարսի ուսին թարմ հաց դնում, վիզը համբուրում և տանում կուլին: Փեսան և ազաբչարիներն էլ, իրարից անբաժան, մասնակցում էին երգ ու պարին, քանի դեռ հասարակությունը փեսայի տանն էր: Իսկ երբ վերջին մեծ խնջույքը, պսակի ճաշը տրվում էր, կեր ու խումը ավարտվում էր: Այդ ժամանակ ազաբչարիները թագավորի ճաշասեղանի շուրջը՝ քավորի և

թագավորի հետ միասին ճաշելուց, կերուխումից հետո, ջարդում էին այդ սեղանի վրա եղած ճաշի ամանները և թագավորին հրավիրում, տանում իրենց տները: Հանդիսականները հարսի և փեսայի ծնողներին «աչքի լուս», իսկ հարսին ու փեսին «մեկ բարձի ծերանալ» մաղթելով սկսում էին դուրս գալ:

Հարսանեկան խաղերից էին՝ «Թևխաղը», «Ծանր պարը», «Գորանին», «Ջգուտիկը» (ճկույթ), «Իրիք դագը» (երեքոտք), «Ջարջոլոն», «Քոչարին», «Թիթըվ խաղ», «Թուր ու մառտալ» կամ «Մառալուգ» (թրով գդակ թռցնել), «Թռնոկին» և ուրիշները: Պարում էին սրնգի, դհոլ-զուռնայի նվագի տակ և երգելով: Այդ երգերն իրենց պարեղանակներով շարունակվում են այժմ էլ:

Հարս ու փեսայի առագաստ մտնելուն սասունցիներն ասում էին «մեզգեխիլ»:

Հարսնևորները ցրվելուց հետո թագավորն ազաբչարիների և մոտիկ բարեկամների հրավերին պատասխանելով՝ գնում էր նրանց տները: Նա հարսի մոտ չէր գալիս մինչև հարսանիքի 7-րդ օրը: Հարսը մինչ այդ միշտ իր շքախմբի՝ հարսնքուրերի և հարսնաղբոր հետ փեսայի տանն էր քնում: Հարսնքուրերը նրան ծանոթացնում էին առագաստ մտնելու հետ: Հարսնքուրն ընդհանրապես լինում էր փորձառու կին, որը ծանոթ էր բոլոր սովորություններին և փոխհարաբերություններին:

Կուլինում պատրաստվում էր հարս ու փեսայի առագաստը՝ հատուկ խնամքով և բոլորովին չգործածված անկողնով:

Հարսնքուրը հարսին միաժամանակ խրատում էր. «Գլուխ իճուս Աստծու, հաբալմե՝ քու մարդուն» (գլուխ խոնարհիր՝ նախ Աստծուն, ապա՝ քու մարդուն): Զրույցներով բացատրում էր, թե ինչպիսի վերաբերմունք պիտի ունենա նոր հարսը փեսայի հետ, փեսայի ծնողների, եղբայրների և ընտանիքի բոլոր անդամների՝ մեծ ու փոքրի հետ:

Հարսանիքի վերջին՝ առագաստի օրը, ազաբչարիների հետ թագավորը հագնված-զարդարված, թագն ու պսակը գլխին գալիս էր տուն, մայրը դիմավորում էր նրանց, համբուրում թագավորորդու ճակատը և սեղան բաց անում: Ազաբչարիները կեր ու խում էին անում, զվարճանում և իրենց վերջին բաժակները հարս ու փեսայի կենացը խմում, աչքի լուս մաղթում թագավորի հորն ու մորը:

Հարսն այդ ժամանակ, հարսնաքրոջ հետ միասին մոտենում էր թագավորի թիկնապահ և պաշտպան ազաբչարիներին և ներկա հանդիսականներին, խոնարհվում էր, ամեն մեկի ձեռքը համբուրում: Նա գլխի շարժումով իր և փեսայի կեցաց խմողներին շնորհակալություն էր հայտնում: Ներկաները նվերներ էին տալիս հարսին և հարսնքուրն ստանալով այդ նվերները՝ ոսկե և արծաթե զարդեր, վզնոցներ, ապարանջան, մատանի և այլն, տեղն ու տեղը զարդարում էր հարսին՝ համապատասխան տեղերից կախ տալով զարդերը քողի տակին: Ապա հարս ու հարսնքուր վերադառնում էին կուլին:

Ազաբչարիները մեկնում էին՝ ձեռք տալով թագավորին և «դաստուր» (թույլտվություն) խնդրում իրենց տները գնալու համար: Թագավորը շնորհակալություն էր հայտնում ազաբչարիներին, իրենց աչքի ընկնող ծառայության համար, որ կատարել էին թագավորի պաշտպանության գործում և թույլատրում էր տուն գալ: Մեկնում էին նաև մյուս ներկա եղողները, բացի հարսնքուր և հարսնեղբայրներից, որոնք մնում էին տանը:

Թագավորի մայրը մոտենում էր որդուն, համբուրում ճակատը, վերցնում թագն ու պսակը նրա գլխից, առնում իր ձեռքը և առաջնորդում որդուն հանգստանալու առագաստում, ուր հարսն ու հարսնքուրը կանգնած դիմավորում էին թագավորին ու նրա մորը: Թագավորի մայրը, ցույց տալով առագաստը, թագն ու պսակը դնում էր այնտեղ և դուրս գալիս: Հարսնքուրը փռում էր անբիծ սավանը նրանց անկողնում, պատրաստում տեղը, հարսին մոտեցնում փեսային, «Մեկ բարձի ծերանաք» ասում և դուրս գալիս առագաստից, դուռը ծածկում:

Լուսաբացին, երբ հարսնքուրը զարթնում էր և իմանում, որ հարսն ու փեսան էլ են զարթնել, առաջինն ինքն էր մտնում նրանց սենյակը, հավաքում նրանց տեղաշորը և վերցնում իր փռած սավանը: Սրա վրայի «նշանը» (կուսության նշան) տեսնելով, խնամքով հավաքում էր, ծալում սավանը և ցույց տալիս թագավորի մորը, հայտնելով նրան իր ուրախությունը հարսի կույս լինելու առթիվ, ասելով, թե «նշանն էրևաց», որի համար թագավորի մայրը նրան արժանի նվեր էր տալիս, ինչպես նաև հարսնեղբորը, որոնք նույնպես «պարզերես» մեկնում էին իրենց տուն:

Նորահարսի քողը մի ամիս մնում էր երեսին. երբ մի ամիս հետո հարսի հոր տնից մեծ պատրաստությամբ, նվերներով, խորվուռնով և գաթաներով գալիս էին հարսին հոր տունը տանելու, դարձյալ քողը երեսին էր գնում:

Հարսին տանելու համար գալիս էր կամ հարսի եղբայրը, կամ հորեղբայրը, որին փեսան նույնպես նվերներ էր տալիս: Այդ նվերը լինում էր «կունդոկի աբայի» (մազածածկ կարճ, կիսաթևավոր վերարկու), ճերմակ բռնակով դաշույն կամ մի այլ թանկարժեք նվեր եկողի և այլ նվերներ հարսի եղբայրների, քույրերի համար: Հարսին հերանց տուն տանելը կոչվում էր «դարձ» (վերադարձ): Դարձի գնացող հարսի հետ ուղարկում էին խորվուն (խորոված ոչխար), գաթա և այլ մթերքներ, որպես հարսի ճանապարհի մթերք (զվադա): Նվերները կոչվում էին փառու (նվեր): Փառուն կարող էր լինել հրացան, անասուն կամ փող:

Նորահարսը երբ հասնում էր հերանց տուն, քողը երեսից վար էին առնում և այլևս քողով չէր ծածկվում: Հարսին այցելության էին գալիս ազգականներն ու բարեկամները, դրացիները, ընդհանրապես կանայք և աղջիկներ, որոնց «մտերիմ զրույցներ» էին ունենում նրա հետ, նրա հարսնության և նոր տան ու օջախի մասին:

Հարսը հերանց տանը 15-20 օր մնալուց հետո, փեսայի տնից մի մարդ գնում էր հարսին «դարձ» բերելու, իր հետ տանելով խորվուն և այլ պատշաճ մթերքներ:

Հարսին փեսայի տունը «դարձ» բերելու գնացողին նույնպես փառու էին տալիս և մեծ պատրաստությամբ ճամփու գնում: Հարսը փեսայի տուն էր գալիս առանց քողի և ճանապարհին հանդիպող ամեն մի ճամփորդի հարսն իր ձեռքով, խորվուն, գաթա և այլ ուտելիքներ էր տալիս, թեկուզ այդ մթերքներից ոչինչ չմնար մինչև տուն հասնելը: Սակայն փեսայի տնից հարսի տուն գնալիս ճամփորդին ոչինչ չէր տրվում:

Առագաստի օրվանից մինչև հերանց տուն դարձ գնալը հարսը տնային ծանր գործեր չէր կատարի, թույլ չէին տա աղբյուր գնալ, ջուր բերել և այլն, սակայն դարձի գնալ-գալուց հետո ամեն կանացի աշխատանք կատարում էր:

Հարսը Սասունում չխոսկան էր, ինչպես սովորություն է հայ հարսերի համար:

Հարս լինելուց մի քանի ամիս հետո, հարսը միայն իր ամուսնու հետ, այն էլ միայն առանձնության ժամանակ, խոսում էր: Ապա խոսում էր տան փոքր երեխաների, հատկապես աղջիկների հետ:

Հետզհետե խոսում էր ընտանիքի մյուս անդամների հետ: Տարիներ անց, երբ արդեն մայր էր դառնում, խոսում էր սկեսրոջ հետ, իսկ սկեսրայրի հետ չէր խոսում, նույնիսկ, երբեմն միևչև նրա մահը, իսկ անհրաժեշտության դեպքում գլխի շարժումով «հա» կամ «չէ» ասում:

Ապահարզան Սասունում երբեք չէր թույլատրվում և տեղի էլ չէր ունենում, նույնիսկ այն դեպքում, երբ կինը չբեր էր լինում, կամ ամուսինը առնականությունից զուրկ:

Չբերության դեպքում գաղտնիքը մնում էր երկու ամուսինների մեջ, առանց որևէ մտերիմի՝ եղբորը կամ քրոջն ասելու: Այդպիսի դեպքերում դիմում էին զանազան միջոցների: Միջոցներից մեկն այն էր, որ յոթն աղբյուրից մարդ ու կին ջուր էին բերում, գիշեր ժամանակ տաքացնում և մերկանալով, կռնակ-կռնակի տված և օջախի շեմի վրա նստած լողանում էին իրար հետ միաժամանակ, իրար վրա փոխադարձաբար ջուր լցնելով: Այդպիսի ամուսինները «գաբուգ» (կապուկ, կապված) էին համարվում և լողանալով կարծում էին, թե «հարձգվում» (արձակվում) էին, Գրբացներին էին գնում՝ գաղտնի թուղթ անել տալիս:

Կինը սասունցու «նամուսն ու խիրաթն» (պատիվն ու եռանդն) էր համարվում: Ամեն մի հայհոյանք թերևս մի կերպ համբերությամբ տանեին, բայց երբ կինն էր հայհոյվում, ամուսինը վրիժառության էր դիմում:

Կնոջ մի խոսքը խրախուսում, սխրագործության էր մղում ամուսնուն, կամ խորը կերպով հուսահատեցնում նրան: «Գնգա խոսքը կեդին չընգնը» (կնոջ խոսքն անհետևանք չեն քողնի) ասում է սասունցին:

Գելիեգուզան գյուղացի Ազոյի տան Աղամը պատմում էր, թե «թագն ու պսակից» (ամուսնությունից) մի քանի օր հետո հրացանն առած կաքավի որսի էր գնում, որոնք երևում էին «մեր տանը մոտիկ»: Կինը՝ Վարդեն, ասում է, գնդակն այնպես խփես, որ կաքավի փետուրները չարյունոտվեն: Ադամը «խիրաթի» (եռանդի) է գալիս և մեծ զգուշությամբ կնոջ պատվերը կատարում՝ գնդակը կաքավի գլխին հասցնում:

Սասունում ազգականներից ամենասիրելին փեսայի համար զոքանչն էր, ինչպես ամենազորավոր սուրբը հավատացյալի համար Մարութա վանքն էր: Մի փեսա Մարութա վանք ուխտի է գնում մեծ բազմության և իր զոքանչի հետ: Երբ ուխտը վերջանում է, մարդիկ մեկնում են, այդ փեսան իր զոքանչին խնդրում է, որ նա էլ ուխտավորների հետ շարժվի, մինչև ինքը մենակության մեջ մի խոսք ասի Մարութա սարին: Երբ

այդ փեսան նայում է շուրջը, տեսնում, որ մարդ չի մնացել, մտնում է վանքի լուս տունը և հարցնում. «Էյ, մեռնըմ քըզի, Մարութա սուրբ սար, տու անզոքանչ իմա՞լ գննաս հուդա»:

Կնոջ այս մեծ պաշտամունքն ու հարգանքը, հավանորեն, մայրիշխանության մնացուկն էր սասունցիների մեջ:

Փեսան իր պարտականությունն էր համարում իր զոքանչին, մոր հետ հավասար և ավելի խնամելու, անկախ այն բանից, նա խնամողներ ուներ կամ կարիք չուներ: Դրա համար փեսան ամուսնությունից մի տարի հետո - դրանից առաջ ամոթ է կնոջ ծնողներին այցելել հագուստի և այլ նվերներով գնում է զոքանչի մոտ և կթխա (նվեր) տանելու նրան, և տնեցիներին՝ միայն կին և աղջիկներին:

Ըստ երևույթին, մայրիշխանության վերապրուկ էր և այն, որ առագաստի օրվանից յոթն օր հետո, հարսի մայրը, 2-3 կանանց հետ, գալիս էր փեսայի տունը՝ հարսին «ղոնչա» (թխվածք) բերում, նրան անձամբ լողացնում և վերադառնում տուն: Զոքանչն էլ իր փեսային որդուց ավելի էր սիրում: Հարսին առաջին անգամ փեսայի տնից հոր տուն գնալը ընդունված ժամկետից շուտ չէին կատարում: Եթե որևէ պատճառով հարսն այդ ցանկանար և գար, ծնողները տուն չէին ընդունում նրան և անմիջապես վերադարձնում էին փեսայի մոտ: Զոքանչը, հայտնի թե գաղտնի, նվերներ էր ուղարկում փեսային և տնտեսական օգնություն մշտապես հասցնում՝ եթե նա դրա կարիքն զգար: Նույն վերաբերմունքը փեսան ուներ զոքանչի հանդեպ:

Առագաստի օրվանից մինչև քառասուն օրը նորահարսը որևէ ծննդկանի տուն չէր մտնի, որպեսզի ալքերին չհանդիպեր և իր պտղաբերությանը վտանգ չհասցներ:

Նորահարսը տագրոջ կամ տեգրակնոջ անունը չէր տալիս, անհրաժեշտության դեպքում ասում էր, օրինակ՝ «Տիգրանի մայրը», կամ հայրը, «Տիգրանի ճոբոն» (պապիկը), ճոճոն (տատիկը), «դայոն» (մայրը) և այլն: Տղայի կամ աղջկա անունը հիշելով, հորը, մորը, պապին, տատիկին ակնարկելը մի սովորություն էր, որ հարսներն իրենց մինչև տատիկ դառնալն էլ գործածում էին:

3. ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ

Առաջին մանկություն - Ամուսնությունը Սասունում դիտվում էր ոչ միայն իբրև սերնդի (զուռիեթի) շարունակման միջոց, այլև իբրև փառքի և պատվի գործ, ըստ որում չամուսնացողները, տղամարդ թե կին, դիտվում էին որպես «չոր գլուխներ», որ նշանակում էր ծաղիկ-սերունդ ունենալու անընդունակներ և արհամարհվում էին: Ամուսնացող, բայց սերունդ չունեցողների համար էլ ասում էին «մարդ չէ» «մարտութին չունի», այսինքն՝ սերնդագործելու ընդունակ չէ: Ամլությունը բոլորի արհամարհանքին էր արժանանում: Եթե ամլության պատճառը տղամարդն էր, նրա համար ասում էին. «էրիկմարդ չէ», այսինքն՝ բեղմնավորելու ընդունակ չէ, իսկ եթե ամլության պատճառը կինն էր, «չբեր» էին անվանում, որ նշանակում էր հղիանալու ընդունակ չէ: Ամուլ ամուսիններն այս արհամարհանքից ազատվելու համար զանազան միջոցների էին դիմում: Այդ միջոցներն էին Մշո Սուրբ վանք Ս. Կարապետին ուխտի գնալը, առաջին հերթին, իսկ հետո՝ Մարութա ճգնավորին, որ գտնվում էր Տալվորիկի Սպղանք գյուղում և կոչվում էր նաև «Մարապու վանք»: Ամուլները դիմում էին նաև գրբացների, կախարդների և թովիչների: Կանայք Ընցքար գյուղի «Ծակ քարից» էին գնում անցնում՝ հղիանալու համար:[1]

Արհեստական վիժման գաղափար գոյություն չուներ, իսկ որևէ պատճառով առաջացած վիճումը դիտվում էր որպես մոր կողմից կատարված մեծ մեղք և հանցագործություն:

Ընդհանրապես, չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը կնոջը մոտենալը վատ բան էր համարվում և զգուշանում էին: Դա բացատրվում էր նրանով, որ չորեքշաբթի և ուրբաթ օրերում միշտ պաս էին պահում, յուղեղեն և մսեղեն չէին ուտում մինչև 1900-ական թվականները, իսկ կիրակի սուրբ օր էին համարում: Այս երևույթը հնից էր գալիս, որը գրանցվել է հայոց եկեղեցական կանոնագրքերում: Այստեղ ասված է. «Խրատ տա, որ գչորեքշաբթի, զուրբաթ և զկիրակի... սուրբ կենան հանկողնոյ»:[2]

[1] Գ.Վ.Սրվանձտյանց, «Գրոց ու բրոց», էջ 28:

[2] Կանոնագիրք Ձորավանքի ժողովի, չորրորդ կանոն, Ղըլտչյան, Թիֆլիս, 1913, էջ 184:

Դեռ չծնված երեխայի սեռը պարզելու համար դիմում էին զանազան միջոցների: Խմորի փոքրիկ մի գունդ դնում էին կրակի վրա, երբ այդ գունդը ուռչում էր, բայց չէր ճեղքվում, նշան էր, որ ծնվողը տղա էր լինելու, իսկ եթե ճեղքվում էր՝ աղջիկ: Հղի կինն ինքն անձամբ մի հավի լեղապարկ գցում էր կրակի վրա, եթե դա տրաքվում, ձայն էր հանում, տղա էր ծնվելու, եթե ոչ՝ աղջիկ էր: Հղի կինը մի խաշած սիսեռ էր վերցնում և մատներով նրա վրա սեղմում. եթե սիսեռը մաշկից դուրս էր թռչում առանց բլթակներն իրարից բաժանվելու՝ տղա էր ծնվելու, իսկ եթե բաժանվում էր կամ ճզմվում՝ աղջիկ և այլն:

Ծննդկանի հեշտ ազատման համար գործադրում էին հետևյալ միջոցները: Ծննդկանի մեջքին կապում էին մի բարակ շղթա, որից մկրատ էին կախում, որպեսզի այդ շղթայից և մկրատից, որպես երկաթեղենից, չարքերը հեռու մնային: Բասըմբոլ (նարոտ՝ ծաղկազարդին վառված մոմի մնացորդով) էին կապում, նրա չադրեկից կախում: Երուսաղեմի էջմիածնից և Մշո Սուրբ վանք Ս.Կարապետից բերված յոթ հանգուցավոր թել էին կապում նրա մեջքին, որ յոթը խորհրդով «չարքերը կապվեին»: Ծննդաբերությունը ծանրանալու դեպքում իր մասերով լրիվ հավաքված արորը դուրս էին հանում տան դռան առաջ և մասնազատում իրարից, որպեսզի բերքն էլ մորից անջատվեր: Եկեղեցու կամ տան դուռը երեք անգամ բացում էին, որ մի դուռ բացվեր, այսինքն՝ ճար-ճամփա լիներ երեխայի ծնվելուն:

Ամուսինն իր մեջքը դեմ էր տալիս կնոջ մեջքին, որ փրկություն լիներ: Ծննդաբերությունից առաջ ամուսնու մեջքը կնոջ մեջքին հպելն առաջացել է չարի ուշադրությունը ծննդաբերությունից շեղելու հավատից (կուվադա), որ այժմ էլ գոյություն ունի որոշ ցեղերի մեջ, որով «թեթևացնում են» երկունքի ցավերը: Երկունքի ցավերով բռնված ծննդկանի երկու թևերը մտած երկու մտերիմ կանայք, մեկը հաճախ տատմերն էր լինում, օջախտան մեջ մի պատից մինչև մյուսը վազեցնում, կամ արագ քայլեցնում էին, որ երեխան հեշտ ծնվեր:

Հղի կնոջը չէր թույլատրվում ջրի գնալ, նույնիսկ հոսող ջրի վրայից, աղբյուրից անցնել: Չէր թույլատրվում և մութ սենյակ մենակ մտնել կամ գիշեր ժամանակ դուրս գալ, որպեսզի «չարքերը չզարգեին»:

Ծննդաբերությունն ընդհանրապես կուլիսում և հացատանն էր կատարվում, եթե վերջինում տնեցիները բացակայում էին: Ծննդաբերությունը կատարվում էր ծննդկանի ծնկած դրությամբ: Նրա աջ և ձախ կողմերին միշտ կանգնած էին երկու կանայք, որոնք երկունքի ժամանակ իրեն մաս էին ածում տան մեջ, իսկ տատմերը կանգնում էր նրա առջև: Բացի օգնող երկու կանանցից և տատմերից, ուրիշին թույլ չէր տրվում երկունքի ժամին ներկա լինել: Երեխայի ընկերքի ընկնելը եթե ուշանում էր, զգուշության համար դրա ծայրը մի թելով կապում էին ծննդկանի ոտի մի մատին, որպեսզի արգանդ չվերադառնար և բարդություն չառաջացներ: Երբ ընկերքն ընկնում էր, վերցնում էին խնամքով, վրան մի ասեղ շուլուլում և թաղում մի այնպիսի մաքուր տեղ, ուր ոտք չէր դիպչում: Ծննդկանին, ազատվելուց հետո, անկողնում պառկեցնում էին, իսկ երեխային պորտը կտրել-կապելուց հետո փաթաթում և դնում էին նրա անկողնի բարձին մոտիկ:

Ծննդկանն իր կաթից մի քանի շիթ կթում էր երեխայի յուրաքանչյուր աչքի մեջ, որպեսզի «բժուկ» (աչքացավ) չկպչեր, (աղեկ) աչքեր ունենար: Կարմիր Ջատկին ծնված երեխաները «Փեջրար» էին լինում: Դրա համար այդ օրը ծնվող երեխայի փեջրարության համար մատաղ էին անում, գառան «փեշը» (թիկնոսկրը) վերցնում, նրա լայն մասի կենտրոնում, պտուկ անցնելու չափ ծակում, այդ ծակից անցկացնում մոր ծծի պտուկը և առաջին ծիծը տալիս երեխային. այդ անցքով էին սկսում ծիծ տալ յոթն օր շարունակ, ապա փեշը (թիակը) կամ փեշքաթիկը տանում արտում թաղում էին այն ձևով, որ ցորենի ծիլեր անցնեին դրա անցքից և աճեին: Խնամքով հսկում էին այդ ցողուններն ու հասկերը և դրանց հատիկներից ալյուր էին ստանում, խյուս անում և կերցնում երեխային, իբրև մոր կաթից հետո առաջին սնունդ: Ահա այդպիսի երեխան մեծանալով «Փեջրար» (փեջին նայելով գուշակող) էր դառնում:

Սասունցիները շատ մեծ տարբերություն էին դնում տղայի և աղջկա միջև, տղային տան օջախ, աղջկան՝ դրսի պատ համարելով:

Հայրը նորածին երեխային մինչև նրա հալլիլը (կնքվելով հալալ դառնալ), նույնիսկ քառսունքի ընթացքում չէր մոտենում և չէր գրկում: Նույն վերաբերմունքն էլ ուներ դեպի կինը՝ քառսունքի ընթացքում:

Քառսունքի ընթացքում ծննդկանի մեջքին կապում էին մի շալ, մի շալ էլ գլխի վրա էին գցում և մեջքի շալից շղթայավոր մի մկրատ կախ տալիս, որ նրան «չարքերը չմոտենային»; Ծննդկանին և երեխային այդ չարքերից հեռու պահելու համար նրանց բարձի տակ մի դաշույն կամ մի դանակ, մի որևէ սառը զենք էին դնում: Դանակը կամ դաշույնը, երբեմն փոխարինվում էր «Նարեկ»-ով կամ Ավետարանով, եթե այդպիսին ունեին տանը, իսկ երբեմն էլ երկուսը միասին, եթե կարող էին ճարել:

Երեխան մոր անկողնու միշտ աջ կողմն էին դնում, մինչև նրան օրորոցի մեջ տեղափոխելը:

Երեխայի ծննդյան ժամանակ ծննդատան դռան առաջ անհամբեր սպասում էին երեխաներ, որպեսզի իմանալով նորածնի տղա կամ աղջիկ լինելը, շտապեին հարազատին՝ հորը հայտնելու, մանավանդ, եթե նորածինը տղա էր լինում, անգջգլա (աչքալուս) տալու և փոխարենը նվեր էին ստանում. քանկագին էր լինում հոր կողմից տրված նվերը, եթե տղայի համար էր, իսկ աղջկա համար այդ նվերը քիչ արժեքավոր էր լինում: Նորածին երեխային առաջին անգամ լողացնելիս այդ ջրի մեջ մի երկաթի կտոր էին դնում, լողացնելուց հետո երեխային ջրից հանելիս ջրի մեջ թքում էին, ասելով՝ «Չարն էրթա, բարին իկա»:

Ծննդկանը և երեխան մաքրված և հալալված էին համարվում երեխայի մկրտությունից հետո: Ծննդկանի և երեխայի համար ամենավտանգավոր օրերն էին համարվում մինչ մկրտությունն ընկած յոթն օրերը: Դրա համար միշտ աշխատում էին մկրտությունը շուտ կատարել: Եթե մինչև մկրտության կատարելը նորածին երեխան մահանար, նրան հասարակական կամ տոհմական գերեզմանատանը չէին թաղում, այլ դրանից դուրս՝ գերեզմանատան սահմաններին մոտիկ:

Առանց մկրտության մեռնող և թաղվողի համար թաղման արարողություն, կամ որևէ աղոթք չէր կատարվում, անձայն, նույնիսկ գաղտնի էր կատարվում այդ թաղումը:

Երեխայի մկրտությունը կամ կնունքը լինում էր եկեղեցում, եթե եկեղեցին մոտիկ էր, իսկ հեռու եղած դեպքում՝ տանը: Երեխայի կնունքը կատարվում էր քավորի, ծննդկանին մոտիկ և մինչ այդ նրան խնամող կնոջ ու հանդիսականների ներկայությամբ: Եկեղեցում եղած կնունքը լինում էր ավազանում,

որ ընդհանրապես եկեղեցու բեմին նայելիս ձախակողմյան պատի մեջ էր շինված լինում, միակտուր սրբատաշ քարով, իսկ տանը, մաքուր, մեռնած մի տաշտի մեջ:

Քավորը լինում էր տոհմական: Պապից-պապ քավորությունը շարունակվում էր, նույնիսկ եթե քավորը գյուղից քոչեր, այլ գյուղ գնար, մկրտության նախօրեին գնում նրան հրավիրում էին, որը սիրով գալիս էր: Բացառիկ դեպքում միայն փոխվում էր քավորը, եթե քավորի ոտը չէր գալիս, այսինքն՝ մեռնում էին սանիկները: Քավորին արժանացնում էին ամենամեծ հարգանքին: Այն արտահայտվում էր նրանով, որ սանամերը նրա հետ լեզու չէր թրջում, չէր խոսում նույնիսկ բազմաթիվ զավակների տեր դառնալուց հետո էլ, մինչև ծերությունը: Բայց խոր ծերության ժամանակ, մեռնելուց առաջ, անպայման խոսում էին քավորի հետ: Կնունքի հրավիրելու և տոն օրերին սանամերը քավորին ուղարկում էր ջամբրուկ՝ խուրջինով լիքը նվերներ, որտեղ լինում էին գդակ, շապիկ, **դաստամալ** (անձեռոցիկ), **նխշուն պուչ** (նախշուն գուլպա), գաթա, խմիչք և այլն: Քավորն էլ սանամոր համար կարմիր սոլեր, **շարշուր** (գլխաշոր), **քոֆի** կամ **ֆինո** (գլխարկ), իսկ սանիկի համար կտորեղեն և այլ իրեր էր նվեր բերում: Քավորի և սանամոր փոխադարձ լավ վերաբերմունքի ավանդությունն ըստ սասունցիների երկնքումն էլ է արտահայտվել: «Սանամոր էրտը» (սանամոր հարդ) առաջ է եկել և երկնակամարում ցրվել այն ժամանակ, երբ սանամերը քավորանց մարագից հարդ է գողացել և տուն գնալիս թափվող հարդը քամին ցրել է երկնակամարով մեկ ու կազմել «սանամոր էրտը»:

Քավորը մկրտության արարողության ժամանակ բազկատարած առնում էր երեխային իր թևերի վրա, քահանան հատուկ աղոթքը կարդալուց հետո, քավորի ներկայությամբ, երեխայի կեղտոտ (չմեռոնած) շորերը հանում էր, իրեն դնում ավազանի ջրի մեջ, լողացնում, մաքրում, մինչև այդ երեխան մկրտության բերող կինը կամ տատմերը **կեղտոտ** խանձարուրը երեխային մկրտող քահանային հանձնելուց հետո, երեխայի նոր շորերը, որ քավորն էր նվեր բերել և ծրարված ու վրան ասեղով փակված էր լինում՝ «չարքերից ազատ մնալու համար», բաց էր անում այն ժամանակ և փռում քավորի թևերի վրա, երբ քահանան ավազանից դուրս կբերեր երեխային, կմոտեցներ քավորի բազուկներին, ապա կդներ նոր, մեռոնած «հալալ» խանձարու-

րի մեջ: Այժմ, երբ երեխան քավորի գրկումն էր, մկրտող քահանան վերցնում էր մեռոնի տուփը, որի մեջ մեռոնի շիշն էր գտնվում և իր աջ ձեռքի բութ և ցուցամատով մեռոնը խաչաձև քսում երեխայի ճակատին, ափերի մեջ, կրծքի վրա, ոտների տակ, մեջքին, թիկունքին և ամեն մի խաչաձև քսելուն, մարմնի այդ մասին հատուկ աղոթք կարդում:

Երբ խաչակնքումները վերջանում էին, քահանան վերցնում էր «քավորի» բերած նարոտը, օրհնում և օղակածև անելով՝ անցկացնում երեխայի գլուխը, կախում կրծքի շորերի վրա: Նարոտը մետաքսե բարակ թելերից ոլորած կարմիր-կանաչ գույնի թել էր, նույն գույների ծոպերով: Հավանորեն, կարմիրը կյանքն էր, իսկ կանաչը՝ սերնդի շարունակությունը: Ամբողջ Սասունում ընդունված էր «Կանչնաս» (կանաչես, սերունդ ունենաս) օրհնությունը, որ նշանակում էր սերնդով ապահովես օջախդ, տեղդ կանաչի, զավակ ունենաս: Երեխայի անունն ըստ քավորի կամ ծնողների ցանկության կնքվում էր ավազանում լողացնելու միջոցին: Այդ անունն ամեն անգամ կրկնվում էր, երբ մեռոնն էր խաչաձև քսվում մարմնի զանազան մասերին: Կնունքի արարողությունը կատարվելուց հետո երեխային նոր խանձարուրով գրկում էր տատմերը կամ օգնող կինը: Նրան այլևս ծննդկանի անկողնուն չէին մոտեցնում, այլ օրորոցը պատրաստում, նրանից կախում էին խըժխըժիկը, այնտեղ քնացնում երեխային: Խըժխըժիկը կազմվում էր վեգից, փոքրիկ գդալից, սանրից և այլ խաղալիքներից, որ շարում էին թելի վրա կախված օրորոցի լծից, երեխայի աչքի առջև:

Եթե որևէ պատճառով քավորը չէր կարողանում ներկա լինել մկրտությանը, նրան փոխելն անհրաժեշտ չէին գտնում: Այդ դեպքում քավորի փոխարեն, տան ալյուրի մաղն էր «քավորություն» անում: Քավորի թևերի փոխարեն երեխային դնում էին ալյուրի մաղի վրա և նույն արարողությունը կատարում: Քավորը քահանային և տատմերին նվերներ էր տալիս 5-10 դուրուշ և մկրտության արարողությունը վերջանում էր ավազանի մեռոնաջրից ջուր վերցնելով: Դրանից մի քիչ խառնում էին այն տաքացրած ջրին, որով այդ օրը լողացնում էին ծննդկանին հալվելու (մաքրվելու) համար, որից հետո միայն նա իրավունք էր ունենում մկրտված երեխային մոտենալու, ծիծ տալու:

Կնքաճաշ էր կոչվում այն ճաշը, որ տրվում էր մկրտությունից հետո: Եթե կնքվողը տղա էր, այդ ճաշը մատաղով էին ա-

նում, և համեմատաբար անշուք, եթե աղջիկ էր: Տղայի կնունքի ժամանակ հարիսա, փլավ էին եփում, նոր հաց թխում, գինի և այլ ուտելիքներով լցնում սեղանը, մանավանդ այն դեպքում, եթե միևուճարը տղա էր: Նախ ճաշում էին տղամարդիկ, ապա կանայք: Երկու դեպքում էլ հակառակ սեռի ներկայացուցիչները չէին լինում:

Մեռոնահանեք էր կոչվում այն, երբ մկրտվող երեխային յոթ օր թողնելով մեռոնի մեջ (առանց լողացնելու), լողացնում էին յոթերորդ օրը: Այդ մեռոնաջրով տատմերը և ծննդկանը լվանում էին իրենց ձեռքերը: Այդ նույն ջրով տատմերը մաքուր հող էր շաղում, հողե գնդիկներ շինում և դրանք պահում, մի ուրիշ երեխա «առնելիս» նախապես ջրի մեջ լուծում ու լվացվում: Այդ ջրով հալըլում՝ սրբագործում էին այն ամանեղենները, որ շան լակումով կամ մեջը մուկ ընկնելով հարամ էր դառնում: Ծննդկանն էլ, մինչև երեխայի մկրտությունը և իր՝ «մեռոնաջրով» լողանալը անսուրբ էր համարվում, նրա հետ ոչ ոք չէր շփվում, նրա կերակրի ամանով միայն իրեն էին կերակուր տալիս և ուրիշ ոչ ոքի:

Քառսունքը մի ժամանակաշրջան էր, երբ ծննդկանը արևի առջև չպիտի երևար, մութ սենյակում չպիտի մնար, իսկ գիշերները նրա մոտ ճրագը միշտ վառ պիտի մնար, խանջարը կամ ավետարանը բարձի տակը պիտի լիներ: Քառսունքը երբ լրանում էր, լողացնում էին և ավետարանն ու դաշույնը բարձի տակից հանում, շղթա ու մկրատ արծակում, և ծննդկանը քառսունքից ելած էր համարվում: Դրանից հետո միայն ամուսինները կարող էին մերձավորվել:

Նորածին երեխաները եթե առաջին ամիսներին հյուծված էին մնում, համարվում էին **քառսնքակոխ** եղած, չարքերից խփված, որի համար զանազան միջոցներ էին գործի դնում: **Թվեքից** (օջախից) հանելով այդ նպատակի համար թխված մեծ բաղարջ հացը, եզերքները շրջանակածև կտրում հանում էին, երեխային այդ շրջանակի միջով երեք անգամ անցկացնում: Հացից հանված միջուկը տալիս էին աղքատներին կամ դրացիներին, իսկ մի մասը՝ հորն ու մորը՝ ուտելու համար: Այդ բանն անում էին նաև յոթ տնից հավաքած ալյուրով թխած հացով: Քառսունքակոխից հանելու միջոց էր նաև աղոթքներ կարդալ տալը, կամ թուղթ անելը:

Ծննդկանի ազատման օրերին, որպես հատուկ սնունդ, տալիս էին նվիճը: Դա վայրի մի բանջարեղեն էր, լայն թփերով, խաղողի թփի ծավալով և կծու համ ունեցող: Ընդհանրապես, բանջարեղեն սնունդ էին տալիս: Դրա համար ամառվանից նվիճ կամ նվիկ և այլ վայրի բանջարաբույսեր էին չորացնում: Կերակրում էին նաև տապակով և ջաջառունով: Այլ բանջարեղենները ծննդկանի կաթը շատացնում էին: Կաթը շատ լինելու և երեխայի կողմից չսպառվելու դեպքում, մայրն այն կթում էր թվեքի կրակի վրա, հոսող ջրի կամ աղբյուրի մեջ և մաքուր հողում՝ ուր ոտք չէր կոխում: Բացառիկ դեպքերում սակավ կաթ ունեցող մայրերի երեխաներին ծիծ էին տալիս: Այդ դեպքում ծծող երեխան ծիծ տվողի զավակն էր համարվում, որին աղջիկ տալ կամ հարս առնել չէր թույլատրվում: Նույն կնոջ ծիծը ծծողները, որոնք տարբեր ծնողներ ունեն, համարվում էին կաթնաղբերներ կամ կաթնքուրեր:

Երբ ծծկեր երեխան մեռնում էր, մայրը, իր կրծքի կաթը ցամաքեցնելու համար, մեջքին պառկում, պտուկները վեր էր բարձրացնում: Այս բանը կրկնում էին մի քանի անգամ: Երբ մայրը սակավակաթ էր լինում և երեխային չէր կարող կշտացնել, այծի և կովի կաթ էին տալիս:

Երեխային կերակրում էին և կորեկի բոված ալյուրով, մեղրով կամ կազբայով շինված խյուսով, որը երեխաները ախորժակով ուտում էին:

Կնոջ կաթը գործածում էին որպես դեղ հատկապես աչքերի համար՝ բաց աչքերի մեջ կթելով: Աչքերի մեջ կթում էին, երբ հիվանդը տառապում էր աչքացավով (լինի նա փոքրահասակ թե չափահաս՝ միևնույն էր): Աչքի մեջ մոր կաթն էին կթում, երբ ծմեռից՝ ձյան և արևի լույսից աչքը ցավում էր:

Ցաված ականջի մեջ էլ «ծիծ էին կթում»:

Նորածին երեխային կրծքով կերակրում էին առնվազն մի տարի: Բացառիկ դեպքում, երբ հայրը մեռնում էր և մայրը չէր ամուսնանում, իսկ երեխան էլ տղա էր լինում, մինչև պատանեկության հասակը նրան ծիծ էր տալիս:

Երեխաներին ծծից կտրելու համար մայրերը զանազան միջոցների էին դիմում: Կրծքին մուր էին քսում, պտուկը սևացնում, որ երեխան զզվեր և խրտներ: Երբ դա չէր օգնում դախտիղ (տաքդեղ) էին քսում պտկին, որ կծվությունից ծիծը մոռանար: Գագա (ձու) էին տալիս, որ ուրախանար և ծիծը մոռանար: Այդ միջոցառումների ժամանակ մածնով, կաթով և այլ սննդով լավ կերակրում էին, որ սովածություն չզգար: Վերջապես երբեմն երեխայի մորը մի քանի օրով հերանց տուն էին ուղարկում, որով և երեխան ծիծ ուտելը մոռանում էր:

Երեխային օրընդմեջ լողացնում էին մինչև մեկ տարեկան հասակին հասնելը, բայց ուրբաթ, կիրակի և չորեքշաբթի չէին լողացնում: Նրա օրորոցի ժամանակաշրջանի խանճարուրը բաղկացած էր երեք մասից՝ **կըռոջը**, որ հետույքի և առաջամասի շորերն էին: Կըռոջները բոված հողով, քիչ տաք վիճակում ծածկում էին, որ խոնավությունը քաշեր, երեխային տաք պահեր, մանավանդ աղջկան, որի մեզը միշտ կըռոջների վրա էր թափվում: Տղաներին **ջուջփեդն** օգնում էր. դրանով նա միզում էր առանց կըռոջները թրջելու: Երկրորդ շորը փաթըկն էր (փաթաթան), որ գոտկատեղից մինչև վիզն էր հասնում: Երրորդը **օրոցկապն** էր, որ **փաթըկ** և կըռոջները կապում, ամրացնում էին օրորոցին և թելերով ինքն էլ ամրացվում էր օրորոցի կամարին:

Երբ երեխան առաջին ատամն էր հանում, նրան **հատկասորիկ** էին անում. երեխային նստեցնում էին մի փալասի կամ գորգի վրա, խաշած ցորենի հատիկները թափում էին գլխին, իսկ նա զբաղվում էր զանազան իրերով՝ դաշույնով, գրիչով, խոփիկով, սանրով, մքուքով և այլն:

Երբ հատիկները սորսորալով երեխայի գլխի վրայից թափվում էին փալասի և նշված իրերի վրա, հատկասորիկին ներկա եղող և այդ երեխայի շուրջը շրջանաձև նստած 2-7 տարեկան երեխաները հավաքում էին հատիկները, նրանց հետ խառնված սիսեռն ու չամիչները և ուտում:

Այն գործիքը, որ երեխան առաջին անգամ բռնում էր իր թաթիկով, դառնում էր ցուցանիշ, նրա ապագան որոշող զբաղմունքը: Երբ դաշույն էր բռնում, սուր գործածող էր դառնալու, երբ գրիչը՝ կարդացվոր և այլն:

Երբ երեխան արդեն կաթնատամներն էր փոխում, շատ զգուշությամբ, ըստ սովորության, հետևում էին թե՛ առաջին, և թե՛ վերջին կաթնատամն ընկնելուն: Այդ ատամը **հանելը և թաղելը** մայրերի և երեխաների կողմից հատուկ արարողությամբ էր կատարվում: Հանված առաջին կաթնատամը, ինքը՝ ատամի տերը, մի քանի երեխաների ներկայությամբ, ձեռքին բռնած տանում, դռան **ճխանի** (սեմի կամ շեմքի) տակ թաղում էր, ապա դուռը բռնում, երեք անգամ տանում-բերում՝ փակում-բացում, հետն էլ

նոր ատամի համար հայտնում էր ցանկությունը. «Մանր-մանր կըց կառաև». ամբուր-ամբուր կըց ճորուև (գառան ատամի նման մանր, ջորու ատամի նման ամուր): Արու երեխայի մազերը առաջին անգամ կտրելիս տան պատի մի ճեղքում էին դնում, որպեսզի ոչ մի ոտք նրա վրա չտրորի և գլխի ցավ չառաջացնի: Եթե միևուճար տղա էր, ուխտ էին անում նրա մազերը Մշո Սուրբ վանք Ս.Կարապետի վանքում կտրել:

Երբ ուխտը կատարվում էր՝ այդ առաջին անգամ կտրված մազերը պահում էին, իսկ մազերը կտրողին մեծ նվեր էին տալիս: Պատահում էր, որ այդ ուխտագնացությունը տնտեսական կամ այլ պատճառով հետաձգվում էր, ուստի երեխայի մազերն ու խոպոպները աղջկա վարսերի պես թափվում էին նրա ուսերին և մեջքին:

Երեխային հանգիստ քուն տալու համար կարծեցյալ **քնհլուև** (քնաբեր ուլունք) էին կախում երեխայի վզից: Քնհլուևը շատ էր գործածվում և հեքիաթների ու էպոսների մեջ: Այդպես օրինակ՝ Լեյլի և Մեջնուև, Մամե Չինե և այլ ստեղծագործությունների մեջ հիշատակվում էին քնաբեր ուլունքները: Այդ երգերը երգվում էին Սասունի հայերի և քրդերի մեջ, տոներին և հանդիսավոր հավաքույթների ժամանակ:

Երբ երեխայի բերանից գլեզ (լորձունք) էր հոսում, փռծլինք գնում, այդ տհաճությունից ազատելու համար երեխային տանում էին մուգլեղ (մողես) ցույց տալու: Երբեմն երեխան ինքը մուգլեղ տեսնելիս ասում էր. «Փռծլուևքուտ բերաև, հո՞ւր գերթաս, զըմ փռծլինք լա դար»: Նա այս խոսքը երեք անգամ կրկնում էր, իսկ մեծը երեխային բուժելու համար ասում էր. «Փռծլուևքուտ բերաև, հո՞ւր գերթաս, զըմ տղը (կամ աղջկա) փրծլինք լա դար»:

Գլեզը բուժելու մի այլ միջոց էին համարում **թվեքի քըռչը**, այսինքն՝ օջախը սրբող շորը, որով սրբում էին երեխայի բերանը:

Երեխային շուտ ոտքի հանելու համար շինում էին ջախրդիգ (փոքր ճախարակ), որ երեք անիվների վրա էր շարժվում: Երեխան ոտքերը դնում էր սռնիին մոտիկ, ձեռքերով բռնում ճախարակի վերին մասը և դանդաղ ու վստահ քայլում էր:

Երեխայի կրծքին **օրաջիգ** էին կարում, որ չարխափան էր:

* * *

Սասունում մարդկանց անունները կարճ և կրճատված էին արտասանվում: Երեխային կնքած անունը մինչև նրա կյանքի վերջը մնում էր անփոփոխ: Դրանց մի մասն, անկասկած, կրճատ էլ եղել է, որ գալիս էր հնագույն շրջանից, իսկ մի զգալի մասը, ինչպես օրինակ՝ Ավե, Վրդո, Արո և այլն, կրճատվում էին գրոց անունները (Ավետիս, Վարդան, Արամ): Քահանան, սակայն, չէր ընդունում այդ տարբերությունները և գրանցում էր ճիշտ այնպես, ինչպես ժողովուրդն էր առաջարկում:

Տղամարդկանց և կանանց անուններն անփոփոխ էին մնում, փոխվում էր միայն աղջկա ազգանունը, երբ նա հարս էր գնում:

Այստեղ մենք կներկայացնենք արական և իգական անունների ցանկը, ինչպես նաև մանկական թոթովանքների մի փոքրիկ բառարան, որին կարևոր արժեք ենք տալիս:

Արական անուններն էին՝ Մաղո, Խապո, Պետո, Ավե, Ավզե, Սըքո, Գորգե, Օվսե, Արո, Գալո, Կիրո, Կամո, Զաքո, Ֆարհո, Ասքո, Խըզրո, Մուրո, Ախո, Մարտո, Խըլո, Մլքո, Ուճո, Համզե, Կալե, Ազո, Շաբեկ, Կընե, Թորո, Խամո, Մոսե, Պողե, Ռոմըկան, Ռաշո, Իբո, Գալբո, Հոպե, Շառո, Թումո, Ֆարե, Թաթար, Սուքո, Շառո, Լաունդ, Հայրո, մարկե, Զբրե, Խուտո, Բրլո, Մելե: Խամո՝ տղայի անուն, որ հոր մահից հետո է ծնվել: Նշանակում է վիշտ:

Իգական անուններն էին՝ Չունե, Շաքե, Շաքրե, Խամե, Չընմո, Ռընդո, Շմե, Նուրե, Մեմզար, Խայթո, Օսկո, Անո, Խումար, էդսո, Զարե, Թամե, Սաթո, Վարդե, Եըվե, Մանո, Փարո, Դուռե, Ճավռաշ, Հաջո, Բեզո, Զանո, Բարֆո, Խամլո, Ալմո, Թորբե, Զեռե, Հապսե, Շահգուլ, Ռաշե, Հոռմե, Խաթե, Մադե, Մուղալ, Դալալ, Մայմո, Հազե, Շամե, Մանե, էմո, Խզամ, Խմլե, Խամե (աղջկա անուն, որ հոր կամ մոր մահից հետո է ծնվել և նշանակում է վիշտ):

Մանկական բառեր՝ Դայո - մայրիկ, բաբո - հայրիկ, քուրո - քույրիկ, գագ - ձու, բուբու - խաղալիք, բըշիկ - միս, բըժ - կրակ, դոդո - ոտք, չաչ - աչք, ագռա - ատամ, շըլիճ - վիզ, փոթ - հագուստ, լելե - խաղ, դիդի - նստել, էլալ - ելնել, ա-ա - քնել, փափիկ - թաթիկ, քըշ - քշել (հավ), լողլող - լողանալ, հոհո - կով, եզ, հորթ, չուչու - էշ, բուիկ - վնասող միջատ, քըխ - վատ է, կեղտ, փու - անհամ է, զի-զի - ծիծ (ծծելու համար):

4. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒՄ

Սասունի տասը շրջաններում՝ բուն Սասունում, Տալվորիկում, Սասունի Շատախում, Խութ-Բռնաշենում, Խաբլջոզում, Խուլբում, Խիանքում, Մոտկանում, Փսանքում և Խարզանում ապրող հայ և քուրդ բնակչության համար, որոնց թիվը հասնում էր 45-50.000-ի, պետական և մասնավոր ոչ մի բժիշկ չկար: Թուրքական կառավարությունը բոլորովին էլ չէր մտահոգվում ազգաբնակչության բժշկա-սանիտարական գործի անմխիթար վիճակով կամ բժիշկներ նշանակելու հարցով: Բնակչությունն էլ իր հիվանդի համար բժիշկ հրավիրելու ոչ գաղափար ուներ, ոչ էլ կարող էր այդպիսի անհնար բանի մասին մտածել: Կյանքն ու մահը երկուսն էլ բնական էին համարվում և ինքնահոսի կարգով ընթանում էին:

Սասունին մոտիկ երկու քաղաքներում՝ Մուշում և Տիգրանակերտում (Ֆարխին) մեկական պետական բժիշկներ կային, բայց նրանք այդ քաղաքներից դուրս չէին գալիս: Շրջակա գյուղերից և Սասունից ոչ ոք էլ նրանց չէր հրավիրում հիվանդ բուժելու համար:

Հիվանդությունների դեմ պայքարողները հանդիսանում էին հեքիմները, գրբացները, թուղթ անող կամ կարդացողները: Հեքիմները, որպես գործնական մարդիկ, գրբացությանն ու թուղթ անելուն չէին հավատում: Իրենց ապավինում էին նշդրակին՝ վիրահատության գործիքին և բուսական դեղերին: Կային հեքիմներ, որոնք մարմնի կոտրվածքները, գազաններ և թշնամիների հասցրած վերքերը, կանանց և կենդանիների ծննդաբերությունները, զանազան պարզ և բարդ վիրահատումները, ոսկորի կոտրվածքները, անդամալուծությունը և զանազան հիվանդություններն իրենց կարողության համաձայն ձրի բուժում էին:

Կային, անշուշտ, անվանի հեքիմներ, որոնք ժողովրդական բժշկության փորձը պապից-պապ էին հասցնում: Դրանք սակավ թիվ էին կազմում, բայց այն գործնական բժիշկներն էին, որոնց հենվում էր միջնադարյան բժշկությունը:

Սասունում ժողովրդական բժշկությունը ժառանգական էր. որդին կամ այլ մերձավոր մեկը շարունակում էր այդ գործն այնպես, ինչպես նա սովորել էր նախորդից, ավելացնելով իր նոր փորձը:

Այժմ մենք կներկայացնենք, մի կողմից՝ հիվանդությունները և մյուս կողմից՝ բուժման մեթոդները:

Կարմրուկ - Մաշկը կարմրում է, երեսը չորանում, տաքությունը բարձրանում. հիվանդը փռշտում է, հազում, աչքերից արցունք է թափում: Բուժման միջոցը հիվանդի մորթին սուր ածելիով որոշ տեղեր քերծելն էր, թելով հոսող արյունը սրբելը: Հավկիթի դեղնուցը և մի քիչ կապույտ շաբ ու աղ խառնում էին իրար մաիլամ անում, քսում մարմնի այն տեղերը, որ արյուն էր թողել և կարմրած էր: Եթե քսած տեղերից տարածվում էր կարմրուկը, հեքիմը նույն բանը կատարում էր նաև դրանց վրա, մինչև կարմրելը դադարելը: Երբ այլևս նոր տեղ չէր կարմրում և հիվանդի տաքությունն իջնում էր, կարմրուկը համարվում էր բուժված: Կարմրուկից բավական թվով երեխաներ մահանում էին:

Վարդախտ - Ճանաչվում էր մարմնի վրա երևացած կարմիր հատիկներից, որ մանր էին և մաշկից դուրս ցցված: Հիվանդը հազում էր, աչքերն արցունքոտում և ճպռոտում: Տաքությունը շատ բարձր էր և շատ էլ տաք պետք էր պահել: Մարմնի ամեն տեղ բշտիկ էր ելնում, իսկ ամենից շատ՝ թևերի, ոտքերի, փորի վրա: Բուժման միջոցը ճերմակ շաբի ու անաղ կարագի քսելիքն էր: Այն քսում էին բշտիկների վրա: Այդ քսուքը կտրում էր քոր գալը և մարմինը պաշտպանում էր ցրտառությունից: Հիվանդին շատ տաք էին պահում:

Խուխլուկ - Ճանաչվում էր, երբ հազալիս հիվանդի մարմինը կապտում էր: Տևում էր՝ մինչև 5-6 ամիս: Հովը հիվանդին հաճելի էր՝ թվում: Բուժման միջոցն էր էշու կաթ խմեցնելը: Կաղնի ծառի տերևի կողքին եղած գխտորը հավաքում և մի հատը ծակելով կախում էին նրա վզից մինչև լավանալը:

Ծաղիկ - Հիվանդության նշաններն էին համարում հազալը և մարմնի վրա հատիկների թարախոտվելը: Հատիկները տարբեր մեծության էին լինում, շատ մեծ և շատ փոքր: Երբ հիվանդությունը ծանր էր հատիկ-բշտիկները շատ էին լինում, իսկ երբ ծանր չէր՝ մի քանի հատիկ էին լինում: Տաքություն ունենում էր և տաք էլ պիտի պահվեր:

Բուժումը կատարվում էր տաք պահելով, զէր (թթու) բան չկերցնելով: Ճերմակ շաբի և անաղ կարագի քսուք էին պատրաստում ու քսում բշտիկներ եղած և քոր եկած տեղերը: Երբ

ծաղկի բշտիկները չթարախոտվեին, ուրեմն «ներս էր քաշում» և այդ դեպքում հիվանդը մահանում էր:

Շոբա (տիֆ) - Հիվանդի բերանը դառն էր, քրտինքը կպչուն, որից անդուր հոտ էր գալիս, իսկ երբ քրտինքի կպչունությունը և անդուր հոտը կտրվում էր, նշան էր լավանալու: Տաքությունը շատ բարձր էր լինում:

Բուժում էին հիվանդը տաք պահելով, առատ քրտինք ստանալու համար այծի տաք, նոր մորթահան արած մորթին մարմնին քաշելով ու նրա մեջ թողնելով ըստ հիվանդի դիմանալու՝ 7-9 ժամ: Շոբան տևում էր մի ամսից մինչև 40 օր:

Դող - Հիվանդությունը ճանաչվում էր հիվանդի դողդողալով, և ջերմության բարձրացումով, փայծաղի մեծացումով:

Բուժման միջոցն էր գերաճած փայծաղի երակը կտրելը: Ձախ թևի տակը, փայծախի երակը կտրելով և նրա սև արյունը հանելով փայծախն իջնում էր: Ապա ոչխարի տաք մորթին քաշում էին հիվանդին, որի մեջ հիվանդին թողնում էին 7-9 ժամ: Դողը բռնած ժամանակ, երբ հիվանդը մրսում էր, նրան հանկարծակի սառը ջրի մեջ էին գցում, կամ վրան մեծ քանակությամբ սառը ջուր լցնում: Եթե դողը խրոնիկական էր դարձել և շնչառությունը դժվարանում էր, հիվանդի լեզվի տակի երկու երակները կտրում էին: Դողը բուժում էին նաև բիժոկով[1]:

Նըկս (կողքի ցավ) - Հիվանդությունը ճանաչվում էր կողքի ծակոցներով: Նըկսի դեմ բուժման միջոցն էր ցաված տեղի

[1] Բիժոկը լայն, հովանոցաձև թփեր ունեցող բույս է, աղբյուրների և ջրերի եզերքներին բուսնող, որի որձան 50-100 սմ երկարությամբ է լինում: Որձանի ծայրը ծոպաձև է վերջանում. սերմերը ոսպաձև և ոսկեգույն են: Բիժոկի տերևները հավաքում էին մեծ քանակությամբ և դող ու դինի ունեցող մարդկանց նոպայի ժամանակ մերկացնում և այդ տերևներով փաթաթելով՝ ծածկում էին, որպեսզի քրտներ: Այդ դրությամբ պահում էին այնքան ժամանակ, որքան հիվանդը դիմանում էր (մոտ 3-4 ժամ): Հիվանդը շատ լավ քրտնում էր և լավանում: Բիժոկի արմատները հանում, չորացնում էին, աղում, փոշիացնում և ջրով եփում: Ստացված կարմրագույն ներկով ներկում էին տիկերը (մածունը հարելու մորթին): Բիժոկի մատղաշ տերևը հավաքում և գործածում էին տոլմա փաթաթելու և եփելու համար, իսկ տերևների զոնդերը (կոթերը) բանապուրի կամ այլ ապուրի մեջ էին գցում թթվաշ համ տալու համար: Բիժոկի տերևի կոթը թարմ և հում վիճակում ուտում էին հղի կանայք և ընդհանրապես կանայք, որովհետև հաճելի մարխոշ համ ուներ, նման խավրծիլի համին:

վրա հուջամ (բանկա) զարնելը: Բաժակը լավ քաշում էր մինչև ուռած տեղի սևանալը: Ապա հուջամը հանում էին և նրա սևացած ուռած մասերը չրանկտում (նշտարակով ծակոտում) էին, որ ջուրը կամ ջրախառն արյունը հոսեր: Այսպես մի քանի տեղով հուջամ էին զարնում և չրանկտում:

Դինին կամ դինի - Դինին ճանաչում էին քնաբերությամբ, ընդհանուր թմրածությամբ. հիվանդի գլուխը քիչ ցավում էր, վզի արյունատար երակները ուռչում և արագ խփում էին: Բուժում էին դինին բռնելով: Դինին բռնում էին հիվանդի վզի աջ ու ձախ կողմի երակները բռնելով և ուժեղ սեղմումով կամ պարանոցը թաշկինակով «խեղդելու» ձևով: Նպատակն էր արյան արագ շարժումը դանդաղեցնել: Երբ հիվանդն ուշագնաց լինելու աստիճանի էր հասնում, սառը ջուր էին սրսկում երեսին և գլխին: Երբ հիվանդությունը երկարում էր, այն ժամանակ ոչխարի թարմ աղբը ջրի մեջ բաց էին անում և քսում հիվանդի մարմնին, ապա բիժոկ կոչված բույսի լայն թփերով ծածկում մարմինը և քնացնում, թողնելով 3-4 ժամ այդ վիճակում: Մի քանի օր հիվանդի տրամադրությունն ընկնում էր, ապա լավանում:

Ճիլոնոտիլ - Հիվանդը փռշտում էր, հազում, կոկորդի մեջ կարծես մի բան էր կանգնում և հիվանդը շատ նեղվում էր: Ճիլոնին բուժելու համար 7 տնից յուղ և ալյուր էին բերում ճաճառուն (խավիծ) անում, 7 պատառի բաժանում, որ հիվանդը տաք-տաք պատառները սեղանի վրայից բերանով վերցներ ու շուտ-շուտ կուլ տար:

Քամի հիվանդությունը բուժում էին ոչխարի չորացրած աղբից և կտավատի ձեթից ցեխ շինելով և հիվանդի մարմնին քսելով, ոչխարի դմակ քսելով և ոչխարի մորթի քաշելով հիվանդի մարմնի վրա և թողնելով 7-8 ժամ:

Խումրա - Ցավում էին ատամները, երեսը, որն ուռչում և կարմրում էր: Հիվանդը քիչ տաքություն էր ունենում և քիչ դեպքերում էր պառկում, հիվանդանում: Խումրան բուժում էին մեղր քսելով ծխախոտի չորացած թփի վրա և երեսին դնելով մոտ 2-3 օր, մի քանի անգամ կրկնելով: Երբ չէր լավանում թիթրենի կամ **շավաթի** և կամ սևագնդիկն այրելով ծուխ էին տալիս մի քանի անգամ, քանի ցավում էր: Եթե դա էլ չէր օգնում, ոչխարի կամ այծի տաք մորթին քաշում էին

գլուխն ու երեսները, որ տևում էր մի քանի ժամ: Միս և զէր (թթու) բան թույլ չէին տալիս ուտել:

Քաղցր - Հիվանդությունը ճանաչվում էր միակ ու սև ծայրով բշտիկի երևալով: Դրան ասում էին նաև **սև շիթ**: Դա վտանգավոր, մահացու հիվանդություն էր, բայց «քաղցր» էին անվանում, որ հիվանդն այդ սարսափելի ցավից չվախեներ: Բուժման համար սև շիթի վրա փուշի (դեղ) էին դնում և վառում շիթը մի քանի անգամ, որ լավ վառվեր, ապա նախապես արջի լեղուց ստացված փոշին հեղուկացնում և լցնում էին այրվածքի վրա: Երբ դա չէր գտնվում, ծխամորճի միջի սև **խռեֆը** հավաքում և դնում էին այդ նույն այրվածքի վրա և լավացնում: Վերքը 10-15 օրից, այդ բուժման շնորհիվ, լավանում էր:

Մատի շունչ - Ցավը ճանաչվում էր մատի հանկարծակի առանց ուռելու ցավելուց: Մատն իսկույն եռացող կաթի մեջ վառում էին, որ վարակը ոչնչանար: Մատի բորբոքը կանխվում էր: Իսկ եթե չանցներ, մատն ուռչում, թարախակալում էր, երկար էր տևում և երբեմն ոսկորը փտելով դուրս էր գալիս: Մատի շունչին, որպես դեղ, գործածում էին ճնճղուկի մարմինը: Սպանված ճնճղուկի փորը բաց անելով հիվանդ մատը մտցնում էին նրա մեջ և թողնում մի օր, մինչև ճնճղուկի մարմինը հոտեր: Ապա հանում էին ճնճղուկի մարմինը և բուսական ջղնթուփ, թաշանու թուփ, իշկափ կոչված տերևներից դնում վերքի վրա, փոխում, էլի դնում և լավացնում:

Օձի խայթած - Բուժումը կատարվում էր նախ խայթված մասի կիպ մոտից ամուր կապելով այնպես, որ արյան շրջանառությունն այդ մասի հետ կտրվեր, որպեսզի թույնը չմտներ մարմնի մեջ: Իսկ խայթված մասը սուր դանակով կտրում էին: Ապա մի երկրորդ տեղից նույնպես ամուր կապում էին, որպեսզի, եթե առաջին կապած տեղից թույնն անցներ, ապա երկրորդն արյան հոսանքն արգելակեր: Շտապ կերպով խայթած տեղի ուռուցքը սուր նշտրակով կտրատում էին այնպես, որ նյարդերը չվնասվեին: Ուռուցքից վարակված արյունը և թույնի ջուրը դուրս էին հոսում: Եթե այդ ուռուցքը անցել էր, երկրորդ կապի սահմանումն էլ ուռուցքը չրանկտում էին (նշտրակով կտրում): Ապա առանց ժամանակ կորցնելու, մի ողջ այծի փորը ճեղքում և ոտի կամ թևի ամբողջ մասը մտցնում էին ներս: Թույնը հոսում էր այծի փորի մեջ և նրան թունավորելով՝ ուռցնում ու սատկեցնում:

Միաժամանակ հետո այդ նույնը կրկնում էին մի այլ այծի վրա, մինչև որ վերջինն այլևս չէր ուռչում ու սատկում: Բուժման միջոց էր նաև խայթված մասը կտրելուց հետո ծծումբի և յուղի խառնուրդը այդ կտրած վերքի վրա դնելը: Կտրտվածքը այրվածք էր դառնում և վերջինիս միջից սկսում էր հոսել արնաջուրն ու թույնը: Այդ նույն ժամանակ առաջին կապի սահմանում ուռած տեղի վրա հուջամ (բանկաներ) էին զարնում, որը ուժեղ քաշում էր ուռուցքը և լցվում հուջամի մեջ, ապա հուջամը հանելով՝ նշտարով ծակծկում էին ուռած մասը և նրանից արյունն ու թույնը և սև ջուրը դուրս թափում: Եթե ուռուցքն անցնում էր երկրորդ կապի շրջանը, նույն բանը կրկնվում էր, մինչև մարմնի ուռուցքն անցներ: Այսպես, սուր նշտրակով, ուղղաձիգ կերպով ճեղքում կտրում էին մարմնի մսեղեն մասերը զգուշությամբ, առանց ջղերին կպչելու, մինչև վարակը մարմնից դուրս գար: Վարակը մարմնի ներսի մասերում անցած կամ չանցած լինելն իմանալու համար խայթվողին կաթ էին խմեցնում. եթե այդ կաթը խմողը փսխեր, ապա թույնը հասած էր մարմնի ներսը և մահն անխուսափելի էր, իսկ եթե չփսխեր՝ նշան էր, թե վարակը մարմնին դեռ չի անցել:

Խայթված, կապկպված և նշտրակով ծակծկված այդ ոտքը կամ ձեռքը երբեմն դնում էին թթու թանով լի ամանի մեջ այնպես, որ ամբողջ վիրահատման ենթարկված մասն ընկղմեր. թանի թթվությունը գրգռում և քաշում էր իր մեջ թույնն ու վարակը:

Պայքարը վարակի առաջն առնելու համար տարվում էր, մինչև որ խայթվողի մարմնի ուռելը դադարում էր և իջնում: Ապա բուժում էին բացված վերքերը:

Վերքեր և կտրվածքներ - Վերք կամ կտրվածք բուժելու համար գործածում էին ռախի օճառի և հավկիթի ճերմակուցից շինած մաիլամ և ֆիթտիլի ձևով դնում վերքի մեջ: Դա 24 ժամը մի անգամ փոխում էին, էլի նորը դնում նույնքան ժամանակով: Բացի այդ ֆիթիլից, վերքերի վրա դնում էին դդմածը, թաշանու թուփը (տերևը): Վերքի վիրակապը փոխելիս շավաթի կամ թիթրենի ծուխ էին տալիս, երբեմն տաք ջրով և փետուրի մազիկներով լվանում, սրբում էին, իոդոֆորմի մեջ ֆիտիլը թաթախում և դնում էին վերքի մեջ: Երբ իոդոֆորմ չէր լինում, նրան փոխարինում էին բեբկի խեժը և աճամի խեժը: Աճամի խեժը խնկի նման

կոշտ էր, մանրում և ցանում էին վերքի վրա, մինչև որ վերքը ամբողջությամբ լավանում էր:

Որպես դեղ գործածվում էին նաև՝

բարձմանուկը[1], զլնդարը[2], թորթը[3],

ջղնթուփը[4], թաշանու թուփը[1], հաքիմի խեժը[2], դդմաճը[3]:

---

[1] **Բարձմանուկը** մի բույս էր 2-3 դեցիմետր երկարությամբ, բարակ մոխրագույն թփերով, կլոր և դեղին գույնի մի ծաղկով: Իր ամբողջ մասերով՝ ցողուն, տերև և ծաղիկները՝ կանաչ, թարմ ժամանակ հավաքում, ծեծում էին և նրա հյութը լցնում անասունների վերքերի և որդնոտած մասերի վրա, որով սպանվում էին որդերը և ծռեքները (ծու, ծագ): Երբ բարձմանուկը չորացած էր լինում, ամբողջությամբ՝ տերև, ցողուն, ծաղիկ, հավաքում ծեծում, փոշի էին դարձնում և այդ փոշին լցնում անասունների որդնոտած վերքերի վրա, որով ամբողջ որդերը սատկում էին և վերքը բուժվում էր:

[2] **Զլնդարը** կանկարի նման և նրա մեծության մի բույս է, բայց փշոտ չէ, տերևները խոտի տերևների նման, ծաղիկն ակնհայտ չէր լինում: Որձան շաղգամի որձանի էր նման: Զլնդարի միայն արմատն էին գործածում: Արմատները հանում, չորացնում և աղում էին, կամ ծեծում, ապա շարմաղում և նրա փոշին լցնում որդնոտած վերքերի և սովորական վերքերի վրա, որ ունեին անասունները: Զլնդարի փոշին քիչ չափով լցնելով ջրի մեջ, ստացվում էր մի լուծույթ, որ տալիս էին լուծ ունեցող հիվանդներին:

[3] **Թորթը** մի բույս է, որ արմատի մոտից 10-15 թերթ տերևներով փռվում է հողի վրա. որձանը կես մետր և ավելի երկարությամբ և թևի բազուկի չափ հաստ է, երբեմն կանեփի ցողունի հաստության և գագաթի վրա կապույտ թանաքի գույնի ծաղիկներով: Թորթի արմատները հանելով լվանում էին և երեսները դանակով քերելով եփում կաթի մեջ ու դնում ուռած վերքերի, պզուկների վրա, որը շուտով հասունացնում էր վերքը և պայթեցնում: Տերևները երկար են և լեզվի նման, քիչ հաստ, փշիկներով ծածկված: Այդ տերևներով շփում էին մեղուների փեթակների ներսի կողմը, երբ մեղուն պարս էր տալիս և թորթի հոտի վրա վերադառնում էին իրենց նոր հատկացված փեթակը:

Թորթի որձանները կտրում, եփում և ուտում էին:

Կրիաներն ու ոզնիները, օձը ուտելուց առաջ մոտենում էին թորթին և օձը ուտելուց անմիջապես վազում թորթի վրա և նրա տերևներն ու որձանն ուտում էին, անվնաս մնում:

Թորթ կոչվում էր նաև եզան լեզու:

[4] **Ջղնթուփը** շաղգամի թերթի նման տերև ունի. տերևի մեջ ջղերն ազատ երևում են. տերևը քաշելիս պատռվում է, բայց ջղերը չեն կտրվում իրարից: Մի արմատի շուրջն ունի 5-6 տերև և ավելին: Որձան բարակ, ցորենի ճյուղի ցողունի չափ է, ծայրին վազանի (կորեկի մի տեսակը) հասկի նման, ու հասնում է սերմը: Ջղնթուփը գործածում էին վերքի վրա դնելով, թարախը քանդելու համար, նույնպես վերքի բերանը բաց պահելու և կոշտացած մասը փափկացնելու, հասունացնելու համար:

Զարկուկ - Դա մի հիվանդություն էր, որ իբր թե առաջանում էր չարքերի (սատանաների) կողմից: Զարկուկը նույնպես կախարդական ձևով էր բուժվում: Թուղթն անում էին տերտերները, տիրացուները և գրբաց-թղթաբացները: Հավատում էին, թե չարքերը հեռանում էին հիվանդից, երբ այդ թուղթը զարկուկի հագուստի վրա էին կարում: Հմայիլը մի

---

[1] **Թաշանու թուփը** (տերևը) մի բույս է, որի արմատից բարձրացող որձայի վրա են լինում տերևները, որոնք հակադիր են և ոչ փոխնիփոխ դրված: Տերևի մեծությունը արմատի մոտիկ ցողունի վրա մի ափի չափ և ավելի մեծ է, իսկ որքան բարձրանում է դեպի որձանի ծայրը, տերևները փոքրանում են: Որձանի երկարությունը մինչև կես մետրի կարող է հասնել, ընդհանրապես 25-35 սմ երկարություն ունի: Որձանի ծայրին ճերմակ մանր ծաղիկներ կան: Իսկ մեծ որձանի հակադիր կողմերում տերևների միջից էլի որձան է տալիս: Տերևի երկու երեսն էլ սպիտակ գույնի է՝ թավշածածկ, գորշ բամբակի պես: Վերքը, որ բորբոքվում է՝ թաշանա լինում, այդ տերևը թարմ-թարմ՝ իր թավիշով հանդերձ, դնում են վերքի վրա: Տերևը երկար ժամանակ մնում է վերքի վրա և բորբոքումն անցկացնում: Թաշանու թփի որձանը կեղևում են և միջուկն ուտում, որ էրնջնակի որձանի համն է տալիս:

[2] **Հաքիմի խիժի** արմատից բարձրանում են բազմաթիվ ճյուղեր, որոնց հաստությունը կարտոֆիլի բարակ ցողունի չափ և կես մետր երկար են. տերևները ուռենու տերևների են նման. ամեն մի որձանի ծայրին շատ ծաղիկներ ունի, ծաղկի գույնը կապույտ-ճերմակ, ցողունը և տերևները սեղմելիս մածուցիկ հյութով մարդու մատները կպչում են իրար: Գետինը փորում են և արմատը կտրելիս սպիտակ կաթնագույն և պինդ մի հեղուկ է հոսում, որը շատ կպչուն է. այդ հեղուկը հագուստի վրա թափվելիս չի մաքրվում: Այդ կաթը հավաքում են մի ամանի կամ տուփի մեջ մեծ քանակությամբ, ապա կաթը 20-30 րոպե հետո լերդանում, ծյութ է դառնում և ծամոնի ամենալավ տեսակն է լինում: Երբ անցնում է կես ժամ, լրիվ լերդանում է, կարմրագույն դառնում: Հենց այդ խեժն է, որ «հաքիմի խիժ» է կոչվում: Այդ հաքիմի խեժը անաղ կարագի իրար հետ 1:10 հարաբերությամբ խառնելով քնդում են, մինչև որ ռեզինի հատկությամբ և մեղրի պես ծորում է, առանց կտրելու երկարում: Այդ արդեն մշակված «հաքիմի խիժն» է, որ գործածում են վերքի չորս կողմը քսելով: Փափկացնում է վերքը և դրա կպչունության պատճառով միջատները փախչում են, իսկ վերքին մոտեցող միջատն էլ կպչում է խեժին և այլևս բաժանվել չի կարողանում: Անասունների վերքերի և ուռուցքների բուժման կամ որդնոտած վերքը միջատներից պաշտպանելու համար էր գործածվում:

[3] **Դդմաճը** արմատի շուրջը տարածվող և կոթը արմատին կից հողից սկսած մի տերև տվող բույս է՝ պայտի մեծությամբ: Տերևի տակի կողմը ճերմակ է, թավշյա, իսկ վրայի երեսը՝ կանաչ: Այդ տերևը գործածվում է որպես ուտելի, գործածելով տոլմա փաթաթելու համար մինչև կաղամբի հասնելը:

Որպես բժշկության միջոց դրվում է վերքի վրա՝ թարախը քանդելու, վերքը փափկացնելու և բուժելու համար:

փոքրիկ եռանկյունի բարձիկ էր, որը պահվում էր մոմած, շմատանած կտավի մեջ:

Կոտրվածք - Երբ որևէ պատճառով մի մարդու մարմնի ոսկորներից մեկը կոտրվում էր և մորթին չէր ծակվում, հավկիթի դեղնուց և մանր աղ իրար էին խառնում և դնում կոտրված տեղի վրա: Ապա չորս փոքր երկարուկ տախտակները ամրացնելով նրա չորս կողմը կապում էին: Տախտակների գլուխները նախապես իրար կապում և շորերի վրա կապում էին: Եթե մի երկու օր հետո այդ կոտրված տեղը ուռչեր, նշան էր, որ կոտրած ոսկորը կպչելու է, իսկ եթե չուռչեր, ուշ լավանալու նշան էր: Այդ դեպքում նորից կրկնում էին նույնը՝ ավելի ծիգ կապելով:

Կոտրած ոսկորը յոթ օրում պետք է կպչեր: Գարնանը՝ շուտ, իսկ աշնանը կամ ձմռանը՝ ավելի ուշ: Քսան օրում բուժումը պետք է վերջնականորեն ավարտվեր: Եթե հիվանդի մաշկը պատռվել էր, ոչխարի ճարպը մաքուր հալելուց հետո քսում էին վերքի բերանի մոտ եղած կոտրած ոսկորին, որպեսզի օդ չթափանցեր ներս և ապա կապում էին:

Խոլերա - Միակ բուժման միջոցն էր՝ մաքուր պահել հիվանդին, և շրջապատը քլսով (կրով) հականեխել:

Կանկրուկ - Դա մի հիվանդություն է, որ արտահայտվում է ձեռքերի ու ոտքերի վրա փշի նման թել-թել դուրս տալով: Երբեմն էլ պատահում է մարմնի մյուս մասերում, բայց հազվագյուտ: Վերքը, որը կանկրուկն է չոր և փշոտ ու թելի փնջի ծայրերի պես երևում է մարմնի այդ մասից դուրս ընկած: Փշերի գույնն էլ մարմնագույն է: Բուժումը հուլիսի սկզբին պետք է լիներ, արևը չծագած: Հիվանդը առանց լվացվելու և առանց մարդու հետ խոսելու պետք է գնար մոտիկ մի ուռենու ճյուղը ոլորեր և ասեր. «Դու այստեղ չորանաս և կանկրուկն իր տեղը չորանա»: Ոլորելուց առաջ և հետո որոշ բառեր մրմնջալով նա «Հայր մեր» ասելով կրկնում իր այդ նույնը, մինչև ուռենու ճյուղն իր տեղում չորանար:

Թըպղի - «Թըպղին» երևակայական ճիվաղ է, նա երեխաներին սպանում է մոր արգանդում և ծնվելուց հետո: Թըպղիից բժշկվելու միջոցն էին համարում յոթն աղջիկ զավակ ունեցող մայրերի կաթը, որ հավաքում էին մի ամանում: Թըպղիով հիվանդին տաք ջրով լողացնելուց հետո, ռախի օճառով (ձեռքի մաքուր օճառ) և այդ կաթով լվանում էին հիվանդի թևոսկրերի միջին տարածությունը, կաթը քսում մեջքի այդ մասին, երկար

շփում, մինչև որ կարմիր մունիջներ (մրջյուններ) դուրս գային մորթու տակից: Այդ մունիջները բըպղին էին ներկայացնում, որոնց վերցնում էին սուր դանակի կամ ածելու շեղբի վրա և հեռացնելով մարմնից ճզմում, սպանում:

Թալկիլ հիվանդությունը (կարկամիլ, ուշաթափ լինել) «բուժում» էին մեծ պահքի Ս. Թևադոսի տոնի շաբաթ օրը՝ կիրակի պահելով: Այդ օրը թալիլուկի օր էր կոչվում: Ուխտի էին գնում Ս. Թևադոսի վանք, որը գտնվում էր Շենիկ գյուղի արևմտյան մասում, 4-5 կմ հեռավորության վրա, Սլկունյաց բերդին (Կալա-Սլընկի) մոտիկ:

Միզարգելություն է կոչվում այն հիվանդությունը, երբ հիվանդը չի կարող միզել և սոսկալի ցավեր է զգում, միզանցքը կոշտացած և ուռած է լինում: Եթե կոշտուկը կամ գոյացած կրաքարը միզանցքի վերջավորության մասում է լինում, հակառակ նեխված դանակով պատռում էին կոշտուկը ծածկող մասը, հանում քարը կամ կոշտուկը և կարում ճեղքը, հականեխում սև **դեղով** (քսուք, որ պատրաստում էին բույսերից), թույլ կապում, որ մեզը կարողանար հոսել: Մի ժամանակ հետո վերքը սեփական մաշկով ծածկվում էր և հիվանդը իրեն լավ էր զգում:

Անդամալուծության բուժումը կատարվում էր մի արհեստական ցեխով, որը պատրաստում էր հեքիմը ոչխարի **խուշկուց** (չոր աղբից), որը մեծ քանակությամբ մանրում, մաղում, փոշիացած մասը եռացած ջրով շաղում, նոսրացնում, ապա հիվանդի մերկ մարմինը կտավատի ձեթով յուղում, և պատրաստված խուշկու ցեխով ամբողջ մարմինը ծածկում՝ բաց թողնելով միայն դեմքը: Հիվանդին տասնմեկ ժամ թողնում էին այդ դրության մեջ, որի հետևանքով մարմնի կծկված մկաններն սկսում էին բացվել, երկարել: Հիվանդին ցեխից հանելով, առանց լվալու, պառկեցնում էին տեղաշորի մեջ և մի օր հետո կրկնում նույն բանը, դարձյալ տասնմեկ ժամ թողնելով ցեխի մեջ, և որքան կարող էր հիվանդը, շատ ջուր էին խմեցնում, որով շատ էր քրտնում: Քրտինքի շնորհիվ ցեխը ջրիկ էր դառնում: Չորս օրվա ընթացքում հիվանդն իրեն լավ էր զգում, բայց այդ վիճակի մեջ մնում էր վեց օր: Վեցերորդ օրը հիվանդին տաք ջրով և օճառով լողացնում էին, մերսում մարմինը, հագցնում շորերը: Քայլելու ընդունակությունը կորցրած անդամալույծը առանց օգնության քայլել էր սկսում: Բուժման ութերորդ օրը մի խոյ մորթելով, մորթին տաք-տաք հագցնում էին հիվան-

դի մերկ մարմնին, նախապես այդ ոչխարի դմակով հիվանդի ամբողջ մարմինը յուղելով: Ինը ժամ այդ մորթու մեջ թողնելով, հանում էին մորթն ու մոմի շավաթով (չանչ), ծխում ու ցամաքեցնում էին հիվանդի մարմինը: Ապա ճերմակ շաբ և անաղ կարագ իրար խառնելով, քսում էին ամբողջ մարմնին, որ քոր չգար և ցուրտը մաշկի ծակոտիներից ներս չթափանցեր: Վեց օր անց լողացնում էին տաք ջրով և օճառով: Բուժումը վերջացած էր համարվում, և անդամալույծը՝ բոլորովին առողջացած, թեև լինում էին նաև անօգուտ ջանքեր:

Մայասուլ (քիսմա) - Հիվանդությունը եթե հետնաղու ներսումն էր, դժվար էր բուժվում, իսկ եթե դրսի և քիչ ներսի մասերումն էր, բուժում էին հետևյալ ձևով: Մասրենու և մորմենու արմատները (առաջինի արմատների միայն կեղևները, իսկ երկրորդի ամբողջ արմատները) հանելով եփում էին մինչև որ 10 չափ ջրից մնար 2 չափ, կամ 5 չափ ջրից մի չափ: Ստացվում էր կարմրագույն մի հեղուկ, որն առավոտները քաղցած վիճակում մի օղու բաժակ խմեցնում էին հիվանդին: Այսպես երեք օր, որից հետո հիվանդ մասի կոշտ հատիկները հաստ աղիքի վերջին ծայրում դուրս էին գալիս և կախվում: Դրանք սիսեռի, երբեմն էլ լոբու մեծության էին լինում: Վիրահատումից առաջ պատրաստում էին պատրույգներ (ֆիթիլներ) կապույտ շիբից (պղնձարջասպ), սխտորից, սև չամիչից, կատվի մազերի վերջավորությունների փայլուն մասերից, աղի, մեղրի, բեբկի **սև դեղի** (բեբկի ծառի կեղևի հյութ) որոշ հարաբերությամբ իրար խառնելով: Ապա սկսում էին վիրահատումը: Մերկացնելով հիվանդին, հակաճեխված նշտարակով կտրում էին կոշտերը, կտրվածքների տեղում դնում պատրույգները, որոնք այրում էին վերքի հատիկների արմատները: Ապա շիկանալու աստիճան տաքացրած 2-3 խոշոր քարեր դնելով մի փոսի մեջ, կարմիր ուռենու թարմ ճյուղերով ծածկում էին քարերն ու փոսը, հիվանդին նստեցնում ուռենու ճյուղերի խուրձի վրա, տաք ջրով և օճառով լողացնում: Քարերից և ջրից առաջացող տաք գոլորշին տաքացնում և ամոքում էր վերքերը: Լողանալուց հետո երկրորդ մի պատրույգ դնում և նախապես մորթված մի տավարի կամ ոչխարի տաք մորթով փաթաթում հիվանդի մարմինն ու պառկեցնում նրան 10-12 ժամ: Հանելով մորթին, հիվանդի մարմնին մոմի շավաթի (չանչ) կամ թիթրենի (չոր աթարի) ծուխ էին տալիս, ապա շորերը հագցնելով՝ պառկեցնում:

Առավոտ և երեկո 3-4 անգամ **շաբառուն** (անաղ կարագուղի և շաբի խառնուրդով քսուք) քսում: Բուժման օրից քառասուն օր յուղ և միս չէին կերցնում հիվանդին, այլ միայն կաթնեղենից շոռ ու բանջարեղեն:[1]

Արյուն առնել - Երբ մարդու մարմնի մի տեղը ցավում էր, ուռչում, այդ տեղից արյուն էին առնում: Արյուն առնելը կատարվում էր նշտարակով: Եթե երակը չտեսնվեր, ապա հուջամ էին զարնում, ցաված տեղը ուռեցնում և ծակծկում, արյունը հոսեցնում:

Արյուն էին առնում նաև տզրուկներով:

Գորտնուկ - Գորտնուկն ըստ հավատալիքների, առաջանում էր, երբ երկու մարդ գորտ սպանեին: Այն առաջանում էր ոչ թե սպանողի, այլ վկայի վրա: Գորտնուկի բուժումը կախարդական ձևով էին անում: Վերցնում էին այնքան գարու հատիկ, որքան գորտնուկի հատ կար և այդ գարին գաղտնի ցրում էին կրակի մեջ ու ասում. «Գարի, դու կրակի մեջ վառվես, իսկ գորտնուկը իր տեղում ոչնչանա»: Գարին երբեմն փոխանակ կրակը գցելու, տանում էին մի ճահճի կամ մարգագետնի մեջ թաղում և ասում. «Գարի, դու այստեղ փչանաս, իսկ գորտնուկն իր տեղում»: Թե՛ կրակի մեջ գցելը, և թե՛ մարգագետնի մեջ թաղելը միայն գցողը կամ թաղողը պիտի իմանար:

Գլխի մազերը թափվում էին: Բուժումը կատարվում էր դեղտի ծաղիկով:[1]

---

[1] Սուս-Կես մետրից մի մետր բարձրությամբ մի ցողուն ունի, կանեփի բարակ ցողունի հաստությամբ, տերևը մանր և ուռի տերևի նման է: Ծաղիկն աննկատելի է, գոյանում է պաճուկի (պարկիկի) մեջ 5-10 հատիկ, հատիկները տափակ, ոսպի մեծությամբ: Արմատը խոր է, երկարավուն, բարակ, ճյուղի չափ: Արմատները հավաքում լվանում են և ծեծում, եփում ջրի մեջ, քամում պարզանով, ջուրը վերցնում, կոշտ մասերը թափում: Այդ ջուրը սառեցնում խմում են, քաղցր է թեև կանաչի համի, բայց հաճելի խմելու համար: Այդ ջրի բուժիչ հատկությունն այն է, որ օգնում է, երբեմն մայասուլի ցավերը պակասեցնելու և երբեմն էլ լուծին է օգնում, կասեցնում այն:

[1] Դեղտի ծաղիկը 1-2 մ երկարության բույս է, տերևները լայն, կլոր և բազուկի թփի մեծությամբ, ցողունը մատի, երբեմն էլ թևի հաստությամբ, ծաղիկները ճերմակ և ֆոնոգրաֆի ձագարի ձևով մի մատի երկարությամբ: Դեղտի ծաղիկները հավաքում, չորացնում էին, ապա եփում եռացրած ջրով և ջրի եռալուց հետո 2 բաժնից մեկը մնալու ժամանակ այդ ջուրը վերցնում, քամում, ծաղիկների մնացորդը թափում, իսկ մնացած մասը հեղուկ վիճակում պահում էին ապակյա ամանի մեջ և ըստ պահանջի գործածում: Գործածում էին հազի դեմ, հազալիս բաղլամը հանվում էր և հիվանդն առողջանում: Դեղտի ծաղիկի չորացած և փոշիացած ալյուրը,

Հանքային բժշկություն - Կավը, հողը եռացրած ջրի մեջ եփում էին խյուսի վերածում, ապա քիչ սառելուց հետո քսում անասունների ուռուցքների (դողուսբաշի) վրա, նախապես այդ ուռուցքները շիկացած շշերով այրելով ու 4-5 անցքեր բաց անելով:

Ճերմակ շիբը յուղի հետ խառնելով օծանելիք էին պատրաստում այդ ուռուցքների վրա քսելու համար:

Ջաջը ճերմակ կավահող է և մերթ դեղնավուն, լցնում էին անասունների որդնոտված վերքերի մեջ, սպանում որդերը:

Գոլորշին օգտագործում էին քրտնացնելու համար՝ հիվանդի բերանը գոլորշու վրա պահելով և շնչելով:

Սառը ջուրը դողացողի վրա էին սրսկում: Գլխի ցավը անցկացնելու համար ոտքերը դնում էին սառը ջրի մեջ, սառը ջրով թրջած կամ սառույցի կտորով փաթաթած շորը ճակատին կամ գլխի վրա էին դնում:

Չարքերը գիշեր ժամանակ – ջրից անցնելիս – կարծում էին, որ խփում են մարդկանց, աղբյուրի վրա և որոշ տեղերում, ուր կարծում էին, թե սատանաներ կամ չար ոգիներ կային բնակված՝ Քաֆի քարտակ, Պողոս քար, Խուլեի հովիտ և բուժման միջոցն էր այդպիսի տեղերից անցնելիս «Հիսուս Քրիստոս» ասել, խաչակնքել և աթողելը:

Չար աչքից «Գավլեի օվդի» քարը տրաքել է, երբ Այնթայնու վերջին վանահայրը՝ Պողոս վարդապետը՝ 1894թ. կոտրածից առաջ գալիս է Գելիեգուզան և հանդիպում այդ քարին, զարմանում է, թե այդպիսի հսկա ժայռը օրտեղի՞ց է եկել շրջակա փոքր քարերի վրա կանգնել: Նրա աչքից քարը երկու տապակ է լինում և իրար դեմ դիմաց տապակները մնում են:

Չար աչքի դեմ բուժման միջոցն էր համարվում աղոթքը: Ժողովուրդն ասում էր. «Քու աչքը քարի տակ էղնի», «Քու աչքն անտակ ծովի մեջն էղնի», «Ինչ կոթի (վատ) փուշըմ կա, աչքդ չքնի (մտնի)»: Բժշկություն կախարդական եղանակով:- Չար աչքի դեմ բուժման միջոցը համարվում էր աղոթքը:

կանայք իրենց դժվար սանրվելիք երկար մազերի վրա թափում էին լողանալիս, որով հեշտությամբ սանրվում էին: Դա փափկացնում և միաժամանակ երկարացնում էր կանանց մազերը:

Դողի թել - Անում էին աղոթելով և յոթը հանգույց անելով ճերմակ բամբակի թելի վրա և կապելով հիվանդի, դողացնողի աջ թևի վրա:

Մաղով ջուր ածելը դողացնողի վրա կատարվում էր այսպես. մոր առաջնեկը յոթն աղբյուրից կամ յոթը տնից, առանց խոսելու, ջուր պիտի բերեր և մի տեղ լցներ: Ապա ջուր բերող առաջնեկի մայրը մաղը բռնում էր դողացնողի գլխին, իսկ բերողը լցնում էր: Ոգիների և սրբերի, ինչպես և Աստծու սրտաշահությունը կատարվում էր մարդկանց կողմից աղոթքներ, խոստումներ (ուխտ), մատաղներ կատարելով և մոմ վառելով:

Ուխտավայրերից բացի բուժիչ «սրբազան ջուր» բերելիս՝ բերում էին հող, երբեմն տանը պահում, երբեմն աղի հետ տալիս իրենց լծու կամ կթու անասուններին, որպեսզի չարը նրանց չկպչի, չսատկեն: Այդ հողից և մարդիկ կուլ էին տալիս: Հռչակավոր և ազդու էր համարվում Մշո Սուրբ վանք սուրբ Կարապետի գերեզմանի հողը, որպես «ամենաբուժիչ»:

Խուխլուկ (կապույտ հազ) հիվանդությունից հիվանդ երեխային բուժելու համար փողոցում կիտված աղբ-փոշիի կույտի վրայից հիվանդին անցկացնում էին, որով և «բուժվում» էր:

Երբ մի ճամփորդ սպանվում է ճանապարհի վրա, նրա սպանված վայրում ամեն անցորդ մի քար է նետում, իսկ երբ ծառ կամ մացառ կա այնտեղ, ծառին մի փոքր շորի կտոր են կապում: Տարիներ հետո խոշոր մի քարաբլուր կամ լաթապատ մի ծառ է ստացվում և դառնում մի սրբավայր, ուր նետվող քարի կամ կապվող լաթի կտորի հետ նոր անցորդի վրայից սպանվող ճամփորդն իր հետ էր տանում նոր ճամփորդի դժբախտություններն ու վտանգները: Գայլի ատամները մարդիկ իրենց մոտ պահում էին, երբ ձեռք էին գցում, որպեսզի «փորձանքից հեռու մնան, չվնասվեն»: Փանզահարը մի թանկագին քար էր, կարծում էին: Այդ փանզահարը լվանում էին քիչ ջրի մեջ և տալիս այն հիվանդին, որի մեզն արգելվում էր, չէր հոսում: «Հիվանդը բուժվում էր», մեզը հոսում:

5. ՄԱՀ ԵՎ ԹԱՂՈՒՄ

Գիտակցությունը չկորցրած մեռնողը մահվան հանդեպ իր վերաբերմունքը ցույց է տալիս ընդհանրապես իր վրայից վերմակը շպրտելով և դեպի դուռը նայելով: Առաջինը ջերմության և հոգեվրքի հետևանք է, իսկ երկրորդը՝ մի օգնության կամ այցի սպասելը:

Հոգեվրքը բնորոշում են, երբ ներշնչման և արտաշնչման խռխռոցը «սրտից» է՝ խորն է: Ընդհակառակը, կրիզիսը ավելի տագնապալի լինելով, «սրտից» չի խռխռում, խորը չէ, քրտնելու դժվարություն է կրում, ուրեմն նա հուսալի է, որ հոգեվարք չէ, այլ նոպա է, որ պիտի անցնի: Մարդու իսկապես մեռած լինելը ստուգելու համար, երբ նա չի շնչում, նայում են նրա ձեռքի եղունգներին, փոքր սեղմում եղունգի վրա, ապա թողնում, եթե եղունգի գույնը սեղմելու և թողնելու րոպեներին փոխվում է, ուրեմն նրա արյունը գործում է և մեռած չէ, իսկ եթե եղունգի գույնը չի փոխվում, ուրեմն արյունը չի գործում և մարդը մեռել է:

Հիվանդի հոգեվարքը դյուրացնելու համար ջուր էին տալիս, կամ նրա դիրքը փոխում այնպես, որ դեմքն ընկներ արևելք: Երբեմն հիվանդի խնդրանքով իրեն դուրս էին տանում տնից՝ աշխարհը տեսնելու և կարոտ չմնալու համար, կամ եթե լեզուն դադարել էր խոսելուց, ջրաձգություն էր անում, կամ դեպի դուռը նայում: Հիվանդին դարձյալ տանում էին դուրս: Իրոք շատ անգամ դուրս հանելուց և ներս բերելուց հետո հանգստությամբ վերջանում էր հոգեվարքը:

Հավատում էին, թե մահը ծանոթի կերպարանքով է երևում: Երբեմն մեռնողներն ասում էին. «Հրեշտակը եկել, ինձ կանչում է»:

Հավատում էին, որ հոգեառը երդիկից էր գալիս և հոգին էլ երդիկից տանում: Իսկ երբ մոտենում էր մեռնողին՝ նրա դիմացն էր կանգնում՝ դեմքը մեռնողի դեմքին ուղղած: Հոգեառի ուղարկողը աստվածն էին համարում: Ընդունում էին, որ հոգին քթից էր դուրս գալիս և իբրև ասացվածք էլ գործածում ծանր աշխատանքի ժամանակ՝ «Հոգիս քթիցս դուրս եկավ»:

Մեռելի աչքը փակում էին, որ «բաց աչքով» (կարոտով) աշխարհից չգնար, աչքը աշխարհի և բարեկամների վրա չմնար, «հանգիստ գնար»: Մեռնողի կրծքին նշխարք (մասունք) էին դնում: Մեռնող տղամարդուն լողացնում էին տղամարդիկ,

իսկ կնոջը՝ կանայք, դռան առաջ, դռնից քիչ հեռու: Լողացնելիս չիթ (եղեգից գործվածք) կամ սավան բռնողներ կային մեռելի շուրջը, որպեսզի նրա մերկությունը լողացնողներից բացի ուրիշները չտեսնեին: Դիակի տակը լողացնելիս խոտ, եղեգ կամ տախտակ էին դնում: Մեռել լվացողին և գերեզման փորողին չէին վարձատրում, որովհետև մեղք էին համարում: Մեռելին լողացնում էին քիչ տաք ջրով և օճառով: Նրա հասակը չափում էին թելով և այդ թելը դնում իր գերեզմանի մեջ: Ննջեցյալին լողացնելուց հետո բերում էին տուն, դնում մաքուր տեղ և սկսում պատանքել: Պատանքելուց առաջ ննջեցյալի ոտքերի բութ մատները և ձեռքերն իրար էին կապում: Պատանքը սպիտակ կտորից էին անում: Տղամարդ ննջեցյալի պատանքը ոտքերից մինչև գոտկատեղը տղամարդիկ էին կարում, որից հետո կանայք շարունակում էին: Իսկ կանանցը միայն կանայք էին կարում: Դեմքը բաց էին թողնում և բերանի վրա նշխար դնում. վերջինս փաթաթում էին խաչաձև սպիտակ կտորի մեջ. այդ կտորն էր, որ կոչվում էր վարշամակ: Երկար և նեղ մի ճերմակ կտոր կապում էին մեջքին որպես գոտի և միայն մի հանգույց անում փորի վրա: Ապա մի երկար և նեղ կտոր էլ վզի շուրջը, ետևի կողմից գցելով բերում էին կրծքի վրա և խաչաձև տանում (աջ կողմից եկողը գոտու ձախ մասում և ձախ կողմից եկողը գոտու աջ մասի տակը մտցնում, դա կոչվում էր խաչփուկ):

Կարողություն ունեցող մարդիկ իրենց ննջեցյալների համար դագաղ էին պատրաստում, իսկ չունեցողները առանց դագաղի, լոկ պատանքով թաղում էին: Ննջեցյալին վերցնելու ժամանակ երեք անգամ վերցնում, էլի դնում էին նույն տեղը, որից հետո տնից դուրս հանելիս ոտքերն առաջ և գլուխը ետ բռնած դիրքով տանում էին: Ուսամբարձ տանում էին դեպի գերեզման: Իսկ եթե ուշ լիներ և տանը թողնել չուզենային, դնում էին եկեղեցում, ուր մնում էր մի գիշեր: Հաջորդ օրը թաղում էին: Այդ հազվագյուտ էր:

Ողբն ու կոծը գլխաբաց կատարում էին կանայք: Մեծ հարգանք էին համարում, երբ ննջեցյալի տան տղամարդիկ ողբ ու կոծ չէին անում, այլ գդակը շրջում, սև փուշին առանց ոլորելու փռում էին գդակի վրա: Ննջեցյալի դագաղի առաջից միայն տերտերն ու տիրացուն էին գնում զգեստավորված և բուրվառով: Հասակավորները գնում էին ննջեցյալի ետևից: Անցյալում սովորություն է եղել, որ ննջեցյալի զենքն ու զար-

դը, հագուստը իր հետ թաղեին, բայց հետագայում վերացվել էր այդ սովորությունը: Լալկան կանայք կային, որոնք գովելով ննջեցյալի բարեմասնությունները, երգում և լացացնում էին կանանց: Իսկ տղամարդու լացը տկարություն, թուլություն էին համարում: Ողբի ժամանակ հիշվում էին մեռնողի կյանքի զանազան դրվագները՝ կռիվներում ցուցաբերած քաջությունը, եթե տղամարդ էր, մարդասիրությունը, գեղեցկությունը, պարթև հասակը և այլ դրական բարեմասնություններ, որ ունեցել էր նա իր կյանքի ընթացքում:

Պատվավոր ննջեցյալների տանը փող էին փչում տխուր եղանակներով: Ննջեցյալների մոտիկ ազգականները (կինը, մայրը, քույրը) իրենց ծամերից կտրում և դնում էին դագաղի մեջ կամ պահում տանը իրենց հագուստների սնդուկի մեջ և հաճախ հիշում ննջեցյալին ու ողբում: Կանայք՝ ննջեցյալի կինը, քույրը, աղջիկը իրենց շորերը պատառոտում էին: Հուղարկավորներից կանայք մինչև գերեզմանների կես ճամփան իրավունք ունեին գալու, որից հետո պարտավոր էին վերադառնալ՝ առանց դագաղը կանգնեցնելու կամ ննջեցյալին համբուրել տալու, միայն լալով խոսքը ննջեցյալին ուղղելով, անունը տալով «էրթաս բարով» էին ասում:

Սասունի կենցաղում հուղարկավորությանը զուգընթաց ձիարշավ էլ էր կատարվում, հատկապես նշանավոր մարդու կամ իշխանի թաղման ժամանակ: Այդ սովորությունը գալիս էր շատ հին ժամանակներից: Անվանի մեռյալի վրա ձիարշավի սովորությունը Սասունում շարունակվում էր մինչև 1914 թվականը:

Թաղման հետ կապված սովորությունների սխեման այսպիսին էր. բերանին վարշամակ՝ նշխարով: Մեռնողի ձին զարդարած և սևավոր՝ դագաղի ետևից մինչև եկեղեցու դուռը տանելը. մեռելին եկեղեցի ընդունելիս ձին դեպի տուն դարձնելը: Հուղարկավորության ժամանակ ջրինդը, հրացանաձգությունը, մահվան բոթը: Պատարագի ժամանակ տան մեծի հաղորդումը: Մեռելի դագաղը գերեզման դնելու ժամանակ երեք անգամ գերեզմանի հատակին դնելն ու վերցնելը: Բուրվառով խնկարկումը գերեզմանի մեջ՝ տիրացուի ձեռքով: Մեռելի մարմնի վրա, գլխի և ոտքերի կողմը երկու տեղով խաչ դնելը: Յոթ և քառասուն օր հետո հարկ տալը: Մի տարի հետո դարձյալ հարկ տալը:

Մեռելատանը 1-2 օր նոր հաց չէին թխում: Այն դրացիներն էին թխում: Մեռնողը, եթե իշխան էր կամ անվանի մարդ, այդ

և շրջակա գյուղերում մեկ տարի հարսանիք չէին անում, կամ տվյալ տան մեծի համաձայնությունը վերցնելուց հետո էին միայն հարսանիք անում:

Մեռնողի տան մեծահասակների, կնոջ թե տղամարդու գլխին սև էին ծածկում. տղամարդկանց գդակները շուռ էին տալիս, թարս դնում մինչև խունկի գնալու օրը: Երբ վերադառնում էին գերեզմանից, մի մեծ կին և մեծ տղամարդ հանում էին նրանց գլխի վրայից այդ սևերը և ուղղում գդակները, սգից հանում:

Մայրը, կինը, քույրը, մեռելի թաղմանը չէին մասնակցում, ընդհանրապես իգական սեռը թաղման չէր մասնակցում: Կանանց վերադառնալուց առաջ, երբ ննջեցյալին տնից մի քիչ հեռացնում էին դեպի գերեզմանատուն, 3-4 հոգի ձի էին նստում և դագաղի առաջն անցնելով սկսում էին դեպի գերեզմանատուն ձիարշավ կատարել: Մրցել իրար հետ խաղացնելով ձիերը և մի քանի անգամ գնալ գալ, մինչև ննջեցյալի դագաղը հասնում էր գերեզմանի մոտ, ձիավորներն այդտեղ իջնում էին ձիերից և կանգնում դագաղի մոտ:

Գյուղն ըստ ազգակցական խմբերի ուներ իր առանձին գերեզմանաշարքը, որ հասարակական գերեզմանատան մի մասն էր կազմում: Յատուկ գերեզման փորող չկար, ընդհակառակն, ամեն մի տղամարդ իր պարտականությունն էր համարում, որ գերեզմանի մի մասն ինքը փորեր: Արևմուտքից արևելքի ուղղությամբ փորում էին գերեզմանը, ննջեցյալի դեմքն արևելք դարձնելու համար: Գերեզմանի հատակում դագաղով, թե առանց դագաղի թաղելու ժամանակ թաբուտ (քարաշար դագաղ) էին շինում: Դա պարտադիր էր մանավանդ առանց դագաղի ննջեցյալի համար: Իսկ դագաղ ունեցողներին, ըստ մեռելատիրոջ ցանկության, քարարկղ կարող էին չշինել: Թաղելուց առաջ բուրվառով դամբարանը խնկարկում էին: Ապա քահանան օրհնում էր սարկավագի վերցրած մի բուռ կամ մի բահ հողը, խաչակնքելուց հետո ցանում գերեզմանի մեջ: Ոմանք գերեզմանափոսի մեջ փող էին գցում, ապա նոր ննջեցյալին իջեցնում: Եթե գերեզմանը փորած ժամանակ հին թաղում հայտնաբերվեր, գտնված ոսկորները խնամքով հավաքում էին, և երբ նոր ննջեցյալին իջեցնում էին, նրա տերը և հուղարկավորները փող էին գցում և գտնված ոսկորներն էլ դագաղի մի կողմի վրա դնում:

Ննջեցյալի մարմինը գերեզման իջեցնելուց հետո դարձյալ օրհնված հող էին ցանում վրան, մի բուռ էլ դագաղի մեջ, պատանքի վրա և ծածկում դագաղը: Գերեզմանը ծածկելուց հետո, ննջեցյալի տերը կանգնում էր գերեզմանի կողքին և բոլոր հուղարկավորները մոտենալով բռնում էին նրա աջ ձեռքը և մխիթարելով ասում. «Սուրբ հոգով մխիթարվես»:

Թաղումը և մխիթարումը վերջանալիս ննջեցյալի տերը հրավիրում էր բոլոր հուղարկավորներին իր տուն՝ հոգեհաց ուտելու համար: Ըստ սովորության, բոլորը, հրավիրված թե չհրավիրված պետք է գնային և մասնակցեին հոգեհացին:

Տղամարդու և կնոջ թաղման մեջ տարբերությունն այն էր, որ կնոջ թաղման ժամանակ կանայք էլ էին գալիս գերեզմանի վրա և մասնակցում թաղմանը, նույնպես և երեխայի թաղմանը: Ինքնասպանություն գործած մարդու թաղմանը մասնակցողները քիչ էին լինում: Անհաղորդ մահացածին թաղում էին ընդհանուր կարգով և քահանայով՝ նշխարը դնելով բերանին, բայց մահանալուց հետո հաղորդ չէին տալիս՝ բերանին չէին քսում: Կայծակնահար եղած ննջեցյալին սովորականի նման չէին թաղում:

Գերեզմանաքարերը սովորական և տափակ ձևով էին պատրաստվում, գլխի կողմում մի խաչ էին փորագրում և տապանագիր գրել տալիս: Տնկված գերեզմանաքար չկար: Գերեզմանաքարերի վրա փոսեր չէին փորում կամ ծակ չէին թողնում դեպի գերեզմանի ներսը:

Ննջեցյալների հոգու թափառմանը չէին հավատում: Կարծում էին, որ ռբախուր (վաշխառու) մարդու հոգին գերեզմանում չէր սթրում, «մալուն» (գոռնափշտ) էր լինում և թափառում երկրի վրա. մարդիկ այդ «մալուններից» սոսկում էին:

Որպես սգո նշան, կային մարդիկ, որ երկար ժամանակ երեսները չէին ածիլում, մորուս էին թողնում, մինչև որ նրա մոտիկ ընկերները համոզում և սափրում էին, սգից հանում:

Ամուսնու մահից հետո պետք է մի քանի տարի անցներ, որ նրա կինն ամուսնանար: Կնոջ ծնողը խորվում, գաթա, հաց, գինի, օղի էին տանում մեռնողի տունը, նրա ծնողներին կամ եղբայրներին, սեղան բաց անում: Երբ այս հատուկ ճաշկերույթը վերջանում էր, տան մեծից խնդրում էին, որ թույլ տան իրենց աղջկան տանել հերանց տուն: Դա նշանակում էր, թե իրենց աղջիկը ուզում է ամուսնանալ և նման դեպքում միշտ

էլ մեռնողի կողմը համաձայնություն էր տալիս: Տանում էին այրիացածին և ամուսնացնում, սակայն, ի հարգանս նախկին ամուսնու, ոմանք հարսանիք չէին անում կամ շատ անշուք էին անցկացնում:

Ամուսնու մահից կամ սպանվելուց կարճ ժամանակ անց ամուսնացող կնոջը, նաև տղամարդուն մեղադրում էին, ասելով. «Դեռ իր մեռելի ոսկորները չհանգստացած՝ ամուսնանում է»:

Ննջեցյալին թաղելուց մի օր հետո կանայք գնում էին մեռնողի գերեզմանի վրա, խունկ էին ծխում, ողբում:

6. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄ

Դասակարգային շերտավորումը Սասունում արտահայտվում էր հողային հարաբերության մեջ: Հողը թեև պետական սեփականություն էր համարվում, բայց յուրաքանչյուր գյուղում հանդիսանում էր գյուղացու անձնական սեփականությունը՝ պետական տաբուով կամ սենետով[1], գրանցվում էր պետության հողային մատյանում այն անձի անունով, որի սեփականությունն էր դառնում այդ հողը: Հողի վաճառքի թույլատրումը պետության կողմից հնարավորություն էր ստեղծում, որ չքավոր գյուղացին հողազրկվեր, իսկ անհատ գյուղացու մոտ հողն ավելի շատ կենտրոնանար: Թուրքական պետությունն ինքն էլ հողերն ըստ գյուղի կամ մի քանի գյուղերի, որպես խաֆիրություն, տալիս էր թուրք կամ քուրդ աղաների և բեգերի: Սրանք որպես տվյալ գյուղի կամ գյուղախմբերի տերեր, նույնպես ներկայացնում էին խաֆիրներ: Վերջիններս գանձում էին ինչպես պետության, նույնպես և իրենց տուրքերը: Սասունում հողատիրության չորս աստիճան կար՝ **համբա, կես համբա, բջիզ և կես բջիզ** (պճեղ): Համբան ամենահարուստն էր, որ ունենում էր 80-100 կոտատեղ վարելահող և հարկ էր տալիս պետությանը մեկ օսմանյան ոսկի կամ 108 ղուրուշ (7ռ. 50կ. ոսկով): Կիսահամբան ունենում էր 40-50 կոտատեղ վարելահող և վճարում էր 54 ղուրուշ, իսկ պճեղն ուներ 20-25 կոտատեղ վարելահող և վճարում էր 27 ղուրուշ կամ քառորդ օսմանյան ոսկի, որ կոչվում էր լիրա: Այս հարաբերությամբ էր գնում հողատիրությունը և հարկատվությունը: Պճեղից քիչ վարելահող ունեցողն էլ, ըստ իր հողի, վճարում էր՝ կես պճեղը 13,5

[1] Սուրհակ է նշանակում:

ղուրուշ կամ 13 ղուրուշ 20 փարա և այլն: Համբայությունից բարձր հողատիրություն հայերը չունեին, իսկ քուրդ աղաներն ու բեգերը խաֆիրներ էին. նրանք մեկ և ավելի գյուղերի տերեր էին, որոնք այդ հողերը տալիս էին իրենց ռայաներին[2] մշակելու ըստ ընդունված պայմանների:

Հողային մեծ սեփականություն ունեին նաև մեծ վանքերը՝ Մշո Ս. Կարապետի, Ս. Հովհաննու, Առաքելոց վանքի, Գոմուց կամ Մատնավանքի, Ս. Աղբյուրիկի և այլն, որոնք օգտագործում էին վարձու աշխատողներ և մշակում այդ հողերը: Գյուղացիության այն շերտը, որ քառորդ պճեղ էլ հող չուներ, կոչվում էր թվարիկ, որն աշխատում էր համբայի կամ կիսահամբայի մոտ որպես վարձու աշխատող: Թվարիկներն իրենց ամբողջ ընտանիքի անդամներով էին բնակվում համբայի հողամասում և այնտեղ էլ աշխատում նրա հողի վրա դաշտամշակության աշխատանքներն իրենք կատարելով, իսկ լծկան և սերմ համբայից ստանալով, կնքելով որոշ պայմաններ նրա հետ: Այդ պայմանները, ըստ ընդունված սովորության, բանավոր էին լինում (տե՛ս «Դաշտամշակություն»):

Համբա գյուղացու տնտեսության մեջ աշխատանքի շահագործումն անխուսափելի էր, որով միայն կարող էր լրիվ օգտագործել իր ձեռքին եղած հողը: Իսկ կիսահամբա և պճեղ տնտեսություններն իրենց աշխատավոր ձեռքերով կարողանում էին մշակել հողը և դրանք կազմում էին աշխատավորական տնտեսությունները:

Սասունում առևտրականները թեջիր էին կոչվում: Դրանք զբաղվում էին մեծ մասամբ որձ անասունների առևտրով: Այդ թեջիրները, ինչպես վերևում ասել ենք, նախօրոք փող էին տալիս անասնատերերին հարկերի հավաքման ժամանակ, և հաջորդ տարին անասունները վերցնում դրա դիմաց: Անասունների առևտուրը նրանց վաշխառության աստիճանի էր հասցրել: Տրված քսան ղուրուշի կամ մի մեջիդիեի դիմաց հաջորդ տարի փող ստացողը պարտավոր էր վճարել մի կիսք (մեկ տարեկան որձ), այն էլ ձմեռը պահելով, գարնան արոտին հասցնելով: Մի տարեկան գավըռն էլ (որձ ոչխար) երեսուն ղուրուշով կամ մեկ ու կես մեջիդիեով: Այսպիսով, արոտները բացվելիս թեջիրները հավաքում էին իրենց ոչխարները, խնամում Սասունի ալպյան

[2] Ռայա- հպատակ, ենթակա

արոտավայրերում վարձու հովիվների միջոցով և աշնանը հոտը քշում Տիգրանակերտ, Հալեպ, Շամ, Մուսուլ և նույնիսկ Բաղդադ ու վաճառում մեծ շահով: Կիսքը, որ քսան ղուրուշով էր առնվել, վաճառվում էր 70-80 ղուրուշի, իսկ գավըռները՝ 30 ղուրուշի փոխարեն մինչև 100 ղուրուշ և մի ոսկի (108 ղուրուշ): Թեջիրներն իրենց հարկերը տալու ժամանակ մտնում էին գյուղերը և նույն ձևով կրկնում կիսքն ու գավըռը: Թեջիրներ կային և հայերից, տեղի բնիկներից: Տեղացի հայ թեջիրները, շնորհիվ իրենց գումարների և՛ հող էին գնում ու համբա դառնում, և՛ միաժամանակ թեջիր մնում: Առևտրականը, որ տվյալ գյուղում համբա էլ էր դառնում, դուրս էր մղում «արտաքին» թեջիրներին և ինքն իր փողով թեջիրություն անում իր ապրած գյուղում: Թեջիրները շփվելով Սասունից դուրս եկած քաղաքների հետ, յուրացնում էին քաղաքային առևտրականի կենցաղը և տեղում իրենց գյուղում մտցնում նոր սովորություններ: Այսպես օրինակ՝ հագուստ-կապուստի նոր ձևեր, շենքերի նոր տեսակներ և այլն:

Հոգևորականները բացառապես լուսավորչական եկեղեցուն էին պատկանում, որովհետև Սասունում բողոքականներ և կաթոլիկներ չէին բնակվում: Եկեղեցականների եկամտի հիմնական մասն ստացվում էր իրենց ծխերից և թեմերից՝ մեծ տոների, տնօրհնեքի, կնունքի, հարսանեկան-պսակադրության և թաղման ու այլ արարողությունների կատարման ժամանակ ստացած գումարով: Այն արտահայտվում էր փողով և բնամթերքով: Հոգևորականներն էլ ունենում էին իրենց հողը և մեծ մասամբ հասնում էին կիսահամբայի կամ համբայության աստիճանի:

Հողի սակավությունը, որ առաջ էր գալիս ժողովրդի բնական աճի շնորհիվ և արտագաղթ չէր լինում, բնակչության մեջ համբաները և կիսահամբաները փոքր թիվ էին կազմում: Նրանք մեծ մասամբ կազմում էին պճեղներ, որոնք հանգիստ չէին թողնում իրենց ձեռքի հողը և տարեկան երկու անգամ նրանից բերք էին ստանում, որպեսզի կարողանային ապրուստ հայթայթել: Պճեղներն ու թվարիկները նույնիսկ արհեստական արտեր ստեղծելով էին զբաղվում: Դրա համար տեղեր ընտրում, ժայռեր էին կտրատում, դարավանդներ շինում, շալակով հող կրում-լցնում: Ապա տաժանելի աշխատանք էին թափում ոռոգման ջուրը տեղ հասցնելու համար և այլն:

Թվարիկները ենթակա էին գյուղից գյուղ գաղթելու կամ, երբ հարմար վայր չէին գտնում, Մուշ կամ Մշո դաշտ և այլուր գնալու: Թվարիկները, փաստորեն, բատրակներ էին, միայն այն տարբերությամբ, որ անասուններ ունեին և ընդհանրապես ամրացվում էին մի համբայի տնտեսությանը: Նրանք ընտանիքով ապրում էին համբայի գոմում կամ մարագում:

Այսպիսով, Սասունի ազգաբնակչության մի չնչին մասը՝ համբաները, թեջիրները և կղերականները հանդես էին գալիս որպես աշխատանքի շահագործողներ: Իսկ կիսահամբա, պճեղ և կիսապճեղ գյուղացիները ներկայացնում էին միջակ խավը: Այս խավը գյուղի մեծամասնությունն էր կազմում:

Սասունում, բացի Հազզոյի, Փասորի և մի քանի այլ գյուղերի հատ ու կենտ տարրական, յոթնամյա կրթության դպրոցներից, մինչև 1880-ական թվականները դպրոցներ գոյություն չեն ունեցել: Ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը անգրագետ էր: Գրագետներ լինում էին համբաների և կղերականների տներում, որոնք Մուշի Ս.Կարապետի, Ս.Հովհաննու և Առաքելոց վանքերն էին ուղարկում իրենց որդիներին՝ ուսում առնելու, «մարդ դառնալու» համար: Վերադառնալով գյուղ, նրանք գյուղի մտավորականությունն էին կազմում, որոնցից տերտերներ կամ լավագույն դեպքում քարտուղար (քաթըբ), կամ վարժաբեդ (դաստու) էին դառնում:

1890-ական թվականներին և հետո «Միացյալ-ընկերությունը», Բարեգործական և երկաթուղային ընկերությունները (Կ. Պոլսի) միջոցներ էին տրամադրում և Մուշի առաջնորդարանի միջոցով դպրոցներ են բացվում Գելիեգուզան, Շենիկ, Սեմալ, Իշխանաձոր, Հարթք, Ահրոնք, Ընկուզնակ և այլ գյուղերում: Հետզհետե գրագիտությունն սկսում է մուտք գործել սասունցիների մեջ, մասնակի փոփոխություն առաջացնելով նախկին շատ հետամնաց կյանք ու կենցաղում: Բացի Սասունի և Տարոնի ուսման կենտրոն հանդիսացող վանքերից, երիտասարդները ուսանելու էին գնում էջմիածնի Ճեմարան, Ներսիսյան դպրոց, Կ.Պոլիս և վերադառնում Սասուն, իրենց հետ բերելով վերազարթնող ազգային -ազատագրական մտքեր և կյանքում այն կիրառելու միջոցներ էին որոնում: Կապվելով հայ գրականության կուլտուրական կենտրոնների հետ, տեղի աշխատավորության համար ինտելիգենցիան նոր ուղիներ էր որոնում: Այդ հարցերի հարցը հողային հարաբերությունն էր:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սասունի գյուղերը հիմնականում քիչ տներից էին բաղկացած: Կային գյուղեր, որոնք 15-20 տուն ունեին: Կային և 250-300 տուն ունեցող գյուղեր: Առաջինները մեծամասնություն էին կազմում:

Գյուղական հասարակությունը մեծ մասամբ բաղկացած էր լինում թե՛ մոտ, թե՛ հեռավոր ազգակցական կապ ունեցող ընտանիքներից: Դրսից եկող արհեստավորը, բանվորը, հովիվն ու բատրակը, եթե գյուղում հող չունեին, հասարակության անդամ չէին համարվում և չէին մասնակցում նրա աշխատանքներին, նրա իրավունքներից ու պարտականություններից չէին օգտվում:

Գյուղական հասարակության ղեկավարող բարձրագույն օրգանը գյուղի հասարակական ժողովն էր, որին մասնակցում էր «տան գլուխը»: Երբ տանտերը մահանում էր, նրա կինը, որպես տանտեր, մասնակցում էր հասարակական ժողովին, իսկ կանայք ընդհանրապես այդ ժողովին չէին մասնակցում, կամ եթե ներկա էլ լինեին, վճռական ձայնի իրավունք չունեին: Մինչդեռ այրի կինն իբրև ծխի գլուխ, օգտվում էր ձայնի իրավունքից: Հասարակական ժողովից դուրս կանանց համար առանձին հասարակական ժողովներ էին լինում:

Հասարակական ժողովում անչափահաս, բայց հողի բաժին (պճեղ) ունեցող որբերի իրավունքը տրվում էր այն մերձավորին, որի մոտ ապրում էր որբը:

Հասարակական ժողովը ղեկավարում էր երեցփոխաններից մեկը, փորձ ունեցողը կամ հասակավորը: Գյուղական հասարակության ամենօրյա գործերը ղեկավարելու համար ընտրվում էր «երեցփոխանների ժողով» 5-7 հոգուց բաղկացած և նույն հասարակական ժողովում ընտրվող երեցփոխաններից մեկին ընտրում էին ռես (գյուղապետ): Սա դառնում էր ընտրված 5-7 հոգու ղեկավարը: Մի ուրիշին ընտրում էին քաթըբ-քարտուղար: Դա հանդիսանում էր տվյալ գյուղի գործադիր մարմինը: Այդ երեցփոխական ժողովի համար էլ գզիր էին նշանակում և դրանով լրանում էր «գործադիր իշխանության» կազմը:

Երեցփոխանական ժողովները հրավիրվում էին կիրակի օրերին, որպեսզի բոլորի մասնակցությունն ապահովվեր: Ժողովի

վայր էր նշանակվում մի մեծ տուն, ուր կար տան օջախ: Սրա աջ և ձախ քունջերում նստում էին ռեսն ու երեցփոխանները:

Ռեսն ու երեցփոխաններն ընտրվում էին գյուղի համբաներից կամ կիսգահամբաներից. ռեսի պաշտոնը ժառանգական չէր, թեև որոշ ազգատոհմերի ներկայացուցիչ աչքի ընկնող մարդը, որ կառավարության հետ կարող էր «գլուխ հանել», հաճախ ռես էր ընտրվում:

Ռեսի և երեցփոխանների ընտրության ժամանակ պայքար էր գնում, որ այս կամ այն ազգատոհմի ներկայացուցիչն ընտրվեր: Ընտրվողներից միայն ռեսի ընտրության հաստատումն էր լինում պետության կողմից, որը ձևական բնույթ էր կրում և միշտ հաստատվում էր: Այդ ընտրությունը, քանի որ գյուղական հասարակությանն էր պատկանում, թուրքական պետությունը Սասունում չէր միջամտում: Իսկ երբ բազմաստիճան ընտրություններ, դրանք խիստ հսկողության տակ էին առնվում: Հայերի թեկնածուները մյուդիրության, կայմակամության և մութասարիֆության մեջ հազվագյուտ դեպքերում էին անցնում:

Ընտրված ռեսի ու գզիրի աշխատավարձը «թառ էին անում» (պետական տուրքերի վրա նոր գումար էին գումարում) և վճարում այդ պաշտոնյաներին: Իսկ երեցփոխաններին աշխատավարձ չէր վճարվում: Համայնքի գործերը կառավարության մոտ վարում էր ռեսը: Երեցփոխանը քիչ դեպքերում էր գործ ունենում կառավարության հետ: Դա ռեսի բացակայության կամ հիվանդության դեպքում էր լինում:

Ռեսի աշխատավարձի վճարման չափն ըստ համբայի և պճեղների էր լինում, ըստ ունեցվածքի հողի քանակի:

Գյուղական համայնքի ժողովների իրավասությանն էր ենթակա ու երեցփոխանների որոշումով էին վճռվում դատական վարչական գործերը: Բացառիկ երևույթ էր, որ որևէ դատ Սասունից հասներ Մուշ կամ կառավարական այլ օրգանի: Դատերը կատարվում էին տեղում և վերջնական էին, «բեկման ենթակա չէին», այսինքն՝ ոչ մի դժգոհ կողմ չէր դիմում թուրքական դատարան և ավելի արդար վճիռ չէր սպասում այդ դատարանից: Պետության կողմից հարկն ըստ տնտեսության կամ անվանական չէր գալիս, այլ ըստ գյուղական հասարակության և հասարակական ժողովում ռեսն ու երեցփոխանները «թառ էին անում» ըստ հողի քանակի (երբ հո-

ղային տուրքն էր) և որոշում յուրաքանչյուր տնտեսության այդ հարկի չափը: Եթե հարկը «խամչուրին» էր (անասնահարկը), դարձյալ «թառ էին անում» և որոշում յուրաքանչյուր ծխին հասանելիք խամչուրիի քանակը: Այսպես՝ ամեն մի հարկի դեպքում:

Վարելահողը, տանտեղը, սաթառը (անտառը) պապենական սեփականություն էին և բաշխման ենթակա չէին: Դրանք ժառանգաբար անցնում էին սերնդից-սերունդ, արու զավակներին պատկանելու իրավունքով: Իգական սեռը ժառանգական այդ իրավունքից զրկվում էր այն օրվանից, որ հարս էր գնում:

Եթե նա չէր ամուսնանում և մնում էր տանը, իրավունք ուներ իր հոր ժառանգությանը տիրանալ: Երբ օջախը հանգչում էր, սեփականությունն անցնում էր մերձավոր ազգականներին: Վարելահողերից, սաթառից և խոտհարքից բացի մնացած արոտավայրերը համայնքի սեփականությունն էին կազմում, բաշխման ենթակա չէին, այլ միասնական օգտագործման: Այդպիսի արոտավայրերն օգտագործվում էին ամռանը, երբ մարդիկ անասունները զոգան էին տանում:

Ոռոգման ջրի բաշխումը լինում էր ըստ հողի քանակի, ըստ համբա, կիսահամբա և պճեղի: Կենտրոնական գլխավոր առուների վրա ջրբաժաններ էին նշանակվում և երբ որոշում ու ջրում ըստ հողի քանակի, իսկ մանր առուները, որոնք մեկ-երկու տնտեսության էին պատկանում, իրենց ջրի բաշխումն ու օգտագործումը համաձայնությամբ էին կատարում:

Գյուղական հովիվներ վարձում և նրանց աշխատավարձը վճարում էին այն դրացիները, որոնք ամռանը միասին զոգան էին գնում: Նույն դրացիների կողմից էր վճռվում նաև հանդապահ վարձելը:

Հասարակական նշանակություն ունեցող աշխատանքները զբարայով (շաբաթօրյակով) էին կատարում: Այդպես՝ կամուրջը, ճանապարհը, կենտրոնական վայրում փողոցներ բացելը, հուսիսի աղետից փրկվելը, հեղեղի վնասները վերացնելը և այլն: Համբաները զբարային շահագործողական բնույթ էլ էին տալիս: Օրինակ՝ իրենց անասունների համար դիվ (տերև) կտրել տալը: Հասարակությունը տվյալ աշխատանքին մասնակցում էր, բայց բացի սննդից, որ տրվում էր աշխատանքի վայրում, աշխատավարձ չէր ստանում:

Հասարակության ներկայացուցչական ժողովից ընտրված ռեսն ու երեցփոխանները, որ հետագայում մեջլիս (ժողով) էլ կոչվեցին, իրավունք ունեին միջամտելու համայնքի ներսում կատարվող ամեն մի անկարգության դեպքում՝ թե՛ ընտանեկան վեճերի բաժանքին, թե՛ մարդկանց կամ թաղերի միջև կատարվող կռիվ-ընդհարումներին և թե՛ սահմանային վեճերին:

Գյուղական հասարակությունը վճարում էր այն բոլոր ծախսերը, որոնք անսպասելի կերպով կատարվում էին որևէ գործով եկող պետական պաշտոնյաների վրա: Այդ ծախսերն էլ «թառ էին անում», ըստ հողի բաժանում տնտեսությունների վրա: Բոլոր ծախսերի և տուրքերի հաշվետվությունը կատարում էր քաթըբը և զեկուցում ժողովներում:

Պետական և նման հյուրերին օթևան և ուտեստ հայթայթելու համար նրանց ըստ տների «ղոնաղ» էին կանչում կամ մթերքն էին վերցնում և մի տեղ նրանց հյուրասիրում և կամ ծախսեր կատարում ու «թառ էին անում»:

Հասարակության բոլոր անդամները մասնակցում էին այդ չնախատեսված ծախսերին:

7. ԻՐԱՎՈՒՆՔ

Սասունում հիմնականում գործում էր սովորութային իրավունքը: Թուրքական պաշտոնական իրավունքը երկրորդական էր և քիչ էր կիրառվում: Սովորութային իրավունքը շեշտված էր ներքոհիշյալ բոլոր բնագավառների՝ սեփականության և այլ հարցերի վրա:

Մինչև 1900-ական թվականները սեփականություն բառը չէր գործածվում: Այդ թվականներից հետո, երբ դպրոցները գրական բառեր էին տարածում, այդ բառը աստիճանաբար մուտք գործեց: Դրան հնում փոխարինում էին երկու բառ՝ «մուլք» հողի սեփականություն իմաստով և «մալ»՝ շարժական սեփականություն իմաստով: «Թարշ» բառը բառացի նշանակում էր անասունի սեփականություն:

Սեփականատերն ինչպես ցանկանար, այնպես կվարվեր իր ունեցածի հետ. հողը կարող էր ծախել, անասունը՝ ծախել, մորթել, նվիրել, փոխել: Եթե հողը կամ անասունը երկու մարդու էին պատկանում, նրանցից մեկն իրավունք չուներ առանց մյուսի վաճառել: Սեփականություն չէր կարելի դարձնել հասարակական արոտավայրերը, գետերը, որսավայրերն ու վայրի կենդանիների որսը, ձկնորսությունը, որ հազվադեպ զբաղմունք էր: Սեփականություն չդարձվող այդ բնագավառները գյուղական հասարակության ամեն մի անդամ օգտագործում էր ըստ ցանկության:

Սեփականությունը ձեռք էր բերվում ժառանգություն ստանալով, գնելով, փոխանակելով, նվեր ստանալով: Գտնելով՝ սեփականություն էին դառնում մեղուները, որոնք գյուղամիջից դուրս նույն կամ այլ գյուղի սահմաններում էին գտնվում՝ անտառում, ժայռերում և այլն: Գտնողը պայմանական մի նշան էր դնում նրա վրա և երկրորդ հանդիպողը տիրելու ոչ մի ձեռնարկում չէր անում: Եթե մի քանի մարդ միասին էին այդ մեղուն կամ այլ իրեր գտնում, իրար մեջ հավասար բաժանում էին: Եթե գտնվող իրը կամ անասունը պատկանում էր մի այլ գյուղացու, որ ճանաչում էին, վերադարձնում էին նրան, որի համար տերը նվեր էր տալիս: Գտնվածը՝ գանձը, խիստ գաղտնի էր պահվում, իսկ եթե պարզվեր, որ դա հին գանձ չէ, այլ այս կամ այն մարդուն է պատկանում կամ նրա հորն ու պապին, որը վկայությամբ հաստատվեր, վերադարձնում էին տղային կամ թոռանը, բայց պարտադիր կերպով գտնողին շոշափելի նվեր տալով: Այդ կատարվում էր, եթե հողի տերն էր՝ գանձաժառանգը, որ երբեմն գտնողի հետ գանձը կիսում էր:

Հողային սահմանները, որ գրվում էին երկու տարբեր սեփականությունների մեջ, կոչվում էին թխում: Թխումները որոշում էին թխման քարերով, որոնք կես մետրից ավելի երկար էին: Սրանք թաղվում էին թխումների երկարությամբ, իրարից 10-15 մետր հեռավորության վրա: Այդ անշարժ քարերը շարժողները՝ թխում ուտողները, պատժվում էին գյուղի ռեսի և երեցփոխանների կողմից:

Սեփականության շարժական մասի՝ անասունների վրա հատկապես **դաղմա** և **մոհր** (կնիք) էին դնում: Դաղման երկաթե ձողի ծայրին մի պայմանական նշան էր, որ դրվում էր անասունների ականջների կամ թշերի վրա՝ շիկացման միջոցով:

Շարժական թե անշարժ գույքը ընտանիքին էր պատկանում:

Ընտանիքի մի անդամին առանձին սեփականություն չէր պատկանում, բայց որոշ բացառություն էին կազմում զարդերը և հագուստեղենը: Հարսի բերած զարդն ու հագուստե-

ղենն իր սեփականությունն էին. նույնպեսև, եթե հարսը առավակ մեռներ, նրա ունեցվածքը տրվում էր նրան, ում մեռնողը կտակում էր (օսյաք էր անում): Դա կարող էր լինել նույն ընտանիքի անդամներից կամ մեռնողի մոտիկ ազգականներից մեկը՝ քույրը (հատկապես փոքր քույրը) կամ մի ուրիշը:

Ջավակներ ունեցող այրի կինը եթե ամուսին էր բերում իր տան վրա և եկող ամուսինն էլ, ինչպես և այրի կինը սեփականություն ուներին, նոր զավակներ ունենալիս նրանց միջև երկու սեփականությունները հավասարապես չէին բաժանվում: Նրանց յուրաքանչյուր զավակը ժառանգում էր իր հոր սեփականությունը:

Հայրական սեփականությունը պատկանում էր միայն արու զավակին. աղջիկները անշարժ գույքից, հողից ու բնակարանից չէին ստանում: Սակայն եղբայրները պարտավոր էին իրենց չամուսնացած քույրերին մինչև ամուսնանալը պահել և կատարել նրանց ամուսնական ծախսերը: Եթե միայն աղջիկներն էին ժառանգ մնում, և անչափահաս էին, մոտիկ ազգականը՝ հորեղբայրը և այլն, վերցնում էին աղջկան իրենց խնամքի տակ, տիրելով և նրա սեփականությանը, մեծացնելով և ամուսնացնելով նրան: Աղջիկն իրավունք չուներ մնալ տան սեփականատերը, կամ ամուսին բերել այդ սեփականության վրա և ազգատոհմից անջատել այն:

Սա հայրիշխանության և կնոջ իրավազրկության բացարձակ բռնության մնացուկն էր մայրական սեռի իրավունքների վրա: Որբուհի ժառանգ աղջիկը, կամ այրի մնացած կինը, անշարժ սեփականության վրա իրավունք չուներ, բայց իրավունք ուներ շարժական գույքը՝ իր, զարդ, հագուստը տանելու և հեռանալու ամուսնու արենակիցներին պատկանող հողից: Գոյություն ուներ կտակ (օսյաք), որ ընդհանրապես լինում էր մեռնողի մահից առաջ և նրա ցույց տված վկաների ներկայությամբ՝ բանավոր կարգով: Այդ վկաները դառնում էին կտակակատարներ: Գտնում էին, որ «օսյաքն արուն էր», չէր ուտվում, այսինքն՝ անխախտ կատարվում էր: Ավելի դիպուկ ասում էին «օսյաքն ուրիշի համար մեռնելի միս է», ուրեմն անձեռնմխելի էր: Ժառանգներն ու ազգականները կտակողի կամքը սրբությամբ կատարում էին: Շարժական և անշարժ գույքի բաժանումը ընտանիքի անդամների միջև կատարվում էր աղբոր բաժին անելով, այսինքն՝ հողը բաժանվում էր ըստ եղբայրների թվի: Ամեն եղբայր, անկախ իր զավակների թվից, հավասար քանակով էր ստանում: Շարժական գույքը և անասուններն ըստ շնչի էին բաժանում: Հոր մահից հետո բաժանվելիս մայրն ընդհանրապես փոքր տղայի հետ էր գնում, մանավանդ, երբ նա դեռ չափահաս և ամուսնացած չէր կամ, եթե ամուսնացած էր, բայց դեռ անփորձ էր: Այլ դեպքում մայրը մնում էր անդրանիկ որդու մոտ, որը, հոր մահից հետո, երբ երեք եղբայրները դեռ չէին բաժանվել, հանդիսանում էր տան գլուխը: Չամուսնացած քրոջն ամուսնացնողը և խնամողը նույնպես մեծ եղբայրն էր:

Ջրաղացը միաժամանակ մի քանի մարդու պատկանող սեփականություն էր դառնում: Ջրաղացին եթե մեկից ավելի մարդիկ էին տիրում, նրանցից մեկը մշտապես պատասխանատու էր համարվում: Եթե մեկն ուզենար, կարող էր իր բաժինը վաճառել, բայց առաջին հերթին ջրաղացին տիրող իր բաժնեկիցներին: Վերջիններս եթե չգնեին, կարող էր մի նոր մարդու վաճառել իր բաժինը և նա դառնում էր այդ ջրաղացին բաժնեկից (շրիք): **Շրիքություն** էր կոչվում մեկից ավելի մարդկանց մի իրին կամ գույքին տիրելը:

Գյուղական հողերը համայնական չէին, բացի ալպյան արոտավայրերից, գետերից, որսավայրերից: Հասարակական ընդհանուր սեփականություն հանդիսացող հողերը բաժանման ենթակա չէին: Նույնպես և սաթառները (2-3-4 տարեկան ծառեր ունեցող անտառները, որտեղից անասնակեր՝ տերև էին կտրում): Այդպես և անտառները վերաբաժանման ենթակա չէին: Համայնական օգտագործման ենթակա արոտավայրերից օգտվում էին համայնքի բոլոր անդամները, բոլոր գյուղացիները, առանձին կամ խմբերով զոզան գնալով և անասուններին արածեցնելով: Անձնական սեփականություն հանդիսացող հողը կարող էին և՛ վարձու տալ, և՛ գրավ դնել, և՛ վաճառել: Այն ձրի կարող էր թողնվել մոտիկ արենակցին կամ վաճառվել, իսկ եթե նա չգներ և գնացողն էլ վերադառնալու միտք չունենար, կվաճառեր ում որ ուզեր:

Գրավոր **պայմանագրություններ** առհասարակ գոյություն չունեին տեղացիների մեջ, ոչ էլ առիթներ կային այդ ունենալու: Բանավոր պայմանագրություններ լինում էին տնտեսական, կենցաղային, վարձու աշխատողներ առանձին կամ միասին վարձելու և արձակելու ժամանակ: Բանավոր պայ-

մանագրությունը և՛ վկաների ներկայությամբ, և՛ առանց վկաների էին լինում:

Պայմանագրություն բառի փոխարեն տեղերում գործածվում էր **շարտ ու պայման** տերմինը: Կար նաև **ուխտ ու պայման**, որ նույն իմաստով էին գործածում:

Ուխտ ու շարտ բառերի բովանդակությունն իսկ սրբազան պարտականություն էին ցույց տալիս:

Ուխտ ու պայմանի մեջ խաբեբայություն չէր մտնում: Եթե պայմանագրության մեջ նկատվեր ծախվող իրի կամ փոխանակվող գույքի կամ անասունի պակասություն, չնկատված թերություն, խաբվող կողմը կարող էր լրացուցիչ վնասի հատուցում պահանջել, որը չէր առարկվում: Գույք, գործիք կամ լծկան անասուն վարձու տալն էլ **շարտով** կամ **պայմանով** էր լինում: Այդ պրոցեսը կոչվում էր **իջարի տալ** (պայմանով վարձու տալ): Իջարով տալը լինում էր բնամթերքով, փոխարենը աշխատանք կատարելով: XX դարի սկզբին այն տրվում էր նաև փողով:

Որևէ իր ի պահ հանձնելու դեպքում, որ կոչվում էր **ամանաթ տալ**, չէր թույլատրվում օգտվելու այդ իրից, ոչ էլ վարձատրություն էր առնվում պահ տալու համար: Ուստի ասում էին «ամանաթն Աստծունն է», այսինքն՝ անձեռնմխելի է:

Փոխառությունը կատարվում էր փողով, հացահատիկով և վճարվում էր անասունով ու հացահատիկի որոշ լրացուցիչ քանակով: Դրամական փոխատվությունը կատարում էին թեջիրները, ինչպես վերևում տեսանք: Իսկ հացահատիկի, սերմի փոխառությունը կատարում էին սերմազուրկները, նաև ամբողջ տարվա համար հացի պահանջ ունեցող տնտեսությունները: Այսպիսի դեպքերում պարտավորվում էին լրացուցիչ տալ ստացածի քառորդը, երբեմն և կեսը:

Ուրիշի աշխատանքի օգտագործումը, շահագործումը արտահայտվում էր մշակ և հովիվ վարձելիս և **գբարա** կատարելիս: Մշակը հիմնականում երկրագործության աշխատանքների, իսկ հովիվը և նախրորդը՝ անասնապահական աշխատանքների համար էին վարձվում: Մշակները՝ տարեկան, հովիվները և նախրորդները՝ սեզոնային աշխատանքների համար էին վարձվում: Մշակների, հովիվ-նախրորդների վարձը վճարվում էր անասունով, մթերքով և շատ քիչ դեպքում՝ փողով:

Հովիվը վարձման բանավոր պայմանագրության մեջ նախատեսված վարձից դուրս ստանում էր տրեխ և հագուստ՝ ըստ պահանջի, այսինքն՝ քանի անգամ որ դրանք մաշվեին: Հովիվն ու նախրորդը կորսված անասունի համար անձնապես պատասխանատու էին, եթե կորուստը բեբարաթ (առանց հետք թողնելու) էր լինում: Բարաթ էր անասունի դիակը կամ, եթե գազանների կեր էր դարձել, գլուխը, որ հովիվը պետք է ներկայացներ անասնատիրոջը:

Սասունում աշխատանքային ընկերություններից աչքի էր ընկնում մեղվաբուծականը: Դրա անդամները գործը վարպետ մեղվաբույծների միջոցով էին սովորում և նորություններ մտցնում այդ աշխատանքում: Պլոլին (գլանաձև փեթակ) տախտակե փեթակն էր փոխարինում և ինքնահոս շրջանակին՝ արհեստական շրջանակն ու մոմաթերքը: Մեղվաբույծի մոտ աշխատողը վարձ չէր ստանում: Վարպետ մեղվաբույծը ընկերության ղեկավարն էր հանդիսանում: Այս ընկերության մեջ արդեն գրավոր պայմանագրություն գոյություն ուներ, որովհետև ընկերության անդամները գրագետ էին:

Սասունում **քրեական իրավունքի** ասպարեզում գործերը երկու ձևով էին լուծվում: Առաջինը և իշխողը սովորույթի իրավունքն էր, որ իբրև «ներքին» օրենք կիրառվում էր գյուղական համայնքից ընտրված ռեսի և երեցփոխանների կողմից: Իսկ երկրորդը թուրքական պետական քրեական օրենքն էր: Առաջինով՝ սովորույթի, ավանդական, հետևաբար հարազատ քրեական իրավունքով էին վճռվում բոլոր գործերը, սկսած ամենափոքր զանցանքից մինչև ամենամեծ քրեական հանցանքը: Ամեն կերպ տուժողը և հանցավորը աշխատում էին, որ գործը թուրքական դատարան չհասներ և թուրք պաշտոնեությունը առիթ չունենար սասունցիների «ներքին» գործերին խառնվելու: Երկրորդով՝ թուրքական քրեական իրավունքի ուժով լուծվում և վճռվում էին այն բողոքները կամ հանցանքները, որ այս կամ այն պատճառով հասել էին կառավարական-դատական օրգաններին և քննության էին առնվում նրանց կողմից: Դա կարող էր լինել տուժող կողմից տրված բողոքի կամ դատական օրգաններ հասած լուրերի հիման վրա և գործի հետաքննությանը միջամուխ էին լինում Մուշում: Վերջինիս պաշտոնական անձինք ներկայանում էին Սասունի այն գյուղերը, որտեղ կատարվել է տվյալ հանցագործությունը:

Հանցանքը և զանցառությունը զանազանելը դժվար էր. երկուսի համար էլ գործածվում էին **մեղք և սուջ** (հանցանք) բառերը: Մեղք բառի մեջ և՛ աշխարհիկ, և՛ կրոնական հանցանքներն էին հասկացվում, իսկ սուջ բառի տակ՝ աշխարհիկ հանցանքները:

Ամենատարածված հանցանքները և վեճերը հողի, սաթառի՝ թխումի (սահմանի) շուրջն էին:

Զանցանքներ կային, որ ըստ սովորության պատժի չէին ենթարկվում: Այսպես օրինակ՝ հարսանիքների ժամանակ փեսայի տան հավերը գողանալը, կերակրամաններից մի քանիսը ջարդելը, մի ազաբչարուն մերկացնելն ու տաք և սառը ջրով, ձյունով ու սառույցով չարչարելով լողացնելը, հարսին փեսայի տուն բերելու ժամանակ պատերազմ սկսելը, քիթ ու մռութ ջարդելը և այլն: Դրանք պատժի փոխարեն խրախուսանքի էին արժանացնում: Գյուղական հասարակության ժողովի կողմից ընտրված «գործադիր մարմնի»՝ ռեսի ու մեջլիսի վճիռները լինում էին ըստ պատժի չափի: Տուգանքներն արտահայտվում էին դրամով, բնամթերքով, անասունով և այլն: Բանտարկություն չէր կատարվում, մարմնական ծեծն էլ գրեթե ընդունված չէր, թեև ռեսն ու մեջլիսը երբեմն այդ միջոցին էլ էին դիմում: Հանցանքի համար վճռական պատժի չափը որոշված ժամկետին հանցավորն անձամբ պիտի կրեր կամ վճարեր տուժողին: Ժամկետն անցնելիս որոշումը կիրառվում էր գզիրի միջոցով՝ ռեսի կարգադրությամբ:

Ամենամեծ հանցանքը համարվում էր մատնությունը, այսինքն՝ Սասունի ազգաբնակչության մասին թուրքական կառավարության մոտ բամբասանքներ անելը, կամ նրա զենք ունենալու մասին թուրք իշխանություններին հայտնելը: Այդպիսի հանցանքները երբ հաստատվում էին, մատնիչին որևէ մեկի կողմից սպանում, անհետացնում էին և սպանողին չէին հետապնդում, որ գտնեին կամ ռեսն ու երեցփոխանները ձևականորեն էին փնտրում: Այդպիսի դեպքում ուժեղ միջամտություն էր լինում թուրքական իշխանության կողմից, որից և կոնֆլիկտներ էին առաջանում:

Կանանց ամոթխածությունը և զգացմունքը վիրավորելն ամենախոշոր հանցանքն էր համարվում, այդպիսի մարդուն ասում էի՝ «Քու կնկա շուր վըր քու գլխուն», անարգանքով էին վարվում նրա հետ:

Պոռնկությունը, որպես հայրենական օջախի և գյուղական հասարակության պատվի ոտնահարում, մի պատիժ ուներ. պոռնիկ կնոջ եղբայրն իր ձեռքով պետք է սպաներ նրան:

Մարդասպանը կոչվում էր արնտեր: Եթե սպանությունը լինում էր ոչ թե արյան վրիժառության հետևանք, այլ ուրիշ պատճառով կատարված, այդ դեպքում սպանողը, ըստ նշված «ներքին դատարանի», **արունք** (արյան գին) պետք է վճարեր, որը հավասար էր լինում 4-5 «քիսըքի» (քսակի), այսինքն 20-25 օսմանյան ոսկու: Այդ վճռից դժգոհ եղողը, երբ՝ իր հարազատին սպանող մարդուն էր սպանում՝ արյան վրեժ էր լուծում, այդ ոսկիները տանում, իր թշնամու՝ սպանվողի տան երդիկից գցում էր ներս: Փողի գցելը տեսնողներն զգում էին, թե ինչ էր նշանակում այդ և **հաուար** (կոչ) արձակելով վազում էին փնտրելու իրենց սպանված հարազատին:

Սպանությունը և պոռնկությունը միշտ արյունով էին լվացվում: Ազգաբնակչությունը արյան վրիժառությունը թեև ցավալի, բայց անխուսափելի էր համարում: Արյան վրիժառությունը վերջ գտած էր համարվում, երբ **արունք** (արյան գին) ընդունելով՝ տուժող կողմը բավարարվում էր և կամ արյան վրեժը արյունով էր առնում և վերջինի կողմը նոր արյան՝ վրիժառության չէր դիմում, բավարարվում էր նրանով, որ «արունը արունով լվացվեց»:

Այդպիսի կողմերի հաշտեցումը լինում էր եկեղեցում, երկուսի ձեռքերը մի ավետարանի վրա դնելով և խոստանալով ամեն ինչ վերջացած համարել: Այդ հաշտության ծեսին ներկա էին լինում ռեսն ու մեջլիսը և հասարակությունը:

Սասունում կային ինքնադատաստանի երևույթներ, այսինքն՝ առանց տեղական (հայ) կամ կառավարական (թուրք) դատարան դիմելու, մարդիկ անձամբ, իրենց ձեռքով էին դատը տեսնում, ինչպես տեսանք մատնիչների նկատմամբ էր այդ կատարվում:

Տեղական «դատարանը» կազմված էր լինում «սպիտակ մուրուքնուց»՝ երեցփոխաններից: Առանձին թաղերում փոքր վեճերը սպիտակ մուրուքնին կամ մալխըն (տանտերը) էր լուծում և չէր հասնում գյուղի տեղական դատարանին:

Սպիտակ մուրուք - երեցփոխանները, որոնցից կազմվում էր տեղական «դատարանը», միշտ ամենահասակավոր, փորձված մարդիկ էին, ինչպես ամենահին անցյալում տոհ-

մային ավագները, որ մեծ հարգանք էին վայելում, ինչպես ասում է Ֆ. Էնգելսը.

«...Քաղաքակրթության էպոխայի՝ ամենահզոր իշխանը և մեծագույն պետական գործիչը կամ զորավարը կարող էին նախանձել այն առանց բռնության ձեռք բերված և անվիճելի հարգանքին, որով վերաբերվում են ամենահամեստ տոհմային ավագին»:[1]

Գյուղական դատարանը գործում էր այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ արդեն կատարվել էր հանցագործությունը: Դատական կազմը երկու երեցփոխան և ռեսն էին, իսկ ռեսի բացակայության ժամանակ՝ 2-3 երեցփոխաններ: Գյուղական այդ դատարանն ամեն հանցանք կամ զանցանք քննության էր առնում առանց գրավոր արձանագրության ու վճռում նույնպես բանավոր: Հասարակական մեղադրողները չկային, ինքը՝ դատարանն էր այդ կատարում: Դատարանում երկու կողմերի ներկայությունը պարտադիր էր: Կողմնակի մարդիկ ներկա էին լինում դատավարության ժամանակ և երբեմն էլ իրենց ծանոթ գործի մասին հայտնում - խոսում դատողների հետ: Դատարանը ղեկավարվում էր միայն ընդունված բանավոր օրենքներով: Վկայությունները և երդումը կազմում էին հիմնական տվյալները, որով կայացվում էր վճիռը: Մեղադրյալին ծեծի չէին ենթարկում, հարկադրանք չէին տալիս, որ խոստովանի հանցանքը, միայն երդվեցնում էին, որ սուտ չխոսի: «Դատը վարում», ինչպես և պատժի չափը որոշում էին հստակորեն ու գործադրության ժամկետը նշում: Իրագործում էր գյուղի գզիրը: Կատարման հսկողությունն ընկնում էր երեցփոխանների վրա: Եթե կողմերը դժգոհ էին, կարող էին դիմել գյուղական ժողովին, որի ներկայությամբ և մյուս երեցփոխանների միջոցով քննվում ու վճռվում էր այդ գործը: Սա վերջինն էր և դժգոհ մնացողները հազվագյուտ դեպքում կդիմեին թուրքական դատարանին, որից, վերջին հաշվով, արդար լուծում չէին սպասում ու բավարարվում էին տեղական դատարանի վճռով:

[1] Ֆ. Էնգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1940թ., էջ 82:

ՀԱՎԱՏՔ

Պաշտոնական կրոն - Սասունի հայ ազգաբնակչության պաշտոնական կրոնը քրիստոնեությունն էր, լուսավորչականությունը: Ամբողջ Սասունում բողոքական կամ կաթոլիկ հայ բնակիչներ չկային: Քրիստոնեական կրոնի համաձայն, Սասունի հայերն էլ ընդունում էին երրորդությունը (հայր, որդի և Ս. Հոգի) որպես մի աստվածություն: Իսկ մարգարեներն ու սրբերը համարում որպես այդ աստվածության երկրային ներկայացուցիչներ: Լուսավորչական ծիսակատարությունները կատարվում էին առանց փոփոխությունների:

Հայերից հետո քրդերը մեծ թիվ էին կազմում, որոնք գրեթե բոլորն էլ, ի պաշտոնե , մահմեդականներ էին: Կային քիչ թվով եզդիներ, որոնք ընդունում էին միաստվածությունը: Երկնային աստվածության երկրային միակ ներկայացուցիչ և մարգարե ընդունում էին Մոհամմեդին: Քրդերի մի քանի աշիրաթներ՝ բագրանցիներ և բալակցիներ, որ բնակվում էին բուն Սասունում և Մոտկանի շրջանում, փաստորեն, մահմեդականներ չէին: Իսկապես, նրանք արտաքնապես թուրքական պետության առաջ և վիճակագրությամբ իրենց համարում էին մահմեդական - մուսուլման, սակայն իրականում նրանք մուսուլմանական ծեսեր, արարողություններ չէին կատարում և մզկիթներ (մեջիտ) կամ աղոթատեղիներ չունեին: Դրանց մի մասը խոսում էր հայերեն և արաբերեն, հաճախում էին հայերի ուխտատեղիները, բերելով իրենց հետ մատաղացու ոչխար, մասնակցելով ուխտագնացության բոլոր տրադիցիաներին, մատաղը բաժանում հավասարապես և՛ հայերին և՛ քրդերին:

Հայերից և քրդերից բացի, աննշան թվով ասորիներ կային Սասունի հարավային շրջաններում՝ Մոտկանում և Խարզանում, որոնք քրիստոնյաներ էին, և շատ քիչ եզդի-քրդեր, որ արևապաշտներ էին, զրադաշտական կրոնի հետևողներ: Սրանց կրոնականները փիր էին կոչվում:

Թե՛ լուսավորչական հայերը, թե՛ մուսուլման քրդերը և թե՛ ասորիներն ու եզդի-քրդերը հավատում էին, որ ինչ որ կատարվում է մարդկանց հետ, Աստծու մասնակցությամբ է լինում և «ոչ մի տերև առանց Աստծու կամքի չի շարժվում»:

Ամենից շատ սիրված սրբերը հանդիսանում էին Սասունի պատմական հինգ սարերը:

Մարաթուկի կամ Մարութա սարումն էր Ս.Աստվածածին վանքը: Անդոկումն էր Անտոն Ճգնավորի մատուռը, Կեփինում՝ Կարմիր Ճակատ Ս.Հակոբը, Ծովասարում՝ Ս.Աստվածածինը, Սև սարում Ս:Աղբերիկը կամ Աղբյուրիկը (պատմական Վանտիր վանքը՝ Գրիգոր Մագիստրոսի նստավայրը):

Ընդհանրապես, պաշտոնական եկեղեցու վերաբերմունքը դեպի այդ լեռնային սրբավայրերն ու գյուղերից դուրս գտնվող ուխտատեղերը բացասական չէր, որովհետև ուխտագնացություններին և սրբավայրերին հսկում և մասնակցում էր տեղի կրոնականը. նրանց շահերը չէին բախվում: Ընդհանրապես, այդ ուխտագնացության ժամանակներն էին՝ Համբարձումը, Վարդավառը, Խաչի և այլ ամառային կրոնական տոների օրերը: Պաշտամունքի կոնկրետ օբյեկտը հանդիսանում էր տվյալ ուխտավայրը, ջուրը, որ լուսաղբյուր կամ օձաղբյուր էր կոչվում՝ այնտեղ երկնային լույս տեսնելու (Անդոկ) կամ բուժիչ աղբյուր լինելու (Կեփին, Ծովասար, Մարաթուկ) պատճառով:

Սասունցիների տներում սրբի պատկեր կախելու սովորություն չկար:

Մասնավոր «հրաշագործ» գրքեր կային միայն քահանաների, տիրացուների և գրբացների մոտ, ինչպիսին են՝ Ավետարանը, «Նարեկը», երազահանը, հազվագյուտ լսվում էր և «Աբեմերդին» գրքի մասին, որով գուշակվում էր լավ կամ վատ բերքի տարին, պատերազմի և խաղաղության հավանականությունները, բախտի բացումը: Խաչեր և մասունքներ նույնպես չկային մասնավոր մարդկանց մոտ: Դրանք ևս գտնվում էին քահանաների, տիրացուների և գրբացների մոտ, որոնց և դիմում էին հիվանդի տերերը, կամ բախտը բաց անել ցանկացողները:

Ինչպես հոգևորականների, այնպես էլ ծերերի և ղարիբ մարդկանց նկատմամբ ժողովուրդը խոր հարգանք ուներ: Սակայն երազում քահանա տեսնելը չարագուշակ և սատանա էին համարում: Խորապես ազդվում էին քահանայի անեծքից և գոհունակ էին նրա օրհնությունը վայելելուց: Բացի կրոնական ծառայություններից, քահանայի հրավերով, կատարում էին նրա տնտեսական կամ դաշտային աշխատանքները:

Կրոնական «պետքերի համար» (տնօրհնեք, մեռելոց, հիվանդի վրա կարդալ) վճարում էին ցորենով, որի քանակը լինում էր ըստ վճարողի կարողության, որոշակի սահմանված

գին չկար, սակայն տնտեսական վատ դրության մեջ եղածներն էլ իրենց «հոգու պարտքը» անվճար չէին թողնում:

Կրոնական սնահավատությունների դեմ պայքար գրեթե գոյություն չուներ, բացի աշխատավորների որոշ հեգնանքից, որ երբեմն կատարվում էր քահանայի հասցեին: Այսպես օրինակ՝ «Սար ու ձոր՝ տերտերի փոր», կամ «Գդալ չոկիկ (շերեփ) հավաքող» և այլ արտահայտություններ: Քահանաների արծաթասոլության և ժողովրդին շահագործելու մասին աշխատավոր մարդկանց կողմից որոշ ծաղրող պատմություններ էին արվում: Օրինակ՝ տարածված էր հետևյալ պատմությունը. ընկերներով միասին, մի անգամ գետն անցնելիս ջուրը քշում, քահանային տանում է հոսանքի հետ: Մարդիկ վազում են նրան փրկելու խեղդամահ լինելուց և ասում. «Տերտեր, տերտեր, ձեռքդ տուր բռնենք, քեզ ջրից հանենք», քահանան ձեռքը չի երկարում, որ բռնեն: Ազատարար գյուղացիներից մեկն իր ընկերներին ասում է, թե «Տերտերը «տուր» չի հասկանում, «առ» ասեք, որ ձեռքը երկարի»: Երբ «Տերտեր, տերտեր, առ» են ասում, շտապ ձեռքը երկարում է, որից բռնելով՝ ազատում են նրան:

<u>Ճակատագիր և բախտ</u> - Ճակատագրին հավատալը կրոնական հավատալիքներից մեկն էր: Ժողովուրդը հավատում էր, թե ամեն մարդու ճակատագիրն «Ի ծնե գրված է», թե ինչպես է նա ապրելու և ինչ մահով է մեռնելու: Ճակատագիրը գուշակելու փորձեր անում էին գրբացները, թիզ չափողները՝ քրիստոնյաները: Գրբացները ճակատագիրը գուշակելու փորձ անում էին գրքերի միջոցով: Իր բախը նայել տվողը աչքերը փակ վիճակում մատը դնում էր գրքում եղած մի շրջանակի մեջ գրված այբ - բենի տառերի վրա, կամ զանազան պատկերանկարների, որ կային նման գրքերում, իսկ գրբացը կարդում էր այդ տառի կամ նկարի մասին գրքում գրված «խեր ու շառի» տվյալները և ասում, թե ինչ է լինելու նայել տվողի ճակատագիրը: Թիզ չափողը իր աջ ձեռքի թզով չափում էր կատարում մերկացած ձախ թևի վրա: Եթե ճակատագիրը բարի էր, աջ ձեռքի թիզը լրիվ կբացվեր, իսկ եթե վատ էր, թիզը կծկում էր ունենում և չափումը խանգարվում: Թզաչափները պառավ կանայք էին լինում, որոնք, ըստ ներշնչումի և իրենց թզի կծկում-բացումների «գուշակում» էին թզաչափին եկողի ճակատագիրը:

Բախտավորությունը տան կամ տնտեսության մեջ կապված էր այն մարդու կամ կենդանու հետ, որին ընկել էր Նոր

տարվա «մեծ հացի» բախտի նշանը: Նոր տարին՝ լույս հունվարի կեսգիշերին թխում էին մի հսկա հաց «Տարու դրմուզ» (տարվա փուռնիկ), որի մեջ դնում էին բախտի մատանին կամ մի փոքր դրամ, կամ փայտիկ՝ զառի մեծությամբ: Այդ «Տարու դրմուզը» երբ օջախից հանում էին, բաժանում էին այնքան մասի, որքան անձ կար, դրան ավելացրած եզները, ոչխարները և այլ կենդանիները: Պայմանական իրը ում բաժնի մեջ որ գտնվեր, տան բախտը նրա վրա էր լինում մինչև հաջորդ Նոր տարին: Այդ բախտը կրողը կարող էր լինել ուրեմն, ընտանիքի մի անդամը, կամ եզը, կթու կովը և այլն:

Նավասարդի, նոր բերքի տոների այդ սովորությունը գալիս էր հեթանոսական շրջանից: Նավասարդը կամ Ամանորը երկրագործության տոնն էր, բնապաշտական տոնի վերապրուկ, որ հետագայում Նոր տարի և բարի Կաղանդ անունն էր ստացել:

<u>Գետնի և ջրի պաշտամունքը</u> - Հողը համարվում էր սրբություն: Հողով երդվում էին «Հայդա հուղը վըգա ընի»: Այդ հարգանքը և պաշտամունքը արտահայտվում էր հողը համբուրելով, դեմքը, ճակատը, նրան քսելով, կամ ննջեցյալի վրա բոլոր հուղարկավորների կողմից մի-մի բուռ նվիրելով - ցանելով նրա դագաղի վրա, նախքան գերեզմանը ծածկելը: Եկեղեցիների շրջակա հողերը չէին վարում, չէին ցանում, որպես տվյալ սրբին պատկանող հող: Որոշ սրբավայրերին մոտենալով, նրան պատկանող հողում գինված մտնելն արգելվում էր. այդ վայրում եղած վայրի անասուններին որսորդները խփելու իրավունք չունեին: Այդպիսի հողի ահագին տարածություն կար Կեփին սարի լանջերին: Կեփինը Անդոկի հարավային մասում է գտնվում, նույնքան բարձր մի գագաթով: Այդ սարի լանջից անցնում է Մուշից Տիգրանակերտ գնացող դըրբ կոչված ճանապարհը: Դըրբից դեպի Կեփինի գագաթը եղած մոտ մի ժամվա ճանապարհ տարածություն գագաթի շուրջը որսորդներին արգելված էր մտնել: Որսորդը պետք է իր զենքը թողներ ճամփու վրա, նոր անցներ այդ սահմանը: Տաբուի այդ հանգամանքի շնորհիվ է, որ Կեփինի գագաթի վրա ամենից շատ և ամենից ապահով ապրում էին վայրի այծերը՝ քուվիները և լեռն էլ դրա համար կոչվում էր վայրի այծերի փարախ, մակաղատեղ, ինչպես զրույցի, այնպես էլ երգերի մեջ, որտեղ ասվում է.

«Անտոկ միրե ջիա, Կեփին մախալե պազքուվիա»:

(Անդոկը սարերի արքան է, Կեփինը՝ վայրի այծերի փարախը):

Կեփին սարի այդ տաբուն կապված է կարմիր ճակատ Սուրբ Հակոբի և նրա դռանը եղած օծաղբյուր-լուսաղբյուրի հետ, ուր ուխտի էին գնում դիվահարներն ու «առողջանում»:

Սովորություն կար, որ պանդխտության գնացող Սասունի բնակիչը, որպես հիշատակ, հայրենիքից մի բան հետը տանում էր, մերթ մի բուռ հող, մի քանի կորեկի հասկ, կամ մի այլ բան, մի մասնիկ հայրենիքից, մինչև իր վերադարձը սրբությամբ պահում և հետը բերում:

Ամենամեծ պաշտամունքի առարկան էր հանդիսանում ջուրը: Բազմաթիվ գետերի, աղբյուրների և լճերի հետ կապված էին ավանդություններ: Կարելի էր հանդիպել «Պայթող աղբյուրի», «Օծաղբյուրի», «Լուսաղբյուրի», «Կաթնաղբյուրի» ոչ միայն ուխտատեղիներում, այլև ամենուրեք:

Այսպես օրինակ՝ «Կանիա-բահջին» (պայթող-աղբյուրը) Անդոկի հյուսիսային ստորոտում, թամբածև մի տարածության վրա մի աղբյուր էր, որ ժայթքելով էր դուրս նետվում և հոսում դեպի արևելք, ոռոգելով Սասունի Գելիեգուզան գյուղը: Դրա թաղերը զետեղված էին նույն Կանիա-բահջիի աջ և ձախ թևերի վրա: Ըստ գյուղացիների պատմած ավանդությունների, այդ աղբյուրի ժայթքի միջից է դուրս թռել Սասունցի Դավթի Քուռկիկ-Ջալալին: Կանիա - բահջին գալիս է Անդոկի ընդերքից, ուր ապրում են հրեղեն ձիեր, որ երբեմն պայթող աղբյուրից դուրս են թռչում և երբ մարդ են տեսնում, ձկան պես խորասուզվում են նույն աղբյուրի մեջ:

Այդպիսի սրբազան և բուժիչ ջուր են Կարմիր ճակատ Ս.-Հակոբի, Ծովասարի, Մարաթուկի, Անթանիայի աղբյուրները, որոնց մասին ավանդություններ ենք գրի առնվել: Այդ բուժիչ աղբյուրների ջրից օգտվում էին խմելով, մարմնին քսելով, լողանալով, ամաններով տուն տանելով:

Աղբուրներին մատաղ էին բերում և այդտեղ զոհում, թխած հաց էին բերում և բաժանում ուխտավորներին: Ինչպես հողը, այնպես և ջուրը երդման առարկա էր դառնում: «Հայդա հողն ու ջուրը վկա» ասողին չէր կարելի չհավատալ, ոչ ոք հողն ու ջուրը սուտ երդման առարկա չէր դարձնում:

Գիշեր ժամանակ աղբյուրի կամ որևէ ջրի վրայով անցնելիս անպայման «Հիսուս-Քրիստոս» էին ասում, որ անվնաս անցնեին, կամ ջուրը մտնելը մեղք չհամարվեր: Այդպիսի դեպքում երեսները խաչակնքում էին: Ջուրն օրհնելու արարողությունը կա-

տարում էին ջրօրհնեքին: Օրհնած և մեռոնած ջուրը, կնունքի մեռոնաջուրը և այլն, որպես բուժիչ ջուր էին օգտագործում: Ինչպես ասվել է, նրանով լողացնում էին հիվանդին կամ քսում նրա մարմնին, լվանում, մաքրում շան լակած, պղծված ամանները: Հաբի թասի մեջ լցված սուրբ ջրով թրջում էին հաբով հիվանդ ոչխարներին: Հաբի թասերը զարդերով և աղոթքներով էին նախշված ու գրված: Վարդավառին իրար վրա ջուր լցնելու սովորությունը կատարում էին բոլորը, նույնիսկ հիվանդները, իսկ երիտասարդները մեկը մյուսին հրմշտելով, քաշելով տանում և աղբյուրի տակ, շորերով, միասին բռնի լողացնում, իրար թրջում, կամ իրար նետում անցնող ջրի մեջ: Վարդավառը ջրի պաշտամունքի բնապաշտական վերապրուկ էր: Ըստ ավանդության, Համբարձման տոնի այն րոպեին, երբ երկնակամարում տարին մեկ անգամ, այն էլ գիշերը, իրար հանդիպող երկու աստղերի՝ Լեյլիի և Մեջնունի հանդիպումը տեսներ և այդ իսկ րոպեին իր սափորը կամ կուժը ջրով լցներ, ջուրը ոսկի կդառնար ու այդ ջուրը բերողը բախտավոր կլիներ մինչև իր կյանքի վերջը:

Ուխտագնացությունները բնապաշտական-անիմիստական հավատալիքների ուժեղ վերապրուկներ էին:

<u>Կրակի պաշտամունք</u> - Տեղացիները կրակը վառում էին չախմախով: Դա սովորական չախմախ էր մի կայծքարից և մի պողպատի փոքրիկ հաստ լաստիկից (շեղբից) բաղկացած: Կայծքարի վրա **տիղ** կամ **փուշի** էին դնում, որ դյուրավառ նյութ էր և իսկույն կայծերից բռնկվում էր: Տիղը կամ փուշին ընկուզենու ծառերի բնի վրա աճող սունկ է, զանազան մեծությամբ, որ հավաքում էին և եռացող մոխրաջրի մեջ եփում որոշ ժամանակ, ապա չորացնում, որով արդեն պատրաստ էին օգտագործման համար որպես աբեթ: Կրակը վառում էին նաև ֆիթիլով (ֆըթիլ): Ֆիթիլը գործված և կլոր մի պատրույգ էր, որ պատրաստի ստացվում էր քաղաքներից (Մուշ, Հազզո, Ֆարխին և այլն). այն ուներ դեղին գույն և շուտ բռնկվող էր:

<u>Կրակի պաշտամունքը</u> կատարվում էր Տերընդեսին (Տյառն ընդառաջ), որը զուգադիպում է ամեն տարի անխախտ Օրվա՝ փետրվարի 14-ին:

Տերընդեսը ամեն տուն կատարում էր: Ամեն տան կտուրի վրա կամ այլ հարմար և բարձր տեղում կիտում էին բարակ և չոր ցախեր, գըլգիլի փուք (եղեգ), կանեփի չոր ցողուններ և երբ այդ օրվա երեկոյան ժամերգությունը վերջանում էր, եկեղեցու շենքին ամենամոտիկ տան Տերընդեսը վառում էր քահանան կամ տիրացուն՝ եկեղեցուց բերած և վառված մոմերով: Դա լինում էր մի նշան, որին նայելով բոլոր տների Տերընդեսներն սկսում էին վառել և գիշերելու մոտ՝ երեկոյան, Տերընդեսի բոցերով լուսավորվում էր ամբողջ գյուղը:

Պատանիներն ու երիտասարդները հավաքվում էին Տերընդեսի խարույկի շուրջը, պարում, զվարճանում, ապա թեժ կրակի և բոցերի վրայով ու միջից թռչում էին մի կողմից մյուսը, առանց նկատի առնելու, թե հագուստները կամ մազերը բոցակիզվում էին: Բացի կրակի վրայից թռչելուց, երիտասարդներն իրար հրում և գցում էին կրակի մեջ: Ամեն մարդ այդ գիտեր և տեղում զգույշ և ամուր էր կանգնում, այնուամենայնիվ, ոչ ոք չէր վիրավորվում, եթե ճարպիկ մեկը նրան գցեր կրակի մեջ, ու նույնիսկ այրվածքներ ունենար Տերընդեսի կրակից: Դա պատվաբեր էր: Երբ խարույկի բոցավառ դրությունն անցնում էր, պատանիները վերցնում էին առկայծող, կիսավառ փայտերը և գցում այն բոլոր ուղղություններով, որտեղ արտեր, հողակտորներ ունեին, հիշելով արտի անունը և մաղթելով բերքառատություն: Այսպես օրինակ՝ գոչում էին «Բարաքեն վերի արտին, ցորենը շատ լինի», «Բարաքեն տան դռան գըլգըլի արտին, հասկերը մեծ լինեն» և այլն, թվելով բոլոր արտերը: Առկայծող կրակներ էին նետում գոմի վրա, եզներին ուժ ցանկանալով, մի ուրիշը գցելով կովերին՝ «կաթը ցուլան (ջրվեժ) լինի» ու այսպես, ըստ ցանկության, կրակներ գցում և ցանկություններ հայտնում առատ բերքի, կաթնամթերքի, բախտավոր հարսների, առողջ թոռների համար: Տերընդեսի կրակը երբ վերջանում էր, այրվող տեղի վրա մնացած փոշիներն էլ վերցնում էին, շաղ տալիս այս ու այն մաղթանքներն անում, նոր ցրվում էին տները:

Տերընդեսի կրակի փոշին գործածում էին հազի դեմ, որպես բուժիչ նյութ: Նրա փոշու մի փոքր մասը լցնում էին իրենց բերանը և կուլ էին տալիս:

Կրակի պաշտամունքն արտահայտվում էր նաև նրանով, որ այն չարխափան էր համարվում: Մի վայրից սատանաները «հալածելու, փախցնելու» համար կրակ էին վառում: Արջերը գըլգիլի արտերից փախցնելու կամ գայլերին հոտից հեռու պահելու համար գիշերը կրակ էին վառում:

Հասակառու մարդիկ ոչ միայն ձմռանը, այլև օգոստոս ամսի շոգերին կրակ էին վառում, թեժ խարույկ պատրաստում,

ապա մերկանում և կրակի առաջ խարըվտում, մարմինը տաքությամբ այրում՝ մինչև մաշկը կարմրում էր: Դա մեծագույն հաճույք էր պատճառում և ամեն օր, թե՛ ցերեկվա շոգին, թե՛ երեկոյան և թե՛ ձմռանը խարըվտելուն սովոր մարդկանց կողմից անպայման կատարվում էր:

Կրակով, որով և օջախով երդումը ջերմեռանդությամբ էր կատարվում: Ասում էին՝ «Քու օջախը վկա», «Քու տան կրակը վկա», «Էս կրակը խեր» և այլն: Նավասարդի կամ Նոր տարվա հացը անպայման կրակի մեջ թաղելով, կրակով ծածկելով էին թխում. «Էս թոնրի հացը վկա», «Էս թվեքը վկա» երդվելով, ուր թխվել էր Նավասարդի կամ Նոր տարվա հացը՝ «Տարու դրմուզը»: Կրակով անեծքներ էլ էին անում: «Աստծու կրակը թափի քու վրա», «Քու կրակը մարի», «Օջախդ չվառի»:

Կրակն օջախում անշեջ պահելը սրբազան պարտականություն էին համարում, դրա համար գիշերը քնելուց առաջ վառված և մաղմաղ կրակի մեջ էին թաղում կրակ պահող, ուշ վառվող և դանդաղ այրվող հոշկի կամ լողփի կոճղը: Այդ անթեղը, կամ անթղակալը մինչև հաջորդ օրը պահում էր կրակը: Այդ անթեղը հաստ և ոստ ունեցող փայտից էին ջոկում, որը հարմար էր օջախի կրակը անշեջ պահելու և տանտիկնոջ համար: Տան մեջ հաց թխող կնոջ կամ ամենահասակավոր մարդու գործն էր ընտրել անթեղը, ապահովել օջախը կրակով: Օջախի կրակիչ չունենալը, դրացիներից կրակ խնդրելը դիտում էին որպես փնթիություն և անտնտեսվարություն, իսկ այն տանտիկինները, որոնք հազիվ թե պատահեր, որ ուրիշ օջախից կրակ խնդրեին և իրենց կրակը չունենային, դիտվում էին որպես իսկական հոգատար մայրեր տան համար և հարգելի անձնավորություն բոլոր ծանոթների համար:

Սովորություն կար, որ ամեն տուն Տերընդեսի կրակից կրակ բերի և իր տան օջախի կրակը այդ կրակով վառի՝ փոխելով հին կրակը: Տերընդեսի կրակին համազոր էր և նույն օրվա եկեղեցուց բերած վառած մոմը, որով նույնպես վառում էին օջախները:

Ընդհանրապես, Նոր տարվա օրը, Նավասարդի տոնին, ոչ կրակ և ոչ էլ մոխիր էին տալիս դրսից ուզող դրացիներին կամ այլ դիմողների: Զիպ-ի տոնին, փետրվարի վերջին 3 օրը և մարտի սկզբի 4 օրում կրակ, մոխիր, խմոր, սանդերք, որևէ այլ բան ուրիշին չէին տալիս, տնից դուրս չէին հանում: Կրակը բուժիչ էր հանդիսանում և մարդկային հիվանդությունների համար:

Սասունցիները կրակին հավատում էին:

Հիվանդներին կրակով բուժումը լինում էր տարբեր ձևերով: Մարմնի բոլոր ցավերի դեպքում, հատկապես փորի և մեջքի ցավերի ժամանակ, թեժ կրակի մեջ շիկացած մի ակիշի թաթով, ցավ զգացող բոլոր կողմերը այրում էին: Այրում էին ոչ թե ակիշի թաթի լայնությամբ, այլ նրա կողքի հաստությամբ, որով ակիշի թաթի մի հատվածը մարմնի մաշկի վրա թողնում էր 2-3 սմ երկայն և կեսից-քառորդ սմ լայնությամբ այրվածքներ: Դրանց թիվը լինում էր 15-20-ից մինչև 35-40, ըստ որի փորի մեծ սանջուների ժամանակ, կրծոսկրից մինչև պորտը, աջ կողմից ձախ դաղում էին: Այդ դաղերը էլ ավելի բորբոքել էին տալիս վրան դնելով սիսեռի ծամվածք:

Եթե մարմնի որևէ մասը ուռչում էր, չիբանը մեծանում, դարձյալ կրակով-շիկացած հերյունով ծակելով պայթեցնում էին: Այդ բուժումը կատարվում էր հետևյալ կերպ: Երկաթե բարակ մի շիշ, 1-2 սմ տրամագծով և ուրիշ երկարությամբ, վերցնում էին, թեժ կրակի մեջ ծայրը շիկացնում, և երբ շշի ծայրը թեժ կրակի վառ գույն էր ստանում, հանում էին կրակից և նրանով ծակում ուռուցքը, նրա ներքևի մասից, որպեսզի բացված անցքից թարախը հոսեր և չմնար վերքի մեջ:

Մարմինը կրակով այրելու միջոցով բուժում էին նաև մալարիան, գլխի կամ սրտի ցավերը և այլն: Այսպիսի բուժումներից մեկը դեղ դնելն էր: Դեղ դնելը կատարվում էր հետևյալ ձևով: Վերցնում էին եղունգի մակերեսի մեծության աբեթի (դեղ) կտոր և դնում ձախ թևի դաստակի ուղղությամբ թևի մաշկի վրա և աբեթի ծայրը վառում: Դանդաղ և հարատև վառվող այդ աբեթը վառվում իջնում էր մաշկի վրա, այրում այն և վերջանում երբեմն փոքրիկ պայթյունով: Եթե մաշկի այրվող մասը չէր բորբոքվում, բորբոքում էին վրան սիսեռի ծամվածք դնելով: Մի քանի օր հետո վերքը լավանում էր, նրա հետ էլ՝ հիվանդը:

Կրակով և կայծեր թափելով բուժում էին նաև մրջնբուն կամ էրեթիկ, ջրջրուկ կոչված մաշկային հիվանդությունը: Մաշկի այն մասի վրա, որտեղ կար մրջնբուն կամ ջրջրուկ, կայծքարի միջոցով, կայծերի տարափ թափելով վրան, այրում էին, կրակով բուժում:

Օջախի մեծը հանդիսացող տան ամենատարիքոտ անդամը՝ պապը կամ տատը, իբրև պատիվ, նստում էր կրակի կողքին:

Կենդանիների պաշտամունք - Տեղական բնակչությունն իր շրջապատում գտնվող զանազան կենդանիների մասին զանազան ավանդություններ էր պատմում: Այդ կենդանիների մի մասը Աստծո կամ զանազան սրբերի պաշտպանությունն էին վայելում, որ տոտեմական պաշտամունքի մնացուկ էր:

Շանը գուշակողի հատկություն էին վերագրում: Այսպես օրինակ, եթե շունը միալար սուր, մելամաղձոտ ոռնում էր, ոչ թե հաչում և նայում տան դռանը կամ լուսամուտին, դա նշանակում էր, որ այդ տնից մեկը մեռնելու է, կամ այդ տանը մեծ դժբախտություն է պատահելու: Եթե նա այսպես ոռնում, նայում էր դրացու տան դռանը կամ լուսամուտին, դրացու տանն էր նման դժբախտություն պատահելու: Եթե նա դեպի լուսին կամ երկինք էր նայում և ոռնում, նշանակում է ընդհանուր մի աղետ կամ կոտորած էր լինելու:

Հավատում էին, որ երեխաներին մեռցնող չար ոգին շնից վախենում էր, ուստի այն ծնողները, որոնց երեխաները չէին ապրում, նոր ծնված երեխային (տղային) շան անուն էին դնում, թեև հետագայում այդ տղան վիրավորանք էր զգում: Բայց չէր փոխում, համոզված լինելով, որ կարող էին չարքերն իրեն էլ մահացնել:

Շան մասին կար և այն կարծիքը, որ ինչպիսի վերք էլ լիներ, շան լիզելով կբուժվեր:

Շան լիզելով վերք առողջացնելու այս ավանդությունը հիշեցնում է արալեզ շներին և, հավանաբար, այդ ավանդության մնացորդն է:

Կատու սպանելն ամենածանր մեղքն էր համարվում, որովհետև նա Քրիստոսի դաստմալն (սրբիչն) էին համարում: Կատու սպանելու մեղքից կարելի էր ազատվել միայն եկեղեցու դռանը մատաղ անելով կամ աղոթք կարդալ տալով:

Կատուն համարվում էր միաժամանակ գերեզմաններից դուրս ելնող, հողում չսթրող չար գոռնափշտիկի պատկեր: Դրա համար զգուշացնում էին տնեցիներին կամ բարեկամներին, որ գիշեր ժամանակ կատվի ետևից չգնային, գերեզմաններում տեսնվող կատուներից նույնպես զգուշանային: Դրանք մարդուն խաբում, իրենց ետևից տանում և մեռցնում էին, ուղարկում մեռելների աշխարհ: Այնտեղ, որտեղ հասնում էր գոռնափշտիկ-կատուն և ուզում էր սպանել իրեն հետևողին, իբրև թե ինքը դառնում էր հսկա մի մեռել, կմախքացած և սարսափե-

լի տեսքով, որին տեսնողը սարսափից մեռնում էր կամ ալք էր դառնում և խեղդում իրեն հետևող մարդուն:

Երբ կատուն թաթիկն իր լեզվով թրջում է և երեսն ու աչքերը լվանում, նշանակում է տունը հյուր է գալու, իսկ եթե նույն ձևով գլուխն ու մարմինն է լվանում, անձրև է գալու, եթե կրակին շատ մոտիկ է նստում, այրվելու աստիճան՝ ձյուն է գալու, եթե դուրս է գալիս և արածում՝ թանկություն է լինելու, բերքն է պակասելու:

Սասունցիները հավատում էին, թե ձին կարող է գուշակել: Երբ ձիով ճանապարհ էին գնում, և վերջինս դժկամում էր, չէր գնում, կանգ էր առնում, համառում էր և քշելու, առաջ տանելու միջոցները չէին օգնում՝ ձիավորը նրանից իջնում էր, սանձը բռնելով քաշում: Երբ նա նորից չէր գնում, հավատում էին գալիք վտանգին: Ձիավորը հրաժարվում էր ճանապարհը շարունակելուց և վերադառնում էր տուն:

Ձիու գանգը կախում էին արտերի մեջ, որպեսզի չար աչքից արտը չվնասվեր, բերքը չպակասեր:

Հրեղեն ձիերի մասին ավանդություններ կային: Հրեղեն ձին ամեն մարդու չէր երևում, ով քաջ ու հերոս էր, միայն նա կարող էր տեսնել այդպիսի ձիերին: Ձին իմաստուն էր համարվում:

Սասունցին իր եզը սիրում էր ոչ միայն որպես լծքաշ, այլև որպես կյանքի և աշխատանքի իր չարքաշ ընկերը: Լավագույն, երկար տարիներ աշխատող հայտնի եզը սիրվում էր: Այդպիսի եզը, երբ պառավում, սատկում էր կամ մորթում էին, գանգը գոմի դռան ճակատին էին կպցնում և երկար տարիներ պահում: Էմակտար եզան ոսկորներն էլ տանում էին առանձին, մաքուր տեղ պահում:

Աքլորը բարի լույսի թռչուն էր համարվում, գիշերը փախցնող՝ լույսը բերող: Աքլորի կանչը բարի լույսն է, երկնքի շնորհը աշխարհին: Աքլորի քայլը դանդաղ է նրա համար, որ ոտքերը գետին չխրվի, աշխարհը չկործանվի, իսկ երբ կտուրն է բարձրանում, միայն մի ոտքի վրա է կանգնում, որ տան գերանները չկոտրվեն, տունը չքանդվի: Աքլորը չի կանչում մինչև երկնքի աքլորի ձայնը չլսի, լինի ցերեկը, թե գիշերը: Աքլորը եթե անժամանակ է կանչում, երեկոյան թառելիս կամ թառելուց քիչ հետո, դա «խեր է», լիության և առողջության նշան: Երբ հավը աքլորի պես կանչում էր, այդ հավի գլուխը դնում էին սեմի վրա և կտրում: Դա ձախորդության և մահվան նշան էր: Սև հավի արուն դեղ է փորացավի, պայմանով, որ ոչ մի այլ գույնի փետուր

չլինի: Հավի մանր փետուրը կարմրացնում էին վառ գույնի և փեսայի պսակի և ուռքի վրա զարնում էին երեք տեղով, երեք թևանի, որպես խաչի թևերի զարդ: Աքլորը, հավը մատաղ էին անում: Ամենահարգի մատաղը աղավնին էր, որի վրա ոչ մի որսորդ հրացան պարպելու իրավունք չուներ և չէր արծակի: Ընտանի կենդանիների մասին այս հավատքը տոտեմական մնացուկ է:

<u>Բնության երևույթները</u> - Աշխարհի չորս կողմերը կոչում էին արևիլք, արևպատք, հյուսիս և հարավ: Իբրև քամու ուղղություն էին կոչվում հյուսիսու կամ հարավու քամի: Նրանք հավատում էին, որ երկինքը պատռվելիս աշխարհի վերջն է լինելու: Սասունցիները բնության երևույթներին հետևյալ բացատրություններն էին տալիս:

Արևի և լուսնի շուրջը նույն օրում եթե կամար էր կապվում, իրար չեզոքացնում էին, իսկ երբ միայն լուսնի շուրջն էր կապվում, անձրև կամ ձյուն պիտի գար (ձմռանը): Նույնը պիտի պատահեր, եթե միայն արևի շուրջը կամար կապեր:

Երեկո կամ գիշերը չարը «կանուկ» է (կանգնած է), ճամփա գնալիս ջրի վրայից անցնելիս «Հիսուս-Քրիստոս» էին ասում, որ չարը կորչի: Իսկ առավոտները «Աստված չարը բարի դարձնես» էին ասում, աղոթում: Արևով երդվելը մասսայական երևույթ էր Սասունում «Ըմ արիվն ու քում», «Արիվ տըվըց քըզը» (մեռավ արևը տվեց քեզ), «Ձքու արիվ չուդըս» (անեծք, այսինքն՝ մեռնես): «Վարդանի արևը, Կիրակոսի արևը» (երդում նշված հարգելի անձնանուններով) և այլն:

Հաց թխելիս գդալով, նշխարի դաջով կամ մատների միջոցով նախշում էին: Ճառագայթի գծեր քաշում «Ծաղի» վրա (նախշված գաթայի):

Արևի խավարումը «արիևհեղութիև»-ով (արյունահեղություն, պատերազմ) էին բացատրում: Արևի խավարման դեմ պայքարի միջոց էր հրացան կրակել, մատաղ անել, Աստված կանչել: Բնորոշ է, որ բնության դեմ էլ զենքի էին դիմում:

Լուսնի «նուր ու փուլը», նրա ձևափոխությունը բացատրում էին այսպես. լուսինը նոր եղած ժամանակ երեխաները հիվանդ են լինում, իսկ փուլ եկած ժամանակ առողջ:

Նոր ու փուլի դեմ պայքարի միջոց էր. պղնձե դրամներից լուսնի ձևով կարում և կախում էին երեխաների վզից, որպեսզի չհիվանդանան: Լուսնի քանի օրվա լինելն իմանալու համար մի շղարշով ծածկում էին դեմքերը, աչքերը և քանի ճյուղ

որ երևար լուսինը, այնքան օրվա էր համարվում: Վերևի արտևանունքի վրա ցուցամատը երկարացնելով և սեղմելով աչքի ուռուցքի վրա, դարձյալ ճյուղավոր է երևում լուսինը, և քանի ճյուղ որ երևում է, այնքան օրվան է, ասում են: Հաշվում էին նաև տարեթվով և ամսաթվերով էլի գտնում:

Լուսնի խավարումը նույնպես ձախորդության կամ պատերազմի նշան էր և հրացան էին կրակում, մատաղ անում կամ աղոթում Աստծուն, որ վերջ տրվի լուսնի խափանմանը:

Կիսալուսնի ձևով զարդեր կային «գյարդալեխի» (մանյակի) վրա, մեջտեղը: Քըմե ռախստու (գագաթ) և Ֆինոյի ծոպերից կիսալուսին էր դրվում:

Աստղերը ըստ մարդկանց թվի էին համարում: Մարդը մահանալու ժամանակ իր աստղն էլ «ճապղում» (անցնում) էր, նորածնի հետ նոր աստղ էր ծնվում մինչև նրա մահը և «ճապղում» նրա հետ՝ մանուկ, երիտասարդ կամ ծեր հասակում:

Աստղերի անուններից սասունցիներին հայտնի են Լուսաստղը (Արուսյակ), Քուլքը (Յոթնաղբեր), Կարվան կորուսը (մի աստղ), Շահինկ (կշեռք), Լեյլի և Մեջնուն ու ուրիշ աստղերը:

Լուսաստղը տեսնելիս նշանակում էր, թե մոտ է լուսանալը, աքաղաղները կանչում են: Քուլքը նույնպես ժամանակացույցի դեր էր կատարում: Կարվան-կուրուս ասել էին, որովհետև կարավանավորները տեսնելով այդ աստղը և կարծելով թե լուսաստղն է, ճանապարհ են ընկնում, գնում, սակայն լուսաստղը չի լինում և անծանոթ վայրերով գնում վնասվում, որի համար աստղերը կոչվում էին Քարավան-կորուս:

Հովիվները որոշ լուսավոր աստղերի շարժման հետ էին կապում ոչխարների «շավի հանելը» (գիշերն արածացնելը), տանից արոտ տանելու կամ ընդհակառակն, արոտից տուն բերելու համար:

Դեղթափը մի երկնային քար է, կարկուտի հետ ընկնում է երկրի վրա, գտնողներն այդ գունավոր քարը ամենաբուժիչ են համարում և մարդկանց ամեն հիվանդության և անասունների բուժման համար գործածում՝ դեղթափը ջրի մեջ դնելով և ջուրը խմելով:

Սանամոր էրդի (հարդագող) մասին պատմում են, որ մի քավոր սանամոր հարդը գողանում է և երկնքով գնալիս հարդը շաղ է գալիս երկնքով մեկ, որից և այդ աստղաշարանը կոչվում է «Սանամոր էրդ» (Սանամոր հարդ կամ հարդ-գող):

Պոչով կամ գիսավոր աստղին ասում էին «Մուրքով աստղ» (Մորուսով աստղ), որից կարող է աշխարհը կործանվել:

Աղեղնակ (ծիածանը) տեսնելիս բերվորները (կթվորները) գնում են ջուր բերելու, որ եղը շատ լինի: Աղեղնուկի մի ծայրը եթե ջրի մեջ է իջնում՝ անձրևի նշան են համարում: Աղեղնուկի տակից եթե մարդ (տղա) անցնի, կդառնա աղջիկ, իսկ եթե աղջիկն անցնի, կդառնա տղա;

Որոտը եթե խուլ է լինում, նշան է, որ ձյուն պիտի գա, իսկ եթե ձայնը «լիստակ» է (հստակ, հնչուն)՝ անձրևի նշան է: Որոտը շատ ուժեղ լինելիս կարկուտի գալու նշան է համարվում:

Եթե կայծակը մարդու վրա զարներ, այդ մարդուն կթաղեին հողի մեջ, միայն գլուխը բաց թողնելով, որով և «բուժվում էր»: Կայծակը չարին էր խփում, մարդը կամ ինքն էր չար եղել, կամ իր գտնված տեղում չարք էր եղել:

Տանը կամ մարդկանց մոտ, կայծակնահարությունից ազատելու համար, երկաթի կտորներ էին դնում: Կայծակի ժամանակ շեմի (սեմ) մոտ չէին կանգնում, որովհետև շեմի տակին են չարքերը պահվտում և կայծակը նրանց խփելով՝ կարող էր վնասել այդ կանգնածներին: Կայծակից ազատվելու համար «Քրիստոս-Աստված» էին կանչում, որ չարերը փախչեն, և կայծակը չխփի իրենց:

Կարկուտը տեղում է պաղք լինելու պատճառով, ասում էին: Արտերը կարկուտից պահպանելու համար աղոթում էին: «Տերնդեսի բզոթ» (Տյառնընդառաջի) էին գցում իր ժամանակին:

Անձրև բերելու համար էշի միայն գլուխը կամ խաչքարն էին լվանում, նաև արդար կամ անվանի մարդու գերեզմանաքարը: Ամպերը համարվում են ջուր խմողներ. նրանք իջնում են գետի կամ ծովի վրա, ջուր խմում և բարձրանում երկինք՝ անձրև թափում:

Քամիներ առաջ բերելու և կալում հարդը ցորենից բաժանելու համար քուլաշը թեղ էին անում (հավաքում) և ապա կալվորը պատում էր թեղի շուրջը, վերցնում հոռսելեն (հեծանոցը) և նրանով դարման ու ցորեն թեղից վերցնում գցում վեր ու «հայդար, հա հայդար» կանչում, շրջում, որ քամի գար: Ֆիկում (սուլում) էին, որ նույնպես քամի գար և կալը մաքրեր: «Սատանի քամի»-ն բուլղջիկ էին ասում սասունցիները և կարծում էին, թե առաջանում է սատանու արագ վազելուց և վեր բարձրանալուց: Երկիրը, ըստ սասունցիների, ձկան մեջքի վրա է կանգնած: Ժաժքը (երկրաշարժը) առաջանում է ձկան շարժումներից: «Աշխարհը ձկան պառեկի (մեջքի) վրա է, իսկ ծունկն էլ ծովի վրա» - ասում էին:

Սասնա հավատքի մեջ էր մտնում մեծ պասի պահապան ճոճոն՝ իր հետ կապված սովորություններով: Մեծ պասի առաջին օրը՝ երկուշաբթին կոչվում էր <u>մկան երկուշաբթի</u>: Այդ օրը բոլոր ամանները լվանում էին, որպեսզի տանը պասոտ աման չմնար: Այդ օրը, հայերը և քրդերը, **ֆերախշո** (աման լվալ) էին անվանում: Տան բոլոր անկյունները, հատակն ու առաստաղը մրից, կեղտից **Զուհլըրիկի** թելերը և կեղտերն ու փոշիները մաքրում էին: Այդ մաքրությունից հետո վերցնում էին մի մեծ սոխ, նրա կենտրոնից՝ տակի մասից, մի թել էին անցկացնում և բուխերիկի վերի մասի աջ կողմում, մի գերանից կախ տալիս: Այդ սոխի վրա յոթը հատ թռչունի թևի փետուրներ, իրարից հավասար հեռավորության վրա, խրում ու թողնում էին: Այդ կոչվում էր **ճոճո, ֆռիկ** (պտտվող) կամ ակլագուզ: Նա շարունակ պտտվում էր շնորհիվ օջախի վառվող կրակի, ծխի և օդափոխության: Պտտելիս ճոճոյի թելը ոլորվում էր, ապա **փտոլորվում** (հակառակ կողմ ոլորվում) և միշտ շարժման մեջ էր լինում: Այդ միակ երկուշաբթին էր, որ մեկը բարձրանում էր երդիկը ծածկող քարի վրա, մի տափակ փոքր քար ձեռքին և քսելով ու պտտեցնելով **երդածակի քարի վրա**, բարձր ձայնով կոչում էր. «Աղամ, աղամ, գի՞նչն աղամ» ու պատասխանում. «Աղամ, աղամ զկարիճներ, զօձեր, զմկներ»... հիշատակելով բոլոր վնասակար կենդանիներն ու միջատները: Այդ օրը հատկապես **մկան երկուշաբթի** էր կոչվում, որովհետև մուկն էր տան հացահատիկն ուտող վնասողը և նրան **աղում** էին առաջինը երդածակի քարի վրա: Այդ օրը Բարեկենդանի վերջին օրվա կերուխումից մնացած մսեղեն, յուղեղեն, պասեղեն մթերքները՝ **կոճոնքները** հավաքում և տալիս էին քրդերին, եթե քուրդ հանդիպեր, և հատկապես հանդիպում էին՝ գիտենալով կոճոնքի առատության մասին:

Մեծ պասը խորհրդանշում էր մարդու քաղցը, տառապանքը, տանջանքը և վերջապես Քրիստոսի մահն ու հարությունը: Այդ ժամանակաշրջանը յոթը շաբաթ էր:

Ճոճոն կամ ֆռիկը (ակլադուզ) մշտապես շարժվող, պտտվող կյանքն էր, որ յուրաքանչյուր շաբաթ իր յոթը թևերից մեկը կորցնում էր, մեռնում հետզհետե յոթը շաբաթվա ընթացքում և յոթերորդ թևի անկումով հարություն առնում: Հարությունը գարունն էր, բնության զարթոնքը, որ տոնում էին «Կարմիր Զատիկ» անունով:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԱՌԱԾՆԵՐ, ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ
1. Հանելուկներ

Սև սար, Սպիտակ սար՝ խաթուն մեջը բլբլա (աչք):
էրկու աղվես մըջ ձորին ժամ կանըն
(ջուլհակի գործիքը հորի մեջ):
Խուտ կուտե՝ ոչխար չէ, հավկիթ կածե՝ հավ չէ (կրիա):
Ան ո՞ւվ է, ան ո՞ւվ, վըր զըր տուն շալկիա կօլրտը (կրիա):
Կուզ կըզավ, պառապ հեծավ (խաչերկաթ, պուտուկ):
Ամպը գոռաց, ձյունը սըռաց (մաղն ու ալյուրը):
էրկինք հով, գետին ծով, եզը ծնավ, բերըց կով
(Ադամ և Եվա):
Ձիզ տարան վըր ջրին, իզը չխմըց, կապը խըմըց
(ճրագ և պատրույգ):
Անդին դար, ասդին դար, մեջն անդադար
(կամուրջն ու գետը):
Սլոն էլավ սև սարը, բերեց տասը հազարը
(ածելին և մազերը):
Մաղըմ հավկիթ դրը վըր էրդից, լուսուն էլա չկեր (աստղերը):
Կումըմ օչխար ունըմ, ամնու քիթ օզուր է (ծուռ է) (սիսեռ):
Գաշե գանիք, մաղե ցվիք (աչք և արտևանունք):
Գերթա կիղ գիկա, հովն իրին չիկա (ձայնն ու արձագանքը):
Շըռըն դագը, տիբոդը (տակը շռեն, կատաղում է)
(ջրաղացը և ջուրը):
Իզը սարու վրա կոռաց, կովը ձորու մեջ հղացավ
(ձյունի հուսիհնը):
Նեղ փողան, էրգեն սողան, սարգավակները մեջը տողան
(մեղուն և փեթակը):
Ճոբոն հուղ, մորուք շուղ (շաղգամը):
Ռաբատեն՝ կախվավ պատեն (մուրը՝ բուխարիկի):
Սիվ ուլիգ փեդե բոչիգ (սև չամիչ):
էրկու բնիգ, մեկ սնիգ (քիթը):
Չուրս քուր մեգ քոշքը տակ (կովի պտուկները):
Չուրս վըր հողուն, երգուս վըր դողուն
(ձիավորի և ձիու ոտքերը):
Գանը (եթե կանգնի) չարեգիմ տըխ կբռնե, վըր նըստը էզա-
նըմ տիխ (դուռը):

Անծնելին շալգըց զանպուսելին, հարավ (անցավ) զանքնելին
(չքնացողը)
(ջորին, աղը, գետը):
Ընձը պանըմ գա, գերթա, գոլըրդը, իրգուն գիկա, զքիթ գախե
վըր ծըխուն (գուլպա):
Ընձը հինգ աղպեր գա, հնգը գլուխ լե սպիտակ լաթ գապուգ
(մատներ և եղունգներ):
Քըստ հունա, քըստ հունա, ռըքով նստավ հունա (ավելը):
Ջրի դեղ, էլավ Բիթլիս,
Թամուզ (հուլիս) ամիս, եղավ կըցիս (դդումը):
էնտին թուշ, էստին թուշ, մէճին հադ մը նուշ (հավկիթ):
Մեգ ջուխտ եզ ունեմ զպոլուր (ամբողջ) աշխարհ գցանե,
մեգ գդուր (կտոր արտ) ունեմ, չդառնա ցանե:
(Աչքն աշխարհը տեսնում է, իր ճակատը չի տեսնում):
Գաշե (կաշուց շինած) ցանգիգ, մաղե ցվիք
(աչք և արտևանունք):
Թուփ - թուփ կից ավետրան, գուգ - գուգ կըց լեսան (սունկը):
Գուզ գզավ, արաբ հեծավ: (Խաչերկաթ և պուտուկը):
Մեգ (մի) ցախ, էրգուս գախ,
Վերում իկամ (գամ) ծըր գուն իգաս զըմ հախ (Կշեռք):
Ամբն օրորաց, քարվան շորորաց,
Ամբ տու մանցը (մնա), քարվան տու տարծը
(մեռելը և հուղարկավորները):
Աղլեզներ, քաղլեզներ,
պարծուկ (բեռցած) եզներ (հնձվորն ու օնվորը):
Սև ալոչիկ (այծիկ) վըր էղուրջին,
Բռնը պոչիգ (պոչիկը) թալըմ քոզիգ (տնակը)
(չամիչն ու բերանը):
Իր մամ ըմ մամուց է, ինք լէ իմ դալոճ
աղբոր դղծն է, իրար ի՞նչ գիկան
(ի՞նչ ազգական են մայր և որդին կամ տղան):
Աղվիս վազե - վազ,
Կլուխ քառսուն կազ (արշընն) (մաքոք և մասրան):
Նա (ոչ) հոկևոր, նա շնչավոր,
Ջմարդ գդանե կըց ծիավոր (լուծ ընկնելը):
Ջգով (կովը) դարա վըր ճրին
գով չխմեց, գաբը (կապը) խմեց (ճրագն ու պատրույգը):
Առաճ չուրս օդնեն (նախ չորս ոտանի),

Եդիմ հեղ երգու օդնեն (ապա երկու ոտանի),
տարծավ իրեք օդնեն: (Դարծավ երեք ոտանի) (մարդը)
էն ի՞նչն է, էն ի՞նչ
վերում գիլա (վերցնեմ լաց կլինի)
տրըմ չիլա (Գետին դնեմ լաց չի լինի) (գութանի շղթան):
էստիխ ցանըմ
Հալեպ քաղըմ (նամակը):
Անճուր ճաղաց, անգրագ պաղարճ (մեղրահաց):
Ես ու ճիճոն կացընք սար,
ճիճոն չըր էղը գմնեք սար (ճիճոն եթե չլիներ, ես կմնայի սար)
(լագան և մարդը):
Փեդե օրուց, մսե դղա,
Քանի զարգըմ գվզվզա (Աղեղն ու լարը):
Քառսուն տուն,
Մեկ սուն (տրեխը և թելը):
Արջ մռմռա,
Փոշին գսռսռա (ջրաղացաքարը և ալյուրը):
Տուրս գմորթըն,
Գանը գփեդնա (սատկի) (ջուրն ու ջրաղացը):
Նստը դագ,
Լորխը ձագ (երկանաքար և ըմբուքը).
Հինգ աղպեր գա, հար իրգուն վըր բադին
Գաշխադըն, իրիկուն վըր բադին կքընըն (գուլպա և ճաղեր):
Ճոճոն նստը վըր առվուն,
Քառսուն լաչիգ վըր ուրուն (կաղամբը):
էնտին տար, էստին տար,
մեջն է անդատար (թոնիրը, օջախը) (օրորոցը և երեխան):
Գարմիր շուն
Գաբուգ մըճ կոմուն (լեզու):
Վըր էրդիքին տրը մաղըմ քար (կամ հավկիթ)
Լուսուն էլա հադըմ լե չկար (աստղեր):
Ուալաթե մ գիկամ հուղ չկա,
Օի մը հեծա հոգի չկա,
Հրիսեմ գերա օսկուր չկա:
(մոր արգանդը, օրորոց, մոր կաթը):
Սև էր կըց սաթ,
սպիտագ կըց գաթ,
լուսուն գգանչե սալավաթ (անծեղ):

Հինըմ սպիտակ,
թեմըմ գարմիր,
գդրըմ սիվ (մորմի պտուղը):
Խանըմ նստիյա խանըմնագ (խանումի նման)
զմազիր գհուսկե թուրքընագ (թուրքի նման)
զաշխարհ կուտե ինք միևակ (ջրաղացը):
էրգու կլխեն,
մեգ պերնեն (ծումծը):
էնտին փագ, էստին փագ,
մեջն է հազար ձագ (մաղը):
Խոտը (կոճղ) կլորավ
Ջուխն էլավ (թուխսը, ձագերը):
Իրիք (երեք) սուն
Ութը վադ սուն
Գանե քանի սուն (11 սուն):
Գերավ խոտ, քքըց փոշի (ղալյուն):
Ամպ օրոդաց, ձուն (ձյուն) թորորաց (մաղն ու ալյուրը):
Աճառը (բուղան) սարը բոռաց,
Գովն օվդի (հովիտի) մեջ հղացավ (ձյան հուսին և ձորը):
Սև ուլիգ,
Ցանգադագիգ (աչք և արտևանունք):
էրկու կոմիկ,
Մեգ սունիկ (քիթը):
Քարէ սուն,
սունի վրեն բուն,
բունի վրեն շուն (միևարեթ, գլխի վանդակը):
էն ի՞նչն է, էն ի՞նչ,
նա (ոչ) գնել գիկա,
Նա ձախիլ գիկա (քունը):
էրգեն (երկար) ալուկ (ճյուղ),
ձերը ձալուկ (ծալված) (գըլգիլի ցողունը և հասկը):
էրգու դագ,
դասներգու ձագ (լականը):
Ջարգըմ սուն,
լընքնա դուն (ճրագը):
Գաքավ նստեր փշի վրա,
Օսկե օղը թշի վրա (կեռասի կամ աղվիթի տերևը և պտուղը):
Քառսուն աչեն էրգու բոչեն (չարուխի կապիչները և թելը).

Մարակ չվառավ
տարման վառավ (խալուն):
Սիվ սարիգ ցանգադգիգ, հատըմ զորեգիգ
Ըր պունձգիգ (հետույք) (թուղ):
Ընձը պանըմ գա աշխար վըր շինվիրա, ըր
Քառսունք տառ չքըմը (լուսինը):
Գբում (վառեմ) լուս, քելամ արդերով (լուսնի լուսը):
Ան ի՞նչ մեշա է, վըր մեջը շիտակ փետ չկա
(ոչխարների պոզերը):
Սուն զարգացը չայրի մեճ, չայիր փդավ,
սուն չփդավ (գուլպան և ոտքը):
Չուրս ախպեր մեգ կտակ (գլխարկ) (սեղան)
Մեգ դուն (տուն), երգու դուռ, ինը հատ
շբաք (լուսամուտ) (սրինգը):
Չուրսը գախման, չուրսը գոխման (կոխելու համար)
էրգու խշտիկ, մեկ գըրփփիչ (պոչ) (կով):
Էնտին տար (փակ), էնտին տար մեճը գուրե
հար (կատաղած գայլ) (թուրն ու պատյանը):
Ընձը պանըմ գա (կա), աշխարք էրգիր (երկիր) մեջն է (մարդու ականջները):
Էն ի՞նչ շբաք է (լուսամուտ), վըր գհաց մեճը
գձեձըն (բերանն ու ատամները):
Էն ինչ դուն է, վըր էրգու հազար մարդ
մաճին (մեջ) գերթա, կեդնով (գետին) չէրթա:
(գամին - նավը):
Էն ի՞նչ կում է (գոմ), վըր հազար օչխար
գերթա մեճ, մեգ փաթիլ խուդ չէրթա մեչ
(մրջյունի բույն և մրջյուններ):
Քար զըռի, փշկուլ ֆըռի (էշը զռաց, թրիքը թռավ):
(հրացանն ու գնդակը):
Տիբընըմ գօռջա, չտիբընըմ չօռջա
(ձեռք տամ կորոճա, ձեռք
չտամ չի որոճա) (Մկրատը):
Հարիր նուր հարս մեգ շաբգը (շապիկ) դագ
(նուռ և հատիկներ):
Ատամորտին հեդ հուշափին (վիշապ), թամքը
տրած, հուշափ կնաց, թամքը մնաց:
(մեռնող մարդը և հոգին):

Քանի պառծավ (բեռ վերցրեց) էդվունց տարծավ
(ետ դարձավ) (գդալի դեպի բերանը գնալ գալը):
Խազի բը խիզեվա, մալա բը ժեննեվա, չուն
բը ռեվա, դին դարըկ սեվա, չար հաբ -
տեդա, հար եկ հաբըկ ճընի, հաբըկ մա պեվա:
Չանդ մարըվ բուն (խազիի աղջիկը մոլլի կնիկն է):
(խազին իր աղջկա հետ, մոլլան իր կնոջ հետ,
ճամփա գնացին, խնձորենի մի ծառ տեսան, չորս խնձոր վրան, ամեն մեկը մի հատ քաղեց, մի խնձոր մնաց ծառի վրա, քանի մարդ էին (երեք մարդ):
Իրնեմ չէր, իրնեմ բուսավ (պոծեխին):
Թանամ քընխքընխցում,
Ծակէն դուրս ընցում (ասեղն ու թելը):
Ըմ հեր ըր մոր մոդեն է,
Ըմ դալուջ աղբոր տղեն է (մարդ և կին):
Քռնուկ դադեն (խարույկ)
Կախվավ բադեն (մազն է):
Լաբստակ փեդի վաստակ, վազե, վազե, փուրը դարդակ (ջուլհակի մագոգ):
Դուրս կմորթեն, ներս կմեռնի (ջրաղաց):
Կկապեն կքալե, կարծակեն կկենա (տրեխը):
Էն ի՞նչն է, վըր 15 ցորենով կեղնի մի բոկոն (լուսին):
էրգեն արդ, գարջ կտրի, սմբուլ դդա կնա, արի (մքուք):
Քանի սաղ էր, խուդ ու տարման գերավ,
Որ մեռավ, միս ու արուն գերավ
(էշի ծնոտ, որով Սամսոնը իր թշնամուն սպանում էր):
Էն ո՞վ էր, որ կազանից մեղր գերավ
(Սամսոնի սպանած առյուծի մարմնում մեղուները մեղր շինեցին):
Քար քարի վրա՝ քար չէ, լեռ-սար գարածե՝ դավար չէ,
Հավկիթ կածե, հավ չէ (կրիան):
Մեգ, երգու, երեք՝ մեգ եմ, ամենուն առաճն եմ, առանց ինձ բան չի գատարվի, չմտածես, թե ես աշխարքի տերն եմ
(«Ա» տառը):
Խզը հնչաց, հնչավորավ, էրգու գոտոշի մեճը
Լուսավորավ (փուքսն ու կրակը):
Ութը ուտք, էրգու գլուխ, վրեն փեդ (փայտե) է, տակը քար է
(Կամն ու եզները):

Ընծը պան ըմ գա, հար իրգուն գերթա օլըդը.
Իրգուն ճիռըմ (ճյուղ) գդրէ վըր ուսին, գիկա դուն (այծը):
Զարգըմ քարը չգոտրը, զարգըմ ճուրը գգոտրը (թուղթ):
էն ի՞նչ դիխ էր, որ մեկ անգամ մինագ արև տիբավ
(Կարմիր ծովի հատակը՝ Մովսեսի գավազանով բացված):
էրգեն վզիգ, պարագ բոչիկ (քարմանը):
էն ո՞վ էր, որ էրգու անկամ մեռավ (Հովնան Մարգարեն):
Հազար կնաց, հազար եկավ, լըխլըխ փաշեն
դեխուն չելավ (դուռը):
Բաբուն մեջքը կցավա, դղուն կլուխը (գերան, սյուն):
Կոմըմ սպիտագ ոչխար է, թավդընու (բոլորի) քիթ սիվ է:
(գըլգիլը):
Ընձը դունըմ գա, մեջը լիքը ջոջքար է (սպիտակ քար):
(բերան և ատամները):
Բաժը (հասակը) կըց սուն մը, հատիկը կըց լու մը
(կանեփի հատիկ և ճյուղը):
Ճոբոն հուդա (այստեղ),
Գլուխը հունա (այնտեղ) (դդումը):
Անտուռ եղգացը (եկեղեցին), տանգով պացըցը (ձմերուկ):

Տայրիր

Տայրիր էգան թռման գընցնեն էրգնքով:
Դեսան քանի մա տայր հընդին կեդնը վարեն
Տրուգ: Վերին տայրիր ասեցըն «պարև» ձըզը հարիր տայրիր:
Ներքին տայրիր ասեցըն «Աստծու պարին, հազար պարով,
բալե մաքիկ (մենք) հարիր չըք: Աբա տըք ինչքա՞ն եք: Մաք,
կաց մըզըլա, կաց մար գես, կաց մար գիսու գես լե, տըք լա
մար վարեն, գինիք հարիր» դա դես ինչքանըն կեդնը վարեն
(36 թռչուն):

Առածներ

Աչքը սարիր, ոտքը քարիր:
Աձան հավը կչկչան գեղնը:
Աստված զսար կդեսնա, զձուն գդրե:
Աչքդ ո՞ւվ է հանը.-աղպերս:-Լոմա խորուն է.
(դրա համար խորն է հանել):
Աշխարհն անց, բառավ տարծ (աշխարհը կործանվում է,
մինչդեռ պառավը հարսի պես հերանց տուն դարձ գնալ է ու-
զում):
Աղին կիզ չըն թողը, գասե զըմ զենքիր դարեք ռեսը դուն
(անկոչ հյուր եղող աղան):
Առյուծն առյուծ է, թեկուզ արու, թեկուզ էգ:
Աստծու պահած կառը կելը չուդե:
Կեղը դերդրուն «օրհնյա դեր» չկա:
Կելն օչխրին չհասավ, ասըց. «Թող էրթա ըմ բաբու հոկուն»:
Կիղ գանկնը, կերան կոդրը:
Կուղ-կուղից կողցավ, Աստված դեսավ զարմացավ:
Կուղ վըր դնից էղնը, զիզն էրտածագուց կհանե:
Թե վըր դունը միծ մարտ չկա, միծ քարըմ գա:
Էդիվ խաչին (տոնից հետո) ջրդոր (ջրի հերթը) քեզի:
Իշուն պանջար խաշե, չգերավ, վըր գլխուն քաշե:
Իշու վրա չդառնա, զփալան գձեձե:
Լսե մեձին, չընգնըս ամբհնեձին (մութ գիշերվան):
Լսե մեձին, քեզ չձեձին:
Ծուռ ագոսը տահ (քավքառ) էզան (եզին):
Խուփ կլորվավ, կտավ զբուդուգ (իրար արժեն):
Խրադ-մրադ վըր խփան, տոտզաց (շարժվեց) թփավ թան
(խրատը չլսել):
Գադվի վազիլ հաթա (մինչև) մարագն է:
Գուժը ճրի ջամփին գգոդրին:
Գուշտը անոթուն մանր գպրտե:
Հավը վըր հավ է, ճուր խմե, էրգինք գաշե:
Հացը դուր հաց էփողին, քըխ հացըմ լե բագաս էղնը
(գործը վարպետի պետք է տալ):
Հաթա առուն ճուր իկա, կորդան աչքիր տուրս գիկա:
Ջիժը (երեխան) մըհանա, մամը գշտանա:
Ջուղը գելա, վըր քոքին գերթա:

Չրակն ըր դագին լուս չիտա:
Ճուճուն գածե, պոպուն գդանե (անտերություն):
Ձմամը դիս՝ զաղճիգն առ:
Հար ազն հասավ, մադաղ հալավ (հալվեց):
Հար Շուշանը խմլվորը (զարդարվի) բադարակ գվերճավորը:
Շադ տադողին շալե շաբիկ:
Շադ անձրիվ է էգը (եկել) վըր կելուն, էն լե գերթա հադ էլուն:
Շադ մի սիրե ադիլ գա, շատ մի ադե՝ մեռնիլ գա:
Ճաղաց շինըց, մնաց չախչախի՞դ:
Ճուր զըր ջամփեն կընա (գետի):
Դհոլի ձեն հեռվուց անուշ գիկա:
Դան հուրթը (հորթ) տան եզից չվախենա:
Փուշը փուշ է, իքրամն (նվեր) անուշ է:
Բառավ մեգ հաղ գընգնը – վըր կադին, մեգել
հաղ գընգնը տակ չի մնա:
Հավաքըմ կդալով, ցրվըմ շերիփով (անտնտեսվար):
Նալըմ կդիյըմ մանցիա իրիք նալ ու ծիմ:

Շուտասելուկներ

Ծուկ-մուգ մեգ դաբագ. ծուգ սլաց, ծուգ գերա,
մուգ սլաց, ծուգ գերա (արագ ասելիս մուկն էլ է ուտվում):
Ուլն էլավ ուռի ձառ, ուլն իր ոտով ուռ օլրեց:
Ջուխտըմ չարուխ տրիյըմ ճուր, թե թրճավ, գթրճի, թե
չթրճավ, թըղ ըսկը չթրճը:
Էրթամ բակնըմ Իսրայելի սրահի Սև սան ջադաղ («սանը»
շփոթվելով «շան» հետ ծիծաղ):
Մշու ծորու ճուրն էր ծնճուր
Մշու ծորու ճուրն էր ծնճուր (կրկնելով):

Պատմվածքներ

1. Սասունի Կազ-Քշենք (Քաշքշենք) գյուղի չոբանը ոչխարները տանում է սար արածացնելու: Սարի կազերը քաշում շպրտում է ոչխարի առաջ, որ ուտի: Մշու դաշտեցի մի մարդ սարից անցնելիս տեսնում է, որ չոբանը կազերը սնձի պես քաշում նետում է ոչխարների առաջ: Զարմանում է նրա ուժի վրա և երբ վերադառնում է Մշու դաշտը, իրենց գյուղը, պատմում այդ մասին: Դաշտի ամիրան (իշխանը) լուր է ուղարկում, թե ինքը մի առյուծ ունի, ով նրա դեմ մենամարտի և հաղթի առյուծին, ինչ որ ցանկանա, պիտի տրվի նրան: Մշու դաշտեցին հիշում է կազ-քշենքցի չոբանին և լուր ուղարկում, թե Սասունում մի չոբան կա, նա միայն կարող է հաղթել առյուծին: Ամիրան լուր է ուղարկում, չոբանին կանչում Մուշ: Ամիրան չոբանին հարցնում է, թե կարո՞ղ է կռվել իր առյուծի հետ: Չոբանը պատասխանում է, թե կարող է: Ամիրան չոբանի հետ պայման է կնքում, որ եթե դու առյուծին հաղթես, ինչ որ ցանկանաս, կտամ, իսկ եթե առյուծը քեզ հաղթի՝ ուտի, ջարդի, ամիրան պատասխանատու չի լինի: Պայմանն ընդունում են, չոբանը կանգնում է մեյդան և ամիրայի առյուծին բաց են թողնում չոբանի վրա, որ ձեռքին փայտ էլ չի ունենում: Չոբանը մի ձեռքով բռնում է առյուծի ականջը, իսկ մյուս ձեռքով բռունցքով խփում է առյուծի կողքին, բռունցքը մտնում է առյուծի կրծքի մեջ, այդ ձեռքով բարձրացնում է առյուծին օդի մեջ և շպրտում գետնին: Առյուծը սատկում է: Ամիրան չոբանին կանչում է և ասում, թե՝ ի՞նչ եք ցանկանում ես տամ Ձեզ: Չոբանն ասում է, մի քիչ աղ տաք տանեմ իմ ոչխարներին: Ամիրան ասում է. «Այ մարդ, ոսկի, արծաթ ուզիր»: Չոբանը պատասխանում է. «Ինձ պետք չէ ոսկի և արծաթ. ինձ մի անգամվա աղ է պետք իմ ոչխարներին տալու համար»: Ամիրան կարգադրում է որքան աղ, որ ուզում է չոբանը տվեք իրեն և մի եզ էլ, որ աղը բառնա վրան և տանի: Մի մեծ բեռ աղ են լցնում, մի եզ էլ բերում, որ բեռնի և տանի:

Չոբանն ասում է. «Խեղճ մի մարդու եզը բերել եք, նրա աշխատանքը խափանել, տարեք եզը տվեք տիրոջը, թող իր լուծքն անի, ես իմ աղը կտանեմ»: Չոբանը կոպալը մտցնում է թեռան արանքը, վերցնում գցում ուսին և գնում Սասուն, իրենց գյուղը, որն այդ օրվանից կոչվում է Կազ-Քաշենք. (Կազ-Քշենք – Քաշքշենք):

2. Մշու դաշտում Ալո անունով մի մարդ է լինում, այնքան ուժեղ, որ խոշոր բարդի ծառերը մի ձեռքով բռնում, քոքահան անում, գցում էր: Ալոյի ուժի մասին Սուլթանն է իմանում: Սուլթանն էլ ուներ մի փահլևան, որի մեջքը գետնին գցող չկար: Սուլթանը լուր է ուղարկում, Ալոյին կանչում, որ իր փահլևանի հետ մրցման մտնեն, մենամարտեն: Ալոն գնում ներկայանում է Սուլթանին: Սուլթանը նրան ընդունում է, պատվում և առաջարկում, որ իր փահլևանի հետ մենամարտի: Ալոն հանձն է առնում, միայն այն պայմանով, որ եթե մենամարտի ժամանակ Սուլթանի փահլևանը վտանգվի, իրեն պատասխանատվության չենթարկի: Սուլթանը և փահլևանը համաձայնում են:

Մեծ բազմության ներկայությամբ Ալոյի և փահլևանի մենամարտն սկսվում է: Ալոն բռունցքով խփում է Սուլթանի փահլևանի կրծքին և բռունցքը մտնում է նրա կրծքի մեջ ու փահլևանն սպանվում է: Սուլթանը կանչում է Ալոյին և ասում, թե ինչքան փող ես ցանկանում՝ քեզ տամ, մնա ինձ մոտ և եղիր իմ փահլևանը: Ալոն չի համաձայնվում ոչ ոսկի ստանալու և ոչ էլ սուլթանի մոտ որպես փահլևան մնալու, այլ խնդրում է, որ իր տան դռան արտը տափույով հաստատի իր վրա, որպես ժառանգություն: Սուլթանը տափու է տալիս նրան իր արտի համար և Ալոն վերադառնում է Մուշ: Երբ Ալոն Մուշ է գալիս, Բուլանուխի փահլևանը լսելով Ալոյի և սուլթանի փահլևանի կռիվը և Ալոյի հաղթությունը, ճամփա է ընկնում, գալիս Մուշ՝ Ալոյի հետ մենամարտելու: Մուշ չհասած, դաշտի մեջ հանդիպում է մի գութանավորի, որ իր արտն էր գութանում: Մոտենում է գութանավորին և հարցնում, թե որտեղ է գտնվում Ալոյի տունը: Գութանավորն աջ ձեռքով գութանն ու եզները վերցնելով, օդի մեջ ցույց է տալիս «է՛, էն է Ալոյի տունը»: Բուլանուխցի փահլևանը զարմանում է այդ գութանավորի ուժի վրա, բայց շարունակում է իր ճամփան և գնում Ալոյի տուն, հարցնում, թե ո՞ւր է Ալոն: Ալոյի տանեցիներն ասում են՝ դաշտումն է գութան անում: Այդ փահլևանը մտածում է, որ իր տեսած գութանավորը Ալոն է եղել: Երեկոյան, Ալոն երբ վերադառնում է տուն, բուլանուխցի փահլևանը տեսնում է իրոք, որ Ալոն իրեն հանդիպած գութանավորն է: Հաջորդ առավոտ Ալոն հարցնում է իր բուլանուխցի հյուրին, թե ինչի՞ համար էր արդյոք եկել: Փահլևանը պատասխանում է, թե ինչի համար որ եկել էի, երեկ դաշտում տեսա, այլևս կարիք չկա, հալալ լինի քո անունը քեզի և մնաս բարով ասում է՝ գնում:

3. Հուշփը ջամբէն (Վիշապի ճանապարհը)

Սասնու Գելիեգուզան կէղը՝ Հարմոյ Կոմու տիման (դիմաց) գա շարան ջոջքարիր (սպիտակ քարեր), Խիբլգա աղբըրը գուշտ, աղը «Հուշփը ջամբէն» է: Հուշափը գերթա տադը Գռշկա սարով գգործը (բարձրանում սարը և իջնում մյուս կողմը) Գնգահոդա գալին (ձորը), հոնը այդ հուշափ գդադգը: Հուշփը ջամբու ադ ջոջքարիր գսպիդգը՝ հուշփը փուրը վըր ուրանց քսվելու աբով:

Էդգարդ բգդիգ կիզ մ'է (Տալվորիկում), քանիմ դուն է: Այդ էդգարդու մարտըմ մեղու շադ դբըհէր, օրըմ լա գաշէ, վըր մեղվը ջանջիր թամամ փէքկնուն էլան, կացըն, գորան: Գէլա գօլըրդը զըր զանջիր, գէրթա Գնդահոդա գալին, գաշէ, վըր ջանջիր թամամ թափըլըն վըր ադ հուշփը լաշին (սատկած մարմնին): Քանիմ օր գանցնը ջանջիր գդառնան գիկան, մըճ փէքկընուն: Այդ դարին միղր շատ գեղնը: Մեղվացը դէր զմիղր գքաշե, չըն իշխընա ուդը, գասե ժահր է, զմիղր գպառնա ու գդանէ էրթա Հալաբ, էնդին գձախէ, ըր Հազրուն գասէ տեղվալուգ է (թունոտ է), ուվր ուդէ, գմէռնը, ադուր համար է դարը օդար էրգիր ձախը, վըր զընք չջանջնան, ընք լա շուդշուդ գձախէ ու գդառնա իկա էդգարդ:

Հալբու աշխարհ զադ միղր ուվր գուդէ գսախնա, քոռը գուդէ, աչվին գպացվը, քաչալը գուդէ, վըր կլխուն մազ գկա, հիլուդը (հիվանդոտը) գուդէ գսախնա: Չէն գըլա (կլցվի) զՀալբա քաղաք վըր ամալ միղր է էգը ու ձախվը: Գէլան զադ մարտ գօլըրդընն, վըր զմիղր ձախիյա:

Հարց ու փուրց գանընն, գօլըրդընն, գիկան զադ մարդ գկնան (կգտնեն), գհարցուն բա միղր ունը՞ս ձախու:

Ադ մարտ գվախանա, բա մարտ է մեռը զըր միղր ուդալուց, ինքար գիկա (կուրանա), բա ինչ միղր, ինչ պան, ըս միղր չունըմ:

Հալբու մարտիր գասընն. «Ադ միղր տիղ էր, ուվըր գերավ սախցավ, քոռ՝ աչօքցավ, հիլուդ՝ սախցավ»:

Էղգարդցը միղր ձախուղ գհասկանա զըր միղրը հուճար, գփոշանվը, վըր էժան ձախըյա, իրանց հիվընդնուց լա չդըվը: Ծեռվուն փըրցըյ էր կացը, ալ ի՞նչ անէր:

Ան ժամանգուց հիդ, ան ծուր, վըր հուշափ սադգըյ էր, գասըն Գնգահոդա (ընգա հոդա, ընկա այստեղ) գալիճ, ադ ջոջքարիր, վըր հուշափ անցըյ էր, զփուր քսը վըր քարերուն, զքարիր սպիդգըցը, գասըն «Հուշփը ջամփա» (Վիշապի ճանապարհ):

Պատմեց Թալինի շրջանի Ահագչի
գյուղի բնակիչ Գրիգոր Մարգարյանը
Գրի առավ՝ Վ. Պետոյանը

4. Գօրգա Բալակի պատմությունը

Գօրգա Բալակ Արզըրօմու Կանա կիղն է էղը, յօթն աղպէր մէգ քուր ըն էղը: Արզըրօմու բէգ ասըյա վըր զաղճիգ օղարգէք ըմ քով, յոթն աղպրդիք խառնվըյ ըն իրար, զմէգուջար քուրն իմա՞լ իդան բէգին: Փուքր աղպէր գասէ. «Ըսկը մխառնվէք իրար, աղը ըմ կուրծն է - էլեք զմալիր էղընցքը նալացէք, ըս ըմ քուրուջ դիխ հարս գէրթամ բէգին»: Փուքր աղպէր գվերու խանջարըմ գգարէ շորէրու դակ, հարսնշուրիր գհակնը, կդանըն բէգը դուն հարս: Բէգ գուրխընա, ըր խուլամնուն գասէ, վըր գինք մինագ թողըն հարսը հիդ: Խուլամնին գէրթան, բէգ զտուռ նէրսը թուն (կողմից) գփագէ: Բէգ գթալե զծէռք ադ աղճգան: Աղճիգ գասէ. «Ի՞նչ զծէռքըդ գթալըս ջանավարը խայդա, ըս էգիյըմ քըզը գնիգ, քումն ըմ, հանէ զքու շորիր քընըք: Բէգ գհանէ զշորիր գբառգը, դղէն գքաշէ զխանջար, գհասնը բէգը վրէն, գսպանէ, զտուռ պաց գանէ, տրսը թուն գփագէ ու գէրթա դուն, հասնը աղպըրդուց, զքուր գազադէ: Գօրգա Բալակ զքօճն ու մալիր գվերու գփախնը գիկա Սասուն, Անդոքա քով, կապը (հյուղակ) գշինէ, անուն լա գմնա Կապըրնին, մգա լա կապրնին Անդոկա քով, մըր կիղն է:

Գօրգա Բալակ գմնա Կապըրնին, դղէք գգարկըվըն. դուն գմէծնա, մասըմ գիկան Գէլիէգուզան, մասըմ գէրթան Հավկունք (մի գյուղ է Փսանքում), մասըմ գէրթան Խէյբըյան (Մշո դաշտում մի գյուղ է), մասըմ Խզլաղաջ, Քարծուր (Մշո դաշտ) մասըմ լա գէրթան Շէնըկ, Սէմալ, մըք լա գմնաք Կապըրնին:

Խուլբա աղէն գխուլամդիք գօղարդէ վըր գբէշ (տուրքը) առնըն. Գօրգա Բալակ գասէ. «Բէշն ի՞նչ տաբա (բան) է»: Խուլամ գանէ հադա չհասկանա, գտառնա էրթա ըր աղուն (աղային) գասէ, ադունք ջանավարըն, գբէշ չընկինա ի՞նչ է: Աղեն գասէ. «Կնա գանչէ թըխ իկան հուդա, ըմ քով»:

Գօրգա Բալակ ըր դղէսնուց քանիմ հոկը գվէրու, գէրթա աղու դուն գասէ. «Աղա, զնըզը ինչո՞ւ ըս գանչը»: Աղէն գասէ. «Լաօ, գանչիմա զբէշն իդէք»:

Ադունք գասըն. «Աղա բէշն ի՞նչ տաբա (բան) է»: Աղէն գաշէ (կնայի) թա չա չէղնը, գասէ զադունք բըդ ջըռըբըմ (փորձեմ): Գէլա էփիլ գիդա մէգ աման փլավ, մէգ աման լա չամիչ պէրիլ գիդա, մէգ աման լա բօլոջ (թրիքի բզէզ), գդանէ տրէ սեղնը վրա, ադունց էռաջ, վըր ուդըն, ընք ու խուլամնին գբալավդըն (կթաքնվեն), դէսնան ադունք ի՞նչ դանըն (ի՞նչ - պիտի ընեն):

Գօրգա Բալակ գասէ. «Դղէք զօդոքը գերեք (ոտնավորներին կերեք), անուդքը միրն է (անոտը մերն է, չի փախչում)»:

Զբօլօջնին թամամ գուդըն, նուր գտառնան վըր փլավին ու չամչին: Աղէն ու խալամնին գդեսնան, վըր ադունք էռած զբօլօջնին թամամ գերան:



Պողոս Պողոսյան

Աղէն էգավ Գօրգա Բալակին ասըց. «Ծըր բէշ հարամ է» (ձեր տուրքը հարամ է), զբէշ չառան ու ալ բէշ չուզացըն: Ան ժամանգուց Գօրգա Բալակի ջընս (սերունդ) սասնցիք բէշ չըն իգա:

Պատմեց Սասունի Կապըրնին գյուղացի
Պողոս Ղազարի Պողոսյանը, ծնված 1874թ. Սասունի Գալիեմսուրի Կապըր-նին գյուղում, 1948 թվականին ապրում էր Թալինի շրջանի Ահագչի գյուղում:
Գրի առավ Վ. Պետոյանը

5. Մե թակավոր առաջ կնաց: Չորս թակավոր կացըն դեսնան, թե իմալ առջացավ այդ թակավոր: Ադ թակավոր իմացավ, ելավ կնաց ճաղցբանի քով, զմսախ քանդիլ դվըց, վըր ալուր էրթա ճրի հետ. ճաղցբանին ասըց, վըր թակավորնին իկան հարցընուն, գասըս «մըր վարք ադա»: Կնաց լծքվարի քով ասըց, վըր գեզընին հագառագ գաբե, վըր լուծք չեղնը, վըր հարցուն գասըս «մըր վարք ադա»: Էգավ մըդ մոլվորին, ասըց, չուր ավազ գվերուս զարգըս վըր քարուն, վըր չպռնե: Թա գհարցուն գասըս «մըր վարք ադադ» ու գերթա դուն:

Չորս թակավորնին գիգան ճաղաց, գդեսնան վըր մսախ քանդուգ ա, ալուր գերթա հիդ ճրին, գհարցուն ադ ի՞նչ պան է, ալուր գերթա հետ ճրին, մսախ շինեք վըր զալուր պռնեք: Ճաղցըբան գասե, «մըր վարք ադա», թակավորնին գանցընն գերթան: Գդեսնան զլըծվար, վըր գեզընին հագառագ ըն գաբը, էդիվ ու առաջ: Գասըն թա գեզնիր ճուղտ գաբա, զհարոր սարա էդիվ ուրանց: Լծվոր գասե «մեր վարք ադա»: Թակավորնին գանցընը գերթան մոլվորը քով գդեսնան, վըր զչուր ավազ գզարդու վըր բադին ու ավազ գթափը ցած: Գասըն հայ, շինա չամուռ, զարգ վըր բադին, քսե զմոլան, գբռնա: Մոլվոր գասե, «մըր վարք ադա»: Գանցընըն էրթան թագավորը քով, գխոսան, գպարեվըն: Թակավոր գասե, «Ծար կալ պարի, ըմ ժողովուրդի մեճ էգաք, ի՞նչ դեսաք, հավնա՞ք, թա չհավնաք»: Ադա չորսեն մեգ հադ թակավոր գայնավ ոտքի, ասըց. «Թակավոր աբրած գինա, մաքիկ (մենք) անքան ժամանալ օլոր դիրըք աշխար, կաց քու ժողովուրդ հիմար ժողովուրտ չըք դեսը»: Մագալ թակավոր ասըց. «Ներողութին ուչ թա հիմար ըն, ամենախելոքն ըն», մագել թակավոր գասե, թա խելոքըն, աբա իմա՞լ ադմալ պան գենըն: Էդ գասե «Ցուցմանքա մարդկանց համար»: Ճաղաց ար էնիրա էդըմլա, ադիգ դան գնիգն ա, քար (թե ուր) լավ էղնը, ճաղցը մսախ պռնուգ է, քար լավ չեղնը, դուն էգած գերթա հադ ճրին (ջրի հետ): Լծքվոր ար էնիրա էդըմլա, իրիք մարդ ադ մեգ դան մաճին, մեգ ասըց էլիք արթաք զէդա աշխատանք գենընք, մանգալ դդան ասըց գերթանք զան մանգալ աշխատանք գենինք, էղավ հագառագ, խռովան, նստան, ուչ ան կնաց, ուչ ան մանգալ, աշխատանք մնաց ուր էրսի: Էգան խըչ մոլվոր: Մոլվորը էրած չոր կլուխ մարտիկընըն ուր զուրըշը խոսք չենա, ինք ուր խելաց հավան է: Էրգըրը դեր թակավոր ասեց. «Հալալ էղնը քըզը, ար տնիգ (դու) հանեցըր (գիտցար)»:

1.Տարոնը Սասունից բաժանվում է Տավրոսյան լեռներով, որոնք արևելքից՝ Սև Սարից մինչև արևմուտք՝ Խոզմո գագաթը երկարելով, Սասունի և Տարոնի սահմանն են կազմում: Այդ Տավրոսյան «պարիսպը» Տարոնի հարավային սահմանն է կազմում: Տարոնի արևելյան սահմանն են կազմում Նեմրութ, Սիփան և Գրգուռ լեռները՝ ձգված հարավից հյուսիս, որոնցով բաժանվում է Վանի վիլայեթից: Հյուսիսային սահմանը կազմում են Ինընակյան կամ **Քարքե, Քոսուրի** և **Շարաֆեդդին** լեռները՝ արևմուտքից արևելք ձգված, որոնցով բաժանվում է էրզրումից: Արևմտյան սահմանը վերջանում է **Ճապաղջրով, Բալուլով**՝ սահման ունենալով **Գուռգուռը** (ջրվեժն Արածանու) և **Ուրուխից Կվարս** հարավից հյուսիս ձգվող սահմանները:

Տարոնի (Մշո դաշտ) ափսեաձև հարթությունը, որ ձգված է արևելքից արևմուտք ուղղությամբ, ողողվում է Արածանի (Մուրադ) գետով և Մեղրագետով, որոնց մեջ հոսում են **Տավրոս լեռների, Նեմրութի, Սիփանի, Գրգուռի, Ինընակյանի** և **Քոսուրի** լեռներից հոսող բազմաթիվ գետեր և գետակներ:

Տարոնի մասին, նրա բնակչության մասին Մովսես Խորենացին գրում է.

«Յետ նաւելոյ Քսիսութրիայ ի հայս և դիպելոյ ցամաքի, գնաց, ասէ, մի յորդւոց նորա կոչեցեալն Սիմ ընդ արևմուտս հիւսիսոյ դիտել զերկիրն, և դիպեալ դաշտի միում փոքու առ երկայնաձգստիւ միով լերամբ, գետոց ընդ մէջ նորա անցանելոյ, ի կողմանս Ասորեստանի դադարե առ գետովն երկլուսնեայ աւուրս, և անուանէ յանուն իւր գլեառն Սիմ, և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ ուստի եկն, իսկ ի կրտսերագունից որդւոցն նորա Տարբան անուն երեսուն ուստերօք և հնգետասան դստերօք և նոցին արամբք մեկնեալ ի հօրէն, բնակէ անդրէն ի նոյն գետեզերքն, յորոյ անուն և զգաւառն անուանէ Տարօն»[1]:

Արածանիի աջ ափին մինչև այժմ կան ավերակներ, որ «Տաղոնք» (Տարոնքի) էին կոչվում բնակիչների կողմից:

[1] Կ. Մկրտչյան մշեցի, Արարատ ամսագիր, Վաղպատ, 1881թ., էջ 227:

Տարոնի առաջին բնակիչները, ըստ Մովսես Խորենացու, եղել են Սիմ Նահապետի սերունդը, որ ջրհեղեղից հետո եկել էին Տարոն-Տուրուբերանի հարավային լեռների՝ այժմ՝ Սիմ (Կուռտըկ) լեռան լանջերի վրա բնակվելու և Սեմ Նահապետի անունով լեռն էլ Սեմ (Սիմ) է կոչվել:

Տարոն անունն էլ Սեմ Նահապետի փոքր որդու՝ Տարբոնի անունով, որին բաժին ընկած վայրը եղավ Տարոնը:

Տարբոնն ունենում է բազմաթիվ տղաներ ու աղջիկներ, որոնք Տարոնում ապրելով՝ կենտրոնական բնակավայրից «ցրվում են», այդ վայրի անունը մնում է **Ցրոնք**, որ մինչև 1915թ. էլ այդ անունով էր կոչվում գյուղը, և գնում Տարոնի զանազան վայրերում բնակություն հաստատում և ամբողջ դաշտն էլ կոչվում է դաշտ Տարոնի:

Ըստ Խորենացու, Բաբելոնի աշտարակաշինությունից հետո Հայկ Նահապետն էլ Տարոնի Հարք գավառն է իրեն բնակության վայր ընտրել: **Հարք** նշանակում է «Հայոց առաջին բնակավայր»: Տարոնի արևելյան սահմանին կանգնած Նեմրութ սարն էլ այն վայրն է, ուր Հայկը Բելին (Նեբրովթին) սպանում է իր նետի հարվածով:

Տարոնի անվան ծագումն արաբ պատմագիր էլ Վակիթը (748-823) իր «Միջագետքի և Հայաստանի նվաճման պատմություն» գրքում բխեցնում է «Աղջիկ Տարոնի» պատմությունից: Ըստ որում, Տարունը Խլաթի թագավորի, Խոյի և Սալմաստի տիրոջ դուստրն է, գեղեցիկ և քաջամարտիկ: Նրան շատ ուզողներ են լինում, բայց ինքը ոչ ոքի չի հավանում: Սասունի Սանասար իշխանի որդին է Մուշ(եղ)ը: Հայ իշխանները կռվում են արաբների դեմ: Սանասարի որդի Մուշեղն ու Տարունը նույն կռվին են մասնակցում և սիրահարվում, բայց Բակուրը Տարունին փախցնում է և անցնում արաբների կողմը: Հետագայում Տարունը ազատվում է, վերադառնում Հայաստան և ամուսնանում իր սիրած Մուշ(եղ)ի հետ և ապրում այն երկրում, որ Տարուն հերոսուհու անունով Տարոն է կոչվում, իսկ այդ երկրի գլուխ-քաղաքն էլ Մուշ(եղ)ի անունով Մուշ է կոչվում: Մուշեղը ոչ միայն Տարոնի, այլև Սասունի տերն է դառնում:

Մուշի և Տարոնի մանրամասն տեղագրության, տնտեսական կենցաղի, նյութական մշակույթի, սոցիալական հարաբերությունների վրա կանգ առնելը մեր նյութից դուրս է և այդ

մասին կարելի է ծանոթանալ «Լումայի» 1897-98թթ. գրական հանդեսում, և «Ազգագրական Հանդես»-ի 20-21-րդ հատորներում: Ես կանգ եմ առնում միայն պատմական վայրերի նկարագրման, տեղերի որոշման և 1915թ. կոտորածից առաջ եղած վիճակագրական տվյալների վրա:

Մամիկոնյանների տարածքն են կազմել և Տարոնը, և Սասունը, որի համար նրանց պատմականն իրար հետ առնչվում է, եթե չասենք նույնն է եղել, իսկ 1915թ. Սասունի գոյամարտը և վիճակագրությունը և Տարոնի, և Սասունի տվյալները ցույց են տալիս այդ երկու հայաշատ գավառների գոյության, ծաղկման և ողբերգական կործանման իրական տվյալները, որոնք անցնում են պատմության գիրկը:

Տարոնի արևելյան մասից՝ Չուխուրի դաշտից հոսում է **Մեղրագետը**:

Մեղրագետի ակունքի մասին պատմում են, թե մի թոնիր է եղել: Գյուղի երեցի կինը հաց թխելիս մի աղքատ է գալիս և Քրիստոսի սիրու համար մի թարմա հաց խնդրում: Տիրուհին տալիս է հացը, ապա աղքատը նույն աղերսով պանիր է խնդրում, տիրուհին պանիրն էլ է տալիս: Աղքատը Քրիստոսի սիրու համար մի համբույր էլ է խնդրում, տիրուհին իր սիրուն դեմքն է մոտեցնում, և նա մի համբույր տալիս: Երբ աղքատը տիրուհուն համբուրելիս է լինում, քահանան տուն է մտնում և տեսնում: Մոտենալով տիրուհուն՝ զայրացած հարցնում համբույրի մասին: Տիրուհին ասում է, թե աղքատը Քրիստոսի սիրու համար հաց խնդրեց, տվի, պանիր խնդրեց, տվի, Քրիստոսի սիրու համար համբույր խնդրեց, չկարողացա մերժել, համբույր էլ տվի: Քահանան զայրացած ասում է՝ Քրիստոսի սիրու համար քեզ գցիր վառ թոնրի մեջ: Տիրուհին իրեն գցում է վառ թոնրի մեջ: Բոցավառ թոնիրն իսկույն լցվում է մեղրահամ ջրով: Տիրուհին դառնում է ձուկ, մնում գետի ակունքի մեջ, իսկ գետն էլ կոչվում է Մեղրագետ:

Մշո դաշտը գրեթե զուտ հայաբնակ էր և ուներ 102 մեծ և փոքր շեն գյուղեր մինչև 1915թ. հունիս ամսի 28-ը՝ երեխայից մինչև զառամյալ ծերունի, երկսեռ ազգաբնակչությունը գազանաբար բնաջնջվեց թուրքական կառավարության հրամանով:

Մուշ քաղաքը Տարոնի և Սասունի սիրտն էր կազմում՝ հարուստ, առևտրական կենտրոն՝ 30000 բնակչով[1]:

Այս հարյուր և երեք գյուղերը հայաբնակ գյուղեր էին՝ փռված Մշո դաշտի վրա, Արածանիի և նրա մի ճյուղը կազմող Մեղրագետի աջ և ձախ ափերին, մոտիկ և հեռու վայրերում: Դաշտի հյուսիսային լեռներն Ինընակնյան կամ Քարքե, քիչ արևելք այդ լեռները կտրվում են Աշտիշատի և Սուլուխի միջով անցնող Մուրադ գետով, Արածանի, որի ձախ ափին սկսվում են և դեպի արևելք ձգվող Աբլբուհարի և Քոսուրի լեռները: Արևելքի լեռներն են Սիփհան, Գրգուռ և Նեմրութ, հարավից հայկ. Տավրոսի Սասնո լեռներից Խոզմո, Կուռտղկ (Սիմ), Ծիրնկատար, Սև քար՝ արևմուտքից-արևելք ձգվող կատարներով, իսկ դաշտի արևմտյան մասում լեռներ չկան: Ճապաղջուրի և Գենջի տարածություններն են: Վերոհիշյալ լեռնալանջերի վրա և դաշտում փռվում են պատմական քաղաքների և բերդերի ավերակները, որոնցից գլխավորները հետևյալներն են.

Ողկան կամ Ողական բերդը բոլորածև մի ամրոց էր և գտնվում էր Մշո դաշտի արևմտյան ծայրի Արածանիի աջ եզերքի վրա, ուր ցից ժայռերն սկսում են գետը նեղացնել, Գուրգուռային մոտիկ:61

Ողկան բերդի հյուսիս-արևմտյան կողմում կան «Ծիծեռն» քաղաքի ավերակները, որոնք երևում են մինչև այժմ էլ (1915թ.), որին մոտակա քրդերը «Զիզեռն», Զիվզեռն (արծաթ՝ զիվ, զեռն՝ ոսկի) են անվանում: Ծիծեռն քաղաքի գերեզմանատան տապանաքարերը մինչև վերջին տարիները դեռ կանգուն էին: Տեղացիներն երկու բացատրություն են տալիս «Զիզեռն», «Ծիծեռն» քաղաքին: Քաղաքը առաջին՝ «Ծիծեռնակի» խաչի ու վանքի անունով է կոչվել և երկրորդ՝ երբ Ծիծեռն (Զիզեռն) քաղաքը պարսից հարձակումներից ավերվում է, բնակչությունն իր ամբողջ ոսկին և արծաթը թափում է մի խոր ջրի մեջ, և դուռը փակում, ծածկում, որից և կոչվել է Ոսկու և արծաթի քաղաք:

Ողկան կամ Ողական բերդին մոտիկ է Արածանիի Գուռգուռա կոչված ջրվեժը, Մշո դաշտի արևմտյան ծայրում, որի համար ժողովուրդն ասում է.

[1] Մշո դաշտի 104 գյուղերի ցուցակը տես իմ «Սասունի բարբառը» աշխատությունը, էջ 192-194:

«Էնդուր համար կըսեն Կուրկուռայ, չումքի ձեն կիտայ ուր ձէն իրեք սհաթվայ ճամբայ կերթայ, ու էտ տեղաց բոլորն էլ գիտեն որ շատ անրձև պտի գայ»:

Ամեն ժամանակ չէ, որ այդպես ուժեղ ձայն է հանում Գուռգուռեն, ուժեղ ձայնը դրա համար էլ կապված է անձրևաբերության հետ:

Ողկան բերդի և Գայլ Վահանի մասին ժողովուրդը մինչև այժմ էլ պատմում է հետևյալը.

«Էն վախտն որ պարսիկները զորեղցան ու եկան մըր աշխարհ զմզի թալնելու ու հեսիր տանելու, կէր մեկ Գայլ Վահան անունով մարդ, որ շատ կտրիճ էր, եբոր տեսաւ, որ պարսիկներն շատ նեղութիւն կիտան ժողովրդին, նա եկաւ ու էս Կուրկուռայ սարի գլխին զետ անառիկ բերդ շինեց ու գետին վրեն էլ կարմունջ շինեց զնճիլներով, ու էտ բերդի մէջ պահեց զուր ասքար, եբոր պարսիկներ կգօրեղնային Գայլ Վահանի վրէն, ինքն զժնճիլներնի կքակեր որ պարսիկներնի չընցնան ուր բերդ, եբոր ինքն կգօրեղներ զնճիլներնի կթալէր գետի վրէն ու կընցներ էն դին, հընկայ լէ կա ուր կարմնջի օղերը, որ մեկ մազի չափ է»:[1]

Ծծմակաքիթ, Ծծմակ կամ Ծծմբակի մասին Հ. Սարգսյանը[2] գրում է. «Ընդ մէջ Մորխայ և Օձ քաղաքի առ ստորոտով երկայնանիստ լերին միոյ ի դաշտէ է Ջերմուկ կոչեցեալ ի բնակչաց Կէրմաւ, և ջուր նորա առողջարար հիւանդութեանց, և այլ ջերմուկ գաղջ և ծծմբահոր որ բխէ ի ներքուստ լերին և կոչի Ծծմակ, որ թուի լինել ծծմբակ, և լեռունդ երկայնեալ ձգի ի դաշտն կոյս կոչեցեալ Ծծմակայ քիթ, իբրև երեք ժամաւ հեռի ի Մշոյ յարևելս կոյս ընդ երկայնութեան լերանցն Տօրոսի»:

Օձ քաղաքը շինել է Աշոտ Մսակերի որդի Դավիթ Բագրատունին. «Օձ քաղաքի մեծադիր և ամուր բերդը Շամբի եզերքը և լերան կից քաջապես կերևի դեռ ևս իր բլրածև բարձր դիրքի վրա, ուր մեծ-մեծ աղբյուրներ կը գտնուին և որուն մօտէն կանցնի Նեբ-

[1] Կ. Մկրտչյան, Մշեցի, «Արարատ ամսագիր», Վաղարշապատ, 1881, էջ 237:

[2] Հ.Ն. Սարգսյան, «Տեղագրություն ի փոքր և Մեծ Հայս», Վենետիկ, 1864, էջ 227:

րովքէն իջնող վտակ մը, որ Շամբեն անցնելով Մեղրագետ կը խառնուի»:[1]

Օձ քաղաքի մասին ականատես Գ. Սրվանձտյանցը գրում է.

«Օձ քաղաքը Մեղրագետի ակի մոտն է, որի շուրջը սալարկված են քարերով և անոր մոտ գմբեթ մը կայ, ակը բազմաչեայ է, այժմ Մուշեղեն է անունը»:

Վիշապաքաղը Աշտիշատի մոտի այն գյուղն է, որ այժմ Բաղ-Չայ են կոչում, իսկ Տարոնի պատմիչ Հովհաննես Մամիկոնյան եպիսկոպոսը Վիշապ անունն է տվել:

Վիշապ քաղաքը, Վաղարշակի օրերում հիմնեցին հնդիկ գաղթականներ, որը այլ անունով կոչվում է Տերակատար քաղաք:

Աստղաբերդ -Աստղկա բերդ- Տավրոսի թևերից մեկի վրա, Մուշի հարավ-արևելյան կողմը, դեպի Սասուն բարձունքների վրա, նայում է դեպի Մուշն ու Մշո դաշտը: Հայոց Աստղիկ դիցուհու ամրոցը, ուր հյուր էր ընդունում հրածին Վահագնին, որ հանգստանում էր Աստղիկի մոտ վիշապամարտերից հետո: Բերդի վիթխարի աշտարակներից և պարիսպներից մի մասը դեռ կանգուն մնում են: Կան վիմաքար սենյակներ և քարայրներ: Սասունցիները Մուշ գնալիս կամ Մուշից վերադառնալիս այցելում էին այդ Աստղաբերդը և հետաքրքրությամբ դիտում հսկա բերդի հիմքի ճեղքերից դուրս եկող մրջյունների քարավանը, որոնք կորեկի կամ ցորենի հատիկներ էին դուրս բերում լեռնաճածակ ամրոցի գաղտնի պահեստներից մինչև 1915 թվականն էլ:

«Հետագայում դա հայտնի է որպես որսորդ Ավոյի բերդ, սակայն ժողովուրդը միայն որպես Աստղնաբերդ է ճանաչում»:[2]

Սմբատաբերդ - Մշո դաշտից դեպի հարավ-արևելք, Բընդախնի և Մառնիկ գյուղերի միջև, յուրաքանչյուրից 5 կմ հեռավորության սարի վրա, անտառոտ մի վայրում է գտնվում Սմբատաբերդը: Բերդի հյուսիս և արևմտյան կողմերը ժայռոտ են, իսկ հարավ-արևելքը՝ տափարակ: Բերդի երկարությունը կլինի 30 մ, լայնությունը 25 մ: Արևելյան և հարավային պատերը դեռ 1914թ. կանգուն էին, իսկ հյուսիս- արևմուտքը քանդված է: Մառնիկ գյուղի երիտասարդներս, մոմ վառելով

[1] «Լումայ», գիրք Ա, Տփխիս, 1898թ., էջ 159:
[2] Րաֆֆի, «Կայծեր», Երևան, 1947թ., էջ 571:

և դարման թափելով էինք բերդի ներսը մտնում, որ չմոլորվեինք, մնայինք բերդի մեջը: Սմբատաբերդի ներսում գտել են մի մեծ սենյակ՝ լիքը կավե թրծված կարմիր խողովակներով, որոնք սկսել են տանել Մառնիկ՝ թոնրան ակ և տների առաջ փակ առուներ շինելու համար:



Մուշ քաղաքը (բերդի թաղ)

Սմբատ թագավորը՝ Մուշի տերը, շինել է այդ բերդը: Բերդավայրի սարը կոչվում է Խուռելին, որ բարձր սար է, հարավային փեշի վրա ալոճի և քարճինի (վայրի տանձ) մեծ ծառերի անտառ կա: Բերդի հյուսիս-արևմտյան կողմը խոր ձոր կա, որից անցնող ջուրը գալիս է Մառնիկի վրա, անցնում Հավատորկա տակ, Բերդակ և Արաղ գյուղերի արանքով, Սողգոմ գյուղի կողքով անցնում և թափվում է Մեղրագետ՝ ձախ ափով:

Սմբատաբերդի արևմտյան կողմը՝ Խուռելասարի ստորոտում, գտնվում է Կարմիր վանքը, որի միայն պատերն են մնացել մեկ ու կես մարդաբոյի չափ: Վանքի ավերակի վայրում լուստուն էր, ուր մոմ էին վառում: Աղբյուրը վանքի արևմտյան մասում էր, մի բաիի չափ ջուր ուներ, գետնից բխում և հոսում էր: Աղբյուրից մինչև Կարմիր վանքը 100 մ չափ էր: Վանքի պատերի քարերը կարմիր էին, որի համար էլ կոչվում

էր Կարմիր վանք: Սմբատաբերդը Մուշից դեպի հարավ-արևելք է մոտ 20-25 կմ հեռավորության վրա[1]:

Տարոնում **Կավ-կավ քաղաքը** եղել է Ողկաց բերդին մոտիկ, որի ավերակները չկան, իսկ բերդինը կային մինչև 1915 թ:

Տարոնումն է եղել և **Մծուրք քաղաքը**, որն ըստ ավանդության, Սանատրուկ արքան է կառուցել, որի ավերակների վայրը նույնպես հայտնի չէ:

Տարոնի Թիլ ավանից էր հունաց երևելի հայ կայսր Վասիլը, որ Բյուզանդիայում 867թ գահ նստավ, իսկ նրա թոռ Կոստանդին Պեր-Ֆեռուժեն նույնպես նշանավոր կայսր եղավ և միաժամանակ գրեց իր պապի պատմությունը, որը լի է նրա բազմաթիվ մեծագործություններով: Հայաստանը շատ կայսրներ ու մեծ զորապետներ է տվել թե Հռոմին և թե Բյուզանդիային, ուր նրա որդիներն այժմ գնում են ծառայություն անում:

Տարոնի քաղաքների առթիվ Րաֆֆին գրում է. «Բոլորը կորավ, բոլորը անհետացավ, մնաց որբացած Մուշը միայն, որ այժմ մռայլ դեմքով նայում էր բարձրադիր բլուրի գագաթից...»:[1]

Ծիրնկատար կամ Տիրինկատարի մասին Հ. Սարգսյանը գրում է. «Անդ էր ի հնում պատկեր Աննայտ կռոց ի դեպ ընտրեալ վասն նորա զվայրն ամենացանկալի և վսեմատես, իբրու ակնարկողի ի վերայ ամենայն գաւառին մշտատես խնամակալու լինել ըստ հեթանոսական մըտոց»:[2]

Ջյունակերտ կամ Ջիւնկերտ քաղաքը կառուցել է Վախթանգ զորավարը և իր կնոջ անունով կոչել է Պորպես:

«... Նորոգեալ ի Վախտանկայ Պարսից զօրավարէ կոչեցաւ Պորպես, մերձ էր Օձ քաղաքին յարևելից հարաւոյ նորա, և յաւերակաց նորա են անշուշտ որ երևին ցարդ ուրեք աննշանք ի

[1] Պատմել է Մառնիկում բնակվող, հետո Սասունի Հոսներ գյուղ փոխադրվող Արե Թորոսի Խաչատրյանը, 70-75 տարեկան, բանիմաց պատմող է և 1949թ. ապրում և աշխատում էր Ներքին Սասունաշենում:

[1] Րաֆֆի, «Կայծեր», Երևան, 1947թ., էջ 567:

[2] Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1874թ., էջ 32, 59:


Մորխ գիւղն կոչեցեալ Քեաֆիր Մորխ, որ առ երի կայ անընդմիջաբար Գրգուռ է և Նեմրութ լերանց»:[3]

Սասունի և Տարոնի հռչակավոր վանքերը՝ Առաքելոց կամ Թարգմանչաց, Սուրբ Կարապետի, Սուրբ Հովհաննու կամ Եղրդուտի, Աշտիշատի, Սուրբ Աղբյուրիկի, Գոմուց և այլն, կառուցվել են Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական, պաշտոնական կրոն ընդունելու ժամանակ, հեթանոսության վերացման շրջանում: Այդ վանքերը կառուցվում էին հատկապես հեթանոսական կրոնական վայր հանդիսացող և քանդվող մեհյանների տեղում, որպեսզի հրով և սրով, բռնությամբ քրիստոնյա դարձած հեթանոս հայ ժողովուրդը կապվեր վանքերին, որպես նախկին մեհյանների, ատրուշանների վայրերի և հետզհետե մոռանար հեթանոսական կրոնը:

Մշո սբ. Կարապետի կամ Գլակա վանքի տեղումն էր հեթանոսական կրոնի կենտրոն հանդիսացող Դիմիտր և Գիսանեի մեհյանը, Աշտիշատում՝ Վահագնի մեհյանը և այլն:

Դիմիտր և Գիսանեի մեհյանը քանդված, բայց ատրուշանը չքանդված, վրան կառուցվում էր Ս. Հարություն մատուռը, որի բեմի տակ մնում էր ատրուշանը: Ս. Հարություն մատուռը գտնվում էր Ս. Կարապետի պարսպապատ վանքի ներսում, դեպի Մշո դաշտ նայող (հավատամքի ուղղությամբ) մեծ դարպասից մտնելիս ձախ կողմի վրա, նորաշեն կոչվող մեծ շենքի և պարսպի միջև:

Առաքելոց կամ Թարգմանչաց վանքը գտնվում է Սասունի **Սիմ** (Կուրտըկ) լեռան **Ծիրնկատարի** հյուսիսային ստորոտում, **Մուշ** քաղաքի հարավ- արևելյան մասում, Մուշից 3-4 կմ հեռու, մի բարձրության տափարակ վայրում, որից երևում են **Բերդակ** և **Ա-**



[3] Հ. Սարգսյան, «Տեղեկագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս», Վենետիկ, 1864թ., էջ 237, 226:

րաղ գյուղերը, որոնց միջի փոքրիկ դաշտը Մշո դաշտի մի լեզվակն է կազմում, որ երկարել է դեպի Ծիրնկատար գագաթի ստորոտը, դեպի Հավատվորիկ գյուղը:

Այդ վանքը Սասունի Թոռնիկյան թագավորության ժամանակ (Ժ-ԺԳ դդ.) եղել է կրոնական կենտրոն և թագավորների պանթեոն: 1073 թվականին Ճորտուանել Մամիկոնյան թագավորն իր հայրական գյուղ Բերդակը տալով Առաքելոց վանքին, իր գերդաստանի համար պանթեոնի տեղ է ստանում այդ ժամանակվա վանահայր Պողոս Տարոնցուց: Այդ գրված է «Սասունցի Ավետարանի» և «Ճառընտիրի» մեջ, որը գտնվում է մեր մատենադարանում, կշռում է 32 կգ (տես ձեռագիր նո. 7729): Առաքելոց վանքի եկեղեցու դուռը գտնվում է Հայաստանի Պետական Պատմության թանգարանում, այժմ (1949թ.) Լինինգրադի էրմիտաժում՝ ժամանակավոր ցուցադրման համար:

Առաքելոց վանքում թաղված են Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը, Մամբրե, Եզնիկ Կողբացին, Հակոբ Մշեցին, Ղազար Փարպեցին, Ասողիկը, Գլակա եղբայր Եղիազարը, Պողոս Տարոնեցին, Ճորտուանել հայոց արքան (արևելյան կողմ), Սահակ և Համազասպ իշխանները (հյուսիսային կողմ), որոնք խաչքարեր ունեն իրենց վրա:[1]

Ստորև դնում ենք արձանագրություններ: Վերցված Հ.Ն. Սարգսյանից.

«Եւ էն արձանագրութիւնք իւրաքանչիւրոցն այսոքիկ սկսեալ ի հարաւոյ (Առաքելոց վանքի գերեզմանագրերից):

ա) Ի ԹՀ ՇՂԳ կանգնեցաւ խաչս ի բարեխաւսուրն ստեփ: Ճոնկանն ննջեցելոց ի քս յիշ աղաչ. զմեղաւոր զԳորգ Ճոնակ:


բ) Ի ԹՀ ՇՂԳ կանգնեցաւ խաչս ի բարեխաւսոքն տն Դաւթի Անյաղթ[1] փիլիսովփաի յիշեցեք ի քս աղաչեմ զմեղուցեալս Գեորգ-Ճոնակս յիշե...»:

գ) Պողոս վարդապետ հանգուցեալ ի քս յս (զոմանէ ասեն աւանդութեամբ թէ Տարօնեցին է):


դ) Տր Ղազար և տր Ստեփանոսի ի ԹՀ: ՇՀԴ: Կանգնեցաւ խաչս և նորոգեցաւ խաչս և նորոգեցաւ սբ. առաքեալքս ած ողորմի աշխատողաց սորա...»:

[1] Հ. Ղ. Ինճիյան, «Աշխ. Ջորից մասանց Աշխարհի», Վենետիկ, 1806թ., էջ 188-189:


[1] Հ.Ղ. Ալիշան, «Տեղեկագիր Հայոց մեծաց», Վենետիկ, 1855թ., էջ 45:



Մշո Առաքելոց վանքի վերջին վանահայր Հովհաննես վարդապետ Մուրատյանը նստած Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի և Ղազար Փարպեցու հուշարձանների մոտ



Մշո Առաքելոց վանքի մուտքը



Մշո Առաքելոց վանքի դուռն ու շրջանակը

ե) ... Եւ պատուական Պետրոս քահանայ որ կանգնեաց զխաչս, զայս ի բարեխաւսութիւն... ՇՀԲ գյեսու գծողս.

զ) (Անգիր)

է) Ի ԹՀ ՌԺԱ Թումա վարդապետ հանգուցեալ ի քս յս ի տր մեր:

ը) Ի թվականոքն հայոց ՇՂ կանկ: (Ի կողմանէ)... Պետրոսի քահանաի և Կոստանդէ յիշեսջիք ի քս աղաչեմ և զգործողս... ի սու... ի նվարի...ժ. կա:


թ) Ի ԹՎԿ Հ ՈԼԱ ես Խաչիկ որ զխաչս կանգնեցի փրկութեան հոգոյ իմոյ և ծնողաց իմոց յիշեսջիք ի քս աղաչեմ:

Ընդ մէջ հինգերորդին և վեցերորդին կայ միւս ևս անգիր: «Մենաստանս Առաքելոց կոչի և Գլածորոյ վանք, թերևս վասն խորանդունդ ձորոյն որ է յաջմէ մենաստանին, իսկ ստուգութիւն անուանակոչութեանս է ի յիշատակարանի գրոցս այսպէս. Գրեցաւ

սուրբ աւետարանս ի թուականութեանս հայոց ՋՀ-ի գաւառս, Տարօնոյ ի վասնս Գլածորոյ ի դրունս սուրբ առաքելոցն, յառաջորդութեան սուրբ ուխտիս Թադեոս եպիսկոպոսի»: Այլ է ի նմանէ և Գլածոր վանք ի Վայոց ձոր գաւառի յաշխարհէն Սիւնեաց»:[2]

«Դրանք թվով տասը գեղաքանդակ խաչքարեր էին, որ դրված էին քարե պատվանդանի վրա: Ավանդությունը «Թարգմանչաց գերեզման» է կոչում այդ լուռ հիշատակարանները: Նրանցից մեկի վրա ես կարդացի հայոց անպարտելի փիլիսոփայի՝ Դավիթ Անհաղթի անունը»:

Երկու փոքրիկ տապաններից մեկը Մովսես Խորենացու, իսկ մյուսը Մամբրե Վերծանողի տապաններն են: Մի դամբարան ս. Ղազար Փարպեցունն է: Այդտեղ թաղված են Սահակ և Համազասպ իշխանները»:[1]



Սբ. Կարապետի կամ Գլակա վանքը[2] կոչվում է նաև Մշո Սուլթան Սբ. Կարապետ, որ գտնվում է Մշո դաշտի հյուսիս- արևմուտքում երկարող Քարկե կամ Իննակնյան լեռան հարավային, դեպի Մշո դաշտը նայող ստորոտի վրա, դաշտի տափարակությունից 3-4 կիլոմետր բարձր, Սորդար գյուղի հյուսիսում և Կվարս ու Բաղլու գյուղերի միջև:


Եկեղեցու վրա կառուցված էին երկու մեծ գմբեթ խորանի կտուրից բարձրացող և մի զանգակատուն ե-

[2] Վ.Ն.Սարգսյան, «Տեղագրութիւնք ի Փոքր և Մեծ Հայս», Վենետիկ, 1864, էջ 233-236:

[1] Րաֆֆի, «Կայծեր», Հայպետհրատ, Երևան, 1947թ., էջ 585: Րաֆֆին անձամբ եղել է Մուշում և Առաքելոց վանքում, որի մասին և գրում է իր այդ աշխատության մեջ:

[2] Ս. Կարապետը սասունցիների գլխավոր ուխտատեղին էր:

կեղեցու դռան մասի վրա, որը շատ բարձր էր ութը մարմարյա կլոր սյուների վրա կանգնած: Նրա մեջ կախված զանգերի ձայնը ղողանջում էր Մշո դաշտի գյուղերի այն մասի վրա, որ գտնվում էին **Արածանիի** ձախափնյա դաշտում:



Մշո Ս. Կարապետ վանքի ընդհանուր տեսարանը հարավ-արևմտյան կողմից

Վանքը պարսպապատած էր, ուներ երկու դարպաս, մեկը դեպի դաշտ (հարավ.) **Հավատամքի** կողմը, մյուսը դեպի հյուսիս՝ լուսաղբյուրի կողմը: Վանքի պարսպի ներսում, **Նորաշեն** կոչվող մասում կար Սբ. Հարությունի մատուռը, ուր հեթանոսության ժամանակ, նախքան Հայաստանում քրիստոնեության ընդունվելը, հեթանոսական կրոնի օջախ՝ ատրուշան է եղել և Դեմետր ու Գիսաներ քրմապետներն են պաշտամունք մատուցել: Ըստ Ջենոբ Գլակի՝ այդ վանքի առաջին վանահոր և Հովհան Մամիկոնյան կաթողիկոսի «Տարօնոյ պատմութիւն» գրքերի, քրմատունը Գրիգոր Լուսավորչի ձեռքով քանդված է և տեղն այդ մատուռը կառուցված:

Սբ. Կարապետի եկեղեցին կառուցված է 16 մարմարյա հաստ սյուների վրա, որոնց վրա էլ հենվում են եկեղեցու 25 կամարները՝ կազմելով եկեղեցու կամար ծածկը, որի մեջ 1500-2000 մարդ էր տեղավորվում: Եկեղեցու դռան առաջ մարմարյա սալահատակ էր, ընդարձակ և կիսաշրջանաձև մի տարածություն, որի շրջագծի վրա 1-2 մետր բարձր մարմարյա սյուներն իրար միանում էին երկաթյա ցանցաճաղերով: Վանքի խորանի աջ կողքին, եկեղեցու մեջ առանձին մի մատուռ կար միայն Ս. Կարապետի գերեզմանի համար, ուր կանանց մուտքն արգելված էր կրոնական օրենքով և ուխտավոր կանայք մուտք չէին գործում այդ մատուռը, թե չէ «կծռէին» (կխելագարվեին): Սբ. Կարապետի վանքումն են թաղվել Մամիկոնյանք, Գայլ Վահանի, ինչպես և Սասունի թա-

գավորության հիմնադիր Թոռնիկ Մամիկոնյանի աճյունները: Ըստ Արիստակես Ուռհայեցի պատմիչի գրածի՝ Թոռնիկը Փիլարտոսի դեմ մղած հաղթական պատերազմից հետո, դավադրությամբ սպանվում է և գլխի Թասակը Փիլարտոսի հրամանով բերում են իրեն, որի մեջ, խնջույքների ժամանակ գինի էր լցնում և խմում, իսկ Թոռնիկի մարմինն այրել է տալիս և աճյունը թույլ տալիս տանել, թաղել Սբ. Կարապետ վանքում: Փիլարտոս Ամատունը Մարաշի հայ իշխանն էր, որ ուզում էր Թոռնիկյանների իշխանությունը ենթարկել իրեն:

Սբ. Կարապետ վանքում կար ժառանգավորաց գիշերօթիկ դպրոց՝ 60-80 աշակերտներով : Վանքի վերջին վանահայրը Սասունի Ահրոնք գյուղացի Վարդան վարդապետ Հակոբյանն էր: Հարուստ վանք էր, ուներ իր կալվածքներն ու բազմաթիվ անասունները (տողերիս գրողը 1900-1907 թվականներին սովորել է այդ վանքում): Նրա գանձարանն ու ձեռագրերը 1916թ. նույն վանքի դպրոցի դասատու Հակոբ Ստեփանյանը ազատել, փոխադրել է Էջմիածին: Ձեռագրերից «Գավազանագիրք»-ը գտնվում է Մատենադարանում (Ն. 2901), որի հեղինակն է նույն վանքի լուսարար Կարապետ վարդապետը:

1915թ. Մշո Սբ. Կարապետի վանքի միաբանությանը կոտորվում, իսկ վանքը թնդանոթներով քանդում են: Կոտորածից ազատվում են երկու ուսուցիչներ՝ Մկրտիչ Տ. Մկրտչյանը՝ Սասունի Ահրոնք գյուղացի և Հակոբ Դանիելյանը՝ Տարոնի Ջիարեթ գյուղացի, որի հայրը նույնպես Սասունի Ահրոնք գյուղից է եղել, իսկ մայրը մշեցի և ապրել են Ջիարեթում:

Ըստ Հակոբ Դանիելյանի՝ ականատեսի պատմածի, 1916թ., երբ ռուսական բանակը գրավում է Մուշն ու Սբ. Կարապետի վանքը, ինքը՝ Հակոբը, էջմիածնի կողմից նշանակված մի հանձնաժողովի կազմով մեկնում է Սբ. Կարապետի վանք: Այդ հանձնաժողովի անդամներն են եղել Ավետիք Տ. Պողոսյանը, Բահատուր Բահատրյանը և մի ուրիշ սարկավագ, Հակոբի անդամությամբ: Հակոբը 15 տարի ապրած լինելով Սբ. Կարապետ վանքում և աշխատելով որպես ուսուցիչ, մեղվաբույծ և հետո էլ վանքի «վերակացու» (ընդհանուր հսկիչ) և Սբ. Կարապետի վանքի գաղտնի գանձարան-պահարանի վայրին տեղյակ մարդ էր: Պահեստները երկուսն են լինում. մեկը թուրքերի կողմից հայտնաբերված, իսկ մյուսը՝ որի մեջ են եղել գույքի խոշոր մասը, հանձնաժողովը գտնում է, երկու սայլերի վրա բարձում և տեղափո-

խում էջմիածնի վանքը՝ ցուցակների հետ միասին: Այդ գույքի մեջ է եղել «Հեթումի մի ավետարանը» և նույն վանքի «Գավազանագիրքը», գրված վանքի վարդապետներից մեկի՝ Կարապետի ձեռքով: «Գավազանագրքում» գրված է նաև Տարոնի վերջին տարիների դեպքերի նկարագրությունը:[1]

Ըստ այդ հուշերի, Սբ. Կարապետ վանքի և կալվածքների հատակագիծը ինքը՝ Հայկ Դանիելյանն է Մակար Խարախանյանի[2] հետ գծել և ուղարկել Երուսաղեմ՝ Սահակ վարդապետ Աստվածատրյանին: Վանքն ունեցել է երեք ընդարձակ կալվածքներ՝ «Վերին փագա», «Ներքին փագա» և «Վանից Ջոր» կամ Միրաշ կուպը, որ ընդարձակ տարածությամբ անտառ էր:

Վանքը 1914-15թթ. ունեցել է 1500 ոչխար, տասներկու «լուծք» քաշող ուժ, յուրաքանչյուր լուծքը երկու գոմեշ և երկու եզից բաղկացած, ընդամենը 24 գոմեշ և 24 եզ լծքաշ, չհաշված կթու և այլ խոշոր եղջերավոր անասունները: Վանքի թեմին էին պատկանում Խնուսը, Մանազկերտը, Բուլանուխը, Մշո դաշտը, Վարդոն, Ճապաղջուրը, որտեղից վանքն ստանում էր ցորեն, յուղ, պանիր, ոչխար, ուլ, գառ, մատաղացու որպես «պտղի» (նվեր՝ ըստ կարողության) Սբ. Կարապետի ուխտի օրը: Տոնը վարդավառն էր, ուր այդ օրերին 8-10 հազար ուխտավորներ էին գալիս մոտիկ և հեռու վայրերից՝ նույնիսկ Կովկասից և արտասահմանյան երկրներից: Այդ օրը տոնավաճառ էր լինում, հատուկ խանութներ էին շինում Մուշի և այլ վայրերից եկող առևտրականները, Դիարբեքիրից, Բիթլիսից, Էրզրումից ապրանքներ էին բերում, ուխտավորներին վաճառում: Փահլևանների (լարախաղաց) մրցություն էր լինում, որին մասնակցում էին 15-20 փահլևաններ: Աշուղների, երգիչ-պարողների մրցություններ էլ էին տեղի ունենում:

Վանքի դպրոցն ուներ 80 աշակերտ՝ ուսման յոթը տարվա ընթացքով: Վանքի միաբաններն էին՝ վեց վարդապետ, վանահայրը՝ Սասունի Աիրոնք գյուղացի՝ Վարդան վարդապետ Հակոբյանը, և 50-55 այլ միաբաններ՝ տնտես, հովիվ, նորադար (պահակ), կաթ

[1] Այժմ Հակոբ Դանիելյանն ապրում է Յամանջալու գյուղում (Արտաշատի շրջան) և զբաղվում հաշվապահությամբ: Այդ գյուղում են ապրում և շատ մշեցիներ: Հակոբի հուշերը գրի են առնված ապրիլի 9-ին, 1935թ. և գտնվում են Հայաստանի Պետական թանգարանի ձեռագրերի բաժնում (Ազգագրական բաժնի ցուցակ, նո. 122):

[2] Մ. Խարախանյանը Ս. Կարապետ վանքի դասատուներից էր:

մշակող տնտեսուհիներ, մի կույր ժամագործ՝ Խաչո անունով, որ կույր վիճակում զարթուցիչ ժամացույցներ էր պատրաստում:

Մշո Սբ. Կարապետ վանքը հանդիսացել է մշակութային գլխավոր օջախներից մեկը Տարոնի և Սասունի համար, որի մտավորականությունը մեծ մասամբ այդ վանքի, նաև Առաքելոց և Հովհաննու վանքերի դպրոցների շրջանավարտներն էին: Նրանք Տարոնում և Սասունում ուսուցչական աշխատանքներ էին կատարում: Սբ. Կարապետ վանքում Խրիմյան Հայրիկի և Գարեգին Սրվանձտյանցի ջանքերով 1863թ. մինչև 1865թ լույս է տեսնում «Լրատար Արծվիկ Տարոնոյ» ամսագիրը, որի տպարանը նույն մարդկանց միջոցով բերված էր Վարագա վանքից: Այդ մասին Գ. Լևոնյանը գրում է.

«1863 թ. Խրիմյանը նշանակվում է Մուշի առաջնորդ: Նա գնում է Տարոն՝ հետը տեղափոխելով և իր տպարանը: Այնտեղ Գլակա (Սբ. Կարապետի-Վ.Պ.) վանքում իր աշակերտ Գարեգին Սրվանձտյանցի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Արծվիկ Տարոնոյ» ամսագիրը՝ իր գոյությունը պահելով մինչև 1865 թվականի կեսը:[1]

Սբ. Հովհաննես վանքը Սբ. Կարապետի վանքի հակադիր՝ Մշո դաշտի հարավի, Սասունի Կուրտղկ լեռան արևմտյան շղթայի հյուսիս ստորոտում է շինված և ինչպես Ս. Կարապետից (հյուսիսից), այնպես էլ Սբ. Հովհաննես վանքից (հարավից), երևում է Մշո ընդարձակ և հարթ դաշտավայրը, որին կիսում է Արածանի կամ Մուրադ գետը,- Արևելյան Եփրատը, ձախ ափի կեսը թողնելով Սբ. Հովհաննես վանքի կողմը, իսկ աջ ափը՝ Սբ. Կարապետի կողմը: Ս. Հովհաննեսի կամ Եղրդուտի վանքն ուներ 60-70 աշակերտով գիշերօթիկ դպրոց: Երեք գմբեթավոր, գեղատեսիլ վանքը կառուցված էր անտառապատ գեղաշեն մի վայրում:



Մշո Ս. Հովհաննու (Եղրդուտի) վանքը
Կուրտղք լեռան անտառուտ կողին

[1] Գ. Լևոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1946թ., էջ 196:

Տարոնի պատմական վայրերից են՝ **Հացիկ** գյուղը, որ Մեսրոպ Մաշտոցի ծննդավայրն է և ուներ Ս. Մեսրոպի անունով եկեղեցի, որի ավերակները գոյություն ունեին մինչև 1915 թվականը, երբ Հացիկ գյուղի 5-րդ դարում 1600 տնից մնացել էր միայն 30 տուն: Հացիկ գյուղը գտնվում է Մշո դաշտի հյուսիս-արևելյան մասում, Վարաժնունյաց, այժմ՝ Քոսուր լեռան ստորոտում: Գյալառաշ (Սև գետակ) գետակի վերին հոսանքի աջ ափին:


Խորոնք գյուղը, Մովսես Խորենացու ծննդավայրը, որ 1915 թվականին ուներ 50 տուն հայ, ըստ Ջենոբ Գլակի և նրա ժամանակ՝ 1906 տուն: Խորոնք գյուղը գտնվում էր Մշո դաշտի հարավ-արևելյան կողմը, Արածանիի (Մուրադ գետի) Գուռգուռա կոչվող ջրվեժին մոտիկ՝ հարավային կողմը, Արածանիի ձախ ափին:

Աշտիշատի և Ս. Սահակի վանքերը գտնվում էին Մշո դաշտի Ավրան և Օխտու գյուղերի միջև: Աշտիշատը հեթանոսական շրջանի Հայաստանի կրոնական կենտրոնն էր, ուր գտնվում էին շքեղ պալատներ, Վահագնի և Աստղիկի և այլ մեհյաններ, քրիստոնեական շրջանից էլ Ս. Սահակ կաթողիկոսի վանքը, ուր թաղված էր ինքը:


Լենկթեմուրը (1335-1405թթ.) Տարոն և Սասուն արշավանքի ժամանակ (1388թ.) Աշտիշատի հեթանոսական, թե քրիստոնեական շրջանների շենքերը «խնամքով» քանդում է և նրանց սրբատաշ քարերով, հայ վարպետների ձեռքով կառուցել է տալիս Մշո դաշտի, Սուլուխի (գյուղ) պատմական կամուրջը: 14 կամարներով, Արածանիի (Արևելյան Եփրատ) վրա: Այդ կամուրջն այժմ էլ գոյություն ունի (տես Սուլուխի կամուրջը):

Հ.Ղ.Ալիշանը Աշտիշատի և Սուլուխի կամուրջի մասին գրում է «Աշտիշատ, որ է Յաշտից տեղիք բազմազոհ պաշտմանը դից, ուր զառաջին եկեղեցին կանգնեաց Լուսավորիչն, որ կործանեալ և նորոգեալ, արդ ի մատուռն մի ևեթ փոխեալ է, յորում ամփոփեալ կան նշխարք մեծին Սահակաց Պարթևի և դստեր նորին Շուշանայ և հարաւս նորին և մերձ յԵփրատ կամ Մատրավանք կամ Մանրավաք յորում ամփոփեաք լուսավորիչ զմանր նշխարս Ս. Կարապետին»:[1]

[1] Հ.Ղ. Ալիշան, «Տեղագիր Մեծաց Հայոց», Վենետիկ, 1855թ., էջ 46:



Սահակ Պարթևի մատուռը Աշտիշատում



Սուլուխի պատմական կամուրջը Արածանիի վրա

Սուլուխ գյուղի պատմական կամուրջի մասին Հ.Ղ.Ալիշանն ասում է. «Սուլուխ գիւղ և կամուրջ երկայն 14 կամարօք ի վերայ Մուրադայ (Մուրադ գետի- Վ.Պ.) շինեալ յաւերակաց Աշտիշատայ ի Լենկթեմուրէ»[1]: (Տես Աշտիշատի նկարը Թեոդիկի տարեցույցի, Կ. Պոլիս, 1914թ., էջ 2):

Սուլուխի կամուրջը Տարոնի պատմական կամուրջն է, որ գտնվում է Մշո դաշտում, Արածանիի (Մուրադ գետի, Արևելյան Եփրատի) և Մեղրագետի միացման արևմտյան մասում, Սուլուխ պատմական գյուղի մոտ: Սուլուխի կամուրջը շատ դարեր առաջ կառուցված է և հանդիսանում է Տարոնից և Սասունից դեպի Երզրում գնացող առևտրական լայն ճանապարհի Արածանիի վրա գտնվող միակ կամուրջը՝ Մշո դաշտում:

Մատնավանքը կամ Մատավանքը գտնվում է Մշո դաշտի հյուսիսային երկայնքի միջին մասում, Աշտիշատից կամ Դերընկից մի ժամ հեռավորության վրա, դեպի դաշտ, դա մի փոքր վանք էր և մինչև 1915թ. էլ շեն վիճակում էր:

[1] Նույն տեղը:

2. ՓՇՐԱՆՔՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍԱՍՈՒՆԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ - Հայ ժողովուրդն իր հոգու խորքում պահել է իր նախնիների ավանդությունները, երգել նրանց քաջագործությունները, բանահյուսել նրա մղած հերոսական պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ:

Ինչպես բոլոր ժողովուրդներն իրենց ծագումն ու հողի ազատության համար մղած պայքարը երգել են էպոսներով ու պատկերել հերոսամարտերը (հնդիկները՝ Ռիկ-Վիդայով, հույները՝ Իլիական-Ոդիսականով, իտալացիները՝ Մշակականք-Ենիականով, ռուսները՝ Ռուսլան-Իլիա-Մուրոմեցով, պարսիկները՝ Շահնամեով, ֆրանսիացիները՝ Շանսոն դը Ռոլանով), այդպես էլ հայ ժողովուրդն իր «Սասունցի Դավիթ» էպոսով և մյուս հերոսապատումներով տվել է իր ժողովրդի ու հայրենասիրական գործերի չքնաղ դրվագները: Դրանք սերնդից-սերունդ անցել և հասել են մեզ:

«Սասունի ավանդությունները» ծաղկաքաղ է, որ ներկայացնում է այդ ժողովրդի հոգևոր գանձերից մեկը:

Հայկական դյուցազներգության մեջ շատ դեպքերում հերոսները կրակից են ծնվում (Վահագն): Ծովինարը հայրենի աղբյուրից ջուր խմելով, հղիանում և ծնում է Ադրամելիքին ու Սանասարին: Հերոսների հրեղեն ծիերը նույնպես ջրից են ծնվում: Քուռկիկ Ջալալին Անդոկ սարի արգանդից ժայթքող, պայթող աղբյուրից է դուրս թռել: Թլոլ Դավիթը Սասունի վրա հարձակվող Օղան և Տողան հսկաներին գերի է բռնում, կապում և հորեղբորը հանձնելով՝ ինքը գնում հայրենի աղբյուրի ջրի մեջն է մտնում, հանգստանում.

- Դե, հորեղբայր,՝ կանչեց Ջենով Օհանին -,
Արև տաքցավ, հոգիս տաքցավ, քրտնեցա,
Դուք հսկեցեք Օղան-Տողան չփախնին,
Ես մեկ երթամ Ջուրը մտնեմ ու դառնամ:[1]

Եթե հունական միֆոլոգիայում Անթեյն իր ուժը ստանում էր մայր հողից (Հունաստանի հողը սակավ է), ապա «Սասնա Ծռեր»-ն իրենց ուժն ստանում էին հայրենի ջրից (Սասունում ջրերը գահավեժ հոսում են ու քիչ են օգտագործվում հողերը ոռոգելու համար):

[1] Տ. Չիթունի, «Սասունական», Փարիզ, 1942թ, էջ 979:

Սանասարը հորն սպանելուց հետո Սասուն ապավինելով, հանդիպում է հրաշագործ առվակին, որ գետը կտրում է, նոր խառնվում նրա հետ, «Ազնաց որդու ջուր է, ով որ էդոր ական ջուր խմե, էդպես կտրիչ կըլնի»,- ասում է Սանասարը:

Դավթի Դեղձուն տատիկը, նախքան Դավթի մարտերի մեջ մտնելը, նրան ուղարկում է «Միերի կաթնաղբյուրից» ջուր խմելու: Աղբյուրի առաջ Քուռկիկ Ջալալին, հրեղեն այդ խելոք ձին էլ, ի հարգանս հայրենի ջրի, Միերի կաթնաղբյուրի մոտ ծունկ է չոքում:

Ջրի այս պաշտամունքը, հայկական միֆոլոգիայի մի սքանչելի պատկերն է տալիս և հիշեցնում է այն բացարձակ ճշմարտությունը, որ կյանքը ջրումն է գոյացել ու նրանով է զարգացել:

Սասմանց տան ծագումն էլ սկիզբ է առնում այն ավանդությունից, ըստ որի Ծովինարի՝ ջրի աստվածուհու երկու որդիները, Սանասարն (Շարասար) ու Բաղդասարը, հիմնում են Ջոջանց տունը՝ Սասնա ծռերի իշխանությունն այդ համանուն լեռնաշխարհում: Այստեղ, Միերն, անկասկած, ինչպես իրանական Միհրը, Արևի աստվածն է հանդիսանում, իսկ Դավիթը՝ նրա որդին, այդ ցեղի երկրային աստվածը, ցեղի սիրտը, նրա կենսատու Հերկուլեսը: Ծովինարը՝ Ջոջանց տան մայրը, հանդիսանում է ծովի նիմֆան, ծովի ոգին:

Մսրա-մելիքներն ու օղան-տողանները, արևելքից և արևմուտքից եկող և հայ ժողովրդի գլխի վրայով անցնող օտարերկրյա փոթորիկներն ու բռնակալներն են, որ իրենց գուրզերըն ու սրերը, որպես դամոկլյան սուր, փորձել են մշտապես կախած պահել հայ ժողովրդի գլխին: Իսկ Սասնա ծուռ, որբ Դավիթը ծառայում է որպես հայ ժողովրդի կուտակված ուժ, ձեռքով բռնում սլացող գուրզերն ու սրերը և իր թուրկայծակով ոչնչացնում թշնամիներին: Հայ ժողովրդի ազատության և պայքարի ցայտուն արտահայտությունն է «Սասնա Ծռերի» գործունեությունը, որոնց հերոսների կերպարը, դարերի հնությունից, լուսատու ցոլքով մինչև մեր ժամանակներն է հասնում, որպես մարդասիրական զգացմունքների, ազատության, արդարության և հայրենասիրության համար պայքարի սիմվոլ:

Սասունի սարերն էլ, ըստ հին և մեզ հասնող ավանդությունների, մի-մի օլիմպոս են հանդիսանում: Օլիմպոսում հու-

նական աստվածներն էին ապրում, իսկ Սասունի լեռներում՝ հեթանոս հայերի աստվածները:

Այսպես օրինակ. Սասունի Սիմ լեռը լուսնի աստվածության վայրն է հանդիսանում, ուր բնակվել է Քսիսութրիի որդիներից մեկը՝ Սիմ անունով, որից և լեռան Սիմ անունը, այսինքն՝ լուսին: Իսկ Սիմ լեռը Սասունի լեռն է, որի մասին Մովսես Խորենացին հիշեցնում է, և որի շուրջը մեր թագավոր Սկայորդին բնակեցնել տվեց Ջոջանց տան հիմնադիրներ Սանասարին և Ադրամելիք-Բաղդասարին:

Պրոֆեսոր Գր. Ղափանցյանը, կանգ առնելով սիմ բառի բացատրության վրա, իր «Արա Գեղեցիկի պաշտամունքը» գրքում գրում է. «Սիմ լեռնանունը, որ տրվում է Սասունին, այս «Սիմ» լուսնի անունից է»:[1]

Ինչպես Բաբելոնում կային աստեղային աստվածություններ, այդպիսի մի աստված էլ Սիմ-լուսինն էր: Նրա բնակավայրը երկնամբարձ Սիմ սարն է եղել: Սիմ լեռան պաշտամունքը շարունակվել է նաև հետագայում, քրիստոնեական շրջանում: Այստեղ կառուցված է Անթանիա վանքը, դեպի ուր ուխտագնացություններ էին լինում: Լուսնի խավարման ժամանակ սասունցիները հրացանաձգություն էին անում լուսին՝ բարի աստծուն չար աստվածներից ազատելու համար: Դա, հավանաբար, հենց Սիմ աստծու պաշտամունքի մնացորդն էր նրանց մեջ:

Սիմ լեռան այս ավանդության հետ է կապված Տարոնի ծագումը: Ըստ այդ ավանդության, Քսիսութրիի որդի Սիմն ունեցել է Տարբան անունով մի որդի, որը հավաքելով իր 30 տղաներին և 15 աղջիկներին ու սրանց ամուսիններին, գնում, բնակվում է նույն Սիմ լեռան հյուսիսային ստորոտում փռված դաշտում, նրա անունով էլ, ասում է ավանդությունը, ամբողջ գավառը կոչվեց Տարոն[2]:

Նույն այս ավանդության մասին խոսելով, Մ. Խորենացին ասում է, որ երբ Սիմի որդի Տարբանն իջավ դաշտ, բնակվեց մի վայրում, որտեղից բաժանվեցին ինքն ու որդիները, վայրի անունը կոչվեց Ցրոնք, այսինքն՝ ցրվելու, բաժանման վայր, Ցրոնք գյուղը մինչև 1915 թ. գոյություն ուներ Մշո դաշտում:

[1] Գր. Ղափանցյան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», Երևան, 1945թ., էջ 21:

[2] Լեո, «Հայոց Պատմութիւն», Ա հատոր, Թիֆլիս, 1917թ., էջ 365:

Սասունի և Տարոնի անբաժան միասնությունը թե՛ Մամիկոնյանների, և թե՛ X-XII դարերում Սասունի Թոռնիկյանների իշխանության ժամանակ, հիշեցնել է տալիս Սիմ և Տարբան հայր ու որդու ավանդությունը, որից կարելի է եզրակացնել, որ Տարոնի ազգաբնակչությունը Սասունից է իջել դաշտ այն ժամանակ, երբ խաղաղ շրջան է սկսվել, և Տարոնի բարեբեր դաշտն ու նրա միջով անցնող Արածանի գետը շահագրգռել է նրանց: Իսկ վտանգի ժամանակ, ընդհակառակը, դաշտից փախել և ապաստանել են իրենց պաշտպան Սիմ սարի վրա: Դարեր շարունակ Սասունից Տարոն բնակիչները շարժվել են խաղաղ շինարարական աշխատանքների՝ վտանգներից և թշնամիների արշավանքներից խուսափելու համար:

Սասունի Սիմ լեռան հյուսիսային ստորոտում երկարող Մշու դաշտից անցնող Արածանի գետը իր դաշտի արևմտյան մասում Գուռգուռա է կոչվում, որտեղ գետը ջրվեժով թափվում է ցած ու հոսում դեպի ճապաղջուր: Ըստ Գ. Սրվանձտյանցի գրի առած ավանդության, Աշտիշատի մեհյանի աստվածուհի Աստղիկը, Վահագնի հետ տեսակցելուց հետո, գիշերները գնում էր այդ Գուռգուռայի ջրվեժի տակ լողանում: Սասունի Սիմ-լուսին սարից այստեղ ապրող կտրիճ տարփավորները լուսնի և կրակի լույսով դիտում էին Աստղիկի մարմարակերտ գեղեցիկ մարմինը: Աստղիկ աստվածուհին նկատելով այդ, հրամայում է, որ դաշտը մշուշով լցվի, որպեսզի քաջերն իրեն չտեսնեն ջրվեժի տակ: Այդ օրվանից մշուշը միշտ պատում է Մուշը: Ժողովուրդն ավանդաբար երգեր է հյուսել և երգում է.

Մշու սարեր մշուշ է,
Յուր հողն ու ջուրն անուշ է:[1]

Ըստ ավանդության, Աստղիկ աստվածուհու ստեղծած այդ մշուշից էլ Մուշ է կոչվել Մուշ քաղաքը և նրա դաշտը:

Սասունի մյուս լեռների՝ Անդոկի, Մարութա սարի, Կեփինի, Ծովասարի, Կոշիկի և Սև սարի մասին էլ զանազան ավանդություններ էին պատմում: Անդոկը Սասունի ամենաբարձր լեռն է: Նրա ստորոտում Մերկեր կոչված թաղի արևմուտքում գտնվում է Պայթող Աղբյուրը: Ավանդաբար պատմում են, թե Անդոկ լեռան մեջ ծով է, որի մեջ հրեղեն ձիեր կան, որ գալիս են այդ աղբյուրից դուրս թռչում, դիտում արևն ու աշխարհը, իսկ երբ

[1] Գ. Սրվանձտյանց, Գրոց ու Բրոց, Կ. Պոլիս, 1874թ., էջ 63:

մարդու հոտ են առնում, սուզվում են աղբյուրի մեջ, ձկան պես խորասուզվում ու գնում իրենց տեղը՝ Անդոկի ընդերքը: Ասացինք, որ այդ աղբյուրից է դուրս եկել Քուռկիկ Ջալալին:

Այս ավանդությունը պատմող Օվսկա Տոնեն ասում էր, որ մերկերցիները երկու աստված ունեին՝ մեկը Պայթող Աղբյուրն էր, որի ջրով այդ թաղի բոլոր հողերը հագեցնում էին, իսկ մյուսն՝ Աստվածը: Ըստ նրա պատմածի, մի անգամ իր հայր Օվսիկը Պայթող աղբյուրի մեջ տեսել է հրեղեն ձիու մի քուռակ: Անկասկած, այս ավանդությունը գալիս է «Սասունցի Դավիթ» էպոսից և հիշեցնում Սանասարի մուտքը ծովի մեջ ու Քուռկիկ Ջալալին բերելն այդ ծովի խորքից:

Սասունի ավանդությունների մեջ հատկանշական է, որ լեռներն էլ իրար հետ դյուցազնական մարտեր են մղում: Մարութա սարը, որ Սասունի ամենամեծ ուխտատեղին է եղել, ինչպես Ջոջանց տան հերոսների՝ Միերի և Դավթի համար, որոնք նախքան մարտերի գնալը ուխտի էին գնում Մարութա սարի վանքը և նոր մտնում կռվի մեջ, այնպես էլ մեծ ուխտատեղի է եղել երկար դարեր և մինչև 1915 թվականը: Մարութա սարի այդ պաշտամունքը զայրացնում է Անդոկին՝ Սասունի սարերի արքային, որը մարտի է հրավիրում նրան: Անդոկն իր կայծակի թրով խփում, ճեղքում է Մարութա սարի գլուխը, որը և ճեղքված է մնում մինչև այժմ: Դրա համար նրան ջղլա-գլուխ (զույգ գլուխ) Մարաթուկ էին անվանում: Անդոկի այդ հարվածից վիրավորված, Մարութա սարը հսկա մի ժայռ է պոկում իր կողերից և խփում Անդոկին: Ժայռը խրվում է Անդոկի դոշին, թաղվում նրա կողերի մեջ, դուրս է մնում միայն երկու ջաղացաքարի չափ մեծ ժայռի մակերեսը, որի վրա, ըստ ավանդության, այժմ էլ գտնվում է Մարութա սարի ձեռքի դրոշմը. մատները մի մետրի չափ են, իսկ թաթը ծածկում է ամբողջ քարը:

Անդոկի և Կեփինի միացման թամբաձև տեղում, որը կոչվում էր Շաշկա Մուշե (Մուշի տնակներ), գտնվում է այդ քարը և ամեն անգամ նրանից քիչ հեռու եղած ճանապարհով անցնող մարդիկ գնում էին, դիտում այդ ժայռը և իրար պատմում Անդոկի և Մարութա սարի ճակատամարտի մասին:

Այս երկու հսկա լեռների մենամարտը մեր նախնի դյուցազունների մենամարտերի պատմության արձանացումն է, որ դարեր շարունակ, որպես սրբազան ավանդություն, մնացել է

ժողովրդի հոգու խորքում, կամ աստվածների կռիվը, ինչպես տեղի էր ունենում Օլիմպոսի գագաթին:

Մարաթուկը, հավանաբար, մի աստվածություն է եղել հեթանոսական հայերի շրջանում, ինչպես Ասորեստանի - Բաբելոնի Մարդուկը: Թերևս Մարդուկ աստվածն ինքն է Մար(ա)թուկ դարձել, այսինքն, Ասորեստանից որպես կից մի երկրի, մտել Հայաստան կամ ընդհակառակն, դեռ ուրարտական թագավորության ժամանակաշրջանում կամ նրանից առաջ: Հատկանշական է այն, որ Մարդուկ-Մարաթուկի ուխտը տեղի էր ունենում Վարդավառին, երբ մարդիկ աղավնիներ էին թռցնում, կամ ջրով իրար թրջում, կամ նշանառությամբ իրենց զենքերի ուժը փորձում, իսկ այդ բոլորը հեթանոսական կրոնի հատկանիշներ են: Այդ ուխտը տևում էր չորս օր. մի օրը Մարաթուկի մեծ գագաթի վրա էին անցկացնում, երկրորդ օրը՝ նրա փոքր գագաթի, իսկ երրորդ և չորրորդ օրերը խաղի, պարի և մենամարտի, ձիարշավի ու նշանառության էին հատկացնում: Մարաթուկի լանջի վրա կա մի վայր, որ Շարաքար է կոչվում: Մի հովվի և իր հոտի քարացման տեսարանն է դա: Ըստ ավանդության, հովիվն իր ոչխարներին ամառ ժամանակ բերում է Մարաթուկի լանջերի վրա արածացնելու: Կեսօրվա տոթին, ծարաված ոչխարները խմելու ջուր չգտնելով, մայում են, իսկ այծերը մկկում, մղկտում: Հովիվը հուզված, գոտուց քաշում է իր շիմշատ սրինգը, բարձրանում մի ժայռի գլխի և տխուր նվագով սարերն ու ձորերը լացացնում, Մարութա վանքից ջուր խնդրում, որ նա այդ լերկ ժայռերում մի աղբյուր բաց անի և ինքն ու իր ոչխարները սառնորակ ջուր խմեն: Նա խոստանում է դրա համար նոխազը մատաղ անել Մարդուկ-Մարութին: Հսկա ժայռից, որի գլխին հովիվն իր սրինգով հուզում էր քար ու փետին, իսկ ստորոտում ծարաված ոչխարներն էին մղկտում, մի հորդառատ, սառն աղբյուր է ժայթքում, և նրա ելերքներին թափված ոչխարները խմում են այդ ջրից ու թափ տալիս իրենց հովացած, թրջված ականջներն ու մարմինները: Հովիվն էլ իր գլուխը ծռած սառն աղբյուրից ջուր է խմում, սրինգը լվանում, հովացնում, սակայն ոչխարին առաջնորդող նոխազի վզին դանակ չի դնում, չի զոհում: Մարութա սարը ցասումից քարացնում է ամեն ինչ՝ հովվին, հոտը, մինչև իսկ ջուրն էլ քարանում է, կազմում այդ:

Մի այլ տարբերակով պատմում են, թե Դավիթը հովիվ էր: Ոչխարի կեսօրվա բերի ժամանակ, երբ կթվորներն այդտեղ փռված ոչխարների կիթն էին անում և կաթը կատոշներում ու բարոշներում փրփրում էր, իսկ Դավիթն էլ նայում ու ուրախանում, հանկարծ Մարութա սարի գագաթից հսկա մի ժայռ է գլորվում ուղիղ բերի վայրը՝ տակովը տալու կթվորներին ու հոտը: Դավիթը ժայռի դեմ է վազում և ափը դեմ տալով՝ ժայռը կանգնեցնում, հոտն ու բերվորներին փրկում: Դավթի թաթը դրոշմվում է այդ քարի վրա, որը հիշեցնում է Մարութա սարի թաթը Անդոկին խփած քարի վրա:

Սասունի ավանդություններում մեծ տեղ են գրավում վիշապներն ու օձերը, որոնք դյուցազներգության և անմահության սիմվոլներ են հանդիսանում:

Կեփինից արևելք Գաբլոր, Ավխուարըկ, Ախտորքար լեռնաշարքը վերջանում է Գըռըշիկ գագաթով: Այդ գագաթի ուղղությամբ՝ Հարմոյի գոմի դիմաց, Խիբլկա կոչված աղբյուրի մոտից դեպի Կնկահոտ կոչված ձորը, վիշապի գալարումներ պատկերացնող, ճերմակ կայծքարային մի ճանապարհ է երկարում: Դրան Հուշփի ճամփա էին ասում: Դա մոտ կես կիլոմետր երկարությամբ և երկու մետր լայնությամբ ձգվում է դեպի Գըռըշիկ գագաթը: Պատմում են, թե հսկա մի վիշապ, անցնելով այդ ժայռերի վրայից, իր մարմնով ճեղքում է ժայռերը, ճանապարհ բաց անում և գնում Կնկահոտի ձորը, ուր և երկար ժամանակ ապրելիս է եղել ու այնտեղ էլ մեռել, դրա համար էլ այդ ճանապարհը Հուշփի ճամփա (Վիշապի ճանապարհ) էր կոչվում: Երբ վիշապը մեռնում է, մոտակա էղգարդ գյուղի բոլոր մեղվանոցների մեղուները դուրս են թափվում, պարս տալիս ու գնում դեպի Կնկահոտի ձորը, թափվում վիշապի դիակի վրա, ամպի նման ծածկում նրա մարմինն ու շրջապատը: Էղգարդ գյուղի բնակիչները զարմանում են այդ բացառիկ մեղվագաղթի վրա և սկսում են փնտրել մեղուներին: Հանդիպում են Կնկահոտի ձորն ու զարմանքով տեսնում հսկա վիշապի դիակը, որի մարմնի ամեն մի մասում մեղուներն են նստել և իրենց խայթոցներն ու վերջավորությունները մտցրել նրա մարմնի մեջ: Մեղուներին վիշապի դիակից բաժանել չկարողանալով, վերադառնում են իրենց գյուղը: Մի քանի օր հետո տեսնում են, որ մեղուներն ամպի նման վերադառնում են իրենց փեթակները և սկսում իրենց երթևեկությունը էղգարդից Վիշապի ձորը: Այդ տարի էղգարդն առատ մեղրի բերք է ստանում, սակայն վախենում են մեղրն օգտագործել, որովհետև վիշապի դիակից էր կազմվել ու թունավոր էին համարում: Ուստի որոշում են մեղրը տանել Հալեպ, այնտեղ վաճառել ու վերադառնալ, որ չլինի թե մեղրը գնող մարդիկ ուտեն, մեռնեն և իրենք ձերբակալվեն ու պատժվեն: Այդպես էլ անում են: Հալեպում վաճառված այդ մեղրը երբ հիվանդներն ուտում են, առողջանում են, կույրերի աչքը լույս է ստանում, ճաղատների գլուխները գեղեցիկ վարսերով են ծածկվում, հիլոտները (թոքախտավորները) քաջառողջ են դառնում: Լուրը շրջում է Հալեպով մեկ, թե անծանոթ մարդիկ անմահական մեղր են բերել և սկսում են մեկը մյուսից հարցնել, թե ովքե՞ր են վաճառել: Եվ փնտրում են վաճառողներին: Հալեպից մարդիկ հարցնելով գնում հասնում են Սասունի էղգարդ գյուղը և գտնում մեղր վաճառողներին ու մեղր խնդրում: Էղգարդցիք վախենում են, թե Հալեպի բնակիչները թունավորված կլինեն: Նրանք նախ ուրանում են, հալեպցիները պատմում են այդ անմահական մեղրի թողած հետևանքների մասին և խնդրում հիվանդների համար գոնե իրենց մեղր վաճառեն: Էղգարդցիներն ափսոսում ու զղջում են, որ իրենք այդ տարվա մեղրի համն էլ չեն առել և պատմում են հալեպցիներին վիշապի ու մեղուների պատմությունը: Այդ ժամանակվանից վիշապի ընկած տեղը կոչվում է Վիշապաձոր կամ Կնկահոտաձոր (ընկա այդտեղ), իսկ այն ժայռուղին, որ վիշապի փորի քսվելուց ձյան պես ձերմակել էր ու ճամփա դարձել, կոչվեց Հուշփի ճամփա (Վիշապի ճանապարհ):

Վիշապներին և օձերին, բացի անմահության և բուժման սիմվոլ համարելուց, վերագրում էին նաև տան հավատարիմ պահապանի պաշտոն: Այդպիսի օձերը բնակվում էին տան մեջ և ազատ ման էին գալիս: Այժմ էլ Աշտարակի շրջանի Մաղդա գյուղում Օվսկա Տոնե անունով մի կոլտնտեսական իր տան օձին մեծ ջերմեռանդությամբ է խնամում, իսկ Հայրոն օձը բռնում և իր ծոցումն է պահում: Վիշապի և օձի պաշտամունքի հետևանքն է և այն, որ ինչպես Սասունում, այնպես էլ Տարոնում շատ պատմական վայրեր կան, որ Վիշապ և Օձ անունն են կրում: Հեթանոսական կրոնական պաշտամունքի կենտրոն վաղեմի Աշտիշատի մոտ (Տարոնում) Վիշապ քաղաքի ավերակներն էին գտնվում: Այդ Վիշապ քաղաքի մասին պատմիչ Հովհան Մամիկոնյանն իր «Պատմութիւն Տարօնոյ» գրքում հիշատակում է նույն Վիշապ քաղաքի մասին և ցույց տալիս տեղը: Տարոնի դաշտի սրբազան

Մեղրագետի ակունքի մոտ կար Օձ քաղաք, որի շուրջը սալահատակված է եղել, որին նույն տեղում գտնվող փոքրիկ գյուղի անունով այժմ Մուշաղբեն են կոչում:

Վիշապ օձի այդ պաշտամունքն արտահայտվել է նաև Հայկազյանց Տիգրան Երվանդյան թագավորի ժամանակ, երբ հայկական դրոշակի վրա վիշապն ու օձն էին զինանշանը:

Այդ պաշտամունքն արտահայտվում է և նրանով, որ օձի շապկից կտորներ են կարում հագուստների վրա, գլխարկի տակը՝ ներսի կողմում, որպեսզի օձ աստվածը նրանց պաշտպանի չարքերից: Այդ առթիվ Սրվանձտյանցը գրում է.

«Մինչև այսօր ալ օձու շապիկ կը դնեն իրենց ծոցերը կամ գլխարկի տակ, որպեսզի օձերը չխայթեն զիրենք»:[1]

Երեխաների գդակների վրա ուլունքներով վիշապի և օձի նկարներ էին գործում, որպեսզի երեխան մեծանար, հերոս դառնար, վիշապազուն լիներ: Ժողովուրդը վիշապներին անմահ է համարում, իսկ եթե մեռնեն էլ, նրանց դիակը անմահություն կսփռի, ինչպես տեսանք «Հուշփի ճամփան» վերոհիշյալ ավանդության մեջ: Ընդհանրապես, վիշապը պատկերացվում է հսկա մեծությամբ և թևավոր, որը կարող է սավառնել տիեզերքի մեջ, երկնքում: Հիշատակության արժանի է և Վիշապ համաստեղությունը, որը նույնպես ցույց է տալիս վիշապի պաշտամունքը:

Օձերն, ըստ սասունցիների ավանդության, երբ ծերանում են, գալիս են Ծովասարի, Կեփինի հայրենի աղբյուրների վրա ջուր խմում, ապա անմահական ծաղիկ ուտում ու մտնում ջրի մեջ, շապիկը փոխում, ուրիշ խոսքով՝ մեռնում և հարություն առնում: Սա հիշեցնում է Սումերա-Բաբելական Թամուզ աստվածը կամ Բաբելոն քաղաքի Մարդուկ աստվածը, որ մրցում էր Թամուզի հետ, նույնպես մեռնում և հարություն էր առնում: Սասունցիները հավատում էին իրենց հայրենի աղբյուրների, լուսաղբյուրների, կաթնաղբյուրների, օձաղբյուրների բուժիչ հատկությանը: Այդպիսի բազմաթիվ աղբյուրներից մեկը՝ Օձաղբյուրը, գտնվում է Գեղաշեն և Շուշնամերկ գյուղերին մոտիկ՝ Անթանիա վանքում: Ըստ ավանդության, մի օր վերքերով ծածկված մի օձ գալիս է այդ աղբյուրի վրա, մտնում ջրի մեջ և լողանում, որի շնորհիվ մարմինն առողջանում է, կաշին թողնում և մի աշխույժ շահմար

[1] Գ. Սրվանձտյանց, Գրոց ու Բրոց, էջ 59:

(արքայաօձ) է դառնում, ջրից դուրս գալիս և գնում: Այդ աղբյուրի մոտ կառուցված Անթանիա վանքը ոչ միայն ուխտատեղի էր սասունցիների, այլև Մուշի, Բաղեշի, Տիգրանակերտի բնակչության համար: Ուխտի եկողները, նախ՝ լողանում էին վանքի տակից անցնող մի առվի մեջ, ապա գալիս Օձաղբյուրի ջրով էին լողանում և գոհունակությամբ մեկնում այն համոզմամբ, որ ինչպիսի հիվանդություն էլ լիներ իրենց մարմնում, բուժվելու էր: Օձի աղբյուրներ, ըստ ավանդության, կան Ծովասարի և մյուս լեռների վրա: Ծովասարի վրա, գագաթին լուսնաձև մի լիճ կա և կոչվում է սուրբ Աստվածածին, իսկ Կեփինի դոշին եղած Օձաղբյուրը կոչվում է Կարմիր ճակատ, որոնք իրենց ուխտավորներին բուժում են: Այս բոլորն առնչվում են ջրի պաշտամունքի հետ: Ավանդաբար պատմվում է, թե Սասունցի Դավթի բերդին մոտիկ գտնվող Հեթինք գյուղացի Քաչալ Մարգարը ուզում է բուժվել և գնում է Կեփինի Կարմիր ճակատի Հակոբի Օձաղբյուրի վրա: Այնտեղ նկատում է զառամած և վերքերով ծածկված մի օձ, որը նույնպես գալիս է այդ աղբյուրի եզերքին, մի ծաղիկ ուտում ու մտնում ջրի մեջ լողանում, ապա դուրս գալիս վերականգնացած ու ցոլք տալով, գնում է: Մարգարը հետևում է օձի օրինակին, ինքն էլ է առողջանում և գնում:

Լեռների պաշտամունքը սասունցիների մեջ տնտեսական և գոյության պահպանման նշանակության հետևանքն է եղել: Նախ՝ անասնապահության հարմար, արոտներով և ջրով հարուստ լինելը ապահովում էր տնտեսությունը: Երկրորդ՝ անառիկ լինելով, կռվին հարմար էր, որով հարձակվող թշնամիներից պաշտպանվում էին:

Ծովասար լեռը պաշտվում էր շնորհիվ իր ջրառատության և լուսնաձև լճի, որ գտնվում է նրա գագաթի վրա: Սրա ջրով ոռոգվում էին շրջակա հողերը: Վերջապես՝ Ծովինարն այդտեղ էր հայրենի աղբյուրից ջուր խմել և Սասնա տան հիմնադիրներին՝ Սանասարին ու Ադրամելիքին (Բաղդասարին) ունեցել: Անդոկ լեռը պաշտպանության սիմվոլն էր: Այդ լեռանն են ապաստանել սասունցիները և՛ անցյալ դարերում, և՛ 1894, 1904, 1914-1916 թվականներին, որի համար ավանդաբար դարձել էր պաշտամունքի առարկա: Լեռների պաշտամունքը սասունցիների մեջ այնքան ուժեղ էր արմատավորված, որ նրանք 1916-1920 թվականներին, Սասունից Կովկաս անցնելիս, որպես բնակավայր Արագածի լանջերն ընտրեցին:

3. ՆՄՈՒՇՆԵՐ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐ-ԵՐԳԵՐԻՑ

Սասունում հարսանիքների ժամանակ երգելով էին պարում: Երգողները երկու խմբի էին բաժանվում. մի խումբը երգում էր, մյուս խումբը «դարձնում» (կրկնում նույն եղանակն ու բառերը): Սասունի այդ պարերգերը մյուս շատ երգերի նման հասան Թալին-Աշտարակ և կատարվում են այսօր էլ: Երաժշտական գործիքներից կար միայն «փուզը» (սրինգ), որի հարգի տեսակը «շմշաք փուղը» (շմշաք փայտից շինված փող), ստացվում էր Հալեպից, Դիարբեքիրից և Տիգրանակերտից (Մուֆարկին կամ Ֆարխին): Փողփուչը հարսանիքի երաժշտական մասի հոգին էր հանդիսանում: Փողը ոչ միայն պարի անգնահատելի գործիք էր, այլև «ջվաթի» (նիստի) ժամանակ: Փողփուչների նվագի տակ հարսանիքի տանը, ունկնդրող բազմությունը (նույնիսկ փողի ձայնին սովոր անասունները) քարացած լսում էին «Ճիակի», «Լեյլա և Մեջնուն», «Մամե Զինե» կամ ռազմական եղանակներ, այս կամ այն հայ և քուրդ հերոսների մասին: Հետագայում դհոլ-զուռնան էլ գործեց:

Էմշոյի Մկրոն, Հեպոյի Վարդանը, Մաոկոյի Մանոն հռչակավոր, «Փող պատռող»-ներ (փչելուց սրինգ պատռողներ) էին: Այդ փողփուչներն իրենց փողի ձայնով պտտացնում էին բազմաթիվ հոտերի՝ Անդոկի, Ծովասարի, Կեփինի ու Մարաթուկի լանջերի, ստորոտների և սառնորակ աղբյուրների վրա, տանում նրանց ցանկացած ուղղությամբ: Ահա օրինակներ այդ պարերգերից:

ԳՈՐԱՆԻ
(ծանր պար)

1. Ջար լո լո, լո լո լո, լո լո լո լո լո,
   Ջար լե լե, լե լե լե, լե լե լե լե,
   Այ լե լե, լե լե լե, սե տար գորանի:
2. Ցորինըմ ցանը լո էդիվ ադ սարուն.
Աստված է սպանը լո զաս տարվը Կարուն.
Ծեգ շամամ չեղավ լո ջամպեք ադ յարուն:
3. Սաբաթան պոլուր հադ պարի լուսուն,
   Բզգիգն էր նստը վըր օսկու քուռսուն,
Զգոջգընին համբրացըք հինգ հարիր իթսուն
զքը խուլամ գանըմ ըր բաժը գիսուն:

4. Ցորինըմ ցանը էլիյա բառգը,
Բզդիգըմ սիրը չըմ գառնա թարգը,
Շնութին գանե չըմ խիմշը զարդը:
(Սկզբի տունը միշտ կրկնվում է)

ՉԱՄԹԻԼ
(ծանր պար, հարց ու պատասխանի ձևով)

- Ջմերուս ծանրութեննեն ձամթիլ գդրավ, ծովը բադավ:
- Լողվորնուց մեգ լե ես ըմ, խաս լե ես ըմ, բաշ լե ես ըմ:
- Զըմ գլխու կակաթ գիդամ, զըմ ձամթելն էլ հան ի ծովեն:
- Ինչ գենըմ զգլխու կակաթ, չըմ հանը զձամթիլն ի ծովեն:
- Զըմ թուխ-թուխ աչքիր գիդամ, զըմ ձամթիլն էլ հան ի ծովեն:
- Զըմ վզը վզնոց գիդամ, զըմ ձամթիլն էլ հան ի ծովեն:
- Ինչ գենըմ զվզի վզնոց, չըմ հանը զձամթիլն ի ծովեն:
- Զըմ շամամ ձձիր գիդամ, զըմ ձամթիլն էլ հան ի ծովեն:
- Ինչ գենըմ զշամամ ձձիր, չըմ հանը զձամթիլն ի ծովեն:
- Զըմ մեջքը քամար գիդամ, զըմ ձամթիլն էլ հան ի ծովեն:
- Ինչ գենըմ զմեջքի քամար, չըմ հանը զձամթիլն ի ծովեն:
- Զըմ վրավու ֆստան գիդամ, զըմ ձամթիլն էլ հան ի ծովեն:
- Ինչ գենըմ զվրավու-ֆստան, չըմ հանը զձամթիլն ի ծովեն:
- Զըմ օտաց խլխալ գիդամ, զըմ ձամթիլն էլ հան ի ծովեն:
- Ինչ գենըմ զօտաց խլխալ, չըմ հանը զձամթիլն ի ծովեն:
- Զըմ մադվու մադնին գիդամ, զըմ ձամթիլն էլ հան ի ծովեն:
- Ինչ գենըմ զմադվու մադնին, չըմ հանը զձամթիլն ի ծովեն:
- Զըմ անուշ բակիգ գիդամ, զըմ ձամթիլն էլ հան ի ծովեն:
- Ինչ գենըմ զանուշ բակիգ, չըմ հանը զձամթիլն ի ծովեն:
- Զըմ սիրող սրտիկ գիդամ, զըմ ձամթիլն էլ հան ի ծովեն:
- Քու սիրող սրտի համար գհանըմ զձամթիլն ի ծովեն:

ԵՐՈՒՍԱՂԵՄ ՈՒԽՏ ԸՄ ԱՐԸ
(ծանր պար)

Երուսաղեմ ուխտ ըմ արը, ջամփեն էր Արաբստան,
Բազրգան պարծր գերկեր շադ լավ է մար ու մարջան:
Զքու աչքեր, որ ես գասեք Բշերգու շուշան նման.
Զքու պերան, որ ես գասեք ժամդվան խորան նման:
Զքու քթիգ, որ ես գասեք, Սուլթանի սիսեռ նման,

Ձքու ագռեք, որ ես գասեք, սադաֆի կարբան նման,
Ձքու ձամիր, որ ես գասեք տամբուրի թելի նման,
Ձքու մեջքունք, որ ես գասեք, խարծի խամշի է նման,
Ձքու թևիր, որ ես գասեք, պամպագի օլուր նման,
Ձքու մադվին, որ ես գասեք, կառտոլի մոմի նման,
Ձքու ձձիր, որ ես գասեք հոդով շամամի նման:

Ն ՈՒ Բ Ա Ր
(ծանր պար)

Հայ Նուբար, Նուբար, Նուբար,
Ձան Նուբար, Նուբար, Նուբար (կրկներգ):
1. Ձնջղգնիր շադ բզդիգներ,
Լաբստիգնին պաց աչըվնին,
Աղվնգնին էրգեն բոչիր,
Կիլանին սուր ագառնին,
Լագլգնին էրգեն վզիր:
Գռնգնին պարագ բոչիր:
2. Կացը, կացը հեռացա,
Պարծր սարուն մոդացա,
Բզդիդ յարուն գարոդցա:
3. Էլավ հարավու քամին,
Վըր ծովուն պաներ գամին,
Կլորավ, գոդրավ սազբաղին:
4. Համբարձման էրգուշապքին,
Գռվան էրգու դեքարգին,
Վերցըն զփուցքն ու կերընդին
Դվացըն իրարու հոր հոկին:
4. Էլան վըր կեդը ափին,
Ծորեցըն, ծորթըփեցըն,
Ծանրիգ, մարիգ, խորմեցըն,
Գեմիգ չեղավ գաբեցըն:
6. Ձձամիր գեմիգ շինեցըն,
Սելիգ չեղավ դրեցըն,
Սրդիդ սելիգ շինեցըն
Տարուճ խոդիգ դրեցըն,
Գրեցըն թամամեցըն:
7. Կացըք ադ Մշու-տիմաց,

Դեսաք զառնիր գիսապաց,
Մդաք գառնեք թաժա հաց,
Անդեր բոջին զիսէխած.
Ընձը ինչ խածնիլ բիդեր,
Ընձը կրգանուց Բիդեր:
8. Կացը վըր Հալբա Սարուն,
Բլբուլ նստեր վըր քարուն,
Գիլեր զաշուն ու զգարուն:
9. Խանջար քաշող գալեցիք,
Խշտիգ-քոլոս հեթենցիք,
Կղտուր ծախող սպզանցիք,
Գորիկ ուտող սեմալցիք,
Թութուն քաշող շենիկցիք,
Իշու քշող հլողընցիք,
Սիսեռ ուդող իշխնձորցիք:

ԼՈՒՍՆԱԳՆ ԱԴ ՊԱԳՆ ԻՃԵՐ ԷՐ
(ծանր պար)

1. Լուսնագն ադ պագն իճեր էր
Պագն արևով լցվել էր,
- Լուսնագ, խուրբան, ո՞ւր գերթաս,
- Գերթամ վըր Հալբա Սարուն,
- Շադ պարիվ դար ըմ յարուն:
2. Հոշի լախիգ մըրճըմով,
Ազաբ դղեն փըռչըմով,
Իճնենք բաղչեն խաուխի հով,
Սիրենք գիրար հավեսով:
3. Տո, դղա, լաո, մշեցի,
Շուն շան որդի բաղեշցի,
Մախաթ ջանըդ շշեցի,
Հատա Բաղեշ քշեցի:
4. Դարին դասներգու ամիս,
Խնձորն էր թառմը կոտիս,
Հար հիպ բահեք քըզը դիս:
5. Դարին դասներգու համար
Խնձորն էր թառմը քամար,
Հաբ հիպ բահեք քի համար:

5. Կացը, կացը հեռացա,
Պարծր սարին մոտեցա,
Քաղցր յաբուճ գարոդցա:
7. Չոլեցը չոլքըփեցը,
Ֆալա էդիվս իշեցը,
Թուխ-թուխ աչքեր լացըցը,
Դաստմալ կոդուց քաշեցը,
Ջուլալ արտսունք սրբեցը:

ԴԵՐԻԿՈ ՆԻՆԱ
(ծանր պար)

1. Դերկո նինա, նինա, նինա,
Դերկո նինա, դերկո ջան:
2. Ծեր դան էդիվ առուն հանած,
Պոլրե-պոլուր ոըհան ցանած,
էրթեք, ուզեք նոր նշանած
Տառ չըք ուզը մեղոք հանած,
Տառ չըք պերը բուխքան գաբած:
3. Մըր դան էդիվ հադ ըմ տտում,
Ծըր դան էդիվ հադ ըմ տտում,
Քու բաբ մեռավ չեգար խթում:
4. Մըր դան ագեր քառսուն գարաս,
Ծըր դան ագեր քառսուն գարաս,
Օսկկի գըմգըմք արծըթե թաս,
Քառսուն գարսի կինին էր հաս,
Ըմեն գարսը գըդխեմ ի դաս.
Հարմըն գըդխու բակըմ ի դաս.
Թա տու չիդաս, տու կոթենաս:
5. Մըր դուն ու ծիր մեյմեգ կերան,
Քամին էլավ էրան-էրան,
Պոլուր էրիս բգդիգ պերան,
Քու դանողի տուն էր ուերան:
6. Մըր դան էդիվ արդ կարընցան,
Մըր դան էդիվ արդ կարընցան,
Բոլուք-բոլուք էգան անցան,
Ջուլոն մեջվին չճանչըցան:
7. Մըր դան էդիվ պուլ մ'էր թգի,

Ծըր դան էդիվ պուլ մ'էր թգի,
էրգու գաբավ մեճ խըլըգի,
Մաբիգն ընձը կաուներ քըզը:
8. Մըր դուն ու ծիր մոդիգ, մոդիգ,
Իճնենք բաղչեն քաղենք խոդիգ,
Պերենք տրենք մսրա մոդիգ,
Դեսնենք վի՞ր յարն է խորոդիգ:
Ըմ յար կըց քումն էլ խորոդիգ:
9. Մըր դան էդիվ ճառ մ'էր դանճի,
Ջաղճիգ գուզեք չիդեր ընճի:
Մըր դան էդիվ ճառ սալորի,
Ծըր դան էդիվ ճառ սալորի.
Հադիգ, հադիգ գը կլորը,
Ուվըր վերցեր չըր հալվորը:
10. Մըր դան էդիվ պուլ մ'էր պնդուգ,
Ծըր դան էդիվ պուլ մ'էր պնդուգ,
Ջուլոն զխմուր թողեց կընդուգ,
Առանք զիրար մդանք սնդուգ:

ՄԸ ԳԻՆԱ, ՀԱՅ, ՄԸ ԳԻՆԱ
(ծանր պար)

1. Մը գինա, հայ, մը գինա,
Սրդիգ մալուլ մը գինա,
Աշխարհ մարտու չը գինա:
2. Դարին դասներգու ամիս,
Սրդիգ, մալուլ մը գին,
Խնձորն էր թառմը կոդիս,
Աշխարհ մարտու չը գինա:
3. Մեգիգ չեղավ սիրեր զիս,
Սրդիգ մալուլ մը գինա,
Մը գինա հայ մը գինա,
Աշխարհ մարտու չըգինա:
4. Խնձորի գես խաճուգ էր,
Խաճուգ էր, խաճմըճուգ էր,
Չորս գոշեն արծըթուգ էր,
Յարուճ կոդին խրուգ էր:
5. Կացը, կացը, հեռացա.

Կացը վըր Հալբա Սարուն,
Գաքավ նստեր վըր քարուն
Գիլեր զաշուն ու զկարուն,
Ծեն գիդեր վըր սարերուն:
6. Դարին դասներգու համար,
Խնձորն էր քառմը քամար,
Բահեր ենք յարուճ համար:
7. Դարին պոլոր մեգ կարուն,
Ախ գենեք գիկեր արուն,
Կիշեր չըկեր ընձը քուն:
8. Խամ-խամ քուռագ ըմ հեծը,
Արազու ճուրն ըմ անցը,
Սրդիգ մալուլ մը գինա,
Դունյեն մարտու չը գինա:
9. Արազ ընձի ջամփա դուր,
Ջըմ յարնըմ շադ գարոդցը,
Յարս գայներ վըր ժայռին,
Բլբուլ նստեր վըր ձառին:

ՀԱԲԸԼԲԱՆ

1. Հաբըլբան է էրթալու,
Քերեգան է գարտալու,
Յես ինչ գենըմ չքերեգան,
Ըմ յարն է դաս դարեկան:
2. Կուրավու պարծր կեղ է,
Ուր ճուրն հիվընդի տեղ է,
Ադ ինչ անօրա կեղ է:
3. Տո դղա, դղա, ալ գաբով,
Ջուրի՞ երպ ընցնես մեր պագով,
Մըր խորոտիգ հարսն աբով:
4. Գերթամ գասըմ մեծերուն,
Ջարգըն քի խանջար խորուն,
էլնը քու գարմիր արուն,
Թափը վըր քու թևերուն,
Գոլի մեջ քու սոլերուն:
5. Տո դղա, դղա, շան դղա,
Ջուրի՞ երպ ընցնես մը տըռնով,


Խանջար գաբերըս քու ջռնով:
Գերթամ գասըմ մեծերուն,
Ջարգըն քի խանջար խորուն: (Կրկնել շարունակությունը)


Այս և մյուս բոլոր պարերգերը և՛ երգվում էին, և՛ փողով (սրնգով) փչվում, դհոլ-զուռնայով նվագում, որի նվագի տակ շուրջպար էին բռնում հարյուրից ավելի մարդիկ, մանավանդ, եթե բացօթյա էր լինում, և ռիթմիկ պարում, իբրև միածույլ մի օղակ՝ մարդկանցից կազմված:

4. ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻ ՊԱՐԻ ԽՈՒՄԲԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ


Սասունի տասը շրջաններից՝ բուն Սասունից, Տալվորիկից, Շատախից (Սասունի), Փսանքից, Խիանքից, Խուլպից, Խաբլջոզից (Հազզոյի շրջան), Մոտկանից, Խութ-Բռնաշենից և Խարզանքից եկած սասունցիները իրենց 1915 թվականի վերջին և անհավասար հերոսամարտից հետո թողեցին արնաներկ Անդոկն ու Ծովասարը, Կեփինն ու Մարութա սարը, Տալվորիկը և Մոտկանը, թողեցին հազարամյակների իրենց անթափանց կիրճերն ու արծվանիստ բարձունքները. Սանասարի, Բաղդասարի, Դավթի և Միերի Սասունը, պատմական հուշարձաններն ու Մարութա վանքերը, իրենց արդար քրտինքով ածեցրած կանաչ արտերն ու հասուն այգիները, անմահ շիրիմներն ու անթաղ աճյուններն իրենց սիրելիների, վշտով թողեցին, կռվով թողեցին: Անօրեն թշնամին ամեն ինչ խլեց նրանցից, բացի հայրենասիրական ոգուց, ըմբոստ, կռվող, հպարտ, աննվաճ և ազատասեր ոգուց, որում բոցկլտում է Սասնա ծռերի հերոսապատում էպոսը, ավանդությունները, երգերն ու պարերը, սասունցու լեռնցու պարզությունը, աշխատասիրությունը:

Նոր Սասունի՝ Սովետական Հայաստանի Աշտարակի և Թալինի շրջաններում, Արագածի փեշերում, այդ ոգին վերածնվեց, հզորացավ սասունցիների այդ նոր հայրենիքում: Այդ ոգին բոցկլտում է և՛ ակումբներում, և՛ դպրոցներում և՛ երիտասարդների երգի ու պարի խմբերում, որպես Սասունից բերված անշեջ կրակ:





Աշնակի գլխավոր փողոցը և արհեստական լիճը



Դլիթ, թանաքաման-գրչաման, որը գործածվում էր նաև Սասունում

Սասունից եկած ավագ սերունդն իր հետ բերած և Սովետական Հայաստանում աճեցրած այդ ոգին, որպես մարտական երգ, գեղեցիկ և առնական պար, որպես հայրենասիրություն, որպես էպոս և ավանդություն, որպես խաղաղության աղավնի փոխանցվել է իր նոր սերնդին, որը Սասունը չի տեսել, բայց ծնողներից լսել է նրա հերոսապատումը:

Երիտասարդության և ուսանողության Հայաստանի առաջին փառատոնի նախապատրաստման աշխատանքները խոր արձագանք գտան և սասունցի երիտասարդների հոգու խորքում: Դա հեքիաթային ուրախություն պատճառեց և ստեղծվեց այն միտքը, որ կգա մի օր թերևս և հաջողվի Հայաստանում՝ հանրապետական մրցումներում շահել և ով գիտի, թերևս կարելի լինի մասնակցել երիտասարդության և ուսանողության համաշխարհային 6-րդ փառատոնին՝ Մոսկվայում:

Ահա թե ինչու Աշնակի, Վ. Սասնաշենի, Ն. Սասնաշենի, Դավթաշենի, Սասունիկի և Աշտարակի ու Թալինի շրջանների սասունաբնակ գյուղերի կոլտնտեսային երիտասարդությունն ու ուսանողությունը ամիսներ շարունակ սկսեցին հավաքվել իրենց գյուղերի սպորտի, երգի՝ պարի ինքնագործ խմբերի շուրջը, աշխատել, մարզվել, երգել և պարել այնպես, որ հանրապետական առաջին և ապա համաշխարհային երիտասարդության և ուսանողության 6-րդ փառատոնի մրցումներին մասնակցելու համար համառ պայքար տանեն. երգել, մարզվել, պարել այնպես, որ առաջավորներին հասնելը ոչ թե երազ, այլ իրական լինի:

Խորհրդային Հայաստանի երիտասարդության և ուսանողության հանրապետական 1-ին փառատոնին, ինչպես Հայաստանի բոլոր շրջաններից, այնպես էլ Աշտարակի և Թալինի շրջանների սասունաբնակ գյուղերի սպորտի, երգի, պարի ինքնագործ խմբակները, երկար պատրաստությունից հետո, 1957թ. մայիս ամսում շրջանային մրցումներ անցկացրին և լավագույն խմբերին ուղարկեցին Երևան՝ հանրապետական 1-ին փառատոնին մասնակցելու համար:


Երևանում աչքի ընկան Աշնակի և Սասունիկի ինքնագործ պարի խմբակները, որոնցից առաջինը՝ Աշնակինը, արժանացավ ոսկե մեդալի և հատուկ պարգևատրման իրավունք ստանալով, մասնակցել երիտասարդության և ուսանողության համաշխարհային 6-րդ փառատոնին՝ Մոսկվայում, իսկ երկրորդը՝ Սասունիկը, արժանացավ հանրապետական 1-ին փառատոնի արծաթե մեդալի, սակայն 6-րդ փառատոնին մասնակցելու իրավունք չշահեց:

Աշնակը Թալինի և Աշտարակի շրջանների սասունաբնակ գյուղերի ամենամեծն է և միակ գյուղն է Արագածի լանջին, որ ունի լավ խաղողի այգիներ և պտղատու ծառեր: Աշնակի կոլտնտեսությունն էլ տնտեսապես ավելի ապահով է, քան մյուսները: Այդ գյուղի կոլտնտեսական կուլտուրական ծախսերն էլ հնարավորություն են տալիս կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային վիճակը բարելավելու համար:

Աշնակի պարի ինքնագործ խմբակն սկսել է գործել 1936 թվականից:

Տոնականորեն զարդարված է Հանրապետական ստադիոնը, երկրագնդի մակետի վրա վառվում է փառատոնային ջահը... Աշխարհի դեմոկրատական երիտասարդության հիմնի հնչյունների տակ դանդաղորեն վեր է բարձրանում փառատոնային դրոշը: Սկսում և վերջանում է շքերթը: Խոր լռություն է տիրում, որին հաջորդում է հաճելի անակնկալը՝ ստա-

դիոնի վրա երևում է ուղղաթիռը, որ դանդաղ և ուղղաձիգ իջնում է խաղադաշտի կանաչ գորգի վրա: Ուղղաթիռից երկու պիոներ են դուրս գալիս, մեկը ծաղկեփունջ, մյուսը՝ հուշադրոշ և հանձնում են փառատոնային կազմկոմիտեին: Ուղղաթիռը դանդաղ և ուղղաձիգ բարձրանում է վեր, ստադիոնի վրա և ջերմ ողջյունների հետ թռչում:



Ահագչի գյուղի երիտասարտները և տղամարդիկ յարխուշտա և ծանր պար պարելիս

Լսվում է ավանդական դհոլ-զուռնայի ձայնը: Փոթորկվում է ստադիոնը, ներս է մտնում կառքերի շարասյունը, հարսանքավորների բազմությունը, հարս ու փեսան, որոնց հետևից հաղթական ռիթմի տակ պարելով գնում է Սասունի տարազ

հագած Աշնակի պարի խումբը, մտնում ստադիոն, հուզում հանդիսատեսին:

Աշնակի սասունցիների պարի խմբի մի զարմանալի առանձնահատկությունն էլ այն է, որ աղջիկները տղամարդկանց հավասար եռանդով կատարում են տղամարդկանց խրոխտ պարերը:

Բոլոր խմբերի ներկայացրած հայուհիների համար բնորոշ են նուրբ, նազելի շարժումները: Նրանք բամբակ են հավաքում, փոցխ են անում, սիրած տղային են սպասում, թե տեսնում, միշտ նազելի են, մեղմ ու խոհուն: Սակայն հայ աղջիկը գիտե նաև փոթորկել մարտի գոռ պահին, կռվել իր հոր, եղբոր ու ամուսնու կողքին, պաշտպանել իր հայրենիքը օտարի ոտնձգությունից: Եվ ահա «Յարխուշտայի» աղջիկները, որ օղակում են տղաների շարքերը, իրենց նազելի իրաններով փոթորկում են, կռվում, կայծեր են թռչում նրանց գեղեցիկ աչքերից, իսկ օձագալար հյուսքերը գալարվում են նրանց քիկունքներին: «Յարխուշտան» հայուհու բնավորությունը, նրա հոգեկան աշխարհը ամբողջացնող պար է:

Հայաստանի Հանրապետական առաջին փառատոնի եզրափակիչ նիստում Աշնակի սասունցիների երգի-պարի երկսեռ խումբը ոսկե մեդալի արժանանալուց հետո մեկնեց հայրենի գյուղը՝ Աշնակ, հանգստանալու: Այդ օրերին Աշնակի տեսարժան վայրերն ու գյուղի բարեկարգումը կինոխրոնիկայի համար նկարվեց: Խումբը հուլիսի 9-ին մեկնեց Մոսկվա:

Երիտասարդության և ուսանողության համաշխարհային 6-րդ փառատոնի քաղաք Մոսկվան գրկաբաց ընդունեց ամբողջ աշխարհի 120 երկրների և ժողովուրդների խաղաղության դրոշակակիր երիտասարդներին, որոնց մեջ և համամիութենական փառատոնի գեղարվեստական մրցումներում մեծ հաջողությամբ հանդես եկած «Հայէլեկտրոգործարանի» տղամարդկանց երգեցիկ խմբին, փայլուն հաջողություն ունեցող հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլի երիտասարդական խմբին, վարպետության և սասունցի լեռնային ժողովրդի ավանդական պարերի խրոխտ կատարողներ Աշնակ գյուղի տղաների և աղջիկների պարի խմբին, որոնք համամիութենական մրցանակաբաշխությունից հաղթական դուրս եկան և իրավունք շահեցին մասնակցելու երիտասարդության և ուսանողության համաշխարհային 6-րդ փառատոնին:

Մոսկվան ցնծում է. Փառատոն... այս հուզիչ բառն է մայրաքաղաքի միլիոնավոր բնակիչների շուրթերին և աշխարհի բոլոր կողմերից՝ Շ վ եյցարիայի և Հայաստանի լեռնային գյուղերից, Աֆրիկայի և Մոնղոլիայի տոթակեզ տափաստաններից, Հնդկաստանից ու Մեծ Չինաստանից, Ամերիկայի, Եվրոպայի և Ասիայի բոլոր երկրներից շոգենավերով ու գնացքներով, օդանավերով Մոսկվա ժամանող երիտասարդության և ուսանողության համաշխարհային 6-րդ փառատոնի մասնակիցների շուրթերին: 120 երկրների պատվիրակները տեղավորվում են ծածկազարդ Մոսկվայի հյուրանոցներում ու կուլտուրայի տներում: Շենքերի բակերում, այգիներում հնչում է երգը, ծիծաղը, նվագը, թնդում է պարը աշխարհի բոլոր լեզուներով:

Ահա Մոսկվայի Չերյոմուշկա փողոցի թիվ 4 շենքի հրապարակը, հայկական զուռնայի զիլ ձայնը բռնել է չորս կողմը: Շրջան կազմած պարում են աշնակցի-սասունցիները, եռում է պարը, եռում են և ադրբեջանցի ու վրացի տղա և աղջիկների սրտերը, ձգվում դեպի պարը, ձուլվումեն իրար հետ պարի մեջ ու եռանդով պարում են երեք հանրապետությունների երկսեռ երիտասարդները: Մոսկվան տեսնում, հայրաբար ժպտում, ծափահարում է պարողներին ու նրան ձայնակցում են արտասահմանյան հյուրերը: Չերյոմուշկա փողոցի թիվ 4 շենքից քիչ այն կողմը էստոնացի տղաները հուզված երգում են հայկական ժողովրդական «Ծիծեռնակը», ձայնակցում են «Հայէլեկտրոգործարանի» տղաները, երգում է «էստոնահայ» «Ծիծեռնակը»:

Անհրաժեշտ ենք համարում մեջբերել փառատոնի նախօրեին սասունցիների պարի խմբի գեղարվեստական ղեկավար Վ. Արիստակեսյանի «Աշնակցիները Մոսկվայում» կարճ, բայց բովանդակալից հոդվածը:

«Աշնակցիները Մոսկվայում»- Լավ ներկայացնել մեր լեռնային ժողովրդի՝ սասունցիների ռազմաշունչ, ինքնատիպ պարերը հանրապետության աշխատավորների առջև, այս նշանաբանով սկսեց իր պարապմունքները Թալինի շրջանի Աշնակ գյուղի տղաների և աղջիկների պարի խումբը:

Գեղեցիկ են այդ պարերը և արժեքավոր, դրանք ժողովուրդն է ստեղծել ու պահպանել:

Սասունցիների պարի խումբը գոյություն ունի 1936 թվականից: Խմբում կային և՛ տարիքավորներ, և՛ երիտասարդ-

ներ: Փառատոնի կապակցությամբ այս տարվա փետրվարին այն կոմպլեկտավորվեց միայն երիտասարդներով: Սկսվեցին պարապմունքները: Չմռան ցուրտ օրերին, հաղթահարելով տեխնիկական շատ դժվարություններ, խումբը համառորեն պարապում էր: Հանրապետական փառատոնում արժանացանք ոսկե մեդալի և իրավունք նվաճեցինք մասնակցելու համամիութենական փառատոնին:

Մոսկվայում, երիտասարդության համամիութենական փառատոնի պարի խմբերի գեղարվեստական մրցանակաբաշխություններում, որին մասնակցում էին ուրիշ հանրապետությունների և քաղաքների պրոֆեսիոնալ և ինքնագործ 65 խմբեր, մեզ շատ լավ ընդունեցին: Ամեն մի պարից հետո դահլիճում չէր դադարում ծափերի որոտը: Մենք արժանացանք արծաթե մեդալի:

Համաշխարհային փառատոնի օրերին մեր ազգային պարը ցուցադրելու ենք Մոսկվայի և արտասահմանյան բարեկամներին: Դա մեծ քննություն է, և մենք պատրաստ ենք դրան:

Բարձր պահել մեր ժողովրդի, մեր արվեստի պատիվը-ահա ինչի ենք ձգտում մենք»[1]:

Սասունցիների երգերն ու պարերը խորխտ, ռազմական բնույթ ունեն: Նրանց մի շարք պարերը, որ կատարվում են երգելով և «մարտնչելով», հիշեցնում են հեթանոսական շրջանի Նավասարդի տոներին կատարվող մարտական երգերն ու պարերը:

Այդպիսի մի պար-երգ-յարխուշտան կատարյալ մարտական պարերգի է նման: Երկու խումբ մարդիկ, յուրաքանչյուր խմբում 8-10 հոգի, ճակատ-ճակատի կանգնած երգում, պարում են և երեք ծափ տալուց հետո հարձակում գործում իրար վրա, ուղիղ գծաշարով, համաչափ և ռիթմիկ, երեք անգամ բաց թաթերով իրար հարվածում, ետ քաշվում ու նորից պարում, երեք անգամ ծափ զարկում և էլի «հարձակում» գործում: Դա մի մարտ է, ուր պարտվող ու հաղթող չկա, որովհետև հաջորդաբար պարտվող շարքը նոր ուժով է անցնում հարձակման:

1929 թ-ին խորհրդային մեծ գրող Մաքսիմ Գորկին, այցելելով Հայաստան, առիթ էր ունեցել լսել և դիտել սասունցի երգող-պարողներին և իր «Մի օր Սովետական Հայաստա-

[1] «Սովետական Հայաստան», 28(7-1957թ. նո 177/ 11093) Վ. Արիստակեսյան, խմբի գեղարվեստական ղեկավարը:

նում» հոդվածում հիացմունքով է գրում սասունցիների պարի մասին, որ նա դիտել է Երևանի քաղաքային այգում տեղի ունեցած միտինգից հետո: Այդ պարերն՝ «Իրենց ինքնատիպությամբ և գեղեցկությամբ բացառիկ բաներ են: Ես երբեք չեմ տեսել և չէի կարող պատկերել շատերի միասնական գործողության մեջ այսպիսի կատարյալ միաձուլություն, շաղկապություն: Անտարակույս, այդ, հավանորեն շատ հին պարի մեջ, սիմվոլիստական մի բան կա թաքնված, բայց ինձ չհաջողվեց իմանալ, թե ի՞նչ- արդյո՞ք քուրմերի կրոնական պար էր, թե ռազմիկների պար:

Սասունցիների պարը երևի ռազմիկների հաղթական պարն է:[1]

Փառատոնի բացման օրվան նվիրված «Մոսկվայի փառատոնը» առաջնորդող հոդվածում «Սովետական Հայաստան» թերթը գրում է, որ Մոսկվայի բեմերում ու հրապարակներում զիլ կինչի հայկական զուռնայի ախորժալուր ծայնը և նրա տակ գետինը կթնդացնի Սասունի մեր ազգային սքանչելի պարը ներկայացնող աշնակցիների՝ ավյունով լի, կայտառ երիտասարդների գալարուն շղթան:

1957 թվականի հուլիսի 28-ին ժամը 2-ին Մոսկվայի կապույտ երկնակամարը լցվում է աշխարհի 120 երկրներից բերված աղավնիներով, խաղաղության աղավնիներով ու բազմաբարբառ երիտասարդների և ուսանողների «Խաղաղություն և բարեկամություն» կանչերով:

«Խաղաղություն և բարեկամություն»-ը Կարմիր Մոսկվայից տարածվում է աշխարհով մեկ:

Փառատոնի երրորդ օրը՝ հուլիսի 30-ին, մրցանակաբաշխության ժամանակ Կորեայի, Հնդկաստանի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի և այլ երկրների պարային խմբերի հետ միասին հանդես եկավ Հայաստանի Թալինի շրջանի Աշնակ գյուղի կոլտնտեսականների պարի խումբը: Ելույթն ուժեղ տպավորություն գործեց ինչպես ներկա գտնվողների, այնպես էլ ժյուրիի անդամների վրա:

«Սովետական Հայաստան» թերթի հատուկ թղթակից Արծ. Կարապետյանը սասունցիների պարի խմբի մասին «Հայաստանի երիտասարդության հանդիսավոր համերգը» վերնագրի տակ

[1] Մաքսիմ Գորկի, «Նոր Ուղի», Երևան, 1929թ., էջ 2174-218:

գրում է. «Իրենց ինքնատիպ, խրոխտ պարերով անջնջելի տպավորություն թողեցին աշնակցիները: Բեմի խորքում կախված հայկական լեռնաշխարհը պատկերող հսկա նկարի ֆոնի վրա ավելի տպավորիչ էին նրանց պարերը: Ամեն մի պարից հետո դահլիճում ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն բացականչություններ էին լսվում, հանդիսականները խնդրում էին կրկնել համարները, ծաղկեփնջեր էին նետում սասունցիներին:

Սիրիայի Հալեպ քաղաքից Թավլացյանը, ուրախության արցունքներն աչքերին, ասաց. «Հայաստանը չեմ տեսել, հեռվից միշտ երազել եմ նրան, երազել եմ տեսնել հայ երիտասարդին, լսել նրանց երգն ու նվագը, տեսնել պարը: Այսօր այստեղ շատ բան տեսա և ինձ թվաց, թե Մայր Հայաստանում եմ գտնվում: Իմ սիրտը անհանգիստ բաբախում էր, երբ դիտում էի սասունցիների պարը, չէ՞ որ ես սասունցի եմ...»:

Ի՜նչ զուգադիպություն... Սիրիա, Հալեպ, Մոսկվա... Սասունցին ղարիբության չէր գնում, երբ հայրենի երկրում՝ Սասունում էր ապրում, իսկ երբ կարիքն ստիպում էր ղարիբության ճամփան բռնել, միայն Սիրիա, Հալեպ, ազատության և անկախության համար պայքարող արաբ ժողովրդի հյուրն էր լինում: Ահա թե ինչու Սովետական Հայաստանից հետո արաբական այդ պատմական քաղաք Հալեպում են կենտրոնացված սասունցիները, որոնք մեծ մասամբ հացթուխ, ջրաղացպան և ռանչպարներ են: Առաջին համաշխարհային պատերազմի զարհուրելի օրերին սասունցի ազատասեր ժողովուրդը հայրենիք Սասունից երկու ուղղությամբ դուրս եկավ՝ դեպի Կովկաս՝ ռուս ժողովրդին և դեպի Սիրիա՝ արաբ ժողովրդին ապավինելու համար: Հայ ժողովրդի այդ ընտրյալ մասնիկը՝ սասունցին, չսխալվեց, ռուս մեծ ժողովրդի շնորհիվ հայ ժողովուրդը պետականություն ու վերածնություն ունեցավ, իսկ արաբ ժողովրդի՝ բարեկամությունը և հյուրընկալությունը վայելեց:

Հայկական ավանդական զուռնան շատ շատերն առաջին անգամ էին տեսնում: Եվ ահա, երբ աշնակցի Վարազդատ Շեգիկյանը այն դրեց շուրթերին ու հրապարակով մեկ, դհոլի համաչափ ռիթմի հետ հնչեցրեց սասունցիների պարեղանակը, իսկույն նրա շուրջը հավաքվեցին հազարավոր մարդիկ: Նրանք հիացմունքով դիտում էին լեռնցիների աշխույժ պարերը, հիանում նրանց արվեստով:

Աշնակցիները Կրեմլում, բազմահազար հյուրերի առջև, չտեսնված հաջող հանդես եկան: Այդ էր պատճառը, որ քիչ հետո տեղի ունեցավ այն, ինչ չէր նախատեսված: Հնդիկ ու չեխ մի խումբ տղաներ մոտեցան խմբին և խնդրեցին իրենց էլ թույլ տալ պարելու: Ո՞վ կարող էր հյուրերին մերժել: Նրանք մտան շղթայի մեջ և սկսեցին պարել: Այդ դուր եկավ շատերին: Իրար ետևից շղթա են մտնում եգիպտացի տղաներն ու աղջիկները, չինացի երկու աղջիկ, Իրանից եկած երկու պատանի, ֆրանսիացի, նորվեգացի, իտալացի, հույն տղաներ ու աղջիկներ: Այսպես գնալով շղթան մեծանում է: Ներկաների ծափերի տակ աշնակցիները և նրանց միացած մոտ 100 երիտասարդներ պարելով շարժվում են առաջ, կատարելով մի երկար երթ Կրեմլի հրապարակ: Բոլորը նրանց դիմավորում են ծափահարություններով:

Ժողովուրդների անկեղծ եղբայրության ինչ սրտառուչ տեսարան:

Կրեմլի աշտարակից հնչում են տասնյակ փողեր՝ կենտրոնական հրապարակում հավաքվելու համար: 15 հազար պատանիներ ու աղջիկներ լարված հետաքրքրությամբ դիտում են Չինաստանի, Հնդկաստանի, Եգիպտոսի, Ֆրանսիայի, Անգլիայի գեղարվեստական կոլեկտիվների ելույթները: Սովետական Միության հանրապետություններից մասնակցեցին չորս խումբ, որոնցից մեկն աշնակցիներն էին: Նրանց ելույթն այնքան էր դուր եկել ներկաներին, որ համերգից հետո շատ շատերը մոտեցան խմբի անդամներին, և որպես բարեկամության թանկագին հիշատակ՝ խնդրեցին միասին լուսանկարվել, կրծքանշաններ փոխանակեցին: Իսկ Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունից եկած նկարիչ էլիզ Ռայնոլդը հենց այստեղ՝ հրապարակում, լուսարձակների լույսի տակ ձեռքով նկարեց սասունցիների խմբի անդամներից երկուսին:

Սասնա ծռերից ժառանգություն մնացած ժողովրդական պարերգեր՝ Յարխուշտան, Մարտական պարը, Մայրոկեն, Բեզարեն, Գավուրին, Գորանին, Նարեն, Մշուխռը, Քոչարին, Շատրվանի շուրջը, Ծափ պարը և մյուսները, որոնք կազմում են Աշնակի սասունցիների ավանդական պարերգերի ցանկը, առնական ռիթմիկ ու գեղեցիկ հնչեցրին Մոսկվայի Կրեմլի պարահանդեսում, ինչպես հնչել էին Սասունում և Աշնակում, որպես ավանդը թոլոլ Դավթի՝ Սասնա ծռերի ու հիացմունք առաջացրին և մոսկվացիներին, և արտասահմանից ժամանած

փառատոնի մասնակիցներին, որոնք զգում էին, որ ամեն մի ժողովուրդ կարող է պարծենալ ազգային նման պարերով:



Վահրամ Արիստակեսյանը պարապմունքի պահին



Համաշխարհային երիտասարդության և ուսանողության 6-րդ փառատոնից՝ Մոսկվայից, հաղթական ետ վերադարձան և աշնակցիները, որոնց ախորժալուր զուռնայի ձայնը լսվեց դարձյալ Երևանի ծաղկազարդ կայարանին մոտեցող գնացքից: Գնացքը դեռ նոր էր կանգ առել, երբ մարդկանց մի մեծ խումբ շտապեց դեպի այն վագոնը, որտեղից լսվում էր

աշնակցիների զուռնայի ձայնը: Խմբի անդամներն իջնում են վագոնից: Նրանք այնպես ուրախ են ու հպարտ, այնպես գոհ, երջանիկ, չէ՞ որ ոչ միայն Մոսկվայի, այլև արտասահմանի բոլոր բարեկամներին այնպես դուր էր եկել նրանց պարը, չէ՞ որ արդարացրել են կոլտնտեսային դաշտերի իրենց ընկերների վստահությունը: Նրանց դիմավորելու են եկել Թալինի շրջանի պարտիական, սովետական ու կոմերիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ, կոլտնտեսականներ: Պիոներները ծաղկեփնջեր են մատուցում երիտասարդ կոլտնտեսականներին ու կոլտնտեսուհիներին: Մի մեծ խումբ շրջապատել է խմբի ղեկավար ընկ. Վ. Արիստակեսյանին:

-Շնորհավորում ենք,- սեղմելով նրա ձեռքը, ասում են նրանք,- շնորհավորում ենք հաղթանակի առթիվ:

Ի՞նչ կարծիքներ ունեցան Սասնա պարերի մասին համաշխարհային երիտասարդության և ուսանողության 6-րդ փառատոնի ժյուրիները:

Միությունների սյունազարդ դահլիճում մրցանակաբաշխության դահլիճի ճակատին տարբեր լեզուներով գրված էր՝ միևնույն ցուցանակը՝ «Համերգի ժամանակ ծափահարելն արգելվում է...»: Բայց, երբ ելույթ ունեցան աշնակցիները, դահլիճում նստած հանդիսականները և նույնիսկ խստաբարո ժյուրիի որոշ անդամներ սկսեցին ծափահարել: «Ծափ-պարն» արդեն իսկական օվացիայի արժանացավ:

Մրցանակաբաշխության ընդմիջման ժամանակ, երբ «Սովետական արվեստ» ժուռնալի թղթակիցը ժյուրիի անդամներից մի քանիսին խնդրում է կարծիք հայտնել Սասնա պարերի մասին, Հունաստանի ժողովրդական պարարվեստի ընկերության հիմնադիր Դորա Ստրատուն ասում է, որ թեև հարմար չէ մրցանակաբաշխության արդյունքների հրապարակումից առաջ որևէ կարծիք հայտնել, բայց ինքը չի ուզում թաքցնել կարծիքը այդ խմբի փայլուն ելույթի առթիվ: Կանադայի ներկայացուցիչ Միշել Կարտյան ասում է, որ ծրագրային ժողովրդական պարի ավելի լավ նմուշներ ինքը շատ քիչ է տեսել, իսկ շվեդացի Բենիգե Լունգբերգը ավելացնում է, որ ինքն անպայման կուզենար տեսնել աշնակցիների խումբը Ստոկհոլմում՝ եկող տարի անցկացվող պարարվեստի միջազգային մշրանակաբաշխությանը:

Սասունից Սովետական Հայաստան եկած և Արագածի լանջերին՝ Թալինում և Աշտարակի լեռնամասում բնակություն

հաստատած սասունցիներն ու իրենց նոր սերունդը Հայաստանում Սովետական կարգերի ստեղծման 40-րդ տարեդարձը դիմավորում են աչքի ընկնող մեծ նվաճումներով, ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային կյանքի բոլոր ոլորտներում:

Հայ ժողովուրդը, ինչպես և Խորհրդային Միության բոլոր հանրապետությունների ժողովուրդները 1939 թվականի մայիս ամսին նշեցին «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի հազարամյա հոբելյանը, որը մեծ շքեղությամբ կատարվեց և՛ Հայաստանում, և՛ Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում:

Հայ ժողովուրդը, Մեծ Հոկտեմբերի ծնունդը եղող Խորհրդային Հայաստանը, Նոյեմբերյան հեղափոխության 40-ամյակի առթիվ արդյունաբերության, գյուղատնտեսության և մշակութային հաղթարշավին ստեղծած հսկա հիմնարկ-ձեռնարկությունների կողքին, որպես հայ ժողովրդի հերոսության և խիզախության խորհրդանիշ, որպես հերոսական գոտեմարտի անկրկնելի օրինակ, կանգնեցրեց «Սասունցի Դավիթ» հուշարձանը (գործ՝ քանդակագործ Երվանդ Քոչարի):

Խորհրդային Հայաստանի չքնաղակերտ մայրաքաղաք Երևանի «Սասունցի Դավիթ» կինոթատրոնի և երկաթուղային կայարանի գեղատեսիլ հրապարակում կանգնեցված է Սասունցի Դավթի հոյակապ արձանը, որի բացմանը՝ 1959 թվականի դեկտեբերի 3-ին, ներկա էին բազմահազար բնակիչներ Երևանից և շրջաններից, որոնց մեջ էին նաև Թալինի և Աշտարակի շրջանի սասունցիները:

Աշտարակի և Թալինի շրջանների սասունաբնակ քսան գյուղերի սասունցի աշխատավորության սրտերն ալեկոծվել էին, երբ «Սովետական Հայաստան» թերթում նախօրոք կարդացել էին, թե 1959 թվականի դեկտեմբերի 3-ին Երևանում կատարվելու է «Սասունցի Դավթի» արձանի բացումը:

Այդ թվականին (1959) լրանում էր 45 տարին, որ սասունցի աշխատավորությունն իր հայրենի Սասունի ուխտատեղիներ՝ Մարութա սուրբ սար, Ծովասարի՝ Սասունցի Դավթի բերդ, հերոսների արյունով ներկված Անդոկ ու Կեփին չէր այցելած, և այժմ այդ սրբավայրերին ականատես և ոչ ականատես, ահել ու ջահել շտապում էին Երևան կարոտակեզ սրտերով, հույզերով ու հույսերով, տեսնելու Դավթին կանգնած Սասունի ժայռերի վրա՝ Քուռկիկ Ջալալիի հետ միասին:



Սրնգահարը (փողփուչ) Աշնակի պարի խմբում և աշնակի պարախմբի գուռնաչին ու դհոլչին

Ազատագրված հայ ժողովուրդն իր 40-ամյակի տոնակատարության օրերին կանգնեցրեց իր հերոս զավակի՝ Սասունցի Դավթի արձանը և իր ուրախության արցունքով ողողեց այն: Դավթի գյուղացի-քաղքիկցի[1] - մի հարյուրամյա հաղթանդամ ու առույգ ծերունի խոսքն ուղղելով Դավթին ասաց. «Լաո, ո՞ւր ես թռնում քո թուր-կայծակով, քաջ ես, ետ դարձիր, Սասունդ ազատիր» և արցունքն աչքերի մեջ քարացած գնաց ծերունի հսկան:

Այդ օրը՝ դեկտեմբերի 3-ին, Սասունցի Դավթի, նախկին կայարանի հրապարակում-սասունցիները պարեցին այնպես, ինչպես պարում էին Սասունում՝ Մարութա սարում, Ծովասարում, Դավթի բերդում, Անդոկում ու Մշո Սուլթան ս. Կարապետի վանքում ուխտագնացության օրերին: Սասունցի Դավթի արձանի բացմանը կայացած միտինգից հետո սասունցիները ուրախությունը շարունակեցին, վերադառնելով Սասնաշեն, Սասունիկ, Դավիթաշեն, Աշնակ և մյուս գյուղերը՝ Թալինի և Աշտարակի շրջաններում:

[1] Քաղքիկն այն գյուղն է, որի մեջ է Սասունցի Դավթի բերդը - Վ.Պ.

1. **ԱՓՔՈՒՆՔ** (քարկտիկ)

Ափքունքը մանկական խաղ է, թե՛ տղայի և թե՛ աղջկա- խաղացվում է երկու հոգու մասնակցությամբ: Ափքունք խաղալու համար անհրաժեշտ է հինգ քար՝ կաղինի մեծությամբ և կլոր գնդակի ձևով: Խաղացողները նստում են հատակին կամ հարթ գետնին, դեմ-դիմաց, որի ժամանակ խաղացողը հինգ քարերը ցրում է հատակի վրա, ապա մի քարը վերցնում է, հատակին ուղղաձիգ կես մետրի չափ վեր գցում և մինչ նրա վայր ընկնելը մի քար հատակից վերցնում է և անմիջապես բռնում ընկնող քարը, այսպիսով հավաքում չորս քարերը, որով բառուկը վերջանում է: Եթե խաղացողը մի քարը վերցնել և միաժամանակ ընկնող քարը բռնել չկարողացավ, պարտվում է և սկսում է խաղալ մյուս ընկերը: Երկրորդ մասը կոչվում է երգնուկ, որի ժամանակ մի քարը վեր գցելիս հատակից երկու քար մի շարժումով վերցնում է և բռնում ընկնող քարը դեռ գետին չհասած: Երրորդ մասը կոչվում է երեքնուկ, որի ժամանակ գետնից երեք քար է վերցնում և իսկույն բռնում ընկնող քարը, ապա մնացած մի քարն է վերցնում նույն ձևով: Չորրորդ մասը կոչվում է թափո, որի ժամանակ գետնից բոլոր չորս քարերն է վերցնում մի շարժումով և շտապ բռնում ընկնող քարը: Հինգերորդ մասը կոչվում է կոնտար կամ կոնտրուկ, որի ժամանակ խաղացողն իր ափի մեջ գտնվող խաղի հինգ քարերը միասին գցում է ձեռքի երեսին (աշխատելով հինգն էլ կանգնեցնել իր ձեռքի վրա): Եթե հինգ քարերն էլ բռնի ափի մեջ, այդ ժամանակ հինգ թիվ կունենա իր հաշվում կամ որքան քար կարողանա նետել ափից ձեռքի երեսին և ընդհակառակն, առանց քարերից մի հատ ընկնելու, այն թիվը կունենա իր հաշվում, իսկ եթե մի քարը ընկնի ձեռքից գետնին, ամբողջ խաղը կորցրած է լինում: Ամեն անգամ քար ընկնելիս խաղում է մյուսը:

2. **ՉԸԿՈՒԿ**- Չընկուկ նշանակում է (ցից) խրելու խաղ: Չկել կամ չընկըցնել նշանակում է խրել: Խաղում են երկու հոգի, որոնք ունեն մի-մի սրածայր ցից փայտից կամ երկաթից պատրաստած: Խաղացողներից մեկն օդի մեջ պտտեցնում է ցիցը և հարվածում գետնին այնպես, որ ցցի սուր ծայրը խրվի հողի մեջ և ցիցը կանգնած դիրք ստանա, իսկ մյուսը նույնպիսի հարված է խփում այնպես, որ իր ցցի սուր ծայրն ընկնի մյուս

ցցի սուր ծայրին այնքան մոտիկ և կպած, որ երկրորդ խփողն իր ցիցը գետնին թեքելով հանելու ժամանակ մյուսի ցիցն իր կանգնած դիրքից ընկնի՝ տապալվի: Դրանով երկրորդ խփողը հաղթած է լինում, իսկ եթե ցիցը թիրախից վրիպել, հեռու է խրվել, այն ժամանակ երկրորդ խաղացողն իր ցիցն է խրում գետնին և առաջինը հարվածում իր ցցով՝ մյուսին տապալելու համար: Այսպիսով ամեն մի խաղում մեկը հաղթող և մյուսը պարտվող է դառնում: Խաղը գարնանը և աշնանն է խաղացվում, երբ գետինը փափուկ է լինում:

Խաղի նպատակն է շեշտակի և ուղիղ հարվածել՝ նշանին անվրեպ խփել սովորել:

3.**ՌԱԽՈԿ**- Ռախ նշանակում է պայթ, իսկ ռախոկ՝ պայթող «ական»: Կատարողները՝ մեկ և ավելի մարդ, հարվածողը՝ մի հոգի: Խաղում են տղամարդիկ՝ պատանիները, որոնք մի բացօթյա տեղ կրակ են վառում, որից ընկույզի կամ փոքր խնձորի մեծությամբ կտորներ վերցնելով դնում են մարդու մեզով լավ թրջված բամբակե շորի վրա, շտապ փաթաթում կրակը և խոչկով (կոպալ) ուժեղ զարնում թշշացող ռախոկի վրա, որը ուժեղ պայթյունով տրաքվում է և կրակոցից հաճույք պատճառում ներկա եղողներին:

Խաղը ամառ ժամանակ առ ժամանակ են խաղում, ջերմությունը օգնում է պայթյունին:

4.**ՄԱՄԱ-ԼՈՒՍԻԿ**-Մամա-լուսիկը խաղում էին տղա-աղջիկ խառն, 5-10 հոգով: Խաղացողներից մեկը վերցնում էր իր գդակը և նրա ներսի կողմից, գդակի հատակի կեսից խածնելով բռնում, որով վերջինս դիմակ է դառնում, ծածկում ամբողջ երեսը: Սա այլևս չի տեսնում խաղընկերներին: Վերջիններս մեկիկ-մեկիկ մոտենալով Մամա-Լուսիկին (դիմակավորին) հարվածում և փախչում էին: Մամա-Լուսիկն աչքերը փակ վազում էր դեպի հարվածողի կողմը, փորձելով բռնել նրան: Այսպես Մամա-Լուսիկը հարվածում էր անխնա, մինչև որ կարողանար խփողին բռնել: Մամա-Լուսիկի կողմից բռնվողը դառնում էր Մամա-Լուսիկ, իսկ իր գդակով դիմավորվում և ընդունում հարվածներ ու իր հերթին փորձում բռնել հարվածողին և հաջողվելու դեպքում ազատվում Մամա-Լուսիկի դերից:

Խաղում են տարվա բոլոր եղանակներին, դրսում և ներսում:

5.**ՆԱՄ-ՆԱՄ-ԲՈՒԴԻԿԸ** (Սյունաբերդ)- Նամ-նամ-բուդիկը (սյունաբերդ) ռազմական խաղ էր և խաղացվում էր մի քանի՝ 8-10 և ավելի մարդկանցով: Խաղացողներից մեկը «բերդի» գոմի կամ տան սյունի պաշտպանն էր կանգնում, որ ոչ ոք չմոտենար և թեկուզ մատով չհպվեր սյանը: Մյուսները հարձակվում էին «բերդը» գրավելու, խփում էին բերդապահին և փախչում այնպիսի ճարպկությամբ, որ բերդապահը նրանց չկարողանար ձեռքով կամ ոտքով հարված հասցնելու: Բերդապահը պտտվում էր սյան շուրջը, բայց մի ձեռքը միշտ անբաժան պետք է լիներ սյունից, որից հեռանալով թշնամուն խփելու իրավունք չուներ: Հանդուգն և ճարպիկ հարվածողը կամ հարձակվողը կարող էր թռչել բերդապահի շալակը՝ «մտնել բերդը», այդ դեպքում նա բերդապահի ուսերի վրա էր բարձրանում, որպեսզի բերդապահի ոտի հարվածից ազատվեր, իսկ ձեռքով հարվածելու իրավունք չուներ:

Բերդապահը պարտավոր էր «թշնամուն» շալակած շարունակել դիմադրել հարձակումներին, մինչև որ կարողանար ոտքով կամ ձեռքով խփել հարվածողներից մեկին: Շալակը բարձրացածին ոտքով խփել կարողանալիս նրան «կսպաներ»: Բայց շալակը բարձրացրածը ոտքերը չէր խփում:

Հարձակվողներից ով բերդապահի հարվածին, թեկուզ իրենց շորի ծայրին հպվելուն արժանանար, նա նույնպես «սպանված» էր համարվում և շարքից դուրս գալիս, մինչև որ վերջին մարդը, եթե բերդապահը պայքարին դիմանար, ոտքի ճկուն հարվածով հպեր իր շալակին նստած թշնամուն, որ կաշկանդում էր իրեն: Իսկ եթե չկարողանար այդ անել, հոգնած ընկներ, «բերդը» համարվում էր գրավված և բերդապահն էլ գերի հանձնված:

Այս խաղի մի այլ տարբերակն էլ այն էր, որ ով բերդապահից հարված ստանար, դերը նրա հետ փոխում էր:

6.**ՄԵՂՈՒ**-«Մեղու» խաղին մասնակցում են երեք պատանի կամ հասակով տղամարդ: Նրանցից մեկը մեղուն է և երկուսը՝ բոռեր: Մեղուն կանգնում է երկու բոռերի մեջտեղում նրանց հետ մի ուղիղ գծի վրա, որից ոչ առաջ և ոչ ետև խաղացողների ոտքերը չպիտի շարժվեն, այլ տեղում ոտքերն անշարժ պիտի մնան: Խաղի շարժումը կատարվում է թևերով և կրծքավանդակով: Մեղվի և բոռերի դեմքերը մի ուղղության վրա են լինում: Մեղուն իր երկու՝ ձեռքերի ցուցամատները իր քթի աջ և ձախ կողմերի վրա սեղմելով՝ թուլացնելով, շնչում, արտաշնչում է, այսինքն՝ «տզզում է և մեղր շինում»: Երկու բոռերը մեղվի աջ և ձախ կող-

մերից հերթով հարձակվում են մեղրը խլելու: Մեղուն ազդում է, մեղրը չի տալիս, իսկ բոռերը հերթով հարվածում են մեղվին, աշխատելով նրա գլխարկը գցել, իսկ մեղուն ճարպկությամբ խուսափում է նրանց հարվածներից, գլուխը փախցնելով, նույնիսկ բոռերի թևերի տակ պատսպարվելով: Բոռերն իրենց մի-մի ձեռքը պահում են մեղվի կողմի ականջի վրա և ափը դեպի մեղուն դարձած: Մեղուն հանկարծակի դադարեցնում է տզզոցը և աջ կամ ձախ բոռին խաբս տալով, հարվածում է բոռերից մեկին, ուժեղ խփելով նրա ափին, որ ծածկում է նրա ականջը: Հարված ստացող բոռը մեղվին անդրադարձ հարված է հասցնում, բայց միայն նրա գլխարկը թռցնելու համար: Մեղուն աջ բոռին հարվածելիս դեպի ձախ է փախցնում գլուխը, և ձախ բոռին հարվածելիս դեպի աջ կամ հակառակը, ինչպես հարմար է գտնում պաշտպանվելու համար, որպեսզի գլխարկը չթռցնեն գլխից՝ «մեղրը չուտեն»: Որ բոռը որ թռցնում է մեղվի գլխարկը, նա դառնում է մեղու, իսկ մեղուն՝ բոռ և խաղը նորից սկսվում է:

7.**ԹԱԹԻԿ-ԼԱԹԻԿ-** Թաթիկ-լաթիկ խաղացող պատանի կամ երիտասարդ, նույնիսկ տարեց տղամարդիկ բաժանվում են երկու խմբի, ամեն մի խմբում ցանկացած թվով խաղացողներով: Խաղը կատարվում է ընդարձակ և հարթ վայրում, գարնանը և աշնանը, կտուրում կամ կալում: Ընդարձակ խաղավայրի կեսից անցնում է մի սահմանային գիծ, որի երկու կողմերում, որոշ հեռավորության վրա, կանգնած են մարտնչողները: Սահմանի մի կողմից մի մարտիկ է դուրս գալիս և առանց սահմանագծի վրա կոխելու, գծի երկարության մոտով իր կողմում արագ-արագ վազում է և աշխատում մյուս կողմի մարտիկների կամ նրանցից մեկի շորերին՝ լաթիկին իր թաթիկով կպչել: Մրցակից կողմի մարտիկները, առանց սահմանային խախտում անելու, փորձում են բռնել հարձակվողի թաթիկից և քաշել իրենց կողմը, անցկացնել իրենց սահմանը: Հարձակվող մարտիկը սահմանագծի վրայից առանց անցնելու, քանի «թշնամու» լաթիկին ձեռք տա օդից, այնքան թշնամի ընկնում է գետին և «սպանվում», իսկ եթե մյուս կողմից մեկն իր թաթիկից բռնի և այն կողմը քաշի, այդ քաշվողը նույնպես «մեռնում» է՝ շարքից դուրս գալիս: Մի ուրիշը դուրս է գալիս և շարունակում մարտը, մինչև որ մի կողմը պարտվի: Եթե ամեն մի կողմից մի հոգի մնա, այդ երկու ախոյանները գալիս են մարտադաշտի կենտրոնը և իրար զուգահեռ երեք գիծ քաշում իրար մոտիկ, մեջտեղի զուգահեռ

գիծն ազատ է մնում, իսկ եզրերի երկու զուգահեռներից մեկին մի ախոյանի և մյուսին նրա ախոյանի ոտքերի ծայրերը հասցնելով, երկու ախոյաններն իրենց աջ թաթիկները իրար տալով սկսում են իրար քաշել: Դա թաթիկ-լաթիկի վերջին և վճռական մարտն է: Ով ում քաշեց և անցկացրեց իր սահմանը, նա կլինի հաղթող իր բոլոր կողմնակիցներով: Խաղը վերջանալուց հետո, խաղադաշտի տեղերը փոխում են և նորից սկսում խաղը, մինչև որ խաղի պայմանավորված թիվը լրանա:

Թաթիկ-լաթիկ խաղի և մրցման ժամանակ ահագին բազմություն էր հավաքվում:

8.**ՀԱՋԻ ԳՆԱԼԸ-**Հաջի գնալը վտանգավոր, բայց բոլորի զարմանքը գրավող մի խաղ էր: Խաղում էին պատանիներն ու չափահաս մարդիկ: Խաղը կատարվում էր մի հոգու կողմից: Տան երկու սյուներից, որոնք իրարից հեռու են 4-5 մետր 1-2 մետր բարձրության վրա հաստ պարանը գետնին զուգահեռ և ամուր կապում էին: Կատարողը սյունից բարձրանում էր, ծալապատիկ նստում պարանի վրա և առանց ձեռքին որևէ բան բռնելու, նստման (նստած դիրքով) շարժվում պարանի վրա՝ դեպի մյուս ծայրը գնալու և սյունին հասնելու համար: Ում հաջողվեր այդ վտանգավոր ճամփորդությունը, նա հաջի գնացած էր համարվում, իսկ ով չկարողանար հաջի գնալ, կորցնում էր հավասարակշռությունը, պարանից ընկնում և երբեմն էլ իր ոտ ու գլուխը ջարդում: Խաղացողը ուխտագնացի տարազ էր հագնում, «ուխտի գնում»:

9.**ՁՎՏԼՈՒԿ ԿԱՄ ճԵՂՔՈՒԿ-** Ձվտել Սասունի բարբառով նշանակում է ճեղքել, որից և խաղը կոչվել է ջվտլուկ կամ ճեղքուկ: Դա վտանգավոր խաղ էր, կատարողը մի հոգի էր: Առաստաղի մի գերանից, իրարից 1.5-2 մետր հեռու երկու կետերից կապում էին երկու պարան, որոնց ծայրերն ուղղաձիգ հասնում էին տան հատակին: Պարանի ուղղաձիգ իջած այդ կետերից, խաղը կատարողը, իր հասակի երկարությամբ հեռավորության վրա, երկու կետեր էր նշում կախվող պարանի մի կողմի վրա, այդ երկու կետերն իրար միացնում և կազմվող գծի երկարության միջնակետի վրա դնում իր գդակը: Կատարողը կախված պարանի երկու ծայրերը պինդ կապելով մեկն աջ, մյուսը իր ձախ ոտքերին, ձեռքի երկու թաթերը դնում էր գետնի վրա, ետ-ետ գնում՝ ոտքերն առաջ, գլուխը ետ, որով կատարող ոտքերը հետզհետե կապվող պարանով բարձրանում էին օդի մեջ, մինչև որ երկու

թաթերը հասնեին այն գծի երկու կետերի վրա, որոնց մեջտեղում դրված օղակի վրա հասներ կախվողի բերանը, որով նա իր երկու թաթերի վրա կանգնած դիրքին էր լինում, իսկ գլխարկը իր թևերի երկարության չափ իր բերանից հեռու՝ ուղղածիգ ձևով: Կատարողն իր թևերը ծալելով, պետք է իջեցներ գլուխը մինչև որ բերանը հասներ գդակին և խածնելով՝ վերցներ այն ու հակադարձ շարժումով վերադառնար, ընդուներ նախկին դիրքը: Դրանով էլ խաղը վերջանում էր: Գլխարկը վերցնելու պահը խաղի կրիտիկական ժամանակն էր և եթե չհաջողվեր, կատարողը կապված ոտքերով, կախ ընկած մարմնով, ճոճվում, զարնվում էր պատերին և մարմնի վրա վնասվածքներ ստանում: Հաջող կատարելու դեպքում հաղթող էր համարվում: Այդ խաղը կատարում էին պատանիներն ու երիտասարդները, ընդհանրապես ձմեռ ժամանակ և տան ներսում:

10.ԴԱՐԱ-ԿՈՒՋԻԿ (փայտաքաշ)-Դարա-կուջիկ կատարվում էր երկու պատանու կամ երիտասարդի միջոցով: Սրանք նստում էին հատակին կամ գետնին, ոտքերի ներբաններն իրար տված և ձեռքերի մեջ մի գավազանաձև ամուր փայտ բռնած: Սրա մեջտեղից կատարողները երկուական ձեռքերով ամուր բռնում էին ու սկսում իրար քաշել: Մրցողներից ով կարողանար մյուսին քաշել, առանց ծնկները ծալելու վեր հանել նստած տեղից և իր ոտքերի ներբանների վրա, ծողից բռնած պահել, նա համարվում էր հաղթող: Խաղը շարունակում էին ուրիշ զույգեր կամ հաղթողն ու մի ուրիշը:

11.ԲԱՄԲԱԿԻ ԳՆԱԼ-Բամբակի գնալ խաղը կատարողը՝ պատանի թե հասակավոր, մի հոգի էր լինում, որը կանգնում էր կեսից մի մետր երկար մի ձողի վրա, որի երկու ծայրերից ամուր կապված պարանը հասնում է առաստաղի գերանին, անցնում նրա (գերանի) հակառակ կողմը և իջնում հասնում կատարողի աջ և ձախ ձեռքերը: Կատարողը քաշում էր պարանի երկու ծայրերից և ինքն իրեն բարձրանում օդի մեջ: Որքան կատարողը բարձրանում էր դեպի առաստաղը, այնքան վտանգավոր դրություն էր ստեղծում իր համար: Եթե կատարողը կարողանար հասնել մինչև առաստաղը, բամբակի գնալու գործողությունը կատարված էր համարվում, իսկ եթե անզգուշությամբ էր կատարում վերելքը, գահավեժ ընկնում էր գետին: Դա կլիներ կատարողի պարտությունը: Այնուհետև խաղը շարունակվում էր ուրիշների ճանապարհորդությամբ:

12.ԿՐԻՐՈՒ ԿՈՒՎ (Կրիայի կռիվ)-Խաղը կատարվում էր երկու մարդով: Մասնակցում էին պատանիները և երիտասարդները: Խաղացողների թևերը իրենց ծնկերի տակից անցնող մի ձողի տակից անցկացնելով, գալիս էին սրունքների առաջ և իրար կապվում, անշարժ մնում, իսկ ամեն մի մրցողի ձեռքերի մեջ ամրանում են մի-մի մեծ գդալ: Այդ ձևով կապված մրցողները՝ Կրիրու կռիվ անողները, միայն իրենց հետույքի և ոտների թաթերի վրա սողալով, կարող էին շարժվել, իրար վրա հարձակվել, ուենալով ոտքերի մատների միջոցով մեկը մյուսին կողքի վրա գլորել: Հաջողվելու դեպքում սկսում էր սողալով հասնել գլորվողի գլխին մոտիկ և զգալի հարվածներ հասցնել պարտվողի գլխին, մինչև որ գլորվողն ընդուներ իր պարտությունը և գերի հանձնվեր: Այդ խաղը Կրիայի կռիվ էր կոչվում նրա համար, որ ընկնողն ինքնիրեն ելնել-կանգնել չէր կարողանում, ճիշտ այնպես, երբ կրիաները կռվում են, հաղթվողը՝ կռնակի վրա շուռ եկողը, ոտքերի կողմի վրա ուղղվել չի կարող և այդ դիրքով սատկում է:

13.ՅԱՐԱԼԻ ՇԱՄՈ (վիրավոր ուղտ)- Խաղը կոչվում էր նաև «Յարանի Շամո» (կատակասեր ուղտ): Խաղը կատարվում էր Բարեկենդանի և ուխտագնացությունների օրերին: Խաղը կատարում էր մի պատանի կամ տարեց մարդ, որը դիմակավորվում էր ամբողջ մարմնով, որպես ուղտ ծածկվում մի մեզարի (թեթև փալաս) մեջ: Մեզարի մեջ թաքնված «Յարալի Շամոն» իր ձեռքին ունենում էր մի երկար փայտե ձող, որի ծայրին ամրացվում էր մածնակուլը (ձագար): Մասնակուլը ծածկվում էր նույնպես մեզարով: Ձագարի սուր մասը կազմում էր Շամոյի դունչը, լայն մասը՝ նրա գլուխը, որի երկու կողմերում մեկական մեծ գդալները կազմում էին նրա ականջները: Դեմքի վրա աչք, հոնք, քիթ և բեղեր էին նկարում, որոնք սոսկում էին պատճառում: Կատարողի վրա փռված մեզարի տակից ուղտը շարժելով իր ձեռքին բռնած ձողը վեր և վար, աջ կամ ձախ, Շամոյի գլխին տալիս էր ցանկացած դիրք, հարձակման, ետ քաշման, վիզը երկարացնելու կամ կարճացնելու, հանդիսականների վրա հարձակվելու ամբողջ մարմնով կամ փախչելու, որով և սարսափ և ծիծաղ ու քրքիջ էր առաջացնում՝ ըստ կատարողի շնորհքի և վարպետության: Յարալի Շամո խաղը միայն հատուկ մարդիկ էին կատարում, որոնք կատակախոս և սրախոս էին լինում:

14.ԽԻԹ ՈՒ ՏԼՈՒՆԿ կամ ՏԻԹ ՈՒ ՏԼՈՒՆԿ- Խաղացող պատանիները բաժանվում էին երկու խմբի: Խաղի գործիքներն էին՝ խի-

քը կամ տիքը, որ 50-60 սմ երկարությամբ, գավազանի հաստությամբ մի փայտյա ձող էր և տլունկը (չալիկ, մատ), որ 8-10 սմ երկարությամբ և մատի հաստությամբ երկու ծայրերը սուր փայտիկ էր, որ գնում էին մի քիչ փոսացրած գետնի եզերքների վրա, այնքան, որ խիթի (տիթ) ծայրը նրա ու հողի միջև մտներ տլունկը՝ թռցնելու և նետելու համար: Մրցող կողմերից մեկը տիթն ու տլունկը նետում էր «թշնամու կողմը, որոնք, եթե կարողանային տլունկը բռնել օդում, հաղթանակը տարած կլինեին և օդում բռնած տեղից մինչև փոսիկը քանի տիթ որ աներ, այնքան միավոր էին գրում, իսկ եթե տլունկն ընկներ գետին, մեկը վերցնում էր, շարտում դեպի այն փոսիկը, որից խլել էին տլունկը: Եթե տլունկն ընկներ փոսիկի մեջ, գցողները հաղթանակը շահած կլինեին և տեղերը կփոխեին, իսկ եթե փոսի մեջ չընկներ, մի քանի ոտք կամ քայլ հեռու ընկներ, տիթով փոսից մինչև տլունկը չափում էին և այդքան միավոր գրում խփողների հաշվին: Տլունկը փոսի մոտ գցելիս խփողները եթե դեռ գետին չընկած տլունկը խփում էին փոսիկից հեռացնում և ըստ այդմ փոսից մինչև տլունկը հաշվվում, թե քանի տիթ էր հեռացել:

15.**ՁԻԱՄԲԱՐՁ**- Խաղացող պատանիների և երիտասարդների թիվը շատ էր լինում, իսկ ձիամբարձը երեք հոգով էին կազմում: Դրանցից երկուսն իրենց զույգ ձեռքերն անցկացնելով երկու ազդրերի միջից և իրար ձեռք բռնելով, կազմում էին մի «մարդաթամբ», երրորդն իր գլուխը մտցնում էր նախորդ երկուսի հետույքների միացման մասի տակից, բռնելով մյուս երկուսից՝ յուրաքանչյուրի մի ազդրը, որով և կազմում էին ձիամբարձը (մարդաթամբը): Խաղացողները հեռվից թափ առած գալիս էին, իրենց ձեռքերը և գլուխը խփում կենտ կանգնածի մեջքին: Նրանց վրա կռքնում և ոտքերն օդի միջից՝ գլխիվայր դիրքով, շուռ գալիս մարդաթամբի երեք անդամներից մեկին փոխարինում, իսկ ազատվողը մտնում էր ազատ թռիչք գործողների շարքը:

Այսպես շարունակաբար թարմացվում էր մարդաթամբը նոր մարդկանցով, իսկ մարդաթամբից ազատվողը մտնում էր թռչողների շարքերը:

16.**ԹՈՓ** (Գնդակախաղ)- Թոփ խաղալը հատուկ է պատանի և երիտասարդ տղամարդկանց: Խաղի գործիքներն են կոպալն ու գնդակը: Կոպալը մի հաստ ձեռնափայտ է, հարվածող ծայրն ավելի հաստ և քիչ տափակ, որով խփում են գնդակը, իսկ գնդակը մազից է լցված և լինում է մի մեծ խնձորի չափ:

Խաղացողները երկու խմբի են բաժանվում՝ հարվածող և դիմադրող: Խմբի անդամների թիվը կամավոր է՝ 8-10-12 հոգի յուրաքանչյուր խմբում: Խաղն սկսվում է լայն դաշտում՝ ուժգին հարվածող գնդակի սլացքից ավելի տարածուն:

Հարվածող խումբը դաշտի մի ծայրումն է խմբված կանգնում, իսկ մյուսը՝ դիմադրող խումբը դաշտի մյուս մասումն է ցրված, իրարից հեռու կանգնում, որպեսզի որ կողմն էլ գնդակը սլանա, կարողանան գետին չընկած բռնել: Դիմադրող խմբի մի անդամը հարվածող խմբի առաջն է կանգնում և գնդակը օդում մարդաբոյի չափ բարձր նետում, իսկ հարվածող խմբի մի անդամը, կոպալը ձեռքին սպասում է գնդակն անմիջապես, օդում հարվածելու՝ գետին չընկած որսալու: Հարվածողը եթե չկարողանա խփել գնդակին, ինքը «մեռնում» է, շարքից դուրս գալիս և իրեն հաջորդում է իր ընկերներից մի ուրիշը: Ամեն մի հարվածող մի անգամ միայն հարվածելու իրավունք ունի:

Դիմադրող կողմը մինչև սուրացող գնդակն օդում չբռնի, մնում է նույն դերում: Գնդակը օդում բռնողը հաղթող է հանդիսանում, դառնում է հարձակվող: Իսկ մյուս կողմը պարտվող է համարվում և անցնում դիմադրողի դաշտը՝ խաղը նույնությամբ կրկնելու:

17.**ԳՂԱԿ ԹՌՑՆԵԼ**- Գդակ թռցնելը ռազմական խաղ է՝ ավար առնել և վազքով սլանալ: Այս խաղը պատանիներն ու չափահասներն են կատարում սովորական տարազով: Աղջիկներն ու կանայք չեն խաղում: Խաղացողները բաժանվում են երկու բանակի, մեկը՝ հարձակվող, մյուսը՝ հետապնդվող:

Խաղացողների թիվը կամավոր է, յուրաքանչյուր կողմում 8-10 հոգի: Հարձակվող խմբից մի մարդ գալիս է մյուս խմբի մոտ և մեկի գդակը փախցնում ու սլանում դեպի իր բանակը, որ 1-200 մետր հեռավորության վրա է կանգնած: Հարձակվող և գդակ փախցնողին հետապնդում է գդակի տերը, որը եթե մինչև նրա բանակը հասնելը բռնեց, հաղթանակը հետապնդվող խմբին է պատկանում, որ և գդակն է առնում, իսկ եթե չհասավ, ապա գերի է ընկնում հակառակորդ կողմին:

Խաղը շարունակվում է ուրիշ երկու հակառակորդ զինվորների միջոցով, մինչև որ մեկ կամ մյուս բանակի զինվորներն սպառվում են:

18.**ԹՈՒՐ ՈՒ ՄԱՌՏԱԼ** (Թուր և վահան)- Թուր ու մառտալ խաղը միայն ռազմիկ հերոսների գործն էր, դրա համար էլ միայն

Մարութա սարի և Անդոկի ուխտագնացությունների ժամանակ՝ քաջի անուն վաստակած կռիվներում ու սրամարտերում կռված մարդիկ էին խաղում:

Թուր ու մառտալի խաղը նվիրված էր Ս. Մարութային և Անդոկին, որովհետև Սասնո սարերից այդ երկուսն են միայն իրար հետ մարտնչել՝ թե ո՞վ է Սասնո սարերի արքան: Մարտի ժամանակ Անդոկն իր կայծակի թրով Մարութա սարի գլուխը երկու մասի է բաժանում, որ մինչև այժմ էլ ճուղտ (զույգ) գլուխ ս. Մարաթուկ է կոչվում, իսկ Մարութա սարն իր ժայռերից հսկա մի ժայռ պոկում, խփում է Անդոկին: Ժայռը մտնում է Անդոկի կողերի մեջ, միայն ս. Մարութայի ձեռքի տեղն է դրոշմված մնում նրա վրա: Այս ավանդության մեջ հաղթողն Անդոկն է լինում և կոչվում է Սասնա սարերի արքա:

Ըստ երևույթին թուր ու մառտալ խաղացող հերոսներից մեկը Անդոկն է խորհրդանշում, մյուսը՝ Մարութա սարը:

Նրանք երկուսն էլ հագնում էին Սասունի իշխանական շորեր, զինված թրերով և կես մետր տրամագիծ ունեցող վահաններով: Պարտվում էր նա, ով իր վահանով չկարողանալով պաշտպանվել հակառակորդի թրից, հարված էր ստանում իր մարմնի վրա:

19.ՔՈՒԼՄ ՈՒ ՀՈՒՆՋԸԿ (Բռնցքամարտ)- Քուլմ ու հունջըկը տեղի էր ունենում երկու պատանի կամ չափահաս մարտնչողների միջև, որոնք ձեռնոց չէին հագնում: Խաղերն առանց դատավորի էին կատարվում: Դատը իրենք «իրենց ձեռքով» էին վճռում, այն է՝ կռվում էին մինչև մեկն «սպանվում» էր, այլևս ոչ մի դիմադրություն չէր կարող ցույց տալ, հալից ընկնում էր և հանձնվում դիմացինին: Հանդիսականներից ոչ ոք իրավունք չուներ միջամտելու, որքան էլ անգութ կերպով ծեծվեր թույլ եղողը:

Խաղում հաղթողը միշտ ունենում էր իր ախոյանը, որ նրա հետ հետագայում բռնցքամարտի էր բռնվում: Այդ նույն խաղի օրն ուրիշ բռնցքամարտիկ զույգեր էլ էին մենամարտում: Այս խաղին իբրև վերջ՝ հաղթողի հաղթողի դեմ էր կռվում մինչև վերջին հաղթողը հայտնի լիներ:

20.Տիրկավան[1] (Նետաղեղ)-Տիրկավան խաղը պատանու և երիտասարդի անհատական խաղ էր: Տիրկավանը փայտյա մի

[1] «Տիր» նշանակում է նետ, «կավան»՝ աղեղ:

զենք էր, որի ծայրին մի կլոր անցք էին բաց անում, աղեղի փայտի հաստությանը համապատասխան: Այդ անցքից մտցնում էին մոտ մի մետր երկարությամբ ճկուն և ամուր փայտյա աղեղը, որի երկու թևերը տիրից հավասար երկարությամբ հեռանում էին: Աղեղի ծայրերից ոչխարի աղիքից պատրաստված շատ ամուր լարն ուժանակ էր դառնում: Լարի բերանին դնում էին նետը, որ մատիտի հաստությամբ, 20-25 սմ երկարությամբ մի կլոր փայտյա ձող էր, ծայրին՝ մախաթ՝ սուր ծայրով: Նետն այսպես տեղավորում էին տիրկավանի «փորում» և «հրացանի» ոտը քաշելիս լարն արձակվում և նետն ուժգին մղվում էր նշանին: Հաղթում էր այն տիրկավանավորը, որ ուղիղ նշանի կենտրոնին էր խփում իր նետը: Նշանը փայտյա մի տախտակ էր, վրան մի սև կետ, որին իր նետն ամրացնողը հաղթում էր:

21.ՋԻՐԻՆԴ-Ջիրինդը ձիարշավն է, որ կատարում էին թե՛ պատանիները և թե՛ հասակավոր տղամարդիկ: Սասունցիների ջիրինդը մեզ ծանոթ ձիարշավներից տարբերվում էր նրանով, որ արգելակները բնական ժայռերն ու ձորերն էին: Մրցմանը հաղթող հանդիսանում էր այն մարդը, որ հարթ ու անհարթ (լեռնային) ժայռոտ տեղերում միաժամանակ արագ և առաջինն էր անցնում: Ջիրինդավորն ավելի հռչակ էր վայելում, երբ արգելակող գետից էր թռչում իր ձողով, կամ նրա ջրերից անցնում միշտ հեծած:

22.ԲԱՐՇԹՈՎ ՆՇԱՆ ԽՓԵԼ- Բարշթով (պարսատիկով) խաղը նշանառության պատանու թե հասակավոր տղամարդու ամենադժվար խաղն էր, հազվադեպ մարդիկ էին հաջողություն ունենում այդ խաղում:

Պարսատիկը պատրաստում էին 10-15 սմ լավ տապաղած և փափկացրած ծվածև մակերես ունեցող կաշվից, որի լայնությունը մեջտեղում 5-10 սմ էր, իսկ երկու ծայրերում 2-3 սմ: Ծայրերին ամրացվում էին կանեփից հյուսված երկու ամուր և 80-100 սմ երկարությամբ թելեր:

Պարսատիկի գնդակը ծվի մեծությամբ կլոր մի քար է:

Պարսատիկավորը, քարը դնելով բարշթի կաշվի վրա, բռնում էր պարանի երկու ծայրերից, որոնցից մեկի ծայրին մեծ հանգույց կար: Արագ թափով, օդում պտտեցնելով պարսատիկը 6-7 անգամ, ուղղություն բռնելով թիրախը՝ մի ժայռ կամ տնկած մեծ քարը, շտապ թողնում էր պարսատիկի հան-

գույց չունեցող ծայրը, ձեռքում պինդ պահելով թելի հանգուցավոր ծայրը, նայում էր թիրախին:

23.**ԳՈՒԼԱՇ ԲՌՆԵՔ**- Գուլաշ բռնելը սովորական ըմբշամարտն է, այն տարբերությամբ, որ այդ մարտում կեղծիք, խորամանկություն, հակառակորդին ոտք նետել և խաբս տալ չէր լինում: Նրանք մենամարտում էին, ցույց տալով ֆիզիկական ուժը և արիությունը: Հաղթող էր հանդիսանում այն մարդը, որ հակառակորդի մեջքը գետին էր դնում և իր աջ ծունկը թեթևակի դնում հակառակորդի կրծքին:

Հաղթողն իր հաղթելու ունակությունը և փորձը հաղորդում էր բոլոր մրցողներին, սովորեցնում, մարզում նրանց:

24.**ԹՌՆԻԼ**-Խաղը կատարում էին պատանիներն ու երիտասարդները: Թռիչքը երկու ձևով էր կատարվում, առաջինը՝ գծաբերանից թռչելով, իսկ երկրորդը՝ վազքով գալով, գծաբերանից թռչելով:Կանգնած տեղից ցատկելն իհարկե առանց ուժ առնելու էր լինում և շատ հեռու չէր ցատկվում, իսկ երկրորդ դեպքում ավելի հեռու:

Երկու դեպքում էք հաղթող հանդիսանում էր նա, ով ամենից հեռու էր թռչում:

5.**ՆԻՏ ՄԱՆԵԼ**[1] (ձողամարտ)- Նիտ (նետ) խաղալը կատարում էին պատանիներն ու ավելի մեծերը: Նիտը ծանր փայտից էին պատրաստում, 2-3 մ երկարության և 3-4 սմ տրամագծով հաստ ձողից, որպեսզի որոշ ծանրություն ունենար: Նիտի ծանրությունն ու երկարությունը ըստ պատանիների և ավելի մեծերի էր լինում: Նիտ խաղալն էլ երկու ձևով էր լինում՝ Առաջինն առանց թափ ստանալու, կանգնած տեղից նետել, և երկրորդը՝ թափ ստանալով, հեռվից գալով, նշված գծի վրա կոխելով, նետել նշանին: Նիտը մանում (նետում) էին կանգնած տեղի մակերեսին զուգահեռ և նետողի մարմնի դիրքին ուղղահայաց գծով: Նիտը աջ ձեռքով բռնում, աջ ուսի վրայից նույն գծով դեպի առաջ և ետ 4-5 անգամ, տանում բերում էին, ապա նետում, իսկ թափ ստանալու դեպքում՝ առանց դրան:

26.**ԳՈՒՐԶ**-Գուրզ խաղը ռազմական խաղ է: Խաղում էին պատանիներն ու չափահասները, երկու հոգով կամ երկու խմբով: Գուրզն ուներ այսպիսի կառուցվածք. մի մետր երկարությամբ և

[1] Մանել նշանակում է 1. նետել (այս դեպքում) և 2. թել մանել:

թևի հաստությամբ ամուր փայտ էր և ծայրը՝ գնդաձև: Գնդաձև մասն ավելի ծանրացնելու համար վրան քափքափներ (մեծ գլխով մեխեր) էին խփում, վրան կոնաձև երկաթյա ցցեր ամրացնում: Դրանով գուրզակռվի էին գնում մրցողների դեմ: Հաղթում էր նա, ով իր գուրզը նետում էր ուղիղ նշանին:

Գուրզի փոքր և թեթև տեսակը սասունցիները գործածում էին վայրի գազանների դեմ կռվելու համար: Գուրզին կապված էր լինում մի ամուր պարան, որի ծայրը հարվածողի ձեռքին էր մնում ետ քաշելու համար: Գուրզը գործածվում էր հարվածելու, իսկ երբեմն էլ՝ մոտ տարածության վրա գտնվող թշնամուն խփելու համար:

27.**ՅԱՐԽՈՒՇՏԱ**-Յարխուշտան սասունցիների ամենաշատ սիրած խաղերից էր, որ կատարվում էր բազմաթիվ հանդիսատեսների ներկայությամբ: Խաղը կատարում էին պատանիներն ու հասակավորները, նույնիսկ ծերունիները՝ անզուսպ հետաքրքրությամբ:

Յարխուշտա խաղացողները բաժանվում էին երկու բանակի, յուրաքանչյուրը 10-20 և նույնիսկ ավելի մարտիկներով, որոնց ճակատ-ճակատ կանգնած երգում, պարում էին և երեք անգամ ծափ տալուց հետո հարձակում գործում իրար վրա, ուղիղ գծաշարով, համաչափ և ռիթմիկ, երեք անգամ բաց ձեռքերի ափերն իրար ուժգին խփում, անմիջապես ետ քաշվում, դարձյալ երգ ու պարով կրկնում նույնը: Խաղը տաքանում, եռում էր, մինչև մի կողմն իրեն պարտված էր զգում, իսկ մյուսը՝ հաղթող:

Յարխուշտան խաղացողները իշխանական ռազմական տարազ էին հագնում, զինված խանչալով, որ կապվում էր մեջքին՝ աջ կողմի առաջամասում: Խաղը կատարվում էր ուխտագնացության ժամանակ՝ Անդոկի, Մարութա սարի, Ծովասարի և Մշո ս. Կարապետ վանքի տոներին, ինչպես նաև հարսանիքների և քեֆերի ժամանակ:

28.**ԲԸՌ** (բերդ)-Բըռը մարտախաղ է, խաղում են պատանի և երիտասարդ տղամարդիկ գարնան և աշնան եղանակներին, երբ դաշտային աշխատանքները դեռ չեն սկսել կամ վերջացել են:

Բըռ խաղացողների թիվը սահմանափակ չէ: Խաղը կատարվում է երկու բանակով, յուրաքանչյուրը 20-30-40 հոգուց: Մեկը բերդի պաշտպանողն է, մյուսը բերդի վրա հարձակվողը: Բերդը մի խոշոր քար է, դրված խաղադաշտի կամ լեռնալանջի կենտրոնում, որի մոտ կանգնած է բերդը պաշտպանողներից մի հո-

գի, որ թույլ չի տալիս թշնամու որևէ մարտիկի մոտենա բերդին և ոտքը դնել նրա վրա, իսկ բերդի մյուս պաշտպանները հետապնդում են հարձակվողներին, որ դեպի բերդ չգնան:

Խաղն սկսվում է հարձակվողների ազդանշանով: Պաշտպանողները մեծ շրջանակով, բերդի շուրջը, իրարից 5-10 մետր հեռու կանգնած, ընդունում են մարտահրավերը: Եթե հարձակվողներից մեկն անցնի պաշտպանվողներից մեկի թիկունքը, թեկուզ բերդին չմոտեցած և վերադառնա իր բանակը, պաշտպանող մարտիկը «մեռնում» և շարքից դուրս է գալիս: Եթե հարձակվողներից մեկը ճեղքի պաշտպանության շղթան, մոտենա բերդին, դեռ ոտքը քարին չդրած, բերդապահը նրան ձեռքով հպի, նա «կմեռնի», շարքից դուրս կգա, իսկ եթե ոտքը քարին դնի, հաղթանակը շահած կլինի հարձակվող կողմը և խաղը կվերջանա: Խաղացողները փոխում են իրենց դերերն ու դիրքերը ու խաղը նորից է սկսվում: Պատահում է, որ երկու կողմերի մարտիկներն «սպանվում են», մնում է յուրաքանչյուր կողմից մեկական մարդ. նրանք են բերդի շուրջը խաղը շարունակում, մինչև մեկը կամ մյուսը հաղթվի կամ հաղթի:

29.**ԴԵՐԸՆԴԵԶ**-Դերընդեզ ծիսախաղին մասնակցում էին պատանիները, տղամարդիկ և կանայք, տարին մի անգամ, փետրվարի 14-ին (Տյառնընդառաջի օրը): Խաղն անհատական էր և կատարվում էր կրակով:

Ծիսախաղը կատարվում էր այսպես. պատանի և չափահաս մադիկ հավաքում էին եղեգ, ցախ, փուք (գըլգկլի ցողուն), կիտում մի ընդարձակ տեղ և մեծ դեզ կազմում, ապա եկեղեցու վառած մոմը բերում և այդ դեզն այրում: Բարձրացող ծխի և բոցի մի կողմից անհատորեն ցատկում էին մյուս կողմը, հաջող, առանց այրվելու կամ անհաջող: Ծեսին մասնակցողները այդ դերընդեզի կրակներից վերցնում, նետում էին դեպի արտերի ու մարգագետինների կողմը, որպեսզի առատ բերք և բուտ (անասնակեր) լիներ:

Դերընդեզի կրակի շուրջը գնալուց հետո յոթը պտույտ անում էին չբեր կանայք՝ պտղաբերության համար և դերընդեզի կրակից տանում տուն, որով վառում էին օջախն ու թոնիրը:

30.**ԿԱՐՄԻՐ ՀԱՎԿԹԻ ԿՌԻՎ**- Կարմիր հավկթի կռիվը խաղում էին պատանիներն ու երիտասարդները՝ Կարմիր Զատիկի օրը:

Խաղը կատարվում էր երկու և ավելի մարդկանց միջև, որոնք ունեին բազմաթիվ կարմիր հավկիթներ:

Խաղում էին քիչ թեքություն ունեցող գետնի կամ կտուրի վրա, որի բարձր կողմի խաղացողը աջ ձեռքի ափին, բութ մատով պահած հավկիթը բաց էր թողնում: Սա գլորվում էր, հեռանում գծից և մի տեղ կանգնում: Երկրորդ խաղացողը նշված գծից, նույն ձևով բաց էր թողնում ձեռքից իր հավկիթը՝ նշան բռնելով առաջինի հավկիթին: Այսպես երրորդ, չորրորդ և այլ խաղացողները: Ում հավկիթը նշան բռնածին դիպչեր, հավաքում էր իրենից առաջ բաց թողնված բոլոր հավկիթները, որ երբեմն 10-15 և ավելի էր լինում:

Կարմիր հավկիթի կռվին երբեմն հարյուր և ավելի ձու շահող կամ կորցնողներ էին լինում: Կռվում շահողները շահում էին նաև «լավ նշան զարկողի» անունը:

31.**ՀԱԿԼՈՍԱԽԱՂ**-Հակլոսախաղը աքլորներ կռվեցնելու խաղ է: Խաղացողները միայն պատանի տղաներն էին, որոնք կռվեցնում էին հատուկ խնամքով և այդ նպատակի համար իրենց պահած աքլորները: Սրանք հաղթական դիրք, ամուր կազմվածք պիտի ունենային: Խաղը կատարվում էր ընդհանրապես գարնանը՝ բնության զարթոնքին: Խաղավայրում, ուր աքլորները պիտի կռվեցնեին, հավաքվում էին բազմաթիվ դիտողներ՝ երեխա, պատանի, կին և այլք:

Հակլոսախաղին մասնակցող ամեն մի պատանի իր հակլոսին (աքլորին) նախապես լավ կերակրում, մաքրում էր, կատարին և մորուքին սխտոր քսում, որի հոտը կռվի էր մղում աքլորին:

Երկու պատանիներ իրենց հակլոսները բերում էին կռվավայր և իրենց տերերի ձեռքից գետին դրվելով հարձակվում էին իրար վրա: Հակլոսակռիվն այնքան կատաղի էր լինում, որ նրանք արյունլվա էին դառնում, մինչև հակլոսներից մեկն ու մեկը փախուստի էր դիմում:

32.**ԷԶԸՆՈՒ ԿՌԻՎ** - Էզընու (եզների) կռիվը կենդանիներ կռվեցնելու խաղ էր: Այդ խաղը կատարվում էր գարնանը, երբ կենդանիները ձմեռային պայմաններից դուրս էին գալիս և գարնան շունչը պնչերին, սկսում էին փեկոլ տալ (եղջյուրներով, սմբակներով հողը փորփրել), որը կռվելու ցանկության նշան էր:

Էզընու կռիվը կատարել էին տալիս գոմապահները, որոնք ձմռան եղանակին հատուկ խնամքով բտում, մաքրում, խնամում էին այն եզները, որոնց գարնանը պիտի կռվեցնեին:

Երկու կռվող եզներն իրենց խնամող պատանու կամ հասակառուի առաջնորդությամբ բերվում էին մարտադաշտ, ուր դեմ դեմ գալով, եզներն իրենց դնչները մոտեցնում էին «քրտնած» հողին, ցույց տալով կեռ ու սրածայր ամուր եղջյուրները և ճակատ-ճակատի խփում, սկսում կռիվը: Եզային գլխակռիվը, իրար հրումներն ու կոտոշահարումները մեծ հաճույքով դիտում էին երեխաները, պատանի թե չափահաս երկու սեռի հանդիսատեսները: Էզընու այդ կռիվը վերջանում էր այն ժամանակ, երբ կռվող եզներից մեկը ուժասպառ ընկնում էր գետին կամ փախչում մարտադաշտից: Հաղթող եզան տերն էլ համարվում էր լավագույն անասնապահը:

33.**ԿԵԼԿՈՒԻՎ**- Կելկռիվը (գայլի կռիվ) մարտախաղ է, որ կատարվում էր մի շան և մի պատանու միջև: Ինչպես բոլոր կենդանիների կռիվները, այնպես էլ գայլխեղդ գամփռի տիրոջն ասում էր. «Ես քո շնից չեմ վախենում, հետը կկռվեմ», իսկ գամփռատերը թե՝ «Խեղճ ես, քեզ կտոր-կտոր կանի իմ շունը»:

Կելկռիվը լինում է մի այնպիսի տեղում, ուր ձեռնաքարեր կային, որպեսզի պատանին քարահարելով պաշտպանվեր և ծառ՝ որպեսզի գամփռից պարտվելու դեպքում պատանին ծառը բարձրանար և ազատվեր բզկտումից:

Կելկռիվն սկսվում էր հանդիսատեսների ներկայությամբ, երբ շան տերը ազդաշնան էր տալիս պատանուն և քըսքըս անելով շանը ու ցույց տալով պատանուն, բաց էր թողնում կելին, որը ժանիքները քշտած, գոռոալով հարձակվում էր պատանու վրա: Պատանին խոշոր ձեռնաքարերով նշան էր առնում հարձակվող գազանին և սպանելու նպատակով խփում նրան: Կելն իրեն խփված քարի ետևից էր վազում, բռնում, խածում: Պատանին, օգտվելով առիթից, իրար ետևից քարահրում էր կելին, որը կատաղած և վիրավոր հարձակվում էր պատանու վրա՝ բռնելու և բզկտելու համար:

Կելկռիվը վերջանում էր այն դեպքում, երբ վիրավորված, հալից ընկած կելը կուզկզալով (ոռնալով) փախչում էր կամ հասնելով պատանուն, վերջինս ծառն էր բարձրանում:

34.**ԿՈՉԹՈՆՈՒԿ**- Կոզքռնուկ (կզել և քռնել) մարզախաղ էր, կատարվում էր պատանիների և երիտասարդների կողմից՝ ազատ ժամերին:

Խաղը կատարվում էր ցանկացած թվով մասնակիցներով: Խաղն սկսվում էր, երբ առաջին խաղացողն իր երկու ձեռքերը դնում էր իր ծնկների վրա և կուզ գալիս, իսկ երկրորդ խաղացողը ձեռքերը դնելով առաջինի մեջքին, ոտքերը բաց արած թռչում էր նրա վրայով և ինքն էլ իսկույն մեկ-երկու քայլ հեռու կգում էր՝ ձեռքերը ծնկներին դրած: Երրորդը նույն ձևով առաջինի և երկրորդի վրայից ցատկելով, ինքն էր կգում և այսպես գալիս, ցատկում ու կգում էին բոլոր խաղացողները, ապա երկրորդը և բոլորը հերթականորեն, մինչև հոգնում կամ բավարարություն էին զգում ու խաղը վերջացնում: Շուտ հոգնողը և խաղը շարունակել չկարողացողը շարքից դուրս էր գալիս, մյուսներն էին շարունակում:

35.**ՔԱՐԳԼՈՐ**-Քարգլոր խաղացող երիտասարդները երկու խմբի էին բաժանվում, յուրաքանչյուր խմբում 2-3 մարդ: Խաղատեղը բավական լայն ու երկար էր լինում, որի մի կողմում մի խումբը, մյուսում՝ մյուս խումբն էր կանգնում, այնքան հեռավորության վրա, որ ձեռնաքար հասցնելը հնար լիներ: Յուրաքանչյուր կողմում և իրարից մի մետր հեռու երեքական քար էին կանգնեցնում իբր նշան և հերթականորեն ձեռնաքարով խփում էին այդ նշանաքարերը շրջելու համար: Նախ հարվածում էր մի խմբի առաջին խաղացողը, եթե նշանի մի քարին խփեր, մի անգամ էլ էր հարվածում, եթե չխփեր, շարքից դուրս էր գալիս և խփում էր նույն խմբի երկրորդ ընկերը, նույն պայմանով: Եթե այդ խմբի խաղացողներին հաջողվեր խփել և գլորել հակառակորդի երեք քարերը՝ հաղթող կհամարվեին, իսկ եթե չհաջողվեր, մյուս խումբն էր սկսում հարվածել այդ խմբի կանգնեցրած նշաններին:

Քարգլոր խաղացողներից այն խումբն էր հաղթող համարվում, որին հաջողվում էր թշնամու երեք քարերը խփել, կանգնած դիրքից գետին գցել, որ և հաշվվում էր հաղթանակ: Ապա խաղացողները փոխում էին իրենց տեղերը և խաղը շարունակում մինչև պայմանավորված միավորներով հաղթանակի հասնելը:

Քարգլոր խաղացողներից լավագույնները «նշանգար» (լավ նշան խփողներ) էին համարվում:

36.**ՋԱՆ ԽԱՂԱԼ**-Ջան խաղալը մանկական-նշանառության խաղ է, խաղում են պատանիները, զվարճանում նրանով, հետագայում՝ «նշանգար» դառնալու համար:

Ջան խաղալու սիրահար պատանիները, զանազան գույներով ներկում էին իրենց ջաները՝ կարմիր և կանաչ գույներին առավելություն տալով:

Խաղը կատարվում էր երկու հակառակորդների միջև, որոնք իրենց գույնզգույն ջաները որոշ հեռավորության վրա՝ 4-5 մետր, շարում էին ուղիղ գծով, ջանը-ջանից 10-15 սմ հեռու և սկսում էին խաղը:

Խաղը սկսողն իր մի ջանը աջ ձեռքի բթամատի ցուցամատի և միջնամատի մեջ սեղմ բռնած, նետում էր խաղընկերոջ ջաներով կազմված գծի ուղղությամբ: Եթե լավ նշան բռներ և ջաներից մեկին խփեր, այդ ջանը վերցնում էր իրեն: Նա երկրորդ անգամ խփելու իրավունք էր շահում: Չհաջողվելու դեպքում մյուս խաղացողն էր սկսում նշան խփել խաղընկերոջ ջաներով կազմված գծի ուղղությամբ, նույն ձևով խաղը շարունակում: Ջան խաղալն ավարտված էր համարվում, երբ մեկի բոլոր ջաները մյուսին էին անցնում, որը և հանդիսանում էր հաղթողը:

37.**ՄԱՐԴԱԲԱՐՉ**-Մարդաբարձը (մարդ բարձրացնել) ուժային վարժություն է, ծանրություն (մարդ) բարձրացնելու խաղ, որ կատարում են չափահաս տղամարդիկ, երբեմն էլ փորձում են պատանիները: Բարձրացնում են թեթև, ապա ծանր մարդկանց:

Մարդաբարձի վարժությունը կատարողը մեջքի վրա պառկում է հատակին: Մի ուրիշ մարդու ոտքերն ու թևերը իրար պինդ կապում են և բերում հատակին պառկողի աջ ուսի մոտ նստեցնում:

Մարդաբարձի վարժություն կատարողն իր աջ ձեռքը նստողի ձախ թևի և կրծքի արանքից անցկացնելով, պինդ բռնում է նրա աջ թևը և սկսում բարձրացնել ու ինքն էլ պառկած տեղից հետզհետե բարձրանում, նստելու դիրք ընդունում, ապա ծնկների վրա նստում և վերջապես ոտքի կանգնում ու իր աջ թևով ուսերից վեր բարձրացնում մարդ-ծանրությունը, որը երբեմն 90-100 կգ-ի է հասնում:

Մարդաբարձի խաղում, ամենաշատ ծանր մարդուն բարձրացնողը հանդիսանում է այդ խաղի հաղթողը:

38.**ԵՐԿԻՆՔԸ ՔԱՐԵԼ**- Երկինքը քարելը (դեպի երկինք քար նետելը) ուժային և նշանառության վարժություն է: Խաղը կատարում են պատանիները, երբեմն փորձում են նաև չափահասները, վերհիշելով իրենց պատանեկությունը:

Երկինքը քարել խաղի պայմանն է՝ կանգնած տեղից դեպի զենիթ-խաղացողի գագաթն ի վեր քար նետել այնպես ուղղաձիգ, որ քարն իր նետված տեղի վրա, կամ նրան շատ մոտիկ ընկնի, որով նրա ուղղաձիգության չափն է հաստատվում: Երկինքը քարելու մեջ հաղթող է հանդիսանում նա, ով ամենաբարձր և ուղղաձիգ է նետում քարը:

39.**ՖՇԱՆԳ**--Ֆշանգը (փամփուշտ) մանկական խաղ է, ռազմական նշանակություն ունի, նպատակն էր նշանառություն սովորել, ջինջուղ (ճնճղուկ) որսալ: Ֆշանգ խաղում էին մանուկներն ու պատանիները:

Ֆշանգը, որը և՛ խաղի, և՛ մանկական զենքի անուն է, պատրաստում էին մի դատարկ փամփուշտից, որը ամրացնում էին փայտյա մի «ատրճանակի» փողի վրա փորած մի փո-գծի ուղղությամբ, փամփուշտի երկարության չափով: Փամփուշտի կապույտներին մոտիկ մի փոքր ծակ էին բաց անում, որ ծառայում էր կայծ ընդունելուն և Ֆշանգը կրակելուն: Փամփուշտի մեջ նախ վառոդ էին լցնում, ապա կապարի մանր գնդիկներ, որի վրա էլ «սըխա» (շորի մի գնդիկ, որ վառոդն ու սաչմանն պահի): Ֆշանգն արդեն պատրաստ էր կրակելու համար, որի համար Ֆշանգի վրա բացված փոքր ծակի առաջ, մի քիչ վառոդ էին դնում և առկայծող փայտիկը մոտեցնում:

Ֆշանգ խաղացողներն իրենց այդ հրացաններով մրցում էին ջինջուղ որսալու համար:

Խաղացող մանուկներից ում հաջողվում էր ճնճղուկ շատ որսալ, նա շահում էր մանուկ «նշանդար» անունը:

40.**ԱՐՋԱԽԱՂ**-Արջախաղը մանկական խաղ է, որ պատկերացնում է արջի և հովվի կռիվը: Ըստ ավանդության, խաղը ծագում է առել Սասունի Գելիեգուզան գյուղացի հովիվ Կրպոյի Սարգսի և ոչխարի հոտի մեջ մտնող արջի իրական մենամարտից և արջին սպանելուց, որ ուժեղ ազդեցություն է թողել այդ գյուղի երեխաների վրա, իսկ ժողովրդական խաղերում այդ գյուղի բնակիչներին գովելիս «Արջ սպանող էդ գելեցիք» էին ասում:

Մանուկներն այդ խաղը կատարելիս մեկը որպես հովիվ էր ներկայանում, հովվական տարազով, մեկը արջ էր դառնում՝ մի մորթի վրան առնելով, մյուսները՝ ոչխարներ, որոնց միջից արջը հարձակվում էր հովվի վրա, իսկ հովիվը մենամարտելով արջի հետ, դաշույնով սպանում էր արջին, մեծ ուրա-

խություն պատճառելով «ոչխարներին» և հանդիսատես մանուկներին ու պատանիներին:

41.**ՍԱԴՈՆ ՓԱՀԼԵՎԱՆ**-Սադոն ուժեղ մարդու հռչակ ուներ: Դա հայտնի եղավ Մուշ քաղաքի մի բրուտանոցում, ուր նա մտել էր ջրի կում առնելու: Բրուտն ընդունում է Սադոյի այն առաջարկը, թե կժի մեջ փչեմ ու նա չպայթի, այն կառնեմ, իսկ եթե պայթի, չեմ առնի, բրուտի հաշվին կգնա:

Բրուտը լավ թրծված, ամուր մի կուժ է տալիս Սադոյին, որը կժի մեջ փչում է, կտորները ցրվում են բրուտանոցի մեջ: Բրուտը երկրորդ, երրորդ կուժն է տալիս, որոնք առաջին կուժի վիճակին են ենթարկվում: Տեսնելով, որ իր խանութում կուժ չի մնալու, խնդրում է Սադոյին դուրս գալ խանութից: Սադոն խղճում է բրուտին և նրան անկուժ, անապրուստ չթողնելու համար դուրս է գալիս խանութից և գնում: Այդ լուրը տարածվում է Մուշ քաղաքում և գնում հասնում Դիարբեքիր քաղաքը:

Դիարբեքիրի (Տիգրանակերտ) վալին մի օր վերցնում է իր հռչակավոր փահլևանին և գալիս Սադոյի գյուղը՝ Գելիեգուզան (Սասունում), հարցնում Սադոյի տունը և գնում նրա տուն: Սադոն տանը չի լինում, ձմեռ օրով սարի գագաթից քաշանով անասնակեր բերելու է գնացած լինում, հայտնում են տնեցիները և իմանալով, որ Դիարբեքիրի իշխանն է, պատշաճ կերպով ընդունում են և հայտնում, որ Սադոյի գալու ժամանակն է: Սադոն տուն է գալիս: Վալին դուրս է գալիս իր փահլևանի հետ, տեսնում Սադոյին, լականները ոտքերին, ծյունածածկ մի աժդահա, բեխի մազերից սառցե լուլաներ կախված, կուրծքը բաց և սառցապատ մազերով, զարմանում և հարցնում է, թե՝ «Դո՞ւք եք Սադոն»: «Այո»,- պատասխանում է նա և հարցնում նրանց գալու պատճառը: Իմանալով, որ վալին իր փահլևանին բերել է իր ուժը փորձելու համար, առանց լականները հանելու, վրայի ձյունն ու սառույցը թափ տալու, սկսում է մենամարտը Դիարբեքիրի հռչակավոր փահլևանի հետ:

Սադոն իր հակառակորդին գրկում, գետնից վեր է բարձրացնում և մեջքի վրա ուժեղ զարնում ձյուների և սառույցների վրա ուշագնաց անում, ապա գրկում, իր տուն տանում, ուշքի բերում: Վալին հիանում է Սադոյի և՛ ուժի, և՛ հոգատար հյուրընկալության վրա՝ հաղթանակի պարգևը Սադոյին տալով: Այդ գիշեր վալին և իր պարտված փահլևանը Սադոյին հյուր են մնում և իշխանական հյուրասիրություն վայելում:

Լուսադեմին Սադոյի հովիվը գալիս և հայտնում է, թե գիշերը գայլ է մտել ոչխարի փարախը և մի ոչխար փախցրել: Սադոն վճռական և կտրուկ հովվին պատվիրում է վերցնել երկու քաջ տղաների և գնալ գայլին ողջ-ողջ բռնել: Վալին և փահլևանը լսում են Սադոյի կարգադրությունը գայլի մասին և խելացնոր համարում նրան, բայց տեսնում են, որ հովիվը երկու քաջերի հետ գայլի հետքերով սարն են բարձրանում: Մի քանի ժամ հետո Սադոյի «զինվորները» գայլի վզին և բերանին պարան կապած բերում, ներկայացնում են Սադոյին և նրա հյուրերին: Սադոն նայում է վալիին և նրա փահլևանին, որ դողում էին գայլի ներկայությունից:

Վալին իրեն հանգիստ ձևացնելով՝ ասում է. «Սադո, քո սարերի գայլերն էլ քեզ հպատակ են»:

Սադոն պատասխանում է. «Այո, մանավանդ այն գայլերը, որոնք կհանդգնեն մեր ոչխարները փախցնել»:

Սադոն վալիին և իր փահլևանին հյուրասիրելուց հետո ճամփու է դնում դեպի Դիարբեքիր:

42.**ԳԵԼԽԱՓ**-Դա մի խաղ է լաջ հովվի և գայլի, որ գաղտագողի, գիշեր ժամանակ գալիս է ոչխար փախցնելու: Խաղը տեղի է ունենում յայլաներում, գիշեր ժամանակ, երբ ոչխարները բացօթյա հանգստանում, քնում են: Հովիվը լավ ուսումնասիրելով, թե որ կողմից է գայլը մոտենում ոչխարներին և որ ժամանակ, ինքը ոչխարի լավ մորթու մեջ է մտնում, ոչխար ձևանում, հետն էլ մի սուր դանակ վերցրած և «քնում» ոչխարներից մի-երկու քայլ հեռու, ակնդետ սպասում գայլի գալուն: Երբ գայլը մոտենում է գելխափին (գայլը խափող հովվին), վերջինս ճարպիկ և գայլին անսպասելի կերպով բռնում է նրա կոկորդը և աշխատում խեղդել առանց դանակ գործածելու: Եթե գայլին խեղդելը հնարավոր չի լինում, առանց նրա կոկորդը թողնելու, դանակով է սպանում:

Գելխափ հովիվները անասնապահության հերոսներն էին համարվում և շատ անգամ ժողովուրդը նրանց գովում էր երգերով և քաջության մասին պատմելով:

9. ԲԱՌԱՐԱՆ ՍԱՍՈՒՆԻ ԲԱՐԲԱՌԻ

Ա

Ա՛ ա - ձայնարկություն երեխաներին քնացնելու համար
Աբայի – կարճ, թևավոր և մազոտ վերարկու
Աբավուր - աբայի հագած (մարդ)
Աբով – համար, պատճառով
Աբուռ - ամոթ, պատկառանք
Աբուր - ապրուստի միջոց, ապրուստի հնարավորություն
Աբուր – սպաս, թանապուր
Աբրա - տարա, մանր կշռաքար կշեռքն ուղղելու համար
Աբրան - առվի սկիզբը, ջրանցքի բերանը
Աբրշում- մետաքս
Աբրջան - ապարանջան
Ագ - 1. անիվ, լիսեռի մտած ծակը, 2. թոնրի ակը
Ագաս – մագաս –խենթ ու խելառ, անմիտ
Ագալ – ոլորած փուշի, յազմա
Ագիշ - Ակիշ, երկաթե թաթավոր մի գործիք՝ կրակը խառնելու համար
Ագմում – մոմ, որ փեթակի դռան մոտն է լինում
Ագշթաթ- ակիշի թաթը, թաթածև մասը
Ագնգոր - աչքը կախ գցել, սպասողական նայվածք
Ագնադ - թակարդ՝ մուկ բռնելու համար
Ագուռ – թրծած կավ, աղյուս, աքքադերեն agur (Գր. Ղափանցյան)[1]
Ագռժաժ- կաշառք, ագռա շարժող
Ագռասորիկ – նոր, առաջին ատամը հանող երեխայի գլխին չամիչ, խաշած ցորենի հատիկ թափելը
Ագռա-բչխիկ - ատամ փորելիք, ատամ մաքրելու շյուղ
Ագռգիլ - արգելվել, կռվել
Ագռմեճ - ատամների միջև
Ագռգուգ - արգելված, իրար փակած
Ագրադ - նախաճաշ
Ագրդչախ – նախաճաշի ժամանակ
Ագցան - աքցան
Ադ - այդ
Ադագ - բրդի կամ մազի մնացուկը՝ գզելուց հետո
Ադագիլ – 1. Անհետանալ, կորսվել, 2. Պարապ ժամանակ գտնել
Ադագուգ - կորած, անհետացած

[1] Ակադ. Գր. Ղափանցյան «Ասսուրա-բաբելական բառեր հայերենում»:

Ադար – մարտ (ամիսը) մարտի լույս մեկի կեսգիշերին տան ներսի պատերը փայտով ծեծում են ասելով. «Սաբաթը (փետրվար) դուրս, ադարը (մարտ) ներս»՝ չարքերը վանելու համար
Ադառուն - ալյուրի և յուղի շաղախով պատրաստված ուտելիք, առանց եփելու
Ադին – ժամանակ, ատեն
Ադլիլ- լրացնել, կատարել
Ադղգիլ – տես ադագիլ
Ադոք – լեփլեցուն (հասկ)
Ադրան – թաղիքի կտոր, որ դնում են տրեխի մեջ, հագնելուց առաջ
Ազաբ - ամուրի, չամուսնացած
Ազաբչարի – նոր փեսայի թիկնապահ՝ ամուրի երիտասարդ
Ազաբչարութին - ամուրիություն
Ազպ- ջուլհակի սանր հենքի համար
Ազպող - ազպելու գործը կատարող (մարդ)
Ազնավուր - ամուսին, թագ ու պսակի արժանացող
Ազոխ – 1. Չհասած, ժուռ խաղող, 2. Քեղի ուտելու մասը
Աթար – չոր թրիք
Աթոռաց շրջիլ – 1. նորապսակ փեսայի հանկարծամահ լինելը, 2. Թագավորի կամ իշխանի գահընկեցություն
Աժախ- ծառի չոր ճյուղեր, որով տան կտուրն են ծածկում
Աժառ – ծառերի ճյուղեր և թփեր, որոնցով տներն են ծածկում գերանների վրա փռելով
Աժդահար – հրեշ, հսկա, դեև, վիշապ
Աժել - արժել, արժենալ
Ալալոզ - դատարկամիտ, բանսարկու (մարդ)
Ալամ - ամբողջ աշխարհ
Ալանի – հայտնի, չթաքնված
Ալաբուջիգ - չար ոգու անուն, որով վախեցնում են մանուկներին
Ալաբոգիլ – հավաքել, թալանել
Ալբ - 1. Փայտյա դույլ, որում կաթ են կթում, 2. փայտյա մի չափ, որով ցորեն են չափում
Ալբըհալ – իսկույն, անմիջապես
Ալեվալե - այլանդակ, անշնորհք (մարդ)
Ալի – կանեփի որձ տունկը, որ հատիկ չի բռնում
Ալուգ - 1. ճյուղ (ծառի), 2. Տան մինուճար ժառանգը
Ալուջ - ալոճի ծառի պտուղը, բազմակորիզ
Ալուր - ալյուր
Ալըջր - ալոճի ծառ
Ալհադա - անմիջապես, իսկույն
Ալուչ (իկ)- երկու տարեկան էգ այծ

Ալրխուս - ալյուրի խյուս (ճաշ)
Ալրմաղ - ալյուրի մաղ՝ փոքր անցքերով
Ալրդուն – ջրաղացի քարի առաջի այն մասը, ուր աղացվող հատիկի ալյուրն է լցվում
Ալրոդիլ - ալյուրոտվել, ալյուրի քսվել
Ալք – չար ոգի՝ առասպելական կնոջ կերպարանքով
Ախլավա - առաջին բերքից թխած և որպես մատաղ բաժանվող հաց, նաև աշկավա է կոչվում
Ախլանք - փակ, կողպեք
Ախլիլ - զարթնել, քնից վեր կենալ
Ախլուգ - զարթնած
Աձիգ- աժիկ, ծլեցրած ցորենի ալյուր
Աձիլ- ձու ածել
Աձլիլ- աժիլել, թրաշել, սափրել
Աղադ- ծառի ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ
Աղանձ - բոված ցորեն, խարկած արմտիք
Աղացք – ջրաղաց, որևէ բան աղալու գործիք
Աղբրկին - եղբորկին, աղբերկին
Աղբրտիք - եղբայրներ
Աղեգ- 1.սիրուն, գեղեցիկ, 2. շատ լավ
Աղեստան – 1.Աղաներ, բեգեր, 2. Աղիքներ, փորոտիք
Աղեղնուկ – ծիածան
Աղզլուց - անասուններին աղ տալու տեղ: Աղ լիզելու տեղ
Աղիղ - աղեղ
Աղլեղ - աղ տալ, աղ տալու ժամանակ, աղ լիզելու տեղ
Աղի- հղի
Աղլուղ – թաշկինակ
Աղնիլ - աղեղով գզել (բուրդ, բամբակ)
Աղնձիլ - աղանձել, խարկել ցորեն կամ գարի
Աղվիս – հարսնածից առաջ հարսի տունը գնացողը (մարդ)՝ աղվես
Աղվիսամիռ – կեղծ մահ ձևացնել, սուտմեռուկ
Աղվիսաքուն – թեթև քուն, կիսաքուն
Աղվիս խրդուկ - դեղին ծաղիկներով մի բույս, որի սերմերի ցայտից աղվեսը խրտնում է
Աղվիք – վայրի մի պտուղ, կեռասի նման փնջածև, բազմակորիզ
Աղվիքի - աղվիք պտուղը տվող ծառ
Աղճգնագ - աղջկա նման, աղջկա պես
Աղճգութիւն – կուսություն
Աղուն – ձմեռվա ալյուրի պաշարը, աղալու համար ջրաղաց տարած ցորեն
Աղուրդ - իրավ, ճիշտ

Աղվնիգ - աղավնի (թռչ.)
Ազտիլ - ազատ քաշել, ճյուղերով ցանկապատել
Ազտուգ - ազատ քաշած, ցանկապատած
Ազտող - ազատ քաշող, ցանկապատող
Աղցան – սալաթ՝ աղով, պղպեղով, քացախով համեմված բանջարեղեն
Աղքան - աղահանք
Աղքար – քարաղ
Ամալ -այնպես, այդպես
Ամանաթ – հանձնարարություն, հանձնում
Ամանլվա, ամանլվուկ – Շորի լաթի կտոր, որով ամանները լվանում են
Աման-չաման - ամանեղեն, խոհանոցային իրեր
Ամանկոդրուգ - կարմիր ծաղիկ ունեցող մի բույս
Ամբիղ - արևելքից փչող քամի
Ամեկ - ամեն մեկը, յուրաքանչյուրը
Ամլա (համլա) այդպես, այսպես
Ամբկուլ - ամպշոգ, ամպոտ և տաք եղանակ
Ամբհովանի – հովանոց, ամպհովանի, գոնտիկ
Ամբշուղ – տե՛ս ամբկուլ
Ամուքք, ամոթք – իգական գործարան, հեշտոց
Ամուլ – լծակից, ամոլ, լուծ քաշող զույգ (եզ)
Ամռեհիրգ - ամռանը հերկած
Ամռնակ, ամռնուգ - վաղահաս պտուղ (խաղողը), ամառը շուտ հասնող
Այլևայլե - զառանցանք, անմիտ խոսակցություն
Այբ - ամոթ
Այնի - ճիշտ, իսկը
Անագռա - անատամ, ատամնազուրկ (մարդ)
Անահ - անվախ, ահ չունեցող, անահ
Անանքիղ - անքեղ չունեցող, կրակը չպահող (տուն)
Անաբուռ - անամոթ
Անատակ - անդունդ, դժոխք
Անառագ - լիրբ, անամոթ (մարդ)
Անարտսունք - առանց արցունքի
Անավլիլ - առանց ավլելու
Անգահ – անժամանակ, ուշ կամ շուտ
Անգանալ – ուշանալ, ժամանակը փախցնել
Անգարուրդք – կոշիկի կամ տրեխի չկարված մասը
Անգիզ - չգզված (բուրդ, բամբակ)
Անգղ, անգ - կանթ (աման)

Անգոլիլ -հանգել, մարել, օր. «Քու դունն անգոլը»:
Անգջգլա - բարի լուր, աչքալուսս
Անգջգութ – ականջի ետևի մասը
Անգջվի – 1.Ականջներ, 2. ճախարակի այն մասը, որի միջից սեղմ կերպով անցնում է ճախարակի ճաղը, որն ինքնիրեն յուղվում է ջրից և հեշտացնում պտույտը: Պատրաստվում է ոչխարի սրունքի երկու ջղերից
Անդ- երդում
Անդենի – հանդերձյալ աշխարհ
Անեղ - աղեղ, աղեղի լար
Անըշուրդ - կերակրի մեջ լցրած քաղցրեղեն
Անթադագ - անութ, թևի տակը
Անթառամ - անթառամ (ծաղիկ)
Անթարի – ջուբրե, միհչև ոտները հասնող հագուստ
Անթափ - անուժ, թափ չունեցող
Անթեղ՝ կոճղ, որ մոխրի մեջ դնելով՝ կրակն անմար են պահում
Անթիմ – թեմազուրկ, թեմ չունեցող, ծխազուրկ
Անթղիլ - անթեղը կրակում պահել
Անթղագալ, անթղուց - անթեղը պահող, կրակը պահող
Անթում - անթիվ, անհաշիվ
Անթուրծ – չթրծված
Անժաժ - անշարժ
Անժում - անժամանակ
Անժուռ - անհամ, անյուղ (կերակուր)
Անժռիլ - անհամանալ
Անիղ - աղեղը (գզրարի)
Անիծ – ոջիլի հունդը
Անլգամ - անսանձ (լգամ-սանձ)
Անլից - անկուշտ, չլցվող մարդ
Անկ - անդամալույծ, անկյալ
Անկղ, անգղ - ամանի կանթը, բռնելիքը
Անհալավ – մերկ, անզգեստ
Անհարիլ – չհարված (մածուն), խնոցի չզարնված
Անձնակով – իր անձը գովող (մարդ)
Անձուխ - ածուխ, կիսավառ փայտ
Անձնավուր – հոգևոր, կենդանի, շնչավոր
Անձրևանոց – հովանոց
Անճրդուգ - ճարը կտրված
Անորա - անօրեն
Անցուցք – վիճում, անժամանակ ծնունդ
Աշիլ – նայել, դիտել

Աշխար – խաղողի ընտիր մի տեսակը
Աշխրքտիս - փորձված, աշխարհ տեսած (մարդ)
Աշկավա - տե՛ս ախլավա
Աշմշիլ – մքնաշաղել, մքնաժամել
Աշմուշ - աղջամուղջ
Աշնուկ – ուշ աշնանը հասնող պտուղ
Աշովի – միայն նայելով
Աշունքիլ - աշուն լինել, աշնան գալը
Աու - զարմանքի ձայնարկություն
Աուար - ամառանոց, զովքի վայր
Աչաչ – հլուն - ուլունք, որ կախում են աչքի վրա, բուժվելու համար
Աչո - աղջնակ - փոքր աղջիկ
Աչքռիլ - աչքով տալ, չար աչքի գալ
Ապո – հորեղբայր
Աջամ – պարսիկ
Աջառ – տե՛ս աժառ
Աջառիլ – տե՛ս աժառիլ
Աջառուդ - ճյուղաժածկ, աջառոտ վայր
Աջբարար – ձեռնածու, ֆոկուսնիկ
Աջղդագ - անուր, թևի տակը
Աջուջ-մաջուջ – մանրահասակ, թզուկ (մարդ)
Աջուղ, աջող – միզաման
Աջուգ – մարմնի այն մասը, որ գտնվում է ազդրի և ստորին փորի միացման միջև
Աջառիլ – 1.ուժեղ ճմռել, շփել, 2. կտուրը աջառով ծածկել
Առադամ - արորի այն մասը, որ մտնում է խոփի մեջ
Առեջ, առիջ – սայլի, դահուկի գերանը՝ ղեկը
Առզել – թախտ՝ վրան քնելու համար, բայց անշարժ
Առընգի – սկյուռ
Առինք - առաստաղ
Առկողմ – լեռան կողը, զառիվեր
Առորմի - գերան, որ պատի երկարությամբ դրված է պատի վրա և որի վրա դրվում են մյուս գերանների գլուխները
Առուկերը – թափառական, թալանված
Առջինեգ - անդրանիկ (որդի)
Առջմասուր – մասուրի մեծ և ընտիր տեսակը
Առջթոփ կամ ջրթոփ - արջերին վախեցնելու մի գործիք, որ հոսող ջրի շնորհիվ մեծ աղմուկ է հանում
Ասաս – հիմք (տան)
Ասի - անառիկ (բերդ), անանցանելի (ճամփա)
Ասլու- ջրնս – ծագումը, ցեղը

Ասղանուց - ասղամաև
Ասղնդալ - 1. Փշաքաղվել (մարմնի), 2. պղպջակումն եռալու մոտ ջրի
Ասղնդիլ - ասեղով ծակծկել
Աստնվուր – կին ունեցող, ամուսնացող, acti կին (Գր. Դափանցյան) խուրրի-միտանի
Աստուեմ - այստեղ, այնտեղ
Ասպ – ջուլհակի գործածի այն թելերը, որոնք բացվելով, փոխնի-փոխ գոցվելով, նրանց միջից անցուդարձ է անում մաքոքը
Ավա - շեն, օրինակ՝ ավա կիզ - շեն գյուղ
Ավա - պես, կերպ, հայդավա- այսպես, այս կերպ
Ավայի – շենք, շինություն
Ավդարա - մեծ բերան, երախ
Ավդ - հպատակ, ստրուկ
Ավրդուն – տնավեր, տնաքանդ
Ավըկը – յողով տապակած հաց
Արաղչը - գլխարկ՝ ասեղնագործած գդակի մի տեսակը
Արաղան - երկար և տաշած գերան, որ պատի երկայնքին են դնում, պատի մեջ ամրություն տալու համար
Արբիլ – հարբել
Արբուգ - հարբած, խմած
Արգ - մի անգամվա ճաշ, օրը երեք «արգ» են ճաշում
Արգակ - արեգակ, արև
Արգիլ - անձրև գալ, անձրևել
Արգուգ - անձրևոտ (եղանակ)
Արդար (իղ)- հալած (յուղ)
Արզ - արժանապատվություն, ամոթխածություն
Արթ - տկի ոտքերի մասը, ոտքերի մորթը
Արիջ-արիշ- կանեփի դեռ չոլորած թել-կեղևը, բայը՝ արջիլ
Արիվ ուտիլ - ապրել, արևը վայելել, օր. «չուղս զքու արիվ» (մեռնես քո արևը չուտես)
Արիվը սիվ – մեռնել, արևը խավարել
Արիվբերան - արևկող (վայր)
Արիվ իտալ - արևը տալ՝ մեռնել
Արիվ բադք - արևմուտք
Արիսկ - փայտյա երկու հենարաններ, որոնց վրա ամրանում է ճաղը (ջուլհակի)
Արծքքար – նավթալիճի նման փայլող հող, արծաթի հող, որ կար Սասունի Գելիեգուզան գյուղի արևմտյան մասում, Անդոկ լեռան գագաթի դիմաց, Մերկեր կոչվող թաղում
Արծթուգ- արծաթազօծ, արծաթաջրած

Արծվեթ – մի մետր բարձր, փարթամ բույս՝ անասնակեր
Արնբախ - արյունաթաթախ, արնաներկ
Արնխում - արյուն խմող, մարդասպան
Արնգոլ - արյան լիճ
Արնպարտք - արյան գին
Արնդար - արյունոտ
Արնհեղութին - արյունահեղություն
Արունք - արյան գին
Արուս – հարս, նորահարս
Արջիջ – կապար, ռսաս էլ են ասում
Արջջուգ - կապարով զոդված, ամրացված
Արոս – կռունկի նման մի թռչուն, 2. գյուղ Խնուսի շրջանում
Ավագադիկ – նավակատիք
Ավայի – շենք, շինություն
Արտխլիս - արտ հնձելը, վերջանալիս տրված նվերը
Ափլփիլ – մութի մեջ շոշափել, փնտրել
Ափկունք – քարկտիկ խաղը
Աքուք – ընդհողյա ջրատար կավե խողովակ
Աքուքիլ - գետնի տակից խողովակ անցկացնել

Բ

Բաբ, բաբո – հայր, հայրիկ
Բաբուբլոր - փարթամ, համեմ, բանջարեղեն
Բադան – պատանք
Բադիլ, բադնիլ – ընկնել, գլորվել
Բադրուս - բամբակի քուլա, որ մանում, թել են դարձնում
Բաթ – ուռեցք (մարմնի), խոզուկ
Բաթլիլ – նիհարել, ավերվել
Բաթման 1. ծանրության չափ, 12 նուգի, նուգին= 400 գրամի
Բաժ – հասակը, մարդու մարմնի երկարությունը
Բալա - փորձանք, դժբախտություն
Բալավդիլ – պահվըտել, թաքնվել
Բալակ – սև ու սպիտակ, խատուտիկ
Բալուլ – խանձարուր (երեխայի)
Բալբիլ – հարվածից մարմնի այտուցվելը
Բախ – խուրձ, մի գրկաչափ (փայտ)
Բախուրծ – քանի տկի կամ խնոցիի զարդաթելը և զարդերը
Բախտըր – խաղողի մի տեսակ
Բախտ - ապավեն
Բակլա - լոբի, հատիկն ու պարկուճը միասին

Բահր – ծով
Բաղբերան – սառնասիրտ մարդ
Բաղլիլիկ, բաղլուլա - սառցածող, որ ցվիքից կախ է ընկնում ձմռանը
Բաղսիրտ - ձնտարբեր, սառնասիրտ (մարդ)
Բաճ, բաճուկ – սիսեռի կամ լոբու պատյանը, որում սերմն աճում է
Բայթար - անասնաբույժ
Բանաուշ – մանիշակ
Բանդըկ (քրդ.) – ժապավեն՝ գլխարկի
Բանգ - 1. Արտի եզերքը, ներքևի մասը, 2. ճախարակի երկու շրջանակներն իրար միացնող թելերի ցանցը
Բաշ - անասունների ճակատի սպիտակը՝ շուրջը սև մազերով
Բաշոկ - աղավնիի նման վայրի մի թռչուն
Բառադա - իզուր, ավելորդ տեղը
Բառաբ - պարավ
Բառգադա - շրջանակաձև ճյուղ, որով կալի վրա աշխատող եզների բերանն են կապում քուլաշը չուտելու համար
Բառիգ - 1. մեջք, թիկունք, 2. պաշտպան, հովանավորող
Բառգուգ - պառկած, քնած
Բառոշ - արևկող (տեղ)
Բառուգ - քարկտիկ խաղի առաջին խաղը
Բառվնագ – պառավի պես
Բաս- պահք, յուղ, միս և այլն չուտելու օր, Մեծ պահք
Բաս - բավական
Բասըմբոլ –կարմիր-կանաչ նարոտ, Ծաղկազարդի օրվա մոմի մի կտորով միասին, որպես չար աչքի դեմ, կախում են մարդու կամ անասունի վրա
Բաստագ - արգելակ փայտյա, որ դնում են ոչխարի փարախի շուրջը, որպեսզի ոչխարները դուրս չգան փարախից
Բաստիղ – պաստեղ, ծիրանի, խաղողի թանձրուքի փռվածք, կտավի պես բացված, որ պահում են ձմռան համար
Բատամ - փորի ճարպոտ մաշկ
Բատվիրք – նկար, ֆոտո
Բատրկալ – պատրույգակալ բռնող, ձողիկ, որի վրա գզված բամբակն է փաթաթվում
Բար – պտուղ, բերք (ծառի)
Բար- 1. Դեմք, 2. դեպի
Բարան – խոյ, ղոչ
Բարաթ – հետք, մնացորդ, մուրհակ
Բարաքաթ - առատ, առատություն
Բարբուդիկ – նոր հարսի հետ գնացող կին՝ հարսնաքուր

Բարզգի – քամի, որից եղանակը պարզվում է, ամպերը ցրող քամի
Բաթթաշի – մորթե գոգնոց, որի վրա իլիկը քսելով-հրելով պտտեցնում են
Բարմալ – տան հատակը
Բարնբաբ - սկեսրայր
Բարնդադ, բարնմամ – սկեսուր
Բարշիլ – հաշտվել
Բրշքա - պարսատիկ
Բարուար – շավիղ, սարի լանջի ճանապարհ
Բարոշ - դույլ փայտից կամ պղնձից
Բարս – մեղվի ծագ տալը
Բաֆոն - ալյումին (մետաղը)
Բրուգ – կոկոն, նոր բացվող ճյուղիկ
Բրգիլ - բացվել, կոկոն տալ
Բդմը, բդմենը – մրկիթի ծառ, յուղատու պտուղներ ունի
Բեբարաթ - անհետ (կորած), հետքն իսկ կորած
Բեբախտ - ապաբախտ, դժբախտ
Բեյբուն – հոտավետ մի ծաղիկ, գուլ ու բեյբուն
Բեր – ոչխարի կիթը
Բերվուր – ոչխար կթող
Բզոթ – կրակի խոշոր և վառ կտոր, թեժ կրակ
Բընդոր - կալի վրա կապված եզներից ծայրի եզը
Բըռ – խաղ, որ կոչվում է բերդ, բերդ պահել
Բըսկ – խոպոպ, մազ
Բթլիլ – նիհարել, լղարել
Բժար – քարթիչ, հոգ՝ բժարնիհ
Բժիկ, բժուկ – 1. բառ, որ կրակ իմաստն ունի, ասում են երեխաներին վախեցնելու համար, 2. աչքի ցավ
Բիբի – սիրուն (բան), խաղալիք (երեխայի)
Բիդնալ - դուրեկան, դուր գալ, հաճելի լինել
Բինչ – քթի անցք
Բիշ - ակնթարթ (նայել)
Բլաբու – հավաստի, ճիշտ, իրավ
Բլել - գիժ, խենթ, չդատող
Բլիլ - զբաղվել, պարապել մի բանով
Բլիլիգ - գղտոր, կաղնի և հացի ծառերի տերևների վրա կազմվող գնդաձև մի զանգված, որ երեխաները հավաքում և խաղում են նրանցով
Բլըխտալ – խոժոռ նայել
Բլըխիլ - աչքերը բարկությունից ուռած
Բլըշիլ – շվարած մնալ, զբաղվելով մոռանալ (մի բան)

Բլուգ - զբաղված, 2. Բլուլ – ծալք, ծալվածք
Բլուզ - նորածիլ սոխի կանաչը
Բլոզ - աղբի փոքր կույտ, կղկղանք
Բլոջ – սև միջատ, 2. փոքր շաղգամ
Բլոր - ամորձիք
Բլոր-բակ – խաղ երկու մարդով գլուխ –ոտք իրար հակադիր: Գլորվում են միասին:
Բլուք – խոզկաղին, փալուք
Բխբխալ – խոխոջելը (ջրի), ժայթքել- շատրվանել (ջրի)
Բղբղիդ - փոքր սափոր, կուլկուլակ
Բղլամ – մաղաս, բաղլամ, խորխ
Բղող – ձու, որ թխսի տակ մնալով սկսում է ձագ դառնալ
Բնչադ – քիթը կտրած, պինչը կտրած
Բշկուրի ձեռնասուն - փոքրիկ աշխատող
Բուբու – խաղալիք (երեխայի)
Բուբոջիկ – ծոծրակի մազ (մարդու)
Բոգ - 1. կոկորդ, 2. ջրաղացի քարի անցքը, որի մեջ ցորենն է թափվում
Բոզ - գորշ, մոխրագույն
Բոզըկ – ծորակ (ջրի)
Բուիդ - 1. վնասակար միջատ, 2. բառ՝ երեխաներին վախեցնելու համար
Բոլոզ - պոլոզ
Բուլուկ – ծիլ, նորածիլ
Բոլոջ – 1. պլոճ միջատև, 2. շաղգամի մանր հատիկ
Բոլուջիկ – սատանի քամի
Բոխ – մի տեսակ վայրի բանջար
Բոձիխ – մի ծառի կեղև, որ կարմիր գույն է տալիս
Բուղա- ցուլ
Բուղգ – ումպ, մի անգամ կուլ տված ջրի քանակը
Բուղրու – ծակիչ գործիք
Բոճի – շան թուլա, լակոտ
Բոճրակ – ծխնի (դռան), որի վրա պտտվում է դուռը
Բումբարակ – շնորհավոր, բարով վայելում
Բունիգ - փոքր սալա, սակառ, կողովիկ (ոչ խոր)
Բոչալա - թեզանիք, շապկի թևի երկայր ծայրեր, որով աշխատանքի ժամանակ քշտում են թևերը՝ այդ ծայրերն իրար կապելով և գցելով վզի ետևը
Բոռքիլ – պատռել
Բոռքուկ – պատռած
Բոստալ – ցայտել, ժայթքել

Բոտառիգ - փոթորիկ, ձյունախառն քամի
Բուտուգ - հողե մեծ աման՝ կերակուր եփելու համար
Բուր – ընկույզի միջուկ
Բուրջ - բուրգ, աշտարակ
Բուքրա - ճախարակի ճաղ, որի վրայից անցնում է պտտեցնող լարը
Բջիղ - բլթակ, պճեղ
Բջգիլ - փորփրել, պրպտել
Բջգուգ - փորփրած, պրպտած
Բռբռալ – ոչխարի մայելը՝ գառը փնտրելիս
Բռուգ - շրթունք
Բռգաբռուգ - բերնե-բերան, շրթնե-շուրթ (լցված)
Բոջգիլ - փորել (ատամը), մի տեղ փոս անել
Բռչամ – քյանքուլ, ճակատի կամ գագաթի վրայի խոպոպ, մազ
Բռտիլ – 1. մանրացնել (փողը), 2. կաշառք
Բսալ – 1. լույս արձակել, 2. աղերսանքով նայել, աղաչող նայվածք՝ մի բան խնդրելու նպատակով
Բսիկ – 1. աչք, 2. կայծ, փոքր լույս
Բսըկ – վարս, ծամ
Բտղի – վանքին տալիք հարկը, նվերը
Բտղիշ – մի բույս 0.5 մ բարձր, կապտագույն ծաղկով, քաղցր հյութ է տալիս
Բտլիլ – նիհարել
Բրոն – տվտիկ, աղվամազ, որ այծերի մազերումն է լինում
Բրդուն – խսիր, փսիաք
Բրուսկ - փայլատակում, փայլ
Բրոխ - գորշ (գույն)
Բրոր – պղտոր ջուր, հոտած ձու
Բրջուգ - աշտարակով պատած, պարսպապատ
Բրքե - ավազան, լիճ

Գ

Գագա - ձու՝ մանկական բառով, որևէ ուտելիք
Գագվան – ոլորող գործիք՝ մազ, բուրդ, խոտ ոլորելու համար
Գադոշ - փայտյա դույլ, որի մեջ կաք են կթում
Գադղուգ - կատաղած
Գազըն - գանգատ, բողոք, դժգոհություն
Գաթնաղպեր – կաթնեղբայր, մի մոր ծիծը ծծող տարբեր հոր զավակներ

Գաթնաղպուր – կաթնաղբյուր, բուժիչ ջուր, լուսաղբյուր
Գաթնքուր – մի մոր ծիծը ծծող, տարբեր հոր աղջիկներ
Գաժ, գազ - լեռ, սար
Գալատիխ – կալատեղ
Գալմաստ – կալից ուրիշին նվեր տրված հացահատիկ (կալամաստ)
Գալուց – կալ անելու ժամանակ (կալուց)
Գալուգ - 1. կալսած, 2. գլխի գագաթի ածիլած մասը
Գալուգուդ - բերքահավաք, կալուկուտ
Գալդուն – կալին մոտիկ կառույց, ուր անձրևի ժամանակ քուլաշն ու ցորենն են պատսպարում
Գախմխի – կաղամախի
Գախուգ - կախ արած, կախված
Գախքար – ջրաղացի այն քարը, որ աղացվող հատիկների հոսքն է կանոնավորում
Գաղամար – քանաքաման
Գամար -փոշեխյուս՝ տրեխներ դաբաղելու համար
Գամքար – կամի տակի սուր-սուր քարերը
Գամփեդ - կանեփի հատիկը
Գամրուգ - խոտ է, լավ անասնակեր (վայրի)
Գանգրուգ - ուշ բուժվող վերք
Գանաչիլ – 1. կանաչել (բույսի), 2. որդի, սերունդ ունենալ
Գանդարա - ջրաղացի նավի վերևի բերանը, որից ջուրը հոսում է նավի մեջ
Գանգիջ – կարթ փայտյա, որ պարանի մի ծայրին ամրացված է, բեռ կապելու ժամանակ մյուս ծայրն ամրացնում են այլ գանգիջին
Գանգըման – կանգնած դիրքով, այդպես՝ նստըման, վազըման և այլն
Գանիլ – կանգնել
Գանուգ - կանգնած
Գանգրհան – կանկար հանելու գործիք
Գանգռիլ – հանկարծ կանգնել
Գանդրիֆ – շրջանակաձև փայտյա մի օղակ, որ լուծը արորի ծողին է միացնում
Գանք – 1). ունկ (ամանի), կանք, 2). տրեխի վրա բացված անցքեր, որոնցից անցնում է տրեխի թելը
Գանչխուդ - մի խոտ, որից կանաչ գույն են ստանում
Գաուլազ - թելի վրա շարված ընկույզներ: Շարելու համար ընկույզի կողքը ծակում են և թելն անցկացնում
Գանջուդ – քեղազգի մի բույս, որ ուտվում է
Գանչման – կանչող, ծայն տվող

Գանչուկ – կանչված, հրավիրված
Գաջ, գաժ – թելերի հյուսք, կաժ
Գաջրար – թելհուսկ կատարող, ղենչակ պատրաստվող, կաժրար
Գառապ - 1). գլուխ, 2). ծեծված քուլաշը հավաքող փայտյա երկար գործիք, որին մի զույգ եզ են քաշում, կառապ
Գառփիլ – 1). կալի քուլաշը հավաքել, 2). զգեստի խանձվելը կրակից
Գասկարա - եռոտանի, որի վրա աման են դնում՝ կերակուր եփելու համար, կասկարա
Գավան – նախորդ
Գարդալախ – մանյակ
Գարկուգ - ամուսնացած
Գարուգ - կարած
Գարմիր – խաղողի մի տեսակ
Գացին – ջրաղացի վերին քարը ցիցին միացնող երկաթ
Գաք - փայտյա փոքրիկ շրջանակ-տախտակ, եզերքները փոս, տկերի անցքերը փակելու համար
Գաքվնագ - կաքավի նման
Գաքվխուդ - կաքավի խոտ, որից սնվում է կաքավը
Գաֆաթ – սպառնալիք, ահաբեկում
Գբցընիլ – վառել, այրել
Գդուրս - աչքի սպիտակ ճպուռ
Գդող - գալարում, կծկում (օձի)
Գդլիլ – լրացնել, կատարել
Գեժ - գլխապտույտ ունեցող, գլուխը ակամա շարժող
Գեժռիլ, գիժռիլ - Գլխապտույտից ընկնել, հավասարակշռությունը կորցնել
Գելանիգ -ասեղնագարդի մի տեսակը՝ ռոմբաձև զարդ (գդակի վրա)
Գեժռուգ, գիժռուգ - Գլխապտույտ ունեցող, հավասարակշռությունը կորցնող
Գեձգըքուր – Կայծակե թուր
Գեծռիգ - կայծռիկ, լուսատու միջատ
Գեմ, գեմիգ - խոտից պատրաստած կապ, պարա՝ բարծիկ կապելու կամ նստելու համար
Գենչանի – մի ծառ, որի կեղևը կարմրավուն է և մոմի պես վառվում է
Գեռվըդուք – մարմնի քոր գալը, քերվելու ցանկություն
Գեսգող - «գող» չափի կեսը (կոտ չափի կեսը)
Գերուցք – հացի կամ ճաշի մնացորդ
Գթուգ - հեշտ կթվող (կով, ոչխար)
Գթիլ – 1). կթել, 2). գլգիլի հասկերը կթել, կտրել

Գթուգ - կթված
Գթուց – կաթ կթելու աման
Գթխա - 1). նվեր տրված մի բաժակ գինիի, 2). նոր հարսին տրվող որևէ նվեր
Գթվան – հեշտ կթվող
Գժգռնիլ – թելի կծիկի խառնվելը, ծայրը կորցնելը
Գըժգըժ – ցուլը կովի վրա գրգռելու ձայնարկություն
Գըմգըմք – սափոր, կուլկուլակ
Գժդուն – կուժը դնելու հատուկ տեղ
Գընդուգ - ծամը կտրած, մազերը կտրած
Գիժառիլ - գլխի պտույտ զգալ, շշմել
Գիժառուգ - շշմած, գլխապտույտ ունեցող
Գիշիռ – կշեռք, լծակ: Սումերերեն gisir (Գր. Ղափանցյան)
Գիծուգ - այրված (հաց)
Գիջ – խայթոց օձի
Գիռ – կեռ երկաթ, որով սառույցների վրայով մագլցում են սարն ի վեր
Գիսահամփա - կես համփայի հող ունեցող
Գիսաբջիղ - կես բջեղ հող ունեցող, 1/8 համփայի հող
Գիսուգ - կիսված, կես արած
Գիսք - երկու տարեկան այծ
Գիդուռ – մորեխ
Գլգիլ – ոսպի մեծությամբ, սպիտակ գույնի հատիկներ ունեցող մի արմտիք, որի ցողունը եղեգ է և 1-1.5 մետր բարձրանում է
Գլգիլ գուրջի – վրացական գլգիլ, եգիպտացորեն
Գլդիգ - փոքր լեզվակ, կլդիկ
Գլդգիլ - փոքր լեզվակով կուլ տալը, կլլելը
Գլեզ - լորձունք, թուք
Գլեշ – ծիծ, ստինք
Գլոզ , գլոնզ, գլոնձ – կղկղանքի, թրիքի գունդ
Գլորակ – կլոր փայտ, որ ջրաղացի քարի վրա են դնում
Գլոք – կծիկ
Գլոքիլ – կծկել, կծիկ դարձնել (թելը)
Գհոռ - փառախ, բացօթյա փարախ
Գձաև – կծող
Գձգձոկ – կծող շուն
Գձուգ - կծած, խածնված
Գմփոզ - ուժեղ ընկնել մեծ աղմուկով
Գնդլոզ - գլխաբաց, առանց գլխարկի
Գնդուգ - խուզված, մազը կտրած

Գնջազ, գնջի – 1. ոչխարի դմակի տակից, բրդից կախ ընկած թրիքը, 2. ծյունի կամ փայտի մեծ գունդ
Գնքամամ – կնքամայր
Գնքամում – կնքամոմ
Գնքաբաբ - կնքահայր
Գնքադուն – վայր, ուր կնունք են անում
Գնքուգ - կնունքը կատարված
Գնքաճաշ – կնունքի ճաշ
Գշտանուց – 1. կողակից, 2. կողքին ամրացված փայտ
Գշտացավ – կողացավ
Գշտափուր – կուշտ փորով
Գշտում – կշտացած
Գորդիլ - անցք բանալ (տրեխի վրա թելն անցկացնելու համար)
Գոբդուգ - անցք բացված (տրեխի վրա)
Գոբիդ - տրեխի եզերքների վրա բացված անցք, որի միջով անցնում է թելը
Գոդ - 1. չափ հացահատիկի՝ մոտ 20 կգ, 2. փայտյա աման՝ կերակրի համար, կոտ
Գուգ - հղկված, փայլերես
Գոգրո – կանաչ պատյանից նոր հանված ընկույզ
Գուդ - 1. հավի կուտ, կեր, 2. անդամալույծ
Գոզալ, Գոզիլ – սարի կամ բլրի վրայից անցնել, անհետանալ
Գոթ, գութ – ոչխարի կրծքի մասը
Գոթվուր – միասնական աշխատանքի օրը առաջինն աշխատանքի եկող մարդը, որին պատկանում է մորթվող ոչխարի կրծքամիսը
Գուլագ - խոպոպ, այտերի եզերքով իջնող վարս-ծամը
Գուգու - փոքր կլոր հաց, որ թխում են երեխաներին ուրախացնելու համար
Գուգվիլ – կլոր փոքր հաց թխել
Գուբուռ – կարի մի տեսակը
Գուլ ու սոսընց – վարդ և սոսընց
Գուղ - ասեղնագործի մի ձև՝ գլխարկի համար նախշ
Գուզ - կզաքիս, հարգի մորթ ունեցող մի կենդանի: Կուզ
Գուլաև – մայիս ամիսը
Գուլաշ – մենամարտ, կռիվ, գոտեմարտ
Գողինձ- հացի էրվածք, թոնրին կպած և կիսայրված հաց, կողունձ
Գոնդ - ճախարակի մեծ շրջանաձև անիվը, 2. ջրաղացի անիվը, որի վրա թափվում է ջուրը, 3. Ծառի թարմ ճյուղ՝ անասնակեր, 4. Անդամալույծ, մարմնի անշարժանալը

Գոնդիլ – 1. ճախարակի անիվը դնել, 2. ջրաղացի անիվը պատրաստել, 3. թարմ ճյուղեր կտրել, որպես անասնակեր, 4. Անդամալույծ դառնալ
Գոնգըռ – Կոնքոսկր, կմախք
Գոռ - գերեզման
Գոռբագոռ - գերեզմանից-գերեզման անցնես (անեծք)
Գոռնափըշտ - գերեզմանից դուրս ելնող և շրջող ոգի
Գովծուծ – Կանաչ մի մողես, իբր թե օձին թույն տվողը, կովծուծ
Գովըկ – ձագար, մածնկուլ
Գովգիթ – 1. կով կթող, 2. դույլ, որի մեջ կաթ են կթում: Կովկիթ
Գովընդ - պար, շուրջպար
Գուշտ – 1. քովը, մոտիկ, 2. կուշտ կերած, ոչ սոված, կուշտ
Գորա - համեմատ, նայելով, չափ, նման
Գորանի – պարի ծանր տեսակ
Գոր – մրիկ, ցորենի սնկային հիվանդություն
Գորի- ակոս, որից ջուրն է հոսում իրար զուգահեռ ակոսներով և ջրում բանջարանոցներն ու արտերը: Կորի, առվակ
Գուռանի – հարվածելու նպատակով նետված փայտ
Գուռզ - գնդաձև, պոչավոր սառը զենք
Գուռի - եզների շարք, որ լծում են կալի վրա քուլաշը ծեծելու համար, կոռի
Գուռգուռա - ջրվեժ
Գուռջըկ – թռչունների մարսողական գործարանը
Գուռջըմաք – սինձ, կաթոտ և համեղ բույս
Գործուգ - բերանն ի վայր դրված, շուռ տված աման, կործուկ
Գորուգ - կորսված, անհետացած, կորուկ
Գոփոն, գոփուն – տաշեղ փայտի, կոփած, կոփոն
Գոփուգ - տաշված
Գոփուց, գոփոց – տաշելու պրոցեսը
Գռահիլ – նկատել, գլխի ընկնել
Գռգիլ – կծկվել, քամոտել, ռևմատիզմով բռնվել, կռկվել
Գռձգլդալ - զկրտալ
Գռզիգ - բույս, որի արմատը քաղցր պալար ունի: Գռզիկ
Գռքան – թուխս նստած հավ
Գռջոն – կոշտ, կտորները մեծ, կռճոն
Գռտել - ամորձատել, կռտել
Գռտուգ - ամորձատված
Գրաքիան – կայծքար, հրահան
Գրգուդ – մանր-մունր ցախի կտորներ, վառելիք: Կրկուտ
Գրգըմիլ – շուտ-շուտ ուտել՝ բերանը լեցնելով, կրկմել
Գրեջ - աման, որի մեջ շան կերակուրն են լցնում: Կրեճ

Գրըկ – Ցորենի կամ գլգիլի սռնուցքից (ճավար) և յուղից պատրաստված քյուֆթա կամ հալվա
Գրիրա - կրիա, փայտյա փակ, որ կրիայի ձև ունի
Գրիրու գռիվ – կրիայի կռիվ, մի խաղ, որ երկու մարդով է խաղացվում, որոնց ոտք ու ձեռքն են կապված: Երբ մեկն ընկնում է, նա կրիայի պես չի կարող ելնել, մյուսը սողոսկելով մոտենում է և ծեծում նրան՝ կապված ձեռքի միայն մատներում բռնած փայտիկով:
Գրջագ - փայտյա այն ամանը, որից ցորենը հոսում է ջրաղացի քարի տակ
Գրջգի գախան - այն քարը, որի ծանրությունը կանոնավորում է ցորենի հատիկների հոսքը՝ աղացվելու համար
Գվա- կտրած կաթ, որ համեղ պանիր է, բայց 2-3 օրից ավելի չի դիմանում, փչանում է
Գցագ - փոքր գերան

Դ

Դաբագ - ձվածեղ
Դաբաղքիր – ռանդա, փայտ հղկելու գործիք
Դաբաղ - անասունի հիվանդություն, ոտնացավ
Դաբդաբա - արտակարգ չափով մեծ
Դագմա - հազվադեպ
Դադնիլ – սիրտը խառնել, սրտառնուք, տատնիլ
Դադե - մայր
Դալավ - գետի հունը, վայր, որտեղ կարելի է մոտեցնել և ջրել անասուններին
Դահլ - անտառ
Դաղտիղ – տաքդեղ, պղպեղ
Դաղմա - նշան, ճանաչելու համար, որ կատարում են այրելով, շիկացած երկաթը անասունի դեմքին կամ ականջին դնելով
Դամաղ – 1. քիմք, 2. քիմքի հիվանդություն
Դամալ – հավերին տուն կանչելու ձայնարկություն, հավի տուն, տնակ
Դամառի – խորթ մայր
Դայախիլ - դիմանալ, նեցուկ լինել
Դաուլ – ջրաղացի ամբարը, ուր լցնում են ցորենը
Դաուլաթ – հարստություն
Դանդալոզ - թեթևսոլիկ, անխելք, ապուշ
Դանդուռ - փարփար, փրփրեմ, ուտելի բանջարեղեն
Դառաբա - մեծ դուռ, դարպաս

Դառդանգուզիգ - խաղ՝ լծակ է, որով ելնում և իջնում են խաղացողները
Դառնախոտ – թավալգլոր ընկնել
Դառըկա - քուրդ կին, քրդուհի
Դայո – մայր
Դայախա - ջուլհակի ոտատեղերը, որ շարժելով՝ գործում է
Դաստմալ – թաշկինակ
Դաստաջաղ - գործիք, որի վրա մասրաներ են շարած՝ ջրածը կազմելու համար
Դավար – տավար, անասուն
Դավրը լեզու - եզան լեզու (բույս)
Դավրան – ժամանակ, դարաշրջան
Դավրը մասուր – մի մասուր, որ չի հասունանում
Դարա-գուջիգ - մի խաղ դժվար կատարելի
Դարանգ - ուշ, ուշացած
Դարբ (քրդ.) - հարված
Դաֆ – ջուլհակի գործիք, որ պահում է սանրը, տոֆա,
Դրգիլ – կաշին մշակել
Դբղուգ - մշակած
Դգլուզ - մերկ
Դգլոզնալ – մերկանալ
Դեղվան - բարձր քարակույտ, որով ձմեռ ժամանակ, երբ ճանապարհները փակվում են, գտնում են ճամփան
Դել - էգ շուն
Դեղտի – մի բույս, մոտ մի մետր բարձրությամբ, որի դեղին ծաղիկները հավաքում, չորացնում, աղում, մանրացնում են և կանայք իրենց գլուխը լվանալիս, վերջում այդ փոշուց ցանում են իրենց մազերին, որպեսզի երկար և փափուկ մնան:
Դեքարկին – տեգերկին
Դզգիլ – թրջվել, ջրոտվել
Դզգուգ - թրջված, ջրոտված
Դըրբ - լայն ճանապարհ
Դըքա - կես մետր բարձր. սաքու: Հող ու քարից շինված անշարժ թախտ
Դիգ - տիկ, մորթի, որ ծառայում է մածունը հարելու համար, տկից պատրաստած խնոցի
Դիզ - 1. Որդ, որ գոյանում է անասունների մորթու տակ, 2. Խաղում մի անգամ շահել
Դիլ – 1.ցեխ, բուսական մնացորդից ճահիճներում գոյացած տիղմը, 2. որբ, անտեր (մարդ): Տիլ
Դիլագ - աղաչանք, խնդրանք

Դիվ – տերև, ծառի ճյուղերը տերևներով միասին, որ ծառայում է որպես անասնակեր
Դիվան - դատաստան, մեջլիս, դատարան
Դլբիք – պտղածածկ ծառի ճյուղ, Դլբիկ
Դլուդ - ցեխոտ, ճահճոտ վայր
Դլոդիլ – ցեխոտվել
Դխիրիլ – իրար վրա հավաքել, դիզել
Դխիրուգ - հավաքված, դիզված
Դկփեդ - փայտ, որ պրկում է տիկը, որի մեջ լցված է մածուն՝ հարելու համար
Դկջուր - փոքր տիկ, որով թան և մածուն են տանում դաշտ՝ աշխատողների համար
Դղդղալ – խտիկ լինել, մարմնի որոշ մասերին հպվելուց ակամա ծիծաղել
Դղիգ - խտիկ, ծիծաղ առաջացնող հպում
Դնագոլ, դնանգոլ – տնաշեն կամ տնավեր
Դոդոշ - գորտի մի տեսակ
Դոլ, դոխ – 1.ցեղ, սերունդ, 2. ջրաղացի արկղը, ուր ցորեն են լցնում: Աքքադերեն՝ dol (Գր. Ղափանցյան)
Դոբրի - երկու տարեկան որձ այծ
Դորբին – հեռադիտակ, դիտակ
Դուգուր - երկտակ գործված կտոր
Դող – 1.կլոր բարակ հաց, 2. մեծ օղ, անվադող
Դում – խուլ լինել, 2. անխելք, խեթերեն՝ dym (Գր. Ղափանցյան)
Դոփան – տափան, որով ծեծում են կտրի հողը, որ ջուր չանցկացնի
Դոնիգ- փափուկ, թարմ հաց
Դոսախ, դոսախի – չիմշաք՝ մշտադալար մի ծառ, որ ունի լավ մշակվող փայտ՝ սրինգ և սաներ շինելու համար
Դորուն – կարմիր ներկ (բուսական)
Դուդ - 1.ղեկ (նավի), կայմ (առագաստի), 2. պատ, որի վրա նստում են կամրջի երկու գլուխները, տուտ
Դուրիգ - տոպրակ, որ մագից է գործված
Դոր – հերթ, ժամանակ, վրացերեն դրո - ժամանակ (Գր. Ղափանցյան)
Դորվե - որտեղո՞վ, որտեղի՞ց
Դձագ - հետույքի անցք
Դռդզդալ, դռդզալ – տատանվել, օրորվել, շարժվել
Դրամ – ծանր, չափ՝ մոտ 3.5 դրամի
Դրմուզ - մեծի հաց
Դրմուզ (դարու) Նոր տարվա կեսգիշերին թխած մեծ հաց, բախտի և դժբախտության նշաններով, որոնք ում որ ընկնեն, բախտավոր կամ դժբախտ կլինեն

Դրուստ – ուղիղ, ճիշտ, իրավ
Դքա - սաքու, ծուռ-մուռ, որի մեջ դրված է սաները

Ե

Ել- վեր, բարձր, ասուրերեն՝ el, elu (Գր. Ղափանցյան)
Երտ - դարման (ցորենի, գարու)
Եզրահ, էզրհահ - գործիք, որով հյուսնը փայտի, տախտակի եզերքներն է տաշում, հանում, ձևավորում
Ելուստ - փայտյա ոստ, որ հեշտ ելնում է նրանից
Եղինջ, էղիջ - եղինջ, խայթող, ծակող, ցավեցնող բույս
Եմանի – չուստ, սոլի մի տեսակը
Երտ - դարման, հարդ, ծղոնի մանրուք
Եփուգ, էփուգ - եփած, թխած

Զ

Զազ - համր, չլսող
Զախմ – ուժեղ, հարուստ, գեր
Զազ - գիծ, խազ
Զազիլ - գծել, գիծ քաշել
Զաղուգ - գիծ քաշած, գծած
Զամբ - ջրաղացի քարի շուրջը հավաքված ալյուր
Զամբդուն - զամբի հավաքման վայր, զամբի «տունը»
Զամբուր – մի բանջար, լավ համեմ է կերակրի մեջ գցելու
Զանդ - հաստ ցողուն (բույսի)
Զաուալ-վնաս, պատուհաս (չարքերից), խեթերեն՝ zauall (Գր. Ղափանցյան)
Զաջ - դեղնավուն մի հող, որ աճում, թթվում է, որպես դեղ են գործածում վերքի բուժման համար: Զաջը սևացնում է մորթը
Զառաֆաթ – 1. ժածիկով եփված հաց, 2. Կատակ, հանաք
Զավթիա - ոստիկան
Զարգուգ - զարնված, դիվահար եղած
Զատ – մեռնողի հոգու համար տրված ճաշ
Զար- բարակ, նուրբ շղարշ
Զարզամի – ներքնահարկ, սառը տեղ
Զարզանդ - մեծ վախ, ահ, սոսկում
Զարզանդուգ - սարսափած, ահաբեկված
Զարգաճ – հարող, հարվածող, խփող
Զբարա - բազմաթիվ մարդկանց միասին և անվարձ աշխատելը
Զբարվուր - անվարձ աշխատող

Զբուն – նիհար, տկար
Զեի - եզրագիծ (տախտակի), տախտակի վրա որոշ նպատակով՝ քաշած գիծ
Զեվա - ուղղանկյուն քանոն, որով պատի անկյունների 90 աստիճանի լինելն ստուգում են, չափում
Զեր – թթու, թթվաշ
Զզու – մի բույս, որ քաղում, չորացնում, մանրում են և հացի հետ կամ կերակրի՝ ուտում
Զըլ - եղեգն, ղամիշ
Զրնգլդալ - զանգի պես ձայն հանել
Զրնգլդան - զանգի պես ձայն հանող, զանգի ձայն ունեցող
Զըռթ - արհամարհական, ամոթալի ձայնարկություն
Զըվրըկ – մի փարթամ բույս, որը լավ անասնակեր է
Զըրար – մի շալակով ջրաղաց տարվելիք հացահատիկ, կամ ջրաղացից բերվող ալյուր, միայն մի շալակը
Զիզի (մնկ.) – ծիծ, բառ, որով երեխան մոր ծիծն է ուզում, ծծել է ուզում. «մամա զիզի» թոթովելը
Զիխ – 1. ակնապիշ (նայել), ուղիղ և անթարթ նայվածք, 2. վրինջ, վրնջյուն
Զիխալ, զիխզխալ – վրնջալը (ձիու)
Զիխին – ձիու վրնջոց, հռհռոց
Զիպ – պառավի քամու յոթն օրերը՝ փետրվարի վերջին երեք և մարտի առաջին չորս օրերի տևողությունը
Զիվան – որոմ, որ գտնվում է ցորենի մեջ, մոլախոտի մի տեսակը, որի սերմը ցորենի հատիկի նման է և փոքր
Զիվք – կուպր, ձյութ
Զլընդար – շատ դառն, անտանելի լեղի համ
Զխուր – քանով եփած հարիսա
Զղքալ - ամուր ընկնել հողի կամ քարի վրա
Զմփալ, զմփզմփալ -1. ամուր ընկնել ջրի մեջ, 2. խնոցու կամ տիկ հարելիս լսվող քանի ձայնը, ջրի արագ հոսելը
Զնահ - անիծված, չարասիրտ (մարդ)
Զնար – հսկա ժայռ՝ լեռան լանջից կախ ընկած
Զնեքար – չարագործ, անհոգի (մարդ)
Զնզնալ – կաթիլ-կաթիլ հոսել (ջուր), հազիվ լսելի կարկաչ (ջրի)
Զնջիլ – շղթա, կապանք
Զնջլուգ - շղթայված, կապված
Զոզան - ամառանոց, վայր, գովք, յայլաղ
Զուզագ - հողե ամանի, կարասի ծորակ, սուզակ
Զոթիլ - զոթել, խոփի բերանին պողպատյա կտոր դնել, որ դիմանա քար ու հողին

Զոթ – երկաթի երկու կտոր իրար միացնող, զոդ, լիեմ
Զոլ – կաշու նեղ և երկար շերտ՝ տրեխ կարելու համար կտրած
Զոլիլ – կաշին զոլել, զոլերի վերածել՝ երկարությամբ կտրելով
Զոլուգ - զոլի ձևով կտրված, երկայն բայց նեղ կտրված
Զոխ - բանջարեղենի մի տեսակը, որը թթու են դնում
Զոխմա - մսի մեծ-մեծ կտորներ
Զոնքիլ – ուժեղ հրել, բշտել
Զուբախ – սարի թեք լանջ
Զուբարա - տես զբարա
Զուռյաթ – սերունդ, զավակ
Զոփա - հաստ գավազան, մահակ
Զպուն – նիհար, լղար
Զռան - զռացող (էշ)
Զռիբ - ջրի հոսելը շատ թեք վայրով
Զռտո - անարգական ձայնարկություն (մարդու)
Զվադա - ճամփի պաշար
Զվրըկ - փարթամ մի բույս, որ լավ անասնակեր է
Զրզուր – մորեխները կոտորող թռչուն, անհամար երամներով շրջում են մորեխները կոտորում, փոքր և խատուտիկ թռչուններ են, ծտի մեծությամբ
Զֆըր – կոպիտ (մազ), սարթ (թրաշ)

է

էզան աչք – 1. եզի աչք՝ բույսը, 2. խաղողի մի տեսակ
էզընկալ - երինջ, որ բեղմնավորման համար հասունացել է
էզրհան - երկաթյա գործիք, որով տախտակի եզրերն են հարթում
էլագ - ելակ, ժիլեթ
էլըմով - զգույշ, կամաց
էղիլ – 1. յուղել, յուղ քսել, 2. նախ ջրել արտը, ապա նոր հերկել
էղիգ - դեռ չհասած ցորեն կամ այլ արմտիք
էղիջ - եղինջ, ծակող, մորմոքեցնող մի բույս
էղնիլ – լինել, ծնվել
էղուգ - 1. եղած, ծնված, աշխարհ եկած, 2. վարած (արտ)
էղուրճ - սառցակալած ձյուն, որի վրայից կարելի է քայլել առանց խրվելու
էղվնիգ - աղավնի, աղավնյակ
էղտան – յուղ հալեցնելու պղնձյա աման
էմլա, էմլեմ – նորից, դարձյալ
էմագդար – վաստակավոր, շատ աշխատած
էռջնիգ - անդրանիկ (որդի), առաջինը

էռջը թշրին – հոկտեմբեր (ամիսը), էգը թշրին՝ նոյեմբերը
էրան – մեղմ քամի, որը հարմար է դարմանը ցորենից անջատելու համար: Ծեծված քուլաշը դարմանով և ցորենով խառն, բահով կամ հեծանոցով կալում, վեր են նետում, քամին դարմանը ջոկում է, ցորենը ընկնում, մնում է կալում
էրգեն - երկար (աքքադ.՝ erk (Գր. Ղափանցյան))
էրգուղ - երկյուղ, վախ
էրդաձագ - երդիկում բացված ծխանցք, բուխարի
էրդուձգալ - խոտի կամ փալասի գունդ, որով ծածկում են ծխնելույզը
էրդիք – կտուրը (տան), տանիքը
էրեթիկ – մորթի գրգռուն, ջրոտ և տարածված բշտիկներով
էրկանք - երկանաքար, աղաց, երկանք
էրկսնուգ - ափկունք կամ քարկտիկ խաղի երկրորդ մասը, երբ քարերը երկուական պետք է հավաքվեն
էրնջնուգ, էրնջնակ -Երնջուկ, մի բույս, որ կանկարի պես ուտում են
էրուգ, իրուգ - այրած, այրված
էրուք - այրվելու պատճառով առաջացած վերք

Ը

Ըլալ – լցնել
Ըլի, ըլը – լեփ-լեցուն, լիքը
Ընգողին - անկողին, տեղաշոր
Ընիլ – լինել, ընիլ- չընիլ – լինել, չլինել
Ընգաղ - բռնակը, ունկը կոտրած (սափոր)
Ընը-չընը - անպայման, լինի-չլինի (պետք է կատարվի)
Ըմբագ - գինի կամ ջուր խմելու անոթ
Ըմբու (մնկ.) ջուր, ըմպու
Ըմբուք - այն փայտը, որ երկանքի տակի քարից մտնում է վրայի քարի անցքը, որպեսզի վերևի քարը պտտեցնելիս դուրս չգա, չընկնի
Ըմնար - ամեն օր
Ըռբիգ - փայտյա աման՝ ցորեն չափելու (կշռելու) համար, մոտավորապես հինգ կիլոգրամ տարողությամբ
Ըռըսվա - խայտառակ, անպատիվ
Ըր- իր, իրենը
Ըրտընիլ - փոքրիկ անցքեր բանալ առվակի կամ ակոսի շրթին, որից ջրելու հարմարություն է ստեղծվում շատ թեքություն ունեցող արտերը ջրելու համար: Ըրդընել- Ուրդ անել, ուրդերի բաժանել (ջուրը)
Ըրուբ – ռուփ, դոշաբ

Թա - քե, եթե
Թաբախ – օգոստոս (ամիսը)
Թաբախիդ - պնակ, ափսե
Թաբլիլ, թաբլդիլ – թավալել
Թաբուտ - դագաղ
Թագալա - հին շորի կտոր
Թագվուր –նորափեսա
Թագն ու պսակ – պսակվելու արարողություն, ամուսնություն
Թադարուք – պատրաստություն
Թաթան – թաթերի վրա քայլող (երեխա)
Թաթիլ - երեխայի քայլելը ձեռքերի և ոտքերի վրա
Թաթիկ-լաթիկ – մի խաղ, բերդ և սահման պաշտպանելու իմաստ ունեցող
Թաթման, թաթպան – ձեռնոց
Թալ - անոսկոր միս, ոսկրահան արած միս
Թալակ – թակարդ, որոգայթ
Թալիլ – նետել, գցել
Թալթլիլ – թուլանալ, երերալ
Թախալ – պայթել, տրաքվել
Թախին – 1.կանացի հագուստ մետաքսյա, ջուբրե, 2. պայթյունի ձայն
Թախլաբոզ, թախլախորիսկ – ընկնել ու գլորվել, գլուխկոնծի տալ
Թախոխ – պայթակ, պայթելու ձայն հանող (խաղալիք), որ պատրաստում են ընկուզենու բարակ, սնամեջ ծողիկից, երկու ծայրերից շորե թաց գնդիկներով փակ, մի կողմից բարակ փայտյա ծողիկով հրում են շորե գնդիկը, ներսից օդի ճնշման հետևանքով մյուս ծայրի գնդիկը պայթյունով նետվում է հեռու:
Թակ - փայտյա կարճ և հաստ մի գործիք, որով լվացք անելիս ծեծում են թաց շորերը՝ մաքրելու համար
Թահր – կերպ, տեսակ, ձև
Թաղիք – քեչա
Թամա – ժլատ, ագահ
Թամաշիգ - հրապուրիչ, շատ սիրուն, հաճելի տեսք
Թամբիլ – կանաչ տերևով կտուրը ծածկել, առանց վրան հող լցնելու: Այդ կատարվում է այն սրբավայրի շենքի համար, որի սուրբը հողի տակ թաղված չէ (Եղիա Մարգարեի եկեղեցին Սասունի Հեղին գյուղում):
Թամբուլ – մեծ և սև շլորի մի տեսակ
Թամուզ - հուլիս ամիս, բերքի ամիս, թերևս Թամուզ աստծո անունով

Թային – նպաստ, ոկտելիք, օրվա ապրուստ
Թանթախ - փափուկ, անոսկոր (միս)
Թանալ – թրջել, թացացնել
Թանթռվենի – մի թուփ, որի ճյուղերը սնամեջ են և նրանցից ծխամորճ (մուշտուկ) են շինում
Թանիչք - հալած յուղի չանչը, թանի մնացուկը յուղի մեջ խառն կամ նրանից անջատված
Թանհատ – շոռ, ժաժիկ, բառացի՝ կտրված թան
Թանջուր – թանի, մածնի և ջրի խառնուրդ, զովացուցիչ թան
Թաշի – իլիկ, քարման
Թաշկ - ազդր, զիստ
Թաշկիլ – հոգնել, վաստակել
Թաշկուգ - հոգնած, վաստակած
Թաշանա - բորբոքում (վերքի)
Թաշանի – թուփ-մի տերև, որ վերքի վրա են դնում՝ վերքի բորբոքումն անցկացնելու համար
Թաուխա - խնդրանք, աղաչանք
Թապլգիլ – թավալվել
Թաջ – 1. թակ, 2. մաքրված ցորենի մեծ կույտ (կալում)
Թառ (անիլ)- բաժանել ըստ տնտեսության (տուրքը) բաշխել
Թառլիկ - բաճկոն
Թառաֆ – թեժ կրակ
Թառմա - խաղողի մեծ վազ, որ ծառերի վրա է հենվում
Թավն - գորգի, փսիաթի հենքը, որ պիտի գործվի
Թավուր – տեսակ, ձև (թաուր)
Թարախորա - կիսաեփ ձու
Թարեջ - գդակ, որ հազիվ գագաթն է ծածկում, թասակ
Թարշ - անասնուն՝ ամեն տեսակի
Թացան – կաթնեղենի բոլոր տեսակները
Թացնտուն – մառան, պահեստ (կաթնամթերքի)
Թավա-հացիկ – թավայի մեջ եփած գաթա, հաց
Թափիլ – կաղապարել (կապարի գնդակ), 2. թափել
Թափո - ափկունք կամ քարկտիկ խաղի 5-րդ մասը, երբ մի քարը վեր նետելով, չորս քարը գետնից միանգամից վերցնում են
Թափըկ - գդակի գագաթը
Թեզ - 1.բարկ, կծու, 2.օճառ եփելու ջուր
Թեզըկ – վառոդի փոքր, աման, կիսաշրջանաձև
Թեղի – մի տեսակ ծառ, կաղամախու նման, լայն տերևներով
Թեպսի - ափսե փայտից
Թեպրիլ - փետրահան անել, փետրազերծել
Թեջըր – վաճառական, ոչխարի առևտուր անող

Թեռ, թիռ – հացահատիկ լցնելու երկկողմանի պարկ
Թերի – սայլի երկու կողմերի թառերը
Թերխաշ – կիսաեփ, լրիվ չխաշված
Թերմաշ – 1. անտեր, անտիրական, 2. կիսամաշ
Թևխաղ – պարի մի տեսակ, որով գլխավորաբար թևերն են շարժում պարելիս
Թևնուց – ձեռքից մինչև արմունկը ծածկող շոր, հագուստ
Թզչափ - թիզ չափելով գուշակություն անող
Թզբի – համրիչ (տերողորմյա)
Թթվալաշ – մի բանջար՝ ափի մեծությամբ թփեր ունեցող, համը մարխոշ, ուտելիք
Թիարա - մարգերի վերածված հողակտոր, մարգ, մարգաստան
Թիթեռնիկ – ոչխարի հիվանդություն, երբ լյարդում որդեր են գոյանում
Թիթրին, թիթրեն – չորացրած թրիք կամ աղբ՝ վառելու համար
Թիզ- կամնած, բայց հարդը չհանած ցորենի դեզ, թեզ
Թիմբիլ – խնամել, մաքրել (անասունին)
Թլխիլ – ցկնել, շան ծնելը, լակոտ բերելը
Թլոլ – կակազ, թլվատ
Թխում – սահման հողի, սահմանագիծ (արտերի)
Թխումքար – սահմանը որոշող քար
Թմբի – ծառի մի տեսակ
Թղկի – տղկի-գղկի (ծառ)
Թոլիլ, թոլո– կենդանիների մորթի տակ գոյացած տիզ, որդ
Թոն - բարակ անձրև, շաղ
Թոխումը - վայրի մի պտուղ, կեռասի նման, բայց բազմակորիզ է և ողկույզներ ունի
Թոռըն - ազնվական, իշխան
Թոռիլ – քրջվել
Թորթիկ, թորթուկ – լեզվաձև բարակ մի թուփ, որ երբ կրիաներն օձ են բռնում, ուտում, գալիս են այդ թուփն ուտելու, որ չթունավորվեն
Թելո – տե՛ս թոլիլ
Թուխտիջ - ծարիր, աչքին քսելու դեղ
Թոն – խոնավություն, անձրև
Թուղթ – 1.հմայիլ, կախարդական գրություն, 2. ծանր. չափ՝ մոտ 400 գրամ
Թումբան – վարտիք, ներքնաշոր
Թուսի- ընտիր կտորից պատրաստված գոտի
Թունջ – չուգուն, երկաթ
Թուջար – տե՛ս թեջիր
Թուռ – թոռ, թոռնիկ

Թուր – 1 արորի շեղբ, 2. սուր, սառը զենք
Թուրծ – թրծել – կրակով կավե ամանները թրծել, չորացնել
Թորորալ - դանդաղ տեղալը (ձյունի կամ անձրևի)
Թորթ, թուրթ - եզան լեզվի պես մի թավշյա տերև, որ դնում են վերքի վրա՝ բուժելու համար
Թոփ - թնդանոթ, գունդ, ծրար (կտավի)
Թոփուզ - գուրզ, լախտ, մահակ
Թպղի - երևակայական չար ոգի, որ մոր արգանդը մտնում և խեղդում է երեխային՝ ծնվելուց առաջ
Թպղուդ - թպղի հիվանդություն ունեցող
Թռնոկի –թեթև տար, վեր-վեր թռչելով
Թռըշկիլ - փախցնել, մեկի ձեռքից խլել
Թվընգ- հրացան
Թրքալ, թրքկալ – շերեփաձև մի աման, որ կալվորի ձեռքին է, եզնեը թրքելիս թրիքը բռնելուց է ծառայում, որ ցորենը չկեղտոտվի:
Թրքնուց – թրիքանոց, թրիքը հավաքելու տեղ
Թվարիկ – հողագուրկ, ճորտ գյուղացի, որ ուրիշի հողն է մշակում կիսովի և ապրում
Թվեք – օջախ, ուր և հաց են թխում և կերակուր եփում
Թևլաք – թևերը կապկպելու շոր (երեխայի), օրորոցի շոր
Թփըլիգ, թփըլգիգ - արտևանունք, հոգնակի՝ թփըլգնիկ
Թփիկ - ճախարակի ետևի կողմի շրջանակածև փոքր կաշվե դիսկ, ճաղի պտույտի շփումը պակասեցնելու համար

ժ

ժաժ, ժաժք – ցնցում, երկրաշարժ
ժաժալ – ցնցվել, շարժվել
ժաժան – ցնցող, շարժվող, ինչպես հաչան (հաչող), վազան (վազող) և այլն
ժաժիգ - շոռ, թանհատ
ժաժխիլ, ժըժխիլ – թափ տալ, շարժել (ծառը)՝ պտուղները թափելու նպատակով
ժախ - զոխի նման մի բանջարեղեն, և ուտում են, և թթու դնում
ժախնուց – վայր, ուր շատ ժախ է լինում
ժամ, ժամդուն - եկեղեցի, աղոթատեղի
ժան – ոչխարների մահացու հիվանդություն, որի ժամանակ նրանց շրթունքները բշտիկներով լցվում են, հազում են, սատակում
ժանգառի – կապույտ և կանաչ գույների խառնուրդ
ժիժան – իրար խառնված թելի կծիկ
ժիխ – շյուղ, ժեխ

Ժինգիռ – շատ ոլորելուց կծկված թել, հանգույց
Ժժկվիլ - ամուր բռնել, փաթաթվել
Ժժմունք – մանրէներ, ճիճուներ, 2. շվոտ, չարք, որ գիշերները քնի մեջ նեղում է մարդկանց
Ժղլիլ - զրուցել, խոսակցել
Ժղլտուն – զրուցարան, օդա
Ժղուլ – խոսք, զրույց
Ժուժիգ - ոզնի
Ժուժգիլ – կծկվել ոզնու պես, հավաքվել իր վրա
Ժուժգուդ- կծկված, իրար վրա հավաքված
Ժում – 1. անգամ, 2. հաց ուտելու ժամանակը
Ժուռ – տհաս, խակ, չհասած, ազոխ (խաղող)
Ժրուգ - սեղմված, ամուր կապված
Ժրպնդիլ - ամրանալ, պատրաստվել ժիր ու պինդ լինել
Ժրպնդուգ - ամրացված, ժիր ու պինդ կանգնած

Ի

Իբրիխ – պղնձյա սափորիկ
Իդալ – տալ, վճարել
Իզմիր – խաղողի մի տեսակ, քիշմիշ
Իզ - 1. եզ, 2. հետք, ոտատեղ
Իզնուրդ - խաղողի մի տեսակ, սև, եզան պտուկ
Իլ, իլվիր – վեր բարձրանալ, սումերերեն՝ il (Գր. Ղափանցյան)
Իղ – յուղ
Իլալ – լաց լինել
Իկալ - գալ, ժամանել
Իճլիգ - ելակ, ժիլեթ
Իմալ – ինչպես, օր. «իմալ էնըմ, իմալ չէնըմ», ինչպես անեմ, ինչպես չանեմ
Իմաց - արթուն
Իմնալ – 1. զարթնել, 2. իմանալ հասկանալ
Ինը –ձինը – իսկությունը (բանի), մանրամասնությունը
Իշդռդռուգ - շուշանազգի մի բույս, սերմնարանը պղպեղի հատիկի ձևով և մեծությամբ
Իշիլ, աշիլ – նայել, դիտել
Իշխնալ – համարձակվել
Իշկափ - լայնատերև մի բույս, գորշ տերևներով
Իջար – վարձ, վարձագին
Իս, իես, եսի - ես (անձն. դեր.)
Իսնա - ինձնից, ինձանից

Իջուգ - իջեցրած, ցածրացրած
Իռք - եռալ, քոր գալ
Իրիցփոխան - երեցփոխան, գյուղի մեծերից, իշխանավոր
Իրիգոշա - եռանկյունի
Իրկ – ձայնարկություն՝ մոռացված բառի տեղ են ասում, մինչև բառի հիշելը
Իրղադ - բատրակ, բանվոր
Իրուգ - այրված, վառված (հաց կամ սիրտ)
Իքրամ – պատիվ, ընդունելություն

Լ

Լա- բայց, իսկ
Լաբուդ - փոքր ակիշ, որով արորի առատամն են մաքրում, երբ վար անելիս ցեխոտվել, ծանրացել է
Լաբստրագ - նապաստակ
Լազ - շտապ, արագ
Լազաթ – համ, հաճույք
Լաթ – շոր, հագուստ
Լալ – համր, խոսելու ընդունակություն չունեցող
Լալման – լալով, լալու ձևով, «ման» մասնիկը միշտ ձևի պարագա է ցույց տալիս
Լալվան – լացող, լալկան, միշտ լալու պատրաստ (երեխա)
Լալգվիլ – համրանալ, լեզուն բռնվել
Լախ - ճյուղ (ծառի), նորատունկ ծառ
Լախալ, լախլախալ – տեղից շարժվել
Լախլախան – շարժվող, երերացող
Լակ (լագ)- շան կերի ամանը
Լական – ութաձև մի շրջանագիծ տախտակ, 3-4 սմ լայն. որի մեջը հյուսված է կաշու կամ կանեփի ամուր թելերով, հագնում են տրեխի տակից և ազատ քայլում թարմ ձյան վրա՝ առանց խրվելու
Լահփըկ – քակարդ (աղվեսի)
Լաղոզիգ – նիհար, լղար
Լաճ - երեխա
Լամուգ - քրդի կամ թուրքի տղա (անարգանքի իմաստով)
Լանգարը – պղնձյա լայնեզր աման
Լաո – որդի, զավակ
Լաուըտիլ – վրան-գլուխը կեղտոտել
Լաուեզիգ - նիհար, նվազ, հյուծված
Լաստ – շեղբ (դանակի, սրի)
Լաչիգ - գլխաշոր, գլուխը փաթաթելու լաթ (կանացի)

Լաչիգըմ (քաուխտ)- աղջիկ ուզել, հարս ուզել
Լաջ – տղա, զավակ
Լավիլ - աղաչել, խնդրել
Լավա - աղաչանք, արմատից
Լավլավկ – մի մոլախոտ, որ խեղդում է ցորենին
Լար - ճախարակը պտտեցնող լար, որ ոչխարի աղիքից են պատրաստում (մաքրում, ոլորում), որն ամուր և դիմացկուն է լինում
Լարան – հաստ թել՝ թեռի բարնը կապելու համար
Լարզ - դող, վախ
Լարզիլ - դողալ, վախենալ
Լարխվիլ, լորխվիլ – մխրճվել, խրվել ամբողջ մարմնով
Լարմանալ – թմրել, ընդդարմանալ (մարմնի մի մասը)
Լափ, լափուգ - 1. բուռ, ափ, 2. մանկական խաղ մի տափակ և մի կլոր քարով, առաջինով խփում են, երկրորդ՝ կլոր քարին և հաշվում, թե քանի ոտք հեռու վանվեց: Քայլերի որոշ թվով նշում են հաղթանակը:
Լափիլ - բռան մեջ առնել
Լբաս – տեսք, տարազ, հագուստ
Լբլըբալ - արագ և անկապ խոսել
Լբըտիլ – շարժվել
Լբուդ - բուրդ և բամբակ գզող, գզրար
Լգամ – սանձ
Լդիլ – հալվել (ձյունը և սառույցը)
Լգուգ - հալված, հեղուկ դարձած
Լե - էլ, նաև, սակայն
Լեղլիգ - բարակ, ուղիղ և ճկուն փայտե վարոց
Լեմըշտ – հեղեղ, վարար ջուր
Լեսան – հեսան, սրող քար
Լեսնուգ - սրած
Լեվ – շրթունք
Լեփ, լեփուգ - տես լափ-լափուգ
Լժալ – սահիլ, սոթ տալ ձյան վրա
Լժիլ – 1. հարթեցնել, փայլեցնել (իրը), 2. շփանալ, երես առնել
Լժուկ - 1. հարթեցրած, 2. երես առած
Լիժ – ողորկ, հարթ
Լինգ - երկաթյա ձող, լծակ, լոմ
Լիստակ - հստակ, մաքուր
Լըխքիլ – քայքայքվել (ջրում), փշրվել
Լըխփիլ - փշրվել, մանրվել
Լըխփուգ - փշրած, մանրած
Լըխքուգ - քրքրված (կտոր), փտած

Լըծգան – լծու (եզ), հասած արջառ, լծվող անասուն
Լըծուգ - լծված, աշխատանքի մեջ գտնվող
Լըծվար – մածկալ
Լըկիլ, լըքիլլ – լակել, շան կերակուր ուտելու ձևը
Լըկլըկալ – ցրտից կամ վախից դողալ
Լըհեմ - զոդ
Լըհեմիլ - զոդել, երկու կտոր մետաղներե միացնել
Լըհեֆ – վերմակ և ներքնակ
Լըղամ - աղեղի տափակ կոճը
Լըղզիլ – ջրի մեջ քայքայվել
Լըղզուդ - քայքայված, փտած
Լըղփիլ – ջարդվել, քայքայվել
Լըղփուգ - ջարդված, քայքայված
Լըմիլ - ճմռել, տրորել նոր բրդե կտորը, մահուդի տեսք տալու համար
Լըմուգ - ճմռած, տրորած
Լըմող – լումն անող, ճմռող, տրորող
Լընգալ – մի ոտքի վրա քայլել
Լլգիլ, լլգվիլ – ուժեղ բռնել, փաթաթել
Լիր – լար, հաստ լար, որ լականի համար են գործածում
Լնգոբըռ – մի խաղ, որ մի ոտի վրա են կաղում, կաղնիկաղ
Լո – մարդ (սուներ.՝ lu այր (Գր. Դափանցյան))
Լոդա - դեզ, կույտ
Լոզ, լուզ - էտոց, քշուշ
Լոլափ - տկի բերանը պրկող գլանաձև ձայտ, որից բռնում են և տիկը հարում
Լոլիգ - փոքրիկ, կլոր թխված հաց
Լոլոզել - համոզել, խաբել
Լուծք – 1. լծվող զույգ եզ, 2. վարելու պրոցեսը
Լողքիլ – կեղևահան անել
Լուղ – կլոր, գլանաձև քար՝ կտուրը տրորելու համար
Լողփի – կաղնի (ծառ)
Լողքար – տանիքը կամ կալը հարթող գլանաձև քար
Լում – տրորել, ճմռել, որից «լմել» բայը
Լոշ – լավաշ
Լոշտակ – 1. ծամոն, 2. մի բույս, որի արմատի պալարը մարդու գլխի նման է
Լուբիլ – ցածր ձայնով երգել, տնտնալ տխուր եղանակ
Լուբին – տնտնոց, տխուր երգելու ձայն
Լուլա - խողովակ
Լուլախ – վարար (անձրև)
Լում – տրորել, ճմռել

Լուղ - գլանաձև փայտ, որի վրայից ջրածն է անցնում գալիս ջուլհակի առաջ գործվելու համար:
Լոպկիլ – պլոկել
Լոպկուկ - պլոկած, փետրաթափ եղած (հավ)
Լորիգ - բոշա, թափառաշրջիկ
Լորխ – ծյուն, որ անձրևից կակղել է. բայը՝ լորխել
Լուսկանչ - աքլորի կանչը լուսադեմին
Լուսմուխ - առամամուխ, լուսանալուն մոտիկ
Լուսանդերվանի - փայլուն կեղևը և ընտիր փայտ ունեցող մի տեսակ ծառ
Լուսաստղ - Արուսյակ (աստղը), որ լուսադեմին է ելնում
Լուսիգ - փոքրիկ լույս, լուսիգ պահել՝ Ս. Սարգսի տոնին է լինում
Լուսնագ - լուսին
Լուսվանքիգ - լուսանալու մոտիկ ժամանակ
Լուստուն – սրբավայր, լուսատուն, ուխտատեղի
Լուսրար – լույսերը վառող (եկեղեցական)
Լպստրալ – սահելով փախչել (ձկան)
Լպստրուգ - սահող, փախչող
Լպուզ - անբեղ, անմորուս, դեռահաս (մարդ)
Լսան – սուր ականջ ունեցող, լավ լսող
Լսուքք – լսած բան, լուր
Լսուգ - լսված, իմացված
Լվխուդ - լվի խոտ, դեղին ծաղիկներով, որի հոտից լվերը սատկում են, օգտագործվում են լվերի դեմ
Լվտիղ - լվերի դեմ գործածվող դեղ
Լարանա - լիտր կշռող, ոչ թեթև
Լցման, լցուգ - լիքը լցված, բերնե-բերան լիքը
Լփլփալ – կակազ խոսել, կակազել
Լքլքալ – հևիհև շունչ քաշել
Լֆիգ, լֆուգ - մարմինը շփելու կամ ամանները լվանալու համար գործածվող շորի կտոր

Խ

Խադաբ - անձրևի տեղալը, անձրևելու պրոցեսը
Խադակ - բամբակյա գործվածքի մի տեսակ
Խազ, խազըկի – մետաքսյա գոտի
Խազալ – վիթ, մի վայրի սիրուն կենդանի
Խազալիգ - ծառերի տերևների վրա կազմվող մի տեսակ գղտոր, բայց գղթորի հատկություն չունի
Խազ - գիծ

Խազքաշ - գիծ քաշող (փայտի վրա) հյուսնի գործիք
Խազուգ - գիծ քաշած
Խամիլ – լավ չթթված (խմոր)
Խաժիլ – կիսաբաղարջ, լավ չթթված խմորից եփած հաց
Խալայի – սով
Խալան - գլխագին (աղջկա), հարսնացուին տանելու համար նրա ծնողներին տրված գումարը
Խալանալ - դատարկվել, քչանալ
Խալահուդ - վառելիք (ամեն տեսակի)
Խալալիգ - դաստակ (ձեռքի)
Խալի - անմարդաբնակ, դատարկ
Խալմամ – տատիկ՝ մոր կողմից
Խալո (քրդ.)– մորեղբայր
Խալուն - զայլուն, չիբուխ, ծխամորճ
Խալըկ – կեղև, կճեպ
Խախաջոկ – կակաչ
Խախաբալ – կաքավի երգելը
Խաղ - երգ, տաղ, խաղ,
Խամչուրի – ոչխարի գլխահարկ
Խամլիլ - զարդարվել
Խամուղ - ցանքսի առաջին ջուրը, երբ արտի մեջ կորիներ (ջրատար առու) են քաշում
Խամոզիլ - առաջին ջուրը տալ (ցանքսին)
Խամոզուգ - առաջին ջուրը տված (արտ)
Խայթան – ժապավեն
Խայիմնալ - ամրանալ
Խայլա- ղավուրմա
Խանդ - շաքարի կոնաձև կտոր
Խանդագ - ծոր, փոս
Խանին, խանեն – կանկարի ցողունը, ուտելի, քաղցրահամ
Խանթար – կշեռք՝ գունդ և լծակավոր, 2. կարավան
Խանիմ – պատիժ, փորձանք
Խանգրիլ - գունատվել (հագուստի)
Խանձ - այրված, այրվածք
Խանձուղ – կիսայրված փայտ
Խանձրհուղ, խանձրհամ - այրված կերակրի համ
Խանջար – խանչալ, սառը շեղբով զենք
Խաշիլ, խաժիլ – չթթված խմորից ստացված հաց
Խաշիդ - կորեկի մի տեսակը՝ ոսպածև, դեղին գույնի
Խաուշիլ – կալի քուլաշը խառնել, շուռ տալ՝ մանրելու համար
Խաուդան – կաշվե փոքր պայուսակ, պարկեղեն

Խաչերկաք – օջախի կամ թոնրի բերանի վրա դնելիք, երկաք՝ ամաններին հենարան լինելու համար
Խաչգբիլ – թևերը խաչածև ծալել, խաչկպել
Խաչուգ - 1. խաչված, 2. ձեռքերը խաչածև դրած, նորապսակների ձեռքերն իրար միացնելը
Խաչփուգ - խաչփոկ, նոր փեսայի կրծքին կապած կարմիր-կանաչ վզկապը
Խապա - թուխս նստած հավ
Խապո – հիմար, ծաղրելի
Խաջընխուդ - մարգամետնի խոտ
Խաջին – մարգագետին
Խառ – վազք, ձիարշավ
Խառան – շան վզի կապը
Խառնա, խառնախուսիլ – չոռ ու ցավ (անեծք)
Խառնուգ - խառնված
Խավրծիլ – ընտիր բույս, տափակ և մի մետր երկարությամբ, կեղևով ուտում են, ունի մարխոշ խնձորի համ: Տերևները կապեր են՝ հովանոցի մեծությամբ:
Խավ - աբեթ, մի սունկ, որ ընկուզենու ցողունի վրա է աճում, շուտ բռնկվող լինելու համար կրակհանի (չախմախ) կայծերից վառվում է:
Խավդ - բռնակ, կոթ (սրի)
Խավիձ – ալյուրից պատրաստված ճաշ, խյուս
Խատիլ – կատարել, լրացնել
Խարաջ – հարկ, տուրք
Խարիս – խարիսխ, այունի տակի քարը
Խարգիլ - բովել, խարկել, աղանձել
Խարդիլ – խարտել, խարտոցել, խարտոցով հղկել
Խարձ – պուրակ, բացատ, փոքր անտառ
Խաբուկ- 1. մազից և կանեփից պատրաստված ոտնաման
Խաբուգ - բովված, խարկած
Խարաքար – քար, որով մանգաղ և գերանդի են սրում
Խարվդիլ – մեջքը կրակին տալ, խարել (ամառ, թե ձմեռ)
Խարփուգ - կեռ շեղբով սուր գործիք, որով փայտյա ամանների ներսի մասն են տաշում
Խարփգիլ – խարփուգով տաշել
Խբուր - զարդազգեստ
Խդմրգուգ - խիստ ամպամած (երկինք), անձրևելուց առաջ եղած ամպամած վիճակ
Խեբ, խեբուգ - անխելք, դատողությունից զուրկ

Խեդապրիգ - փոքր նախշուն գավազանիկ, որով պատանիները ծաղկազարդին տնետուն ման են գալիս Կարմիր Ջատկի համար ձու հավաքում
Խելթփիլ, խելըռիլ – ուշագնաց լինել, գլխապտույտ ունենալ
Խելըմ - բավական ժամանակ, բավական (բան)
Խելըռուգ - ուշագնաց եղած
Խեթուգ - օձից խայթված
Խեձ - արտի այն հողակտորը, որի վրա ջրելու ժամանակ ջուր չի լցվել, չի թրջվել
Խեձհան - փոքր թի, երկար պոչով՝ 2-3 մ արտում չջրված տեղերի վրա ջուրն ուղղելու համար առանց արտի մեջ մտնելու
Խեձիլ – պտղի հասունանալ սկսելը
Խեձուգ - հասունության նշան ունեցող (պտուղ)
Խեղաջ – ծուռ դրված, ծուռ կարված կտոր
Խեչ, խիչ – մոտ, մոտիկ
Խեչիր - եռոտանի փայտեր, որի վերևի մասից պարանով կախում են տիկը կամ խնոցին և հարում
Խեջուր, խեջուրք – ձվի, ընկույզի կեղև
Խզանի, խզամի - Անասունների բեղմնավորման ցանկություն, որձն ընդունելու ժամանակը
Խզդիլ – պատռել, ճեղքել
Խզդուգ - պատռված, ճեղքված
Խզեմ – քթի օղ
Խզմիլ – 1. քթին օղ անցկացնել, 2. ձիու կամ մատակի հեշտոցը օղով փակել, որ հովատակը կամ ցուլը նրան չմոտենան հղիության շրջանում
Խզմուգ - օղ դրած, օղով փակված
Խզուզ - քիստ (ցորենի), մոլախոտի սերմ
Խըդմուգ - ամպով, ծխով ծածկված
Խըդմիլ - ամպել, ծխով լցվել
Խըլլբ – սև գլգիլ, ոսպածև հատիկ ունեցող
Խըլլըզիլ, խըլլըսիլ – թաքնվել, պահվտել (վտանգից)
Խըլլլ - փայտյա կոճղ
Խըթում –յուղեղեն պահքը լուծելը
Խըթիլ – պահքից հետո առաջին յուղեղեն կերակուր ուտելը
Խըլվլալ – շարժվել
Խըշր - զարդ արծաթյա և ոսկյա
Խըռխիլ, Խըռըխիլ- խրվելը մարմնի մեջ որևէ իրի, 2. ծիծաղելուց թուլանալ
Խըչ – մոտը, քովը
Խժալ - ճչալ, լաց լինել (երեխայի)

Խժաճ - ճչացող, լացող
Խժավիժ - աղմուկ, ձայն
Խժբժալ - աչքերը բռժոտել, լավ չտեսնել
Խժիկ – 1. ամառվա ճպուռ, 2. կրծքի խժժոց
Խժխըժկ –հիվանդություն (ոչխարների)
Խժու – պինդ, միջուկը դժվար հանվող ընկույզ
Խժվժալ - աչքերը շաղվել
Խիդր – ծանրության չափ, մոտ 5 կգ
Խիթ ու տլունգ - խաղ՝ չալիկ-դաստա, որ խաղացվում է մի գավազանիկով և թզաչափ մի փայտիկով երկու հոգով
Խիթուց – խայթոց (օձի), մեղք, հանցանք (աքքադ.)
Խիժ - դալ, խեժ, առաջին կաթ (անասունի)
Խիժիճ - ճչոց, ուժեղ, ականջ ծակող ձայն
Խիլ – շյուղ
Խիղը - կթնելը, կարի մի տեսակ
Խիչիկ, խայթան - եռանկյունի, փոքր ասեղնագործ զարդ, որ կանայք կարում են իրենց գլխարկի (քոֆի) ճակատի մասում
Խիրաթ – եռանդ
Խլավ - գեր, մսոտ, չաղ
Խլավքնել - գիրացնել, չաղացնել
Խլիթ – տես խըլթ
Խլխալ - զարդ ու զարդարանք
Խլխլուգ, խլխլիգ - կիսաքանդ, փլվող, քանդվող
Խլղաթ – հարսանեկան նվեր
Խլնդոր – նորածին ոչխարի առաջին կաթը, դալ, խեժ
Խլնջի - երկաթյա դանակ (մեծ)
Խլուջիգ, խլուլիգ - փոքր սափոր, առանց կանթի
Խլվլան, խլվլիգ - անդադար շարժվող (որդ, ձուկ)
Խխմիլ – կակղիլ, փափկանալ
Խխմուջ - բրդոշ, մածնի մեջ բրդած հաց
Խխմուգ - կակղացած, փափկացրած
Խծիբ - 1. Կարի մի ձև՝ կտորի մի մասը ներս են ծալում, ապա կարում, 2. ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ
Խծբիլ – 1. կարել, 2. ճյուղերով գործել
Խծուծ – կանեփի թելի սանտրուկ, մնացորդ
Խղբան – խուղի կամ յայլաղի ղեկավար կինը, որ կաթնամշակությամբ է զբաղվում
Խճեբ - կճեպ, ձվի կամ ընկույզի կեղևը
Խճմիլ – կսմթել, խճմել
Խճմուգ - կսմթած
Խճմո – միշտ կսմթող (մարդ)

Խմաճ – խմող, գինեմոլ, հարբեցող
Խմբըլ - ապուշ, տկարամիտ
Խնդըլիգ - փոքր նախշուն ամաո հողից կամ փայտից, որի մեջ քանկարժեք փոքր իրեր են պահում, խնտլիկ
Խմլուգ, խմլվորուգ - հագնված, զարդարված
Խմորբուդուգ - խմորի պուտուկ, ամաո, որի մեջ կորեկի ալյուրն են խյուսում, որի համար պտուտակաձև է, ոչ թե տաշտաձև
Խմորթաթիգ - փոքր շերեփ, երկար պոչով, որով կորեկի խյուսը (խմորը) վերցնում և լցնում են տաք սալաքարի վրա ու թխում
Խմորկուշ – տաշտ (խմորի) փայտյա
Խնկալուջ - ալուճի, ընտիր մի տեսակը, խնկալոճ
Խնկծաղիգ - անթառամ ծաղկի նման մի բույս, խնկի ծաղիկ
Խնձուր – խնձոր, արամեական բառ (Գր. Ղափանցյան)
Խնջլոզ - մի բանջարեղեն
Խշմիլ – թմրել, ընդարմանալ
Խշուր – մանրուք, կտորտանք (օճառի), 2. արծաթյա զարդ
Խշրիլ – մանրանալ, փշրվել
Խշտիգ - սրածայր
Խշրուգ - փշրված, մանրացված
Խշփիլ – չորանալ, թառամել, մեռնել
Խշփուգ - չորացած, թառամած
Խոզա - շերամի բոժոժ
Խոզի- երանի թե, երանի
Խոզուգ - խուզված
Խոլըկ – մահակ, գավազան, ծայրը կեռ ձեռնափայտ
Խոլ - անպոչ, պոչատ
Խոլոզ - բարձր, ցից
Խոլինջ – մեջքի բռնվելը, մեջքի ցավ (խոլնջողիլ՝ մեջքը ցավել)
Խոլոզիլ - բարձրանալ, ցցվել
Խուլլ - փոս, անակ
Խուժիգ - փոքր աղջիկ, խուժիկ
Խոլռդալ - բարկացած աչքերով նայել
Խոխ -գլուխ, նաև գանգ
Խուղվոր – հյուղաբնակ, սարվոր
Խուղ – հյուղ, խուց, որ պատրաստում են ամառային արոտավայրերում որպես բնակարան, բայց միայն ճյուղերով
Խոզմիլ – հերկված, բայց չցանված արտը ջրել
Խոնդի – հարսը բերելու գնացող մարդ, հարսնառ
Խոնդուռա - կոշիկ (հնամաշ)
Խուխ – դեղձ
Խուխը, խոխը - դեղձենի (ծառ)

Խուխլուգ - կոկորդի ցավ
Խուկլա - ալրե ճաշ, շփոթ
Խումրա - դեմքի և ատամի ցավ
Խումաշ – 1. թանկարժեք կտոր, 2. կնոջ անուն
Խունջան, Խունջնթիլ – շալվարը կամ վարտիքը մեջքին կապելու, ամրացնելու թել, խոնջան
Խուշկը – միասմբակ անասունների թրիքը
Խոռըկ - զիստ, ազդր (ոչխարի)
Խոռտ - երիտասարդ, ջահել-ջիվան
Խուռ - փոս, երկու բլուրների միացման թամբաձև մասը, խոռ
Խոռփատ - անատամ, ատամները թափված
Խուռա - գեր, չաղ
Խոսքկապ – հարսնացու աղջկա ծնողների համաձայնությունն առնելը, մի նշանով խոսքը կապել
Խուս – խյուս, շփոթ
Խոտ – 1. կոճղ, 2. կարճ
Խոտըկ – մի կենդանի, որ իբր միզում է իր պոչին և մեզը շաղ տալիս ոչխարների վրա, որոնք իբր հիվանդանում են խոտըկ հիվանդությամբ
Խուտ – ձմռան պաշար
Խոտլոզ – պոչը կոտրած գդալ, անպոչ
Խուտիգ - սնդուկ, ճամպրուկ
Խոտկապ – խոտը կապելու և ուլ ու գառներին տալու մի գործիք, որ կախում են քիչ բարձր, որին հասնեն ուտելու (ուլերը)
Խուտնի – 1. թանկարժեք կտոր, 2. կանացի թանկարժեք հագուստ
Խորիս, խորիսխ – 1. յուղով շաղախած ալյուր, 2. հավկիթի դեղնուցը
Խորխ, Խուրխ - բարակ մաշկ, օձի շապիկ
Խորխահան – մաշկազերծ, խորխը հանած
Խուրուֆիլ – սարսափահար լինել, սրտաճաք լինել
Խորվուն – 1. խորոված ամբողջական մարմնի (ոչխարի), որին մշեցիներն ասում են `բրիան, 2. Նշանդրեքի կամ հարսանիքի ժամանակ հարսի տուն տարած մսացու ոչխարը
Խորտ - երիտասարդ, խորտիր - երիտասարդներ
Խուչ – 1. գլխով տրված հարված, 2. քարակույտ
Խուչակ – հենարան, խշմար
Խոփտուն - արորի ռատամի ծայրը, որի վրա խոփն են անցկացնում
Խուփ - 1. խոփ (արորի), 2. կափարիչ (ամանի)
Խպնիլ - ամաչել
Խպնուգ - ամաչկոտ
Խռամ, խռառու - եղյամ, ղռավ, ղռավու

Խռեժ, խռեֆ – ծխամորճի կեղտը, որը ծխից է առաջանում, որպես հականեխիչ էլ օգտագործվում է վերքերի բուժման համար
Խռըֆիլ – 1. զառամել, խոր ծերության հասնել, 2. ծիծաղելուց թուլանալ
Խռըֆուգ - զառամած, խոր ծերության հասած
Խռթիլ – կիսել, ամբողջից մի կտորը պոկել
Խռուք, խռքիգ - մի կտոր, մի մասը
Խռճիգ – կռճիկ, կռճկային մաս
Խռմուգ - թմրած, հոգնած, խռմիլ (թմրել) բայից
Խռնդաղ – կնճիթազգի մի բույսի չոր ցողունը, չորացած ցողուն (ընդհանրապես) խռնդար
Խռնդուգ - շնչափող
Խսիլ, խսիր – 1.կռտել, ամորձատել, որից խսուգ, ներքինացած, 2. փսիաք (եղեգնյա)
Խրխիր, խրխուր - փափուկ, կակուղ
Խրխրիլ - փափկացնել (բուրդը, հողը)
Խրնճուգ - վրնջոց (ձիու), խրխնջալ
Խրուգ - խրած, խորը թաղված
Խրտան, խրտնուգ - խրտնող, խրտնած
Խրտնոտիլ – հաճախակի խրտնել
Խրփուգ - չորացած, արևդ չորանա (անեծք)
Խցկուց – խցկոց, խցան՝ հին շորից, որով փակում են այն ամանների անցքերը, ուր կաթ կամ քաո կտրում են, շիճուկն այդ ծակերից հոսեցնում, գվա, պանիր կամ ժաժիկ ստանալիս:
Խցկուգ - խցանված, փակված
Խփնիլ – կափարիչով ծածկել (ամանը), խփանել
Խփնուգ, խփուգ - գոց, ծածկված, փակված

Ծ

Ծակադիլ - վիժել, ձագը գցել, ձագատել
Ծակխիղդ - իր ձագը խեղդող (կատու), ձագխեղդ
Ծարմաղ - ալյուրի մաղ, մանր ծակերով,մաղ
Ծգնգուլ – թռչուն, որ ձուկ է որսում, կուլ տալիս, ձկնկուլ
Ծեթրին – վայրի, անուշահամ մի բանջարեղեն, ծիթրոն
Ծեվիլ – պատռել, ճեղքել, ձևել
Ծըմա - քիչ արևոտ վայր, ծմակ
Ծըմեթ – ձյունի փայլից առաջացող աչքացավ, ձմեթ
Ծեթռիլ – որդնոտել (վերքի), ծետուկ դնել
Ծիր – կամար
Ծղգիզ - փոքրիկ սակառ, սալա

Ծմուգ - սպիտակամորթ մի փոքր կրծող (մուկ), ծմուկ
Ծնծիր – ծյունի կամար, ձնծիր
Ծունծնիգ - սպիտակամորթ փոքր աքիս
Ծուծու – ընկույզի միջուկն ամբողջությամբ վերցրած
Ծորթփիլ, ծորիլ - արագ խոտը հնձել և գետնի վրա տարածել՝ չորանալու համար
Ծրդընի, ձիրդնի, ծիրդ - դյուրավառ մի փայտ (ծառ), գիհի

Կ

Կադըկ - փայտյա փոքր բաժակ, որ բռնակ էլ ունի, շերեփ-բաժակիկ՝ ջուր խմելու համար
Կազ - 1.սև փշոտ մի բույս, ուժեղ անասնակեր, 2. երկարության չափ՝ 70 սմ, գազ
Կազանագ - գազանի պես, կատաղածի նման
Կազբա- մանանա, շաքարավազ, որ ամառ ժամանակ տեղալով՝ իջնում է գազերի և ծառերի, թփերի ու հողի վրա: Գազպեն, որը հավաքում են և սպառման, և վաճառքի համար
Կազխիժ - գազ բույսից ստացված խեժ, գազխեժ
Կալ - բուղա, ցուլ
Կալաբուջիգ - շրջանաձև պտտվել իր շուրջը (խաղ)
Կալահոշկ - անառիկ ժայռ
Կալան – պատյան
Կալար -1. մի պտույտ իր առանցքի շուրջը, 2. աղիքի ցավ
Կալմիզ - վրան միզող
Կալնիլ - փակել, գոցել
Կալըրան – պտտեցնող, փաթաթող (առանցքին), գալրան
Կակոշտլ – խարխափել, մթան մեջ շոշափել, մի բան փնտրել
Կահ – ժամանակ (կարճ), գահ, գեահ
Կակո, կակե - հորեղբայր
Կաղջին – կավ, կպչուն հող
Կամ - փոքր անտառ, մացառ, թփուտ
Կամպոստիլ - ապտակել, բռնցքահարել
Կան – վերք, խոց, գան
Կանուդ - վերքոտ, վերք ունեցող
Կանիլ - զզվել, գանել
Կանիա-բահջի – պայթող աղբյուր, ուր ըստ ավանդության, եղել է Քուռկիկ-Ջալալին
Կաշիլ - փնտրել, ման գալ
Կաուներ – 1.արու կաքավ, 2. դյուրաբեկ, մատղաշ (տունկ)
Կաուտալ – հաչել շան նման

Կապ, կապուգ - 1. շատ լայն տերև, 2. մակաբույծ մի բույս, որ կարմիր գույն է տալիս
Կառ – խուլ, չլսող
Կառնալ – խլանալ, լսողությունից զրկվել
Կառոտ – կտոր, կարճ
Կառնադիլ - գառը վիժելը (ոչխարի), գառնատել
Կառըկ – կարճ աբա, մազե կամ բրդե կարճ վերարկու
Կառնանուց, կառնուց – փարախ, ուր միայն գառներն ու ուլերն են պահվում, գառնոց
Կավան - աղեղ, տիրկավան – նետաղեղ
Կավարս – կորեկի մի տեսակը, որի հասկերը ձեռքի մատների նման
Կավ – հողե աման, ուր գինի կամ յուղ են պահում
Կավի – մեծ և թեք ժայռ
Կավլոկ - փարթամ մի բույս՝ անասնակեր
Կավըռ - երկու տարեկան ոչխար, կավռուք
Կավնար – շուտ կտրվող, թարմ ճյուղ կամ բույս
Կատ - առվույտ
Կարափ - թեփ (գլխի)
Կարկոն – պատանք, մահվան հագուստ
Կարկոնիլ – պատանքել
Կարնհուկ, կարնհոկ - գարնանը արված պարարտանյութ, գիշերը ոչխարներին պահելը արտերի վրա, որ պարարտացնեն
Կարբան – սաթ, քյահրիբար, քարուպա
Կարնդուռ - գարնանամուտ, գարնդուռ
Կդալփուխ - երբ երկու մարդ մի գդալով փոխնեփոխ ճաշում են, գդալ-փոխնի
Կդակ - գլխարկ, արաղչի, գդակ
Կելխիղդ - գայլ խեղդող (շուն), գելխեղդ
Կելգաբ - գայլը կապելու թուղթ՝ հմայիլ, գելկապ (աղոթք)
Կզիր - գյուղի և ռեսի ծառան, գզիր
Կզրար - գզող, բուրդ և բամբակ գզող, գզրար
Կել - գայլ, հոգ. կիլան
Կելըռնակ – տես ոլըռնակ
Կելվժենի – մի ծառ
Կեղտրի, կիղտրի - գյուղի վայրը, ավերակի տեղը
Կզըման – կռացած, դեպի վար թեքված
Կըց - ավելի քան, քան, պես
Կըլ - աչքի ծարիր, սյուրմա,
Կթուն – ընկույզի միջուկը
Կիդ - գետ

Կիզ - գզելու պրոցեսը
Կիլաճ - գայլեր, ան՝ հոգնակիի մասնիկ է
Կիղ - գյուղ, փոքր բնակավայր
Կինարբ - հոտավետ մի բույս, գինարբ, արբեցնող
Կինծ - համեմ, գինծ
Կիշերհաուերիգ - գիշերային թռչուն, գիշերը մաճ եկող
Կլըմբոզ - գլուխկոնծի (անել), գլորվել
Կլուլիգ - մսի քյուֆթա (ջրալի եփված), կլուլիկ
Կղթուր - գղթոր, որով կաշին են դաբաղում, մշակում
Կղիջ – քարի մանրուք, փոքրացրած քարեր
Կնալ – 1. գիտենալ, ծանոթ լինել, 2. գտնել
Կմուդ - լայն թուփ, մի բանջարեղեն, որ փռվում է գետնին, հավաքում, եփում և ուտում են, գմուկ
Կնծիդ - կտավատի սերմնարան, կլոր գնդիկ
Կնծնի - ամուր փայտ ունեցող մի ծառ
Կշկուռ – չորացած կաշի կամ մորթի
Կշկռիլ – չորանալ, կծկվել
Կշկռնի – ձյունի սառցանալը, եղուրջ կազմելը
Կշկռուդ - չորացած, կծկված
Կոզթռնոկ – խաղ, երբ մեկը ծռում է մեջքը, մյուսները վրայից թռչում են՝ հաջորդաբար կզելով
Կոզփափաջիկ, կոզփափուջիկ – միզաման, գոզի աման
Կոզադիլ – մեզով թրջվել, միզոտվել (և կրավ. և ներգ. իմաստ ունի) գոզոտվել
Կոժո - գոմեշի ձագ
Կոնչո – մեծ գլուխ, գոնչո
Կուդիկ, կուդըկ – լակոտ արջի կամ շան, կուտիկ
Կուզալ – ոռնալը (շան, գայլի)
Կուզ - 1. սապատ, 2. մեզ
Կուլլ – չոռ, ցավ (հայհոյանք)
Կուլին – պահեստ, մառան
Կուլավ – թաղիք, քեչա
Կուկ - գոգ, ծոց, 2. ամորձիք
Կունդոկի - աբա, մազոտ կարճաթև վերարկու
Կոմփ - ձեռքի հարված
Կունգզդալ – կաղկանձել (շան), կոնկստալ
Կուշ – տաշտ (փայտյա), գուշ
Կողդուգ - գաղտնի, ծածուկ
Կոնդ - հաշմանդամ
Կոնդանալ – հաշմանդամ դառնալ
Կոնդառա- կոշիկ

Կոնծոծ – կանկարի փշոտ և կլոր մասը՝ սերմնարանը
Կուչըկ – 1. կավե աղյուս, որոնց չորս հատի վրա դնում են սալը, տակը կրակ են վառում, տաքացնում, վրան հաց թխում, 2. նետելու փոքր քար
Կուպ - փոս տեղ
Կուջիգ - փոքրիկ, սիրուն գլուխ երեխայի (փաղաքշական)
Կուռաբաշկ – շնագգի՝ փոքր և գեր մի կենդանի
Կուռան, կուռ –ջրթափ խողովակ, 2. կտորեղեն լմելու տաշտ, գուռ
Կուռտըկ – կարճ, հագուստ
Կոտի - ստոր, վատ, կեղտոտ, գոթի, գոդի
Կուրդ - գորտ
Կուրբա - առանց թաթի գուլպա, որ ձմեռ ժամանակ հագնում են՝ սրունքները տաք պահելու համար, գուլպա
Կործալի - ածուխ, գործելի
Կործվուր – ջուլհակ
Կորդան – ժամտուն, աղմկոտ զրուցարան, գորտերի ճահիճ, ուր գորտերը «ժամ են անում»
Կորդնուկ - գորտնուկ
Կռըսիլ - գետնով քաշ տալով տանել, գռսել
Կպիլ - փոսանալ
Կռթան – թուխս նստած հավ
Կռթիլ – 1. իրար հանդիպել, 2. հորդել, ձյունը թափել
Կռոջ – խանձարուր, երեխայի օրորոցի շոր
Կտոն – ընկույզի միջուկ, բուր էլ են ասում, կթոն, պուր
Կրգանոց - 1. նշանած, 2. գրկելու չափ, տեղը, գրկանոց
Կրդնագ - Կլոր գլանածև փայտ, որով խմորն են բաց անում, գրտնակ
Կրծլիգ - կրծքին կապելիք շոր (երեխայի), որ կերակուրը չթափվի մյուս շորերի վրա, կրծիկ
Կրուր – հողե աման, փոքրիկ կարաս

Հ

Հարսար – սանձ
Հաբ – ոչխարի հիվանդություն, որից նրանց շուրթերը ծածկվում են պզուկներով, շատ անգամ սատկում են այդ հիվանդությունից
Հաբամլա - հետո, ավելի ուշ
Հաբի թաս – կախարդական թաս, որի մեջ լցված ջուրը շաղ տալով հաբով հիվանդ ոչխարի վրա՝ «բուժում» են
Հագդա սորիգ - սորեկ – հատ՝ առաջին անգամ ատամ հանած երեխայի գլխին ցորեն, չամիչ և այլն թափելու սովորություն, ատամհատիկ

Հազազ - անդունդ, խորխորատ
Հազիրան – հունիս (ամիսը)
Հազրըքուղ - այն ոչխարը կամ այծը, որին հազար ոչխար ունեցող մարդը քողնում է սարերը, եթե մի տարի հետո այդ անասունը վերադառնա և հոտին հասնի՝ բախտավորության և հարստության նշան է և հակառակը:
Հալաբի - արշին, Հալեպի չափ
Հալալհուզ - այն արջառը, որ հինգ տարին լրացել է և սկսում են լծել
Հալավ, հալաֆ – հագուստ, հագնելիք
Հալավցու – կտորեղեն՝ հագուստ կարելու համար
Հալբախուդ - հոտավետ մի բույս՝ Հալեպի խոտ
Հալըկ – խորթ զավակ, մոր հետ եկած զավակ
Հալիմա - հարիսայի երեսի նոսր մասը, հալվածք, հալիմա
Հալկռնիլ – շնչակտուր լինել, արագ-արագ շնչել
Հալ-հալ – ուրախ ձայնարկություն, երբ հրածգողի գնդակն անվրեպ՝ թիրախին է խփվում
Հալուգ - հալած, հեղուկացրած
Հալմուն – իբր թե, որպես թե, կարծես թե
Հալուսու - առավոտ
Հալվուր – ծերունի, ալևոր
Հակլոսնալ - աքաղաղի պես հպարտանալ, գոռոզանալ
Հաղ - անգամ
Համփա - հողատեր, կալվածատեր, կուլակ, կա նաև կիսահամփա (կես համփա) և պջեղ՝ քառորդ համփա
Հայանագ, հայանակ – 1. հայերեն, 2. հայի պես, հայնակ
Հայազին – հայու ձեռքով մորթված (ոչխարի միս)
Հայբա - մանդիկ,տոպրակ, խուրջին
Հայամ - եղանակ, ժամանակ
Հայիլ – նայել, դիտել
Հայնալ – նայել, դիտել, կատարյալ՝ հայցա, հայցար, հայցավ, հրամայական՝ հայցը (նայիր)
Հանա, հանը - ահա, հրես
Հանանիգ - պարի մի տեսակը, հանանիկ
Հանչ – մինչև որ, մինչև երբ
Հանդըպավ – հանդիպեց
Հաշ – լուռ
Հաշար - արթուն, զգաստ
Հաշիա - մետաքսյա գույնզգույն կտորեղեն
Հաշմ, հաշմաթքար - զարմանք, զարմացած
Հաջի (էրթալ) – հաջի, Երուսաղեմ գնացող
Հասար – պարիսպ, ցանկապատ

Հավարի, հավարը – օգնության կանչ
Հավեդիգ, հաուդիգ - կարմրահատ ցորեն
Հավթառ – հավերի թառ, ծող, որի վրա թառում են հավերը
Հավգուդ - 1. հավերի կեր, կուտ, 2. հավկտենի ծառի պտուղը, փոքր, կլոր և միակորիզ, հավկուտ
Հավգդենի – ծառի մի տեսակ, պտուղը՝ հավգուդ, հավկտենի
Հավթուսի - գաթա, որի խորիսխը շատ ծալքերով է
Հավորիգ - թռչուն
Հավուգ - փայտյա կլոր սեպ, որ արորի քրի ծայրին մտցնում են, արորն ամուր պահելու համար: Հավուկ
Հավջա - կարոտ, աղաչանք
Հավք – 1. թռչուն, 2. բարակ աղիք
Հատա - մինչև
Հարմաթ – կին արմատ
Հարգ - մեռելոցի հաց, մեռյալի հոգու փրկության համար տրված ճաշ, հարկ
Հար – մինչև
Հարոր - արոր
Հարան - անցան, գնացին
Հեհնդիլ – հանդարտել, մեղմել, անձրևի դադարել, երկնքի բացվելը
Հարվոնք –հողի քեշի գալը, սերմելու հարմար ժամանակը
Հարվոնքիլ – քեշի բերել, վարել, փափկացնել
Հեբրինգ - մեծ մկրատ, որով խուզում են ոչխարը
Հեժիլ – շարժել
Հեժան – շարժվող, տատանվող (գլուխ)
Հեծուգ - հեծած, ձի նստած, հեծուկ
Հեղուրջ, էղուրջ – ձյունի երեսի սառցանալը, պնդելը, որի վրայից առանց խրվելու քայլում են
Հեշին - գորշ, մոխրագույն
Հեր – ոչխարը ջրի կանչելու համար
Հերուն - բիզ, հերյուն
Հերս - բարկություն, զայրույթ
Հերսոդիլ - բարկանալ
Հերսուգ - բարկացկոտ
Հերվանիգ - մի տարեկան (անասուն)
Հիղ - անգամ
Հիլուդ - հիվանդոտ, վատառողջ, 2. թոքախտավոր
Հինիլ – թել քաշելը (ջուլհակի)
Հինուգ - 1. հինա դրած, 2. հենքը դրած, ջուլհակի մանածը գործելու վիճակին հասցրած

Հիվը - աղաչանք, խնդրանք
Հլըլիլ – մաշվել, քրքրվել
Հլիըլի - եփվելուց քայքայվելը (մսի, շորի)
Հլոդիլ - հրել, գլորել, հլոդել
Հլուն – 1.ուլունք, 2. բրոնզի կտոր, որի վրա ամրանում է ջրաղացի ցցի ստորին ծայրը
Հմայիլ – կախարդական գրություն, թուղթ, որ եռանկյունի ծալում և շորի մեջ դրած կապում են մարդու կամ անասունի վրա՝ չար աչքից ազատ պահելու համար
Հմլա - այսպես, այնպես
Հմլիլ – 1. զարդարվել, 2. ընդունել, հանձն առնել
Հմլուգ - 1. զարդարված, 2. ընդունված
Հմլում – 1. ընդունում, 2. զարդարում
Հմըգա - այժմ, հիմա
Հնավորիլ – համերաշխ, հաշտ ապրել
Հնդրիլ – ընտրել, ջոկել, հնդրուգ - ընտրած, ջոկած
Հնթիլ – թևի տակը դնել, անութս տակը դնել
Հնիծ – մութ, խավար, հնիծ
Հնծիլ – մթնել, խավարել, հնիծել
Հնհնուք – սրտմաշուք, դժգոհ տնտնալ
Հշկը- սառնամանիք, ցուրտ
Հշմիլ – 1. զարմանալ, 2. թմրել
Հշմուգ - 1. զարմացած, 2. թմրած
Հոդի - այդտեղ
Հոխա – ծանր չափ, մոտ 1-3 կգ
Հոկուդուն – նորածին երեխայի գանգի ոսկորների փափուկ մասը, հոգետուն
Հողմաղ – հողի մաղ, հողը մաղելու համար
Հուլմ - գոլորշի
Հուղ մանիլ – տան կտուրը հողով ծածկել
Հողպրտանք – հորեղբայրներ
Հող սորորիգ - փխրուն ավազահող, որի վրա սահում, խաղում են երեխաները
Հուդա - այստեղ, այս վայրում
Հունա - այնտեղ, հոն
Հոնգուց -այնտեղից
Հոշի, հոշկի – կաղնի (ծառ)
Հուշափ - վիշապ
Հոռսալա - հեծանոց, եղան
Հուսկիլ – հյուսել (վարսերը)
Հուսնուգ - ծյունի սահանքի վայր, վտանգավոր տեղ

Հոսին - դեղին, աշնան տերևի գույնը
Հոսնիլ - դեղնել, տերևաթափը
Հոսնգուլ – մի թռչուն, որ հավերի ձագերն է փախցնում
Հովթափ - իրիկնամուտ, հովերի թափվելու ժամանակը, երեկոյան կողմ
Հովկուլ - գաղջ (ջուր), ոչ տաք, ոչ էլ պաղ
Հովկլիլ - բարեխառնել (ջուրը), տաք ջրի վրա պաղ լցնել
Հորան - փոս, խորդուբորդ տեղ
Հորհամ –հորի համ, որ գալիս է թաղված կամ հորած ցորենից
Հութ – 1. ջրի կաթիլ, մի պուտ ջուր, 2. առասպելական գազան, որ մի անգամով կարող է մարդուն կուլ տալ ջրի մի կաթիլի պես
Հուսին – ծյունի հոսքը սարերից
Հովկուլ – կիսատաք (ջուր), կաթի այն ջերմաստիճանը, որ հարմար է մակարդելու համար
Հուջամ – տարա, բաժակ
Հուրնի՞ – որտեղի՞ց, դեպի ո՞ւր
Հորդիլ - ճամփա բաց անել՝ ծյունը թափել (կտուրից), հորդել
Հռիդ - լավ բրդատու ոչխար, հռիդ
Հռըշկիլ – շաղ տալ, թափել, ջրցնել
Հվուգ - հանգիստ, խելոք մնալ
Հվուր - երկու-երեք տարեկան որձ այծ հվուր
Հվտուգ - հոգնած, բեզարած
Հտքիլ – կեղտոտել (շորերը)
Հտքուգ - կեղտոտված
Հրիսա - հարիսա, մսով և ծեծված ցորենով լավ եփված ճաշ
Հրուք, հրվունք – մաշված փոքր կտոր չորթան, երբ հարում են չորթանով ճաշ եփելու համար, կամ օճառի մաշուկ՝ լվացքից մնացած

Չ

Չաթրին, ձեթրին –ծեթրին
Չալուգ - ծալված
Չաղ - նախշած գաթա, որ տանում են նոր փեսային նրա «երեսպագի» ժամանակ
Չամքիլ – վարսակալ, ծամքել
Չամուն – ծամոն, մաստակ
Չամուգ - ծամված, գործածված ծամոն
Չանրուգ - հղիության վերջին շրջանում գտնվող, ծնելու ժամանակին մոտեցած, ծանրուկ
Չառզարտրիգ – ծաղկազարդ (կիրակին), ծառզարդար
Չառփ - ձեռքերի ճաք, ճաքճքվածք
Չառփուգ - ճաքճքած (ձեռք, ոտք)

Չառփոդիլ - ճաքճքելը (ձեռքի)
Չափկիգ - հողից շինած փոքր պուտուկ
Չափկունք – մանկական խաղ, քարկտիկ՝ 5 քարով, ծափկունք
Չեծուգ - ծեծված, հարվածված, մանրացված, ծեծուկ
Չեծքար - գլանաձև քար, որով մի բան մանրում են, ծեծքար
Չեփուգ - ծեծված, , սվաղված, ծեփուկ
Չեփգալ – ծեփելու գործիք, մալա, ծեփկալ
Չերադ – ծայրը կտրված, ծերատ
Չին –ծին
Չիր - ձյան շերտ, որի տակից ձորի ջուրն է անցնում, իսկ ինքը կամարի պես մնում է
Չիձղաև – ծիծաղող, ուրախ (մարդ), ծիծղաև
Չիձռնիգ - ծիծեռնակ
Չլձլալ – կաթկթել (ջրի, կաթի), ծլծլալ
Չխիլ – ծուխ տալ անասուններին, կատարում են հուլիսի 1-3-ը, արևը չծագած, չար աչքի դեմ, ծխել
Չձմամ – ծծմայր, ստնտու
Չձման - բերան, ծիծը դնելիք տեղը
Չձուգ - ծծված, «կթված»
Չմագ - քիչ արևոտ տեղ, ծմակ
Չնաման – 1. հեշտոց, 2. արգանդ
Չնիգ - (ուլ) ուլծնիկ, մի տարեկան, բայց մայր դարձած ուլ
Չնձագ - անցքը, որից ծնվում է (ուլը, գառը, մարդը)
Չնգնակոտուր – ծունկը կոտրվի, (անեծք), ծնկակոտոր
Չնգնահան – մինչև ծունկը մերկացած, ծնկահան
Չնուգ - ծնված
Չոցվուր – հղի (կին)
Չոցվորիլ – հղիանալ
Չոցվորուրթիև –հղիություն
Չոցքաղ – չափ, մի ծոց լիքը քաղել (պտուղ)
Չուռ – 1.հերոս, քաջ, 2. գիժ, 3. սիրահար, ծուռ
Չուփ - թռիչք
Չուք – կանեփի չորացած ցողուն, որ երբեմն մոմի կամ մարխի տեղ գործածում են
Չպիղ – ծառի ճյուղերով գործված դուռ
Չպղիլ – ծառի ճյուղերով գործել
Չպղուգ - ծպիղով փակված
Չռանագ - ծռի նման, գժի նման
Չռեք – մանր որդ, որ գոյանում է անասունի վերքի մեջ
Չռիլ - գժվել, 2. սիրահարվել, 3. ըմբոստանալ, ծռել
Չռկտիլ - գժություն անել, խռովահույզ լինել, ծռկտել

Չռհուղ – չորս տարեկան արջառ, որ նոր են փորձում լծել
Չռուքիև - գժություն, 2. քաջություն, ծռություն
Չռուգ - 1. սիրահար, 2. գժված
Չռպիլ – կափարիչը կիսով չափ բաց անել, ծռպել
Չռտաշ – շեղ տաշվող (փայտ), ծռտաշ
Չռտաշուգ - շեղ տաշված
Չրիբ - կիսաբաց (դուռ, կափարիչ)
Չրիբիլ, ձրբիլ – կիսով չափ բաց անել
Չփալ – ցատկել
Չփձփալ – ցատկռտել, ոստոստել

Ղ

Ղաքըր – ջորի
Ղաշավի – քերոց
Ղենչագ, ղինչագ - թելերի կոճ, թելխուրձ (բամբակի)
Ղնըշիլ – խնայել, խղճալ
Ղորդման, աղորդման, ղորդու – իրավի, ճիշտ

ճ

ճալ - գոգավոր վայր, տափարակ տեղ
ճաղցը սմել – ջրաղացի մորուք՝ քարերի առաջ դրված փոքրիկ տախտակ, որից ալյուրը թափվում է ալրտուն
ճամ - ճահճուտ տեղից կտրված մի մաս, որով առուների ջրերը կապում են, որ իզուր չհոսի
ճամուգ - ճամով փակված (առու)
ճարդուգ - ջարդված, փշրված
ճզտիլ - ատամների և լեզվի միջոցով թուքը դուրս շպրտել
ճիակի - երգ, քրդական մանի
ճիլ – նյարդ, ջիղ
ճիլըռնի – քնաբեր մի հիվանդություն, որի բուժման համար կոկորդի երակներն են սեղմում, դանդաղեցնում արյան շրջանառությունը
ճիլիռ – կոկորդի ցավ, քերվտուք, որի բուժման համար յոթը տնից յուղ և ալյուր են հավաքում թանձր հավիծ շինում և կերցնում հիվանդին
ճիռ – կաքավի մի տեսակը, 2. մեծ ճյուղ (ծառի)
ճլբուր – սոխեռածով ջրալի կերակուր, ջլբուր
ճլեզ, ճլող – նիհար, տխեղծ
ճլըզիլ - ճզմվել, սպանվել մի ծանրության տակ
ճլոթ - ապտակ, ձեռքի հարված

Ճլոթիլ - ապտակել, երեսին հարվածել՝ բաց ձեռքով
Ճլոթուգ - ապտակված, հարվածված, ծեծված
Ճլոպ – խոտից շինված պարան, կեմ
Ճղնքուփ - եզան լեզու կոչվող տերևը
Ճոբան – հաստ պարան
Ճոբո – պապիկ, մեծ հայր
Ճոթռդիլ – թառամել շոգից
Ճոթռուգ - թառամած
Ճուլիղգիգ - սարդ, ջուլհագիկ
Ճոճո, Ճոճիգ - տատիկ, մեծ մայրիկ, ջոջ, մեծ
Ճոճբաբ - պապիկ
Ճորապիռ – մի ջորիի տանելիք ծանրություն
Ճով - ճյուղ, շյուղ: Ջով
Ճովանալ - ճյուղ տալ, ընճյուղվել, ջովանալ
Ճոթիգ - աքացի (տալ),
Ճոթգիլ - աքացել
Ճվճուր – սոխով, ձվով պատրաստած ջրալի կերակուր: Ճվջուր
Ճրած – հենած և գործելու պատրաստ բամբակյա թելերի խուրձ
Ճրթոփ - փայտե գործիք, շերեփաձև ամրացված առվակի կողքին, երբ ջուրը լցվում է շերեփը և թափվում, իսկ շերեփի պոչը խփվում է մի թիթեղի, ձայն հանում, որից արջերը խրտնում, փախչում են:
Ճրտունք – 1. արտ ջրել, 2. գործիք, փայտյա, երկար պոչով, որով արտն են ջրում, ջրտունք
Ճրանքվուր - արտ ջրողը, «ճրտունք» բռնողը, ջրանքվոր
Ճրտոր – ջրի հերթը, ջրտուր
Ճրլիցք – վայր՝ ուր հաճախ ջուրն է լցվում, ջրլիցք
Ճրկալ – ջրկապ, արգելակ (շլյուզ), ջրկալ
Ճրուգ - ջրված (արտ), ջրուկ, ջրած, ջրոտ
Ճրստալ - փայլել, ցոլք տալ: Չրստալ
Ճրստան - փայլող, ցոլք տվող, ջրստան
Ճրքամ –ջրի այն մասը, որ արտը հագեցնելուց հետո հոսում, թափվում է:

Մ

Մադաշիգ - ուշ, մայիսին ծնված ուլ
Մադեն - ախորժակ
Մադուր - երկու աչքից կույր, չտեսնող, մատուր
Մազլախ – ջուլհակի դաֆը ինքնիրեն ետ տանող փայտ
Մաթիլ - փոքր ոջիլ, մնիկ
Մաժաժոր – հիվանդոտ, խելքը վրան չեղող
Մալ - ապրանք, տուն

Մալուլ - տխուր, թախծոտ, բայը մալուլիլ – տխրել
Մալուխ – մալոխ, ծառի չոր ճյուղ, մարխ
Մալուն - դիվահար, սատանա
Մալխո (քրդ.) – տնատեր, օխի գլուխը
Մածնգուլ – մածուն մակարդելու աման, ձագար, մածուն կուլ տվող
Մահլամ – սպեղանի, բուժիչ դեղ
Մահլուն – չարք, սատանա
Մահրում - զուրկ, անբախտ
Մաղմաղ – հանգչելու վրա եղող կրակ, մարելու մոտ եղող կրակ
Մաճին – մեջը
Մամըշիլ – կերակրի բորբոսելը, հնանալը, նամշելը
Մամըշուգ - բորբոսնած, հնացած, մամշուկ
Մամա-լուսիգ - աչքակապուկ խաղը
Ման – հում կաթի սեր
Մանած – թել, մանվածք
Մանգզոն – կոթը կարճ, շեղբը երկար մանգաղի մի տեսակ
Մանգզոնել – մանգզոնով քաղել
Մանդագ - մի բանջարեղեն, որ կերակրի մեջ են գցում
Մանդիշ – վայրի սոխ, սոխուկ, սարի սոխ, սարսոխ
Մանիլ – նետել, գցել 2. մանել (թել)
Մանուգ - նետած, գցած, 2. մանած, մանված
Մանգեռ – մանգաղի մի տեսակ, մանկեռ
Մանգռիլ – մանկեռով քաղել, հնձել, մանկռտել
Մանգռուգ - մանկեռով հնձած, մանկռտուկ
Մանգոթկիգ - սև, ծիծեռնակի նման մի թռչուն, որ առավոտյան զով օդին է ճախրում և երեկոյան, մանկռթկիկ, մանգաղաթևիկ
Մանշկիգ - 1. բռնակ, որից բռնելով ճախարակը պտտեցնում են՝ բամբակը մանելու համար, 2. փոքրիկ մանուշակ
Մաշ – հպարտ քայլերով ման գալը
Մաշալ – հպարտ – հպարտ քայլել
Մաշիգ - փոքրիկ ունելի
Մաշուգ - մաշված, փոքրացած
Մաշուկ – օճառի փոքր կտոր
Մաջիդյա - մեջիդիե - քսան ղուրուշ (թրք. դրամ)
Մառտալ – վահան
Մառտլուգ - վահանով և թրով զինավարժություն անել, խաղալ թուր և մառտալ
Մասթասիղ – մախաթ, մեծ ասեղ
Մասրա - եղեգնյա փոքր ձող, որի վրա թել են փաթաթում
Մասրալից - ճախարակ, որի պտույտով նագուկի վրայից հանվում է թելը և փաթաթվում մասրայի վրա

Մասրիլ – թելը մասրայի վրա փաթաթել
Մասրուգ - մասրա շինած, թելը մասրայի վերածած
Մատ – լեռան կող, լեռան լանջ
Մատանի (շալվար)- նախշված գործվածքով շալվար
Մատլոզ – մի մատի ծայրի վրա վերցրած ուտելիք (մեղր, մածուն)
Մատլոզիլ – մատով ուտել, մատը զգալի տեղ գործածել
Մատլոզուգ - մատով լիզած
Մատնուգ - մատնված
Մարանդա - մեծ շեղբով մանգաղ
Մարդապարտ – տասներկու զավակ ունենալ
Մարդաթամք – խաղ, ուր երեք մարդ թամբածև են իրար բռնում, մյուսները թռչում, մինչև մեկն ընկնի և փոխվեն դերերը
Մարդագ - գերանների և կցակների վրա գցված փայտ
Մարտլոցը –սուսերախաղ, վահանախաղ
Մարիգի, մարի - էգ կաքավ
Մարձքի – ծառ, որ տալիս է մարծուբ կոչվող պտուղը
Մարծուբ – մարծքի ծառի պտուղը
Մարմուս - գարնանացան ցորենի մի տեսակ
Մաքի – մենք
Մեզար – 1. մազից պատրաստված փալաս, 2. գոգնոց (մազից)
Մեզալ – նայել, դիտել
Մեկդեխիլ – հարս ու փեսին առագաստ տանել, միատեղել
Մեջիդե - քսան ղուրուշ (թրք. դրամ)
Մեվան – հյուր
Մերիլ – մակարդել
Մերուգ - մակարդված
Մերջուր – մածնին խառնելիք ջուրը, որով մերում են կաթը
Մզանալ – կծվանալ
Մզիղ - բարակ շյուղ, փշիկ, մզեղ
Մզրախ – ձեռքի փայտ, որի մեջ նիզակ է դրված՝ վտանգի ժամանակ օգտագործելու համար
Մըժ – մշուշ, մաժ
Մժիգ, մժիղ – մոծակ
Մժլիլ - զրուցել, խոսակցել
Մժլուգ - զրույցով տարված
Մժուլ - զրույց, խոսք
Միլ - ճաղ, երկաթյա բարակ լար, շյուղ
Միջհան - երկաթյա գործիք, որով փայտի միջին մասն են տաշում
Մլիլ – մլել, սեղմել ոտքով, տրորել կտորը՝ մահուդի վերածելու համար
Մլիգ - մոծակ
Մլմլիլ - աչքերը շուտ-շուտ թարթել

Մխլուջ – հաց- թանի կամ հաց – մածնի խառնուրդ, փրթոշ
Մկա - հիմա, այժմ
Մկավան – հիմիկվան, այժմյան
Մկնալուջ - ալոճի մի տեսակը, ավելի փոքր հատիկներով
Մկնաղիք – մի բույս է, անասնակեր
Մկնաղվիթ - աղվիթի մի տեսակը
Մղգդալ – ցավել, հոգս անել
Մղիգ, մղմղիգ, մղմղուկ, մղմուղ – մոծակի անուններ և տեսակներ
Մզլուբ - փայտյա գործիք, որով կծիկ թելը կաժի կամ զենչակի են վերածում
Մըք - մենք
Մղլբիլ – մղլուբով թելը ղենջակել
Մղլբուգ - մղլուբված, մղլուբի զարնված
Մղրըբ - երեկո, մութն ընկնելու ժամանակը
Մնիգ - անիծից նոր դուրս ելած ոջիլի ձագ
Մշլուր – սուջուխ
Մշուր - փոքր մասնիկ
Մուգլեզ - մողեզ
Մուդուր (թրք)- գավառապետ
Մոզ - մի մեծ ճանճ, որի կծելուց եզը կամ գոմեշը խրտնում, փախչում են
Մուզ - կծու համ
Մոզի – 1. մեկ-երկու տարեկան հորթ, 2. խորթ զավակ, որ ամուսնացող կինը հետն է բերել
Մոզոդիլ – մոզ միջատի կծելուց խրտնել - փախչել
Մոլա - մոլլա - 1. մուսուլման կրոնական, 2. ծեփիչ գործիք
Մոլրուգ - մոլորված, շվարած
Մուլաֆա - վրձին երկաթ թելերով
Մուլք – կալվածք
Մոխաբ - խաղողի մի տեսակը
Մուխսի - երուսաղեմ ուխտի գնացած
Մոմի - դեղին գույնի լաչակ, գլխին կապելու համար
Մոմլաթ – մոմած շոր
Մոմբադ - մոմի երկար ու բարակ ճրագ, որի մի ծայրից վառում են անհրաժեշտության դեպքում, մոմպատ
Մոմդան - աշտանակ, մոմի պատվանդանը, մոմտուն
Մոմուգ (շապիկ) – մոմով դաջած նախշած շապիկ
Մոշի – մի ծառ, որ մոշ պտուղն է տալիս
Մոշ –մոշենու պտուղը
Մունըկ – հոդակապ, մարմնի շարժակետ
Մունիջ – մրջյուն, մունիճ
Մուտագ - գերանի հենարանը

Մուտբախ – խոհանոց (բացօթյա)
Մուրազ - իղձ, նպատակ
Մորի – մորմենի
Մորիզ - մորմենու պտուղը
Մուրիզ - այծ, որ իր ուլին չի ընդունում, ծիծ չի տալիս, կամ ուլ, որին մայրը չի ընդունում
Մուրթիզ - կորեկի մի տեսակ
Մջրհան - եզրահան, տախտակի եզրերը տաշող գործիք
Մռուզ, մռզ - արմատը, ծառի հաստ բուն, մռզի
Մռուք - դունչ, կզակ
Մռիմ – մի քիչ
Մռու – կծու
Մռչիմ – մրջյուն
Մռփիլ – մրափել, խորը քնել, մռփել
Մսախ – ջրաղացի այն առաջամասը, ուր թափվում է ալյուրը
Մսաս - ճիպոտ՝ մի ծայրը սուր մեխով, որով չքվորը քշում է եզնե-րին, մյուս ծայրը ակիշ, որով արորին կպած ցեխն են մաքրում
Մսի չիր – միսը պարանի ձևով կտրատում, երկարացնում և արևի առաջ չորացնում են
Մսին – պղնձյա սափոր, ջրի սափոր
Մսխալ – ծանրության չափ
Մսրանի – 1. եվիպտական, 2. մսուր ունեցող, երկու մսրանի, երկու մսուր ունեցող
Մրիբա - հողի վրա կիսովի աշխատող
Մրկիթ – յուղատու մի պտուղ մրկթենի ծառից
Մրկթենի – մրկիթ պտուղը տվող ծառ
Մրճեմ – մրջյուն
Մրմնջալ – ցրտից մզմզալը (ձեռքի)
Մրջամք – կտավը պրկված պահող, երկու ծայրերին մեխեր ունե-ցող փայտ, որ գործվող կտավը պրկում է կողքերից
Մքուք – մագոգ - ջուլհակի այն գործիքը, որ կտավի հենքի մի լայն-քից մյուսը ձգում է թելը

Յ

Յա - իրավ, իսկապես
Յարաևութին – կատակ, զվարճախոսություն
Յարխուշտա - ռազմախաղ, ըստ որի ձեռքի ափերն են իրար խփում
Յոթնաղբեր – յոթն աստղերի բույլը
Յոթը – մեռնողի մահից յոթն օր հետո տրվող ճաշը

Ն

Նազուկ - գործիք, որի վրայից թելը մասրա է դարձվում
Նալչա - կոշիկի տակը կպցնելիք երկաթ
Նալչըխ – կիսաշրջանաձև և սուր բերան ունեցող թեթև կացին, որն իբրև զենք էր օգտագործվում և մշտապես կրում էին սասունցիները գազաններից ու թշնամիներից պաշտպանվելու համար
Նահախ – մեղավոր, հանցավոր, անիրավացի
Նամ, նամութին – խոնավ, խոնավություն
Նամիլ – խոնավանալ
Նարոտ – կարմիր-կանաչ թելերի ոլորվածք, որ կնունքի ժամանակ երեխայի վիզն են անցկացնում, նաև լծկան եզների կոտոշներին՝ չար աչքից հեռու պահելու համար
Նաջար – հյուսն, ատաղձագործ
Նեճիր – որս
Նեճիրվան – որսորդ
Նխըշ, նըխշ - զարդ, զարդարանք
Նըկս – կողացավ
Նժալ – ննջել, քունը գալ
Նժուգ - ննջուկ, քնելու պահանջ զգալ
Նժդահ - ավազակախումբ
Նիազ - մուրազ, ցանկություն
Նիսան – 1. ապրիլ ամիս, 2. մի բույս՝ անասնակեր
Նխըր - գիծ, նշան, որոշող կետ
Նխրիլ - գծել, նշան քաշել
Նխրիգ - փոքր պղնձյա կաթսա, պղինձ (աման)
Նղմուգ - փայտի վրա գծած, նշած (կետ)
Նշանքաշ – սուր, երկաթյա գործիք, որով տաշվելիք տեղերը և ուղղությունը գծում, նշում են
Նշանդար – լավ հրաձիգ, թիրախին ուղիղ խփող
Նշթրագ - վիրահատական դանակ, նշտար, նշտրուկ
Նշթրգիլ – վիրահատել, նշտարով կտրել
Նշթըրգուգ - վիրահատված, նշտարով կտրված
Նշնուգ - նշան դրած (աղջիկ), մատնացույց արած
Նշընվուր – նշան դնելու գնացող (մարդ) նշանդրող
Նշկավա - հանկարծ
Նուգի – ծանրության չափ, մոտ 320 գրամ, նուկի
Նունուֆար - ճերմակ, դեղին ծաղիկներով մի բույս
Նորկենի, նորշենի – մի ծառ, որի մուգ կարմիր կեղևը մոմի պես վառվում է, անուշահոտ ծառ է, պտուղները սև ու դառը:
Նուսաբ - խաղողի ընտիր տեսակ

Նուսխա - կախարդական թուղթ, եռանկյունի հմայիլ
Նուր – լուսին (նորը)
Նստըման – նստած դիրքով, «ըման» կամ «ման» մասնիկը դիրք, գործողության ձև է ցույց տալիս
Նվան – նվացող, մլավող, լաց եղող
Նվիգ, նվիկ – մի տերևաբույս, կծու համ ունեցող, որ եփում են՝ նոր ուտում
Նվիրակ – վանքի ծառայող, ներկայացուցիչ, որ պտուղ է հավաքում

Շ

Շաբ - շաբ, շիբ, պղնձարջասպ
Շաբառուն – շիբի և յուղի խառնուրդով շինված դեղ՝ վերքերին քսելու, բուժելու համար
Շախ - ճյուղ, նորատունկ (ծառ), շաղ
Շախամ, շախլամ - ապտակ
Շախոխ – վայրի տանձ
Շակալ – չուստ, հին կոշկեղեն
Շակալպերան – մեծ բերան, շատախոս
Շահինկ – կշեռք
Շաղափ - ծակիչ, որով փայտ կամ երկաթ են ծակում
Շաղափուգ - շաղափով ծակված
Շաղքա - հարբուխ, հազ, գրիպ
Շաղփիլ – շաղափով ծակել
Շամաթ (շապիկ)- նուրբ, սպիտակ կտոր, որից շապիկ են կարում
Շամգան – մոմակալ
Շառւաթ – խարույկ, մեծ հրավառություն
Շավաթ – չանչ, տականք
Շավի - անասունների գիշերային արածացնելը
Շարմաղ – նեղ անցքերով մաղ, բարակ մաղ
Շարմղիլ – շարմաղով մաղել
Շարմղուգ - շարմաղով մաղած
Շարշուր – քող, շղարշ՝ նորահարսի
Շարուգ - շարած, շարված, մի թելի վրա կամ ուղղությամբ
Շարտ - պայման, պայմանագրություն
Շափարզա - շվարած, շշմած
Շբակ – լուսամուտ, լուսանցք
Շբուկ - բարակ և ուղիղ վարոց
Շգլուր – շլոր, վայրի սալոր
Շեբուգ - ցնորված, անուշադիր

Շեմիկ – շեմք (դռան), սեմը
Շեմըկուգ - շեմքը դրած (դուռ)
Շեբիլ – շվարիլ, շշմել
Շեր - առյուծ
Շեք – քայլ, բայը՝ շեքռիլ, դերբայական՝ շեքռող
Շիլա - կարմիր կտավ, շապիկացու
Շիղջ, շեղջ – մաքրված և կիտված ցորեն
Շիհ – տխրություն
Շինուգ - շինված, պատրաստված
Շիրինգ - 1. սիրուն վայր, գրավիչ տեղ, 2. տեղանուն
Շիփ - ջրաղացի նավը, որից ջուրն է թափվում և քարը պտտեցնում
Շիշագ, շշագ - երկու- երեք տարեկան էգ ոչխար
Շիվ - փոքրիկ դալար ճյուղ
Շիք – 1. շեք, քայլ, 2. երկարության չափ՝ մի քայլ
Շլել – տարեկան ցորեն
Շլըխիլ – կպչել, ամուր փակվել
Շլըխուգ - կպած, ամուր փակած
Շլըխոկ – կպչուն, մածուցիկ
Շլոփա - ծյունախառն անձրև
Շխա - 1. մարմնի մի կողմը, 2. հողակտոր
Շխռտալ – որոտ, ուժեղ ձայն հանել
Շկաութ – ծմակ, անարև և ժայռոտ տեղ
Շկեռ, ժկեռ – ժայռ, ժայռոտ
Շմըտիլ – սայթաքել, սահելը
Շմըկ – սոլ, չուստ, շմըկկար՝ սոլկար
Շմըտոք – լպստրուն, սոթ տվող (տեղ) սահող
Շնաֆուր – շնորհավոր
Շնիգ - ցորենի չափ, մոտ 3 փութ ու կես ծանրություն ունեցող ցորեն
Շնոֆուր – սև չոռը, խոլերա
Շոբա - տիֆ, չոպա
Շոլ – ոլոռն՝ սիսեռտ մեծությամբ
Շոլթախա - ցորենի սռնուցքից և կարտոֆիլից պատրաստված ճաշ
Շոկիլք - գոլորշի
Շողինք – 1. լծքաշ եզի բերանից վազող լորձունք, 2. շողք, ճառագայթ
Շուղ – տաք, շողք
Շողհար - արևահար
Շողնալ - արևից տաքանալ
Շողդուն – ջրաղացի նավի ներքևի բերանը, ուր գտնվում է թափանիվը

Շողդիլ – սուր, շիկացած շշով ծակել (վերքը)
Շողդուգ - սուր, շիկացած շշով ծակված
Շոշխիլ - արևի շոգից թառամել, շոշխել
Շոռ - աղի
Շոռըկ - աղհանք, աղի վայր
Շոռհաց, Շոռ գուգու - աղի հաց, սուրբ Սարգսի պահքի վերջին շաբաթ գիշերը աղի հաց են ուտում ազապ տղա և աղջիկները այն նպատակով, որ գիշերը տեսնեն, թե երազում ով ջուր տվեց խմելու, նա էլ կլինի իր ապագա նշանածը, ամուսինը
Շորհուդ - վառվող շորի հոտ
Շուլալ – կարի մի տեսակը
Շուլալիլ – շուլալ անել, կարել
Շուլնուգ - շուլալ արած
Շուր – հագուստ, կտորեղեն
Շուրըկ - արորի առատամն ու ծողն իրար միացնող փայտը
Շջուգ - շիճուկ, կաթի կամ քանի կտրվածքի ջուրը
Շռկապ – միզարգելում, միզել չկարողանալը
Շռհուդ - մեզի հոտ
Շվոդ - 1. դև, չարք, որ ծառի բարձրություն ունի, 2. երկարահասակ, շատ բոյով
Շվոդհան, շվդահան -Դևը տնից դուրս հանել, սա կատարվում է փետրվար ամսի վերջին լույս մարտի մեկի կեսգիշերին, երբ ընտանիքի անդամները մի-մի ձեռնափայտ վերցրած խփում են տան պատերին և հատակին,վախեցնում դևին, չարին ասելով՝ «Շվոդ դուրս» (փետրվարը՝ դուրս) ադար (մարտը) ներս:
Շտիգ, շտուգ - շիճուկ, շոռի կամ ժաժիկի ջրային մասը
Շրեզ - շրեշ, օղին բույսի արմատը
Շրեզիլ, շրեշիլ – շրեշով փակցնել
Շրթնատ – շրթունքը կտրված (մարդ)
Շրիք, շրիքութին – կիսովի աշխատել հողի վրա
Շրջմագդիլ – տակնուվրա անել (կալի քուլաշը), շրջմակտել

Չ

Չաբրի – չորս տարեկան որձ այծ
Չադըր – կոն, վրան
Չադրիգ - գոգնոց (կանացի)
Չադրգքիլ - գոգնոցի կապիչը, թելը
Չախու - դանակ, զմելի
Չախչախիկ – ջրաղացի ամբարի ցորենի հոսքն իրենց շարժումներով կանոնավորող տախտակիկներ

Չամաճ – չորացրած և աղացած տաքդեղ
Չամչռիլ – չամիչի պես չորանալ
Չանքա - պայուսակ, տոպրակ
Չաչ, չաչիգ - աչք, աչուկ (մնկ.)
Չարիգ - 1. (թուրք. փող) քառորդ, 2. մեջիդիեի քառորդը՝ հինգ դուրուշ
Չարուխ – տրեխ
Չարչըֆա - շրջանակ
Չաք - գզրարի փայտե մուրճը, որով խփում է լարին
Չափալախ - ապտակ, ձեռքի հարված երեսին տրված
Չափան – չափող (մարդը)
Չափանագ - թաղիք, քեչա
Չափառ – ցանկապատ
Չափառիլ – 1. ցանկապատել, 2. պաշարել
Չափառվուր – ցանկապատող, չափառ անող
Չըլա - ծվեն շորի, հին լաթի կտոր
Չըկոկ – խաղի մի տեսակ. մեկը ցիցը զարնելով, խրում է փափուկ հողում, մյուսն իր ցիցն այնպես է խտում նախորդի մտցրած տեղին մոտիկ, որ ծռելով հանելիս առաջինինը ընկնում է, որով երկրորդ խաղացողը խաղը շահում կամ կորցնում է, եթե չի հաջողվում շրջել առաջինի ցիցը:
Չըմ, չըք – չեմ, չենք
Չընգըր – սազ, քամանչա, չունկուր
Չիմ – տես ճամ, ճիմ
Չիմա - խաղողի չանչ
Չինի, չընի – հախճապակի
Չիք –ցից, բայը՝ չքնիլ-ցցել, ցից խփել
Չլխադա - լիրբ, անամոթ, չլխտի
Չլկազի – քառսուն ծամ
Չլմերուգ - սողնակ, դռան փայտյա փակ՝ ներսի կողմից: Դա մի կլոր, երկար, գլանաձև փայտ է, որ ամրացված է լինում դռան ետևը, նրա լայնքին և մի պատից մյուսը ծգվելով՝ դուռը փակում է դուռը:
Չլմերուկը պատի մեջ ներս հրվելու տեղ ունի
Չլտիլ – ծառի ճյուղերը կտրատել
Չլտող – ծառի ճյուղերը կտրող
Չլտուգ - ճյուղերը կտրած
Չխճըպիլ – լվացքի շորերը քակել՝ մաքրելու համար
Չնչին - աղբյուրառատ մարգագետին, ջրառատ խոտատեղ
Չոլթփիլ – հանդերն ընկնել, թափառել
Չոգիգ - շերեփ, չոկեկ
Չոկ – ծունկ, բայը՝ չոկիլ-ծնկի գալ

Չոկլիգ - փոքր շերեփ, փայտյա մեծ գդալ՝ երկար պոչով
Չոչո – իշուկ, ձիուկ կամ նրանց խրտվիլակը
Չորքան – չորացրած շոռ կամ ժաժիկ, որ ձմեռ ժամանակ ջրի մեջ հարում, քանի են վերածում՝ չորքանով ճաշ եփելու համար
Չորքնով (ճաշ)-չորքանով պատրաստված ճաշ
Չորնալ – չորնալ, առանց կնունքի մեռնել
Չորուգ - ծառի վրա չորացած ճյուղ, չորուկ
Չուրի – մինչև, մինչև ե՞րբ
Չոքման – ծնկի վրա քայլելու ձևով
Չոքուգ - ծունկի եկած, ծնկների վրա նստած
Չռալ – ծորել, հոսել (ջրի, հեղուկի)
Չռզզիլ – կորչել, անհետանալ
Չռզգուգ - կորած, անհետացած
Չռիգ - 1. ջրվեժ, ջրթափ, 2. ճլորան, կտուրից հոսող ջրի խողովակը, ջրհորդան
Չրանգդիլ – նշտարի կամ վիրահատական գործիքի ծայրով մարմինը ծակծել, որ արյունը հոսի, չրատել
Չփլախ – մերկ, տկլոր
Չքիլ-չքցնիլ – 1. ցիցը հողի մեջ խրել
Չքուգ - հողի մեջ խրած

Պ

Պազգըքան - բազուկի թփով և մածունով բռնված թթու: Բազկաթան
Պալ – սեպ, ցից, փլունկ
Պալի - բանալի
Պալխիր – դահուկ, սահնակ, բալխիր
Պահ - արջի քարայր, որջ, գրաբարում՝ բայոց
Պահրիգ - ուշ հասնող խաղողի մի տեսակը
Պաղարջ - անթթխմոր հաց, բաղարջ
Պամ, պանըմ – մի բան
Պանիլ - աշխատել, գործ տեսնել, բանել
Պայա- ոտավոր, հետիոտն, հետևակ
Պապունկ – հոպոպ (թռչ.)
Պասար - արոտավայր, սարալանջ
Պարգանտան - բարեկենդան, Մեծ պահքին նախորդող օրերը
Պարծ - ճախարակի երկու ոտքերը, որոնց վրա հենվում է ճախարակը, բարձ
Պարծգան - բեռնակիր (անասուն), բարձկան
Պարծրարիգ - օրհնված հաց, հաղորդի մաս
Պարտ – խոտի կամ տերևի երեսուն խուրձ, բարդ

Պարտուց - դեզ, դիզվածք (խոտ ու տերև), բարդոց
Պափուջ – չուստ, բաբուճ, հողաթափ
Պդիլ - անասունը կերակրել (ձմեռը), բտել
Պերգի – ծառ, որի կեղևը մոմի պես վառվում է
Պեդ – մեծ, խոշոր
Պեդնալ – մեծանալ, խոշորանալ
Պեդօսկուր – մեծոսկր, հսկա (մարդ)
Պերընգալ – 1. բերնկալ, կափարիչ, 2. թել կամ դալար ճյուղ, որով կալում կապում են լծված եզների բերանը, որ ցորենը չուտեն
Պերընփուխ – ուտելիքի կամ կերի տեսակը փոխել, բերնփոխ
Պեքոլ (անել)- սայթաքել, ոտքը ծուռ գցել
Պզպզնիլ – հնանալ, քրքրվելը (հագուստի), բզբզել
Պըլըզուգ - ճզմված, եփելուց քայքայված
Պըլընգ - վագր
Պըլըզիլ - ճզմվել ծանրության տակ
Պըլոլել - փաթաթել, հավաքել
Պըթ – մի խաղ տանելը, խաղի մեկ շահում
Պըսմ- պըսմ իդալ - գոռոզանալ, հպարտանալ
Պըսպոր – 1. քաջ, սրտոտ, 2. մաքուր, փայլուն, պսպոր
Պթնուց – մատնոց, բթնոց
Պժիգ - աչքի ցավ, աչքի ճպռոտում, բժիկ
Պիբիռ – մեխ, պիպեռ
Պիբռիլ – մեխել, գամել, պիպռել
Պիժ - աչքի սպիտակ կեղտ, պժիկ, աչքի ցավից առաջացող
Պիժոկ – լայնատերև մի բույս, համեմ
Պիլ – ուսոսկր
Պիջ – ընկեցիկ, ապօրինի զավակ, բիճ
Պիտ - երկաթյա փոքր կեռ, որ արորի խոփը առատամին է ամրացնում, բիտ
Պիր – ձեռնափայտ, գավազան, բիր
Պիրտ - բերդ, աշտարակ, աքքադերեն-արամեերեն
Պլոլ – 1. մեղվի փեթակ (կողովից), 2. ցորենի ամբար՝ կողովի ձևով գործած, գլանաձև, և ծեփված
Պղիգ, պղուգ - կարաս, հողե մեծ աման, բղիկ
Պռինչ – կարմիր, միակորիզ և կլոր մի պտուղ է, փշատի նման, բայց փոքր և կորիզը կլոր, բղինջք
Պռնչի – ծառ, որ պռինչ պտուղն է տալիս
Պղպջալ - եռալը (ջրի), եփ գալը (կերակրի), պղպջալ
Պճըկ - անկյունակետ (ձեռագործի նախշերի)
Պշտիգ - երեսի փոքր ուռուցք, բշտիկ, պզուկ
Պուդ - անասնակեր (բոլոր տեսակի) ,այց պդիլ, բուտ

Պուզ - պոռնիկ, լիրբ, բոզ
Պուլ – մացառ, մի քանի ծառ ունեցող վայր
Պուլք – յոթնաղբեր (աստղերը), բուլք, բույլք
Պոլուր - բոլոր, ամբողջ, 2. կլոր-սիրուն, օր.՝ «Պոլուր էրիս բզդիգ պերան» (կլոր երես, փոքր բերան)
Պունգալ – մի ծու, որ միշտ հավաբնի մեջ է մնում, որի վրա հավն ածում է
Պունգլնուց – պունգալի (ծու) եղած տեղը, ուր հավը նստում է ծու ածելու համար, բունկալնոց
Պուջ - գուլպա
Պունճագ - հետանցք
Պոշխդվիլ – հողի մեջ թավալվելը (թռչունների), հողն իրենց թևերով իրենց վրա ցանելը
Պոպոզ - սրածայր, խշտիկ, վեր ցցված
Պուպուզիլ – ծնկների վրա նստել
Պուպուշիգ - թռչունների գլխի վրայի ցցված փետուրները
Պուք - բուք, ուժեղ քամի
Պոռքիլ – պատռել
Պոռքուգ - պատռած
Պով - բով, հողե աման, որում բովում, խարկում են կորեկը կամ գարին
Պուտիկ - փոքրիկ գդալ, փայտից շինած
Պորագ - շատ աղի կերակուր
Պտղունք - փոքր կտոր, մասնիկ, մասունք
Պրիշագ - ավերակ (տուն), բայը՝ պրիշագիլ-ավերակ դառնալ
Պրուդ - կավագործ, որից պրդընուց – կավի արհեստանոց, բրուտ
Պրուգ - բրած, փայտով ամանի ցորենը հարթել ամանի կողերին հավասար
Պրտուջ – պատառ, բրտուճ
Պրտոշ – ջրալի կերակուր, որի մեջ հաց է բրդած, բրդոշ
Պրտուգ - հացը բրդած, մանրած, բրտուկ
Պրտոն – պատառ (հացի), բրդոշ, բրդուճ
Պքըռիլ – շատ ուտելուց նեղվել, ուռել, բքռել
Պքիլ, պքնիլ - 1. բքիլ, (ծյունախառն քամի լինել), 2. շուտ և արագ ծխել (ծխախոտը)

Ջ

Ջաբղիլ - ասուպի պես անցնել, ճապղել
Ջալաբ - ոչխարի հոտ (վաճառքի համար)
Ջալադ - դահիճ

Ջահդ - եռանդ, ջանք
Ջաղ – 1. երկաթյա բարակ շիշ, 2. դագաղ, ճաղ
Ջաղդալ – ծակոց զգալը (մարմնում), ցավել, ճաղտալ
Ջամ - ապակի
Ջան - 1. վեգ, 2. հոգի, մարմին (ջանս ցավում է), ճան
Ջանի – ձիու քուռակ
Ջանջիգ - ալյուրով և թանով պատրաստած ճաշ
Ջանդըրմա - ոստիկան, ժանդարմ
Ջաշքիթ – կեսօր, ճաշին
Ջաուելակ - ճորտ, հողազուրկ գյուղացի
Ջաջառուն - ալյուրից և յուղից պատրաստված խմորեղեն
Ջաջե - մամա, սիրելի մայրիկ, մայր
Ջառաֆա - փայտյա մեծ թի
Ջաբլոլո – ծանր մի պար, պարողներն իրար ձեռք բռնում են միայն ճկույթով և խաղում կլոր պար
Ջեդու – խեժ՝ որ առաջանում է փշագազ բույսի ցողունի վրա, հավաքում, չորացնում և շրեշ (սոսինձ) են պատրաստում
Ջենըկ - ասեղնագործ գլխարկ (գդակ)
Ջեուրկ - երկվորյակ
Ջընդար – սատանա բռնող, կախարդ
Ջիդ - աքլոր (փոքր)
Ջիզմա - ճտքավոր կոշիկ, երկարավիզ կոշիկ
Ջիժ – երեխա, քաջ, հսկա, ճիժ
Ջին - դև, սատանա
Ջիջրա - միջատ, որ գիշերները պատի մեջ ձայն է հանում, ծղրտում, ծղրիդ
Ջլբուր - ջրալի և սոխեռածով կերակուր- չլբուր
Ջխան – ծխնի (դռան), սեմ, ճխան
Ջհեզ - բաժինք, օժիտ
Ջղարա - ծխախոտ, սիգարետ
Ջնազ - 1. գրազ գալ, 2. հավի այն կրծոսկրը, որով գրազ են գալիս, ջնազ
Ջնոզիլ - դիվահար լինել, գժվել
Ջմուռ - ճմռվածք տաք հացի և յուղի (կերակուր), ճմուռ
Ջնուգ - դիվահար, այսահար, ջնոտ
Ջուամեր - ազնիվ մարդ, հյուր
Ջոգան – ծայրը կեռ ձեռնափայտ, ճոկան
Ջուբռկանը – հարվածելու նպատակով նետված գավազան
Ջոմարդ - քաջ և ազնիվ մարդ
Ջոհր - փայլ (թրի, սրի)
Ջուլ - փալաս, հաստ կտորեղեն, չուլ, բայը՝ ջլիլ

Ջուջ - երեխայի առնանդամ
Ջուջփէդ - փայտյա փոքրիկ խողովակ, որի մեջ դնում են քնած երեխայի ջուջը, որպեսզի միզելիս նրա միջով մեզը դուրս թափվի և օրորոցի շորերը չթրջվեն
Ջուռիգ - գոգաձև վայր, փոս-հարթ տեղ
Ջոպռիլ – պոկել, ճանկով քաղել, ճոպռել
Ջուռ - զիստ, ազդր, ճուռ
Ջուռան – կիսախողովակաձև ճեղք՝ հողի, փայտի կամ քարի վրա, որ կես խողովակի ձև ունի:
Ջնջղգու սաբուն – մի բույս, որ օճառի տեղ օգտագործում են, կանաչ բույսը պոկում են և ուղղակի, որպես օճառ, գործածում, ունի կանաչավուն փրփուր: Այդ բույսը հազիվ մի թզաչափ է լինում և փռվում է գետնի վրա, ունի մանր, սպիտակ ծաղիկներ
Ջոդոզ - խլուրդի մի տեսակ
Ջվա - սնդիկ
Ջվայալդուզ - սնդիկազօծել, ոսկեջրել
Ջվաթ – նիստ, ժողով
Ջվալ – պարկ, տոպրակ
Ջվդլոք – խաղի մի տեսակ
Ջրինդ - ծիարշավ
Ջրած – մանվածք, որ ջուլհակը պիտի գործի
Ջրակդիր – պատվանդան՝ ճրագը դնելու համար, ճրագդիր
Ջրակլուս – յուղ, ձեթ, որ ճրագի մեջ վառում են, ճրագլուս
Ջրակու - ճարպ, ճրագու
Ջրտընտվուր – ջուր անող, արտը ջրող
Ջրտուն - երկար պոչով փոքր թի, որով արտերն են ջրում, պոչի երկարությունը նպաստում է հեռվից ջրին ուղղություն տալ՝ արտի միջից հոսելիս, ջրտունք

Ռ

Ռաբան – խեղճ, ողորմելի, ստրուկ
Ռադամ - արորի այն մասը, որ մտնում է խոփի մեջ, (ա) ռատամ
Ռազ - այգի (խաղողի)
Ռախ – պայթյուն, ձայն
Ռախալ – պայթել
Ռախացնիլ – պայթեցնել
Ռախի – (սաբուն) – ընտիր, ձեռքի օճառ
Ռախոկ – պայթող գործիք
Ռահմ - գութ, կարեկցություն
Ռաշոկը - աբայի (վերարկու) մի տեսակ

Ռաուլ – կենդանի
Ռապ – ուժեղ անկում (ծանրութաւն)
Ռապալ – ուժեղ, թափով ընկնել
Ռաֆազ - աքացի, ոտքի հարված
Ռապացնիք – պայթեցնել, ուժեղ խփել գետնին
Ռաֆ – հարկ (պահարանի)
Ռեզ - շարք, շարան, որից ռեզվիլ-շարքի կանգնել
Ռես - գյուղապետ
Ռընդա - փայտ հղկելու գործիք, ռանդա
Ռընք – քեն, խռովություն
Ռընքիլ – խռովել
Ռընքուք – խռոված
Ռշիգ - խարույկի երեսի մասը
Ռոտ - երկար փայտե ձող, որով ծառերից պտուղ են թափ տալիս
Ռուբ - ըրուբ - դոշաբ, որ պատրաստում են խաղողից, մանանայից կամ կազբայից, քառորդ, ռուփ
Ռուբխուր – տոկոս վերցնող, վաշխառու
Ռուսանագ, ռուսավար – ռուսերեն (լեզու)
Ռուք - անկյունաքար
Ռովա - խայտառակ, անպատիվ

Ս

Սաբաթ - փետրվար (ամիսը)
Սաբաթաև - առավոտ
Սագառա - մեծ կողով, սակառ
Սաթառ - անտառամաս, որ ծառերը 4-5 տարին մի անգամ կտրում են և տերևները որպես անասնակեր գործածում
Սալավիլ – ավել, որով միայն սալն են ավլում-մաքրում
Սալ, սալքար – մարմարյա սալաքար, որի վրա հաց են թխում
Սալըխ – լուր, տեղեկություն
Սալիլ – սալահատակել, սալել
Սալուգ - սալապատված
Սալաուաթ – սպառնալիք
Սալաբուրդ - փորձանք, աղետ
Սալափի – խոշոր քար՝ ձեռքով նետելու համար
Սալթ – միայն, լոկ
Սալթա - թանկարժեք կանացի հագուստ
Սալքար – սալաքար
Սալիմ - առողջ, պինդ

Սակրագ - փայտյա տափակ փոքր շրջանակ, որով տկերի ծակերն են փակում
Սաղր – ծանծաղուտ (ջրի,) ոչ խոր տեղը գետի
Սաղրի - եզան ազդրի կաշին
Սամաքիլ – սամաքել, որով լծից եզան վզի շուրջն իջնող փայտիկների ծայրերն իրար կապում եզան գլուխը լծից դուրս չգալու համար, սամոտի, սամոտա, սամեքել
Սամի - փայտյա կամ երկաթյա ձողեր, որով լուծը եզների վզին ամրացնում են, ոգ.՝ սամիք
Սամիր – 1. թեփահան արած կորեկ, որով ճաշ են եփում, 2. սամիր կոչվող ճաշը
Սանտերք - բուրդ և մազ գզող գործիք, դա մի տախտակ է, որի մի ծայրին, իրար զուգահեռ, շարված են սրածայր բարակ երկաթյա ճաղեր, որոնց վրա խրելով-քաշելով գզում են բուրդն ու մազը
Սանտր – ջուլհակի գործիք, որի ամեն մի ճեղքից մի-մի թել է անցնում գործվելու համար
Սանտրօճ - բազմոտանի մի միջատ, սանտրօճ
Սապառուգ - մազերը կտրած (անեծք)
Սաջ - երկաթյա թիթեղ, որի վրա հաց են թխում
Սառադ - խոշոր անցքերով մաղ, սառատ
Սասում - բարկություն, «հերս», ցասում, սասում (Սասուն)
Սավառոկ – փարթամ բույս՝ անասնակեր
Սատանխափ - երազում կնոջ հետ զուգավորվելը, սատանայից խաբվել
Սատանը – (լեսան)- գայլախազ (քար)
Սատգուգ - սատկած, մեռած
Սարդարի - դռան վրայի ծածկը
Սարիլ – նետել, գցել հեռուն, սարել
Սարիգ - բարակ մորթի, որով ամանների բերանը փակում են և կապում, սարեկ
Սարուգ - նետված, գցված
Սարատագ - սարի ստորոտը, սարի տակը
Սարգալա - առաջից գնացող, առաջնորդող (ոչխարի հոտ, նախիր)
Սարագիգ - փոքրիկ սարյակ
Սարսուխ – վայրի սոխ, սարի սոխ
Սարվաղ - սարք, իրերի կոմպլեկտ
Սափ - 1. ծղոն, մեծ դարման, 2. կոթ (կացնի)
Սաքու – ցածրադիր պատ, որի վրա նստում են
Սաֆ, սաֆի – մաքուր, ջինջ
Սաֆարչի – պղնձագործ, կլայեկող

Սաֆիգ - կավից շինված բաժակ, հողե փոքր աման՝ ջուր խմելու համար
Սգիլ – ջրի տակն իջնել, սուզվել
Սեբրի - երեք տարեկան նոխազ
Սեզ, սիզ - մոլախոտի շատ տարածվող մի տեսակը
Սելմին – ջուլհակի գործիք, այն գլանաձև փայտը, որի վրա փաթաթվում է գործված կտավը
Սեիզ - նոխազ (ընտանի, թե վայրենի)
Սեկ – սրեմ, մորթից պատրաստված թել
Սեպիլ – թողնել, արձակել
Սեպուգ - թողնված, արձակված
Սեր – կախարդություն, հմայել
Սերմռիլ – սերմի գոյանալը, բույսի հասունանալը, սերմառել
Սերսուփ - մաքուր, սուրբ
Սերսփիլ – մաքրվել, սերսփել
Սերսփուգ - մաքրված
Սիրդ - առողջ պտուղ, ոչ փուչ, մեջը լիքը և հասած պտուղ
Սըլ, ցըլ – սահել, սղղալ
Սըլիգ, ցըլիգ - սահելը, սղալը
Սըլնալ - բարկանալ, սըլ-բարկություն
Սըմ – սմբակ
Սըֆր – պղինձ (մետաղը)
Սթար - ապաստարան, պաշտպանվելու տեղ
Սթրիլ - ապաստան գտնել, հանգստանալ
Սթրուգ - պանգիստ, խելոք
Սթրվիլ – տեղավորվել, հանգստանալ
Սիխ - փայտյա մախաթ, սրածայր փոքր փայտիկ
Սինի - ափսե, որ պղնձից է շինված
Սիվ – սև
Սիվփըշ – լյարդ, սև թոք
Սիրըմ – սոխուկի պես մի բանջարեղեն, որը հոտի և համի համար գցում են կերակրի մեջ
Սլուլիգ- ճարպիկ, աչքաբաց
Սխա - շորե գնդակ, թոնրի անցքը փակելու համար
Սխտորուգ - վայրի սխտոր
Սխտորքար – 1. քար, որով սխտոր են ծեծում, 2. Սասունում մի լեռ
Սկիլ – սուզվել, ջրի հատակը գնալ, սկել
Սկտա- ցից, փայտյա ձող՝ հողում խրելու համար
Սղկիլ – մանրել, փշրել
Սղմիլ – սեղմել
Սղկուգ - մանրված, փշրված

Սմբուլ – 1. հոտավետ ծաղիկ, 2. հղկված, ողորկ
Սմել - բեղ, ընչացք
Սնկռտալ – հեկեկալ, ուժեղ լաց լինել
Սնկլանկաջ – ոստրե, նաև խխունջ
Սնտոտ – հաստ գավազան, մահակ
Սնքար- խարիսխ, սյունի տակի քարը
Սոպա - վառարան
Սոլ – կոշիկ, չուստ
Սողղկ – կիսավառ փայտ, մի ծայրը դեռ չայրված
Սոսրաթ – խայտառակություն, անտանելի, սարսափելի
Սոխի-բլուզ - կանաչ սոխ
Սողնագ - դռան ետևի փակը
Սողնձագ - անցք, որի մեջ մտնում է սողնակ
Սոլոլ – խաղողի մի տեսակը
Սուլթան (սիսեռ) – ընտիր սիսեռ
Սոսընց - անուշաբույր մի ծաղիկ
Սորալ, սորսրալ - ավազի կամ հատիկների համաչափ հոսելը, թափվելը
Սոր – սոր –հոսելու, թափվելու պրոցեսը
Սուջ – հանցանք, մեղք
Սուս – մի բույս է, որի արմատն ուտում են
Սորսփալ - վախից դողալ
Սուքիլ – շինել, կառուցել, զուգել
Սուքուգ - շինած, կառուցած
Սպաս – թանապուր
Սպիոկ – 1. ցորենի մի տեսակ, սպիտակ գույնի, 2. աղվիթի (վայրի պտուղ) լավ տեսակը
Սպիտակ մուրքընին – ծերունիներ, ալեհեր մազերով (մարդիկ)
Սպիտկիգ - մի բանջարեղեն, որի թփերի ծայրը սպիտակ է
Սպտուր – ոչխարի և այծի աղբը (թրիքը), կտտոր
Սպտրիլ - աղբել, թրքել
Սջուխ – 1. հաստ աղիք, 2. սուջուխ (խաղող)
Սխալ, սռսռալ – հատիկ-հատիկ թափվել
Սռիջ – խոշոր ավազ, ավազակույտ
Սռնիլ – ցորենը խոշոր-խոշոր աղալ
Սռնուգ - աղացած ցորեն
Սռնուցք – ցորենի մանրուք՝ ցորենը 3-4 կտոր արած
Սրսուր – մաքուր, թել-թել արած
Ստեղծ – ցցեր, որոնց վրա ջուլհակը մանածն է բաց անում, ջրած անում
Ստիրճ - ամուլ մնացած, չբեղմնավորված, ստերջ

Սրբանք - արգանդի ընկերքը, որ ծնվածի հետ դուրս է գալիս
Սրըմ, սրեմ, սրիմ – կաշվից, մորթուց պատրաստված թել
Սրթկալ – հանկարծ վեր թռչել
Սրմա - ծարիր, սյուրմա
Սրմուգ - ծարիր քսած (աչք), սյուրմած
Սրտանուց – կանանց և աղջիկների կրծքի հագուստ-զարդարանք
Սրտգդալ – լանջի ծայրոսկրը, սրտի գդալը
Սքռաթ – հոգեվարք, հոգի տալու ժամանակը

Վ

Վազան – արագավազ
Վազանա- կորեկի մի տեսակը, հասկը՝ մատի ձևով
Վազալիլ - գետնի վրա անհոգ պառկել
Վաճըխիլ – վախից վեր թռչել
Վայլե-վայլե - ահ ու սարսափ, վայը եկել է
Վայլուսիլ – կուրանալ, աչքի լույսը պակասել
Վաչարխիլ – ոստոստալ, թռչկոտել
Վառիգ - վառեկ, փոքր հավ
Վառուգ - վառված, այրված
Վարդախտ – կարմրուկ (հիվ.)
Վարշամակ – սպիտակ կտոր, որի մեջ նշխարք են փաթաթում և դնում մեռնողի բերանի վրա
Վաք – ջրաղացաի նավը, 2. կլոր շրջանակածև տախտակ, որով փակում են տների անցքերը
Վերգի – հողի տուրք
Վերի այծ– վայրի այծ
Վերվերիգ - 1. թեթևսոլիկ (մարդ), 2. պարի մի տեսակ
Վզան – վզվզան - փախչող, մի տեղ չմնացող
Վզնակոտուր – վիզը կոտրվի (անեծք)
Վըժգալ, վըժալ - ճվալ, լաց լինել (երեխայի)
Վըժուց - ճիչ, աղաղակ
Վըլվըլիգ- փոքրիկ մի թռչուն, որ կանեփի հատիկներն է սիրում ուտել
Վըլվըլուն - աղմուկ, աղաղակ
Վըր – 1. որ (հար. դեր.), 2. վրա (կապ)
Վըրը՞ - ինչո՞ւ, ինչու համար
Վըտվըտալ – մանր-մանր շարժվել, գրգիռից մարմնի այս կամ այն մասի շարժվելը
Վըտվըտան - գրգիռից շարժվող, ոստոստող
Վիք – վայրի այծ, փոքրիկ և սիրուն

Վղկալ – ոորածնի ծայն հանելը
Վնգալ, վնգգդալ – շան լակոտի ծայն հանելը, կաղկանձել
Վռիգ - ջրալի ճաշ՝ ալյուրից պատրաստված, վռիկ
Վռնիգ - մատղաշ, փոքրիկ (գառ կամ ուլ)
Վռցնիլ – նետել, հեռու գցել
Վռցուգ - հեռու նետված
Վրացնագ - վրացերեն, վրացու պես
Վքնիլ – կերակուրը չմարսելուց անհանգստանալ, փքվել
Վքնուգ - չմարսած, ուտելուց անհանգստացած

S

Տաբ - դեպի
Տաբակ – խոշոր եղջերավոր անասունների մի հիվանդություն, որից քայլելու անզոր են դառնում, ոտքերը ցավում են, դաբաղ
Տաբա - բան
Տաղը - այդ կողմ, այդ տեղը
Տալ – խեժ, առաջին կաթ
Տալ – թաքստոց
Տալիլ – թաքնվել, պահմտել
Տալուգ - թաքնված
Տալապ - բեղմնավորում (միասմբակ կենդանիների)
Տահ – հնացած, տարիքն առած, դահ
Տահանալ – հնանալ, ծերանալ, տարիքն առնել, դախսանալ
Տահլ – ծանր հիվանդ, մերձիմահ
Տահմ – համ
Տահմըկ – թակարդ, ուր ուտելիք են դնում վայրի կենդանիներին այնտեղ բերելու և խփելու կամ բռնելու համար
Տահուգ - դահուկ, սահնակ, որով ձմեռ ժամանակ ձյան վրայով անասնակեր են տեղափոխում: Սակայն հաճախ մարդն ինքն է քաշում ձյան վրայով
Տաղծ - դաղձ, համեմ վայրի
Տայր (քրդ.) – թռչուն
Տամոն – շլորի մի ընտիր տեսակը, խոշոր, դամոն
Տառըկ - առնանդամ
Տառինջ – վայրի և մարխոշ մի խնձոր
Տառխըս – կիսակռտված, կիսաամորձատված
Տապու – 1. արգելք, տաբու 2. հողի սեփականությունն ապացուցող փաստաթուղթ
Տարթ – չորացրած աղբ (անասունի) վառելու համար
Տարմոզ - հաստ փայտ, մահակ

Տափ - աղեղի հենակը, լայն տախտակը
Տափան – 1. ջրաղացի քարերի պտույտը կանոնավորող հաստ փայտ, 2. հերկված արտը տափանելու գործիք, տափան
Տափըշ – հավերին բռնելու ձայնարկություն
Տափըշիլ – նստել՝ թաքնվելու նպատակով, պահվտել
Տափիչք – ցանց, թակարդ (մուկ, վայրի թռչուն բռնելու համար)
Տելք - զառացանք
Տելքիլ - զառանցել, դելքել
Տեղթափ - երկնային փոքր, կլոր և գույնզգույն քար, որ ջրի մեջ դնելով ջուրը բուժիչ է դառնում, դեղթափ
Տեղծնուգ - դեղձանիկ (թռչ.)
Տեղնուգ - դեղնած, գունատ
Տեղվալուգ - թունավոր բույս, երբ կենդանին ուտում է, թունավորվում և սատկում է, դեղ
Տիդա - այս կողմ, այդ կողմ
Տիղ – 1. դարման, բուժիչ նյութ, 2. աբեթ, դեղ
Տիղրար - դեղ պատրաստող, դեղագործ, դեղրար
Տիման - դիմացը, դեմ առ դեմ
Տինի – մի հիվանդություն՝ թմրեցնող, քնեցնող
Տիր 1. անգամ, 2. աղեղի նետը
Տիրկավան – նետ-աղեղ, փայտից պատրաստված, թռչուններ որսալու համար
Տղկի – ծառ՝ հացենի, թխկի
Տմբել - բռունցքով գլխին տալ, դմբել
Տնազ - ծաղր, կատակ անել
Տուղ - դող, մալարիա, դողէրոցք
Տուտըզիլ – կուչ գալ, մի տեղ կծկվել
Տուր - դուր, ծակող գործիք
Տուրան – հարթ, տափարակ դաշտ, հարթավայր
Տուշտի – նոխազ, 3-4 տարեկան որձ այծ
Տոփան 1. տափակ հաստ փայտ՝ կտուրի հողը ամրացնելու համար, որ չկաթի անձրևից, 2. լողքար՝ նույն նպատակի համար
Տոճիգ - հորթի ցատկռտելը, աքացի տալը
Տոշիգ - թթվից պատրաստված կերակուր (կաղամբից, շաղգամից)
Տվտիկ - փափկամազ, բրոն, որ լինում է այծի մազերի մեջ, աղվամազ, դֆտիկ
Տվըզիլ – թմրել
Տտմաջ - եզան լեզու (բույս), մի թուփ է, որ դնում են վերքի վրա՝ բուժելու համար, դդմած
Տրգիլ – ծնելը (միասմբակ անասունների)
Տրթագ, դրթակ - թակ, որով դրին խփում են՝ փայտ ծակելու համար

Տրընգոզալ – տրնգոզի խաղալ
Տրիլ – սրել ջրաղացի քարը, դրել, դրով սրել, դրել

Ց

Ցաք, ցաքան – տափան՝ հերկի երեսը հավասարեցնելու համար
Ցաքանիլ – տափանել, ցաքանել
Ցաքզնջիլ – տափանը լուծին միացնող շղթա
Ցաքլից – ծառի թարմ և բարակ ճյուղեր, որոնցով լցնում են ցաքը՝ ճյուղերն ամրացնելով նրա երկու թևերում
Ցըլլ, ցըլիկ – սահե, ընկնել, ծածկել (հողի, ձյան մեջ)
Ցից - երկաթ, որ միացնում է ջրաղացի վերևի քարը պտտվող գնդին
Ցխալ – իրարից բաժանվել, հեռանալ
Ցխուգ - ցրված, ցիրուցան եղած
Ցկնիլ – շան ծնելը, ձագ բերելը
Ցկնուգ - ընկած, ծնած
Ցընք, ցընքուգ - ցամաք, չոր, ցամաքած, չորացած
Ցուլան – ջրվեժ, օր.՝ «Գուլան, գաթը ցուլան» (մայիսին) կաթը ջրվեժում է՝ առատ է
Ցոլալ – 1. Լույսի պես արագ անցնել, 2. օձի վազքը
Ցուլուլ – ուրուր, հավեր փախցնող թռչուն
Ցողվիլ – ջրով ողողել, լվանա
Ցողվուգ - ողողված, մաքրված
Ցվգուջ – պատի գլխից դուրս, ցվիքի տակն ընկած գերանի մի փոքր մասը
Ցվիք – քիվ՝ կտուրի այն նեղ մասը, որ պատը ծածկում և քիչ էլ դուրս է երկարում, պատի ամբողջ երկայնքով և լայնքով

Ու

Ուահ - դժգոհություն արտահայտող ձայնարկություն
Ուայ – ցավ և զարմանք արտահայտող ձայնարկություն
Ուգ - ամանի ծեփ, սև թոքից և շորից շինված, միացնող
Ուզան – ուզող, մուրացիկ
Ուզընգան - աղջիկ ուզելու գնացող, ուզընկան
Ուժիլ – պարարտացնել (հողը)՝ անասուններին գիշերն ամբողջ պահելով այդ արտի վրա՝ ամռան կամ գարնան օրերին
Ուլաման - այծի արգանդի այն շղարշը, որն իր մեջ է պահում ուլին
Ուլծնիգ - ուլ հասակում՝ ծնել, մի տարեկան, բայց մայր դարձած այծ

Ուլըռնակ - փայտ, որով բեռի կամ սայլի պարանը պնդացնում են
Ուխալ - կճուճ, հողե փոքր աման
Ուճաք - փշատ
Ուող – սարալանջ, զառիվեր
Ունջան, ընջան – լայն բերանով աման, տաշտ
Ունք – հոնք
Ուշիգ - ուշիգ - կամաց-կամաց
Ուռք – կենաց ծառ, որ բռնում են նորապսակների գլխավերևում, ծառ, որ ամեն պտուղ ու բարիք ունի իր վրա, բերքի ծառ: Ուռքը սերունդ ունենալու խորհրդանիշն է
Ուրուս- ռուս, ռուս ազգը
Ուսլաք – ուսի լաք, որ երբ կժով ջուր են բերում, դնում են ուսի վրա, որ շորերը չթրջվեն
Ուրծ – որձ, արու
Ուրուր – ցին, հավեր փախցնող թռչուն
Ուրտ – ջրատար առվակից՝ կորիից բացվող փոքր ջրատար աչքեր, որոնցից հոսող ջուրը ջրում է արտը, ուրդ
Ուրտկապ – ուրտի բերանը փակող քարը կամ հողը
Ուտան – ուտող
Ուրց – շրթնածաղկավորների մի տեսակ անուշահոտ բանջարեղեն
Ուփ - արհեստական փոքր լիճ, ջրամբար՝ արտերը ջրելու համար շինված
Ուտք - երկարության չափ՝ ոտք

Փ

Փագահ – վանքի գոմ
Փաք – մի պտույտ
Փաքուգ - փաքաքված
Փալ – լեռան լանջը, կողը
Փալախ – խիտ, թավ (մորուք)
Փալասի – մեծ քար՝ նետելու համար
Փալ (տալ) կռնքել, հենվել
Փածիղ - փայծաղ
Փածղնոտիլ - փայծաղի մեծանալը, մալարիայով հիվանդանալ
Փակնճագ - անցք, որի մեջ ձեռքը մտցնելով՝ փակում կամ բացում են դուռը
Փաշա - 1. նոր փեսա, նորապսակ, տղա, 2. փաշա, իշխան
Փանզահիր – ցավերը փարատող, բուժող (նյութեր)
Փանջ – թաթ, ճիրան
Փաշկուլ - փոքրիկ պարկ (մորքուց)

Փաշտիլ – իրար մեջ կիսել (հողը, անտառը)
Փաչուչք – խանձարուր
Փառ – 1. Սելմինից մինչև դաֆը, ջուլհակի գործած կտավի երկարությունը, 2. Ջրաղացի թափանիվի թևերը, 3. որևէ հեղուկի երեսին բռնած փրփուրը
Փառանի - հոշոտող գազան
Փառու – հարս ու փեսային տված նվեր
Փավա - բոլորը (Տալվորիկ)
Փառչ – սափոր, կուլա
Փառչմիլ - բևեռել, մեխել
Փարախ - գոմ, իջևան (ոչխարի), բացօթյա վայր (ոչխարի)
Փարդ - թայ, կոշիկի կամ տրեխի մի թայը
Փարդիլ - կաշին զոլել, տրեխի չափի վերածել
Փարթ - փորոտիք, աղիք-ստամոքսը միասին
Փարսու – կրծքավանդակի մի մաս, կողերը
Փարփար - դանդուռ (բանջար)
Փարփրքան - դանդուռով և մածնով բռնած թթու
Փափուրի – խաղի մի տեսակ, թեթև պար
Փելամբ - բաց երկինք՝ անձրևից հետո
Փելամբիլ - անձրևից հետո արևի բացվելը
Փեյին – չոր գոմաղբ
Փեջթաթիգ - թաթածև թիոսկր
Փեջ – թիոսկր, որի վրա փեջրարները նայելով գուշակություններ են անում
Փեջրար, փիջրար - փեջ նայող, գուշակող
Փետնալ – սատկել (անասունի), փայտանալ, մեռնել
Փըշ – թոք, լյարդ
Փեքոլ անել – սմբակներով գետինը, հողը փորել
Փըռչ – մազ
Փըռչըմ – 1. ճակատին թողած մազ, 2. սեպ, ցից
Փըռչուգ - մազոտ, փռչոտ
Փըռբըժի - առողջություն, երկար ապրելը
Փիդնալ - փայտանալ, սատկել
Փիլալ - փայլել, բոցկլտալ
Փիլթան – հոտավետ բույս
Փինչ – սեպ, բայը՝ փնչել – սեպ խրել
Փիռտալ - այծի կամ ոչխարի ձայնը, որ վտանգ է ազդանշում
Փետատ, փիտոտ - բրիչ՝ հողը փորելու համար
Փինչ – սեպ
Փիցուգ - սատկած, մեռած
Փլխիլ - փշրվել, կոտրվել

Փլխուգ - փշրված, կոտրված
Փլունգ - սրածայր փայտ, ցից
Փնկա - մի բանջար (վայրի), քեղի նման
Փնչալ – շատ ուժեղ արտաշնչել (անասունի)
Փնչիլ – սեպ խրել, ցից խփել
Փնչկտալ - փռշտալը (անասունի)
Փշխնդալ – սրսփալը (մարմնի), վախից կամ ցրտից դողալ
Փշկուլ – միասմբակավոր անասունի աղբ
Փշրանք - փշրանք, մանրուք
Փուգ - եզերազարդ, գդակի ասեղնագարդ
Փուկ – Գլգըլի կամ կորեկի ցողունը
Փոթ – շոր, հագուստ
Փոխինդ - աղանձած և աղացած գարու ալյուրից եփված ճաշ
Փող – սրինգ, նաև՝ փող, դրամ
Փողփուչ - փող փչող, սրնգահար
Փու – վատ, անհամ (մանկ. բառ)
Փուլ – լուսնի երկրորդ կեսը՝ 15-28-ը
Փողան – նեղ սրահ, միջանցք
Փողրակ – խողովակ
Փողրկուգ - խողովակ անցկացրած
Փողրոշ – սնամեջ, խողովակածև
Փողրկով – 1. խողովակածև, 2. գյուղի անուն, որ գտնվում էր Մշո դաշտում՝ Փողրկով
Փոնթ – ծալք (հագուստի)
Փուշի – մետաքսյա բարակ և լայն սև շոր, որ կապում են գլխարկի շուրջը
Փոշտ-փոշտ – Նոր տարվա շնորհավորանքի համար ստացած նվեր (մրգեղեն)
Փուչուք – հողե փոքր աման, կճուճ
Փուռնիկ – կլոր հաց, բոքոն
Փորխաք - կուշտ չուտել, փորը խաբել
Փուր – 1. փոր, ստամոքս, 2. ընկույզի կանաչ կեղևը
Փուրխ – հեշտ կճպվող (ընկույզ)
Փուփուշ (իգ.) – հավի գլխի վրայի ցցված փետուրները
Փորդակ - փորատակ
Փուկ - գլգիլի կամ կորեկի ցողուն
Փոփուլ – ոտնաման (երեխայի), շորից կարած
Փջգիլ - ատամների միջի մնացուկը հանել, փորել
Փռծլինք – թուք, լորձունք
Փռծլինքուգ - փսլնքոտ
Փռման - փռած, ցրիվ տված ձևով

Փռուգ - ցրիվ տված, մի հարթության վրա փռած
Փռտիլ – քուճուճ անելը (հավի), աղբը դես ու դեն անել
Փռտուգ - ցրած, քուջուջ արած
Փսոր – մանր կտոր
Փսորուգ - մանրած, կտրատած
Փտոտ, փտուգ - փտած (փայտ)
Փաղլուր – ոլորվելու հակառակ պտույտը
Փրթուգ - իրարից անջատված (մասեր), փրթած
Փրթըցնիլ - անջատել (տեղից), քաղել, պոկել
Փրթիլ – ընկնել, դուրս գալ
Փքլուջ – ուռուցք, այրվածք
Փքվիլ – ուռել, հպարտանալ
ՓՖիգ - փոքր փուքս (դարբնի)

Ք

Քաբաբ - կնքահայր
Քաբաբ - խորոված
Քալաջոշ - ճաշ, որ պատրաստում են լավաշով, ժաժիկով, յուղ և մածունից՝ տաք սոխեռածով, Քալաճոշ
Քադ - կերակուր
Քալաջիգ - երիկամունք
Քալաք – լաստ, որով անցնում են գետերի վրայով
Քալփադ - անատամ, ատամ չունեցող
Քաղի (գալ) – ոչխարների, այծերի բեղմնավորման գալը
Քաղվորիլ, քաղվորութին - բեղմնավորում այծ-ոչխարների
Քաղց – սովածություն, բայը՝ քաղցիլ – սովածանալ
Քաղցուգ - սոված, անոթի
Քաղցր – սև շիթ (վերք), քոռ չիբան
Քամ- 1. արտը ջրելուց, հագեցնելուց հետո իզուր հոսող ջուրը, 2. ջուրը կտրվելուց հետո հոսող վերջին մասը
Քամադեղիգ - ճոճվել, որով և ցավերազատվում են (ավանդ.)
Քամալ – 1. արժանիք, արժեք, 2. հասունացած (մարդ)
Քամամ – կնքամայր
Քամբախ - ավերակ, դժբախտ
Քամյան - բույս, որ գիրացնում է անասուններին
Քամար - արծաթյա գոտի, մեջկապ
Քանդիչ – պտուտակահան, քանդող
Քանուն - դեկտեմբեր ամիս
Քաշան – 1. քաշ տալիք բեռը, 2. դահուկ, սահնակ, քաշող

Քապքապ – 1. մեծ գլխով երկաթյա մեխ, 2. երկաթյա հատիկներ, որով սնվում էր Սասունցի Դավթի ձին՝ Քուռկիկ Ջալալին
Քառսնքկուխ – ծննդկանի կամ նրա նորածին երեխայի բառասուն օրը չլրացրած չարքերից զարնվելը, հիվանդանալը, քառսունքկոխ
Քավիլ - բուժել, տաք շորով մարմինը տաքցնել
Քավեջ, Քա վեջ – կով, 3-4 տարեկան երինջ
Քարազ - ժայռոտ վայր, Տալվորիկը Քարակ էլ էր կոչվում
Քար դրիլ – 1. խոսքը գաղտնի պահել, 2. գերեզմանի վրա քար դնել
Քարբ, քըրբ - ցավ, կսկիծ, ծարավից պապակ
Քարուբաբ - սաթ, քահրուբար
Քարբադ - խարույկի (ոտնաման) եզերքի կարերը
Քարբադիլ - եզերքի կարերը կարելը
Քարբդուգ - եզերակարված
Քարքիթ – սանրաձև երկաթ, որով փալաս գործելիս ծեծում են, թելերը նստեցնում
Քարխուչ – քարակույտ
Քարմնիլ – իլիկով բուրդ մանել
Քարջին – վայրի տանձ, ծառը՝ քարջնի
Քարսախ – քարավազ, գետի միջից դուրս ընկած քարեր, որոնց վրա կոխելով անցնում են գետի մի եզրից մյուս եզրը
Քավանդ - տուֆքար, փափուկ քար
Քարմաղ - մաղ, որով քարը ցորենից առանձնացնում են
Քարման – իլիկ, մանող գործիք
Քարմղուգ - քարմաղից անցկացրած, մաքրած (ցորեն)
Քարմնուգ - 1. քարմանով (իլիկով) մանված, 2. երկար ու բազմոտանի միջատ
Քարտատոշ – օձի մի տեսակ
Քափքափ - երկաթի կլոր հատեր, երկաթե գարի
Քբա - մեծ մասրա, որոնցով ջուլհակը ջրածն է հինում, քբան լցված է բամբակի թելերով
Քաֆ - փրփրուր (օճառի)
Քըզմա - խոզան (ցորենի) կամ կտրված անտառի (սաթառի)
Քաֆըր - անաստված, անգութ
Քեղվիլ, քեղբիլ – կեղևել, կեղևը հանել ճյուղի վրայից
Քեմ – թառախ, ժահր
Քերեգան - այբբենարան
Քերիջ – հացի բարակ և չորացած մասը, քերիճ, ծեփ
Քերուգ - քերված
Քերուցք – քերված մասը, կերակրի ամանի տակի քերվածքը

Քերք, քիրք – կերակրի ամանի տակին, եփված ժամանակ կպած կերակրի մասը
Քեփլիլ – սայթաքել, ընկնել
Քըլըժիլ – շոգից այրվել, խանձվել
Քըլս – կիր, որ նաև քըլս ու ջըլս էլ են ասում
Քըխ – 1. հազ, հարբուխ, 2. կեղտոտ և արգելված, զզվելի բան (մանկ. բառ.)
Քըխս, քըսխ – սոխի փոքր հատիկ՝ սերմացու
Քըմալ – հազալ
Քըխուգ - հազոց, հարբուխ
Քըո - անականջ, ականջը շատ փոքր (անասուն)
Քըց, կըց – քան, քըց շուն վազան (շան պես վազող), քըց գել գազան (վայրի պես գազան)
Քթգալ, քթկապ – քիթը բռնող, կապող թել կամ դալար ճյուղ, որով կալի վրա աշխատող եզը քուլաշն ուտել չի կարող
Քթվիլ – շորերի վրա ոջիլ փնտրել
Քթվող – ոջիլ փնտրող (շորի վրա)
Քիլ - բթամատի և ցուցամատի բացվածքը (երկ. չափ)
Քիլա - ցորենի չափ, որ հավասար է ութը կոտի, մոտ ութ փթի
Քիղ – քեղ՝ ընտիր և փարթամ բանջարեղենի մի տեսակը
Քիսըկ – քսակ, դրամապանակ
Քիսիլ, Քիսնալ – քիսել, քիսնել, հանդիպել, դեմ առ դեմ գալ
Քիստ – ցորենի հասկի փշոտ մասը
Քլքլման - եռացող (ջուր), եռման աստիճանի տաք
Քմեռախստի, Քըմեռախստի - աղջկա գլխարկն իր զարդերով
Քմլիլ – պտուղով ծածկվելը (ծառի), զարդարվել
Քմլուգ - զարդարված, պտուղով ծանրաբեռնված
Քմլցնիլ – 1. զարդարել, պտղաբեռնել, 2. եռանդի բերել (պարողներին), հաջող նվագել կամ երգել
Քնիլուն – հեքիաթային ուլունք, որ մարդու ականջի մեջ են դնում՝ նրան քնեցնում, մինչև ուլունքն ականջից վերցնելը, նա մնում է քնած
Քշուշ - էտոց, լոզ
Քշտիլ – սոթթել վեր հագուստը թևերից, աշխատանքն սկսելու նշան
Քշտուգ - սոթտած, վեր քաշած
Քշփռտուն - անհարթ, խորդուբորտ
Քոզ - ուլ և գառների կեցվածքը, տեղը
Քոզուգ - ուլ և գառները ներս արած, գոմ մտցրած
Քոզըկ – խրամատ, մարտիկի բռնած դիրքը կռվում
Քոլ - անեղջյուր (անասուն)

Քոլիլ – հարձակվել, մենամարտի վազել
Քոխար – խաղողի մի տեսակը՝ սև խարջի
Քոդ, քուդ – շղարշ, սավան (նորահարսի)
Քոմ – հավաք, կուտակում
Քոմիլ – հավաքել, կուտակել
Քոմուգ - հավաքած, կուտակած
Քոնքի (գալ) - բեղմնավորման գալը (շների)
Քունջ - անկյուն
Քուշտ (անիլ) – համարձակվել, անվախ լինել
Քոշք – պալատ, ապարանք
Քոչ – 1. ընտանիք, 2. քոչել, տեղից-տեղ փոխել
Քոչար – վաչկատուն, թափառաշրջիկ
Քոչարի – 1. թեթև պար, խաղ, 2. վաչկատունի նման
Քոռիդ - նոխազ, 3-4 տարեկան բուղա, բեղմնավորող (այծ-ոչխարների)
Քուռդանդա - անզավակ, անժառանգ
Քուս – քոս, քոր (հիվանդություն)
Քոսա - երեսին մազ չունեցող
Քուվի – վայրի այծ
Քուրա - կրակի հնոց, պարկ կրակ
Քուրսի - աթոռ, գահ
Քուռի- քուռի – ձիերին կանչելու եղանակ
Քոֆի – ֆես, կանանց գլխարկ
Քուլֆաթ – ընտանիք
Քըը - քարքարոտ տեղ, քարոտ վայր
Քռիգ - կարմրահատ ցորեն
Քռիլ, քռնիլ- խարուկ գործել, կարել
Քռեջ – խճապատ, մանր քարոտ տեղ
Քռթիգ - կռճիկ, կռճկային մաս
Քռնիլ – խարուկ կարել
Քռնուկ – չեչոտ (մարդ), չոփուր, ծաղկատար
Քռուկ – կարած, գործած
Քռչ, քըռչ – հին և մաշված հագուստ, շորեղեն
Քռչիգ - կաղամբի թթվից եփած կերակուր
Քսպնուդ - եղունգի շուրջը թեփ «քիսպ» ունեցող, քսպնոտ
Քրդազեն – քրդի ձեռքով մորթված (ոչխար), քրդերը հայերի ձեռքով մորթված ոչխարի միս չէին ուտում
Քվրիթ, քրբիթ, քրվիթ – լուցկի
Քրդանակ – քրդերեն, քրդի նման
Քրքշիլ – թթվել, քրքուշ կապել

Քրքուշ – թթված (թան), որ հավաքում և եփում են՝ ձմռանը գործածելու համար
Քրքրիլ - բզիկ-բզիկ լինել
Քըքրուգ - կտոր-կտոր, բզիկ-բզիկ եղած

Օ

Օզնի – ոզնի, ասում են նաև ժուժիկ
Օզուր – ոլորված ճյուղ, ծռված (դիրքից), Օզոր
Օզրուգ - ոլորած
Օթ – յոթը
Օլուր – ոլոր, դարձված
Օլրդիլ – ման գալ, թափառել, փնտրել
Օլրցնիլ – պտտեցնել, ոլորել տալ
Օխա - ծանրության չափ է, մոտ 1.2 կգ
Օձ – օձանելի, յուղ
Օձնիլ – օծել, յուղ քսել
Օձուգ - օծված, յուղած
Օգ (ուկ) - ամանի ծեփ, որ պատրաստում են լյարդի և թելի ծեծվածքից
Օկիլ (օգիլ) – ծեփել, ամանի կտորներն իրար միացնել
Օղազիկ – օձապտույտ ասեղնագործ (գդակի վրա)
Օղին – մի բանջարեղեն, վայրի՝ շրեշ
Օղմիլ – կոթնել, բազմել
Օղմուգ - կոթնած, բազմած
Օղջմիռ – ողջ-մեռած, կիսամեռ
Օղջում – ողջույն (պատարագի մի արարողությունը՝ «Ողջույն տուք միմյանց»-ը)
Օղվիլ – ողողել, ցողվել, բերանը ջրով լվալ
Օղփակ – 1. կարի մի տեսակ, 2. կոճակն իր օղփակով
Օն - գերանդու մի հարվածից հնձվածն ըստ լայնության
Օնը - այնտեղ, հոն (Տալվորիկի բարբառ)
Օռջալ – որոճալ
Օսլա - մարմնի մաս, կտոր
Օսկի – ոսկի
Օսյաք – կտակ, մեռնողի վերջին հանձնարարությունը
Օվիդ - հովիտ, ձոր
Օտնուրակ – ոտնուրագ, մեծ ուրագ, որը երկու ձեռքով են բռնում տաշելիս
Օտաց – վարտիք (կանացի), ոտաց
Օրա - որա, խուրձ

Օրաջիգ - ուլունք, կոճակ, զարդուլունք
Օրացկապ, օրացքինդ - օրոցկապ, օրորոցի շոր, որով երեխայի թևերն են կապում, շարժվելիս՝ չընկնելու համար
Օրծա - բույսի որձան, արական գործարանը, որձա
Օրծադ - կռտած, որձատված, ամորձազուրկ
Օրծկալ - փսխելու փորձ, զկռտալ, որձկալ
Օրմնջաղ – պատի այն մասը, որ ծածկում է գերանի գլուխը
Օրնջալ – հորանջել
Օրշնիլ – օրհնել, վրան աղոթել
Օրուջ – որոճալ, որոճ (անասունների)
Օրուց խազիլ - դեռ օրորոցում եղած աղջկան նշան դնելը, բեշիկքերթմա (թրք.)
Օրջաֆա - ջուլհակի այն փոքրիկ գործիքը, որ պատրաստում են հավի սրունքի ոսկորից, որը կարճացնում կամ երկարացնում է ասպին միացնող թելերը
Օփ (ուփ) - արհեստական ջրավազան
Օփծակ - արհեստական ջրավազանի անցքը, որից հոսում է ջուրը

Ֆ

Ֆաիզ - տոկոս
Ֆալ – ծուռ ակոս, որի համար վարվող հողի մի փոքր մասն անվարել է մնում
Ֆահլա - բանվոր, բատրակ
Ֆառշ – մետաղյա թելով խոզանակ. բայը՝ ֆառշիլ-մաքրել
Ֆաս – ֆես, թրքական գլխարկի մի ձև
Ֆահլ - գարու կամ քարի հատիկներ, որոնցով գուշակողները բախտ են նայում
Ֆահլըկ - բախտ նայել, գուշակություն անել
Ֆահլըկդար - բախտ նայող, գուշակող
Ֆատըկ – փայծաղ
Ֆարազ - թեև, թեպետև
Ֆըթիլ – պատրույգ
Ֆեկի – միրգ, պտուղ
Ֆըլըտիլ - ազատվել (վտանգից)
Ֆիկալ – սուլել
Ֆիկող – սուլող
Ֆիկուց –սուլելու ձայն
Ֆինո – քոֆի, ֆես, կանացի գլխարկ
Ֆիշտոխ – ջրմուղ՝ խաղալիք, որով իրար վրա ջուր են ցողում

Ֆընդ - բարակ մեղրամոմի գործվածք, մոմի կծիկ, որ պահելով գրպանում, ուզած ժամանակ վառում են, ֆնտիկ
Ֆըշխը – միասմբակավոր անասունի աղբը
Ֆըշխիլ – միասմբակավոր անասունի թրքելը
Ֆնջան - բաժակ, թաս
Ֆռանգի – ֆրանսիական կողպեք, ալաֆռանգի
Ֆռիգ - ակլատուզ, մի սոխ՝ յոթ փետուրներով, տես ճռճռիկ
Ֆռֆռալ – քամուց ծածանվել, ծայն հանել
Ֆռտիլ – քանը կամ ապուրը շտապ-շտապ ուտել, լափել, ֆռտել
Ֆռֆռիգ - 1. խաղալիք, որ թևիկներ ունի և հոսող ջրի-առվակի ուժով պտտվում է, 2. մեծ պահքի սիմվոլը, ակլատուզը, որ մի սոխի կամ կարտոֆիլի հատիկ է շուրջը, յոթը փետուրներ են խրած և կախում են բուխարիկի կողքից, ուր օջախի ջերմությունից և գնացող ծխից անընդհատ պտտվում է, ոլորվում և էլի պտտվում: Մեծ պահքի ամեն մի շաբաթ անցնելիս մի փետուր հանում են և վերջին շաբաթին հանում վերջին փետուրը: Ֆրիգ կամ ֆռֆռիկով վախեցնում են երեխաներին, որ պասը չուտեն:
Ֆտլիլ - ետ դառնալ, շուռ գալ
Ֆրխզիլ – հանկարծակի կրակվելը (հրացանի)
Ֆքրիլ – խորհել, մտածել, ֆքրել

ՑՈՒՑԱԿ
ՍԱՍՈՒՆԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

	Անուն, ազգանուն	Ծնված	Սասունի որ գյուղից է	Այժմ որ գյուղից է	
1.	Գալուստ Հեբոյի Քոթանյան,	1879թ.,	Սեմալ,	Թալին-Իրինդ	+
2.	Շառո Ղազարյան	1858	Իշխանձոր	Աշտարակ-Ավան	+
3.	Օհան Մարտոյի Աբրահամյան	1882	Ընկուզնակ		+
4.	Հեբո Կրպեի Կարապետյան	1864	Իշխանձոր		+
5.	Խոդեդան Չորոյի Մարկոսյան	1858	Դաշտադեմ	Թալին- Իրինդ	+
6.	Ախո Տոնոյի Մանուկյան	1875	Խոծոժվանք	Աշտարակ- Լեռնարոտ	+
7.	Տոնե Օվսեփի Տոնեյան	1874	Գելիեգուզան	Աշտարակ-Լեռնարոտ	
8.	Հայրո Գորգեի Պետոյան	1880	Գելիգուզան		+
9.	Տոնե Գորգեի Պետոյան	1885	Գելիեգուզան		+
10.	Հակոբ Պողոսի Հովսեփյան	1864	Գելիեգուզան	Թալին-Ահագչի	+
11.	Արթին Ալոյի Ավագյան	1872	Գեղրվան +		
12.	Գրիգոր Մարդեի Հովսեփյան	1880	Գելիեգուզան		+
13.	Պողոս Ղազարի Պողոսյան	1874	Կապըրնի		+
14.	Ղազար Սաֆարի Ադամյան	1888	Շնիստ	Թբիլիսի	
15.	Հակոբ Ավագյան	1878	Սղուներտ	Աշտարակ-Ուջան	+
16.	Օվե Շամասյան	1876	Հոպե (Խարզան)		+
17.	Առաքել Պոլոյի Հարությունյան	1876	Ջազնի (Խարզան)		+
18.	Գենջո Պետրոսի Գրիգորյան	1886	Մարեկան	Սասունիկ	
19.	Հակոբ Խաչոյի Մովսիսյան	1849	Արտխոնք	Աշտարակ-Սասունիկ	+
20.	Բլբուլ Սահակի Սահակյան	1882	Քոփ	Աշտարակ-Լեռնարոտ	+
21.	Հեղինե Մանուկի Պետոյանի	1892	Հեղին		+
22.	Մարիամ Մկրտչյան	1880	Ահրոնք		+
23.	Մկրո Մարգարի Ավոյան	1867	Գելիգուզան	Աշտարակ-Սասունիկ	
24.	Բեզո Ղազարի ավոյան	1875	Գելիեգուզան	Աշտարակ-Սասունիկ	+
25.	Խամե Տերքաջի Պետրոսյան	1892	Գելիեգուզան	Աշտարակ-Սասունիկ	+
26.	Մարիամ Մանոյի Կարապետյան	1890	Հեղին	Թալին-Իրինդ	+
27.	Մարիամ Խաչատուրի	1875	Գերմավ (Ջերմուկ)		+
28.	Խաչիկ Հեբոյի Քոթանյան	1890	Սեմալ	Թալին-Իրինդ	
29.	Խաչատուր Բարսեղի Ղափլանյան	1883	Դաշտադեմ		+
30.	Կարո Մանուկյան	1894	Ահրոնք	Թալին-Ահագչի	
31.	Գալո Հակոբյան	1864	Հերինք	Թալին-Շղարշիկ	
32.	Միսակ Խասոյան	1871	Շենիք	Թալին-Ահագչի	
33.	Թաթար Հոզոյան	1856	Տալվորիկ էկուտուն	Թալին-Շղարշիկ	
34.	Ստեփան Հովիվ	1883	Դաշտադեմ	Թալին-Իրինդ	+
35.	Վարդան	1870	Իշխանձոր	Աշտարակ-Ավան	+
36.	Կիրակոս Տոնապետի Երիցյան	1887	Իշխանձոր		
37.	Տաբըկցի Տոնե	1867	Տաբըկ	Թալին-Ագարակ	+
38.	Թաթուլի Մկրո	1872	Իրիցանք	Թալին-Դիան	+

Ծանոթ.՝ սյունակի + նշանները ցույց են տալիս, որ մահացել է: Ցուցակում եղածները բոլորն էլ շատ կամ քիչ օգնել են մեզ իրենց հուշերով, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Վիճակագրություն Մուշ-Սասունի», Պետական պատմական թանգարան, ձեռագիր հ. 123, 1914թ.
2. «Համբավաբեր»-1916թ., հ.42
3. Հ.Ն.Սարգսյան - «Տարեգրությունք ի փոքր և մեծ Հայս», Վենետիկ, 1864թ.
4. Հայկ.ՍՍՌ Մատենադարան, ձեռագիր հ.3456-ի հիշատակարանը
5. Մ. Մուրադյան - «Բազմավեպ» հոդվածը «Սասունի ուխտավայրերը», Վենետիկ, 1934թ.
6. Հ.Ղ.Ալիշան - «Տեղեկագիր Մեծաց Հայոց», Վենետիկ, 1855թ.
7. Լորտ Պրայմս - «Հայկական ջարդերու փաստաթուղթերը», Կ. Պոլիս, Ա մաս, 1920թ.
8. «Հորիզոն»- 9 փետրվարի, 1916թ.
9. Խ. Աբովյան - «Վերք Հայաստանի», Երևան, 1939թ.
10. «Տեղեկագիր» Հայ բարեգործական ընկերության», Թիֆլիս, 1917թ.
11. Հ.Ղ.Ալիշան - «Այրարատ», 1890թ.
12. Մ.Մովսիսյան - «Նամակ Սասունեն՝ կրթական վիճակ», «Ազատամարտ», 1910թ. 8(21) ապրիլի
13. Ա.Հակոբյան - «Քաղաքացիական կռիվները Հայաստանում», 1921թ.
14. Մ.Մովսիսյան - «Սովը Սասունի մեջ», «Ազատամարտ», 1910 ապրիլ
15. Ա.Քալանթար - «Սասուն», Թիֆլիս, 1904թ.
16. Թ.Արծրունի - «Պատմություն տանն Արծրունյաց», Թիֆլիս, 1917թ.
17. Գ.Վ.Սրվանձտյանց - «Գրոց ու բրոց», Կ. Պոլիս, 1874թ.
18. Կանոնագիրք Ջորավանքի ժողովի, չորրորդ կանոն, Ղալաչյան, Թիֆլիս, 1913թ.
19. Ֆ.Էնգելս - «Ընտանիքի մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1940թ.
20. Կ.Մկրտչյան Մշեցի - «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ
21. «Լումայ», գիրք Ա. Տփխիս, 1898թ.
22. Րաֆֆի - «Կայծեր», Երևան, 1947թ.
23. Հ.Ղ.Ինճիճյան - «Աշխ.Չորից մասանց աշխարհի», Վենետիկ, 1806թ.
24. Գ.Լևոնյան - «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Երևան, 1946թ.
25. Տ.Չիթունի - «Սասունական», Փարիզ, 1942թ.
26. Գր.Ղափանցյան - «Արա Գեղեցիկի պաշտամունքը», Երևան, 1945թ.
27. Լեո - «Հայոց պատմություն», Ա հատոր, Թիֆլիս, 1917թ.
28. «Սովետական Հայաստան», 28.7.1957թ.
29. Մաքսիմ Գորկի - «Նոր ուղի», Երևան, 1929թ.
30. Ակադ.Գր.Ղափանցյան - «Ասուրա-բաբելական բառերը հայերենում»
31. «Պատմություն Տարոն աշխարհի», Բեյրութ, 1956թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ Սասունի մասին 11
Սասունից Կովկաս 41
Սասունցիների տեղաբաշխումը Թալինում և Աշտարակում 52
Կուլտուրան Թալինում և Աշտարակում 61
Առողջապահության բնագավառում 69
Ազգագրություն 74
Տնտեսական կենցաղ. դաշտամշակություն 76
Այգեգործություն և բանջարաբուծություն 96
Անասնապահություն 107
Կաթնամշակում 122
Թռչնաբուծություն 132
Շերամապահություն 135
Մեղվապահություն 136
Որսորդություն և ձկնորսություն 139
Տնայնագործություն 144
Փոխանակություն և առևտուր 169
Հաշիվ և չափեր 179
Նյութական մշակույթը. շենքեր 183
Զգեստ և զարդեր 199
Կերակուր և խմիչք 212
Ընտանեկան հարաբերություններ 216
Ամուսնություն և հարսանիք 226
Տղաբերք և կնունք 261
Հիվանդություն և բժշկություն 272
Մահ և թաղում 286
Դասակարգային շերտավորում 291
Գյուղական հասարակություն 295
Իրավունք 298
Հավատք 307
Հանելուկներ, առածներ, ասացվածքներ 322
Շուտասելուկներ 330
Պատմվածքներ 331
Սասունի բարբառով արձակ պատմվածքի նմուշներ 333
Հավելվածներ 337
Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից 356
Նմուշներ հարսանեկան պար-երգերից 366
Սասունցիների պարի խումբը Մոսկվայում 373
Սասունի խաղերը 387
Բառարան Սասունի բարբառի 408
Սասունի ազգագրության կենդանի աղբյուրները 491

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՈՅԱՆ

ՍԱՍՈՒՆԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ - ՏՆՕՐԵՆ՝	ՌՈՒԶԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝	Վ. ԲԴՈՅԱՆ, Ս. ՏԱՐՕՆՑԻ, Զ.ՄԽԻԿՅԱՆ
ՍՐԲԱԳՐԻՉ՝	ԶԱՐՈՒՀԻ ՄԽԻԿՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔԸ՝	ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՋԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝	ՀՐԱՅՐ ՇԱՌՈՅԱՆԻ
ԿԱԶՄԻ ՋԵՎԱՎՈՐՈՒՄԸ՝	ԳԵՎՈՐԳ ՇԱՌՈՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 29.01.2014: Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 31 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 300 օրինակ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52.79.74, 52.79.47
Էլ. փոստ lusakn@rambler.ru

ЭГГ.925
Ж-49
42

